Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՆԱԻՐԱ
ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՏՅԳՆՅՊՅԼԻՑ ՈՒ ՓՈԹՈՐԿՅԾԻՆ ՕՐԵՐ

ՆԱԻՐԱ ԱՌՍՏԱՄՅԱՆ

ՏԱԳՆԱՊԱԼԻՑ ՈՒ ՓՈԹՈՐԿԱԾԻՆ ՕՐԵՐ

(լրագրություն էլ գրականություն է)

Ստեփանակերտ - 2018

ԳՄԴ 76.01
Ա 724

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ

ՆԱԻՐԱ ԱՌՍՏԱՄՅԱՆ
Ա 724 Տագնապալից ու փոթորկածին օրեր:
Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս» հրատ., 2018, 336 էջ:

Գրքում տեղ են գտել հեղինակի տարբեր տարիների մամուլում լույս տեսած թղթակցությունները, որոնք մեծամասամբ Արցախյան շարժման և պատերազմի տարիների տարեգրություններ են:

Կան նաև դպրոցական կյանքն արտացոլող և կյանքի տարբեր բնագավառներին առնչվող բազմապիսի հետաքրքիր նյութեր:

ISBN 978-9939-1-0718-9

ՀՏԴ 070
ԳՄԴ 76.01

© «Դիզակ պլյուս» հրատ., 2018

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ակտիվորեն թղթակցել եմ շրջանային, հանրապետական, մասնագիտական, երգիծական թերթերի ու ամսագրերի, հրապարակել եմ հասարակական-քաղաքական, հայրենասիրական, բարոյա-էթիկական, դպրոցական, Արցախյան շարժման ու պատերազմի և այլ թեմաներով թղթակցություններ, որոնց մի մասը, դժբախտաբար, չի պահպանվել:

Ունեի նաև էսքիզներ, պատմվածքներ, բանաստեղծություններ, բազմաթիվ նամակներ Հայաստանից:

Շարժման տարիներին համարձակորեն արձագանքում էի բոլոր դեպքերին: Ընթերցողներից բազմաթիվ արձագանքներ էի ստանում:

Պատահել է, որ իմ թղթակցության համար շրջանային թերթի ամբողջ տպաքանակն ուղարկվել է Երևան, բաժանվել ցուցարարներին:

Նամակներ էի ստանում ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ Սեդրակ Նանագյուլյանինց, հավանում էր իմ թղթակցությունները, շնորհավորում, ոգևորում:

Ինձ ճանաչողները գրել են նաև իմ մասին:

Մի քանիսը պահպանվել է:

Ներկայացնում եմ իմ թղթակցությունների մի մասը՝ տարբեր թեմաներով, որը մեծամասամբ, տարեգրություն է՝ մեր ապրած տագնապալից օրերի:

Խնդրում եմ ընթերցողներին՝ կարդալուց ուշադրություն դարձնել թղթակցության տարեթվերին, որովհետև, այն, ինչ խիզախում էր տարիներ առաջ, այժմ սովորական է մարդկանց համար: Հիմա ոչ ոք չի զարմանա, եթե ծաղրես պետության ղեկավարին կամ հեռուստատեսության հաղորդումները, իսկ 20-30 տարի առաջ դա անհնար էր, քչերը կարող էին անել:

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ, ՊԱՏԵՐԱԶՄ

ՏԱԳՆԱՊԱԼԻՑ ՈՒ ՓՈԹՈՐԿԱԾԻՆ ՕՐԵՐ
(Եղելություն), (1991թ. օգոստոսի 13-23)

1991թ-ի ամառն էր:

Երկնքից կրակ էր թափվում, բայց արցախցիներիս այրողը երկրային կրակ էր, որ ամենուր տարածում էին օմոնականները:

Ամեն օր ականատես էինք լինում մի նոր ողբերգության: Անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով նրանք անարգել մտնում էին տները, տակն ու վրա անում ամեն ինչ, վերցնում ինչ որ հավանում էին, ծերբակալում՝ ով պատահում էր:

Երիտասարդները մեծամասամբ պատսպարվել էին գյուղամերձ անտառներում:

Ժողովուրդը տագնապի մեջ էր:

Զինվորական մեքենան ու զրահապատ փոխադրիչը (БТР) սարսափ էին տարածում շրջապատում:

Խորհրդային զինվորը դարձել էր բռնության խորհրդանիշ՝ արցախցիներս համար:

Մի նոր 1937 թվական էր եկել. ծերբակալում էին պլան կատարելու համար. երիտասարդներին գյուղում չգտնելով՝ տանում էին մեծահասակներին, հիվանդներին: Անընդհատ մեկը մյուսից սահմռկեցուցիչ լուրեր էինք լսում ծերբակալվածների նկատմամբ օմանականների և թուրքերի կողմից կատարվող բռնությունների, խոշտանգումների, վայրագությունների մասին:

Մեր գյուղն էլ՝ Վերին Հոռաթաղը, անմասն չէր մնացել այդ ամենից: Մի ամիս չկար, ինչ Ումութլու գյուղի վրա գրոհելուց, զինվորների կողմից բռնվել էր համագյուղացի Արկադիա Հայրիյանը (Նապոլեոնը) և անասելի ծեծվելուց հետո տարվել անհայտ ուղղությամբ:

Բոլորիս համբերության բաժակը լցվել էր:

1991թ-ի օգոստոսի 13-ն էր:

Այդ օրվա մասին Բ. Հարությունյանի «Իրադարձությունները Լեռնա-

յին Ղարաբաղում» գրքի (1997թ. էջ 64), Ս. Մելքումյանի «ԼՂՀ աշխարհագրություն» 7-8-րդ դասարանների դասագրքի 169-րդ էջում գրված է. «1991թ. օգոստոսի 13-ին, Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի մոտ այդ գյուղի կանանցից կազմված պաշտպանական «Փառանձեմ» ջոկատը շրջապատել ու պատանդ է վերցրել Թարթառի հովտի հայկական գյուղերի բնակիչներին հալածող, ադրբեջանական ավազակներից կաշառված խորհրդային բանակի 40 զինծառայողների:

«Փառանձեմ» կանանց ջոկատը պահանջում է գերված 40 զինվորների փոխարեն ազատ արձակել ադրբեջանական բանտերում անլուր հալածանքի ենթարկվող 16 հայերի…»:

Նախ, ասեմ, որ այդ ժամանակ, իսկապես, գյուղերում ֆիդայական ջոկատներ էին ստեղծված: Ձորակում առաջին ջոկատը ստեղծվել էր մեր գյուղում՝ Ռաֆիկ Սայիյանի նախաձեռնությամբ: Նա ճանաչվում էր նաև՝ որպես Հաթերքի ձորակի ֆիդայական շարժման ղեկավար:

Ռաֆիկը հոռաթաղցի էր, ապրում էր Երևանում: Շարժման սկզբում գյուղ էր եկել և ջոկատ ստեղծել, անմիջական կապ ուներ շարժման ղեկավարների հետ, բազմաթիվ անգամ ուղղաթիռներով զենք ու սննդամթերք է տեղափոխել Երևանից Արցախ, իսկ ուղղաթիռները մեծամասամբ մեր գյուղում էին վայրէջք կատարում: Մյուս գյուղերի բոլոր ջոկատները կապ էին պահպանում, առաջադրանք էին ստանում Ռաֆիկից: Հաթերքում էլ սովորական ջոկատ է եղել, բայց «Փառանձեմ» կանանց ջոկատ չի եղել: Եղել է գյուղի կանանց մեծամասնության կողմից խորհրդային զինվորների պատանդմանը մասնակցություն, ոչ թե հաթերքի գյուղի մոտ, այլ՝ գյուղի կենտրոնում՝ գյուղի ջոկատի տղաների հետ:

Իսկ Հաթերքի մոտ ոչ թե հաթերքցի, այլ նրա դիմացի բարձունքին գտնվող Վերին Հոռաթաղի կանայք են նույն օրը, կարող է ժամ առաջ կամ հետո, կամ հենց նույն ժամին, իրարից անկախ, Հոռաթաղը Հաթերքից բաժանող Թարթառ գետի ափով ձգվող Քարվաճառ-Մարտակերտ մայրուղու Վերին Հոռաթաղի հատվածում գերել երկու զինվորական մեքենաներ՝ 11 զինվորներով, որոնք պահվել են գյուղի անտառներում և ազատ են արձակվել Հաթերքի պատանդների հետ:

Դեպքերի բերումով հոռաթաղցիները այդ օրերին թաքցրել են իրենց կատարածը՝ գյուղի տղաներին, ջոկատին չվտանգելու համար, քանի որ պատանդներին փնտրելու համար գյուղը «բանակ էր մտել»: Բոլորը վերագրվել է հաթերքցիներին, բայց հոռաթաղցիների կատարածը չպետք է մոռացվի, դա պետք է իմանան բոլորը, որովհետև կատարվածը, որ ցնցել էր ամբողջ Խորհրդային Միությունը, մեծ ռիսկի

հետ էր կապված: Հեշտ բան չէր գերել ամբողջ աշխարհում անուն հանած խորհրդային զինվորներին:

Բացի այդ, Արցախյան շարժման, պայքարի տարեգրության մեջ չնայած մեծ է Վերին Հոռաթաղի բաժինը, բայց գրքերում ու նույնիսկ նոր քարտեզներում Վերին Հոռաթաղի տեղն ու անունը չի էլ նշվում, ուր մնաց նրա քաջարի տղաների ու կանանց կատարածը…

Իհարկե, եզակի չեն մեր պատմության մեջ մեկի կատարածը մյուսին վերագրելը, բայց, կարծում եմ, ժամանակն է ամեն ինչը իր իսկական անունով կոչելու…..

***

1991թ. օգոստոսի 13-ն էր, կեսօրին մոտ: «Զիլ» ինքնաթափ մեքենայով շտապ մեր բակը եկավ գյուղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարի տեղակալ Արկադիա Շիրինյանը (Ագոն, հետագայում՝ Արցախի պատերազմի հերոս, շքանշանակիր, մականունը՝ «Խալաստոյ») և հայտնեց, որ բռնել են Սուրիկին ու Ժորիկին, հավանական է տանելու են Շուշի: Հարկավոր է հավաքել գյուղի կանանց, իջնել գյուղի ներքևով անցնող մայրուղին, կանգնեցնել մեքենան կամ զրահապատ փոխադրիչը և «խլել» Սուրիկին:

Սուրիկը Հաթերքի ջոկատի հրամանատարն էր, առավոտյան եկել էր Վերին Հոռաթաղ՝ խորհրդակցելու մեր ջոկատի հրամանատարի հետ, ետդարձի ճանապարհին՝ Զարդախաչի մոտ, կանգնեցրել են մեքենան և «վերցրել» իրեն ու վարորդին՝ Ժորիկին:

Շարժման առաջին օրվանից մեր գյուղում կին թե տղամարդ պատրաստ էին անձնազոհության. ջոկատի ամեն մի կարգադրություն օրենք էր բոլորիս համար: Երկմտելու ժամանակ չկար: Լինելով շարժման մասնակից, ծանոթ լինելով շատ իրադարձությունների, հասկանում էի, թե ուր ենք գնալու և ինչ կարող է սպասել մեզ:

Զինվորների հետ ընդհարման ժամանակ, իհարկե, չամիչ չէին բաժանելու: Բանտ կամ հիվանդանոց ընկնելն ու սպանվելը շատ հավանական էին:

Մտա տուն՝ փոխելու տնային հագուստս:

Գյուղի բարձունքին գտնվող մեր տանը, որտեղից երևում էին ձորակի համարյա բոլոր գյուղերն ու ճանապարհները, գաղտնի տեղադրված էին ջոկատի կապի սարքավորումները: Ամուսինս խոտհարքի էր գնացել, ես էի հերթապահում: Երբ մտա տուն, տեսա փոքր երեխաներս՝ Նելսոնն ու Արցախը, «կապավոր էին խաղում»: Վերցրել էին արդուկի վարդակը, մոտեցնում էին բերաններին և հանդիսավոր կրկնում.

-Ավանակին կանչեք, ավանակին կանչեք….

Վախս վայրկենապես անցավ. ծիծաղեցի երեխաներիս կանչի համար: Բանն այն է, որ Ռաֆիկը միրուք էր պահում, հետագայում նրան այդպես էլ կոչեցին՝ Միրուք, բայց այն ժամանակ հեռակապով նրան ծածկանունով ասում էին վանական:

Երեխաներս հաճախ էին լսում:

-Վանականին կանչեք, վանականին ասեք…..

Նրանք մոռացել էին վանական բառը, տառադարձել, դարձրել էին իրենց համար ավելի ծանոթ բառ՝ ավանակ:

Հետո, իհարկե, ես այդ մասին պատմել էի Ռաֆիկին, ջոկատի տղաներին և մի կուշտ ծիծաղել էին….

Համբուրեցի երեխաներիս, դուրս եկա տնից և թեքվեցի մեր հարևան Նինայենց բակը: Ցանկացա կանչել, բայց սիրտ չարի, ախր հինգ երեխայի մայր էր, տանեմ, հանկարծ մի բան պատահի…

Ճանապարհս թեքեցի հակառակ ուղղությամբ. այստեղ Բաքվից փախստական կանայք կային՝ միջին տարիքի, վրիժառու դեմքերով, մահվան սարսափ տեսած աչքերով: Նրանցից Անահիտն իսկույն ընկերացավ ինձ: Շարունակեցինք ճանապարհը՝ հանդիպողներին հայտնելով ջոկատի կարգադրությունը:

Գյուղից իջնելիս ճանապարհին պատահած մի աշակերտով ապսպրեցի մեր դպրոցի ուսմասվար Սվետա Լալայանին՝ հավաքելու գյուղի մյուս ծայրին գտնվող իրենց թաղամասի կանանց և իջնելու «Ասֆալտը», (այդպես են գյուղում անվանում ասֆալտապատ մայրուղին):

Գյուղից իջնող ճանապարհին նորից հանդիպեցի Ագոյին. հավաքել էր ջոկատի տղաներին և իջեցնում էր ներքև:

Ճանապարհի երկայնքով շարված էին տնտեսության Անասնապահական համալիրի, Տրակտորների վերանորոգման ենթաշրջանային կայանի, խանութի, բանվորական ճաշարանի, քիչ վերևում՝ հիվանդանոցի շենքերը:

Երբ հասանք ՏՎԿ-ին, տեսանք հիվանդանոցի աշխատողներին՝ արդեն հավաքված:

Քիչ հետո երևաց գյուղից իջնող կանանց շարքը: Գնալով խումբը մեծացավ: Հավաքվել էին մեծահասակներ, հարսեր, աղջիկներ: Նրանց մի մասը «զինված էր» մահակներով, երկար ճիպոտներով:

«Բելոռուս» տրակտորի խցիկում եկավ նաև Ռաֆիկը:

Տղաները թաքնվեցին ճանապարհի երկարությամբ ձգվող համալիրի պատի հետևում:

Վճռականորեն տրամադրված կանայք, փայտերով զինված, օգոստոսյան միջօրեի տապից պաշտպանվելու համար խմբվեցին ծառերի ստվերում:

Շուտով Գետավանից եկող ճանապարհին երևաց մի զինվորական «Ուազ»: Դեռ չմոտեցած մեզ, կանանցից մի քանիսը փայտերը ճոճելով կանգնելու նշան արին: Այդ տեսնելով «Ուազ»-ը շրջվեց և հետ դարձավ:

Սկսեցին բարձրաձայն մեղադրել շրջապատողներին և կարծիք հայտնել, որ դա հենց մեր ուզած մեքենան է, նշանակում է Սուրիկը մեջն էր, դրա համար էլ հետ դարձան:

Ագոն, որ չէր թաքնվել և սպասում էր մեզ մոտ, հանդգնաբար «Ձիլ» ինքնաթափ մեքենան արագ քշեց «Ուազի» հետևից, քիչ էր մնում, որ հասներ, մեկ էլ կտրուկ հետ դարձավ, հասնելով մեզ, ասաց.

-Լյոնիկի համար հետ դարձա, նրանք ավտոմատներ էին հանել, վախեցա կրակեն, դիպչի երեխային, թե չէ բարձրանալու էի գլուխները…

Կաներ: Անահ հրամանատարը քանի-քանի անգամ էր խիզախաբար մտել թշնամու արանքը, դիակ ու վիրավոր հանել, զենք ու սննդամթերք հասցրել:

15-ամյա Լյոնիկը իմ ավագ որդին է, այդ օրվա գործողություններին մասնակից միակ տղա երեխան, որ մեզ հետ իջել էր ներքև և այդ ժամանակ Ագոյի մեքենայի խցիկում էր: Նա 13 տարեկանից ջոկատի տղաների հետ էր, ջոկատին աջակցող մանկական խմբի ղեկավարը:

Իսկ խումբը լրջորեն օգնում էր ջոկատին: Ուտելիք էին տանում թաքնված տղաներին, սուրհանդակի դեր կատարում, ուղղաթիռները բեռնաթափում և այլ հանձնարարություններ կատարում:

Գյուղից կանանց հոսքը շարունակվում էր:

Ջոկատի հրամանատար Ռաֆիկը «Բելոռուսով» անցնելով Թարթառ գետը, անտառային ճանապարհով բարձրացավ Հաթերք՝ նոր տեղեկություն իմանալու:

Սպասում էինք ճանապարհին:

Քիչ հետո նորից նույն մեքենան երևաց: Արդեն կանոնավոր շարքերով փակեցինք ճանապարհը:

Եկավ, կանգնեց մոտներս:

Մեքենայի մեջ չորս խորհրդային զինվորներ էին՝ ուզբեկական աչքերով, ցածրահասակ, հետներն էլ գետավանցի Վամիկը: Հետ էին դառել, վերցրել, որպես իրենց ուղեկցող (հետագայում զոհվել է պատերազմում):

Ադրբեջանական Իմ-Գերեվենդ գյուղը «հայերից պաշտպանող» զինվորներից էին, գնում էին Ումուբլու, ճանաչում էին Վամիկին:

Կանայք շրջապատել էին մեքենան չորս կողմից, բացատրում էին նրանց, որ իրենց զինվորները էլի հայ են բռնել, երևի տարել Ումուբլու (նրանց կենտրոնն այնտեղ էր, մեր գյուղացի Նապոլեոնին էլ էին տա-

րել այնտեղ, հետո Շուշի, հետո՝ Բաքու, որտեղ էլ երեք տարվա տանջանքներից հետո մահացել էր):

Զինվորները խոստացան, որ գնալու են իսկույն բերեն Սուրիկին ու Ժորիկին:

Վամիկն էլ խնդրում էր բաց թողնել, հավատացնելով, որ դրանք մեղք չունեն, տեղյակ չեն ոչնչից, գործով գնում են Ումութլու, այնտեղ կասեն և բաց կթողնեն նրանց:

Զրույցը երկարեց: Եղան տարբեր կարծիքներ:

-Դրանք ի՞նչ մեղք ունեն, բաց թողնենք, գնան,- ասում էր կանանց խմբին մոտեցած մի տղամարդ՝ Բորիսը:

-Մերոնք ի՞նչ մեղք են ունեցել, որ բռնել են:

-Եկեք իրենցից մեկին պահենք, գնան մերոնց բերեն, փոխանակենք:

Պայմանավորվեցինք: Չհամաձայնվեցին:

-Ինչու՞ մեկին, բոլորին էլ պահենք, բավական է, ինչ լինելու է, թող լինի,- ասացի ես…

Ասելն էր դժվար…

Զինվորները հայերեն չգիտեին: Վամիկը դուրս էր եկել մեքենայից, և մի կողմ քաշված, ցանկանում էր համոզել, որ ճանապարհ տանք, գնան:

Նրանք մեր վերջին որոշումը չէին հասկացել և հետագա գործողություններից հանկարծակիի եկած, չիմացան ինչ անել…

Իսկ մենք բացեցինք «Ուազի» դռները, միանգամից բռնեցինք ինքնաձիգներից և մեքենայից իջեցրինք:

Ընդհանուր աղմուկի վրա հավաքվեցին թաքնված տղաները, բացեցին ՏՎԿ-ի դարպասը, զինվորներին ու մեքենան ներս տարան ու ետ փակեցին: Վովիկը նստեց ղեկին և ՏՎԿայանի (PTC-ի) հետնամասի գյուղ տանող ճանապարհով զինաթափված զինվորներին գյուղ տարան:

Կատարվածի անսպասելիությունն ու տպավորությունը այնքան մեծ էր, որ մի պահ մոռացել էինք հետևանքների մասին:

Բոլորն աղմկում էին, խոսում, ծիծաղում:

Քիչ հետո որոշեցինք ցրվել՝ հանձնարարությունը կատարած համարելով, միևնույն դեպքում ափսոսալով, որ նման քայլի չէինք դիմել երկու ամիս առաջ մեր գյուղացի Նապոլեոնին փրկելու համար:

Ճանապարհվել էինք գյուղ, երբ երևաց Ռաֆիկին Հաթերք տանող տրակտորը: Ժամը տասնչորսն էր: Հետ դառանք՝ «զեկուցելու» կատարածի մասին:

Ռաֆիկի՛ տրամադրությունը բարձր էր: Բանն այն էր, որ Սուրիկը ճանապարհին մեքենայից ցատկել էր ու փախել, միայն Ժորիկին էին տարել: Հաթերքցիներն էլ, կանայք ու երիտասարդները, կանգնեցրել էին Վանքի ձորակից մեծ ավարով եկող և Հաթերքով Ումուքլու գնացող օմոնականների զրահապատ փոխադրիչն ու զինվորական բեռնատարը և գերել անձնակազմը:

Ա՜յ քեզ բան: Ստացվում է, որ իրարից անկախ, նույն կամ կես ժամվա տարբերությամբ կատարվել էր նույնատիպ գործողություն հարևան գյուղերի ջոկատների կողմից՝ կանանց մասնակցությամբ:

-Այսօր մեր օրն է, հետ դառեք, քանի մեքենա ճանապարհով անցնի, նույն կերպ ենք վարվելու,- ասաց Ռաֆիկը:

Բոլորս հետ դառանք:

Ռաֆիկի խոսքը օրենք էր, ներկայությունը՝ հուսադրող, միրուքով դեմքը՝ խոժոռադեմ ու սարսափազդու:

Տղաները նորից անցան Համալիրի պատի հետևը, թաքնվեցին: Ռաֆիկը մնաց մեզ մոտ կանգնած:

-Ռաֆիկ, ճանապարհին մի կանգնիր, քեզ որ տեսնեն, իսկույն կբռնեն կամ կկրակեն (միրուքավոր էր), - ասացի ես:

-Ձեզ մոտ ով կարող է ինձ մոտենալ,- կատակեց նա:

Այնուամենայնիվ, երբ հեռվից մեքենայի ձայն լսվեց, նա զինվորական վերնազգեստը փռեց Համալիրի պատի տակ՝ մի չերևացող տեղ և պառկեց աննկատ:

Շուտով երևաց մի բեռնատար մեքենա՝ Սարսանգի կողմից եկող: Թափքում կիսամերկ տղաներ էին, էլի Իմ-Գերեվենդը պաշտպանողներից, լողանալու էին գնացել երևի:

Ցանկացանք ճանապարհը փակել, չհասցրինք: Մեզ տեսնելով՝ մեքենան ոչ թե ընթացքը դանդաղեցրեց, այլ այնպիսի ուժեղ թափով անցավ կողքներովս, որ քիչ մնաց մոտեցողներին խփեր:

Նորից սկսեցինք աղմկել ու նախատել իրար՝ խիտ շարքերով չկանգնելու համար, բայց հետո տեսանք, որ հաջողություն էր այդ, որովհետև քիչ հետո ավելի հաջող ավար ունեցանք:

Կես ժամ չէր անցել, երբ նորից մի բեռնատար երևաց նույն տեղից՝ Սարսանգի կողմից: Խիտ շարքերով փակեցինք ճանապարհը Համալիրի պատի ուղղությամբ: Անցում չկար: Մի կողմում պատն էր, մյուսում՝ գետը: Մեքենան մոտեցավ և կանգնեց: Թափքում զինվորներ էին:

Խցիկում, վարորդի մոտ նստած էր մի հաղթանդամ, 30-ն անց տղամարդ: Կիսամերկ էր, զինվորական տաբատով, դուրս ցցված փորով, լիքը լցված, ինքնավստահ դեմքով:

Նա իջավ մեքենայից, բարևեց կանանց և սկսեց «զրուցել» նրանց հետ:

-Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ եք հավաքվել,- հարցրեց զինվորականը:

Կանայք շրջապատեցին նրան և սկսեցին կիսահայերեն, կիսառուսերեն բացատրել կատարվածը: Թարգմանիչն էլ Բաքվից փախստական Անահիտն էր:

Մերոնք մեղադրում էին նրանց, որ թուրքերի կողմն են պահում, հայերին ճնշում են, ինչու՞ Իմ-Գերեվենդում են նստում և այլն:

Զրույցից պարզվեց, որ մեքենան Եվլախից էր գալիս Իմ-Գերեվենդում գտնվող զինվորներին հերթափոխելու, բարձած էր սննդամթերքով ու սպիտակեղենով, թափքում՝ յոթ զինվորներ:

Տեսնելով, որ «զրույցը» երկարում է, մոտեցա Համալիրի պատի տակ պառկած Ռաֆիկին, ով տեսնում և լսում էր այդ ամենը, հարցրի.

-Ի՞նչ անենք:

-Կարողանում եք մեքենայից իջեցրեք բոլորին,- ասաց նա:

Երբ հետ եկա կանանց մոտ և Ռաֆիկի ասածը հայտնեցի նրանց, Նատաշան իսկույն մոտեցավ, բացեց մեքենայի խցիկի դուռը (վարորդն էլ էր իջել հրամանատարի մոտ) և վերցրեց այնտեղ գտնվող հրամանատարի ինքնաձիգը:

Հրամանատարը դեռ չէր նկատել: Թափքի զինվորներն սկսեցին մեկ-մեկ ցատկելով իջնել մեքենայից:

Ցատկողին էին մոտենում կանայք, իսկույն բռնում ինքնաձիգից ու խլում:

Սկսվել էր մի անսովոր ձեռնամարտ՝ զինվորների և կանանց միջև:

Ոմանք համառում էին, դիմադրում, միանգամից մի քանի զույգ կանացի ձեռքեր բռնում էին ինքնաձիգից և սկսվում էր քաշքշուկը

-Нет, ни дам, оружий, ни дам, нельзя,- համառում էր նրանցից մեկը:

Հանկարծ ընդհանուր իրարանցման մեջ լսվեց շրխկոց…Դեռևս թափքում գտնվող զինվորներից մեկը կանգնեց, բարձրացրեց ինքնաձիգը, քաշեց ձգանը… և այն է պետք է կրակահերթ բացվեր կանանց վրա և դժվար չի գուշակել, թե այդ խիտ խմբի մեջ քանի զոհ ու վիրավոր կունենայինք, եթե Համալիրի պատի հետևում թաքնված և ամեն ինչ տեսնող մեր տղաները հանկարծ պառկած տեղից չկանգներին ու չբղավեին:

-Չկրակես,- մինչև հիմա էլ ականջներումս հնչում է էդիկ Նալբանդյանի տագնապած բղավոցը:

Տեսնելով զինված տղաներին, իսկ նրանք տասն էին, վախենալով

անհայտ ուժից, չկրակեց, մի պահ կարկամեց, մնաց:

Կանայք, օգտվելով առիթից, ավտոդողերով բարձրացան մեքենայի թափքը և իջեցրին վերջին զինվորին:

Կանանց և զինվորների քաշքշուկն ավարտվեց հօգուտ կանանց:

Ինքնաձիգներ էին խլել Նատաշան՝ երկու հատ (զինվորների կողմից բռնված Նապոլեոնի կինն էր), Խուրման, Սվետան, Լյուբան, Էլմիրան, Նինան, Ալինան, Լենան, Համեստը, Մարիետան….Վալոկը…

Բոլորը զինաթափված էին: Հրամանատարը մնացել էր շվարած կանգնած՝ կանանցով շրջապատված:

Պատի հետևից ցատկեցին և մոտ եկան տղաները, դիմացից՝ դանդաղաճեմ մոտեցավ Ռաֆիկը:

Կանայք բարձրաձայն զրուցում էին, ենթադրություններ անում: Նրանք մատնացույց արին ճաղատացող գլխով մի զինվորի և ասացին, որ երևի օմոն է, մուսուլմանի տեսք ունի.

-Нет, нет, я не омон, я не омон - սարսափած ասաց նա:

Կանայք ինքնաձիգները հանձնեցին տղաներին՝ գյուղ տանելու համար:

Լյոնիկը, որ մինչև վերջ մնացել էր կանանց հետ, շալակել էր երեք ինքնաձիգ: Զինվորներին շարք կանգնեցրին, ոտքով տարան դեպի անտառ: Կոլտնտեսության «սիլոսի փոսում «ստուգեցին» նրանց ազգությունը» և անտառով բարձրացրին գյուղ:

Գյուղ տարան և մեքենան:

Ժամը հինգի մոտերքն էր:

Որոշեցինք տուն գնալ, բայց ոչ թե ընդհանուր ճանապարհով, այլ անտառի արահետներով՝ առանձին-առանձին խմբերով:

Պայմանավորվեցինք գյուղում ոչինչ չասել, բայց գյուղ բարձրանալով տեսանք բոլոր գյուղացիներին՝ գյուղի բլրակին շարված:

-Կեցցե՛ք, լավ գործ եք կատարել,- ասացին նրանք:

-Բայց ի՞նչ ենք արել,- զարմացած հարցրի և ետ նայեցի ու ավելի զարմացա. գյուղի բլրակից մեր գործողությունների վայրը երևում էր՝ ինչպես ափիդ մեջ:

Ցրվեցինք տները:

Ժամը հինգն էր:

Հանկարծ մի ուղղաթիռ եկավ ու սկսեց պտտվել այնտեղ, որտեղ «գերվել էին» մեքենաները:

Այդ օրը, Ռաֆիկի ասած, իսկապես որ «մեր օրն էր», որովհետև եթե մի քանի րոպե ուշ ցրվեինք, ուղղաթիռի անձնակազմի հետ գործ պիտի ունենայինք, զինվորներին հետ կդարձնեին, գուցե և կգնդակոծեին

կամ կրակ կբացեին՝ վախեցնելու և զինվորների տեղն իմանալու համար կբռնեին ջոկատի տղաներին:

Բայց, բարեբախտաբար, ամեն ինչ հաջող անցավ:

Հավանական է, հետաքրքրվել էին Եվլախից դուրս եկած և տեղ չհասած մեքենայով, և մեր բաց թողած մեքենան էլ հայտնել էր կանանց հավաքված տեղը, որովհետև նույն երեկոյան Ադրբեջանի հեռուստատեսության «Օրվա էկրան» ծրագրով հաղորդվեց.

-Բու գյուն, սահարդան, Հաթերք քյանդըն յախընդան, հայասըզ գադընլարըն բիր գրուպասը…, այսինքն.

-Այսօր ցերեկով, Հաթերք գյուղի մոտերքում լաչառ կանանց մի խումբ կանգնեցրել էր Եվլախից Իմ-Գերեվենդ գնացող մեքենան և գերել մեր զինվորներին…

Գյուղը սարսափի մեջ էր: Վախենում էինք մեր տղաներից՝ գյուղի ջոկատի մատնվելուց, հեշտ բան չէր խորհրդային զինվորներ պատանդելը:

Զինվորներին պահում էին անտառում, տեղավորել էին նախկինում կոլտնտեսության խոզերը պահելու համար գոմերի մոտ պատրաստված տնակներում: Նրանց հսկում էին մեր ջոկատի տղաները:

Ուտելիքը պատրաստում էին գյուղի կանայք, ով ինչ կարողանում էր կամ ինչ հանձնարարություն ստանում էր: Զինվորական ուսապարկերով ուտելիքը անտառ էին հասցնում գյուղի կանայք կամ ջոկատի պատանի անդամները՝ դպրոցականներ Լյոնիկը, Լենորը, Արմենը:

Բավականին պահածոյացված ուտելիքներ կար նաև խլված մեքենայում, որոնց մի մասը բաժանեցին կարիքավոր ընտանիքներին:

Գյուղն ամբողջությամբ նմանվում էր մի համերաշխ գերդաստանի, ամեն ոք աշխատում էր որևէ բանով աջակցել, մասնակցել ընդհանուր պայքարին:

Անցավ առաջին տագնապալից գիշերը:

Օգոստոսի տասնչորսի առավոտը բացվեց երկու ռմբակոծիչների թնդյունով: Գիշատիչ անգղների պես նրանք պտտվում էին Հաթերքի և մեր գյուղի գլխավերևում, մերթ ընդ մերթ ուժեղ թափով ներքև խոյանում և նորից բարձրանում:

Վախեցած ժողովրդին ու երեխաներին հանգստացրինք, որ չեն կարող ռմբակոծել, քանի որ պատանդներ ունենք, կարող ենք փոխարենը նրանց վնասել:

Հետո իմացանք, որ հաթերքցիներն իսկապես այդպիսի հեռագրեր էին հղել Մոսկվա:

Մինչև ուշ երեկո «անգղները» պտտվեցին երկու գյուղերի գլխով՝

առանց դադարի: Միայն երկու անգամ քիչ ժամանակով հեռացան՝ այն էլ երևի Կիրովաբադում լիցքավորվելու համար:

Երբ ռմբակոծիչները պտտվում էին պատանդների գլխավերևում, նրանցից մեկը, երևի իրենց տեղը բացահայտելու նպատակով, դիմել էր խորամանկության. խնդրել էր բնական պահանջի համար դուրս տանել թաքստոցից:

Նրան դուրս էին թողել ջոկատի ամենահաղթանդամ տղաներից մեկի՝ Արմիկի ուղեկցությամբ: Երբ քիչ հեռացել էին, նա ճարպիկ ոստյունով ցատկել ու խփել էր Արմիկի փորին և փախել: Արմիկը ուժեղ և անսպասելի հարվածից ընկել էր, բայց և իսկույն կանգնել և կրակել էր փախչողի հետևից:

Պահակներ էին դրված նաև անտառից դուրս եկող ճանապարհի վրա, որտեղ էլ բռնվում է փախչող զինվորը և լավ ծեծվելուց հետո տարվում իր «որջը», իսկ հետո բժիշկ են տանում՝ վիրակապելու ձեռքը:

Այդպես անցավ տագնապալից երկրորդ օրը:

Լուրը ցնցել էր ամբողջ աշխարհը:

Օգոստոսի տասնչորսին «Ամերիկայի ձայնը», «Ազատությունը», «Ժամանակը», «Նորությունները» և այլն հայտնեցին զինվորների պատանդման մասին, բայց միայն Հաթերքի մասին էին խոսում, մեր գյուղացիների կատարածն էլ վերագրվում էր նրանց:

Այն ժամանակ մենք դրանով ուրախ էինք, որովհետև կարծում էինք «չէին անհանգստացնի», այնուամենայնիվ, կասկածում էին: Այդ են վկայում հետագա օրերի գործողությունները:

Գյուղը գտնվում է բարձունքի վրա:

Ընդհանուր ճանապարհից գյուղ բարձրացող մոտ մեկ կմ ճանապարհի երկու կողմերին բազմաթիվ ընկուզենիներ կան, որի համար էլ այդ վայրը կոչվում է «Ճըղպըրոտ»:

Տղաները ականապատման աշխատանքներ էին կատարում այդտեղ: Նախազգում էին, որ պատանդների հետևից գալու են և ընդհարումն անխուսափելի է լինելու, պատրաստվում էին չթողնել ոչ ոքի գյուղ մտնել:

Իսկ նրանք չուշացան:

Օգոստոսի տասնհինգի առավոտյան նոր անակնկալ էր սպասվում մեզ:

Մեր տունը բլրի վրա է, որտեղից երևում են գյուղ մտնող ճանապարհներն ու մի քանի հարևան գյուղեր:

Ջոկատի տղաները հերթապահում էին մեր բակում, բլրի ծայրին գտնվող թթենու տակ պատրաստված նստարաններին նստում էին, հս-

կում օմոնականների անց ու դարձը, հայտնում մյուս գյուղերին նրանց շարժվելու ուղղությունը.

Ալլո՛, ձեր գյուղի ուղղությամբ բարձրանում են երկու բլոճներ /БТР/, կամ...

-Թիթեռը (ուղղաթիռը) կանգնեց, որևէ գյուղի մոտ,- հաճախ էինք լսում նրանց հաղորդումները:

Առավոտյան նկատեցինք, որ զրահապատ փոխադրիչների մի խումբ շրջվեց դեպի մեր գյուղը:

Լուրն իսկույն տարածվեց գյուղում:

Կանայք ու ծերերը հանձնարարություն ստացան իջնել «Ճըղպըրոտը», կտրել գյուղ բարձրացող ճանապարհի ամենանեղ հատվածը, չթողնել զինվորներին գյուղ բարձանալ:

Իսկ տղաների մի մասը (կեսը թողել էին պատանդներին հսկելու), զինված խլված ինքնաձիգներով, հրացաններով, նռնակներով, պատսպարվեց նույն հատվածին կից Արշակեն բաղի ցանկապատի հետևում:

Շարասյունը եկավ, կանգնեց ճանապարհի կեսին, համարյա թաքնված տղաների կողքը: Նրանց ցանկապատն ու թփուտներն էին բաժանում:

Հրաման ստացան նախաճաշելու հենց մեքենաների վրա: Մի-մի պահածո հանեցին ու կերան, կերակրեցին նաև հետները բերած շներին:

Մինչ կնախաճաշեին, ահագին կանայք հավաքվեցինք նրանց մոտ և կանգնեցինք դիմացները՝ փակելով ճանապարհը:

Ամեն ինչի սկիզբն է դժվար: Կանանց մի մասն արդեն փորձ ուներ, չէր վախենում, մի մասն էլ, ոգևորված նրանց կատարածով, համարձակորեն առաջ էր շարժվում:

Ճանապարհը կտրող խմբի մեջ ամենից ակտիվը 60-ամյա Արմեն քեռին էր, որը երեխա ժամանակ թոնիրն էր ընկել, վառվել և դեմքով հիշեցնում էր Բակունցի «Մթնաձորի» Ավիին:

Նա մահակը ճոճելով և անսովոր ձայնով հայհոյելով մոտենում է զրահապատ մեքենային: Վարժեցված շները ծառս են լինում դեպի նա և սկսում ուժեղ հաչել: Արմեն քեռին մահակը բարձրացնում է, որ խփի շներին: Զինվորներից մեկը ինքնաձիգով կրակ է բացում օդում: Դատարկ փամփուշտները թափվում են կանանց գլխներին:

Հանկարծակի բարձր վայնասունն ու հարայ-հրոցը թնդացնում են օդը: Վախեցած կանայք բարձրաձայն հայհոյում են, մի քանիսը՝ լացում:

«Ավչարկա» շները ուժգին կատաղությամբ հաչում են և նրանց պա-

հողները հազիվ են զսպում՝ կապերն ամուր բռնած, որ չթողնեն հարձակվեն կանանց վրա:

Կրակահերթն ու կանանց վայնասունը լսելով՝ թաքնված տղաները լեղապատառ եղան.

-Պա՜հ, կանանց կոտորեցին,-ասացին նրանք և, թաքստոցից դուրս գալով, ցանկացան մոտենալ ու ընդհարվել զինվորների հետ, բայց, տեսնելով, որ կանայք չեն վնասվել, կես ճանապարհին, մացառների մեջ տապ արին: Մեկը, նռնակները գրպանում երևալիս, այնքան էր մոտիկացել, որ համարյա խառնվել էր մեզ: Ընդհանուր իրարանցման մեջ զինվորները չնկատեցին տղաներին, կանայք խտացան այդ կողմի վրա, պատնեշ արին, որ տղաները չնկատվեն:

Զինվորներից մեկը հրամանատարից խնդրեց իրավունք տալ ճանապարհն ազատել:

Կանայք սկսեցին լաց լինել դիտավորյալ, իբր վախենում են:

Զավեշտական էր Քնարիկ Հարությունյանի լացը, որը լսելով, ընդհանուր սարսափի մեջ հազիվ էինք զսպում ծիծաղներս…

-Հողե՜մ դրանց գլուխը, սու՜տ-սու՜տ եմ լաց լինում, որ կարծեն, թե վախենում ենք, դուք էլ այդպես արեք, հողեմ դրանց գլուխը, - ձեռքերով երեսը ծածկած «ողբում էր» նա:

Հրամանատարը մերժեց զինվորի պահանջը՝ ուժով ճանապարհը բացելը:

Մինչ կանայք լացում էին, մեծահասակները՝ Ներսեսը, Վաչագանը սկսեցին բանակցությունները հրամանատարի հետ:

Նրանք պահանջում էին ճանապարհն ազատել, որպեսզի գյուղ մտնեն ստուգումներ կատարելու՝ պատանդներին գտնելու համար:

Մենք համոզում էինք, որ գյուղում ոչ մի պատանդ զինվոր չկա, որ մեր գյուղում երիտասարդներ չկան, մենք ոչ մի բանից տեղյակ չենք և այլն:

-Որտե՞ղ են ձեր ամուսինները,- հարցրեց հրամանատարը:

-Ռուսաստանում են, «սեզոն են» գնացել,- պատասխանում էին կանայք:

-Ու՞ր են ձեր գյուղի տղաները, բոլոր գյուղերն ունեն, դուք ջոկատ չունեք:

-Ո՛չ, մենք ջոկատ չունենք, մեր տղաներին փախցրել ենք Ռուսաստան, վախենում ենք բռնեն, դրա համար գյուղում տղամարդ չկա, երեխաները վախենում են, չենք ուզում զրահապատ մեքենաները գյուղ մտնեն,- համոզում ենք մենք:

-Բայց ոչ մի գյուղում մենք նման բան չենք տեսել,- ասաց հրամա-

նատարը:

Շատ խոսելուց հետո եկանք փոխզիջման. զրահապատ մեքենաները գյուղ չեն մտնելու, մնալու են նույն տեղը կանգնած, մի փոքր պատվիրակություն ոտքով մտնելու է գյուղ՝ ստուգումներ կատարելու:

Հրամանատարը, որ մի բարձրահասակ, սլացիկ կազմվածքով, գեղեցիկ դեմքով, զարմանալի երկար մատներով սպա էր, չնայած օգոստոսյան տապին, հագել էր պաշտպանական հագուստ և հագիվ էր դիմանում շոգին, մի քանի զինվորներով բարձրացավ գյուղ:

Գյուղի մուտքին ջրածորակ կա:

Այդտեղ էլ հավաքվել էին փոքր երեխամայրերը, որոնք գրկի երեխաների պատճառով չէին կարողացել իջնել ներքև…

Հրամանատարը սրբեց դեմքից ծորող քրտինքը, կռացավ, ծորակից մի կուշտ ջուր խմեց:

Երբ նա գլուխը բարձրացրեց, կսմթեցի մոտիկ կանգնած Գրետայի գրկի երեխայի հետույքը: Երեխան սկսեց հանկարծակի ուժեղ լացել:

Հրամանատարը կարծեց, թե իրեն նայելով է երեխան լացում: Այդպես էլ նրան համոզեցինք, որ երեխաները վախենում են զենքերով մարդկանցից, դրա համար էլ չէինք ուզում գյուղ մտնեն:

Աղբյուրի մոտ զրույցը շարունակվեց 10-15 րոպե: Համոզում էինք նրանց մեր պայքարի արդարացիությունը, լրատվական միջոցների կողմնակալությունը, Մոսկվայի, բանակի թուրքամետ լինելը, մեր ու ռուսների քրիստոնյա լինելը և այլն…

Խումբը մեծացավ: Կանանց մոտ եկավ գյուղի համարձակ երիտասարդներից մեկը՝ Սուրիկը և ասաց.

-Սա ի՞նչ կյանք է, ընկե՛ր հրամանատար, ամիսներով տան, կնոջ երես չենք տեսնում, այսպիսի բան կլինի, մինչև երբ պետք է այսպես շարունակվի…

-Դա ձեր պրոբլեմն է,- ծիծաղելով պատասխանեց հրամանատարը,- մենք էլ ձեր պատճառով ձեր օրին ենք, մենք ի՞նչ անենք…

Հետո մի քանի մարդու հետ գնացին մինչև գյուղի կենտրոնում գտնվող ակումբի շենքը և ետ դարձան: Ստուգումն ավարտվեց:

Շուտով զրահամեքենաների խումբը գյուղից դուրս եկավ, բայց ոչ թե եկած ճանապարհով, այլ գյուղ մտնող հին ճանապարհով՝ մի քիչ գնացին, կանգնեցին՝ տեղանքը ստուգելու:

Թաքնված տղաները այդ մոտերքում էին: Բլրից տեսնելով այս բոլորը՝ Լյոնիկին ուղարկեցի «Աղբյուրի ծորով» գնալու և տղաներին հայտնելու նրանց գնալու ուղղությունը, որպեսզի չբռնվեն, աննկատ խորանան անտառում:

Այսպես անփորձանք անցավ նաև տագնապալից երրորդ օրը:

Մոռացած սարսափը՝ գյուղն այդ գիշեր «հաղթանակած» քնեց՝ սպասելով տագնապալից չորրորդ օրվան:

Զինվորներին պատանդելը ալեկոծել էր Խորհրդային Միությունը: Բազմաթիվ հեռագրեր էին հղվում Մոսկվա, մեծ աղմուկ էին բարձրացրել, մանավանդ, զինվորների մայրերը: Ամեն օր «Ժամանակը» լուրեր էր հաղորդում պատանդների մասին:

Պոլյանիչկոն հրամայել էր ուժով տակն ու վրա անել գյուղը և «խլել» պատանդներին:

Հաթերքցիների անունից հեռագրել էին Գորբաչովին, Ելցինին, զինվորների մայրերի կոմիտեին, որ գյուղի վրա գրոհելուց՝ բոլոր պատանդները կգնդակահարվեն:

Սպասում էինք, որ «մեր» պատանդները պետք է փոխանակվեն մեր գյուղացի Նապոլեոնի հետ: Օդում ուղղաթիռ տեսնելով՝ ուրախանում էինք, որ ահա բերում են Նապոլեոնին՝ փոխանակելու:

Օգոստոսի 16-ի կեսօրին էր: Մի ուղղաթիռ եկավ, պտտվեց գյուղի վրայով և վայրէջք կատարեց գյուղի մուտքին՝ «Ուզում թալայում», զինվորներին «բռնելու» ճանապարհի մոտ:

Մի քանի զինվորականներ իջան ուղղաթիռից և սկսեցին տեղանքը զննել: Սովորաբար ուղղաթիռները շուտ են վեր բարձրանում, բայց սա մնաց:

Մի քանի ժամ հետո զինվորներով լիքը զրահամեքենաների մի շարասյուն եկավ և «բանակ զարկեց» ուղղաթիռի մոտ՝ գյուղի մուտքին:

Զինվորները ճաշելուց հետո ցրվեցին շրջապատում:

Նրանց հարևանությամբ գտնվող թռչնաբուծական ֆերմայի պահակը Թարթառի ափով թաքուն գնաց ներքև և, շրջանցելով նրանց, գյուղ եկավ:

Նորից ահը պատեց բոլորին: Բարի գործի համար չէին ժամանել զինվորականները:

Պատանդները գյուղից վերև էին՝ անտառում, նրանց փնտրողները՝ գյուղից ներքև՝ բաց դաշտում:

Մենք մեջ տեղն էինք:

Մթնեց: Գյուղն ընկղմվեց խավարի մեջ: Էլեկտրական հոսանք վաղուց չկար: Մեջ ընդ մեջ, երբ մոտորով աշխատեցնում էին մեր էլեկտրաաղացը, միայն այդ ժամերին էինք հոսանք ունենում:

Գյուղացիներից շատերը հավաքվել էին մեր տան մոտ, շարքերով նստոտել բլրի վրա, նայում էին զինվորներին, նրանց անցուդարձը և տարբեր խորհրդածություններ անում:

-Հարկավոր է երեխաներիդ գյուղից դուրս հանես, անտառով անցկացրու Վանք, Առաջածոր՝ ծերոնց մոտ, չէ՞ որ վտանգավոր է այստեղ (ես ծննդով առաջածորցի եմ):

-Բայց մի՞թե գյուղում միայն մեր երեխաներն են:

-Ձեր տունը բլրի վրա է, երևացող տեղ, առաջին հարվածն անպայման դուք կընդունեք:

-Եթե մեր երեխաներին հանենք գյուղից, բոլորը կհետևեն մեզ, իսկ դա կնշանակի գյուղից փախչել, որն անհնարին է:

Սպասենք: Ինչ լինելու է, թող լինի:

Լուսացավ: Օգոստոսի տասնյոթն էր:

Բանակն արթնացավ և սկսեց իր առօրյա հոգսերը հոգալ՝ լվացվել, նախաճաշ, ճաշ…

Լսեցինք, որ Մոսկվայից Արցախ են ժամանել դեպուտատական խումբ՝ զինվորների մայրերի կոմիտեի ներկայացուցիչների հետ:

Օգոստոսի 18-ին դեպուտատական խումբը, ժողովրդական դեպուտատներ, գնդապետներ Վիլեն Մարտիրոսյանի, Սմիռնովի գլխավորությամբ, զինվորների մայրերի կոմիտեի ներկայացուցիչների հետ եկան Հաթերք և Վերին Հոռաթաղ՝ տեսնելու պատանդների վիճակը:

Մեր տղաները ոչխար մորթեցին, լավ հյուրասիրեցին հյուրերին՝ անտառում, աղբյուրի մոտ սեղան բացելով: Սեղանին մասնակցում էին նաև պատանդները:

Պատանդների վիճակը լավ էր, եկողները գոհ էին: Միայն մեկն էր վիրակապով: Երբ հարցրին, թե ինչո՞ւ է ձեռքը կապած, նա պատասխանեց.

-Դա ես վաստակել եմ: (Փախչելու փորձ արած զինվորն էր):

Սմիռնովը արգելել էր Պոլյանիչկոյի հրամանը կատարել՝ գյուղի վրա գրոհել, հեռագրել էր Ելցինին, Յանաևին՝ հարցը խաղաղ ճանապարհով լուծելու:

Հյուրերը մեր ջոկատի հրամանատարների հետ պայմանավորվեցին պատանդների ազատման մասին, համաձայնվեցին՝ ինքնաձիգները չտալ:

Օգոստոսի 19-ն էր:

Երեք օր է կոլտնտեսության հավերի ֆերման «հանձնած զինվորներին», ոչ ոք սիրտ չէր անում իջնել նրանց մոտ: Հեռադիտակով տեսնում էինք, թե ինչպես են զինվորները ներս ու դուրս անում ֆերմայում:

Համագյուղացի Ռազմիկ Առաքելյանը՝ մի համարձակ մարդ, այդ ֆերմայի նախկին աշխատողը, մոտոցիկլետով իջնում է ֆերմա: Երբ հասնում է զինվորներին, նրանք ուրախ աղաղակում են.

-Поздравляю, Горбочову нету.

Զինվորներն ասում են, թե ինչու՞ չեն գալիս թռչուններին կերակրում:

Այն հարցին, թե ինչքան պիտի մնան այդտեղ, նրանք պատասխանում են.

-Մինչև պատանդներին գտնելը և տանելը:

Դրանից հետո բանակցություններ են տեղի ունենում նրանց հրամանատարների և գյուղի ղեկավարների միջև: Նրանց նորից հավատացնում են, որ մեր գյուղում ոչ մի պատանդ էլ չկա:

Հրամանատարն ասում է, որ զինվորների մթերքը վերջանում է, կարճ ժամանակով են եկել, բայց դեռ ոչինչ չեն արել, ուշանալու են:

Այդ օրը կոլտնտեսության նախագահ Հայրապետյանի կարգադրությամբ ֆերմայից մի անասուն մորթվեց. մսի կեսն ուղարկվեց զինվորներին, կեսը՝ պատանդներին:

Մի ժամից Ռազմիկը վերադարձավ և հայտնեց զինվորներից լսած ցնցող լուրը:

Մի կերպ (հոսանք չկար) ռադիոյով լսեցինք, որ իսկապես երկրում ռազմական հեղաշրջման փորձ է կատարվել:

Հետո իմացանք, որ այդ փորձը հաջողությամբ չի պսակվել:

Բայց, իհարկե, սա օգնեց, որ երկու օր անց «մեր զինվորները» ինչպիսի արագությամբ եկել էին, նույն ձևով էլ հավաքվեցին և հեռացան գյուղի մոտերքից:

Օգոստոսի 23-ին Պոլյանիչկոն պոչը քաշեց Արցախից:

Մեր տղաները, ինչպես խոստացել էին Սմիռնովին և մյուսներին, պատանդներին անտառով անփորձանք տարան Վանք գյուղը, այնտեղից Խաչենագետի կամուրջը և հանձնեցին…

Տասնմեկ ինքնաձիգներ մնացին ջոկատին:

Այսպես վերջացավ զինվորների պատանդումը Հաթերքի մոտից, ինչպես գրված է շատ գրքերում, որտեղ, սակայն, Վերին Հոռաթաղի տղաների ու կանանց անունը ոչ մի անգամ չի նշվում, չնայած պատանդներից 11-ը «մերն էին», պատանդելու պայմաններն ու տեղն էլ բոլորովին կապ չունեին հաթերքցիների հետ:

Այդպես էլ մեր գյուղացի Նապոլեոնին չփոխանակեցին, խաբեցին:

Երևանից, «Արցախ» կոմիտեից նվերներ ուղարկեցին գործողություններին մասնակցած կանանց:

Պատանդներից խլված ինքնաձիգներով զինվեց մեր ջոկատը և շրջանում դարձավ «շտապ օգնություն» ծայրամասային գյուղերի բնակիչներին պաշտպանելու համար:

Ջոկատի տղաները՝ Կլիմիկը, Ռոման, Ռուդիկը, Արմիկը, Լենիկը, Սուրիկը, Էդիկը, Բաշիրը, Շուրիկը, Յուրիկը, Ժիրիկը, Մուշեղը, Գրիշան, Օլեգը, Նապոլեոնը, Լեմչիկը, Ժորիկը, Ռաշիդը, Յուրան, Էդիկը, Գավոն, Միշան, Լյոնիկը, Սամվելը, Գառնիկը, Սմբատը, Սլավան, Սանասարը, Յաշան Ռաֆիկի և Ագոյի հրամանատարությամբ հերթապահել էին Չափարում, Մարաղայում, Կիչանում, ազատագրել են Նարեշտարը, Աղդաբանը, Իմ-Գերեվենդը, Ումուբլուն և այլ բնակավայրեր:

Նրանցից ոմանք վիրավորվել են, ոմանք՝ քաջաբար զոհվել…

1992թ-ի սեպտեմբերին ջոկատը համալրել է նորաստեղծ Արցախի բանակի շարքերը և մասնակցել բազմաթիվ ռազմական գործողությունների:

Ջոկատի տղաներից Ռափայել Սայիյանը (Միրուք), Արկադիա Շիրինյանը (Ագոն) և Ռոմեո Գալստյանը պարգևատրվել են «Մարտական խաչ 2-րդ աստիճանի» շքանշանով:

Դեռ 1991թ. օգոստոսին որոշել էինք, որ ամեն տարի օգոստոսի 13-ը պիտի նշվի որպես գյուղի օր, բայց, դժբախտաբար, 1992 թ-ի օգոստոսի 13-ին բռնագաղթված էինք, հետո էլ կռիվ, ավելի թարմ իրադարձություններ և… մոռացում:

Գալիք օգոստոսին լրանալու է 10 տարին՝ այդ հերոսական ու տագնապալից օրերի, և գյուղն անպայման կնշի այդ օրը՝ մեծ հանդիսավորությամբ:

Այս վավերագրությունը թող լինի ամենաթանկ նվերը այդ օրվան:

«Եղիցի լույս», «Մարտիկ 2000թ.

Չգիտեմ, ո՞վ է եղել տեղեկություններ հաղորդողը, որ Հրաչյա Բեգլարյանի «Արցախ-Նամե» գրքի «ղարաբաղյան իրադարձությունների օրագիր» էջում կարդում ենք. (2015թ.,379 էջ)

«13 օգոստոսի - Հաթերքցիները շրջափակել են մի զրահամեքենա և պատանդ վերցրել 12 զինծառայողներ: Այնուհետև պատանդ են վերցրել 17 զինծառայողներ... Ժամը 16-ին Հաթերք գյուղում պատանդ են վերցրել ևս 4 զինծառայողներ...

18 օգոստոս - Մոտավորապես ժամը 19-ին Իմ-Քերեվենդ և Ումուբլու ադրբեջանական գյուղերի կողմից շուրջ հարյուր միավոր ռազմական տեխնիկայով ու մեծ թվով զինծառայողներով շրջապատել են Հաթերք գյուղը:

19 օգոստոսի - ...Հաթերքում ազատ են արձակել պատանդ վերցված զինծառայողներից 28-ին:

20 օգոստոսի - Երեկոյան Հաթերքում ազատ արձակվեցին վերջին 12 զինծառայողները: Զինվորական իշխանություններին են վերադարձվել նաև առգրավված զրահամեքենան և «Զիլ-135» մակնիշի ավտոմեքենան: Լիովին վերացրել են գյուղի պաշարումը»:

Վերին Հոռաթաղի մասին ոչ մի խոսք:

Գործողության մասնակիցները ցավ են զգում փատերի խեղաթյուրումներից:

ԳՈՐԾԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԽՈՐՀԵԼ Է ՊԵՏՔ

Ցավով կարդացի «Խորհրդային Ղարաբաղ» թերթում (N26, 8-ին փետրվարի) «Ցույց տուր դեմքդ, իմ ոխերիմ ցավաքաշ» թղթակցությունը:

Հիշեցի 1988 թ. փետրվարյան օրերը Ստեփանակերտի հրապարակում: Երբ փետրվարի 23-ին վերջ տրվեց Կևորկովի «տխրահռչակ թագավորությանը» և նոր ղեկավարություն ընտրվեց, ցուցարարների մեջ անսովոր խլրտում առաջացավ: Հրապարակի մի ծայրից մյուսը թռուցիկներ, բացիկներ էին փոխանցվում նոր ղեկավարների ծաղրանկարներով և կեղտոտ մակագրություններով:

Ես, ստանալով դրանք, մի քանիսը կարդացի և փոխանակ կատարելու «փոխանցիր» հրամանը, սկսեցի պատառոտել դրանք և թափել, մտածելով, որ դա կեղտոտ սադրանք է՝ ցուցարարների ուշադրությունը հիմնական նպատակից շեղելու, նոր ղեկավարության նկատմամբ անվստահություն սերմանելու միջոց:

Պարզ էր, որ անձնական թշնամու կամ էլ պաշտոնի հավակնող որևէ մեկի կամ մի խումբ մարդկանց սև գործն էր դա:

Այն ժամանակվա նորընտիր ղեկավարների հետագա գործունեությունը, նվիրվածությունը ժողովրդին, երևի հուսախաբ չէր արել շատերին:

Նման բան էլ տեղի ունեցավ մեկ էլ Գերագույն խորհրդի ընտրությունների նախօրյակին: Այնքան տարբեր էին ագիտացիաները, որ չգիտեինք, ինչպես կողմնորոշվել, ում վստահել, ում տալ մեր ձայնը: Բայց այստեղ էլ ժողովրդի առողջ բանականությունը հաղթեց, չսխալվեցինք:

Մեր շարժումը միասնություն է առաջացրել համայն աշխարհի հայության մեջ: Այդ շարժումն այժմ թևակոխել է իր վճռական փուլը: Պառակտում առաջացնել մեր ժողովրդի մեջ, անվստահություն սերմանել նոր ղեկավարների հանդեպ, ոտքի հանել ժողովրդին, նման ղեկավարներից ազատվելու, նշանակում է տապալել մեր շարժումը, խախտել մեր միասնությունը, աղավաղել մեր ցանկությունը (առանց այդ էլ քիչ չի խեղաթյուրվում մեր պահանջը):

Ետ նայենք մեր պատմությանը… Միշտ Վարդանի կողքին Վասակ ենք ունեցել. Մխիթարի կողքին՝Տեր Ավետիս, մի խաբվեք օտարի քաղցր խոսքերից ու գանձերից, մի ձգտեք այդպես անձնական հաշիվներ մաքրել, կամ էլ «գահ բարձրանալ» այդ ձևով, այլ է ժամանակը,

բոլորս մի շունչ ու հոգի պիտի դառնանք, միայն մի իղձ, ցանկություն ու նպատակ պիտի ունենանք, որ կարողանանք հարատևել, հաղթել…

Խոսքս, իհարկե, այն մասին չէ, որ «աստվածացնեմ» մեր բոլոր ղեկավարներին: Ո՛չ, նրանք բոլորն էլ օժտված են մարդկային թուլություններով ու թերություններով՝ մանավանդ «ուրախ» ժամանակների թելադրանքով գործած: Բայց դրանք չէ, որ չափանիշ պիտի դառնան նրանց գործունեությունը գնահատելիս, այլ մեր գործի նկատմամբ ունեցած նվիրվածությունը: Մնացած ամեն ինչ պիտի ստորադասել դրան:

Ուրեմն, մի՛ թունավորեք մեր ժողովրդի ալեկոծ հոգիները, մի՛ խանգարեք նրանց. հիշեցե՛ք, բոլոր ժամանակների դավաճանների ճակատագրերը, պատմությունը ձեզ չի ների, ինչպես չի ներել ոչ մի դավաճանի…

«Զրաբերդ» 1990թ. մարտի 3

ԾՐԱԳՐՎԱԾ ԷՐ ԽՆԱՄՔՈՎ

Այսօր, երբ արցախյան հարցի լուծման անարդարացի ձգձգումը հոգեմաշ է անում ժողովրդին, ոմանք, անտեղյակ ամեն ինչից, բացահայտ հայհոյում են «հարցը բարձրացնողներին»…

-Ապրում էինք մեզ համար, ինչու՞ այդպես դարձավ, դժգոհում էին նրանք:

Բարեբախտաբար, շատերն այդպես չեն մտածում, որովհետև հասկանում են, որ, այո՛, ապրում էինք խաղաղ, բայց երկար չէինք ապրելու այստեղ՝ մեր պապենական օջախներում: Մեզ նույնպես սպասում էր աշխարհասփյուռ մեր հարյուր հազարավոր ազգակիցների ճակատագիրը:

Ապրում էինք, բայց հարևան գյուղերի ադրբեջանցիներն արդեն մտովի «բաժանում էին» մեր տներն իրենց միջև, վիճում էին նույնիսկ մեծ ու գեղեցիկ տների համար:

Ապրում էինք, բայց համագյուղացիներիցս մեկը, երբ Բաքվում բնակարան էր ստացել երրորդ հարկում, իններորդ հարկի ապրողը մի կլոր գումար էր առաջարկել նրան տները փոխանակելու համար, ասելով,որ.

-Միևնույն է, դուք՝ բոլոր հայերդ, շուտով տեղափոխվելու եք Հյուսիսային Կովկաս, ինչիդ է պետք, հետո կփոշմանես, որ չտաս:

Սա մինչև 1988 թվականի փետրվարն էր: Իհարկե,այն ժամանակ չփոխեց հայը բնակարանը, հիմա երևի երրորդ հարկին աչքադրած թուրքը առոք-փառոք ապրում է այնտեղ ,իսկ համագյուղացիս փախստական է, ոչ իններորդ հարկում ունի բնակարան, ոչ էլ՝ առաջին:

Ապրում էինք,բայց մեր հարևանությամբ ապրող թուրքերը 12-ական երեխաներ էին ունենում և նրանցից մեկը, երբ հերթական «այցելության» էր եկել մեր տուն՝ հագած շոր ու ուտելիք տանելու, մորս նախատական խոսքից, թե որ չեն հասցնում լավ ապրել, ինչու են այդքան երեխաներ ունենում, հարևանուհիս միամտաբար, թե անկեղծորեն պատասխանեց.

-Է՜, Լուսի՛կ տյոտա, բա մեզ տակավը ասում են շատ խոխա պիրաք, հինչ անենք...

Ես անձամբ լսել եմ Հեյդար Ալիևի «ռաժդայտե մատերի, վը մընե պատոմ բուդետե պանիմատ»-ը:

Ապրում էինք, բայց 1970-74 թվականներին Ստեփանակերտում սովորելիս հաճախակի «լենինյան ստուգարքներ» էին անցկացնում, մեկ-մեկ ստուգում էին ուսանողների վզնոցները, ժամացույցի շղթայիկները և վայ նրան, որի վրա խաչ լիներ կախված: Այդ տարիներին ադրբեջանական կուրսերի ուսանողները մանկավարժական պրակտիկան անց էին կացնում Շուշիում՝ Ստեփանակերտում այդ լեզվով դպրոց չլինելու պատճառով, իսկ մի քանի տարի հետո, Ստեփանակերտի փողոցներով քայլելիս, ավելի շատ ադրբեջանցի աշակերտների, ուսանողների, միլիցիոների էինք հանդիպում, քան հայերի, պատահականությու՞ն էր, թե՝ ալիևյան քողարկված քաղաքականություն: Իհարկե, քաղաքականություն, որն այսօր իրագործում են բացահայտ:

Ես վաղուց եմ համոզվել և որպեսզի Ձեզ՝ տրտնջացողներիդ էլ համոզեմ, ուզում եմ մեջ բերել ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրության և Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության օրգան «ֆիլմ» թերթում տպագրված ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Ստեփան Անդրանիկյանի «Այսօրվա հայացքով կամ հանդիպումներ Հեյդար Ալիևի հետ» հոդվածից հատվածներ.

«1966թ. «Սայաթ-Նովա» ֆիլմի նկարահանման ժամանակ անհրաժեշտություն զգացվեց կարևոր մի դրվագի համար նկարել Ձուղայի գերեզմանոցը, որը գտնվում էր Նախիջևանից ոչ հեռու՝ սահմանամերձ գոտում:

«Ձինվելով» համապատասխան փաստաթղթերով, նկարահանող խումբը ճանապարհվում է Նախիջևան, որտեղ, ստուգելով փաստաթղթերը, նրանց տանում են Նախիջևանի Ինքնավար Հանրապետության

պետանվտանգության վարչության տնօրեն Հեյդար Ալիևի մոտ, որը, ստուգելով փաստաթղթերը, խիստ տոնով ասում է.

-Լսե՛ք, ինչո՞ւ եք դուք՝ հայերդ, անընդհատ գալիս Նախիջևան, է՛լ նկարիչ, կինոշնիկ, թղթակից, գրող: Ի՞նչ եք ուզում դրանով ասել,ապացուցել, որ էս հողերը ձերն են:

-Ապացուցելու հարկ չկա, դա պատմականորեն վաղուց ապացուցված է,- պատասխանեցին:

-Պատմության տնօրեններն այստեղ հիմա մենք ենք, վերցրեք Ձեր փաստաթղթերը, գնացեք ու այս կողմերում այլևս չերևաք, Ձուղա չեք գնա:

Երբ փորձեցին ընդդիմանալ, նրանց բանտարկել տվեց նկուղում. հինգ ժամ պահելուց հետո նորից տարան Ալիևի մոտ:

-Գնացե՛ք, գնացե՛ք ու լավ հիշեք, որ Նախիջևանի հետ հաշիվներն արդեն մաքրել ենք, հիմա հերթը Ղարաբաղինն է:

Սա դեռ 1966 թվականին: Ի դեպ,մի անգամ չէ, որ Հ.Ալիևը նման հայտարարություններ է արել իր ելույթներում:

Կարիք կա էլի օրինակներ բերելու,սրանք, իհարկե, պրիմիտիվ օրինակներ են, ես չեմ խոսում մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված խտրականությունից, ճնշումներից,դրանց մասին մի անգամ չէ, որ ասվել է, ուղղակի իմանանք,որ այսօրվա մեր ցավալի դրության համար մեղավորը սկսողները կամ ակտիվիստները չեն, նրանք ընդամենը սթափեցրել են ժողովրդին ալիևյան նենգ հայատյաց, Արցախը հայաթափելու քաղաքականությունից,ոտքի են հանել ժողովրդին՝ տեր կանգնելու պապենական հող ու ջրին, հանդ ու ձորին, տանն ու այգուն:

1990թ. «Ձրաբերդ»

ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԺՈՂՈՎ ԳԵՏԱՎԱՆՈՒՄ

Գետավանում օրերս կայացավ Հաթերքի սպառընկերության լիազորների ժողովը՝ ներկայությամբ ենթաշրջանի գյուղերի բաժնետեր լիազորների մեծամասնության:

Լսվեցին սպառընկերության վարչության նախագահ Կ. Հարությունյանի և վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Հ. Լալայանի զեկուցումները, միանգամայն դեմոկրատական սկզբունքներով ընտրվեցին սպառընկերության վարչության անդամներ և մարզսպառընկերության առաջիկա համագումարի պատգամավորներ: Լիազորների պահանջով օրակարգի մեջ ավելացվեց մեկ հարց, ևս, այն է՝ «Մարզսպառընկերությունը հանել Ադրբեջանի առևտրի մինիստրության ենթակայությունից»:

Նման առաջարկություններ և համապատասխան որոշումներ ընդունվել էին դրան նախորդած մյուս գյուղերում անցկացված բաժնետերերի ժողովներում:

Օրակարգում ավելացված հարցի կապակցությամբ արտահայտվեցին շատերը: Նշվեց, որ սպառընկերությունը չի կատարել պլան-առաջադրանքները այն պատճառով, քանի որ մարզսպառմիությունը հիմնականում ապրանքներ է ստանում հանրապետության բազաներից, որն էլ մարզին մատակարարում է կամայականորեն, ընդհատումներով, դժվարությամբ են ստացվում ֆոնդավորված ապրանքներն ու մթերքները:

Բացի այդ, մեր բոլոր խանութներում կուտակվում են մեծ քանակությամբ Ադրբեջանում արտադրված ապրանքներ, որոնք մեր բնակչության շրջանում պահանջարկ չեն վայելում՝ ցածրորակ լինելու պատճառով: Դրանք վաճառվում են միայն տարիներով խանութներում մնալուց և մի քանի անգամ էժանացվելուց հետո, պատահական չէ, որ այս տարի սպառընկերության տասնյակ օբյեկտներից պլանները գերակատարել է հիմնականում էժանացված ապրանքների խանութը:

Գաղտնիք չէ, որ մարզի հայ բնակչությունը ուրախությունների և տխրությունների նախօրյակին Հայաստան է մեկնում՝ այնտեղից մթերքներ կամ այլ անհրաժեշտ ապրանքներ գնելու: Այդ այդպես էր միշտ, իսկ այժմ, երբ երկիրը անցնում է տնտեսավարման նոր մեթոդների, երբ առաջին պլան է մղվում ինքնաֆինանսավորումն ու ինքնածախսածածկումը, գնորդները, առևտրի աշխատողները պահանջարկին դիմացող քիչ սպասումներ ունեն: Դրա կողքին ենթաշրջանի

գնորդների մոտ մեծ պահանջարկ են վայելում և արագ սպառվում են Հայաստանի արտադրած ապրանքները: Ելնելով դրանից, լիազորները, բոլոր բաժնետերերի անունից առաջարկում են, որպեսզի մարզսպառընկերությունը դուրս բերվի Ադրբեջանի առևտրի մինիստրության ենթակայությունից:

Այդ դեպքում միայն հնարավոր կլինի բավարարելու գնորդներիպահանջները և կատարելու ապրանքաշրջանառության պլանները: Ընդունվեց համապատասխան որոշում: Առաջարկվեց հարցը դնել ու քննարկել նաև մարզսպառմիության առաջիկա համագումարում:

«Բարեկամություն»
N 154 1988թ. դեկտեմբերի 27

ԲԵՐԿՐԱԼԻ ՊԱՀ

Սեպտեմբերի 14-ը, ինչպես այս տարվա շատ օրեր, մեզ համար դարձավ նշանակալի, հիշարժան:

Մենք՝ ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի վերին գոտու բնակիչներս մեր հեռուստաէկրաններից լսեցինք կարոտալի ու բերկրալի հայկական խոսք և անչափ ուրախացանք:

Չեք պատկերացնի այն ուրախությունը, որ համակել էր բոլորիս, մենք իրար կանչում էինք գյուղում, շնորհավորում, չէ որ «Երևանն է խոսում»…

Բայց ուրախության հետ մեզ նաև տխրություն պատեց, մենք ավելի զգացինք մեր թշվառությունը և սսկվեցինք: Շատերը հայերեն լավ չեն հասկանում, պատկերացնում ե՞ք, մենք միշտ ադրբեջանական հաղորդումներ ենք լսել, ճանաչում ենք նրանց բոլոր երգիչներին, գրողներին, դերասաններին, մենք դեռ հայ գրող ու դերասան չենք տեսել և ինչքան ենք ափսոսում դրա համար: Հեռուստաէկրանից դեռ ոչ-ոք մտերիմ, սիրալիր մեզ՝արցախցիներիս հետ չէր հաղորդակցվել, իսկ հիմա… Ահա երգում է Նաիրուհի Ալավերդյանը, նույն այն երգերը, որոնցով մի ամիս առաջ հանդես էր եկել մեր գյուղում: Առաջին անգամ զգացինք, որ հեռուստացույցը մեր առօրյա կյանքն է ներկայացնում, իրական կյանքը:

Այո, անհամբերությամբ սպասում ենք հայկական հեռուստատեսության յուրաքանչյուր հաղորդման…

«Բարեկամություն» 1988թ. 06.10. N120

«ԺԱՄԱՆԱԿԸ» ԽՌՈՎԵ՞Լ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՑ, ԹԵ՞...

Դեկտեմբերի 7-ին լրացավ Հայաստանում տեղի ունեցած ահեղ երկրաշարժի մեկ տարին: Այդ օրը՝ որպես սգո օր, նշվեց ամբողջ աշխարհում սփռված հայության կողմից (և ոչ միայն նրանց), ասել է թե՝ համարյա ամբողջ աշխարհը նշեց այդ օրը:

Մենք ևս դպրոցում նշեցինք երկրաշարժի անմեղ զոհերի տարեդարձը, պատրաստել էինք երկրաշարժը պատկերող ստենդներ, սգո միտինգի մասնակից ուսուցիչների, աշակերտների, ծնողների դեմքերից և զեկուցման, և աշակերտների արտասանությունների ժամանակ արցունքներ էին հոսում:

Այո, տարի էր անցել, բայց չէր սպիացել վերքը, մեծ վիշտը դեռ բուժման, սփոփանքի շատ կարիք ուներ:

Կեսօրից հետո մենք սգում էինք արդեն հեռուստացույցի առաջ՝ նորից տեսնելով դաժան արհավիրքը ներկայացնող բազմապիսի սրտակեղեք նկարներ, գետնի տակ անցնող բազմահարկ շենքեր՝ բնակիչներով, փլատակներից լսվող նրանց օրհասական ճիչերը, որդեկորույս ծնողների կամ հրազատների ողբն ու կոծը:

Արցունքները չորանալու պահեր էլ կային, իհարկե, փլատակներից վեր էին հառնում նոր շենքեր, թաղամասեր, ամենուրեք կառուցվել էին հուշարձաններ կամ հուշաքարեր՝ զոհերի հիշատակին, հուշարձանախաչքարի ճեղքվածքից ծաղիկ է «բուսել», ասել է թե՝ կյանքը փյունիկվում է աղետի գոտում...

Մեծ եղավ զարմանքս, երբ երկրաշարժի զոհերի հիշատակին կառուցված ոչ մի հուշարձանի բացման, տուժած վայրերում ոչ մի տեղ սգո միտինգներին չէին մասնակցում երկրաշարժի հետևանքների վերացման հանձնաժողովից և ոչ մի անդամ Մոսկվայից, բայց չէ որ նրանք Հայաստանից գնալիս հավաստիացրել էին, որ էլի կգան, ուրիշ էլ ինչ հարմար պահի պիտի գային, իրենց աչքով տեսնեին արվածն ու չարվածը, եթե ոչ՝ հենց այդ օրը:

Ո՞վ գիտեր, գուցե նրանք չեն ցանկացել ժողովրդին ասել (անպայման հարց կտային) հարևան հանրապետության կողմից շրջափակման պատճառով աղետի գոտու աշխատանքները տապալելու, եկող օգնությունը ձախողողների նպատակի մասին:

Բայց զարմանալին դեռ առջևում է.

Իրավացիորեն այդ օրը «Լրաբեր» ինֆորմացիոն ծրագիրը ամբողջովին վերաբերում էր երկրաշարժին, և դժվար թե, այդ օրը մեր երկ-

րում ուրիշ այդքան մեծ ցավալի իրադարձություններ լինեին և բնականաբար «Ժամանակն» էլ պետք է սկսվեր երկրաշարժով: Բայց, ի զարմանս մեզ՝ Հայաստանի սգո օրվա մասին ոչ մի խոսք, ոչ մի պատկեր…

Ի՞նչ է սա: Ասենք, եթե Մոսկվայի ականջին չի հասնում հայերի ողբի ձայնը, գոնե աշխարհի հազարավոր եկեղեցիներում հնչեցվող զանգերի սգո ղողանջները հասած կլինեին…

Այդ մտքերի մեջ էի, երբ Լեռնային Ղարաբաղի մասին հաղորդման հետ, իմիջայլոց, նշվեց նաև, որ Ստեփանակերտում սգո միտինգ է եղել երկրաշարժից զոհվածների տարեդարձի առթիվ…

Ինչպես հասկանալ… «Ժամանակը» խռո՞վ է Հայաստանից, չի ուզում նրա մասին որևէ հաղորդում անել, թե այդ օրը մեղադրելու, կեղծելու, համեմատելու բան չէր գտել ասելու, կամ գուցե Հայաստանը հաշվում է ԽՍՀՄ-ից դուրս. այդ դեպքում կարող էր արտասահմանյան լուրերի շարքում նշել, կամ էլ՝ իրենը չի համարում Հայաստանի ցավը:

1989թ. «Զրաբերդ»

ՍԹԱՓՎԵ՛Ք, ԸՆԿԵՐՆԵՐ

Հունվարին նորից ուսուցիչների կոնֆերանսներ չեղան: Երկու տարի է մարզում խախտվել է նորմալ աշխատանքային ռիթմը՝ մեր հարևանների վայրագությունների, ճանապարհային սանձարձակությունների պատճառով:

Երկար ժամանակ է չեմ եղել հայրենի Առաջաձոր գյուղում, ցավով եմ ընդունում այնտեղ վերջերս տեղի ունեցած դեպքերը: Ադրբեջանցիներն այնտեղ փոքրամասնություն էին կազմում, մեծ հոգատարությամբ էին շրջապատված հայերի կողմից:

Ինչքան պիտի թունավորված լինեին նրանց հոգիները, որ ձեռք բարձրացրին իրենց տասնյակ տարիներ կերակրած, եկամտի աղբյուր հանդիսացող ֆերմաների վրա, ավերեցին այն, վառեցին ամառվա շոգին արյուն-քրտինքով հավաքված անասնակերերը: Նրանցից ամեն մեկը հարյուրից ավելի անգամ «հաց է կտրել» հարևան կամ համագյուղացի հայի տանը, եղել է նրա քիրվան, քավորը, լացել են մեկը մյուսի մեռելների համար, պարել են իրար հարսանիքներում, հերթի են կանգնել, սիրով զրուցել նույն աղբյուրի մոտ, նստել են նույն աշակերտական նստարանին, գրասենյակում, երբեք մեկը մեկին ոչ մի վիրա-

վորական խոսք անգամ չեն ասել և ահա հանկարծ՝ թշնամություն իրար նկատմամբ: Հավատալ անգամ չեմ կարողանում, որ երբևէ նրանցից որևէ մեկին հանդիպեմ և նախկին մտերմությամբ չզրուցենք…

Բայց մեր արդարացի հարցի ձգձգումը անհնարինը հնարավոր դարձրեց: Պատկերացնելն էլ դժվար է, թե ինչպես կարելի է թշնամանալ մարդկանց հետ, որոնք քեզ ոչ մի վատ բան չեն արել և մեղավոր են միայն այնքանով, որ իրենց ազգակիցները ինչ-որ տեղ վայրագություններ են արել քո ազգակիցների հանդեպ, չնայած, որ դու կյանքում նրանց չես տեսել և չես էլ հանդիպի, իսկ հարևանություն, բարեկամություն ես արել այլազգի ծանոթիդ հետ:

Օրենքով, որդիները ծնողների մեղքը չեն քավում, ուր մնաց բոլորովին անծանոթ մարդկանց համար թշնամանալ նույնիսկ հարազատ երեխաների մոր հետ: Կոխկրտվում են բոլոր գրված ու չգրված օրենքները, ինչպես է, որ սա չեն հասկանում վերևներում, չէ որ հարցի անհարգի ձգձգումները դեռ «անկանխատեսելի» շատ գործողությունների տեղիք կտան՝ ավելի կխորացնեն դարավոր իրար մոտ ապրելուն դատապարտված երկու ժողովուրդների թշնամությունը:

Ադրբեջանցի՛ կոլեգաներ, գիտեմ, այսօր դուք էլ մի օրի չեք, ամպոտ օրերին ձեր համար էլ կյանքի ճանապարհները փակվում են, որքա՞ն կարելի է այսպես ապրել, սթափվե՛ք, բացե՛ք ճանապարհները, ինքներս հայթայթենք մեր հացը, ինչքան էլ մեր ու ձեր ազգակիցներն իրենց ունեցածից մեզ բաժին հանեն, միևնույն է, հիշեցեք հայտնի ժողովրդական առածը՝ «Ուրիշի հացը չի կշտացնում»:

Ամեն օր այսպես իրարից մեկուսացած չենք ապրի, ամեն ինչ իր տեղը կընկնի, մենք նորից կհանդիպենք շրջկենտրոնում (եթե, իհարկե, ձեր արարքներից ամաչելով՝ չլքեք շրջանը), ծանր ու թեթև կանենք իրարից մեկուսացած ժամանակ կատարածներս և կդատապարտենք նրան, ով ամոթով կմնա իր ընկերների առաջ:

Որտե՞ղ ես Սաբի՛ր, լսել եմ, որ հայրական տունդ վառել են և ափսոսացել եմ (թող ներեն ինձ բնավեր ազգակիցներս իրենց ավերված ու թալանված տների համար, դրա համար էլ եմ շատ վշտացել, դառնացել), չէ որ այն կառուցվել է իմ աչքի առաջ, աշխատավոր հորդ բազմանդամ ընտանիքը կերակրելու հետ տնտեսած գումարներով, վերջին տարիներին այն ահագին ընդարձակվել էր, նորոգվել: Խելոք երիտասարդ էիր, մի՞թե չկարողացար սանձել ազգիդ «հերոսներին», ախր գիտեմ, դու ազգայնամոլ չես դաստիարակվել, հպարտանում էի, որ ժողովներում մաքուր, գրագետ հայերենով ելույթ էիր ունենում, հպարտանում էին և ուսուցիչներդ, լավ ապագա էին գուշակում քեզ համար,

ու՞ր ես հիմա, նախկին գաղափարներից մնացել է, թե ազգային ճակատայինները թշնամանքով լցրել են հոգիդ քեզ սնած, կրթած, դաստիարակած մարդկանց նկատմամբ:

Որտե՞ղ եք Նարեշտարի, Իմ-գերեվենդի, Չարեքտարի, Մանիքլուի դպրոցի դիրեկտորներ: Ամիսներ առաջ զրուցում էինք մեզ հուզող հարցերից, գովում էիք հայ ուսուցիչներին, գանգատվում ձերոնցից, որ շատ են անգրագետ, թեկուզ՝ դիպլոմավոր: Ինչո՞վ է զբաղվում մաթեմատիկայի այն ուսուցիչդ, որի մասին պատմում էիր, որ դեռ ոչ մի անգամ տարեվերջի քննություններին չի մասնակցել, միշտ որևէ պատճառով բացակայում է, քանի որ չի կարողանում ծրարի առաջադրանքները լուծել: Ինչո՞վ եք զբաղված այժմ, գյուղումդ շատ են քարեր ժողովում, անգրագետ ուսուցիչդ օգնում է նրանց, թե հրացաններն է յուղում…

Գիտեմ, դուք ձեր գյուղերում կշիռ ունեք, սթափվե՛ք վերջապես, զսպեք ազգայնամոլ տարրերին, հիշեցեք.

-Սարը սարին չի հանդիպի, մարդը մարդուն կհանդիպի:

Եթե ուզում ենք ապրել, մենք պիտի հասարակության մեջ, մեր սաների հոգում սկսենք նոր շինարարություն, որպեսզի մեզ համար հնարավոր դարձնենք կյանքի հարատևությունը: Փոխադարձ ֆիզիկական ոչնչացումը ոչ մեկիս էլ ձեռնտու չի, իսկ որ ձեր բռնած ուղին տանում է դեպի ոչնչացում, կասկած չի հարուցում.

Դուք փորձեցիք ամեն ինչով՝ Սումգայիթով, Կիրովաբադով… Բաքվով մեզ հետ կանգնեցնել մեր շարժումից. ինչ նոր հնարներ էլ անելու լինեք, չեք կարող կոտրել մեր կամքը, դրանով ավելի կխորացնեք մեր թշնամանքը. այսուհետ միայն մեկ ուղի ունենք մենք ու դուք՝ մեր հարցի արդարացի լուծում՝ միացում, հետո էլ՝ հաշտություն:

Մենք մեր պայքարում արդար ենք և հետ չենք դառնա, ձեր քարերը մեզ ոչ թե հուսահատեցնում, այլ էլ ավելի են թեժացնում մեր հոգու կրակը, ավելի լավ է չչարչարվեք քարեր հավաքել, ցուրտ է, ձմեռ է, սառն են քարերը, չմրսեք ճանապարհի կողքերին, դառնանք ամենքս մեր առօրյա հոգսերին:

Շուտով գարուն կգա, կհալվեն բոլոր սառույցները, թող նաև՝ մեր սրտերի սառույցները, սթափվե՛ք ընկերներ, վար ու ցանք անենք, սերմը հողին տանք, թշնամանքից օգուտ չկա, դրանից տուժում են բոլորովին անմեղ մարդիկ, պատմությունը մեզ չի ների դրա համար, երբե՛ք…

«Զրաբերդ» 22.02.1990թ.

ԻՄ ԿԱՐԾԻՔԸ

Ընթերցելով խորհրդային զորքերի Արցախում մնալ-չմնալու մասին հարցադրումը՝ որոշեցի արձագանքել:

Իմ կարծիքով, դեռևս անչափ անհրաժեշտ է զորքերի առկայությունը մեր մարզում: Շնորհակալություն մեր զինծառայողներին այն բոլոր ծառայությունների համար, որ կատարվել են նրանց կողմից և դեռ այսուհետ էլ անհրաժեշտ է լինելու կատարել, քանի դեռ մարզը շրջափակման մեջ է:

Սակայն անհրաժեշտ է նաև ասել մի այլ բան. զորքերը պետք է գտնվեն ոչ թե Ստեփանակերտի կենտրոնում, այլ մարզի սահմանագծում և նրա հարևան այն շրջաններում ու թեժ կետերում, որտեղ հատկապես զգացվում է նրանց կարիքը:

Բայց, ինչպես շատերին, այնպես էլ ինձ մի միտք է տանջում. ինչո՞ւ մեր զինվորները անճարակություն են ցուցաբերում մարզում կարգուկանոնի հաստատման գործում, նրանք չե՞ն կարող, թէ չեն ուզում իրավիճակը նորմալացնել, սաստել կարգազանցներին, պատժել խաղաղ, աշխատավոր խորհրդային մարդու հանգիստը խանգարողներին:

Մարզում տուժողներ շատ կան ազգամիջյան ընդհարումներից: Եվ զոհվում են բոլորովին անմեղ մարդիկ, գուցե նրանք, ովքեր ավելի շատ են հավատում խորհրդային կարգերին, չեն պատկերացնում վերահաս վտանգը:

Մեր կարծիքով, ոչ ոք չի մեղադրի այն հրամանատարին (Թբիլիսին ուրիշ էր), որը հրաման էր տվել քարկոծող ամբոխի դեմ կրակ բացել: Այո՛, թող դրանցից զոհվեն, թող ճանապարհային ավազակություն անող, առանց համարանիշի մեքենաներից կրակողները տուժեն, ուրիշի տունն ու այգին, դաշտն ու արոտավայրերը մտնողները զոհվեն և ոչ թե բնավեր եղած, իրենց առօրյա հոգսին ու ցավին գնացող անմեղ մարդիկ:

Մեծ մանկավարժները ասել են. «Անպատժելիությունը ծնում է խուլիգանություն»: Իսկ եթե խուլիգանությո՞ւնն է մնում անպատիժ, ինչպես անպատիժ են մնում 20-րդ դարի հագուստ-կապուստով, բայց նախամարդու հոգեբանությամբ բարբարոսնե՞րը:

Եթե 1988 թվականի փետրվարի 20-ի առաջին քարկոծումը պատժվեր, եթե պետությանն ու խորհրդային մարդկանց հասցված մեծագույն վնասները վերականգնվեին քարկոծող գյուղերի հաշվին, ապա նոր քարակույտեր չէին ժողովվի, չէր լինի Սումգայիթը, Խոջալլուն, Չարդախլուն, Կիրովաբադը…: Բայց որովհետև ոչ ոք չի պատժվել,

դրա համար էլ քարկոծումներն ու խժդժությունները ծավալվել են և ընդունել ներկայիս ահավոր չափերը:

Ես գտնում եմ, որպեսզի մեր բանակը մնա իր բարձրության վրա, չպետք է խտրականություն դնի ազգերի միջև (ամեն օր հարյուրավոր մեքենաներ են առաջնորդվում Քյալբաջար և հակառակը), հավասարություն՝ տուժողների և տուժվածների միջև: Զինվորները մեր որդիներն ու եղբայրներն են, նրանք պետք է պահպանեն մեր հանգիստը, թող այնպես լինի, որ մենք չկորցնենք մեր հավատը բանակի ուժի և դիրքորոշման նկատմամբ: Երբեք ու երբեք բարոյական չէ, երբ պաշտպանում են տուժող կողմի շահերը՝ տուժվողներին թողնելով հուսահատության և հիասթափության մեջ:

Իսկ ո՞րն է մեր մեղքը: Որ միայն հազարնե՞ր ենք յոթ միլիոնի կողքին, թե՞ որ առաջինը մենք ենք հավատացել վերակառուցմանն ու դեմոկրատացմանը, պատռել ցանկացել անարդարության վարագույրը: Սակայն չենք կարողանում ցույց տալ նրա հակառակ՝ այլանդակ կողմը, որովհետև մեր շատ ղեկավարների խոսքը գործից դեռ շատ է հեռու:

1989թ. «Զրաբերդ»

ԿՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ՊԱՅՔԱՐԸ, ՄԻՆՉԵՎ...

(Երգիծական)

Դերասան Վեզիրովը, արդարացնելով ղարաբաղյան շարժումը, իրեն տրված հարցմանը խեղկատակի շարժումներով պատասխանեց, որ իսկապես ինքնավար մարզում շատ պրոբլեմներ են կուտակվել, ինչպես օրինակ, մինչև հիմա մարզը չունի ադրբեջանական լեզվով թերթ:

Ոչ ավել, ոչ պակաս, հարցերի հարցը այդ էր, որ կար, բա էլ որ օրվա եղբայրներ ենք, որ դրա համար դուրս չգայինք հրապարակները, չէ՞ որ մարզում իսկապես ադրբեջանական ամեն ինչ կար, բացի թերթից, թերթ ինչո՞ւ չպիտի ունենանք:

Դե՜հ, քանի որ մարզում դեռ ադրբեջանական թերթ չի տպվում, դրա համար էլ շարունակում էինք մեր պայքարը:

Քանի որ կարող էր բենզին չլինելու պատճառով թերթի առաքումը ուշանար, որոշեցին նախ ադրբեջանական լեզվով հեռուստահաղորդումներ ունենալ (տեխնիկայի դար է), հետո այդ թերթի ընթերցողների քանակը ինչքան հնարավոր է ավելացնել, որի համար ապօրինի մեծ

շինարարություն ծավալվեց և կանոնավոր վերաբնակեցումներ կատարվեցին, իսկ ամենից կարևորը, որպեսզի մարզի հիմնական բնակչությունը կարողանար ընթերցել այդ թերթը, պետք է որոշակի աշխատանք տարվեր նրանց շրջանում:

Մեր «եղբայրները» եռանդուն գործի անցան: Արգելվեցին կենտրոնական և մարզային հեռուստահաղորդումները մարզում, փոխարենը միացնելով միայն իրենցը, որպեսզի ավելի օգտավետ անցնեին դասերը:

Քանի որ մենք էլ հմուտ ազգ ենք, կանոնավոր յուրացնում ենք այն ամենը, ինչ ցուցադրում կամ հաղորդում են: Լեզվի հետ մենք ջանասիրաբար յուրացնում ենք նաև մեր «եղբայրների» կրոնական ծիսակատարությունները:

Հաճախակի տեսնելով և լսելով վերջերս հեռուստացույցով ցուցադրվող նամազներն ու շախսե-վախսեները՝ կարողանում ենք անսխալ վերարտադրել այն, բայց քանի որ փաստաթղթերով դեռևս հայ ենք, պիտի շարունակենք մեր պայքարը, մինչև նրանց հոգևոր առաջնորդները կգործուղվեն մեր գյուղերն ու քաղաքները և մեզ օրինավոր կմկրտեն:

Այնժամ արդեն կբացահայտվի մեր «եղբայրների» երկար տարիների քողարկված քաղաքականությունը և վերջ կտրվի մեր շարժմանը: Այնժամ արդեն, իսկապես, անհրաժեշտություն կդառնա մարզում ադրբեջանական լեզվով թերթի լույս ընծայումը:

«Զրաբերդ» N 40 15 ապրիլ, 1988թ.

ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՆՔ ՄՈՌԱՆԱԼՈՒ

Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոցի տնօրեն Ն. Առստամյանը մոտ երեք տասնյակ է, ինչ հայոց լեզու և գրականություն է դասավանդում: Ճանաչվել է շրջանում «դարի լավագույն մանկավարժ»: Չորս որդիների մայր է, արցախյան շարժման ակտիվ մասնակից: Ն. Առստամյանը «Զրաբերդ»-ի ընթերցողների կողմից սիրված ու հարգված արտահայտիչային թղթակիցներից է: Վերջերս դպրոցի կոլեկտիվով այցելել են Վաղուհասի զոհվածների հուշարձանին՝ հարգանքի տուրք մատուցելու, որն էլ առիթ է դարձել գրելու իր գաղափարակից ընկերոջ մասին:

Այս հոդվածը մտավորական հայ կնոջ հոգու ճիչն է այն մասին, որ

այսօր հաճախ ըստ արժանվույն չեն գնահատվում այն մարդիկ, որոնք կանգնած են եղել մեր պայքարի ակունքներում: Բազմավաստակ ուսուցչուհին, խղճի խայթ է զգում, որ ազգի նվիրյալները մոռացության են մատնվում՝ մեր անտարբերության պատճառով: Հարգելի ընթերցող, ուսուցչուհին լսելով իր խղճի ձայն, դիմել է խմբագրություն: Նրանք, ովքեր ճանաչում են արցախյան պայքարի առաջամարտիկ Արամայիս Բեկնազարյանին, թող արձագանքեն մեզ և «Առաջիններից մեկը» հոդվածի հեղինակին:

ԱՌԱՋԻՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ



Պատմություն են դառնում արցախյան շարժման սկզբնական օրերը: Ամեն տարի փետրվարին նորից բացվում է հուշերիս կծիկը և դեպի ուր էլ որ գլորվում է, առաջին տեղում կանգնած է նա՝ Արամայիս Խաչատուրի Բեկնազարյանը: Վաղուհասից տեղափոխվեց Վ. Հոռաթաղի դպրոց: Նոր կոլեկտիվը սիրով ընդունեց նրան, շատ հարցերում՝ գաղափարակից էին:

80-ական թվականների երկրորդ կեսն էր: Ազգային գաղափարները զարթոնք էին ապրում, այստեղ-այնտեղ սաղմերը ծիլեր էին արձակում, իսկ դրանց մոտով անտարբեր չէր կարող անցնել Ա. Բեկնազարյանը: Կուսակցական չէր, ոչ ոքից և ոչնչից չէր երկնչում, արտահայտում էր այն, ինչ ուրիշները չէին կարող ազատ արտահայտել:

1987թ. ապրիլին կազմակերպեց հուշաքար դնել Վաղուհասի «Թավ» կոչվող տեղամասում՝ Բաքու-Քարվաճառ ճանապարհի կողքին, և ձորակի բնակչության հետ նշել ապրիլի 24-ը: Այն ձախողվեց: ՊԱԿ-ից, կուսշրջկոմից եկան և խանգարեցին, թույլ չտվեցին: Այն ժամանակվա համար դա չափազանց խիզախ որոշում էր:

Ստորագրություններ էր հավաքում, թռուցիկներ ու հոդվածներ ընթերցում երիտասարդների մոտ՝ գաղափարապես հասունացնելով նրանց:

1988թ. փետրվարի 12-ին մասնակցեց Մարտակերտում գումարված ժողովին և ելույթ ունեցավ, հաջորդ օրերին անձամբ ժողովներ արեց

ձորակի գյուղերում, հիմնարկ-ձեռնարկություններում, արձանագրություններ հավաքեց, բազմաթիվ նամակներ, հեռագրեր գրել տվեց՝ «վերևներին»:

Օրերով ցույցերի կանգնեց Ստեփանակերտում. օր ու գիշեր չուներ, մի խոսքով նա դարձել էր ադրբեջանական գյուղերի բնակիչների «աչքի փուշը»: Եվ ահա... 1989 թվականի ամռանը, ոչ մի տեղից չբողոքող, 57-ամյա առողջ, կենսախինդ տղամարդը անսպասելիորեն կրծքում այրոցներ է զգում և մի շաբաթից՝ մահանում: Այդպես էլ առեղծված է մնում նրա մահը: Այո՛, նա արցախյան պայքարի առաջամարտիկ էր, նրա անունը մեր կարծիքով պետք է լինի Վաղուհասում կանգնեցրած հուշարձանին, նրա մասին պիտի գրվի արցախյան հերոսամարտի էջերում՝ որպես գաղափարական պայքարի զինվոր, նրա անունը պիտի լիներ 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժների շարքում: Գաղտնիք չէ, որ մեր հուշարձաններին անմահանում են նաև այնպիսի անուններ, որոնք չնչին ներդրում ունեն մեր պայքարում, մեր հաղթանակի գործում:

Դեմ չեմ, նրանք էլ պատերազմի զոհեր են: Եթե չլիներ պատերազմը, նրանք կենդանի կլինեին, ականը չէր պայթի, ընկերոջ գնդակը սխալմամբ չէր դիպչի: Բայց ճիշտ չէ նաև այն, որ մեկն անմահանա միայն նրա համար, որ գնդակ է դիպել, իսկ մյուսն էլ, որ ամբողջ հոգով, սրտով նվիրված էր մեր պայքարին, այդ պայքարի կազմակերպիչներից էր, բայց մահացել է մինչև ականի պայթելը, չպիտի հիշվի: Նա պիտի հիշվի, գնահատվի, մեծարվի, անմահանա... ոչ ոք և ոչինչ չպետք է մոռացվի:

«Ջրաբերդ», մարտ, 2002թ.

ԿԱՆԱՅՔ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բոլոր կանայք արժանի են ուշադրության, սիրո, հարգանքի, քնքուշ խոսքերի, իսկ այն արցախցի կանայք, ովքեր ապրել են շրջափակման ու պատերազմի տարիներին, արժանի են մեծ գնահատանքի:

Դժոխային պայմանները, որ առաջացել էին շրջափակման ժամանակ (առանց հացի, ջրի, լույսի) ծերբակալություններն ու տանջանքները բանտերում, այն ահն ու սարսափը, որ ունեցել են երեխաների, կռվող որդիների ու ամուսինների համար, տեսել հազարավոր զոհերի

հարազատների ողբը, Սումգայիթը, Բաքուն, Մարաղան, Շահումյանը, բռնագաղթվածների ճակատագրերի վերապրումը, տարիների տքնանքով կառուցածի ավերվելը, ունեցած-չունեցածի թալանվելը, ո՞րը հիշես…

Շատ եմ ասել ու գրել, որ բոլոր նրանք, ովքեր 1988-1995 թվականներին ապրել են Արցախում, բոլորն էլ հերոսներ են:

Ես կներկայացնեմ իմ ճանաչած կանանցից մի քանիսի կյանքից փոքրիկ դրվագներ, կիմանաք, որ նաև նրանց նմաններին ենք պարտական մեր այսօրվա ազատության ու անկախության համար: Նրանք են թիկունք կանգնել մեր զինվորներին, անհրաժեշտության դեպքում՝ զենք վերցրել, ընտանիքի, երեխաների հոգսերը միայնակ հոգացել, կռվող ամուսիններին ազատելով դրանից, երբեմն՝ մեծ զոհողություններով:

Վերինհոռաթաղցի կանայք…

Մի անգամ չէ, որ գրվել է նրանց հերոսության մասին՝արցախյան շարժման և պատերազմի տարիներին: Ավելորդ չեմ համարում Կանանց տոնի միամսյակին նորից հիշել ու շնորհավորել նրանց բոլորին:

1991թ. սաֆոնովյան դաժան օրերն էին: Ամենուրեք ծերբակալություններ, ահ ու սարսափ: Ինչպես ասում են, «դանակը ոսկորին էր հասել»…

Մի ներքին ուժով գյուղը միավորվել էր մի ընտանիքի պես, բոլորը սսկված էին, բայց և վճռական, պատրաստ ցանկացած զոհողության՝ հանուն ընդհանուր գործի:

Օգոստոսի 13-ն էր: Օմոնականները հերթական «որսն» էին կատարել: Ջոկատի հրամանատարության թելադրանքով կանայք իջան մայրուղին, որպեսզի փակեն ճանապարհը և «խլեն» Հաթերքի ջոկատի հրամանատարին ու վարորդին, այսինքն՝ անզեն դուրս էին եկել զրահապատ փոխադրիչների դեմ կռվելու: Բարեբախտաբար ջոկատի հրամանատարին ճանապարհին հաջողվել էր մեքենայից փախչել, իսկ վարորդին տարել էին Ումուլու:

Ճանապարհը կտրելու գնացած կանայք ձեռնունայն չվերադարձան: Նրանք կանգնեցրին մեկ «Ուազ» և մեկ «Ուրալ» մեքենա՝ պատանդելով 11 զինվորի, նրանցից խլելով 11 ինքնաձիգներ…

Նույն օրը նմանատիպ գործողություններ էին կատարվել նաև հարևան Հաթերք գյուղում՝ պատանդելով 27 զինվորների: Դեպքը ցնցել էր ամբողջ Խորհրդային Միությունը: Երբ զորք էին ուղարկել գյուղը խուզարկելու և պատանդներին տանելու, նորից գյուղի կանայք, փոքր երեխաները գրկներին, փակել էին գյուղ մտնող ճանապարհը, չէին թողել տանկերը գյուղ մտնեն և ծերբակալեն ջոկատի տղաներին: Նրանք շատ են՝ Նատաշա Հայրիյան, Խուրմա Առաքելյան, Սվետլանա

Լալայան, Ասյա Ավետիսյան, Անահիտ և Քնարիկ Հարութունյաններ, Գոհար Ավետիսյան, Զոյա Մարտիրոսյան, Մարիետա Խաչատրյան, Ժաննա Վանյան, Նինա Հարութունյան…

Վալենտինա Սայիյան (Ռափայել Սայիյանի՝ «Միրուքի» կինը): Մինչև շարժումն սկսվելը ապրում էին Քանաքեռում՝ 4 երեխաներով: Շարժումն սկսվելուց հետո ամուսինը եկավ գյուղ, ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանական ջոկատների ստեղծմանը, շրջափակման ժամանակ օդաչու ընկերների հետ օրը մի քանի անգամ վայրէջք էր կատարում գյուղում՝ բերելով սննդամթերք, վառելիք, զենք, զինամթերք: Ամիսներով տուն գնալ չէր կարողանում: Չորս երեխաների հոգսը հոգում էր Վալենտինան, հետն էլ կապավորի դեր կատարում Աբովյանի ջոկատի համար:

1993թ. հունվար-փետրվար ամիսներին Երևանում դրությունը սոսկալի էր՝ (ամուսինը Արցախում էր, սկսվել էր ենթաշրջանի գյուղերի ազատագրումը), Վալյան հազիվ էր կարողանում հոգալ երեխաների հոգսերը, իսկ երբ 6-ամյա դուստրը հիվանդանում է, չի ցանկանում կռվի թեժ պահին «խանգարել» հրամանատար ամուսնուն, ինքն էլ չի հասցնում ժամանակին հիվանդանոց տանել, և երեխան մահանում է:

Երեխայի թաղումից հետո, 3-ամյա որդու՝ Վարդանի հետ գալիս է Արցախ, ապրում այն ժամանակ շտաբի դեր կատարող ասֆալտի գործարանի շենքում՝ վտանգալից կյանքով և մինչև Քարվաճառի ազատագրումը մնում ամուսնու կողքին:

Վալենտինան դժբախտ պատահարի զոհ է դարձել, բայց նա էլ իր ներդրումն ունի մեր պայքարի մեջ և արժանի է հիշվելու ու գնահատվելու:

Զիդա Ռուբենի Ղուլյան - ծննդով առաջաձորցի, այն ժամանակ Ստեփանակերտի բնակչուհի, 1988-ի փետրվարից հրապարակում էր, ցուցարարների հետ:

Գյուղերից եկած ծանոթ-բարեկամներին տասնյակներով տուն էր տանում, հյուրասիրում, տաք հագուստներ տալիս, որ դիմանան, չցրվեն հրապարակից:

Նա հաճախակի էր ելույթ ունենում ցույցերում, առաջնորդում կանանց:

Նրա երեխաները հետևել էին մոր օրինակին, դարձել կռվի ակտիվ մասնակիցներ: Ցավոք, մեծ որդին՝ Արտուրը, սպանվել է, փոքրը՝ Հովիկը, գլխից ծանր վիրավորվել: Վիշտը անդամալույծ է արել նրան… և վաղ գերեզման տարել:

Վարյա Վանյայի Ավանեսյան - այն ժամանակ Չափարի միջնակարգ

դպրոցի ուսուցչուհի:

1988-ի փետրվարի 25-ն էր: Հավաքվել էինք Ստեփանակերտի հրապարակում: Գիշերը չէինք ցրվել: Ասեղ գցելու տեղ չկար: Ելույթ էին ունենում ցուցարարները:

Հանկարծ տարածվեց Վարյայի զրնգուն ձայնը:

-Այսօր Անդրանիկ Օզանյանի ծննդյան օրն է…

Հիմա դա շատերին սովորական ելույթ կթվա, բայց մեր սերունդը գիտի, թե խորհրդային տարիներին ինչ է նշանակել բարձրաձայն խոսել Անդրանիկի մասին:

Հենց Վարյայի ապրած գյուղում՝ Չափարում, մի հարսանիքի ժամանակ «Անդրանիկ» երգը երգելու համար վեճ էր առաջացել Չափարի և հարևան ադրբեջանական Իմ-Գերեվենդի գյուղացիների միջև:

Ցուցարարները մեծ ոգևորությամբ ու բացականչություններով ունկնդրեցին նրա ելույթը, ցուցարարների քնած ուղեղները արթնացան՝ ուղիղ և փոխաբերական իմաստով…

1992թ. հուլիսին Ստեփանակերտում հանդիպեցի Տանյա Ավետիսյանին՝ այն ժամանակ մեր կրթության շրջբաժնի հաշվապահն էր՝ 2 աղջնակների հետ՝ մեկին գրկած, մյուսի ձեռքը բռնած: Չգիտի ու՞ր գնա, ի՞նչ անի, ծանոթ-բարեկամ չունի, ամուսինը՝ Կոլյա Ավագիմյանը, կռվողների հետ է, ինքը՝ բռնագաղթվածների հետ մի կերպ հասել էր Ստեփանակերտ…

1992թ. հուլիսն էր… Բռնագաղթվածներով լցված Ստեփանակերտի հրապարակում կանգնում էր հացի մեքենան և հենց մեքենայից էլ հացը շպրտում էին ժողովրդին. ում բախտը բերեց, բռնում էր, ումը՝ չէ…

«Բախտավոր» մի դեռատի կին՝ (անունը չեմ գրում), երեխան գրկին նստեց աստիճաններին և մի կերպ ճանկած հացի կտորը բերանում փափկացնելով, կերակրում էր մի քանի ամսական երեխային…

1993թ. դեկտեմբերի 26-ին, երբ համագյուղացի Նապոլեոն Առաքելյանի զոհվելու բոթը գյուղ հասավ, կինը՝ Ամալյան, փոքր երեխաների հետ անտառը փայտ բերելու էր գնացել: Ամուսնու վրա ողբալիս, ասում էր.

-Ամեն մի կրակոցի ձայն լսելիս, խնդրել եմ աստծոն, որ ամուսնուս խնայի:

Բոլորի մասին հնարավոր չէ գրել:

Մնում է՝ նորից շնորհավորել արցախցի բոլոր կանանց ու աղջիկներին՝ գեղեցիկ տոնի առթիվ, ցանկանալ ամենալավն ու բարին, ամենակարևորը՝ խաղաղ ու ստեղծագործ կյանք…

«Ձրաբերդ», 2010թ.,16-31

ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՄԵՆՔ
(ՇԱՐԺՈՒՄ-20)

Արցախյան շարժումը համաժողովրդական, համազգային շարժում էր, և յուրաքանչյուրը մասնակցել է յուրովի:

Ինչպես ենք մասնակցել մենք՝ լեռնաշխարհի մի գողտրիկ անկյունում գտնվող, Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ գյուղի դպրոցի ուսուցիչներս: Ասեմ, որ գյուղն ակտիվորեն է մասնակցել Շարժմանը, պատերազմին. տվել է «Մարտական խաչ 2-րդ աստիճանի» երեք շքանշանակիր, տասնյակ հրամանատարներ, մասնակցել է բազմաթիվ ռազմագործողությունների:

Դրանում իր արժանի ավանդն ուներ գյուղի դպրոցի տնօրինությունը, ուսուցիչները՝սկզբում որպես գաղափարախոսներ, հետագայում՝աջակիցներ:

Դպրոցը, որի տնօրենն եմ 1979 թվականից և որտեղ աշխատելու էին գալիս հարևան մի քանի գյուղերից ուսուցիչներ, վերածվել էր յուրօրինակ ագիտկետի. քաջատեղյակ էինք Արցախում և Հայաստանում կատարվող իրադարձություններին՝ շնորհիվ դպրոցի պատմության ուսուցիչ, վաղուհասցի Արամայիս Բեկնազարյանի ունեցած կապերի:

Դեռևս 1987 թ. մեր՝Մարտակերտի շրջանի վերին գոտու գյուղերում արդեն ազգային զգացմունքների պոռթկում էր նկատվում, որը գլխավորում էր մտավորականությունը: Մեր համարձակությունը հասել էր նրան, որ որոշել էինք ապրիլի 24-ին նշել Եղեռնի տարելիցը: Գաղտնի պատրաստվել էր հատուկ մակագրությամբ հուշաքար, որը պետք է 23-ի գիշերը տեղադրվեր Վաղուհասի «Թավ» կոչվող տեղամասում՝ Մարտակերտ-Քարվաճառ ճանապարհի կողքին և 24-ին հանրահավաք կազմակերպվեր այդտեղ այն ժամին, երբ Քարվաճառից Ադրբեջանի տարբեր քաղաքներ մեկնող ավտոբուսներն անցնելու էին այդտեղով: Ելույթ ունեի ես և մեր պատմության ուսուցիչ Արամայիս Բեկնազարյանը:

Բազմաթիվ ընդվզումներ տեսած արցախցիներիս համար այժմ զարմանալի կամ արտառոց ոչինչ չկա, բայց եթե պատկերացնենք այն ժամանակները, որ Արցախում թուրքամետ Կևորկովի իշխանությունն էր, շրջանում գոյություն ունեին շրջկոմ, շրջխորհուրդ և ՊԱԿ, բոլորն էլ ծառայում էին Ադրբեջանին, առաջնորդվում նրա օրենքներով ու որոշումներով…

Միայն մի օրինակ բերեմ:

Մեր ուսանողական տարիներին մարզկոմից մի հանձնաժողով էր եկել ինստիտուտ (70-ական թվականներին)՝ ստուգելու, թե ուսանողներից ո՞վ է խաչ կրում ժամացույցից կախված փոքրիկ շղթային կամ վզնոցին, հեռացրել կոմերիտմիությունից և սպառնացել՝հեռացնել նաև ինստիտուտից: Ի՜նչ մնաց թողնեին՝ Եղեռնի օր նշել Ղարաբաղում…

Խնամքով կազմակերպված մեր միջոցառումը չկայացավ. ինչ-որ մեկը, վախենալով աթոռից, հայտնեց շրջանի ղեկավարությանը: Գիշերը ՆԳ շրջբաժնի աշխատողները հուշաքարը տարան Մարտակերտ: Առավոտյան շրջկոմի քարտուղարը, ՊԱԿ-ի նախագահն ու շրջժողկրթբաժնի վարիչը եկան դպրոց՝ խանգարելու միջոցառումը:

Սկզբում այդ ամենին անտեղյակ ձևացանք, բայց հետո անկեղծացանք, պատմեցինք ճշմարտությունը՝արդարանալով, որ ամբողջ աշխարհի հայությունն է նշում այդ օրը. ի՞նչ վատ բան կա այդտեղ:

Նրանք մեզ «միամտացրին», որ դա Արևմտյան Հայաստանին է վերաբերվում, ի՞նչ են արել մեզ, պետք չէ այդպիսի բաներ անել (ինչպիսի՜ դատողություն), հետո խստիվ պատվիրեցին, որ մինչև ժամը 3-ը ոչ մի ուսուցչի դպրոցից դուրս չթողնեմ ու գնացին:

Նրանց գնալուց հետո դպրոցում հավաք հրավիրվեց, ելույթներ ունեցանք, սահմռկեցուցիչ փաստեր հրապարակեցինք՝մինչ այդ չլսած,

միացրինք «Ադանայի ողբը»…

Չնայած այդ օրը մեր մտահղացումը չիրականացավ, բայց «գազանն արդեն արձակվել էր»…

Հետո սկսեցինք ստորագրություններ հավաքել, թռուցիկներ ստանալ ու տարածել, այնպես որ, երբ 1988թ. փետրվարի 12-ին Մարտակերտում ժողով հրավիրվեց, ես, փոխտնօրեն Սվետա Լալայանը, Արամայիս Բեկնազարյանը շտապեցինք այնտեղ, ելույթ ունեցանք ժողովում:

Այդ ժամանակ ես ակտիվ թղթակցում էի թերթերին ու ճանաչում ունեի շրջանում, դրա համար էլ ժողովականները յուրաքանչյուր ելույթ ունեցողից հետո դիմում էին ինձ, որ գրի առնեմ, դա պատմություն է դառնալու: Ես, իհարկե, կատարեցի նրանց պահանջը: Հաջորդ օրը ինձ Մարտակերտ հրավիրեցին՝ժողովի արձանագրությունը, Մոսկվա ուղարկվող բանաձևի ձևակերպումն անելու համար:

Փետրվարի 12-ի երեկոյան մեր գյուղում էլ ժողով հրավիրեցինք, նմանատիպ որոշում կայացրինք, հաջորդ օրն էլ՝դպրոցում և առանց վարանելու ստորագրեցի ու կնիքեցի որոշումը: Եղան նաև ձեռքիցս բռնողներ, բայց՝ չընկրկեցի:

Արամայիս Բեկնազարյանը վերցրեց իմ կնիքած թերթիկը: Հերթով ժողովներ էին անում հարևան գյուղերում, ու եթե որևէ ղեկավար վարանում էր ստորագրել, հանում էր իմ կնիքած որոշումը և սրտապնդում նրանց՝ մի՞թե մի կնոջ համարձակություն էլ չունեն…

Հետո սկսեցինք հեռագրեր, նամակներ գրել և ուղարկել Մոսկվա՝ ուղղված ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը, Համլկեմ Կենտկոմին.

Փետրվարի 20-ին դպրոցի ուսուցիչներս առաջինը բարձրացանք մեքենաները՝ Ստեփանակերտ ցույցերի գնալու: Մեզ հետևեց համագյուղացիների մեծ մասը, և մինչև 27-ը մնացինք Ստեփանակերտում՝ շուրջօրյա ցույցերի:

Դասադուլ էինք հայտարարել:

Շրջանի ղեկավարությունը եկավ և պահանջեց դասադուլը դադարեցնել:

Ես համարձակորեն ընդդիմացա՝ ասելով.

-Ստեփանակերտի դպրոցները զորանոցների են վերածվել, մինչև ստեփանակերտցիները դպրոց չգնան, մենք էլ չենք գնալու:

Թերթերում քննադատում էի Ադրբեջանի ղեկավարությանը, մեր թուրք ղեկավար ընկերներին:

Հիշում եմ՝ շրջանային օլիմպիադա էր մաթեմատիկայից՝ 1988 թվա-

կանի փետրվարին: Ներկա էր նաև Մարտակերտի կոմերիտշրջկոմի այն ժամանակվա 2-րդ քարտուղար Սաբիր Բաբուշևը: Օրարները բացեցին: Տեքստի պահանջները ադրբեջաներեն էին: Օրարը ձեռքիս մոտեցա նրան և ասացի.

-Գիտե՞ս, Սաբի՛ր, հենց սրա համար ենք դուրս եկել փողոցները, «միացում» կանչում, ինչ ունենք մենք ադրբեջաներենի հետ, մենք որ գիր ենք ունեցել, դուք չեք էլ եղել: Ենթադրենք, դու էլ այստեղ չես, ի՞նչ պիտի անենք, դե՝ թարգմանի՛ր: Սաբիրն Առաջածորի դպրոցն էր ավարտել, գիտեր հայերեն, թարգմանեց խնդիրները, ասելով.

-Ճիշտ ես ասում, Նաիրա՛, բայց գիտե՞ս, թե մեզ ինչ են անում…

Պատահել է, որ իմ գրած հոդվածի պատճառով մեր շրջանային թերթի կրկնապատկված տպաքանակն աբողջովին ուղարկվել է Հայաստան՝ «Որդին չի ներում» վերնագրով, փոխաբերական իմաստով նկատի ունեի Հայաստանն ու Արցախը: Այն ժամանակ դա մեծ արձագանք էր գտել Հայաստանում:

Շրջափակման տարիներին, երբ առաջին ուղղաթիռը վայրէջք կատարեց Վ. Հոռաթաղում, Հայաստանի թերթերում տպագրվեց իմ «Հուսո կամուրջ» վերնագրով հոդվածը, և դա այնպիսի արձագանք գտավ, որ տասնյակ ծանրոցներ, նամակներ, գրքեր, սննդամթերք, հագուստեղեն ուղարկվեցին, Կիրովականի քիմիական գործարանի կոլեկտիվը մի ուղղաթիռ լիքը օգնություն էր ուղարկել մեր գյուղը, նույնը՝ Երևանի թիվ 168 և թիվ 135 դպրոցները և այլն:

Բոլորին սիրով ընդունում էինք դպրոցում, շնորհակալական նամակներ գրում, այնպես որ, գյուղը ոչնչի կարիք չէր զգում և իր ունեցածով հյուրընկալեց ծայրամասային գյուղերից ու առանց հացի, ջրի, լույսի մնացած Ստեփանակերտից մեր գյուղում ապաստանած բազմաթիվ մարդկանց:

Երկրաշարժի լուրը ցնցեց մեզ: Իսկույն ժողով հրավիրեցինք, ցուցակագրեցինք, թե ով քանի անապաստան մնացածի կարող է հյուրընկալել, օգնություն ուղարկեցինք Սպիտակ:

Դպրոցից առաջինը ինքնապաշտպանական ջոկատի անդամ դարձավ դպրոցի զինղեկ Գրիշա Մուրադյանը: Գաղտնի էր գնում հերթապահելու Բերդաձորում, Շահումյանում, Կիչանում, Քաջավանում, որտեղ անհրաժեշտ էր: Հորինում էի պատճառներ՝ կոլեկտիվում բացակայությունը արդարացնելու համար՝ մինչև ջոկատների գործունեությունը կբացահայտվեր:

Գրիշան Արցախյան շարժման պայքարի առաջամարտիկներից էր, կապ ուներ շարժման ակտիվիստների հետ, նրանցից էր հանձնարա-

ություն ստանում, նրանց հետ գաղտնի իրենց տան ներքնահարկում ինքնաշեն նռնակներ էր պատրաստում, բաժին էր հանում բոլորիս, սովորեցնում գործածել, իր հետ գաղտնի դպրոց բերած ինքնաձիգով կրակել էր սովորեցրել բոլոր ուսուցիչներին, բարձր դասարանի աշակերտներին՝ ասելով.

-Մեզ մեծ կռիվ է սպասվում, պետք է բոլորս զենք գործածել իմանանք:

Դժբախտաբար, 1992թ. հուլիսի 2-ին, երբ հարազատ Վաղուհասն էլ վտանգի տակ էր արդեն, Գրիշան ընկերներով հերթապահում էր Մարտակերտի դաշտում, որտեղ էլ զոհվում է ինքնաթիռի ռմբակոծությունից՝ 25 տարեկանում:

1989թ. ամռանը ստամոքսի սուր ցավերից հանկարծամահ եղավ նաև Արամայիս Բեկնազարյանը, նա, ով շարժման ակտիվիստներից էր, մեծ աշխատանք էր կատարել մեր ենթաշրջանի գյուղերում, երիտասարդության շրջանում մեծ հեղինակություն էր:

Հարևան գյուղերի ադրբեջանցիները գլխագին էին նշանակել նրա համար, և հնարավոր էր՝ ինչ-որ մեկն իր սև գործն արել էր, և 50-ամյա եռանդուն, կենսախինդ, հայրենասեր ուսուցիչը անժամանակ հեռացավ կյանքից՝ չտեսնելով իր սիրելի լեռնաշխարհի այնքան երազած ազատությունն ու անկախությունը:

Երբ գյուղում ինքնապաշտպանական ջոկատ ստեղծվեց, դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ՝ Օլեգ Հարությունյանը առաջիններից մեկը ցուցակագրվեց, դարձավ առաջին կապավորը, կապի սարքավորումները գաղտնի տեղադրեցին մեր տանը (ամուսինս է, խորհրդային բանակում կապավոր էր եղել) և հերթով հերթապահում էինք: Ջոկատի կազմում ծառայեց մինչև 1992 թվականի աշունը, հետո մտավ Արցախյան բանակ և 5-րդ պաշտպանական շրջանի 2-րդ գումարտակում ծառայեց մինչև 1995 թվականը՝ որպես կապավոր և շարքային զինվոր, որտեղ որ կարիքն զգացվում էր, որտեղ որ ուղարկում էին:

Հետն էլ, երբ 1993 թվականից գյուղում դպրոց էինք բացել, ուսուցիչները չէին հերիքում, խաղաղ օրերին Մաղավուզից, շատ ժամանակ ոտքով, շաբաթը մեկ-երկու անգամ գալիս էր դպրոցում դասավանդելու, որպեսզի աշակերտներն ատեստատներում մաթեմատիկայից ու ֆիզիկայից գնահատվեին:

Նույն գումարտակում շարքային զինվոր էր ծառայում նաև մեր պատմության ուսուցիչ, համալսարանավարտ, 50-ամյա Մակբեթ Մկրտչյանը: Բանակում ծառայել են ոչ միայն ուսուցիչները, այլև՝ ուսուցչուհիները:

1993թվականի գարնանը, երբ շատ տղամարդիկ փախել էին Արցախից, և մեր գումարտակը կարիք ուներ կապավորի, կապավոր է աշխատել դպրոցի փոխտնօրեն Սվետլանա Լալայանը:

Գյուղի ջոկատին ամեն ինչում աջակցում էր դպրոցը, օգնում, օժանդակում: Օմոնականների կողմից խուզարկություններ անցկացնելու ժամանակ նրանց օգտագործելիք խոշոր հեռադիտակները, սարքավորումները պահում էինք դպրոցում, դպրոցում էին տեղավորվել գյուղի ջոկատին օգնության եկող ջոկատները՝ կարևոր բարձունքներ գրավելու նպատակով, ինչպես՝ 1992 թվականի մայիսին Աբովյանի և Դաշուշենի ջոկատները:

1991 թվականի օգոստոսին կազմակերպել էինք գյուղի կանանց, առաջնորդել նրանց՝ կտրելու գյուղի ներքևով անցնող մայրուղին, կանգնեցրել զինվորական մեկ «ՈՒԱԶ» և մեկ « Ուրալ» ավտոմեքենաներ, ջոկատի տղաների աջակցությամբ զինաթափել և պատանդ վերցրել 11 խորհրդային զինվորի, որոնցից խլված 11 ինքնաձիգներով զինվել էր ջոկատը և դարձել շրջանի «շտապ օգնությունը», առաջնորդել ենք կանանց, փակել գյուղի մուտքը՝ չթողնելով զրահապատ փոխադրիչները մտնեն գյուղ, ձերբակալեն մեր տղաներին:

Երբ Ստեփանակերտում էինք, ես և մեր փոխտնօրեն Սվետլանա Լալայանը հաճախակի մտնում էինք հոսպիտալ, ու եթե կարիք էր լինում, օգնում վիրավորներին՝առանց ներկայանալու:

Մի խոսքով, Արցախյան շարժման, պատերազմի և զինադադարի տարիներին մեր կոլեկտիվը ակտիվ դեր է ունեցել և օրինակ հանդիսացել գյուղի բնակիչների համար: Գյուղն ազատագրելուց հետո առաջինն ենք վերադարձել գյուղ, դեռևս 1993 թվականի մարտին, երբ Քարվաճառում թեժ մարտեր էին գնում, դպրոցը բացել ենք, շատ բռնագաղթվածներ իսկույն վերադարձել են գյուղ և 13 աշակերտով բացված դպրոցը հունիսին ունեցել է 115 աշակերտ: Այստեղ սովորելու էին գալիս նաև հարևան գյուղերի աշակերտները:

Զինադադարից հետո էլ մեր կոլեկտիվը շարունակում է աջակցել զոհվածների ընտանիքներին: Դեռևս 1994 թվականին դպրոցում ստեղծել ենք «Փառքի սենյակ», նշվում են բոլոր զոհվածների ծննդյան օրերը, գյուղի առաջին զոհի՝ Կլիմիկ Հարությունյանի անունով է կոչվում «Զարթոնք» մանկապատանեկան կազմակերպությունը, մյուս զոհերի անուններով են կոչվում մեր դասարանները, հունվարի 1-ին այցելում ենք զոհվածների տները, շնորհավորում նրանց հարազատների Ամանորը, ամեն ինչ անում ենք՝սպեղանի լինելու նրանց չսպիացող վերքին:

Մեր աշակերտներին դաստիարակում ենք այնպես, որ երբեք չլքեն

նրանց արյամբ ազատագրված ու սրբացած հողը, մեր սերնդակիցների սխրանքները փոխանցում նրանց, որ նրանք նույնն անեն, հասկանան, որ, իսկապես, հայրենիքի համար զոհվածներն անմահ են և հետո, եթե հանկարծ հայրենիքը վտանգվի, նրանք էլ իրենց կյանքը չխնայեն հանուն հայրենիքի, գիտակցաբար գնան մահվան ու անմահանան…

«Լուսարար»
2008թ. փետրվար N4

ԳՐԻՉԸ ՓՈԽԱՐԻՆԵՑԻՆ ԶԵՆՔՈՎ

Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոցի «Փառքի թանգարանն» ունի մի քանի անկյուններ: Ամենածաղկաշատը զոհված ուսուցիչների անկյունն է, որտեղ տեղադրված են Գրիշա Մուրադյանի մեծադիր նկարն ու հուշալբոմը, մատյանն ու գրիչը, սխրագործությունները պատմող թերթեր ու գրքեր, անձնական իրեր: Կողքին՝ շրջանից զոհված ուսուցիչներ Նորիկ Դանիելյանի /գյուլաթաղցի/, Լյովա Կարապետյանի, Նելսոն Բաղրյանի /մարտակերտցիներ/, Մխիթար Շահբարյանի /առաջածորցի/, Գագիկ Դանիելյանի /հար-գոմերցի/, Բարմեն Գրիգորյանի /հաթերքցի/ նկարներն ու հուշապատումները:

Նորիկը, Նելսոնը, Լյովան, Մխիթարը Արցախի պատերազմի հերոսներ են: 2001թ. մայիսի 7-ին, ԼՂՀ նախագահի հրմանագրով հետմահու «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշնով պարգևատրվեց Գրիշա Մուրադյանը:

Դպրոցում հերթով նշվում են բոլոր զոհվածների ծննդյան հոբելյանները, հիշում նրանց հետ կապված կարևոր իրադարձությունները:

Այս անգամ դպրոցում միջոցառումը կազմակերպված էր Մուրադյանի պարգևատրման առթիվ: Շնորհավորանքի խոսքեր ասացին գործընկերները, աշակերտները, մարտական ընկերները:

Գրիշա Մուրադյանը ծնվել է 1967թ. Վաղուհաս գյուղում: Ավարտելով Երևանի ֆիզկուլտտեխնիկումը, մանկավարժական գործունեու-

թյունն սկսել է հարևան գյուղի Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոցում՝ որպես զինղեկ և ֆիզկուլտուրայի ուսուցիչ:

Կարճ ժամանակում, շնորհիվ իր ակտիվ գործունեության ու գեղեցիկ բնավորության, նա դարձավ դպրոցի սիրելին:

Գրիշան առաջիններից մեկն անդամագրվեց մարզում կազմակերպվող ինքնապաշտպանական ջոկատներին, զենք ձեռք բերեց. վտանգելով իր կյանքը, հագուստի տակ թաքցրած, հետը դպրոց էր բերում /դպրոցներից հավաքել էին ուսումնական զենքերը/, սովորեցնում կրակել և՛ աշակերտներին, և՛ ուսուցիչ-ուսուցչուհիներին:

Այն ժամանակ, երբ շատերն արցախյան հարցի լուծման խաղաղ ճանապարհ էին քարոզում, Գրիշան հակառակն էր պնդում.

-Մեզ մեծ կռիվ է սպասվում, բոլորս պետք է զենք օգտագործել սովորենք և՝ սովորեցնում էր…

Դպրոցը գյուղից հեռու էր, անտառի եզրին: Դպրոցի դիմացի լանջին մի հին դույլ էր դրել՝ որպես նշանակետ: Դասերից հետո բարձր դասարանի աշակերտները, ուսուցիչները մնում էին և կրակում: Ինքը մի ձեռքով, առաջին կրակոցով դիպչում էր դույլին, հետո մնացածներին էր սովորեցնում կրակել: Ինքնաշեն նռնակներ էր բերում, սովորեցնում պատրաստել, փորձարկում դպրոցին մոտիկ ձորում: Այն ժամանակ դա շատ անհրաժեշտ էր. սումգայիթյան ողբերգությունից հետո ահ ու սարսափի մեջ ապրող սահմանային գյուղերի բնակիչների համար: Մարդիկ դիմում էին ինքնապաշտպանության:

Գրիշայի գործընկերները, բարձր դասարանի աշակերտները, նույնիսկ ուսուցչուհի Սվետա Լալայանը, «վարակվելով» նրանից, մտել էին Արցախի բանակ և պայքարել մինչև զինադադար:

Սկզբում ամեն ինչ գաղտնի էր կատարվում. թշնամին և՛ հետևում էր, և՛ առջևում: Ամեն մի անզգույշ քայլ, ավելորդ բառ կարող էր կործանել ամեն ինչ:

Դպրոցի ղեկավարությունն ակամայից դարձել էր նրա գործունեության մասնակիցն ու աջակիցը. չէ՞ որ շաբաթներով բացակայում էր: Ստիպված էինք հորինել պատճառներ և կոլեկտիվում արդարացնել Գրիշայի բացակայությունները՝ զինղեկների վերապատրաստման դասընթացներ, գործուղումներ, մրցումներ: Իսկ իրականում Գրիշան Բերդաձորում էր հերթապահում, Նախիջևանիկում, Աղբուլաղում, Շահումյանում… ուր ուղարկում էին…

Չնայած գիտեի նրա բացակայելու պատճառները, ամեն մի նոր առաջադրանք ստանալիս, ուշ գիշեր էլ լիներ, կգար, կհայտներ և կզգուշացներ.

- Անպայման օրերս կպահեք, հանկարծ կբռնվեմ կամ… Ձեզ չմեղադրեն:

Դժբախտաբար Գրիշայի այն ժամանակվա ընկերներից շատերը չկան, զոհվել են, և նրա գործունեության շատ դեպքեր մնացել են գաղտնիք, և միայն մենք՝ նրա աշխատանքային ընկերներս ենք ոչ լրիվությամբ տեղյակ նրա հերոսական գործունեությանը:

Ինչքան էլ զբաղված լիներ, հասցնում էր դպրոց գալ, շաբաթվա ժամերը պարապել: Բոլորս սիրով էինք սպասում նրան. չէ որ ստույգ տեղեկություններ ուներ Արցախում ծավալվող կարևոր իրադարձությունների մասին:

Հաճախ հերթապահությունից էր վերադառնում՝անքուն, հոգնած, հյուծված, քերծվածքներով, տխուր ու ջարդված, մանավանդ, երբ ընկեր էր կորցրած լինում:

Վշտալից դեմքով նա եկավ Քաջավանից, որտեղ խորհրդային զինվորներն ու օմոնականները շրջապատել էին նորակառույց գյուղը, ավերել և գերեվարել երիտասարդ բնակիչներին: Գրիշան էլ այնտեղ էր:

Ծանր պահ էր. պետք էր դուրս գալ թշնամու ճանկերից, ինչպես նաև փրկել ընկերոջ դիակը: Ալիշի ինքնաձիգը հիշատակ էին տվել նրան:

Այսպես «ջարդված» եկավ Բաշ-Գյունեփայայից, որտեղ զոհվել էր համագյուղացի քաջարի ընկերը՝Գարունը:

Գրիշան շատ օպերացիաների մասնակից է եղել, ծնողների պատմելով, իրենց ներքնահարկում էին պատրաստվել Քարվաճառի ճանապարհին 1991թ. կատարված՝շարասյունը պայթեցնելու օպերացիային:

Գրիշան նշանված էր. նշանդրեքը պետք է ծննդյան օրը՝փետրվարի 18-ին լիներ, բայց այդ օրերին Սրխավենդում կռիվ էր: Գրիշան էլ այնտեղ էր և նշանակված օրից 5 օր ուշացավ:

Երբ շտապեցնում էինք հարսանիք անել, ասում էր.

-Թողեք այս կռիվը վերջանա. ո՞վ գիտի, ինչ կլինի, ինչո՞ւ դժբախտացնեմ աղջկան…

1992թ. հունիսն էր: Հայաթափվել էր Շահումյանը, թշնամին մտել էր Մարտակերտի շրջանը: Ծանր օրեր էին: Վերին գոտու ջոկատները օգնության էին մեկնել ներքև: Գրիշան էլ այնտեղ էր:

Եկել էր դպրոց՝քառորդները նշանակելու:

Ընկերները մեքենայով եկան, շտապեցրին, չթողին ավարտի մատյանի էջի գրառումը: Գրիշան գրիչը դրեց մատյանի էջում, վեր կացավ, քմծիծաղ տալով ասաց. «Կգամ, կշարունակեմ»…

Այդպես էլ կիսատ մնաց Գրիշայի մատյանի էջը. ռազմագիտությունից տարեկան գնահատականներ չնշանակվեցին X դասարանի մատ-

յանում, փոխարենը նրանք և գերազանց ստացան պատերազմի դաշտում, չէ՞ որ Գրիշայի աշակերտներն էին…

1992 թ. հուլիսի 2-ին ջոկատով հերթապահում էին Մարտակերտի դաշտում: Նրանց ուղղությամբ դուրս եկան թշնամու զրահամեքենաները: Սկսվեց անհավասար մարտ:

Գրիշան հակատանկային նռնակով ոչնչացրեց մեկ տանկ: Վերևից ինքնաթիռը գնդակոծեց: Տղաները վիրավորվեցին: Հուլիսյան արտը բռնկվեց: Բոցը վայրկենապես տարածվեց ամբողջ դաշտում, իսկ վիրավոր տղաները արտում էին: Կրակեցին մինչև վերջին գնդակը, մինչև ուժասպառ լինելը…

Հուլիսի 3-ի գիշերը Վաղուհասում 5 երիտասարդի վառված դիակները հողին հանձնվեցին: Նրանցից մեկը Գրիշան էր:

Գրիշան գիտակցված գնաց մահվան և անմահացավ: Նա գնահատվել է ըստ արժանվույն:

Վաղուհասի միջնակարգ դպրոցը, որտեղ 10 տարի սովորել ու դաստիարակվել է Գրիշան, անվանակոչվել է նրա անունով: Վ. Հոռաթաղի միջնակարգ դպրոցում, որտեղ նա աշխատել է, ունի իր պատվավոր տեղը և՛ ուսուցչանոցում, և՛ թանգարանում, և՛ ընկերների ու աշակերտների հուշերում:

Նա իր «ներկայությամբ» Վաղուհասի և Վերին Հոռաթաղի դպրոցականներին մշտապես կուսուցանի հայրենասիրություն, քաջություն, խիզախություն, համարձակություն, կարգապահություն, ընկերասիրություն…

Վերին Հոռաթաղի ուսուցչական և աշակերտական կոլեկտիվները հպարտ են իրենց ուսուցչի՝ Գրիշա Մուրադյանի «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվելու առթիվ և սրտանց շնորհավորում են նրա հարազատներին: Թող դա գոնե սպեղանի դառնա նրանց չսպիացող վերքին…

«Լուսարար» 2002թ.

ՇԱՏԵՐԻՑ ՄԵԿԸ

Ծնվել է Բաքվում՝ 1968թ.: Երեք տարեկանում զրկվել է հորից: Երեք որբերին պահելու համար աշխատել էր պետք, և մայրը նրան՝ փոքրիկ Ռոմեոյին, ուղարկեց տատի մոտ՝ Արցախ:

Տատը կթվորուհի էր ֆերմայում և Ռոմային մեջքին կապած՝ հետն աշխատանքի էր տարել, քնեցրել բաց երկնքի տակ, տեղատարափ անձրևի տակ թրջվել էր, ծիածանի գույներով հիացել… Այդպես՝ մինչև դպրոց գնալը: Իսկ հետո՝ միայն արձակուրդներին էր լինում գյուղում: Իր համար հարազատ դարձած՝ մոր ծննդավայրը ձգում էր նրան, այստեղ ամենքը հարազատ էին, ամեն ծառ ու թուփ՝ ճանաչ ու սիրելի: Եվ պատահական չէր, որ բռնագաղթին այլընտրանք չունեցան. մայր ու որդի գյուղ եկան, և Ռոմեոն իսկույն գյուղի տղաների հետ ֆիդայական ջոկատ մտավ:

Նա համարյա տանը չէր լինում, հերթապահում էր սահմանային գյուղերում, զենք գործածել չիմացողներին սովորեցնում էր, գաղտնի զենքեր էր պատրաստել տալիս, զինավարժություններ անցկացնում (նոր էր վերադարձել խորհրդային բանակից, գերազանց զինվոր էր եղել, գիտակ էր զինվորական գործին):

1992 թվականի հուլիսին մեր գյուղն էլ բռնագաղթեց: Կրկնակի փախստական դարձած Ռոմեոն չլքեց Արցախը: Քրոջ ամուսնու զոհվելուց հետո նա ստանձնեց ջոկատի հրամանատարի պարտականությունը և ջոկատով առաջիններից մեկը համալրեց Արցախի նորաստեղծ բանակի շարքերը:

Օրհասական օրեր էին… Թշնամին Գանձասարի մատույցներում էր: Ռոմեոն չէր կարողանում հաշտվել այն մտքին, որ իր գյուղը, որին եթե Գանձասարից ձեռքդ մեկնես՝ կհասնի, գտնվում է «թուրքի ձեռքին»:

Եվ ահա, մի քանի ընկերներով գիշերը թաքուն իջնում են գյուղ և ահաբեկում այնտեղ ամրացած թուրքերին: Առաջին հաջողությունը ոգևորում է, երկրորդ անգամ դիրքավորվում են Քարվաճառ-Մարտակերտ ճանապարհի Վերին Հոռաթաղի հատվածում և պայթեցնում թշնամու ավտոբուսը, մի ուրիշ անգամ պատանդում են երգելով գյու-

ղում ազատ շրջող թուրքին: Դրանից հետո թալանչիները դուրս են գալիս գյուղից, հարևան գյուղերի հետ համեմատած՝ քիչ ավերածություններ են կատարվում այստեղ: 1992թ. նոյեմբերին Ռոմեոն վիրավորվում է, բուժվելուց՝ նորից շարք մտնում:

Փետրվարին հերթով ազատագրվեցին շրջանի գերված գյուղերը, և Ռոմեոն միշտ վայելում էր առաջինը գյուղ մտնելու բերկրանքը, ուրախանում ամեն մի թիզ հողի ազատագրմամբ:

Կարևոր մի բարձունքի գրավման ժամանակ նորից է վիրավորվում և բուժվելուց՝ նորից մարտի մտնում: 1994 թ. ահագնալի օրերն էին: Թշնամին գերակշիռ ուժով, ամբողջ ճակատով հարձակվել էր: Վաշտի հրամանատար Ռոմեոն հսկում էր «Կղզի» կոչված տեղամասը: Գիշերցերեկ ոտքի վրա էր: Ամեն անգամ նա գյուղ էր գալիս հաղթական տեսքով, սիրում, գուրգուրում էր քրոջ որբ մնացած 4 երեխաներին:

Սիրած աղջիկ ուներ: Գյուղը հույսով սպասում էր պատերազմի ավարտին: Սպասում էր Ռոմայի հարսանիքին: Ավա՜ղ…

1994 թ. հունվարին Ռոմեոն գյուղ եկավ անցանկանալի բեռով. զոհված համագյուղացի զինվորի դիակն էր գյուղ բերել: Անճանաչելի էր դարձել, սիրուն դեմքը փոխվել էր, աչքերի աշխույժը՝կորել: Դիրքերում դրությունը ծանր էր, շտապում էր: Անցավ բուժկետի մոտով, որտեղ սիրած աղջիկն էր աշխատում: Ուրիշ անգամ կմտներ, կժպտար, կզրուցեր, բայց, մտացրիվ էր և չնայեց էլ բուժկետի կողմը: Աղջիկն էլ գլուխը խոնարհել էր սեղանին: Իրար ողջունեցին ու հրաժեշտ տվեցին յուրովի՝չմտածելով, որ դա իրենց վերջի՞ն և չկայացած հանդիպումն էր:

Հաջորդ օրը բոթը հասավ գյուղ. «Կղզին» գրավվել է թշնամու կողմից, հերոսաբար դիմադրող Ռոմեոն գլխից ծանր վիրավորվել, մի քանի վիրավորների հետ մնացել է թշնամու գերված տարածքում: Ընկերները բազմիցս փորձեցին սիրելի ընկերոջ ու հրամանատարի դիակը հանել, բայց դա հաջողվեց շուրջ մեկ ամիս տևած համառ մարտերից հետո միայն, երբ վերագրավվեց «Կղզին»:

…Գյուղի գերեզմանատան մուտքին կան 12 ծաղկած շիրիմներ: Թաղված են հերթով: Ռոմեոն շարքի վերջում է, և թվում է՝հսկում է «սահմանը», որպեսզի շարքերը չավելանան, որ էլ չլինի պատերազմ, ոչ մի մայր չողբա իր զավակի շիրիմին, ոչ մի երեխա որբ չմեծանա՝կարոտ հոր ոտնաձայներին, ոչ մի տատ իր տատի պես չկուրանա շատ ողբալուց…

Իզուր չի թափվել 26 գարուն ապրած Ռոմեոյի արյունը… Այսօր խաղաղություն է տիրում նրա սիրած Արցախում, ազատագրված իր գյուղում ապրում են հարազատները, ընկերները, որոնք իրենց երեխանե-

րին անվանակոչել են Ռոմեո…

Ռոմեոյի քաջագործությունները գնահատվել են ըստ արժանվույն. նա հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ 2-րդ աստիճանի» շքանշանով:

«Զրաբերդ», 2000թ.1 փետրվար

ՏՂԱՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ԳՅՈՒՂ

2002. նոյեմբերի 18-ին մարդաշատ էր Վ. Հոռաթաղը: Գյուղի մուտքին էին հավաքվել մեծից փոքրը, հարևան գյուղական համայնքների ներկայացուցիչներ: Միջոցառմանը մասնակցում էր նաև շրջանի վարչակազմի ղեկավար Ս. Հովսեփյանը: Նրանք եկել էին իրենց հարգանքի տուրքը մատուցելու գյուղի զոհված ազատամարտիկներին, մասնակցելու նրանց պատվին կառուցված հուշարձանաղբյուրի բացման արարողությանը:

1988թ. ղարաբաղյան շարժումը Խորհրդային միությունում դեմոկրատիայի առաջին ծիծեռնակն էր: Շնորհիվ նրան, զարթնեցին նաև մյուս ժողովուրդները: Հասկանալով շարժման էությունը՝ ղարաբաղցին իր վրա կրեց բազում զրկանքներ՝ ընդհատակյա փուլից սկսած մինչև դաժան, անհավասար պատերազմի հաղթական ավարտը: Այդ ժամանակ բոլորի հետ իր համեստ ներդրումն ունեցան նաև Վերինհոռաթաղցիները: Առաջին ինքնապաշտպանական ջոկատը, որ գյուղում ստեղծվեց Ռաֆիկ Սայիյանի (Միրուք) և Արկադի Շիրինյանի

(Խոլոստոյ) գլխավորությամբ էր: Ժամանակները չափազանց դժվար էին, անորոշ, փաստորեն մարզը կտրված էր դրսի աշխարհից և ադրբեջանցիների կողմից պաշարման մեջ էր: Օրը մի քանի անգամ ուղղաթիռ էր վայրէջք կատարում գյուղում, որոնք շրջանի բնակչության համար առաջին անհրաժեշտության ապրանքներ և ջոկատների մարտունակությունն ապահովող զենք ու զինամթերք էին մատակարարում՝ հետ տանելով հիվանդներին ու վիրավորներին:

Ռաֆոյի և Ագոյի մասին շատ է խոսվել, սակայն նրանք այնքան են արել, որ ինչքան էլ խոսեն, էլի ասելու շատ բան կա, քանզի պատերազմի ժամանակ նրանց հրամանատարությամբ գործած ջոկատն ու գումարտակը իրենց կողմից մշակված պլաններով այնպիսի մարտական առաջադրանքներ են կատարել ու արդյունքի հասել, որ այսօր ուսումնասիրման և ընդօրինակման կարիք ունի: Շրջանի ադրբեջանական Ումուելու, Իմ-Գերեվենդ, Աղդաբան, Նարեշտար, Բաշ-Գյունեփայա գյուղերի «մաքրման» ժամանակ, ինչպես նաև Կիչանի, Մաղավուզի, Հաթերքի, Չափարի ազատագրման մարտերին իր խոսքն ասաց գյուղի ջոկատը, որը շրջանում ստանձնել էր «շտապ օգնության» դերը: Իսկ պատերազմի ժամանակ նա համալրել էր 2-րդ հրածգային գումարտակը և 4-րդ, այնուհետև 5-րդ պաշտպանական շրջանի կազմում անցել փառավոր մարտական ուղի, ծանրակշիռ ավանդ ներդնելով շրջանի գյուղերի ու տարածքների վերագրավման, ինչպես նաև Ղուբաթլուի և Հորադիզի մարտագործողություններում: Գյուղը տվեց երկու փ/գնդապետ, մեկ մայոր, բազմաթիվ կրտսեր հրամանատարական կազմի սպաներ «Մարտական Խաչ» 2-րդ աստիճանի երեք շքանշանակիր՝ Ռ. Սայիյան, Ա. Շիրինյան և Ռ. Գալստյան (վերջինը՝ հետմահու): Ավա՜ղ, գումարտակն ունեցավ բազմաթիվ զոհեր, որոնցից 13-ը Վ. Հոռաթաղից էր: Նրանք զոհվել էին պատերազմի տարբեր ուղղություններում: Ռոմեո Գալստյանը Մաղավուզի արևելյան մասի «Կղզի» կոչվող բարձունքում, Գավրուշա Վանյանը՝ Օմարում, Հենրիկ Ադամյանը՝ Վաղուհասում, Կլիմիկ Հարությունյանը՝ Կիչանում, Վալերիկ Դանիելյանը, Նապոլեոն Առաքելյանը և Սամվել Մկրտչյանը՝ Մաղավուզում, Յուրա Մելքումյանը՝ Ումուելուում, Ալեքսան Մելքումյանը՝ Գետավանում, Գրիշա Մուրադյանը՝ Մարտակերտում, Վալենտին Գրիգորյանին գնդակը գտավ գյուղում, Լավրենտ Առաքելյանին դարանակալ թշնամու կողմից «Ռուսեն աղբյուրի» մոտ, Արկադի Հայրիյանին շատ հեռվում՝ Բաքվում (ծերբակալվել է 1991թ., մահացել է Բաքվի Բայիլի բանտում, նրա աճյունը 2001թ. դեկտեմբերի 11-ին փոխանակվել, բերվել է գյուղ ու հողին հանձնվել գյուղի գերեզմանոցում՝ զոհվածների մոտ)…

Գյուղը պատերազմն ավարտեց ամբողջությամբ ավերված ու թա-

լանված, նախկին խորհրդային երկրի տարբեր քաղաքներ ու բնակավայրեր հասած իր բնակիչներով, կորուստներով: Կնքվեց հրադադար, շատերը վերադարձան, գյուղ, նորոգեցին իրենց քանդված ու բզկտված օջախը: Վերադարձան նրանք, ում համար աշխարհիս երեսին ամեն ինչից թանկ էր տան ճաքած պատը, բակի թթենին, գյուղում՝ հարազատի գերեզմանաքարը: Եկան ու գյուղը նորից գյուղ դարձավ:

Սերգեյ Առաքելյանն էլ զինվոր էր, հյուսիսը գրավել էր համագյուղացի զինվորին, սակայն նա, չմոռանալով ջոկատի զոհվածներին, նրանց հիշելու, հավերժացնելու համար գյուղի մուտքին իր ֆինանսական միջոցներով կառուցեց հուշարձան-աղբյուր:

Հիմա միասին եկել են նրանք, այնտեղ, որտեղից ճանապարվել են, եկել են ուս ուսի տված, կանգնել գյուղի մուտքին, աղբյուրի մոտ, եկել են առնելու գյուղ մտնողների ողջույնը, հայացքով ուղեկցելու աղբյուրը ջրի եկած իրենց սիրած աղջիկներին, կանանց, ուստրերին ու դստրերին: Բարի ճանապարհ մաղթելու գյուղից դուրս եկողներին, եկել են «պարելու» արդեն հարսնացու-փեսացու դարձած իրենց զավակների հարսանիքներին, վերջապես եկել են հսկելու գյուղի անդորը՝ ինչպես արվում էր շարժման տարիներին՝ Սումգայիթից հետո: Ներկաների դեմքերին վիշտ կար, հուզմունք, նաև անթաքույց հպարտ էին և բարերար Սերգեյ Առաքելյանից ու կառուցող վարպետներից, երախտապարտ՝ զոհվածներին քարեղեն տուն վերադարձնելու համար:

Հարազատների վիշտը մեղմելու, նրանց զավակների, ամուսինների ու հայրերի գործն անմահացնելու և գալիք սերունդներին փոխանցելու համար գյուղի կրթօջախում Արկադիա Շիրինյանի նվիրատվությամբ պատրաստվել է Փառքի թանգարան, որն օրեցօր հարստանում է, իսկ ակումբում՝ անկյուն: Զոհերի անուններով են կոչված դպրոցի դասարաններն ու մանկապատանեկան կազմակերպությունը: Դպրոցում հերթով նշվում են նրանց ծննդյան օրերը…

«Զրաբերդ», նոյեմբեր, 2002թ.

ՎԵՐԱԴԱՐՁ

2001թ. դեկտեմբերի 12-ին Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ գյուղում, կառավարական մակարդակով հողին հանձնվեց ռազմագերի Արկադի Հայրիյանի (Նապոլեոն) Ադրբեջանից փոխանակված աճյունը: Պարզապես թաղումը վերածվեց հակապատերազմական մեծ ցույցի...



Նապոլեոնին բերում են... Բոթը ավետիսի տեղ ընդունվեց... Գյուղն ալեկոծվեց, փառահեղ արծվի պես թևերը տարածեց՝ գրկաբաց ընդունելու10 տարի առաջ կորցրած իր որդուն: Նապոլեոնը՝ նույն ինքը Արկադի Հայրիյանը ծնվել է 1951թ. նոյեմբերի 5-ին, Մարտակերտի շրջանի Կոճողոտ գյուղում: 1956թ. նրանց ընտանիքը տեղափոխվել է հարևան Վ. Հոռաթաղ, որտեղ էլ անցել են նրա մանկության տարիները: Դպրոցն ավարտելուց հետո ավտովարորդի մասնագիտություն է ստացել ՀՀ Քաջարան քաղաքում: Խորհրդային բանակից զարացրվելով՝ վերադարձել է գյուղ, աշխատանքի անցել, ամուսնացել, սեփական տուն կառուցել ու դարձել 4 երեխաների հայր: Նպատակ ուներ տան երկրորդ հարկն էլ կառուցել, երեխաներին մեծացնել, կրթության տալ... Արցախյան շարժումը նրան դարձրեց իր ակտիվ մասնակիցը՝ երդվյալ զինվորը և մասնակցեց ձորակում կազմակերպվող ինքնապաշտպանական ջոկատների կազմավորման գործընթացին: Կինը պատմում է, թե ինչպես էին Բեկորի, Ալիկի և Գարիկի հետ միասին գյուղի ծայրամասում գտնվող իրենց տանը մշտապես խորհրդակցում, թե որտեղ թաքցնեն ձեռք բերված զենքը, ոնց պետք է ահաբեկեն ադրբեջանական հարևան գյուղերի բնակիչներին: Չափազանց տպավորիչ էր Նապոլեոնի հետևյալ արարքը: Քարվաճառ-Բաքու երթուղու ավտոբուսի ուղևորները ճանապարհին առևանգել էին համագյուղացի Յուրային՝ ավտոբուսը խոթելով տարել: Նապոլեոնը, որը կնոջ ու միակ տղայի հետ քիչ հեռվում ցախ էր կտրատում, նկատելով այդ, ասֆալտգործարանի իր վարելիս մեքենան արագությամբ քշում է շարասյան հետևից՝ վտանգելով իր և խցիկում գտնվող կնոջ ու երեխայի կյանքը ու, գրեթե քսվելով նրանց մեքենաներին, Կուսապատի կեռմաններում մի կերպ անցնում է շա-

ռասյան առաջ և հայտնում Մարտակերտի պարեկությանը: Այդ նկատելով՝ թուրքերը ավտոբուսից Յուրային տեղափոխում են ուրիշ մեքենա, որ հետքը կորցնեն: Սակայն Մարտակերտում փակում են բոլոր ճանապարհները, խուզարկում մեքենաները, Յուրային գտնում ու հետ վերադարձնում: (Դժբախտաբար, Յուրան էլ է զոհվել): Նման դեպքերը եզակի չէին և տղաները՝ նրանց մեջ նաև Նապոլեոնը մշտապես մտածում էին վնասներ պատճառել թուրքերին ու որոշում պայթեցնել Բաքվից եկող մեքենաների շարասյունը, այդ նպատակով ականապատում են ճանապարհը, սակայն օպերացիան ձախողվում է՝ տեղական հովվի ականների լարերի անգիտակցաբար կտրելու պատճառով: ԵՎ երբ ավտոբուսն անցնում է առանց պայթելու՝ դարանակալված տղաները զարմանում և կրակ են բացում հետևից եկող ՈՒԱԶ-ի վրա: Ավտոմատի կրակահերթից սպանվեց Քարվաճառի շրջկոմի քարտուղարի որդի Շուքյուրովը:

Ինչքան էլ գաղտնի գործեին տղաները, օմոնները հոտն արդեն առել էին և 1990թ. օգոստոսին Ստեփանակերտից վերադառնալիս, Խաչենի կամրջի մոտ ձերբակալում են Նապոլեոնին և տանում Շուշիի բերդը, 40 օր հետո են միայն նրան բաց թողնում: Բանտի տանջանքները, խոշտանգումները ճաշակելուց հետո Արցախը լքողներ եղան, բայց նա ավելի եռանդով շարունակեց իր մարտական գործունեությունը: Թեկուզ նրան անընդհատ զգուշացնում էին հեռանալ Արցախից, անգամ ընկերների խորհրդով հարազատները կեղծ հեռագիր ձևակերպեցին Ռուսաստանում ապրող եղբոր «մահվան» առթիվ ու նրան ուղարկեցին այնտեղ, սակայն Նապոլեոնը, տեսնելով եղբոր ողջ լինելը՝ 10 օրից հետո նորից հայրենի գյուղում էր...

Ինքնապաշտպանական ջոկատները հրաման ստացան՝ տեղահանել Իմ Գերեվենդ և Ումութլու (Ականաբերդ) գյուղերի բնակիչներին: Նապոլեոնը նախօրոք մեքենայով զինամթերք էր տեղափոխել Ումութլուի դիմացի բարձունքը, որտեղից գիշերը պիտի ահաբեկեին նրանց և հետ վերադառնային նույն մեքենայով: Տղաները, թեկուզ գիտեին այն ժամանակվա ԽՍՀՄ ներքին գործերի նախարար, ազգությամբ լատիշ գեներալ Պուգոյի կազմակերպած «օղակ» օպերացիայի մասին, այնուամենայնիվ, պահանջվում էր կատարել հրամանը: Նա երկար սպասեց պայմանավորված տեղում, սակայն տղաները չեկան: Անհանգստացավ և լուսաբացին մեքենան քշեց դեպի Զագլիկ գյուղը, մտածելով, որ գուցե տղաներին վատ բան է պատահել և օգնել է պետք...

Սակայն նրա ընկերները, հանդիպելով ռուս զինվորների և հետապնդվելով նրանց կողմից՝ այլ ուղղությամբ էին վերադարձել, իսկ

Նապոլեոնը, Զագլիկ մտնելով, անմիջապես հայտնվեց ռուս զինվորների ճանկերում, որոնք էլ նրան իսկույն տեղափոխեցին Ումուբլու և հանձնեցին գիշերվա դեպքերից գազազած թուրքերին: Այդտեղից էլ սկսվեց նրա կյանքի ոդիսականը: Դա 1991թ. հուլիսի 24-ն էր: Զագլիկցի կանայք բլրից տեսել էին, թե ինչպես են խոշտանգում նրան, կրակում ոտքերի արանքում, որից նա անբնական ցատկոտում էր... Հետո նրան տարան Շուշի, և վերջապես հայտնվեց Բաքվի Բայիլովի անվան բերդում, որտեղ էլ մի քանի տարվա խոշտանգումներից, քաղցից ու հիվանդությունից մահացավ 1994թ. գարնանը (այդ մասին տեղեկացրել էր Կարմիր խաչը):

Նապոլեոնը մեղադրվում էր Շուքյուրովի սպանության մեջ ու դատապարտված էր պատժի գերագույն չափի՝ գնդակահարության: Այն ժամանակ նույն բերդում նստած Ալիկը պատմում է, որ ինչքան էլ նրան տանջում էին, նա ոչ ոքի անուն չէր տալիս և ամբողջը վերցնում էր իր վրա: Բանտի նույն խցում Նապոլեոնի հետ մնում էին 8 հոգի, որոնցից միայն մեկն է ողջ մնացել և 1996թ. Կարմիր խաչի միջոցով փոխանակվել: Ահա թե ինչ է պատմում բանտային պայմանների մասին բերդաձորցի Արվիդ Մանգասարյանը՝ փոխանակվելուց հետո տված հարցազրույցում.

- Ահավոր պայմաններ էին բերդում, դրան էլ գումարած ծեծը՝ օրը 4-5 անգամ: Բոլորս էլ հիվանդացել էինք թոքախտով, ստամոքսից էինք բողոքում: Մեր աչքի առաջ տղաները մահանում էին: Թոքախտից մահացան Հայրիյան Արկադիան և Ավանեսյան Արմենը, իսկ Ջհանգիրյան Յուրային ծեծելով սպանեցին:

Նապոլեոնի ցավը մեզ համար առանձնանում է բոլորից նրանով, որ 10 տարուց ավելի է, 100-ից ավելի անգամ գյուղը լուր է ստացել, որ Նապոլեոնին փոխանակում են, բայց սուտ է դուրս եկել, անգամ 1991թ. օգոստոսի 13-ին գյուղի կանանց օգնությամբ ջոկատի տղաները պատանդ էին վերցրել 11 խորհրդային զինվորների, հետո երկու թուրք ասկյարի, որպեսզի փոխանակեին Նապոլեոնի հետ, բայց դա էլ չհաջողվեց: Խորը կսկիծից մահացավ մայրը՝ հետը տանելով անդրանիկ որդու անափ վիշտը: Կինը մեծացրեց, իհարկե, ոչ հեշտությամբ, կրթություն տվեց, ամուսնացրեց երեխաներին, իսկ պետությունը կառուցել ու վերանորոգել է նրա կիսատ մնացած տունը: Մահվան լուրը ստանալով գյուղի գերեզմանոցում զոհված ազատամարտիկների շարքում «հուղարկավորել են» նրան, թերևս հույս ունեին, որ իրենց հայրը օտարության մեջ է, և սպասում էին, որ մի օր պիտի գա, նույնիսկ հրաշքի էին սպասում, ցանկանում էին կենդանի գա և իրենք վազեն ու գրկա-

խառնվեն նրան բակ մտնելիս, ինչպես անում էին տարիներ առաջ... Երկար տարիներից հետո նրանց հայրը տուն է դարձել, ավելի ճիշտ բերել են նրա խոշտանգված, ջարդոտված ոսկորները հայրենի հողում ապաքինվելու և հարվերժորեն հանգրվանելու համար այն հողում, որի համար նա պայքարել է, որի համար նա բանտարկվել է, որի գրկում նա կանմահանա: Տասը տարում կուտակված նրա երեխաների կարոտի, սպասման, հանդիպման, ապրումների մասին ողբը մեր բոլոր զոհվածների հայրական գուրգուրանքի կարոտ բալիկների ողբն էր, որը հիշեցնել տվեց բոլորին, թարմացրեց բոլոր զոհվածների հարազատների չսպիացող վերքերը: Հավերժ փառք նրան և արցախյան պատերազմի բոլոր նահատակներին: Գյուղական համայնքը իր խորին երախտագիտությունն է հայտնում ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ տիկին Վերա Գրիգորյանին և հանրապետական մյուս կառույցներին՝ Արկադիա Հայրիյանի՝ Նապալիոնի աճյունի փոխանակման և տեղափոխման կազմակերպման համար:

«Ձրաբերդ», 1-17 հունվար, 2002թ.

ԹԱՆԳԱՐԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Վերին Հոռաթաղի միջն. դպրոցում 1995թ-ի մայիսի 9-ին բացվել է Արցախյան ազատամարտում զոհվածների հիշատակը հավերժացնող թանգարան:

Փոքր Վ. Հոռաթաղը արցախյան գոյամարտում աչքի է ընկել մեծ գործերով, իր քաջ տղաներով, հմուտ հրամանատարներով:

Ավա՜ղ, նրանցից 12-ը շատ թանկ, արյան գնով են վաստակել այսօրվա խաղաղությունը և անմահացել: Հենց այդպես էլ կոչվում են թանգարանի այն անկյունները, որոնք վերաբերվում են այդ քաջերին՝ «Նրանք անմահ են» և «Մահ իմացյալ՝ անմահություն»: Այստեղ, գեղե-

ցիկ սեղան-պահարանների վրա տեղադրված են 12 զոհերի կյանքն ու գործունեությունն արտացոլող ալբոմներ՝ նկարներով, հուշագրություններով:

Թանգարանում անկյուն է նվիրված զոհված ուսուցիչներին՝ «Գրիչը փոխարինեցին զենքով» վերտառով: Այստեղ հիմնականում դպրոցի զոհված ուսուցիչ, վաղուհասցի 25-ամյա Գրիշա Մուրադյանի անկյունն է, նրա կիսատ թողած մատյանը՝ ծաղիկներով պատված, իսկ կողքին շրջանի մեր ճանաչած զոհված ուսուցիչների նկարներն են: Դրանցից են Գարիկ Դանիելյանը՝ Հար-գոմեր, Արթուր Շահբարյան՝ Առաջածոր, Լյովա Կարապետյան՝ Մարտակերտ և այլոք:

Կողքի անկյունը հայտնի հրամանատարների անկյուն է՝ Ավո, Լեոնիդ, Բեկոր, Նորիկ…

Այս անկյուններում ալբոմների կողքին տեղադրված են գեղեցիկ ծաղկեփնջեր: Իսկ ահա վերջին անկյունը ծաղիկներ չի կրում, այն կոչվում է «Արցախի քաջ պաշտպանները»: Այստեղ մեր գյուղից արցախյան բանակում այժմ ծառայողների նկարներն են:

Վ. Հոռաթաղի միջն. Դպրոցի տնօրեն
«Ձրաբերդ», N1 20 Հունիսի 1997թ.

ՍՊԵՂԱՆԻ՝ ՉՍՊԻԱՑՈՂ ՎԵՐՔԵՐԻՆ



Վերջերս Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոցում հաճելի լուր ստացան: Մայիսի 9-ի կապակցությամբ, ԼՂՀ նախագահի հրամանագրով՝ դպրոցի զոհված ուսուցիչ Գրիշա Մուրադյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով: Որպես ավանդույթ՝ դպրոցում հերթականությամբ նշվում են բոլոր զոհվածների ծննդյան հոբելյանները, նրանց հետ կապված կարևոր իրադարձությունները: Այս անգամ միջոցառումը կազմակերպված էր այդ առթիվ: Շնորհավորանքի խոսքեր ասացին գործընկերները, աշակերտները, մարտական ընկերները: Գրիշա Մուրադյանը ծնվել է 1967թ. Վաղուհաս

գյուղում: Ավարտել է Երևանի ֆիզկուլտտեխնիկումը, մանկավարժական գործունեությունն սկսել է հարևան՝ Վ. Հոռաթաղի միջնակարգ դպրոցում՝ որպես զինղեկ և ֆիզկուլտուրայի ուսուցիչ:

Երբ սկսվեց Արցախյան շարժումը, Գրիշան անդամագրվեց կազմակերպվող ֆիդայական ջոկատներից մեկին:

- Մեզ մեծ կռիվ է սպասվում, պետք է զենք օգտագործել սովորենք բոլորս, թե՛ կանայք, թե՛ երեխաները: Եվ սովորեցնում էր…

Դպրոցը գյուղից հեռու էր, անտառի եզրին: Դասերից հետո բարձր դասարանի աշակերտները, ուսուցիչները մնում էին և կրակում: Ինքը մի ձեռքով, առաջին կրակոցով դիպչում էր նշանակետին, հետո մնացածներին էր սովորեցնում կրակել:

Ինքնաշեն նռնակներ էր բերում հետը, սովորեցնում պատրաստել, փորձարկում դպրոցին մոտիկ ձորում:

Դպրոցի ղեկավարությունն ակամայից դարձել էր նրա գործունեության մասնակիցն ու աջակիցը, չէ որ շաբաթներով բացակայում էր՝ նախօրոք իրազեկ պահելով մեզ: Ստիպված հորինում էինք պատճառներ և կոլեկտիվում արդարացնում Գրիշայի բացակայությունները՝ զինղեկների վերապատրաստման դասընթացներ, գործուղումներ, մրցումներ… իսկ իրականում Գրիշան Բերդաձորում էր հերթապահում, Նախիջևանիկում, Աղբուլաղում, Շահումյանում… որտեղ ուղարկում էին…

Դժբախտաբար Գրիշայի այն ժամանակվա ընկերներից շատերը չկան, զոհվել են, և նրա գործունեության շատ դեպքեր մնացել են գաղտնիք, և միայն մենք՝ նրա աշխատանքային ընկերներն ենք տեղյակ նրա հերոսական գործունեությանը, այն էլ՝ ոչ լրիվությամբ:

Քանի անգամ էին օմոնականներն անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով փնտրել նրան, բայց միշտ թաքցրել էինք, հերքել նրա կատարածները…

Ինչքան էլ զբաղված լիներ, հասցնում էր դպրոց գալ: Հաճախ ուղիղ հերթապահությունից էր դասի գալիս՝ հոգնած, անքուն, հյուծված, հաճախ՝ քերծվածքներով, տխուր ու ջարդված, երբ, մանավանդ, ընկեր էր կորցրած լինում…

Քաջավանից նա եկավ վշտալից դեմքով:

Գիշերով խորհրդային զորքերն ու օմոնականները շրջապատել էին նորաստեղծ գյուղը, ոչնչացրել այն ու գերել երիտասարդ բնակիչներին: Գրիշան էլ այնտեղ էր:

Զրահամեքենայից կրակ էին բացել իրենց վրա: Վիրավորվել էր ընկերը՝ խնձրիստանցի Ալիշը և Գրիշայի գրկում մահացել: Ծանր պահ էր ստեղծվել. պետք էր դուրս գալ թշնամու ճիրաններից, ինչպես նաև փր-

կել ընկերոջ դիակը: Շնորհիվ իր ուժի և հնարամտության, նա կարողանում է այդ անել: Հանում է հագուստը, որ թեթևանա, գրկում է մահացած ընկերոջը, ճարպկորեն խույս տալիս զրահամեքենայից և փրկվում ու փրկում ընկերոջ դիակը:

Ալիշի ինքնաձիգը հիշատակ էին տվել Գրիշային:

Այսպես «ջարդված» եկավ նա Բաշ-Գյունեփայայից, որտեղ զոհվել էր համագյուղացի մարտական քաջարի ընկեր Գարունը:

Ընկերներով դպրոցի բակում նշում էինք Շուշիի ազատագրումը: Գրիշան ասաց.

-Ճիշտ է, Լաչինով ճանապարհ ենք բացել դեպի Հայաստան, բայց դա մեր ձորակի համար չէ, մենք պետք է Քարվաճառով մտնենք Հայաստան և շուտով դա էլ կտեսնենք:

Մենք տեսանք, ավա՜ղ, ինքը չտեսավ:

Գրիշան Քարվաճառի ճանապարհին կատարված օպերացիայի մասնակիցն էր:

Գեղեցիկ երազանքներ, նպատակներ շատ ուներ Գրիշան:

Նշանված էր: Նշանդրեքը պիտի ծննդյան օրը լիներ, Վաղուհասից Դաշբուլաղ պիտի գնային, բայց քանի որ Սրխավենդում կռիվ էր, և Գրիշան էլ այնտեղ էր, 5 օր ուշացավ՝ մեծ անհանգստություն պատճառելով հարազատներին:

Երբ շտապեցնում էինք հարսանիք անել, ասում էր.

-Թողեք այս կռիվը վերջանա, ո՞վ գիտի, ինչ կլինի, ինչո՞ւ դժբախտացնեմ աղջկան…

1992թ. հունիսին էր: Հայաթափվել էր Շահումյանը, թշնամին մտել էր Մարտակերտ: Ծանր օրեր էին: Շրջանի վերին գոտու տղաները օգնության էին մեկնել ներքև: Գրիշան էլ այնտեղ էր: Եկել էր դպրոց՝ քառորդային գնահատականները նշանակելու: Ընկերները մեքենայով եկան նրա ետևից: Շտապեց, կիսատ թողեց մատյանի գրառումները: Ապա գրիչը դնելով մատյանի էջում, վեր կացավ, քմծիծաղ տալով ասաց.

-Կգամ, կլրացնեմ…

Այդպես էլ կիսատ մնաց Գրիշայի մատյանի էջը, ռազմագիտությունից տարեկան գնահատականներ չնշանակվեցին 10-րդ դասարանում: Փոխարենը նրանք «գերազանց» ստացան պատերազմի դաշտում, որովհետև Գրիշայի սովորեցրած աշակերտներն էին:

1992թ. ջոկատով հերթապահում էին Մարտակերտի դաշտում: Նրանց ուղղությամբ դուրս եկան թշնամու զրահամեքենաները: Սկսվեց անհավասար մարտ: Գրիշան հակատանկային նռնակով ոչնչացրեց

թշնամու մեկ տանկ: Վերևից ինքնաթիռը գնդակոծեց ուղիղ տղաների դիրքերը: Տղաները վիրավորվեցին: Հուլիսյան արտը բռնկվեց կրակով, բոցերը երկինք ելան՝ իրենց մեջ առնելով վիրավոր տղաներին: Կրակեցին մինչև վերջին փամփուշտը, մինչև ուժասպառ լինելը…

Հուլիսի 3-ի գիշերը Վաղուհասում հինգ երիտասարդների այրված դիակներ հողին հանձնվեցին: Նրանցից մեկը Գրիշան էր…

Գրիշան գիտակցված գնաց մահվան և անմահացավ:

Վաղուհասի միջնակարգ դպրոցը, որտեղ 10 տարի սովորել ու դաստիարակվել է Գրիշան, անվանակոչվել է նրա անունով:

Վ. Հոռաթաղի միջնակարգ դպրոցում, որտեղ նա աշխատել է, ունի իր պատվավոր տեղը և՛ ուսուցչանոցում, և՛ թանգարանում, և՛ ընկերների, աշակերտների հուշերում:

Նա իր «ներկայությամբ» Վաղուհասի և Վ. Հոռաթաղի դպրոցականներին մշտապես կուսուցանի հայրենասիրություն, քաջություն, խիզախություն, համարձակություն, ընկերասիրություն…

Վ. Հոռաքաղի դպրոցի աշակերտները և ուսուցչական կոլեկտիվը հպարտ են իրենց ուսուցչին ըստ արժանվույն գնահատելու համար և սրտանց շնորհավորում են նրա հարազատներին. թող դա՛ գոնե սպեղանի լինի նրանց չսպիացող վերքերին…

«Մարտիկ», N25 հունիս, 2001թ.
Ջրաբերդ 15-31 հոկտեմբեր 2008թ.

ՀԱՎԵՐԺ՝ ՄԻԱՍԻՆ

Հարևանի երեխաներ էին Կլիմիկ Հարությունյանն ու Վալենտին Գրիգորյանը, նույն տարում էին ծնվել, միասին էին խաղացել, նույն դասարանում սովորել, միասին բանակ գնացել ու վերադարձել, ամուսնացել, ապրել ու աշխատել նույն գյուղում: Արցախյան շարժումն էլ նրանց չբաժանեց, 2-ն էլ անդամագրվեցին գյուղում կազմավորված ջոկատին:

Կլիմիկն աշխատում էր գյուղական խանութում, հանգիստ համեստ երիտասարդ էր, վայելում էր գյուղացիների հարգանքը: Առաջիններից անդամագրվեց գյուղում ստեղծվող ինքնապաշտպանական ջոկատին, դարձավ կապավոր: Գյուղում II ջոկատն ստեղծվեց, Կլիմիկն էլ տեղափոխվեց այնտեղ: Այդ օրն էլ՝ 1992թ. փետրվարի 8-ին սովորականի պես աշխատանքի էր գնում՝ Գետավանի սպառընկերությունից ապրանքներ ստանալու խանութի համար: Ճանապարհին լսեց, որ Սրխավենդ-Կիչան հատվածում դրությունը սրվել էր: Խանութի բանալիները ետ ուղարկեց գյուղ, իսկ ինքը ջոկատի հետ շտապեց Կիչան: Վիրավորվեց: Տեղափոխեցին Ստեփանակերտ: Այդ օրերին Ստեփանակերտն ամեն օր գնդակոծվում էր: Ջուր չկար, լույս չկար, հարմարություններ չկային. հիվանդանոցում մահացավ: Դարձավ գյուղի առաջին զոհը: Թաղումը վերածվեց մեծ ցույցի: Թաղեցին գերեզմանոցի մուտքին, որտեղ հետո ամփոփեցին գյուղի զոհվածներին: Դպրոցի մանկապատանեկան կազմակերպությունը կրում է Կլիմիկ Հարությունյանի անունը:

Վալենտին Գրիգորյանը հիվանդ էր: Երկարատև բուժման կարիք ուներ: Բուժվելուց հետո գյուղ վերադարձավ և շտապեց շտաբ՝ համալրելու ջոկատը: Ջոկատի հրամանատարը մերժեց, ասելով, որ դեռ լրիվ չի ապաքինվել, սպասի, ամբողջովին առողջանա: Բայց Վալենտինը չսպասեց: Գյուղում երկրորդ ջոկատը ստեղծվեց և նա դարձավ նոր ջոկատի ղեկավար: 1992թ. ամառն էր: Գյուղը բռնագաղթել էր: Վալենտինն իր մեքենայով օգնեց գյուղացիներին, ապահով տեղավորվեցին Այգեստանում, Ստեփանակերտում, ինքը գյուղ վերադարձավ, ջոկատի

տղաներով մասնակցեց Հաթերքի ազատագրմանը, հետո բերքահավաքին, հնձած ցորենը հասցրին գյուղացիներին:

Օգոստոս էր: Թշնամին նորից գլուխ էր բարձրացրել, գնդակոծվում էր գյուղը և Վալենտինը մահացու վիրավորվեց:

Նրա մարմինն ամփոփեցին Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոցում:

Երբ 1993թ. փետրվարին գյուղն ազատագրվեց, Վալենտինի աճյունը տեղափոխեցին գյուղ և ամփոփեցին Կլիմիկի կողքին:

Ընկերները նորից հայտնվեցին կողք կողքի: Նրանք նորից միասին են, այս անգամ՝ հավերժ միասին:

1995թ. «Զրաբերդ»

ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ, ԷՐԻԿ...

Հունիսի 29-ը անհայտ կորած ազատամարտիկների օրն է: Այդ օրը ոչ ոք ոչ մեկին չի շնորհավորում, այդ օրը ցավին ցավ է գումարվում, սպասած տարիներին՝ տարի, հույսից շողեր են բեկվում տարիների հետ, բայց էլի սպասում են…

Հարազատներն իրենց կորցրածին սպասում են հույսով, կարոտով «զրուցում են» հետները առավոտյան արշալույսից իրիկնային վերջալույս, անքուն գիշերներին, տեսնում են նրանց բացվող արևի ճառագայթների մեջ, զգում են նրանց շունչն իրենց թիկունքին, լսում նրանց ոտնաձայները, որ անընդհատ գալիս կանգ են առնում դռան հետևում, բայց ներս չեն մտնում:

Ա՜խ, այդ խաբուսիկ ոտնաձայները… դրանք հոգեկան անհավասարակշռության հասցրին ու վաղ գերեզման տարան Էրիկ Մարգարյանի մորը, սրտի վիրահատության հասցրին հորաքրոջը՝Ալլային, որը որդու պես էր սիրում նրան և օր չկա, որ արցունքոտ աչքերով չհիշի ու չպատմի նրա մասին, հորը՝ Ռոմա Մարգարյանին, Երևան քաղաքի հարմարավետ բնակարանից Ղարաբաղ՝ պապենական հին տուն բերեցին:

Բարձրահարկ շենքի աստիճաններով յուրաքանչյուր բարձրացողի

հետ թվում է, թե որդու զինվորական կոշիկների ձայնն է լսում և անընդհատ սպասում, թե ուր որ է դուռը կբացվի ու ներս կմտնի բարձրահասակ, գեղեցիկ կազմվածքով, ժպտերես, զինվորական հպարտ կեցվածքով իր 25-ամյա կապիտան որդին, իր էրիկը, որին մոտ երկու տասնյակ փնտրում, բայց չի կարողանում գտնել ոչ կենդանի, ոչ մահացած… գոնե գերեզման ունենար, ամուսնացած լիներ ու զավակ ունենար, կմխիթարվեր նրանով, գոնե մի լուր իմանար…

Այո՛, Ռոման թողեց Երևանը, եկավ Ղարաբաղ, ապրում է հայրենի Մեծ-Շեն գյուղում, զբաղվում է վար ու ցանքսով, գուրգուրում է այն հողը, որին ծաղկուն կյանքը նվիրեց որդին, կարոտն առնում է այն վայրերից, որտեղ որդին էր շրջել՝ ամառները պապիկ-տատիկի տուն գալով:

Ղարաբաղում մնալով՝ որդուն ավելի մոտիկ էր թվում, հոգու ցավը խեղդում է աշխատանքի մեջ, սպասման հույսը չի մարում նրա մեջ և տան դուռը միշտ բաց է պահում նրա համար:

Էրիկ Մարգարյանը ծնվել է 1967թ. Երևան քաղաքում: 1984-ին ավարտել է միջնակարգը և ընդունվել Լենինգրադի ՆԳՆ բարձրագույն զինվորական ուսումնարանը: Ավարտելուց 1988-89թթ. ծառայել է ՌԴ ՆԳՆ ներքին զորքերում՝ որպես վաշտի հրամանատարի տեղակալ:

Նա աչքի է ընկել զինվորական հմտությամբ, կազմակերպչական հատկանիշներով, հեղինակություն էր ընկերական շրջանում, մեծ ապագա էր սպասվում, բայց… չմնաց այնտեղ:

Ինչպե՞ս մնար, երբ իր պապական տունը վտանգի մեջ էր, երբ Արցախ աշխարհն ու Հայաստանը ազատագրական պայքարի էին ելել դարավոր թշնամու դեմ: Եվ եկավ արյան կանչով, եկավ՝ ստացած գիտելիքները ծառայեցնելու իր ժողովրդին…

1990թ. նա արդեն ՀՀ ՆԳՆ ՄՀՕՋ-ում գումարտակի հրամանատարի տեղակալ էր, 1992թ. հոկտեմբերից 25-ամյա էրիկը ստացել էր կապիտանի կոչում և նշանակվել գումարտակի հրամանատար:

1990-92թթ. էրիկն իր գումարտակով մասնակցել էր սահմանամերձ գոտում տեղի ունեցած բազմաթիվ մարտերի, վիրավորվել էր 1992թ. սեպտեմբերին և դեռ ամբողջովին չապաքինված, նորից շարք վերադարձել, նորից մարտի նետվել:

Ավաղ… 1992թ. դեկտեմբերի 3-ին, Լաչինի շրջանի Ղոչազ լեռան մոտակայքում տեղի ունեցած մարտը վերջինը եղավ երիտասարդ հրամանատարի համար…

Նա կարծես զգում էր վտանգը, մի շաբաթ անընդհատ մտահոգ էր: Կենսուրախ ու ժպտերես երիտասարդը մռայլվել էր, ընկերների հար-

ցերին դժկամությամբ էր պատասխանում, իսկ մարտի գնալու երեկոյան զարմացրեց իր առաջարկությամբ.

-Ջոկատը համալրվում է կամավորության սկզբունքով:

Սովորաբար ինքն էր ընտրում:

Ամենքը զգում էին, որ հրամանատարի սիրտը վատ բան էր գուշակում, ծանր մարտ էր սպասվում, բայց հավատում էին, որ Էրիկի գլխավորությամբ չեն կարող հաղթանակի չհասնել:

Էրիկը նախատեսել էր շեշտակի թեքադարձով հանկարծակիի բերել թշնամուն: Հակառակորդը մեկ անգամ չէ, որ խուճապի էր մատնվել նմանօրինակ գործողություններից: Մառախլապատ օր էր: Գետինն ամբողջությամբ պատված էր ձյունով: Առավոտյան ժամը 5-ն էր: Հակառակորդից բաժանող տարածությունը 300 մետր էր:

Թշնամին դարանակալ հետևել էր նրանց և ամուր պատնեշ կապել: Էրիկը անիմաստ համարեց կրակել, բայց, այնուամենայնիվ, մարտն սկսեց և զենքի ամենատարբեր տեսակներից կրակե հեղեղ թափվեց ուղիղ Էրիկի ջոկատի տղաների վրա: Կարողացան շարքից հանել թշնամու ԴՇԿ-ն, հետո նահանջի հրաման եկավ: Նահանջի հրամանն անսպասելի էր, դիմադրելն՝ ավելորդ: Տեղանքն անծանոթ էր, փրկության հույսը՝ նշմարվող անտառակն էր: Երկար համազարկերով Էրիկն իր մարտիկներով հետ քաշվեց: Անտառակ չհասած՝ ընկերը վիրավորվեց: Էրիկը նետվեց դեպի վիրավոր ընկերը, ոտքից վիրավորվեց, շրջվեց, նորից վիրավորվեց: Քայլերն անկարելի դարձան: Անտառակը դավադիր էր: Շատ զոհեր եղան: Ճերմակ ձյունը բոսորվեց: Էրիկը պառկեց զոհված ընկերոջ կողքին, կրակեց մինչև վերջին փամփուշտը՝ ապահովելով ընկերների փրկությունը…

Այդ օրը փոքր պարտության օր էր՝ հանուն մեծ հաղթանակի, իսկ հաղթանակն անարյուն չի լինում:

Ո՛չ հրամանատարի խելքն ու հմտությունը, ո՛չ մարտիկների խիզախությունը չկարողացան փրկել նրան: Նա գնաց անմահության գիրկը:

Հազար փառք հայրենիքի համար զոհված բոլոր մարտիկներին:

Սակայն ցավն այն է, որ ոչ ոք ստույգ չի տեսել Էրիկի մահը: Ընկերները չեն կարողանում հաշտվել եղելության հետ: Նրա դիակը չեն գտել, կասկածում են, թե գուցե գերվել է, բայց վստահ են, որ նա գերի հանձնվողը չէր, ո՞վ գիտի, գուցե անգիտակից վիճակում կարողանային տանել…

Տարիներ շարունակ հայրը, հարազատները, ընկերները ձգտել են ինչ-որ բան իմանալ, բայց ոչինչ չեն կաարողացել պարզել: Էրիկի անունը ոչ գերիների ցուցակում կա, ոչ դիակն են տեսել, ոչ փոխանակ-

ման առաջարկ արել և այսօր ցավով ու ափսոսանքով սպասում են՝ անորոշությունից հալ ու մաշ լինելով:

… էրիկը լիներ այսօրվա մեր բանակում, օրինակելի հրամանատար կլիներ…

Հիշենք էրիկին և բոլոր անհայտ կորածներին, համբերություն նրանց հարազատներին՝ անհույս սպասումներին դիմանալու համար:

Թող այս փոքրիկ հուշը սպեղանի լինի նրանց հարազատների չսպիացող վերքին:

Թող հրաշք լինի և բոլորը տուն վերադառնան: Թող որ էրիկը մի օր բախի պապենական տան դուռը և ողջագուրվի միշտ իրեն սպասող հոր հետ…

…Սպասում ենք քեզ, էրի՛կ…

«Զրաբերդ», 1-15 հուլիս 2011թ.

ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԻ ԿԵՍԴԱՐՅԱՆ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

Մայրը նշում է ծնունդը որդու,
Իսկ որդին չկա, զոհվել է մարտում…

Այսպես սկսվեց Վերին Հոռաթաղի Քերոլայն Քոքսի անվան միջնադպրոցում կազմակերպված զոհված ազատամարտիկ Գավրուշա Վահանյանի ծննդյան կեսդարյա հոբելյանին նվիրված հուշ-ցերեկույթը:

Նորակառույց դպրոցի ակումբում հոկտեմբերի 4-ին հավաքվել էին զոհված ազատամարտիկի մայրը, կինը, աղջիկները, քույրերն ու մյուս հարազատները, մարտական ընկերները:

Գավրուշա Վահանյանի կյանքի ու մարտական ծառայությունների մասին զեկուցումով հանդես եկավ դպրոցի տնօրեն Նաիրա Առստամյանը: Ելույթ ունեցան մարտական ընկերները, երախտիքի խոսք ասաց զոհվածի այրի Ժասմեն Թադևոսյանը:

Դպրոցում Փառքի սենյակ է բացվել դեռևս 1995 թվականին, յուրաքանչյուր զոհված ազատամարտիկ ունի իր հուշալբոմը, որտեղ գրի են առնվում նրա հետ կապված կարևոր իրադարձությունները: Զոհված ազատամարտիկների անուններով են կոչված դպրոցի դասարանները, մանկապատանեկան կազմակերպությունը, նշվում են նրանց ծննդյան

օրերը: Դպրոցի աշակերտները հունվարի 1-ին հաճախում են նրանց տները՝ շնորհավորելու հարազատների Ամանորը:

Տեղափոխվելով նորակառույց դպրոց՝ առաջին հերթին կահավորվել է Փառքի անկյունը, որտեղ մշտական թարմ ծաղիկներ են բուրում:

Գավրուշա Մելիքի Վահանյանը ծնվել է 1958թ-ի հոկտեմբերի 4-ին, Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի 8-ամյա, իսկ միջնակարգ կրթությունը՝ Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոցում:

1975թ-ին ընդունվել է Երևանի Ալ. Թամանյանի անվան շինարարական տեխնիկումը, 1977թ-ին՝ զորակոչվել Խորհրդային բանակ: Ծառայությունն ավարտելուց հետո շարունակել է ուսումը և 1980 թ-ին ավարտել վերոհիշյալ տեխնիկումը՝ արդյունաբերական և քաղաքացիական շինարարության մասնագիտությամբ:

1981թ-ին Գավրուշա Վահանյանը ուսումը շարունակելու նպատակով մեկնում է Օրենբուրգ, ընդունվում է տեղի պոլիտեխնիկական ինստիտուտը և ավարտում 1988թ-ին՝ ինժեներ-շինարարի մասնագիտությամբ:

Գավրուշայի առջև բացվում են լայն հեռանկարներ՝ աշխատելու, ուսումը շարունակելու: Ցանկանում է ընդունվել ասպիրանտուրա, բայց…

Սկսվում է Արցախյան շարժումը, և արցախցի երիտասարդը չի կարողանում իր հարազատ երկրամասից հեռու հանգիստ աշխատել ու սովորել; Նա որոշում է գալ և օգտակար լինել իր երկրամասին, մասնակիցը դառնալ իր ժողովրդի պայքարին: Արցախում խիստ զգացվում էր գավրուշաների կարիքը, նման մասնագիտությամբ մարդիկ եզակի էին, նրան աշխատանքի են հրավիրում Ստեփանակերտում, շրջկենտրոնում աշխատելու, բայց Գավրուշան գերադասում է օգտակար լինել հայրենի գյուղին և սկսում է գյուղի մուտքին կառուցել շինանյութերի գործարան, որը տասնյակ աշխատատեղեր կբացեր երիտասարդների համար, կկանգնեցներ արտագնա աշխատանքի գնացողների հոսքը, իսկ գործարանի պատրաստած շինանյութերով նոր ու գեղեցիկ շենքեր կպատրաստվեին…

Կարճ ժամանակում նա պատրաստել է տալիս երկհարկանի գեղեցիկ գրասենյակը, պարսպապատում է գործարանի շրջապատը, կառուցում մի շարք շինություններ… և ինչքան հույս ու հավատ է կապում նա այդ գործարանի հետ, սակայն… առաջնահերթ խնդիրներ են ծագում և, կիսատ թողնելով գործարանի շինարարությունը, անդամագրվում է գյուղում ստեղծվող ինքնապաշտպանական ջոկատին՝ որպես

կապավոր, կապի սարքավորումների մոտ անքուն գիշերներ անցկացնում Վաղուհասի, Հաթերքի, Վանքի անտառներում: Այնուհետև կապավորի մասնագիտությունը սովորեցնում է ֆիզիկապես ավելի թույլ ընկերներին և ինքը՝ բարձրագույն կրթությամբ ինժեներ-շինարարը, դառնում է հասարակ զինվոր՝ ինքնաձիգը ուսին պաշտպանում հայրենի և հարևան գյուղերի սահմանները: 1992-ի հուլիսի 4-ին ամբողջ գյուղի հետ Գավրուշան էլ բռնագաղթեց, ընտանիքը սկզբում տեղավորեց Այգեստանում (Բալլուջա), ինքը հետ դարձավ գյուղ: Եվ միայն սեպտեմբերին ընտանիքը տեղափոխեց Սիսիան:

Նա մասնակցեց շրջանի մի շարք գյուղերի ազատագրմանը, օգնության գնաց Հադրութ և Մարտունի, մասնակցեց Կուբաթլուի ազատագրմանը, սեպտեմբերի 3-ին, հաղթական վերադարձից հետո, հրամանատարից մեքենա խնդրեց՝ ընտանիքը Սյունիքից գյուղ տեղափոխելու:

1993 թվականին էր: Ամենուրեք թեժ մարտեր էին ընթանում: Թշնամին դժվարությամբ էր հետ քաշվում գրաված տարածքներից: Գավրուշան համագյուղացի տղաների հետ կռվում էր Մարտակերտի թիվ 5 պաշտպանական շրջանի 2-րդ հրաձգային գումարտակում:

Պարտված, 7 շրջաններ կորցրած թշնամին, որոշակի դադարից հետո, 1994թ-ի հունվարին նորից բազմաթիվ ուղղություններով հարձակվում է մեր սահանների վրա: Օրհասական մարտեր էին մղվում շրջանի ներքին զոնայում, այնտեղ էին կենտրոնացված մեր լավագույն ուժերը: Հանկարծ լուր են առնում, որ թշնամին ճեղքել է Օմարի պաշտպանական գիծը և արագ թափով առաջ է շարժվում:

Նորից վտանգվում է Հաթերքի ենթաշրջանի բնակիչների կյանքը, կրկնվելու էր 1992թ-ի հուլիսի 4-ը, ստիպված էինք լինելու նորից բռնագաղթել,եթե արժանի հակահարված չտային թշնամուն: Լուրն առնելուն պես գիշերը Մաղավուզից Օմար են սլանում նաև 2-րդ գումարտակի տղաները՝ Արկադիա Շիրինյանի հրամանատարությամբ և անասելի բքին, մետրերի հասնող ձյան մեջ այնպիսի հակահարձակում են ձեռնարկում, որ արդյունքում հաջողվում է ուժեղ զինված թշնամուն հետ շպրտել և նորից Քարվաճառի տերը դառնալ: Այստեղ առաջին գծում էր նաև Գավրուշան:

Թեժ մարտերին զուգահեռ նա պիտի հոգար նաև ընտանիքի հոգսերը: Ընտանիքը գտնվում էր կնոջ գյուղում՝ Կոճողոտում, և դա մեծ անհանգստություն էր պատճառում նրան: Այդ մասին էր նա զրուցում մարտական ընկերոջ՝ Օլեգ Հարությունյանի հետ՝ վերջին անգամ դիրք բարձրանալիս:

-Հենց տուն գնամ, անպայման ընտանիքս կտեղափոխեմ Հոռա-

թաղ,- ասել էր նա:

Զրուցելով հասնում են խրամատները: Թշնամին ականանետային կրակ էր թափում գլխներին: Գավրուշան բարձրացնում է գլուխը, որ տեսնի, թե որտեղից է կրակը, որպեսզի պատասխան տա, վիրավորվում է գլխից և... զոհվում՝ իր հետ տանելով բազմաթիվ երազանքներ, թողնելով շատ կիսատ գործեր:

Ավա՜ղ, մինչև օրս էլ Գավրուշայի ընտանիքը գտնվում է Կոճողոտում և ինչպես չհասցրեց գործարանի տանիքը պատրաստել, այնպես էլ իր երեխաների համար սեփական տուն չկառուցեց, մինչև այժմ էլ ապրում են ուրիշի բնակարանում: Նրա փոքրիկ աղջիկները մեծացել, գերազանց սովորել և ուսանողուհիներ են դարձել, հպարտությամբ են տանում որբությունը, քանի որ իրենց հայրը գիտակցաբար գնաց մահվան և անմահացավ:

Գավրուշան զոհվել է հայրենի Արցախի, հարազատ գյուղի, իր ծնողների ու բալիկների, մեզ բոլորիս համար: Հայրենիքի հանդեպ կատարած ծառայությունների համար նա հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Գավրուշան այսօր բացակայում է միայն ֆիզիկապես: Նա կա, ապրում է իրեն այդքան սիրող հարազատների, ծնողների, կնոջ ու բալիկների, քույրերի ու եղբոր, մարտական ու աշխատանքային ընկերների սրտերում:

Վ. Հոռաթաղի մուտքի դարպասն է «Գավոստրոյ» կիսակառույցը: Չնայած Գավրուշան չհասցրեց ավարտին հասցնել գործարանի շինարարությունը և գործարանը չի լինի այլևս, բայց Գավրուշայի անունը կմնա այնտեղ հավիտյան:

Չլիներ պատերազմ, Գ. Վահանյանը այսօր կլիներ 50 տարեկան:

Նրա կեսդարյա հոբելյանը նշելու համար կհավաքվեին աշխատանքային ընկերները, հարազատներն ու բարեկամները: Նրան սիրով շրջապատած կլինեին կինը, երեխաներն ու թոռնիկները, և նա կգրկեր թոռնիկին և շոյելով նրա գլուխը, կերգեր «Լիլիթիս նման աշխարհում չկա» երգը, ինչպես սիրում էր երգել երիտասարդ ժամանակ՝ իր փոքրիկ Լիլիթին գրկած:

Բայց Արցախում պատերազմ եղավ: Շատ երազանքներ մնացին թերի, շատերը որբացան, այրիացան, ամեն ինչ խառնվեց իրար, Գավրուշան էլ հավերժ մնաց 36 տարեկան: Զոհվեց հանուն հայրենիքի և անմահացավ: Այսօր նրա ծննդյան օրը նշվում է ոչ թե սեփական հարկի տակ, այլ նորակառույց դպրոցի գեղեցիկ դահլիճում, պատերազմ չտեսած երեխաների հետ, որպեսզի նրանք ճանաչեն գավրուշաներին

և գալիք սերունդներին փոխանցեն նրանց սխրանքները, որպեսզի նրանցից ոչ ոք երբեք չմոռացվի, որպեսզի իրենց մահով օրինակ հանդիսանան աճող սերնդի համար:

Հավերժ փառք նրանց և արցախյան պատերազմի բոլոր զոհերին…

2008թ. «Զրաբերդ»

ԶԱՐՄԻԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ապրիլի 8-ին Հարությունագոմերի միջնակարգ դպրոցի բակում հավաքվել էր ամբողջ գյուղը, հարևան գյուղերի դպրոցների մանկավարժական կոլեկտիվները և այլ հյուրեր:

Գյուղի ավերված, կիսանորոգված դպրոցական շենքի առաջ դրված էր Արցախյան պայքարում զոհված քաջամարտիկ, Մարտական խաչ 2-րդ աստիճանի շքանշանակիր Զարմիկ Արտավազդի Ավետիսյանի դիմանկարը՝զարդարված ծաղկեպսակներով ու ծաղկեփնջերով: Նկարի մոտ պատվո պահակ էին կանգնել դպրոցականները:

Ապրիլի 8-ը Զարմիկի ծննդյան օրն է, նաև՝ անմահության, քանի որ այդ օրը դպրոցը կոչվեց իր քաջ սանի անունով: Դպրոցի նոր անվանակոչությանը նվիրված հանդիսավոր միտինգին զեկուցումով հանդես եկավ դպրոցի տնօրեն Գյուլնարա Գրիգորյանը, ելույթ ունեցան ուսուցիչներ Մակբեթ Մկրտչյանը, Ռուբիկ Միքայելյանը, թոշակառու Լևոն Հակոբյանը, Վ. Հոռաթաղից՝ուսուցչուհի Ասյա Գյուրջյանը, զոհվածի այրիներ:

Առանձնապես հուզիչ էր դպրոցի մանկապատանեկան աշխատանքների կազմակերպիչ Հասմիկ Աղամալյանի ելույթն ու դպրոցականների ուժերով կազմակերպված միջոցառումը՝ նվիրված Զարմիկին, գյուղի 13 զոհվածներին:

Հրավիրված և պատվավոր տեղում նստած էին Զարմիկի ծնողները, հարազատները: Միտինգից հետո հավաքվածները ծաղկեպսակներ դրին Զարմիկի և մյուս զոհվածների գերեզմաններին, իսկ հետո արարողությունը շարունակեցին դպրոցում կազմակերպված հացկերույթի

սեղանների շուրջը…

Մեծ է Զարմիկի ծնողների վիշտը: Զարմիկը նրանց միանուագար որդին էր, հույսը, ապավենը, օջախի ծուխը, որ մարվեց՝ հոր խոսքերով ասած՝ որբ թողնելով ծնողներին: 31 տարեկան էր Զարմիկը, բայց դեռ չամուսնացած, սպասում էր պատերազմի ավարտին…

Ծնվել է 1963թ., սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում, հետո ավարտել անտառտնտեսության տեխնիկումը, ծառայել խորհրդային բանակում, վերադառնալուց աշխատանքի անցել անտառտնտեսությունում, բայց երկար չի աշխատել: Երբ սկսվել է արցախյան ազգային ազատագրական շարժումը, հենց առաջին օրերից Զարմիկն անդամագրվել է պայքարին, քաջաբար մասնակցել բազմաթիվ զինված ընդհարումների, 2 անգամ վիրավորվել ու դարձյալ կռվի դաշտ գնացել:

1994թ-ի հունվարի 2-ին էր: Թշնամին ռազմաճակատի ամբողջ գծով հարձակվել էր: Դասակի հրամանատար Զարմիկ Ավետիսյանը վաշտի հրամանատար Ռոմեո Գալստյանի հետ հերոսաբար ետ էին մղում թշնամու հարձակումը: Դժբախտաբար այդ օրը երկու երիտասարդների համար էլ ճակատագրական եղավ: Ռոմեոն զոհվեց անհավասար մարտում: Զարմիկը մահացու վիրավորվեց և անմահացավ հոսպիտալում: Նրա վերջին բառերն էին.

-Տեսնես կարողացան դիրքերը պահել…

Զարհուրելի է որդեկորույս հոր ողբը, իսկ Հաթերքի ենթաշրջանի բոլոր գյուղերում զոհվածների թաղման հետ կապված արարողություններում լսվում է Զարմիկի հոր ողբը:

Տարուց ավելի է նա չի սափրվում, ամբողջ օրը շրջում է իրենց գյուղի շրջակա անտառներում, դաշտերում, զրուցում ամեն մի ծառ ու թփի, առվի ու աղբյուրի հետ, իմանալով, որ անտառապահ որդին անպայման անցած կլինի այդ արահետներով, խմած կլինի այդ սառնորակ աղբյուրների ջրերից:

Զարմիկ Ավետիսյանի մարտական ծառայությունը գնահատվել է արժանվույն: Վերջերս նա հետմահու պարգևատրվել է Մարտական խաչ 2-րդ աստիճանի շքանշանով, և Հարությունագոմերի միջնակարգ դպրոցը վերանվանվել է նրա անունով: Թող սրանք գոնե սպեղանի դառնան Զարմիկի ծնողների, հարազատների վերքերին: Ինչպես իր զեկուցման մեջ դպրոցի տնօրեն Գ.Գրիգորյանն ասաց,անզավակ,անհիշատակ կյանքից հեռացած Զարմիկ Ավետիսյանի ծնողներն այսուհետև ունեն 5 տասնյակից ավելի թոռնիկներ, որոնք պարտավոր են սրբությամբ ծառայելու Արտավազդ պապիկին ու Անյա տատիկին:

«Զրաբերդ», 1995թ., 6 հունիս

ՆԱ ԴԵՌ 20-Ը ՉԷՐ ԲՈԼՈՐԵԼ

Սմբատ Բորիկի Աբգարյան: Ապրեր, կլիներ 35 տարեկան, բայց զոհվեց, անմահացավ, ձուլվեց հավերժությանը:

Ծնվել է 1972թ. սեպտեմբերի 15-ին՝ Չայլու գյուղում: Բորիկ և Լիլյա ամուսինների առաջնեկն էր՝ գեղեցիկ, գանգուր մազերով, սև ու խիտ հոնքերով, աշխատասեր, չարաճճի ու կատակասեր: Մեծացել էր ուրախ ու անհոգ, ունեցել շատ ընկերներ, վայելել բերքաշատ Չայլուի անուշահամ բարիքները, դարձել ամրակազմ ու արիասիրտ երիտասարդ՝ սիրված հարազատների կողմից: Ամռանը Չայլուի տապից քրոջ՝ Նարինեի ու եղբայրների՝ Արամի ու Սասունի հետ գալիս էր Վ. Հոռաթաղ՝ պապական գյուղը, լողանում Թարթառի զովաշունչ ջրերում, և, մինչև դասերն սկսվելը՝ մնում այնտեղ:

Սովորել է Չայլուի դպրոցում, հետո մասնագիտություն ստանալու նպատակով մեկնել Ղազախստան՝ հորեղբայր Սուրիկի մոտ և մնացել այնտեղ մինչև 1989 թվականը, մինչև Արցախյան շարժման արձագանքները կգտնեին նրան:

Հարազատ Արցախը, Չայլուն վտանգի մեջ էին, էլ ինչու՞ սպասել: Հորեղբոր հետ վերադարձավ գյուղ, անդամագրվեց գյուղերում նոր ձևավորվող գաղտնի ջոկատներին:

Օրեցօր դրությունը վատանում էր, գնդակոծություններն՝ ավելանում: Գյուղում ապրելը վտանգավոր էր դառնում: Ծնողները ստիպված դպրոցահասակ երեխաներին ուղարկում են Վ. Հոռաթաղ՝ համեմատաբար ապահով տեղ, իսկ Սմբատը մնում է գյուղում՝ մինչև թշնամու կողմից գրավվելը՝ 1992-ի գարունը:

Թշնամուն թողնելով տարիների վաստակը՝ տուն ու տեղ, ունեցվածք, չայլուեցիները բռնեցին գաղթի ճամփան: Մեծ դժվարություններով, գարնանային անձրևի տակ մինչև ոսկորները թրջված, հոգնած ու ջարդված նրանց մի մասը հասավ շրջանի լեռնային գյուղերը՝ ապաստանելու ծանոթ-բարեկամների մոտ:

Սմբատի հարազատներն էլ ապաստանել էին Վ. Հոռաթաղում, իսկ նա ընկերների հետ պատսպարվել էր Չայլուի մոտերքում և ցավով տե-

սավ, թե ինչպես թուրքերը սկսեցին ալան-թալանը, տարան իրենց «Ժիգուլին»:

Միայն մի գիշերով եկավ քեռու տուն՝ ծնողներին տեսնելու: Հորդորեցին մնալ, չգնալ: Քեռու տունը լիքն էին ծայրամասային գյուղերից եկած փախստականներով: Նրանցից շատերը որոշել էին հեռու գնալ, այլևս ետ չդառնալ:

-Եթե դուք չմնաք, ես չմնամ, ո՞վ պիտի պաշտպանի մեր հողը,-ասաց ու գնաց…

Կռվում էին Մատաղիսում: Խմբով մի անգամ շրջապատման մեջ ընկան, ցերեկները թաքնվեցին, գիշերները խաղողի այգիներով դուրս եկան, փրկվեցին:

1992-ի մայիսին վիրավորվեց գլխից ու մեջքից: Նրան և մյուս վիրավոր մարտական ընկերներին բերել էին Վ. Հոռաթաղ՝ ուղղաթիռով Երևան ուղարկելու: Ծնողները գյուղում էին, բայց նա չէր թույլատրել, որ հարազատներին տեղեկացնեն իր վիրավորվելու մասին:

Հետո դեպքերը զարգացան արագ և անսպասելի: Թշնամին գրավեց Մարտակերտի շրջանի մեծ մասը և հասավ Վ. Հոռաթաղ:

1992-ի հուլիսի 4-ին բռնագաղթեցին և վերինհոռաթաղցիները՝ հետներն էլ այնտեղ ապաստանած շատ փախստականներ, նաև՝ Սմբատենց ընտանիքը: Ապաստանեցին Ստեփանակերտում: Հայրը մեծ դժվարությամբ թույլտվություն ձեռք բերեց Երևան գնալու՝ վիրավոր որդուն տեսնելու: Բայց մինչև ծնողները Երևան կհասնեին, դեռ չապաքինված, Սմբատն այցելում է Արցախկոմիտե, ցուցակագրվում Արցախ վերադառնալու համար: Այնուհետև ծառայում է Չլդրանում՝ Անահիտի ջոկատում:

Վերջին անգամ նրան տեսել եմ 1992-ի օգոստոսի 17-ին, Ստեփանակերտում՝ ինքնաձիգը կրծքին, նռնականետը մեջքին: Եկել էր պարեն ու զինամթերք ստանալու: Հրաժեշտից հետո մարտական ընկերներից մեկը մոտեցավ և ասաց.

-Գիտե՞ս, Սմբատի վերքերը դեռ չեն ապաքինվել, ամբողջ գիշեր ցավից մղկտում է, լավ կլինի բուժվի, նոր գա:

Նա Չլդրանի շտաբում չէր մնացել, ընկերների հետ շտապել էր Դրմբոն՝ շրջանի կուրծքը սողոսկող թշնամուն դիմակայելու և այդտեղ էլ զոհվել՝ օգոստոսի 19-ին:

Հայրը Երևանից եկել էր որդուն տեսության, բայց գտավ դիահերձարանում:

1992-ի օգոստոսի 21-ին, օգոստոսյան ամենաթեժ գնդակոծության օրերին, նրա դիակը ուղղաթիռով տեղափոխեցին Երևան:

Ծնողներն այժմ ապրում են Ուկրաինայում, բայց հեռավորությունը չի խանգարում նրանց: Ամեն տարի որդու ծննդյան տարեդարձին այցելում են նրա շիրիմին և ծնունդը շնորհավորում: Այս տարի նրանք նորից այստեղ էին…

-Սմբա՛տ, քո սխրանքն անմահ է, քո անունը՝ մեր սրտերում:

«Ջրաբերդ», 2007թ., նոյեմբեր

ՏԱՐԻՆԵՐԻ ՀԵՌՎԻՑ ԿԱՄ՝ ՏԱՍՆՀԻՆԳ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Հիշողության համար 15 տարին և՛ շատ, և՛ քիչ ժամանակ է նայած ի՞նչ ես հիշում և ինչպիսի՞ նստվածք է տվել հիշվելիքը քո հոգում: 1988-ի փետրվարը մեր ազգային զարթոնքի, տասնյակ տարիներով զսպված զգացմունքների պոռթկման ամիսն էր, որ ամեն տարի փետրվարին մանրամասնությամբ արթնանում են մեր հիշողության մեջ բոլոր մեծ ու փոքր դեպքերը՝ խնամքով պատրաստված տեսաժապավենի պես:

Դեռ 1987թ-ից Երևանում սովորող ուսանողների միջոցով ստորագրություններ էինք հավաքում, թռուցիկներ ստանում, փոխանցում: Մեր դպրոցը վերածվել էր յուրատեսակ ագիտկետի, քաջատեղյակ էինք Հայաստանում և Արցախում կատարվող դեպքերին, հասունացել էինք քաղաքականպես, սպասում էինք, որ մի օր Մոսկվայից կգան ստորագրությունների համար, որպեսզի ժողովրդի կարծիքն անձամբ իմանան և հավատացած էինք, որ մեր արդար պահանջը կկատարվի: 1988թ-ի փետրվարի 12-ն էր: Շրջկենտրոնում շրջանային ակտիվի հավաք պետք է կայանար: Մի քանի ուսուցիչներով շտապեցինք այնտեղ, սակայն նշված ժամին այն չկայացավ: Շրջկոմից մշակույթի տուն տանող ճանապարհը լեփ-լեցուն էր: Շշուկներ էին պտտվում, թե Մոսկվայից ներկայացուցիչներ են եկել, սպասում են շրջկոմում, ուր որ է՝ կգան: Հավաքվել էին նաև շրջանի ադրբեջանցի ղեկավարները, նրանք էլ այստեղ-այնտեղ զրուցում էին: Ժողովուրդը սպասում էր,սակայն ղեկավարները չկային: Ժամը 16-ի մոտերքը մի ձայն առաջարկեց հավաքվել մշակույթի շրջանային տանը և սպասել: Շուտով դահլիճը լցվեց, նույնիսկ կանգնելու տեղ չկար: Ադրբեջանցի ղեկավարները դահլիճ չմտան, բայց պայմանավորվել էին պատվիրակ ուղարկել, որովհետև ներս մտավ Ումուբլուի կոլտնտեսության նախագահ Բալօղլան Աբիլո-

վը և նստեց երկրորդ շարքում: Բեմ բարձրացավ շրջխորհրդի այն ժամանակվա կազմբաժնի վարիչ Ժ.Առաքելյանը և առաջարկեց սկսել ժողովը՝ մինչև ղեկավարության գալը: Ընդունված կարգով պատվավոր ու գործնական նախագահություններ ընտրելուց հետո, սկսվեցին ելույթները: Սկզբից ելույթ ունեցավ Վ. Շիրինյանը, հետո Ս. Մոսունցը և ուրիշներ: Առաջին անգամն էին հնչում հանպատրաստից անկեղծ ու կրակոտ ելույթներ, դրա համար էլ ոգևորությամբ ունկնդրում ու ծափահարում էին: Հանկարծ դահլիճի ետևից մի լոզունգ կախվեց. «ՉԵՄ ԱՏՈՒՄ, ՉԵՄ ԱՏՈՒՄ, ԻՄ ԱԶԳԻՆ ՍԻՐԵԼՈՎ, ՈՉ ՄԻ ԱԶԳԻ ՉԵՄ ԱՏՈՒՄ», հետո երկրորդը՝ «ՈՎ ՀԱ՛Յ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՔՈ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ է»: Իմացանք, որ կաթսայատանը Վիգեն Շիրինյանն է գրել այդ լոզունգները: Ակումբը ցնծում էր, զարմանքն ու ոգևորությունը խառնվել էին իրար: Վախ չկար, այդ օրն իսկապես ուրիշ էր:

-Նայիրա՛, գրի՛ր, սա պատմություն է դառնալու, նշումներ արա,- կանչում էին այս ու այն կողմից…

Ընտրվեց մի հեղինակավոր պատվիրակություն և ուղարկվեց ղեկավարներին հրավիրելու, բայց այդպես էլ նրանք չեկան, Մոսկվայից եկող չկար: Ժողովը թեկուզ շարունակվում էր, սակայն ելույթներ այլևս չկային: Զգացի, որ հարկավոր է լիցքավորել դահլիճը, բարձրացա բեմ: Ամբողջությամբ չեմ հիշում ելույթիս տեքստը, միայն գիտեմ, որ խոսեցի մարդու իրավունքներից, նշեցի ադրբեջանցիների ԼՂԻՄ-ում վարած գաղութային քաղաքականության ու նրա հետևանքների մասին: Ելույթս մյուսների պես եզրափակեցի մայր Հայաստանին վերամիավորվելու կոչով: Ելույթ ունեցան նաև Արամայիս Բեկնազարյանը (Վաղուհաս), Վիլյամ Դանիելյանը (Մեծ-Շեն) և ուրշներ: Ժողովն ընդունեց մայր Հայաստանի հետ վերամիավորվելու մասին որոշում: Մեր ոգևորությանը չափ չկար: Թվում էր, թե կատարվել է մեր երազանքը՝ միացել ենք Հայաստանին: Նույն օրը երեկոյան մեր գյուղական ակումբում հավաքեցինք ժողովրդին և ներկայացրինք շրջկենտրոնում կատարվածը:

2003թ. «Ձրաբերդ»

«ՎԵՐԱԴԱՐՁ» ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂ



2001թ. դեկտեմբերի 13-ին ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վ. Հոռաթաղ գյուղում հողին հանձնեցին Արցախյան պայքարի քաջամարտիկ, Բաքվի Բայիլի բանտում տանջամահ եղած Արկադի Աբրահամի Հայրիյանի աճյունը:

Աճյունը Հայաստանի Կարմիր խաչի և ՀՀ ՊՆ ներկայացուցիչներին է հանձնվել Վրաստանի «Կարմիր կամուրջ» տեղանքում, իսկ այնտեղից հայրենի գյուղ է տեղափոխվել ԼՂՀ ԱԿԱՀՄ նախագահ Վերա Գրիգորյանը՝ ԼՂՀ իշխանությունների, «Արցախ» ՀՄԲ նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր Համլետ Հարությունյանի և ՀՀ ատոմակայանի գլխավոր տնօրեն Սուրեն Ազատյանի աջակցությամբ

Նապոլեոնին բերո՞ւմ են...

Բոթը ավետիսի տեղ ընդունվեց...

Գյուղն ալեկոծվեց, փառահեղ արծվի պես թևերը տարածեց՝ գրկաբաց ընդունելու 10 տարի առաջ կորցրած որդուն... Պարզկա երկնքում հայտնվեցին ամպի ծվեններ, և անձրևի խոշոր կաթիլներ թափվեցին հավաքվածների վրա՝ խառնվելով նրանց առատահոս արցունքներին:

Նապոլեոնը՝ նույն ինքը Արկադի Աբրահամի Հայրիյանը, ծնվել է 1951թ. նոյեմբերի 5-ին, Կոճողոտ գյուղում: 1956-ին ընտանիքը տեղափոխվել է հարևան Վ. Հոռաթաղ գյուղը, որտեղ էլ անցել են նրա դպրոցական տարիները: Ավտովարորդի մասնագիտություն է ստացել, ծառայել է Խորհրդային բանակում:

Զորացրվելուց հետո աշխատանքի է անցել, ամուսնացել, հայրական տան կողքին սեփական տուն կառուցել, 4 երեխաների հայր դարձել: Նպատակներ շատ է ունեցել, սակայն դրանք այդպես էլ մնացին անկատար:

Նապոլեոնը շատերի պես գիտակցաբար դարձավ շարժման երդվյալ զինվոր, անդամագրվեց ինքնապաշտպանական ջոկատին, մասնակցեց տարբեր օպերացիաների: Հերթապահում էր սահմանային գյուղերում, զենք ու զինամթերք էր տեղափոխում իր մազութատար մե-

քենայի թափքում:

Որ հոռաթաղցին չի հիշում, թե նա ինչպես է փրկել համագյուղացի Յուրային, որին Քարվաճառ-Բաքու գնացող ավտոբուսի ուղևորները առևանգել էին ճանապարհից:

Դժբախտաբար, Յուրան էլ հիմա չկա, զոհվել է: Նա երբեք չէր մոռանում իր փրկարարին և որոշել էր վարձահատույց լինել, երբ գերեվարեցին Նապոլեոնին, 1992թ. հուլիսին Հաթերքի ազատագրման ժամանակ նա գերի է վերցնում երկու ազերիների՝ նպատակ ունենալով փոխանակել Նապոլեոնի հետ:

Սկզբնական շրջանում ինչքան էլ գաղտնի էին գործում ինքնապաշտպանական ջոկատները, այնուամենայնիվ, օմոնականները հոտն առել էին և 1990թ-ի օգոստոսին, Ստեփանակերտից մեքենայով վերադառնալիս, Խաչենագետի կամրջի մոտ կանգնեցնում են մեքենան և խուզարկում: Զենք կար մեքենայում: Այնպես էր թաքցված, որ չգտան, բայց և այնպես ծերբակալեցին ու տարան Շուշվա բերդը և 40 օր պահելուց հետո բաց թողեցին՝ չկարողանալով նրանից կորզել ոչ մի բառ:

Շուշիից վերադառնալուց հետո ավելի եռանդով շարունակեց իր գործը:

Հարևան ադրբեջանական գյուղերում ապաստանած խաժամուժը պատուհաս էր դարձել ձորակի հայկական գյուղերի համար, ամեն օր բռնություններ էին կատարվում հայ բնակիչների նկատմամբ՝ առևանգումներ, սպանություններ, անասունների կողոպուտ:

Ջոկատները առաջադրանք ստացան՝ վերացնել վտանգի օջախները:

Նապոլեոնը մեքենայով զինամթերք էր տեղափոխել Ումուբլուի դիմացիի բարձունքը, որտեղից գիշերը պետք է ահաբեկեին ումուբլուեցիներին և ետ վերադառնային նույն մեքենայով:

Նա երկար սպասեց նշանակված վայրում, բայց ընկերները չեկան: Արդեն լուսանում էր... Ընկերները, հանդիպելով ռուս զինվորների և հետապնդվելով նրանց կողմից, այլ ուղղությամբ էին վերադարձել՝ ցրվելով զագլիգցիների բանջարանոցներում:

Նապոլեոնը, Զագլիգ մտնելով, անմիջապես հայտնվեց ռուս զինվորների աքցանում: Երբ մեքենայի ճանապարհը կտրեցին, նա կանգնեցրեց մեքենան, բացեց դուռը, գլուխը դուրս հանեց խցիկից և ձեռքի նռնակը պատրաստ պահեց գլխից վեր: Դա շփոթեցրեց զինվորներին: Առիթից օգտվելով, նրա հետ խցիկում գտնվող վաղուհասցի Լ. Ասլանյանը բացեց խցիկի դուռը մյուս կողմից, արագ իջավ և վազելով անհե-

տացավ այգիներում (հետագայում նա վաղուհասցի զոհվածների հիշատակին հայրենի գյուղում հուշարձան է կանգնեցրել իր միջոցներով): Իսկ Նապոլեոնը այդպես էլ նռնակը չնետեց, երևի չուզեց վնասել ռուս զինվորներին (հայ ասպետի միամիտ մեծահոգություն), որոնք էլ նրան բռնեցին, տեղափոխեցին Ումուլու և հանձնեցին օմոնականներին:

Այդտեղից էլ սկսվեց նրա կյանքի դաժան ոդիսականը:

Դա 1991-ի հուլիսի 24-ին էր:

Զագլիկցի կանայք տեսել էին, թե ինչպես են Նապոլեոնին ծեծել, ոլորել ձեռքերը, ջարդել ծնոտը, կրակել ոտքերի տակ...

Հետո նրան տարան Շուշի, հետո՝ այլ քաղաքներ և, վերջապես, Բաքվի Բայիլի բերդում մի քանի տարվա խոշտանգումներից հետո տանջամահ արեցին:

Արցախյան պատերազմում հազարավոր զոհեր ենք ունեցել, ամեն մեկի ցավը յուրովի է, բայց Նապոլեոնի ցավը առանձնանում է նրանով, որ տաս տարի շարունակ բազմաթիվ անգամ փոխանակելու լուր են առել, ամեն անգամ վիշտը նորոգել, սպասել, բայց՝ ապարդյուն:

Սպասումից, կսկիծից մահացել է մայրը՝ հետը տանելով անդրանիկ որդու անափ վիշտը, իր մայրական հոգու թելերով ամեն անգամ վերապրելով որդու կորուստը:

Կինը մեծացրեց 4 երեխաներին, կրթություն տվեց, ամուսնացրեց, պետության աջակցությամբ վերանորոգվեց Նապոլեոնի առանձնատունը

Դուստրը՝ Արմինեն, չի հիշում հորը, նա «ճանաչում է» հորը ուրիշների պատմածներից, թանգարանի հուշամատյանից և ողբաձայն զրուցում է նրա հետ, բացահայտում տասը տարիների հոգում կուտակված կարոտի, սպասման, հանդիպման իր ապրումները:

Արմինեի ողբը մեր բոլոր զոհվածների հայրական գուրգուրանքի կարոտ բալիկների միահյուսված ողբն է, որ հիշեցնել տվեց բոլոր զոհվածներին, թարմացրեց նրանց հարազատների սրտի վերքերը:

«Մարտիկ» 2002թ.

ԵՐԵՔ ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐ

Վերին Հոռաթաղի միջն. դպրոցի Փառքի անկյունում զոհված ազատամարտիկների շարքն ավարտվում է երեք դպրոցահասակ երեխաների լուսանկարներով: Դրանք պատերազմի պատճառով դպրոցի զոհված աշակերտներն են, որոնք ակամայից դարձան պատերազմի զոհեր:

Երբ սկսվեց Արցախյան շարժումը, Գարիկը փոքր երեխա էր, ուշադիր լսում էր մեծերի զրույցները:

Սումգայիթից հետո գյուղացիները ապրում էին ահ ու սարսափի մեջ, շատերը դիմում էին ինքնապաշտպանության:

Տղամարդիկ հավաքվում էին, գաղտնի նռնակներ էին պատրաստում, հրացաններ էին վերանորոգում, պատրաստում էին ինքնաշեն հրացաններ:

12-ամյա Գարիկը տեսնում էր այս ամենը: Հայրը գյուղի տղաների հետ հերթապահում էր սահմանային գյուղերում, «տան տղամարդն էր» և որոշում է մորն ու քույրերին պաշտպանել վերահաս վտանգից: Դրա համար նա ինքնաշեն ատրճանակ է պատրաստում: Տեսել էր հորաքրոջ տղային՝ Քաջիկին, պատրաստելիս և ընդօրինակել էր:

Թաքցրած էր պահում, բայց ծնողները նկատեցին, փշրեցին, շպրտեցին:Նորից պատրաստեց:

Մի աներևույթ ուժ ձգում էր ապագա ֆիդայուն դեպի զենքը, և բոլորից թաքուն հասցնում էր շոշափել, փորձարկել իր զենքը: 1992թ. ապրիլի 23-ը կիրակի էր: Ամբողջ օրը Գարիկը ծնողների հետ աշխատել էր տնից հեռու գտնվող հողամասում, կարտոֆիլ էին ցանում:

Իրիկնադեմին, երբ ավարտել էին աշխատանքը և տուն էին վերադառնում, վազելով առաջ էր ընկնում ծնողներից, տուն գալիս, վերցնում «իր ատրճանակը», դնում ծոցում, որ քույրը չնկատի և արագ դուրս վազում տնից, որ մինչև ծնողների գալը հասցնի կրակել մի քանի անգամ, բայց, դժբախտաբար, ատրճանակը ձեռքի հպումից պայթում է ծոցում և գնդակը խրվում է Գարիկի սիրտը...

Գարիկը V դասարանի աշակերտ էր: Անհուն վշտով հողին հանձնեցինք նրան: Նրա նստարանին մինչև տարեվերջ թարմ ծաղիկներ էին դնում ընկերները...

Պատերազմն ունի իր սև օրենքները: Չնայած մի քանի ամիս է, ինչ լռել են կրակոցները, բայց 1994թ. օգոստոսին հոռաթաղցիները խորը կսկիծով հողին հանձնեցին ևս 2 անմեղ զոհերի՝ զենքի պայթյունից բզկտված մարմինները:

Դժբախտաբար, սա ոչ առաջին դեպքն է և ոչ էլ վերջինն է լինելու մեր երկրամասում, քանի որ դեռ թաքնված շատ ականներ են պայթելու, դեռ խաղալիքի կարոտ մեր երեխաները հետաքրքրությունից մղված շատ գնդիկներ պիտի ցանկանան բացել, անգիտակցաբար պայթեցնել:

Այսպես եղել է միշտ: Հայրենական մեծ պատերազմն ավարտվել է 1945 թվականին, 35 տարի հետո Ղրիմի ծովափին խաղացող մի երեխա մահացել էր ականի պայթյունից:

Սամվելը և Սասունը պատերազմի զոհերից են: Նրանց սպանած գնդակը թշնամին նետել է ուղիղ երկու տարի առաջ, երբ գյուղի համար ուժեղ մարտեր էր մղվում: Սրանց կորուստը ավելի ցավալի է, քան անմիջապես կռվի դաշտում մահացածներինը, որովհետև այնտեղ մահն անխուսափելի է, իսկ այստեղ՝ պատահական, կարող էր և չլիներ, որովհետև սրանք պիտի մեծանային ու վաղը փոխարինեին Ռոմային, Գավրուշային, Կլիմիկին, մնացածներին..., որովհետև սրանց համար են զոհվել տղաները, որպեսզի սրանք ազատ ու անկախ ապրեին, գյուղի ապագան լինեին:

Սրանց մահը ինքնին մի բողոք է աշխարհի դեմ, պատերազմի դեմ: Սրանց վիշտը ընդհանուր է, բոլորինս է, Արցախինն է, ամբողջ հայությանն է:

Սասունն ու Սամվելը զոհվեցին այնպիսի ժամանակ, երբ մի քանի օրից դպրոց պիտի գնային:

Դժվար է ինչպես նրանց ծնողների հարազատների համար, այպես էլ մեզ՝ ուսուցիչներիս և իրենց դասընկերների համար: Դպրոցում նրանց նստարանը դատարկ պիտի մնա և ամեն անգամ ցավ պիտի

պատճառի դասարան մտնող ուսուցիչներին, մանավանդ, որ երկուսն էլ խելացի, հանգիստ, համեստ աշակերտներ են եղել:

Սասունը երեք քույրերի միակ եղբայրն էր, նաև՝ գերդաստանի միակ ժառանգորդը:

Մայրն անչափ սիրում էր նրան, միշտ հագցնում էր կոկ ու գեղեցիկ՝ միշտ ճերմակ վերնաշապիկով ու սև վզկապով էր դպրոց գալիս: Մի անգամ ընկերները կատակել էին.

- Սասունը ոնց որ Գորբաչովը լինի:

Մյուս օրը նա հրաժարվել էր վզկապ կապելուց... Նա սիրում էր օգնել պապիկին՝ տան գործերում:

1994թ. օգոստոսն էր: Օրեր էր հաշվում, թե երբ պիտի դպրոց գնա, պայուսակը պատրաստել էր արդեն: Թաղի երեխաներով խաղում էին գյուղամերձ դաշտում: Կեսօրին գալիս է տուն, ճաշում և հարևանի տղայի՝ Սամվելի հետ գնում են դեպի ձորը, որտեղ նախորդ օրը գտած գնդիկը գցել էին ջուրը: Ձրից հանում են գնդիկը, կարծում, թե ջրում փչացած կլինի, քարով խփում են, որ բացեն: Պայթում է ինքնաթիռի գնդակոծությունից մնացած գնդիկը և երկու երեխաներին զրկում կյանքից:

Պայթյունի վայր հասածները Սամվելին գտան մահացած, իսկ ծանր վիրավոր Սասունը մահացավ Չլդրանի հոսպիտալում:

Դպրոցում երբեք չեն մոռանում հավերժ նույն դասարանում մնացած Գարիկին, Սասունին և Սամվելին...

Նրանք էլ պատերազմի զոհեր են:

2000թ., «Ձրաբերդ»

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԾՆՈՒՆԴԴ, ԳՐԻՇԱ՛...

Փետրվարի 18-ին լրացավ Արցախյան պատերազմի զոհ, փառքի 2-րդ աստիճանի շքանշանակիր Գրիշա Կարոյի Մուրադյանի ծննդյան 45-ամյակը:

Եթե ապրեր, կլիներ հասուն տղամարդ՝ մտավոր, ֆիզիկական ու ստեղծագործական կարողությունների ծաղկման շրջանում:

Հաճախ եմ մտովի պատկերացնում Գրիշային կենդանի, չզոհված: Պատկերացնում եմ նրան բարձրաստիճան զինվորականի հագուստով, գնդապետի ուսադիրներով, խրոխտ կեցվածքով՝ յուրահատուկ ժպիտը դեմքին: Համոզված եմ, որ նա խաղաղ պայմաններում էլ կշարունակեր ծառայել բանակում, քաղաքացիական կյանքին չէր վերադառնա, քանի դեռ բանակը իր նմանների կարիքը կզգար: Նա, որ դեռ 1990-92 թվականներին դպրոցի ուսուցիչներին ու աշակերտներին կրակել էր սովորեցնում՝ հետը գաղտնի դպրոց բերած, ինքնաձիգով, նռնակներ պատրաստել ու գործածել էր սովորեցնում, որ կամավոր հայտնվում էր մե՛րթ Բերդաձորում, մե՛րթ Քաջավանում, մե՛րթ Սրխավենդում, Կիչանում..., այնքան հմտությամբ էր գործածում զենքը՝ արագ ու վարժ (Խորհրդային բանակի հատուկ ջոկատում էր ծառայել), որ զարմանք ու հիացմունք էր պատճառում ընկերներին, աշակերտներին:

Ինչպե՞ս կարող էր նա իր փորձը, գիտելիքները չծառայեցներ մեր նորաստեղծ բանակի կայացմանը...

Ավա՜ղ, Գրիշան դրան չհասավ: Դա էլ նրա շատ երազանքների պես չիրականացավ:

Միայն հուշեր մնացին նրանից: Հուշերը չեն մոռացվում, անընդհատ թարմացվում են, բազմապատկում կորստի ցավը, նաև՝ հպարտության զգացումը նրա համար, որ այսօրվա մեր ազատությունն ու անկախությունը ձեռք է բերվել գրիշաների արյամբ, և մեր պարտքն է՝ այնպես անել, որ նրանցից ոչ ոք չմոռացվի:

Գրիշայի աշակերտները ավարտել են դպրոցը, հետն աշխատած ուսուցիչներից քչերը կան դպրոցում, բայց նա երբեք չի մոռացվում, քանի որ և՛փառքի անկյունում, և՛ ուսուցչանոցում իր պատվավոր տեղն ունի, իսկ նրա մասին պատմելու առիթները միշտ էլ լինում են:

Նա զոհվեց քսան տարի առաջ՝ 1992 թ. հուլիսի 2-ին անհավասար մարտում, Մարտակերտի դաշտում, երբ թշնամին կրակ էր թափում չորս կողմից, նաև՝ երկնքից: Փոքրաթիվ ջոկատով կամավոր մեկնել էին օգնության վաղուհասցի երիտասարդները՝ մեկը մեկից քաջ, խելացի, թիկնեղ, գեղեցիկ, հայրենասեր… Տղաներից 5-ը զոհվեցին այդ մարտում, նրանցից 2-ը՝ ինքնաթիռի գնդակոծությունից վառված արտում…

Վաղուհասի հողը զոհված տղաներին իր ծոցն առավ ոչ սովորական, պապենական ծեսով, այլ՝ գիշերվա խավարում, գնդակոծությունների տակ:

Նրանք պապերի կողքին չհանգրվանեցին, այլ՝ գյուղի կենտրոնում: Հուղարկավորության ժամանակ գնդակոծությունից հրդեհվեց ու մոխրակույտի վերածվեց գերեզմանից մի քանի տասնյակ քայլի հեռավորությամբ գտնվող Գրիշայենց տունը…

Իսկ առավոտյան՝ հուլիսի 4-ին, Վաղուհասն էլ դատարկվեց…

Բռնագաղթեցինք…

…1992թ. փետրվարի 18-ն էր: Թեժ մարտեր էին տեղի ունենում Սրխավենդի, Կիչանի մոտերքում: Գրիշան էլ այնտեղ էր: Խստաշունչ ձմեռ էր, ճանապարհները վտանգալից ու փակ: Նախօրոք պայմանավորվածության համաձայն այդ օրը պիտի Գրիշայի նշանդրեքը լիներ: Տանը հավաքվել էին քույրերը, հարազատները: Նախապատրաստվել էին, որ գնան Ասկերանի շրջանի գյուղերից մեկում նշանելու սիրած աղջկան: Գրիշան չհասցրեց ժամանակին տուն հասնել: Մենք հիշում ենք, թե ինչպես նա այդ օրը, խոր ձյունը ճեղքելով, ոտքով եկավ, որ հասներ գյուղ…

Գրիշան հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով, Գրիշայի անունն է կրում հայրենի գյուղի՝ Վաղուհասի միջնակարգ դպրոցը, բայց նրան չեն մոռանում նաև հարևան Վերին Հոռաթաղ գյուղում, որտեղ նա զինղեկ էր աշխատել: Այստեղ սրբությամբ պահվում է նրա մատյանը, որի էջը գրելիս Գրիշայի ընկերները մեքենայով եկել էին դպրոց և մարտի տարել հետները… Այստեղ ամեն տարի նշվում է նրա ծննդյան օրը, հանդիսավորությամբ՝ հոբելյանները: 1997թ. նշվել է Գրիշայի 30-ամյակը՝ հարազատների, մարտական ընկերների մասնակցությամբ:

Այս տարի բարձր դասարանի աշակերտների հետ նշեցինք նրա 45-ամյակը, գեղեցիկ հուշեր պատմեցինք նրա մարտական ծառայությունից, կատարած քաջագործություններից, հավատացած լինելով, որ շատերը մտքում որոշեցին նմանվել Գրիշային ու հերոսանալ:

Միջոցառումից հետո «առանձնացա» փառքի անկյունում, Գրիշայի հետ, նոր ծաղիկներ ավելացրի ծաղկամանում, թերթեցի այնտեղ սրբությամբ պահվող մատյանի էջերը, վերցրի նկարը և մտովի զրուցեցի հետը.

-Այսօր քո ծննդյան օրն է, Գրիշա՛, նշում ենք ծնունդդ, բայց ինչ որ բան պակասում է. Ուրախ բարեմաղթանքներ, բարի ցանկություններ չկան, դու չես ժպտում հյուրերիդ, չես արձագանքում: Նկարիդ հետ խոսելով չեմ հագենում, ուզում եմ բարձրաձայնել՝ բոլորն իմանան, որ այսօր քո ծննդյան օրն է, որ դու պիտի դառնայիր 45 տարեկան, բայց հավերժ մնացել ես 25:

Նշում ենք ծնունդդ, բայց չգիտենք ո՞ւմ շնորհավորել, ինչպե՞ս շնորհավորել… Քանի մայրդ կենդանի էր, գալիս էր դպրոց, միասին էինք նշում ծնունդդ: Հիմա նա էլ չկա: Քեզ պես մի զոհ էլ նա է՝ քո վշտի նետերից խոցված սրտով:

Մորդ վերջին կամքն էլ եղել է, որ չմոռանանք քեզ: Ինչպե՞ս ասեմ. «Մե՛ծ մայր, հերո՛ս ծնող մայր, հանգիստ ննջիր Գրիշայի արյունով սրբացած հողում: Երբեք չենք մոռանա գրիշաներին, չենք մոռանա Գրիշային ու նաև Քեզ, որպես վշտալլուկ մոր խորհրդանիշ»:

Գիտե՞ս, Գրիշա, ծննդյանդ օրը շատ թանկարժեք նվերներ ունես, այնքան շատ, որ հնարավոր չէ թվարկել:

Հիշո՞ւմ ես, Շուշիի ազատագրման առթիվ դպրոցում խնջույք կազմակերպեցինք: Ուրախ էինք, որ ճեղքվել էր Արցախի շրջափակումը, որ արդեն Հայաստան տանող ճանապարհ ունենք: Դու խորիմաստ ժպտացիր ու համոզված ասացիր, որ դա դեռ սկիզբն է, մենք Քարվաճառով պիտի Հայաստան մտնենք: Չգիտեինք ում հեռանկարային ծրագիրն էր, որին ծանոթ էր Գրիշան, բայց այն ժամանակ դա անկարելի թվաց: Հիմա ամբողջովին մերն է «մեր Քարվաճառը» և մեքենաներն անընդհատ երթևեկում են այնտեղով՝ օրեցօր բարեկարգվող ճանապարհով:

Այս քեզ մի նվեր:

Նախկին փոքր, անշուք դպրոցական շենքի փոխարեն այժմ ունենք նորակառույց եռահարկ դպրոց, որտեղ դու «քո ներկայությամբ» էլի արիության դասեր ես տալիս մեր աշակերտներին: Սա էլ հաջորդ նվերդ:

Ունես նաև անգնահատելի նվեր՝ Ազատ ու անկախ Արցախը, մեր անպարտելի բանակը, օրեցօր գեղեցկացող ու շենացող Արցախը: Նույնիսկ Արցախի ընդերքն է ուրախությունից ճեղքվել ու գանձերը նվիրել ձեր հիշատակին, ունենք սեփական հէկեր, քաղցրաբառ հայերենն է այսօր անարգել թնդում մեր երեխաների շուրթերից, շատ բնա-

կավայրերում նորակառույց եկեղեցիների զանգերն են ղողանջում հայրենեն:

Օրերս համագյուղացիներիդ բարերարությամբ հայրենի Վաղուհասում կառուցված եկեղեցու զանգերն էլ ղողանջեցին, և հորդ՝ Կարո Մուրադյանի խոսքերով՝ այսուհետ քո և մյուս զոհվածների հոգիները կհավաքվեն եկեղեցու կամարների ներքո և այնտեղից կհսկեն գյուղի խաղաղ անդորրը:

Ասում էի չէ՞, որ շատ նվերներ ունես, հնարավոր չէ թվարկել բոլորը: Նվերներ են արել քո հարազատները, համագյուղացիները: Քո հայրական տանը քրոջդ թոռը՝ քո անունը կրող փոքրիկ Գրիշան է վազվզում, ամեն օր հայրենի գյուղի քո անունը կրող դպրոցում հարյուրավոր աշակերտների ուրախ ու երջանիկ կանչերն ես ունկնդրում, որն ազդարարում է, որ իզուր չի թափվել ձեր արյունը, դուք երջանիկ կյանք եք կռել սերունդների համար և անմահացել:

- Շնորհավոր ծնունդդ, Գրիշա՛:

«Զրաբերդ», 16-29 փետրվար, 2012թ.

ՇԻՆԱՐԱՐՆ ԷԼԻ ԿԿԱՌՈՒՑԵՐ...

Վերին Հոռաթաղի մուտքի դարպասն է «Գավոստրոյ» կիսակառույցը: Ո՛չ, այն թշնամու արկերից չի ավերվել, պարզապես Գավրուշա Վահանյանը չհասցրեց ավարտել գործարանի կառուցումը:

Ծնվել է Վ. Հոռաթաղում 1958թ., որտեղ էլ ավարտել է 8-ամյակը: Միջնակարգ կրթությունը ստացել է Ստեփանակերտի գիշերոթիկում, այնուհետև ավարտել Երևանի Ալ. Թամանյանի անվան շինարարական տեխնիկումը 1980թ, իսկ 1988թ.՝ Օրենբուրգի ճարտարագիտական ինստիտուտը՝ ստանալով արդյունաբերական և քաղաքացիական շինարարի մասնագիտություն: Նրա առջև բացվում են աշխատելու և ուսումը շարունակելու լայն հեռանկարներ: Ձևակերպում է համապատասխան փաստաթղթեր՝ ասպիրանտուրայում սովորելու համար:

Բայց… սկսվում է արցախյան շարժումը: Արցախցի երիտասարդը չի կարողանում հարազատ երկրամասից հեռու հանգիստ աշխատել ու սովորել և որոշում է օգտակար դառնալ իր երկրամասին, մասնակցել իր ժողովրդի պայքարին:

Արցախում խիստ զգացվում էր գավրուշաների կարիքը: Եզակի էին նման մասնագիտությամբ մարդիկ, և նրան առաջարկում են աշխատելու Ստեփանակերտում, շրջկենտրոնում, բայց գերադասում է մնալ հայրենի գյուղում և որոշում է գյուղի մուտքի մոտ կառուցել շինանյութերի գործարան, որը տասնյակ աշխատատեղեր կբացեր համագյուղացիների և հարևան գյուղերի երիտասարդների համար, կկանգնեցներ արտագնա աշխատանքի գնացողների հոսքը, իսկ գործարանի արտադրած շինանյութերով նոր ու գեղեցիկ շենքեր կկառուցվեին…

Գավրուշան մեծ եռանդով սկսում է գործարանի շինարարությունը, կարճ ժամկետում շահագործման է հանձնում երկհարկանի գրասենյակը, մի շարք շինություններ, պարսպապատում՝ գործարանի շրջապատը:

Սակայն… կյանքն այլ պահանջներ է առաջադրում, կիսատ է թողնում գործարանի շինարարությունը և դառնում գյուղում ստեղծվող ֆիդայական ջոկատի անդամը: Սկզբում աշխատում է որպես կապավոր, հետո սովորեցնում է ուրիշներին, ինքը դառնում հասարակ զինվոր, զենքը ձեռքին պաշտպանում հայրենի և հարևան գյուղերի սահմանները:

Նա մասնակցեց շրջանի գյուղերի ազատագրմանը, օգնության գնաց Հադրութ և Մարտունի, մասնակցեց Ղուբաթլուի մարտերին և հաղթական վերադարձից հետո ընտանիքը տեղափոխեց կնոջ հայրենի Կոճողուտ գյուղը:

Պարտվող, շրջաններ կորցրած թշնամին՝ որոշակի դադարից հետո 1994թ. հունվարին բոլոր ուղղություններով հարձակման է անցնում: Օրհասական մարտեր են մղվում շրջանի ներքին գոտում, այնտեղ էին կենտրոնացված մեր լավագույն ուժերը, երբ հանկարծ լուր են առնում, որ թշնամին ճեղքել է Օմարի պաշտպանական գիծը և արագ թափով առաջ է շարժվում:

Նորից վտանգվում է Հաթերքի ենթաշրջանի բնակիչների կյանքը, կրկնվելու էր 1992թ. հուլիսի 4-ը, եթե…

Լուրն առնելուն պես գիշերը, Մաղավուզից Օմար են սլանում 2-րդ գումարտակի տղաները՝ Արկադիա Շիրինյանի հրամանատարությամբ, և անասելի բքին, մետրերի հասնող ձյան մեջ, օգնության հասնող այլ գումարտակների հետ, այնպիսի օպերացիա են ձեռնարկում, որ կարո-

ղանում են թշնամուն հետ տալ և նորից Քարվաճառի տերը դառնալ:

Այդտեղ էր նաև Գավրուշան, որը գլխից վիրավորվում է ականանետի կրակից և նահատակվում փետրվարի 3-ին՝ իր հետ տանելով գեղեցիկ շատ երազանքներ, բազմաթիվ նպատակներ, կիսատ գործեր…

Գավրուշան զոհվեց Արցախի, հարազատ գյուղի, իր բալիկների, մեր՝ բոլորիս համար և՝ անմահացավ:

ԱՅՍՏԵՂՈՎ ԹՈՒՐՔ Է ԱՆՑԵԼ

9 ամիս առաջ մենք՝ Մարտակերտի շրջանի բնակիչներս, հարկադրված թողեցինք մեր շեն օջախները, մեր բերքառատ ու մրգառատ այգիներն ու բանջարանոցները, մեր հարուստ անտառներն ու բերրի դաշտերը և ապաստանեցինք Ստեփանակերտում ու նրա մերձակա գյուղերում:

Մայրաքաղաքի օգոստոսյան գնդակոծությունները՝ տասնյակ զոհերով ու վիրավորներով հանդերձ, ընդհանուր խուճապ առաջացրեց ինչպես բուն քաղաքացիների, այնպես էլ Մարտակերտից բռնագաղթվածների մեջ և ստիպված տեղափոխվեցին Հայաստան, Ռուսաստան, ով որտեղ ծանոթ-բարեկամ ուներ:

Ցրվեցինք, մեզ հետ տանելով մեր գյուղերի, մեր տների, հարևանների ու բարեկամների կարոտը: Միայն ֆիզիկապես էինք տեղահանվել, հոգով ու սրտով, երազներով դեռ մնում էինք հայրենի օջախներում՝սպասելով երանավետ ժամի՝ նորից ետ վերադառնալուն:

9 ամիսը տարիների տևողություն ուներ բռնագաղթվածներիս համար. Ուրիշի օջախը չէր ջերմացնում, ուրիշի հացը չէր կշտացնում, ուրիշի կշտամբանքը՝ «փախածի» մականունը տհաճություն էր առաջացնում:

Թերևս դա ավելի շատ զգում էին մեր ազատամարտիկները, որոնք կյանքի գնով թշնամուց ազատեցին մեր ծորակի բռնազավթված գյուղերը:

Եվ ահա նորից գյուղում ենք, որտեղ մի քանի ամիս շարունակ իրենց կնիքն են դրել թուրք ելուզակները...

Վերջին տարիներին Վերին Հոռաթաղում շատ բարեփոխումներ էին կատարվել: Խճապատվել էին ճանապարհները, լուսավորվել փողոցները, խմելու ջուր բերել գյուղ, հեռախոս էին անցկացրել, ջրաղաց ու էլեկտրաղաց էր գործում: Մի խոսքով՝ արդեն իսկական գյուղ էր դար-

ձել, թեթևացել էին մարդկանց հոգսերը: Կառուցվել էին տասնյակ երկհարկանի գեղեցիկ տներ: Գյուղ մտնողին դիմավորում էին նորակառույց աղբյուրն ու կապի բաժանմունքի նորակառույց, գեղեցիկ, ճերմակ պատերով շենքը: Այստեղից էլ սկսվում է թուրքերի ձեռագիրը: Շենքի ճակատին վավաշոտները մերկ աղջիկ էին նկարել և «հոշոտել» ինքնաձիգի համազարկերով: Սա նրանց գերբն է: Թալանել են ողջ գյուղը, տարել են ոչ միայն արժեքավորն ու օգտագործելին, այլև ամեն ինչ, սկսած հագած շորերից մինչև պապենական տակառները, պոկել են տների դարպասները, դռներն ու պատուհանները: Ջարդել էին այն, ինչ չէին կարողացել տանել: Չգիտեմ, ինչքան են շատ նրանց փամփուշտները, որ անխնա կրակել են ամեն ինչի վրա, լինի դա դուռ, պատուհան, տակառ, դույլ, կաթսա, պահարան, նկար, թեկուզ վառված տանիքից ընկած թիթեղի կտոր: Ամեն ինչ փչացրել են, բայց և տները համարակալել, որպեսզի բաժանեն իրենց մեջ՝ չգիտեմ թալանելու, թե՝ապրելու համար:

Գյուղում կենդանի մարդ չգտնելով՝ բարբարոսներն իրենց ուժերը «փորձել են» գյուղի գերեզմանոցում: Անհավասար ուժերով մարտի էին դուրս եկել գյուղի հանգուցյալներն ու անիծյալ թուրքերը: Ջարդվել, ընկել են համարյա բոլոր գերեզմանաքարերը:

Նրանց հարազատներն առել են վրեժն այդ քարերի, ազատել են նրանց գերությունից և շուտով ոտքի կկանգնեցնեն քարերն ու կիսանդրիները: Հարևան գյուղում ավելի դաժան են վարվել, հանել են ազատամարտիկների դիակները, հարթեցվել են գերեզմանոցները, ամբողջովին վառել են գյուղի տները, մի խոսքով՝ մեր գյուղերով թուրք է անցել:

Եվ միայն մենք՝ բռնագաղթվածներս, կարող ենք ջնջել թուրքի հետքերը մեր վերադարձով, մեր պայքարով, մեր աշխատանքով...

Վերադարձեք, համագյուղացիներ՛, վերադարձեք, տեր կանգնեք մեր օջախներին, մեր հանդ ու դաշտին, մեր մայր հողին:

Անմարդաբնակ գյուղում թռչունները բույն են դրել մեր ավերված տների կտուրներին, մեր վերադարձով, մեր երեխաների ձայներով վանենք նրանց մեր կտուրներից, տեր կանգնենք մեր օջախներին, շենացնենք մեր խոշտանգված, վիրավոր գյուղերը....

1993թ. մայիս, «ԼՂՀանրապետություն»

ՆՇՎԵՑ ԳՅՈՒՂԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՕՐԸ

1988թ. փետրվարը հայ ժողովրդի համար նշանավորվեց որպես ազգային զարթոնքի ամիս: 1993թ. փետրվարը կրկնակի նշանավորվեց Հաթերքի ենթաշրջանի գյուղերի համար, քանի որ գերությունից ազատագրվեցին 1992 թվականի հուլիսից բռնազավթված գյուղերը: Ամեն տարի հերթով նշվում են այդ գյուղերի ազատագրման օրերը: Փետրվարի 10-ին նշեցինք մեր գյուղի՝ Վերին Հոռաթաղի ազատագրման օրը: Միջոցառմանը ներկա էին շրջվարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի վարիչ Հենրի Մանուկյանն՝ աշխատողների հետ, համայնքի ազատամարտիկները, դպրոցականներ, ովքեր հանդես եկան գեղեցիկ կատարումներով:

Դեռևս 1988թ. փետրվարի 12-ին, երբ առաջին անգամ Մարտակերտում հանրահավաքի նմանվող ժողով գումարվեց, մասնակցեցին նաև մեր գյուղացիները, նույնիսկ ելույթ ունեցան այնտեղ: Նույն օրը եկան և գյուղում ժողով հրավիրեցին՝ ընդունելով Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից դուրս գալու և Հայաստանին միանալու որոշում:

Փետրվարի 20-27-ը գյուղացիներից շատերը շուրջօրյա ցույցերի մասնակցեցին՝ գյուղից ստանալով աջակցություն՝ սննդամթերք, վառելափայտ, տաք հագուստ և այլն: Երբ Արցախում անհրաժեշտություն դարձավ ինքնապաշտպանական ջոկատների կազմավորումը, առաջին ջոկատներից մեկն ստեղծվեց նաև մեր գյուղում՝ Ռաֆիկ Սայիյանի /Միրուք/ գլխավորությամբ: Ջոկատը շուտով ճանաչում ձեռք բերեց և դարձավ շտաբ՝ ենթաշրջանի գյուղերի ջոկատների համար:

Շրջափակման տարիներին մեր գյուղը դարձավ Հայաստանի հետ կապված օղակներից մեկը: Լինում էին օրեր, երբ գյուղում միանգամից վայրէջք էին կատարում մի քանի ուղղաթիռներ, որոնք բերում էին սննդամթերք, վառելիք և, իհարկե, զենք, որը ջոկատի տղաների ջանքերով գիշերները գաղտնի տեղափոխվում էին պահանջվող տեղերը:

1991թ. օգոստոսից ավելի ընդլայնվեց ջոկատի գործունեությունը, երբ գյուղի կանայք, ջոկատի տղաների աջակցությամբ, կտրեցին գյուղից ներքև գտնվող մայրուղին, կանգնեցրին մեկ «Ուազ» և «Ուրալ» զինվորական մեքենաներ, զինաթափեցին նրանց և պատանդեցին 11 խորհրդային զինվորների: Նրանցից խլված ինքնաձիգներով զինվելով՝ ջոկատն օգնություն էր հասնում ինքնապաշտպանական տարբեր ջոկատների:

Այդ տարիներին գյուղն այնքան էր համախմբված ու միասնական,

որ պատրաստ էր ցանկացած անձնազոհության: Բոլորն էին զինվորյալ:

1992թ. աշնանը գյուղի ջոկատը համալրում է Արցախյան բանակի շարքերը՝ N զորամասի N գումարտակի կազմում Ռաֆիկ Սայիյանի ու Արկադյա Շիրինյանի /Խոլոստոյ/ հրամանատարությամբ՝ բազմաթիվ սխրագործություններ կատարելով:

Մեր գյուղի տղաները մասնակցել են բազմաթիվ ռազմական գործողությունների, ցավոք, ունեցել ենք նաև անդառնալի կորուստներ:

Կլիմիկ Հարությունյանը զոհվել է Կիչանում, Վալենտին Գրիգորյանը՝ Վերին Հոռաթաղում, Մաքսիմ Մկրտչյանը՝ Վաղուհասում, Հենրիկ Ադամյանը՝ Վաղուհասի մատույցներում, Յուրա Մելքումյանը՝ Ումութլուում, Նապոլեոն Առաքելյանը, Ռոմեո Գալստյանն ու Սամվել Մկրտչյանը՝ Մաղավուզում, Աշոտ Մելքումյանը՝ Մաղավուզի մատույցներում, Գավրուշա Վահանյանը՝ Օմարում, Արկադի Հայրիյանը՝ Բաքվի բանտում, Ալեքսան Մելքումյանը՝ Վաղուհասի մատույցներում, Լավրենտ Առաքելյանը՝ Ալըշանում: Սա վկայագիրն է մեր ջոկատի անցած մարտական ուղու: Ջոկատի տղաներից Արկադյա Շիրինյանը և Ռաֆիկ Սահյանը պարգևատրվել են «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

«Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով հետմահու պարգևատրվել է Ռոմեո Գալստյանը: Դպրոցի մանկապատանեկան կազմակերպությունը կրում է գյուղի առաջին զոհված ազատամարտիկի՝ Կլիմիկ Հարությունյանի անունը, մյուս զոհերի անուններով են կոչվում դպրոցի դասարանները:

Անցած 22 տարիների ընթացքում շատ բան է փոխվել մեր գյուղում:

Սակայն նորից, կարծես, ամպեր են կուտակվում հայոց երկնակամարում, այսօր ևս պետք է վերածնել 1988-ի ոգին, միասնական լինել, որպեսզի կարողանանք դիմակայել թշնամուն:

2008թ. «Ջրաբերդ»

ՇԱՐԺՈՒՄ-20
ՔՍԱՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Կյանքում կան շատ դեպքեր, իրադարձություններ, որոնք ժամանակի ընթացքում մոռացվում կամ խամրում են, բայց այն, ինչ տեղի ունեցավ 1988թ. փետրվարին, այնպես է տպավորվել իմ մեջ, որ երբեք չի մոռացվում:

Դեռևս 1987թ. սկսած ստորագրություններ էինք հավաքում, Հայաստանին վերամիավորվելու գաղափարն արտահայտող թռուցիկներ ստանում ու տարածում:

Վերին Հոռաթաղի դպրոցը, որի տնօրենն էի և որտեղ աշխատում էին հարևան մի քանի գյուղերից եկող ուսուցիչներ, վեր էր ածվել մի յուրահատուկ ագիտկետի: Քաջատեղյակ էինք Արցախում և Հայաստանում կատարվող իրադարձություններին:

1988թ. փետրվարի 12-ին զանգահարեցին և մեզ հրավիրեցին շրջանային ակտիվի ժողովին, ու մի քանի ուսուցիչներով (Արամայիս Բեկնազարյան՝Վաղուհասից, Սվետլանա Լալայան՝ Վ. Հոռաթաղի դպրոցի փոխտնօրեն) շտապեցինք Մարտակերտ:

Շրջկենտրոնում լուր էր տարածվել, որ Մոսկվայից ներկայացուցիչներ են եկել, ցանկանում են ժողովրդի հետ հանդիպել:

Իրականում այցելողները ԼՂ կուսմարզկոմի քարտուղար Ջ. Ս. Միրզոյանն էր և մարզկոմի բյուրոյի անդամ Հ. Ա. Պողոսյանը:

Մարտակերտում մեծ բազմություն էր հավաքվել: Այն ժամանակվա կուսշրջկոմի շենքից մինչև մշակույթի պալատն ասեղ գցելու տեղ չկար: Հավաքվել էին տնտեսության ղեկավարներ, դպրոցների տնօրեններ, կուսակցական-կոմերիտական, արհմիութենական աշխատողներ, արտադրության առաջավորներ, մտավորականներ, աշխատանքի և պատերազմի վետերաններ:

Հավաքվել էին նաև ադրբեջանցի ղեկավարները: Ժամը 15^{00} էր, բայց ժողովը չին սկսում: Հնչում էին տարբեր կարծիքներ, ժողովուրդը սպասում էր:

Հուսադրող մի ձայն հրավիրեց հավաքվել շրջանային մշակույթի տանը և սպասել հյուրերին: Շուտով մշակույթի տունը լցվեց, նույնիսկ կանգնելու տեղ չմնաց: Ադրբեջանցի ղեկավարները չմտան ներս: Միայն Ումուբլուի տնտեսության ղեկավար Բալօղլանը, որը շրջանում հեղինակություն ուներ, մտավ ակումբ և հանդիսավոր նստեց երկրորդ շարքում: Բեմ բարձրացավ ժողովրդական դեպուտատների շրջխորհր-

դի գործկոմի կազմակերպչական բաժնի վարիչ, պատգամավոր Ժորա Առաքելյանը և առաջարկեց ժողովն սկսել մինչև ղեկավարների գալը:

Հոտնկայս ծափահարություններով այն ժամանակվա ընդունված կարգով, պատվավոր նախագահություն ընտրվեց ԽՄԿԿ կենտրոնական կոմիտեի քաղբյուրոն՝ Մ.Ս. Գորբաչովի գլխավորությամբ:

Գործնական նախագահություն ընտրվեց՝ բաղկացած 11 հոգուց: Նրա անդամ Ժորա Առաքելյանը հրապարակեց «ԼՂՀ-ն Հայաստանին վերամիավորելու մասին» օրակարգը, որը ծափահարություններով հաստատվեց ժողովականների կողմից:

Դահլիճում բարձրացրին Վ.Ի. Լենինի, Մ.Ս. Գորբաչովի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա.Ա. Գրոմիկոյի մեծադիր նկարները:

Ընտրվեց հեղինակավոր պատվիրակություն և ուղարկվեց շրջանի ղեկավարներին ու մարզկոմի ներկայացուցիչներին հրավիրելու դահլիճ: Սպասեցինք ևս կես ժամ, բայց այդպես էլ մարզային ղեկավարները չմասնակցեցին իրենց իսկ հրավիրած ժողովին:

Բեմ բարձրացավ ԼՂԻՄ կաթսայատների Մարտակերտի տեղամասի վարպետ Վիգեն Շիրինյանը և առաջարկեց ժողովը շարունակել: Ակումբի վերջում փակցվեցին. «Իմ ազգին սիրելով, ոչ մի ազգի չեմ ատում» և «Ով հայ ժողովուրդ, քո փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» կարգախոսները (շշուկներ լսվեցին, որ Վիգեն Շիրինյանն է գրել հնոցատանը):

Դահլիճը ցնծում էր, զարմանքն ու ոգևորությունը խառնվել էին իրար, հրաշք էր տեղի ունենում: Ամեն ինչ չափած-ձևած հասարակարգում ո՞վ հնարավորություն ուներ իր կամքն ազատ արտահայտելու, կարգախոս գրելու: Ցանկացած հոդված, թղթակցություն, ելույթ նախօրոք ստուգվում էր, խմբագրվում, նոր իրավունք վերապահվում ժողովներում ընթերցվելու կամ տպագրվելու: Ստալինյան ժամանակաշրջանում ապրած մեր ավագները խորհուրդ էին տալիս չարտահայտվել, հիշեցնում էին տխրահռչակ 1937թ-ը: Այդպիսի քայլ անելը մեծ ռիսկի հետ էր կապված: Չէ՞ որ Արցախում թուրքամետ Կևորկովի իշխանությունն էր դեռ, իսկ շրջանում գոյություն ուներ շրջկոմ, շրջխորհուրդ և ՊԱԿ:

Քսան տարվա մեջ բազմաթիվ ընդվզումներ տեսած՝ պետության ղեկավարի հասցեին հեռուստաէկրաններից հնչող հերյուրանքներ

լսող արցախցիներիս համար այն տպավորությունը չի կարող հիմա ստեղծվել, ինչ այն ժամանակ էր:

-Նաիրա՛, գրի՛ր, սա պատմություն է դառնալու,- ասում էր կարգախոսներից զարմացած ու ոգևորված շրջժողկրթբաժնի մեթոդկաբինետի վարիչ Շմավոն Մարտիրոսյանը:

Ես սկսեցի նշումներ անել: Սկզբում ելույթ ունեցան աշխատանքի և պատերազմի վետերաններ, բանվորներ, մեխանիզատորներ՝ Եվա Գրիգորյանը՝ Գյուլաթաղից, Նիկոլայ Հարությունյանը՝ Հաթերքից, Մեծ հայրենականի շքանշանակիր Աստղիկ Առաքելյանը, մեխանիզատորներ Երեմ Թևոսյանը՝ Վաղուհասից, Շուրա Աղասյանը՝ Մարտակերտի 22-րդ կուսհամագումարի անվան տնտեսությունից, բանվորներ Ռազմիկ Անտոնյանը՝ Զագլիկից, Բելլա Յախշիյանը՝ Մոխրաթաղից:

Աշխատանքից ազատվելու, կուսակցական տույժ կրելու վախը կար, և մտավորականներից ու ղեկավարներից դեռ ոչ ոք սիրտ չէր անում բեմ բարձրանալ:

Ժողովը շարունակելու համար ելույթ ունեցողներ էին պետք: Նախագահող Ժորա Առաքելյանը մի քանի անգամ կրկնեց, որ ելույթ ունեցող ցանկացողները թող բեմ բարձրանան: Մտածեցի՝ ինչ լինելու է, թող լինի, այդպիսի պատմական պահի չպետք է հապաղել, հարկավոր էր լիցքավորել դահլիճը, և ես էլ բեմ բարձրացա:

Չեմ հիշում ելույթիս ամբողջական տեքստը, միայն գիտեմ, որ սկզբում մեջբերում արեցի ազգերի ինքնորոշման, մարդու իրավունքների մասին թերթերում լույս տեսած նոր որոշումներից, նշեցի, որ տարիներ շարունակ ապրել ենք ադրբեջանցիների հետ, բայց գտնում եմ, որ մեր երեխաներին հայեցի դաստիարակություն տալու, մեր ազգային ավանդույթները, մեր ինքնությունը պահպանելու համար անհրաժեշտ է, որ միանանք Հայաստանին:

Դահլիճը թնդաց ծափահարություններից:

Երբ շրջվեցի խոսափողը ցած դնելու՝ զարմանքից քարացա, բեմից փողոց նայող պատուհանից տեսնելով, թե ինչպես ամբողջ քաղաքը հավաքվել էր մշակույթի պալատի շուրջը, բարձրախոսներով լսում էր ժողովականներին և ոգևորության ճիչեր արձակում:

Ինձնից անմիջապես հետո բեմ բարձրացավ պատմության ուսուցիչ Արամայիս Բեկնազարյանը՝ Վաղուհասից և ձեռքը թափահարելով կրկնեց. «Միացում, միացում, միացում»:

Ելույթներ ունեցան նաև Մեծ Շենի միջն. դպրոցի ուսուցիչ Վիլյամ Դանիելյանը, Լենինավանի երաժշտական դպրոցի ուսուցիչ Ռուդիկ Հյուսնունցը, Հաթերքի միջն. դպրոցի ուսուցիչ Սեյրան Բաղրյանը,

Կարմիրավանից՝ ուսուցիչ Վլադիմիր Պետրոսյանը, Չլդրանից՝ Վլադիմիր Սահյանը, Թալիշից՝ Սամվել Ղահրամանյանը, Լենինավանից՝ նկարիչ Վալերի Պետրոսյանը, Մարտակերտից՝ Ներսես Օհանջանյանը, Սլավա Մոսունցը:

Ժողովն ընդունեց համապատասխան բանաձև՝ հասցեագրված ԽՄԿԿ կենտկոմին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ Լեռնային Ղարաբաղը Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը միացնելու խնդրանքով:

Երբ դուրս եկանք փողոց, մեր զարմանքն ու ոգևորությունը բազմապատկվեց: Երիտասարդներն ուղղակի ձեռքերի վրա տանում էին Հ. Պողոսյանին՝ շրջկոմի շենքից մինչև մեքենան՝ ճանապարհելու Ստեփանակերտ:

Մարտակերտը ցնծում էր, «լավա էր ժայթքել», կարծես կախարդական փայտիկով մի քանի ժամում անտարբեր ու տարակարծիք մարդիկ փոխվել էին, բոլորիս ոգևորությանը չափ չկար, թվում էր՝ կատարվել էր մեր երազանքը՝ արդեն միացել էինք Հայաստանին:

Գազանն արձակվել էր և հետագա գործողություններն ապացուցեցին, որ այն սանձելն արդեն անհնարին է…

Մինչև ցրվելը ժողովի նախագահ Ժորա Առաքելյանն առաջարկեց ինձ մյուս օրը նորից Մարտակերտ գնալ՝ ժողովի արձանագրությունը, մոսկովյան ղեկավարությանն ուղարկվող փաստաթղթերը ձևակերպելու համար:

Համաձայնեցի:

Ժողովի որոշումը մեզնից առաջ էր գյուղ հասել: Գյուղացիներն անհամբեր սպասում էին մեզ՝ հավաքվելով ակումբում:

Նույն երեկոյան, նույն տրամադրությամբ Վերին Հոռաթաղի գյուղական ակումբում ժողով հրավիրեցինք, նույնպիսի որոշում ընդունեցինք գյուղացիների կողմից:

Հաջորդ առավոտյան ես և Արամայիս Բեկնազարյանը գնացինք Մարտակերտ, մտանք Ժորա Առաքելյանի աշխատասենյակը՝ շրջխորհրդի շենքում՝ նախորդ օրվա ժողովի արձանագրությունը գրելու:

Նոր էինք սենյակ մտել, երբ ներս մտավ Սլավա Բարսեղյանը և ոգևորությունից փայլող դեմքով սկսեց ողջագուրվել մեզ հետ, շնորհավորել (այն ժամանակ նա աշխատում էր Ասկերանի շրջխորհրդում):

Նա սրտատրոփ սպասել էր ժողովի ավարտին, ուրախացել մարտակերտցիների կատարածով և Ասկերանից եկել անձամբ շնորհավորելու:

Հաջորդ օրը նույն օրակարգով ժողով հրավիրեցինք դպրոցում,

որոշում ընդունեցինք կոլեկտիվի անունից, և ես կնքեցի որոշման տակ:

Ուսուցչանոցում նույնիսկ եղան ձեռքս բռնողներ, որպեսզի կնիքը չդնեմ, վախենում էին հետևանքներից: Շարժման ակտիվիստ Արամայիս Բեկնազարյանը իմ ստորագրած որոշումը պահում էր և հետագա օրերին ձորակի բոլոր հիմնարկներում նման ժողովների ժամանակ, որպես օրինակ, ցուցադրում:

Այսպես եղել է ուղիղ քսան տարի առաջ, իսկ հետագայի ամեն մի օրը մի պատմություն է և կարող է առանձին նյութ դառնալ… ցույցեր, ջարդեր, բռնագաղթ, պատերազմ, հաղթանակ, զինադադար, բանակցություններ…

Դժբախտաբար չկան շարժման առաջամարտիկներից շատերը, մի մասը արտերկրում է, բռնագաղթի պատճառով երևի չեն պահպանվել այս պատմական ժողովի և դրանից ոչ պակաս կարևոր շատ դեպքերի ձայնագրությունները կամ մասնակիցների գրառումները, այն ժամանակ թերթերը չէին կարող նման բովանդակությամբ նյութեր տպագրել, հետագայում էլ ավելի հրատապ թեմաներ են առաջացել և շրջանային թերթի խմբագիր Սլավա Մոսունցի հոդվածն այդ առթիվ առաջին անգամ «Արցախ» թերթում տպագրվել է միայն 1990 թվականի փետրվարին՝ 2 տարի անց:

Երևի թե Արցախյան շարժման 20-րդ տարեդարձին նվիրված միջոցառումները լավագույն առիթ են գնահատելու շարժման ակունքներում կանգնած մարդկանց: Ցանկալի է նրանց հետ հանդիպումներ կազմակերպել, ներկայացնել աճող սերնդին, գրի առնել իրական դեպքերը, որպեսզի ժամանակի ընթացքում չաղավաղվի պատմությունը:

2008թ. «Զրաբերդ»

ՄԱՅՐԸ
(ԵՎՍ ՄԵԿ ԶՈՀ)

Յուրաքանչյուր պատերազմից հետո հաշվում են մարդկային զոհերն ու նյութական վնասները, մեծարվում են հերոսները, խարազանվում՝ դավաճաններն ու թուլամորթները:

Ո՞ւմ ենք համարում պատերազմի զոհ, ճի՞շտ ենք, արդյոք, հաշվում նրանց...

Սովորաբար զոհեր ենք հաշվում պատերազմի դաշտում թշնամու գնդակից, ականների պայթյունից, մարտական առաջադրանքներ կատարելիս մահացածներին: Բայց, արդյոք, միայն նրա՞նք են պատերազմի զոհեր...

Խոսքս մարդկանց մի խավի մասին է, որոնց պատերազմն ավելի շատ ցավ ու տառապանք է պատճառել, կյանքից զրկել, սակայն պատերազմի զոհեր չեն համարվում:

Իսկ ինչքանո՞վ պատերազմի զոհեր չեն այսօրվա 40–ին մոտ տարիքի աղջիկները, որոնց «բաժին» տղաները սև հողն են գրկել իրենց փոխարեն, թախծոտ ու սևազգեստ այն հարսները, որոնք սիրած ամուսիններին են կորցրել, երեխաներին մենակ մեծացրել, հոր ու պապիկի գուրգուրանքի կարոտ, միայն նկարներից նրանց ճանաչող զոհվածի երեխաները, նաև այն երեխաները, որոնց այրիացած երիտասարդ մայրերը բավարար ուշադրություն չեն դարձրել իրենց երեխաների դաստիարակությանը, որդիների գերեզմաններին կնոջ պես ողբացող այն անթրաշ, զարզանդ ու պատկառանք ներշնչող հայրերը, քույրերն ու եղբայրները, որոնց կյանքն իմաստազրկվել է հարազատների կորստից, որոնց մշտական ուղեկիցն են դարձել թախիծն ու կարոտը...

Իսկ զոհվածների մայրե՞րը...

Այդպիսի մի մոր մասին եմ ուզում պատմել, որպեսզի համոզվենք, որ զոհվածների մայրերը նույնպես պատերազմի զոհեր են, ու պարտավոր ենք խոնարհվե՛լ նրանց առաջ:

«Արզնի» առողջարանում հանդիպել էի թախծալից դեմքով մի տարեց կնոջ: «Վշտերի ծով» արտահայտությունը նրա համար էր ասված: Մարտունու շրջանի Ղզղալա գյուղից էր, ուղեգրով ամուսնու հետ էր եկել բուժվելու, երկրի նախագահն էր աջակցել՝ որպես երեք զոհվածի ծնողների: Պատերազմում կորցրել էր նաև երկու եղբայրներին: Զարմանում է, թե ինչպես է դիմանում այդքան վշտին: Իսկ մայրը չէր դիմացել, պատմեց, որ երբ կրտսեր որդու զոհվելու բոթը լսեցին, մայրը, որ կովն էր կթում, դույլը ձեռքից գցեց ու շունչը փչեց (դա նրա 5-րդ զոհն էր՝ 2 տղայի և 3 թոռան): Ինչպե՞ս այդ տատիկին չհամարել պատերազմի զոհ...

Վերջերս Վաղուհաս գյուղում ներկա եղա նման մի մոր մահվան տարելիցին: Ճանաչելով նրան, ծանոթ լինելով որդու զոհվելուց հետո նրա կրած տառապանքներին, զգացի, որ նա էլ պատերազմի զոհ է՝ զոհված որդու վշտի գնդակից սիրտը մահացու խոցված:

Փիրուզա (անձնագրով՝ Զարվարդ) Մուրադյանը ծնվել է Վաղուհասում: Հորից որբ էր մեծացել: Մանկուց է սկսել աշխատել՝ բազմանդամ ընտանիքի հոգսը թեթևացնելու համար: Չնայած մեծ սեր ուներ ուսման նկատմամբ, աչքի էր ընկնում ընդունակություններով, բնատուր խելքով, ճարտար խոսքով, արտասանական ձիրքով, բայց հնարավորություն չի ունեցել ուսումը շարունակելու:

Ամուսնացել էր որբ տղայի՝ Կարո Մուրադյանի հետ: Մեծ տքնանքով նոր տուն են կառուցել, վեց երեխա մեծացրել, բոլորին բարձրագույն կրթություն տվել: Նրա ընդունակությունները, ինչպես նաև բնավորության լավագույն գծերը՝ հյուրասիրությունը, ընկերասիրությունը, հարևանների, բարեկամների նկատմամբ հոգատարությունը, փոխանցվել էին երեխաներին: Նա ինքն էր զավակների մեջ սեր առաջացրել ուսման, գրքի հանդեպ: Իրիկունները նրանց համար կարդում էր Հովհ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Վ. Անանյանի հեքիաթներն ու պատմվածքները: Վեցն էլ լավ էին սովորում, մասնակցում դպրոցի ինքնագործ խմբերին: Երեխաները նրա հպարտությունն էին: Ինչին ինքը չէր հասել, ձգտում էր նրանց հասցնել:

Ոչ մի աշխատանքից չի խորշել: Աշխատել է և՛ դպրոցում, և՛ դաշտում, հոն ու մոշ է հավաքել, անասուններ է պահել: Համագյուղացիների պատմելով՝ դեռ ուրիշները քնած, առավոտյան մինչև աշխատանքի գնալը, նա արդեն մեկ օրվա գործ էր հասցնում կատարել՝ բարեկեցություն ապահովելով զավակների համար: Նրանցից չորսն արդեն ընտանիքավորվել էին, մնացել էին կրտսեր աղջիկը՝ Արմինեն, որն ուսանողուհի էր Արցախի պետհամալսարանում և կրտսեր որդին՝ Գրիշան,

որը զինղեկ էր աշխատում հարևան Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոցում:

Թվում էր՝ դժվար օրերն անցյալում էին մնացել, իզուր չէր անցել նրա տքնաջան աշխատանքը: Ժամանակն է վայելելու վաստակած հանգիստը, բայց... սկսվեց Արցախյան շարժումը, և ամեն ինչ իրար խառնեց:

Գրիշան առաջիններից մեկն էր. որ անդամագրվեց ինքնապաշտպանական ջոկատներին: Հաճախակի սկսեց բացակայել տնից: Սկզբում գաղտնի էին գործում: Հերթապահության մեկնելիս տնեցիներին խաբում էր, թե ուսանողուհի քրոջ համար ուտելիք էր տանում, կամ էլ սիրած աղջկան է այցելելու (քրոջ ընկերուհին էր): Մոր պատրաստած ուտելիքներն ուղարկում էր քրոջը, ինքը գնում մարտական առաջադրանք կատարելու:

Աստիճանաբար բացահայտվեց ինքնապաշտպանական ջոկատների գործունեությունը: Գրիշայենց տունը վերածվեց գաղտնի շտաբի: Այդտեղ էին հավաքվում երիտասարդները՝ Կոմանդոսի, Նորիկի, Արթուրի, Սամվելի, Գարունի հետ, պատրաստում նռնակներ, ականապատման լարեր, ինքնաշեն հրացաններ, նախապատրաստվում տարբեր օպերացիաների: Փիրուզա մայրիկը կորցրել էր քունն ու հանգիստը: Սկզբում նրան չէին թողնում ներս մտնել, բայց, աստիճանաբար, կենսուրախ, եռանդուն ու հետաքրքրասեր կինը դառնում է նրանց խոհարարը, լրաբերը, պաշտպանը: Քանի անգամ էին տղաների հոտն առած օմոնականները եկել նրանց բակը, բայց նա կարողացել է ամեն ինչ թաքցնել, շեղել ու ճամփա դնել նրանց:

1992 թվականին էր: Գրիշայի սիրած աղջիկն ավարտում էր ինստիտուտը. ամռանը մեծ հարսանիք պիտի լիներ: Որոշել էին Գրիշայի ծննդյան օրը՝ փետրվարի 18-ին, նշանդրեքի գնալ Ասկերանի շրջանի Աստղաշեն գյուղ: Ամեն ինչ պատրաստել էին, բոլորը հավաքվել էին, բայց Գրիշան չկար: Սպասեցին, սպասեցին... Միայն վեց օր հետո տուն եկավ Սրխավենդից, որտեղ ուժեղ մարտեր էին ընթանում: Տանը շտա-

պեցնում էին ամուսնանալ, նա չէր շտապում: Կարծես կանխազգում էր, որ կարող է վատ բան պատահել իր հետ, ինչո՞ւ դժբախտացնի սիրած աղջկան...

1992 թվականի ամառը ճակատագրական եղավ նրա համար: Թշնամին լայնածավալ հարձակում էր կազմակերպել: Չնայած շրջանի վերին գյուղերն էլ էին վտանգված, սակայն Գրիշան ընկերների հետ հերթապահելու գնաց Մարտակերտ: Հուլիսի 2-ին անհավասար մարտում շարքից հանելով թշնամու տանկը, վիրավորվեց, և գնդակոծությունից վառվող արտում հինգ ընկերներ զոհվեցին:

Երբ գիշերը հուղարկավորում էին զոհված տղաներին, գնդակոծությունից հրդեհվեց ու մոխրացավ նաև Գրիշայենց տունը: Թվում էր, թե նրանից ոչինչ հիշատակ չմնաց: Աշխարհը փուլ եկավ Կարո և Փիրուզա ամուսինների գլխին:

Հուլիսի 4-ի առավոտյան համագյուղացիների հետ բռնագաղթեց նաև Գրիշայի ընտանիքը՝ թողնելով որդու թարմ շիրիմն ու ավերված տունը:

1993 թվականի փետրվարին ազատագրվեցին Հաթերքի ենթաշրջանի գյուղերը: Ազատագրվեց նաև Վաղուհասը: Թշնամին հրի էր մատնել ամբողջ գյուղը: Բնավեր վաղուհասցիները վերադարձան, ապրեցին գոմերում, թոնրատներում՝ հաղթահարեով բազում դժվարություններ: Փիրուզա մայրիկն առաջիններից վերադարձավ ավերված տունը՝ ամուսնու և փոքր աղջկա հետ, որն ավարտել էր ինստիտուտը և նախ ուսուցչուհի, ապա տնօրեն էր աշխատում հայրենի գյուղի դպրոցում:

Վաղուհասցի զոհվածներին ամփոփել էին գյուղի կենտրոնում՝ ակումբի, համայնքի վարչական շենքերի մոտ, որոնց հարևանությամբ էլ գտնվում էր Գրիշայենց տունը: Մայրն արթնանում ու քնում էր որդուն բարի լույս ու բարի գիշեր «մաղթելով», ամբողջ օրն անց էր կացնում «հետը զրուցելով»:

Մեծաքանակ զոհեր ունեցող գյուղում համարյա ամեն օր զոհվածների շիրիմներին այցելող էր լինում, և Փիրուզա մայրիկը նրանց հետ ողբում էր բոլոր զոհվածների համար, հետն էլ, իհարկե, նորից Գրիշայի: Ծաղիկներ էր աճեցնում ու ամեն առավոտ թարմ ծաղիկների փունջը ձեռքին «այցելում» որդուն:

Համագյուղացիները խորհուրդ էին տալիս սահմանափակել այցելությունները, բայց նա չէր կարողանում և, որպեսզի չլսի նրանց հանդիմանությունները, շարունակում էր որդուն այցելել ավելի վաղ՝ դեռ գյուղը չզարթնած:

Հավաքույթներ է կազմակերպում որդու պատվին, նրա ծննդյան, մահվան տարելիցներին, սեպտեմբերի 1-ին, Ուսուցչի օրը: Այցելում էին հարազատները, ընկերներն ու աշակերտները, և բոլորի հետ Փիրուզա մայրիկը արցունք էր թափում: Հաճախակի էր այցելում Վերին Հոռաթաղի դպրոց, որտեղ աշխատել էր որդին: Գիտեր, որ այնտեղ բոլորը սիրում էին նրան ու հարգում են հիշատակը: Ուսուցչանոցում նրա մեծադիր նկարն է՝ «Միշտ մեզ հետ» վերտառությամբ, որի մոտ միշտ թարմ ծաղիկներ են դրվում:

Գյուղի զոհվածների պատվին ստեղծված Փառքի անկյունում էլ նա իր պատվավոր տեղն ունի:

Առիթը բաց չէր թողնում որդու ընկերների հետ նշելու հիշարժան օրերը՝ լիներ դա հոկտեմբերի արևոտ, թե փետրվարյան ցրտաշունչ օր, նա ծաղիկներով, ուտելիքով լի ծանր պայուսակները ձեռքին, ոտքով 10 կմ ճանապարհ էր անցնում՝ թանգարանում պահվող որդու մատյանին ծաղիկներ ավելացնելու, նրա ընկերների հետ ծնունդը շնորհավորելու, նրա մասին բանաստեղծություններ արտասանող աշակերտներին քաղցրավենիք բաժանելու:

Վերին Հոռաթաղի դպրոցում 1997 թվականի փետրվարի 18-ին հանդիսավորությամբ նշվել է Գրիշայի ծննդյան 30-ամյակը: Ներկա էին հարազատները, ընկերները, հարևան գյուղերի դպրոցների տնօրեններ, համայնքի ղեկավարներ, կրթության շրջանային բաժնի աշխատողներ (քույրը՝ Արմինեն այդտեղ էր աշխատում և մոր պես այնքան ծանր էր տանում Գրիշայի վիշտը, որ ընկերներին վարակել է իր վշտով. բոլորի համար Գրիշան դարձել էր հարազատ եղբայր):

Ինձ երբեմն թվում է, որ մեր այցելություններով, միջոցառումներով ցանկանալով սպեղանի դառնալ նրա սրտի վերքին, մեր վերաբերմունքով անընդհատ բորբոքելով վշտի կրակը, փորփրելով սրտի վերքը՝ արագացրինք Փիրուզա մայրիկի մահը ու մի տեսակ մեղավորություն եմ զգում:

Ինչպիսի՜ հոգեկան տանջանքներով պիտի լսած լիներ նա մեր աշակերտների արտասանությունները. «Մայրը նշում է ծնունդը որդու, իսկ որդին չկա, ընկել է մարտում», «Մատյանի էջը կիսատ է մնացել», «Սիրածին ուրիշն է առել, և թեկուզ նորահարս է ուրիշի տան, բայց թախծոտ է միշտ ու սևազգեստ՝ ճերմակ բարուրը գրկին», որ… որ…

Վախենում էի, որ հենց հանդեսի ժամանակ մայրը կաթվածահար կլիներ (սիրտը հո քար չէ), բայց, ո՛չ, Փիրուզա մայրիկը ուժեղ էր, նա դեռ պարտք ուներ որդու հիշատակի առջև, չէր կարող հրաժեշտ տալ կյանքին՝ սիրած որդուն ըստ արժանվույն գնահատված չտեսնելով:

Զինադադար էր կնքվել: Կյանքն աստիճանաբար հունի մեջ էր մտնում: Վերականգնվում էին պատերազմից ավերված բնակավայրերը, զոհված տղաների հիշատակը հավերժող հուշարձաններ էին կառուցվում, շատերին մեդալների, շքանշանների էին արժանացնում:

Գրիշայի անունը դեռ չկար: Որտեղի՞ց լիներ: Գրիշան զոհվել էր 1992 թվականի հուլիսին, երբ դեռ բանակը չէր կազմավորվել: Ինքնապաշտպանական ջոկատները գործել են նախ գաղտնի, անջատ-անջատ, զոհվել էր հրամանատարի հետ միասին:

Ո՞վ գիտեր, որ նա դպրոց էր գալիս բաճկոնի տակ թաքցրած ինքնաձիգով, որով կրակել էր սովորեցնում աշակերտներին, ուսուցիչներին, երիտասարդներին, նույնիսկ կանանց ու աղջիկներին, ասելով, որ մեծ կռիվ է սպասվում, բոլորը պիտի կրակել իմանան (1988 թվականի փետրվարից դպրոցներից հավաքել էին ուսումնական զենքերը), իսկ դասերից հետո հերթապահության էր մեկնում Բերդաձոր, Նախիջևանիկ, Քաջավան…

Գիտեի ես, որ նրա տնօրենն էի (որևէ տեղ գնալիս անպայման տեղեկացնում էր), գիտեին ընկերները, որոնց հետ մարտնչել է: Դժբախտաբար ընկերներից շատերը նույնպես զոհվել էին, և Փիրուզա մայրիկը սկսեց իր առաքելությունը Վաղուհասից Դրմբոն (շտաբն այնտեղ էր գտնվում), Ստեփանակերտ, հանդիպեց Գրիշայի մարտական ընկերներին, նրանցից վկայություններ հավաքեց ու ներկայացրեց շտաբ: Այդ աշխատանքի համար տարիներ պահանջվեցին: Քանի՜ անգամ եմ տեսել ոտքով Դրմբոն գնալիս՝ փաստաթղթերի պակասը լրացնելու: Շատ անգամ քայլում էր բոբիկ, գուլպաներով, քանի որ երկար քայլելուց ոտքերը ուռչում էին, կոշիկները սեղմում:

Վերջապես 2001թ. մայիսի 7-ին ԼՂՀ նախագահի հրամանագրով որդին էլ՝ Գրիշա Կարոյի Մուրադյանը, պարգևատրվեց «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով: Որդու պարգևը նախագահն անձամբ էր հանձնել, բայց դա էլ նրան չհանգստացրեց: Որդին անհիշատակ էր կյանքից հեռացել: Շատ կուզեր, որ նա խախտած լիներ հայկական ավանդույթը՝ մինչև ամուսնանալն իրեն թոռ պարգևած լիներ: Ախր որդին շատ էր սիրում իր մասնագիտությունը, դպրոցը աշակերտներին…

Փիրուզա մայրիկն ուզում էր գյուղի դպրոցն անվանակոչված տեսնել ուսուցիչ որդու անունով, որպեսզի նրա կիսատ թողած դասերը դպրոցում իր մշտական ներկայությամբ հաղորդեր և գալիք սերունդների մեջ սերմաներ հայրենասիրություն, քաջություն, ազնվություն, արդարություն…

Մի քանի տարի էլ պահանջվեց, որ մոր այդ ցանկությունն էլ իրականանար:

Գրիշայի աշխատած դպրոցը հարևան գյուղում էր: Այդ գյուղն էլ զոհեր ուներ (ո՞վ չէր ցանկանա իր զոհված որդու, ամուսնու, հոր անունով դպրոց անվանակոչվեր), իսկ հայրենի գյուղի զոհերի թիվն անցնում էր ինը տասնյակից:

Նորից բազմաթիվ անքուն գիշերներից, երկար ճանապարհորդություններից հետո, մոր այդ երազանքն էլ իրականություն դարձավ:

Գրիշան գնահատվեց ըստ արժանվույն: Վաղուհասի միջնակարգ դպրոցը փառքով կրում է նրա անունը: Ամեն առավոտ դպրոցի մուտքի դիմացի անկյունից Գրիշան իր գեղեցիկ ժպիտով դիմավորում և կեսօրին ճանապարհում է դպրոցականներին, որոնցից յուրաքանչյուրը հոգու խորքում երազում է նմանվել նրան:

Նրան չեն մոռանում նաև Վերին Հոռաթաղի դպրոցում: Առաջվա պես նրա անկյունը միշտ ամենածաղկաշատն է Փառքի սենյակում:

Թվում էր՝ որդեկորույս մայրը որոշ չափով կհանգստանար, կյանքի մնացած մասը խաղաղ կապրեր, մանավանդ, որ, պետության կողմից հիմնովին նորոգվել էր ավերված տունը, որ ավագ աղջկա որդին ամուսնացել, իրենց մոտ էր ապրում և Գրիշա անունով ծոռ էր պարգևել, բայց նրա կրակված սիրտը մխա՜ց - մխա՜ց ու հանգավ…

Նա կաթվածահար եղավ՝ մեծ ցավ պատճառելով իր երեխաներին, ամուսնուն, հարազատներին, ճանաչողներին:

Փիրուզա մայրիկը ևս պատերազմի զոհ է, բոլոր զոհվածների մայրերի խորհրդանիշը: Կարող է մեկը վիշտն ավելի ծանր է տանում, մյուսը՝ համեմատաբար թեթև, բայց, միևնույն է, բոլորի սրտերն էլ խոցված են, բոլորն էլ յուրահատուկ զոհեր են, որ մահանում են ժամանակից շուտ՝ մեծամասամբ վշտից խոցված սրտի կաթվածով:

Մայրս էլ այդպես մահացավ՝ եղբորս մահվան պատճառով: Պատերազմը մարդկության համար մեծագույն չարիք է: Նրա պատճառած վնասներն անսահման են: Թեկուզ մարտադաշտում լուռ են հրանոթները, բայց պատերազմը դեռ երկար շարունակվում է մարդկանց հոգիներում. սերնդեսերունդ, դառնացնում նրանց կյանքը, ժամանակից շուտ գերեզման տանում…

Ո՛չ՝ բոլոր մայրերի վշտին:

Ո՛չ՝ պատերազմին:

«Լուսարար» 2013թ.

Ք. ՔՈՔՍԸ ՎԵՐԻՆ ՀՈՌԱԹԱՂՈՒՄ «ՔՈՔՍԻ ԿԱԾԱՆ»

Այս տարվա մարտի 30-ը առանձնահատուկ օր էր վերինհոռաթաղցիների համար: Այդ օրն ամեն ինչով տարբերվում էր մյուս օրերից: Գիշերվանից տեղացող անձրևն աստիճանաբար փոխվել էր ձյան բռաչափ փաթիլների: Կարծես ինչ-որ մեկը տարեկան թափվող տեղումները հավաքել և միանգամից թափում էր:

Դրսում հնարավոր չէր կանգնել, բայց դա չխանգարեց գյուղացիներին՝ ծաղկեփնջերով կանգնելու գյուղի մուտքին՝ դիմավորելու Քերոլայն Քոքսին և նրա հետ եկող բարձրաստիճան հյուրերին:

Իսկական անգլիական եղանակ էր:

Հյուրերը չուշացան նշված ժամից: Իջնելով մեքենայից՝ Քոքսը գրկախառնվեց իրեն աղ ու հացով, ծաղկեփնջերով դիմավորողներին և հենց առատորեն թափվող ձյան փաթիլների տակ էլ ներկաներին հայտնեց իր այցելության նպատակը:

Բանն այն էր, որ 1992թ. հունվարի 6-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի I գումարման I նստաշրջանին մասնակցելու նպատակով տարբեր երկրներից Ստեփանակերտ են ժամանել 40 դիտորդներ, որոնց թվում նաև Անգլիայի պառլամենտի Լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Ք.Քոքսը: Դա նրա առաջին այցելությունն էր Արցախ և, հանգամանքների բերումով Արցախում, առաջինը ոտք էր դրել՝ Վերին Հոռաթաղի հողում:

Ուղղաթիռը, որով եկել էին դիտորդները, դեղորայք էր բերել Շահումյան, այնտեղից պիտի գնային Ստեփանակերտ, բայց այդ տարիներին չորս կողմից գնդակոծվող Ստեփանակերտում հնարավոր չէր ուղղաթիռի վայրէջքը, որի համար էլ եկել էին, ինչպես Երևանում էին ասում՝ «փոքր մայրաքաղաք» Վերին Հոռաթաղ, որտեղից էլ անտառով պիտի գնային Վանք գյուղը, հետո նոր՝ այնտեղից Ստեփանակերտ. միակ ապահով ճանապարհը այդ էր: Հյուրերի այդ խումբը առաջինը

չէր, որ հյուրընկալվում էր մեր գյուղում: Չնայած շրջափակմանը, մենք բոլորին սիրով ընդունում էինք, հյուրասիրում, ճանապարհում, ինչպես Քոքսը իր զրույցում նշեց, երբ մենք ոչինչ չունեինք ուտելու, իրենց լավ հյուրասիրեցինք: Զորի Բալայանն էլ էր այդտեղ, Դադամյանն էլ, օտարերկրյա շատ հյուրեր:

Այն ժամանակ էլ եղանակը շատ վատ էր՝ ձյուն, ցուրտ, անտառային միակ ճանապարհը մեքենաների համար անանցանելի էր, ստիպված էին բարձրաստիճան հյուրերին տեղափոխել տրակտորի կցասայլով:

Հակառակի պես ճանապարհին տրակտորը խափանվում է, և հյուրերը ստիպված են լինում ոտքով հաղթահարել 8-10 կմ վերելք:

Այդտեղ է, որ Քոքսը, թարգմանչուհու հետ ընկերներից մի քիչ հետ է ընկնում և շեղում ճանապարհը: Փոխանակ Գանձասարի ուղղությամբ գնալու, գնում են Շահմասուր գյուղի ուղղությամբ: Մեր գյուղի ջոկատի տղաները, լսելով տրակտորի խափանման լուրը, ոտքով բարձրանում են հյուրերի հետևից, գտնում «մոլորվածներին» և ուղեկցում մինչև Գանձասար, որտեղից էլ մեքենայով գնում են Ստեփանակերտ:

Դա 19 տարի առաջ էր, երբ մեր ճանապարհները մեծամասամբ փակ էին և վտանգավոր:

Այն տեղը, որտեղով գնացել էր Քոքսը մոլորվել, դրված է հուշաքար «Քոքսի կածան, 1992թ. հունվարի 4» մակագրությամբ:

Դրանից հետո, միայն 1992թ. Քոքսը Արցախ էր եկել 10 անգամ, իսկ 2001թ. մարտի այցելությունը թվով 50-րդն էր: Նա որոշել էր իր հետ եկած լորդերին ցույց տալ «Քոքսի կածանը», նորից անցնել այդ ճանապարհով:

Երեխայի պես հրճվում էր՝ պատմելով իր ուղևորության մասին, կատակում: Հյուրասիրության համար պատրաստված տորթի վրա գրված էր «50», նա ասաց, որ կցանականար իր տարիքը 50 լիներ, բայց այդպես չէ, այցելությունների քանակն է Արցախ, իսկ տարիքը՝ 63-էր:

Նա նշեց, որ ինքը բազմիցս պատմել է իր հայրենակիցներին և երբեք չի մոռանում,որ 1992թվականին, երբ մենք շրջափակման մեջ էինք

և համարյա ոչինչ չունեինք ուտելու, իրենց սրտաբաց ընդունեցինք և հյուրասիրեցինք:

Երբ դժգոհեցինք եղանակից, որ հենց այդ օրն էր առատ ձյուն տեղում, նախորդ օրերը արևոտ էին, նա ասաց.

-Նման եղանակը անսովոր չէ մեզ համար, իսկական անգլիական եղանակ է: Ես ցանկանում եմ, որ արևը արցախցիների հոգում ու աչքերում տեսնեմ:

Քոքսը հետը բերել էր նաև հարսին և խոստացավ թոռներին էլ բերել Արցախ, որ ճանաչեն Արցախը, խաղան արցախցի երեխաների հետ:

Առաջարկեցինք նրան ընդունել պատվավոր վերինհոռաթաղցի: Քոքսը մեծ ուրախությամբ ընդունեց առաջարկությունը, հրաժեշտ տվեց և ի զարմանս մեզ, չնայած 63-ամյա տարիքին, սպորտային հագուստով, այսպիսի վատ եղանակին, ընկերների հետ ոտքով ուղևորվեց Գանձասար՝ հետը բերած լորդերին ցույց տալու «Քոքսի կածանը»:

Մինչև ուշ գիշեր առատ ձյուն էր տեղում, և մենք անհանգստանում էինք, թե այդ եղանակին ինչպես տեղ կհասնեին մեր այդքան հարգարժան հյուրերը:

Հաջորդ օրը՝ մարտի 31-ին պայծառ, արևոտ օր էր և մինչև կեսօր անհետացավ դաշտերն ու անտառները ծածկող ճերմակը:

Նախնական պայմանավորվածությամբ հյուրերը գյուղ պետք է ժամանեին մարտի 31-ին, իսկ հետո փոխել էին օրը: Մտածում էինք, որ երևի նախախնամության կամքով էր, որ մարտյան օրը նմանեցվել էր հունվարյան օրին, որպեսզի հյուրերի համար նույն տպավորությունն ստեղծվեր, ինչ որ 1992թ. հունվարի 4-ին էր:

Մի քանի օր հետո դպրոցի այգում մի ծառ ավելացավ՝ «Քոքսի ծառ, 2001թ. մարտի 30»:

Կանցնեն տարիներ, կաճի, կմեծանա Քոքսի ծառը, երեխաները կխաղան նրա ստվերում, կկարդան ցուցանակը և կիմանան, որ հեռավոր հյուսիսցի մի մեծ տիկին, Արցախի դժվարին օրերին ցուցաբերել է անսահման նվիրվածություն ու հարգանք մեր արդար պայքարի հանդեպ, բազմաթիվ ծառայություններ է մատուցել մեր ժողովրդին և միշտ սիրով կհիշեն նրան:

2001թ., «Զրաբերդ»

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ

Վերին Հոռաթաղի միջն. դպրոցը տարբեր միջոցառումներ կազմակերպելու առիթներ շատ է ունենում: Այս անգամ Մեծ հայրենականի և Արցախյան պատերազմի մասնակիցներն ու համագյուղացիներն այդտեղ էին հավաքվել հանդիսավոր պայմաններում ստանալու ՀՀ նախագահի և ԱԱՄ վարչության կողմից մեդալներ, գովասանագրեր, նվերներ և այլ պարգևատրումներ: Պատահական չէր ընտրվել միջոցառման վայրը, որպեսզի աշակերտները տեսնեն և ավելի լավ հասկանան, որ հայրենիքի պաշտպանությունը սուրբ գործ է, որ հայրենիքի համար զոհվածներն անմահ են, իսկ հաշմանդամներն ու մասնակիցները մշտապես գտնվում են երկրի ղեկավարության ուշադրության կենտրոնում և ժամանակի ընթացքում բոլորը կգնահատվեն ըստ արժանվույն:

Վերին Հոռաթաղն Արցախյան գոյամարտին մասնակցեց կազմակերպված և պատմությանը հանձնեց մարտավարության առումով դասական շատ օրինակներ, ու պատերազմն ավարտեց՝ կերտելով փառապանծ, սխրանքներով լի մարտական ուղի, որն արժանի է խրախուսանքի:

Արկադի Շիրինյանը (Խալաստոյ) մինչ շարժումը խաղաղ ու ստեղծարար աշխատանքով էր զբաղված, պատերազմը դարձրեց իր զինվորն ու հրամանատարը: Եվ լեգենդներ են պատմում նրա մասին, ու ճիշտ են անում, որովհետև շարժման առաջին օրվանից մինչև պատերազմի ավարտը մարտադաշտում էր, և շնորհիվ մարտավարական արտակարգ ունակությունների, իր հրամանատարությամբ գործող գյուղի ջոկատը, այնուհետև թիվ 499771 զորամասի 2-րդ հրաձգային գումարտակը, ռազմաճակատի Մարտակերտի ուղղության գրեթե բոլոր մարտերում հաղթանակներ է տարել:

Գյուղից՝ Արցախյան տարեգրության մեջ փառավոր էջեր են գրել Ազգային բանակի սպաներ Ռաֆայել Սայիյանը (Միրուք), Ռոմեո Գալստյանը (ավագ լեյտենանտ, վաշտի հրամանատար, զոհվել է Մարտակերտի շրջանի տարածքների ազատագրման ժամանակ), ինչպես և Ա. Շիրինյանը՝ քաջագործությունների համար պարգևատրվել է «Մարտական խաչ» շքանշաններով, մոտ երկու տասնյակ ազատամարտիկներ՝ «Արիության համար» մեդալներով:

Այդ օրը նրանց շարքերը համալրեցին ևս մի խումբ վերինհոռաթաղցիներ: «Արիության համար» մեդալով պարգևատրվեց Արցախյան պա-

տերազմի 1-ին կարգի հաշմանդամ Անդրեյ Սահակյանը, իսկ Շուրա Պետրոսյանն ու Ռազմիկ Առաքելյանն արժանացան «Հայրենյաց պաշտպան» մեդալի, շուրջ մեկ տասնյակ ազատամարտիկներ՝ գովասանագրերի:

Պարգևատրվածները շնորհակալություն հայտնեցին ՀՀ և ԼՂՀ պաշտպանության նախարարություններին, ԱԱՄ վարչությանը՝ նրանց ծառայությունը գնահատելու համար և պատրաստակամություն հայտնեցին՝ անհրաժեշտության դեպքում նորից լինելու հայրենիքի պաշտպանության դիրքերում: Նրանք աշակերտներին կոչ արին՝ ընդօրինակել իրենց, պաշտպան դառնալ ազատագրած տարածքներին, տեր լինել նորաստեղծ հայրենիքին, ինչպես իրենց պարտքը կատարեցին գյուղի 13 զոհված քաջերը և հազարավոր հերոս հայորդիներ:

Հանդիսության մասնակիցները դպրոցի «Փառքի սրահ»-ում ծաղիկներ դրեցին զոհված մարտական ընկերների նկարների առաջ, հետաքրքիր հուշեր պատմեցին նրանց մասին:

Վ. Հոռաթաղի ԱԱՄ համայնքային միավորման նախագահ Լեոնիդ Հարությունյանն իր խոսքում նշեց, որ հայրենիքի պաշտպաններին ըստ արժանվույն գնահատման գործընթացը կշարունակվի:

Եղան նաև առաջարկություններ.

Ազատամարտիկներն ու զոհված ազատամարտիկների հարազատները արդարացի դժգոհություն հայտնեցին, որ երբեմն պարգևատրվողների մեջ են սողոսկվում անարժաններ, ինչը վիրավորանք է զոհվածների հարազատների և կռված տղաների համար:

Հաշվի առնելով, որ Արցախյան պատերազմի մասնակից ազատամարտիկներն իրար ավելի լավ գիտեն, ԱԱՄ համայնքային միավորումից խնդրեցին, որպեսզի պետական պարգևների ներկայացվածների ցուցակները կազմվեն կազմակերպության անդամների ներկայությամբ, որը, իհարկե, կբացառի դժգոհությունները:

Միջոցառումն ուսանելի էր, ռազմահայրենասիրական դաստիարակության լավագույն օրինակ՝ դպրոցականների համար:

2006թ., «Ձրաբերդ»

ՀԱՏՎԱԾՆԵՐ

2000թ. ապրիլի 5-ին Ստեփանակերտում ԺԱՄ-ի համագումարի ելույթից

Արտակերտի շրջանի պատվիրակության անունից ողջունում եմ Արցախի ժողովրդի բոլոր հատվածներից սերված նորաստեղծ «Ժողովրդավարական Արցախ միություն» հասարակական-քաղաքական շարժման համագումարի բոլոր մասնակիցներին:

Այս դահլիճում հավաքվել են պետական պաշտոնյաներ, մտավորականներ, բանվոր-ծառայողներ, պատերազմի վետերաններ, երիտասարդներ, թոշակառուներ, Հայաստանից՝ Ազգային ժողովի պատգամավորներ, բարձրաստիճան հյուրեր, որոնք ունեն աշխատելու փորձ ու կարողություն, հեղինակություն են վայելում հասարակության մեջ:

Հավաքվել ենք այս վճռորոշ պահին՝ մտահոգված լինելով արցախահայության ապագայով, հավաքվել ենք տնօրինելու մեր ժողովրդի կյանքը: Այդ մենք պետք է նոր խորհրդարանի համար առաջադրենք կրթական և բարոյական բարձր արժանիքներ և պետական մտածելակերպ ունեցող այնպիսի պատգամավորության թեկնածուներ, որոնք կկարողանան Արցախում հաստատել Արդարություն, Օրինականություն, ժողովրդավարություն, կիրագործեն մեր բնակչության սոցիալական խնդիրների լուծումն ու կենսամակարդակի բարձրացումը, կիրականացնեն անվճար կրթությունն ու բուժօգնությունը, կնպաստեն երիտասարդների ռազմա-հայրենասիրական դաստիարակությանը, կվերականգնեն պատերազմի հետևանքով ավերված գյուղերը, կաջակցեն, կօգնեն զոհված ազատամարտիկների ընտանիքներին ու հաշմանդամներին, ժողովրդի զբաղվածության համար աշխատատեղեր կստեղծեն: Մի խոսքով հավաքվել ենք աջակցելու ԼՂՀ իշխանությանը՝ ԼՂՀ պետականության ամրապնդման գործում:

Շարժման ստեղծումն այս օրերին անհրաժեշտություն է, որովհետև Արցախում գործող որոշ ուժեր ժողովրդին պառակտել են, ընդդիմություն կազմել՝ ելնելով իրենց անձնական շահերից: Դրանք մեծամասամբ այն հանցագործ տարրերն են, որոնք ցանկանում են խորհրդարան մտնել՝ պատգամավորի անձեռնմխելիության համար, որպեսզի եթե վաղ թե ուշ իրենց չարաշահումները բացահայտվեն, կարողանան խուսափել պատժից:

Մենք համամիտ ենք նոր խորհրդարանում պատգամավորական անձեռնմխելիության սկզբունքը վերացնելու թեզիսին: Ժողովրդի

ընտրյալը չպետք է դիմի անօրինականությունների, իսկ եթե դիմել է՝ թող պատժվի կրկնակի, քառակի:

Արցախի ամբողջ ժողովուրդը բազմաթիվ տառապանքներ է կրել: Ճիշտ է, բոլորը ուժ, քաջություն չեն ունեցել զենք կրելու, թշնամուն ճակատ ճակատի դիմակայելու, բայց միթե՞ պատերազմի մասնակից չէ այն արցախուհին, ով բռնագաղթի օրերին, Ստեփանակերտի հրապարակի աստիճաններին նստած, մի կտոր չոր հացը սառը ջրով փափկացնելով՝ կերակրում էր մի քանի ամսական երեխային, կամ ամիսներ շարունակ գնդակոծվող գյուղերում ու քաղաքում մնալով: Բոլորն են տառապել, ամեն մեկն արել է իր գործը՝ հաղթանակը մոտեցնելու համար՝ թիկունքում և առաջին գծում:

Պատերազմում հաղթած զինվորը իրեն պիտի զգա իր երկրի լիիրավ տերը, պետք է վայելի իր քաջությամբ ձեռք բերած հաղթանակի բերկրանքը:

Այսօր, դժբախտաբար, հաղթանակը մենաշնորհել են մի խումբ մարդիկ, և իսկական «կռվող տղաներից» շատերն գործազուրկ են՝ ապրելու տարրական միջոցներից զուրկ, ապրում են ընկճված և նույնիսկ շատերը ստիպված լքում են իրենց ազատած հողը՝ մի կտոր հաց վաստակելու հույսով, որովհետև կորցրել են ապագայի նկատմամբ հույսն ու հավատը:

Արցախում սեփականաշնորհման գործընթացը շարունակվում է, երևի որոշ մարդիկ, զավթելով ժողովրդին պատկանող ամեն ինչը, փորձում են յուրացնել նաև իշխանությունն ամբողջությամբ և ընդհանուր սարսափի ազդեցությամբ զրկել ժողովրդին իր իրավունքներից:

Արցախում պետք է ստեղծել ժողովրդավարություն, վերջ տալ կամայականություններին, դրա համար առաջին հերթին պարտավոր ենք առաջադրել ազնիվ ու բանիմաց մարդկանց թեկնածությունը, ընտրենք նրանց, ովքեր ճանաչված են, գործունյա, կրթված, խելացի, ոչ թե նախկինի պես նշանակվեն որոշ մարդկանց դրածոներ, որոնք աջակցեն երկրում կատարվող հանցագործությունների իրականացմանը:

«10-րդ նահանգ» թերթում քննադատվել է մեր Ազգային ժողովը, որ օրենքներ չի հրապարակում: Հեղինակը իրեն հարց տվե՞լ է, թե ովքե՞ր են մեր դեպուտատների մեծամասնությունը, նրանք կկարողանան արդյո՞ք նոր օրենքներ հեղինակել, դրա համար համապատասխան գիտելիքներ ունեն, թե՝ ոչ:

Շատերն այն սխալ կարծիքին են, որ եթե «լավ կռվող տղա է», պիտի նա էլ «առաջ քաշվի», պատգամավոր ընտրվի: Մենք դեմ չենք դրան, եթե նա ընդունակ է նաև այդ բնագավառում աշխատելու, բայց

միշտ չէ, որ «լավ կռվող տղան» կարող է նաև լավ քաղաքագետ, իրավագետ, լավ ղեկավար լինել: Մենք պետք է մեծարենք, գովաբանենք մեր կռվող տղաներին, նրանց մասին գրքեր գրենք, նրանց օրինակով դաստիարակենք մատաղ սեղդին:

Սա կլինի խելացի և ճիշտ գնահատականը նրանց կատարածի:

Նրանք էլ թող գիտակցեն, ճանաչեն իրենց, հաշվի առնեն իրենց կարողությունները և նոր ցանկություն հայտնեն պետություն ղեկավարելու:

Եթե գտնում են, որ մեկ ուրիշը իրենցից լավ կղեկավարի ժողովրդին, եթե նույիսկ «լավ կռվող չի եղել», պետք է նրան ընտրել: Դրանից կշահեն և՛ ինքը, և՛ ժողովուրդը:

Ղեկավար ընտրվողն էլ թող իրեն հաշիվ տա այնպես աշխատել, որ խոցելի կողմեր քիչ ունենա, որպեսզի ժողովուրդը հավատով ընդունի, հեղինակություն լինեն ժողովրդի համար, այնպես, որ հակառակորդ ուժերը չօգտագործեն այդ թերությունները և չհեղինակազրկեն նրանց ժողովրդի աչքում:

Արցախում ունենք ազնիվ պայքարում հաղթելու ընդունակ ուժեր, որոնց ընտրելու դեպքում կապահովի երկրի բնականոն զարգացումը, պետք է իշխանությունը վերադարձնենք ժողովրդին, պետք է վերջ տանք ռազմա-ֆեոդալական իշխանությանը:

Համարձակություն ունենանք ասելու.

- Ընկե՛ր, իզուր ես քո թեկնածությունը խոթել այդ ցուցակները, դու մեզ ղեկավարելու իրավունք, կարողություն չունես, իզուր մի զբաղեցրու ուրիշի տեղը:

Արցախում պետք է հաստատվի արդարությունը: Անհանդուրժելի ու անբարոյական է մի խումբ մարդկանց հարստացումը՝ չքավորության մատնելով բնակչության մեծամասնությանը:

Մի քանի օր առաջ Ստեփանակերտի մուտքին գտնվող աղբանոցում աղբը փորփրող մարդիկ տեսա և զայրացա: Ինչպե՞ս է ստացվել, որ քաջ ու հպարտ արցախցին այնքան է կորցրել հպարտությունը, որ դարձել է մուրացիկ և ստիպված քուջուջ է անում քաղաքի աղբանոցներում, որ գուցե քաղաքի մեծահարուստները իրենց պետքական որևէ բան լինեն թափած կեղտի հետ…

Քաղաք մտնելով՝ ճանապարհի եզրին շարքով կանգնեցրած մի քանի տասնյակ թանկարժեք արտասահմանյան մեքենաներ տեսա և, չգիտես ինչու, ատելություն զգացի այդ մեքենաների հանդեպ, մտածելով, որ հենց դրանց տերերն են աղբանոցում քուջուջ անող արցախցիների չքավորության պատճառը:

Շարժման նպատակն է Արցախում հաստատել օրինականություն, այնպես որ, բոլոր քաղաքացիներն ու պաշտոնյաները ենթարկված լինեն միայն օրենքին, վերջ պիտի տրվի արտոնյալ խավին, մեր իսկ ստեղծած կուռքերի իշխանությանը:

Ժողովուրդը, մենք՝ բոլորս, մեր բաժին մեղքն ունենք այն մարդկանց նկատմամբ, ովքեր իրենց հայտարարել են օրենքից դուրս և գործել են կամայականորեն, ինչպես իրենք են ցանկացել, ինչպես իրենց է հարմար, իսկ իրենց խոչընդոտողներին ճանապարհից վերացնելու համար ոչ մի միջոցի առջև կանգ չեն առնում՝ սկսած աշխատանքից ազատելուց մինչև ֆիզիկական ոչնչացումը: Իսկ մենք տեսնում ենք այդ և հանդուրժում, գլուխ խոնարհում նրանց տխմար գլուխների առաջ:

Ո՞ր մարտակերտցու /նկատի ունեմ շրջանը/ սիրտը չի ցավել մեր երիտասարդ հրամանատար Նորիկ Դանիելյանի սպանության համար, ով չի ցանկացել ոճրագործին պատժված տեսնել: Ինչքա՞ն ենք սպասել ոճրագործության բացահայտմանը: Մի օր էլ հեռուստատեսության էկրանից լսում ենք, որ Նորիկի հարազատները գիտեն, թե ով է սպանել նրան: Եթե հարազատները գիտեն, ուրեմն գիտեն և իրավապահ մարմինները, գիտեն, և մարդասպանը պատժված չէ, ապրում է ազատ, որոնում է իր հերթական զոհին:

Ուրեմն, Արցախում կան մարդիկ, որոնք օրենքից դուրս են, կարող են սպանել ցանկացածին և չպատժվել՝ շարքային զինվորից, հրամանատարից մինչև երկրի նախագահին:

Հենց դրանց դեմ էլ պետք է պայքարենք:

Մի՞թե կարելի է հայրենասեր, ազգային հերոսներ անվանել նրանց, ովքեր գցում են մեր վարկը աշխարհում, մեր հիմնահարցի կարգավորման համար բանակցային գործընթացի ժամանակաշրջանում, մի՞թե կարելի է հավատալ, որ նման մարդիկ հայրենիքի համար են պայքարել և ոչ թե անձնական շահի ու թալանչիության:

Օրենքները գրվում են մարդկանց համար, ոչ թե մարդկանց հարմարեցնում են օրենքներին: Նոր օրենքները թող վերջ տան գողությանը, թալանին, սպանություններին, բարոյականության նորմերը խախտողներին, թող հանցագործի սերունդը կրի իր ծնողների արատավոր անունը, ոչ թե ծնողների թալանով հավիտյան բարվոք ապրի:

Ամբողջ սփյուռքն օգնում է, բայց մենք ոչ մի օգնություն համարյա թե չենք ստացել, պատերազմի պատճառով ավերված մեր տները մինչև օրս չեն վերականգնվել՝ միջոցներ չլինելու պատճառով, մինչդեռ մայրաքաղաքում կառուցվող տասնյակ դղյակների տերեր ունեն այդ

հնարավորությունը: Հեռվից էլ կարող ես նկատել, թե տվյալ տան տերը բանակում ինչ պաշտոն է զբաղեցնում, կամ՝ «ում մարդն է», իսկ մենք բանակ ենք ուղարկում մեր որդիներին, որպեսզի պաշտպանեն մեր սահմանները, նաև՝ լիարժեք սնվեն, գաղափարապես հասունանան:

Ինչ պետք է զգա այն ծնողը, որն ինձ պես իմանա, որ իր տղան երեք տարի ծառայել է Ստեփանակերտի չորրորդ գումարտակում՝ այսօրվա մարդասպանների հրամանատարությամբ: Մի՞թե մեր որդիներին ուղարկում ենք բանակ՝ մարդասպանություն սովորելու…

Մեր երկրում մարտի 22-ին տեղի ունեցած ահաբեկչությունը, երևի վերջ կտա շատ ու շատ անօրինականությունների: Մարդիկ, որոնք յոթգլխանի վիշապի պես նստել են մեր կյանքի ակունքում, թևերը տարածել Արցախի բոլոր անկյուններում, զրկել ժողովրդին ապրելու տարրական իրավունքներից, կանգնեցրել մեր պետության առաջընթացը, խոչընդոտել մեր երկրի զարգացմանը, պատճառ դարձել բազմաթիվ անօրինականությունների, ոճրագործությունների, պետք է պատժվեն օրենքի խստությամբ, պետք է ժողովրդին վերադարձնել ժողովրդից թալանածը, ժողովրդի հաշվին կառուցածը:

Ողջունելի է ավտոմեքենաների պատուհանների քողարկումը վերացնելու որոշումը: Մեր շատ ղեկավարներ քողարկված ապակիների պատճառով կողքից չեն տեսել իրենց ժողովրդին, հաղորդակից չեն եղել նրանց հոգսերին ու տառապանքներին, այլ նայել են նրանց իրենց դղյակների բարձունքներից, և մարդիկ նրանց աչքին մրջուններ են թվացել, իսկ մրջուններին միշտ էլ կարելի է կոխկրտել ու անցնել: Եթե «չքողարկեին», անպայման կտեսնեին աշխարհը սասանող քաջ ու հպարտ արցախցիներին քաղաքի աղբանոցներում քուջուջ անելիս, կտեսնեին բազմաթիվ մուրացկանների՝ փողոցներում շրջելիս, կտեսնեին, որ շատ երեխաներ՝ մեր երկրի ապագա պաշտպաններն ու քաղաքացիները, դպրոց են հաճախում դալուկ դեմքերով, չունեն նույնիսկ 1 բաժակ քաղցր թեյ խմելու կամ մի կտոր հաց ունենալու հնարավորություն, որ շատ երեխաներ, կոշիկ չունենալու պատճառով, անձրևոտ օրերին դպրոց չեն հաճախում:

Սեփականաշնորհված հողը ի վիճակի չէ գյուղացուն կերակրելու՝ երաշտի, կարկուտի պատճառով: Անհրաժեշտ է բացել աշխատատեղեր, որպեսզի ընտանիքի անդամներից գոնե 1-2-ը աշխատեն, որ կարողանան էլեկտրաէներգիայի և մյուս հարկերը վճարել, շատ թե քիչ մարդավարի ապրել, որ չքողնեն ու հեռանան երկրից:

Մեր շատ հայրենակիցներ դեռևս գտնվում են արտերկրում, նրանց

մի մասը ցանկանում է վերադառնալ, բայց, լսելով այստեղ կատարվածները, չեն համարձակվում գալ, եկողներն էլ մի քանի օրում «թալանվում են» և ստիպված են լինում ետ փախչել-գնալ և այնտեղ ինչե՞ր պատմել…

Լավագույն երիտասարդ մասնագետներ ունենք՝ առանց աշխատանքի կամ ոչ մասնագիտական աշխատանքով, մինչդեռ ուրիշներն առանց համապատասխան կրթության զբաղեցնում են նրանց տեղը:

Պակասում է նաև գաղափարական աշխատանքը, բռնագաղթած, թալանված գյուղերում շատերը դեռևս հեռուստացույց չունեն, թերթեր չկան, կցկտուր, հակասական տեղեկությունները շատ ժամանակ ապակողմնորոշիչ դեր են կատարում:

Մենք՝ շարժման Մարտակերտի շրջանային կառույցի ներկայացուցիչներս, համագումարի անունից դատապարտում ենք մարտի 22-ի ահաբեկչությունը, պահանջում ենք հանցագործներին արժանի պատիժ, պահանջում ենք բացահայտել, հրապարակել Արցախում, կոնկրետ մեր շրջանում կատարված ու չբացահայտված հանցագործությունները, սկսած 1992թ. Ստեփանակերտում Վիգեն Շիրինյանի սպանությունից մինչև վերջին մահափորձերը, թող մարդիկ իմանան, որ ոչինչ գաղտնիք չի մնալու և վաղ թե ուշ՝ հանցագործությունները կբացահայտվեն…

Մենք պարտավորվում ենք առաջնորդվել Շարժման կանոնադրությամբ, կատարել Շարժման ղեկավար մարմինների որոշումները, առաջադրել Խորհրդարանի այնպիսի անդամների թեկնածություններ, որոնք ընտրվելու դեպքում կիրականացնեն մեր ժողովրդի հույսերը:

2000թ., ապրիլի 5, ք. Ստեփանակերտ

ՆԱ ԿԴԱՌՆԱՐ 65 ՏԱՐԵԿԱՆ

2016 թ-ի նոյեմբերի 5-ը սովորական օր չէր դպրոցում: Առավոտվանից հավաքվում էին նշելու զոհված ազատամարտիկ Արկադիա-Նապոլեոն Հայրիյանի ծննդյան 65-ամյա հոբելյանը:

Չլիներ պատերազմ, Նապոլեոնն այսօր կլիներ 65-ամյա պապիկ, ծնունդը կնշեր իր կառուցած տանը՝ երեխաներով, թոռներով, գերդաստանի անդամներով, խնամիներով, ընկերներով: Բայց պատերազմ եղավ և նա մեր հիշողության մեջ մնաց 40 տարեկան՝ ջահել, բարձրահասակ, հաղթանդամ ու ժպտերես (բանտի երեք տարիները չեմ հաշվում, որովհետև բանտում չի ապրել, այլ խոշտանգվել է բարբարոսաբար) ձուլվեց հավերժությանը և անմահացավ:

Այդ են վկայում այսօրվա միջոցառումը դպրոցում, նրա անունը կրող նախկին և նոր դասարանների աշակերտների, թոռների ելույթները, նրա պատվավոր տեղը թանգարանում, զոհվածների հուշահամալիրում:

Ազատամարտիկի անցած ուղին ներկայացրեց դպրոցի տնօրեն Ն. Առստամյանը, արտահայտվեցին ընկերները, հարազատները, բայց ամենահուզումնալիցը աշակերտների կողմից կազմակերպված միջոցառումն էր, իր անունը կրող նախկին և նոր դասարանների աշակերտների: Դրանք դպրոցի նախանցյալ տարվա շրջանավարտներն էին և II դասարանի աշակերտները: «Վերջին զանգին» նրանք փոխանցել էին իրենց դասարանի «հերոսին» գալիք առաջին դասարանցիներին, հիմա հավաքվել էին միասին նշելու նրա հոբելյանը: Արտասանում էին Նապոլեոնի մասին գրված իրենց բանաստեղծությունները, երգում էին երգեր՝ նվիրված բոլոր քաջերին: Դահլիճն առանձնապես հուզվեց Եվգենյա, Թագուհի և Մարիամ թոռների արտասվախառն ելույթներից, պապիկի կարոտ հուզումնալից երգերից:

Ինչ որ տեղ կատարվել էին Նապոլեոնի երազանքները: Կինը՝ Նատաշան, դժվարությամբ, բայց կարողացել էր դժվարին տարիներին պահել, մեծացնել, կրթության տալ 4 երեխաներին, ամուսնացնել, 13 թոռնիկներ ունի Նապոլեոնը, մեկը մյուսից գեղեցիկ, խելացի, շնորհալի:

Մեծ աղջիկը՝ Ինարան, ամուսնացել, ապրում է Հայաստանում, բուժքույր է աշխատում Քաջարանում, Վեներան ուսուցչուհի է դպրոցում, Արմինեն՝ հաշվապահ համայնքապետարանում, Աբրահամը հոր մասնագիտությամբ է աշխատում, վարորդ է: Այդպես էր պատկերացնում հայրը իր երեխաների ապագան: Կինը երկար տարիներ աշխա-

տել է զինվորական հոսպիտալում:

Ծնվել է 1951 թվականի նոյեմբերի 5-ին, Կոճողոտում, 1956 թ-ին ընտանիքը տեղափոխվել է Վերին Հոռաթաղ: Դպրոցն ավարտելուց ավտովարորդի մասնագիտություն է ձեռք բերել, զորակոչվել խորհրդային բանակ, զորացրվելուց աշխատանքի անցել, ամուսնացել, 4 երեխաներ ունեցել, սեփական տուն կառուցել և հանգիստ հոգով պիտի ապրեր, բայց Արցախյան շարժումը փոթորկեց հոգին, տուն ու հանգիստ մոռացած և՛ ցույցերի մասնակցեց, և՛ ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանական ջոկատներ ստեղծելու գործին: Աշխատում էր Ասֆալտի գործարանում, արտասովոր մեծ մեքենայով մազութ էր տեղափոխում Հայաստանից, ճանաչում ուներ շրջապատում, մեքենան հաճախակի էր Հայաստան մտնում, գաղտնարաններ շատ ուներ, հարմար էր զենք տեղափոխելու համար, և կամավոր սկսեց կատարել շարժման ղեկավարների հանձնարարությունները:

Սկզբում, ինչքան էլ գաղտնի գործեին, օմոնները հոտն առել էին, և 1990թ-ի օգոստոսին, Ստեփանակերտից վերադառնալիս, Խաչենի կամրջին ձերբակալում են նրան և տանում Շուշիի բերդը, 40 օր խոշտանգումների ենթարկում, բայց ոչինչ չեն կարողանում լսել նրանից, բաց են թողնում: Բանտակիցներից շատերն իսկույն լքում են Արցախը, բայց նա, բանտից դուրս գալով, ավելի եռանդով շարունակեց իր գործունեությունը: Ամեն ինչով աջակցում էր ծորակի ինքնապաշտպանական ջոկատներին, զենք էր պետք տեղափոխել, զենք էր պետք թաքցնել, ճանապարհ պիտի ականապատվեր, անհրաժեշտ զենքերը, նյութերը Նապոլեոնը պիտի տեղափոխեր: Ճանապարհին հայ երեխայի են պատանդել թուրքերը, վտանգելով կյանքը՝ նա կարող էր ազատել: Քարվաճառի մոտ ավտոշարասյունը պիտի պայթեցվեր, անհրաժեշտ ամեն ինչ տեղափոխել էին և դարանակալվել: Անգետ մի հովիվ նկատել էր լարերը և կտրել: Շարասյունը անփորձանք անցել էր, տղաները շվարել-մնացել էին և կրակ բացեցին շարասյան հետևից եկող մի Ուազի վրա: Մահացավ Քարվաճառի շրջկոմի քարտուղարի որդի Շուքյորովը: Հետո, 1991թ-ի հուլիսի 24-ին, երբ որոշել էին տեղահանել Ումութլու գյուղի բնակիչներին, նա անհրաժեշտ զինամթերքը տեղափոխել էր Ումութլուի դիմացի բարձունքը, որտեղից տղաները պիտի ահաբեկեին թուրքերին և հետ վերադառնային: Պայմանավորված տեղում տղաները չհավաքվեցին, Նապոլեոնն սպասեց մի քիչ և մեքենան քշեց Զագլիկ գյուղը, մտածելով, որ գուցե տղաներին բան է պատահել և օգնել է պետք:

Այդտեղ նա հայտնվեց ռուս զինվորների ճանկերում, որտեղից նրան տարան Ումութլու՝ գիշերվա դեպքերից գազազած թուրքերին հանձնե-

ցին, այդտեղից էլ Շուշի, հետո… Բաքվի Բայիլովի անվան բանտ, որտեղ էլ, 3 տարվա կտտանքներից, քաղցից, հիվանդությունից մահացավ 1994թ. գարնանը:

Միայն 2001թ-ի դեկտեմբերի 12-ին նրա աճյունը տեղափոխվեց հայրենի գյուղ, իսկ թաղումը վերածվեց հակապատերազմական մեծ ցույցի:

Բանտակից ընկերները հրաշքներ էին պատմում նրա քաջության, անկոտրում կամքի, դիմացկունության մասին: «Պատժախցի մշտական այցելուն» - այդպես էին ճանաչում նրան: Եթե մոտը մեկին խփում էին և ընկնում էր, ծնկի գալիս, վրդովվում էր «Արա՛, հայ չես, ի՞նչ ես չոքել, կանգնիր, դրանք ովքե՞ր են, որ առաջները չոքես…»:

Նրան մեղադրում էին Շուքյուրովի սպանության մեջ, դատապարտել էին գնդակահարության, և ինչքան էլ տանջում էին, ոչ մեկի անունը չէր տալիս, ամեն ինչ իր վրա էր վերցնում,- պատմում էր կոճողոտցի Ալիկը:

Նա իր հպարտությունը երբեք չկորցրեց, արժանապատիվ պահեց իրեն մինչև մահ:

Ընկերները, հարազատները ինչեր չեն արել Նապոլեոնին փոխանակելու համար, բայց՝ ապարդյուն: Հարյուր անգամ լուր են առել, որ բերում են, փոխանակում են, բայց ՝ սուտ:

Գյուղի կանայք 1991թ. օգոստոսի 11 խորհրդային զինվորներ են պատանդել, որ փոխանակեն, չի հաջողվել, պատերազմի ժամանակ 2 տղաներ է պատանդ պահել եղբայրը՝ Յաշան, որ փոխանակեն, էլի չի հաջողվել:

Երկար տարիներ հետո միայն Նապոլեոնը «գյուղ եկավ», ավելի ճիշտ բերեցին նրա խոշտանգված, ջարդոտված ոսկորները՝ հայրենի հողում ապաքինվելու և հավերժորեն հանգրվանելու. ու նրա գրկում անմահանալու…

Նապոլեոնն իսկապես անմահ է, ապրում է իրեն ճանաչողների, հարազատների, ընկերների հուշերում, իր պատվավոր տեղն ունի փառքի թանգարաններում, զոհվածների հուշարձանին, դպրոցի դասարաններում, զոհվածների մասին պատմող գրքերի էջերում…

Փառք նրան և բոլոր զոհվածներին:

2016թ. «Ջրաբերդ»

ՀԱՐՍԱՆԻՔ

1992թ. հուլիսի 4-ին Հաթերքի ենթաշրջանի գյուղերը բռնագաղթեցին:

Թշնամին մտել էր Հաթերք և բարձունքներից գնդակոծում էր գյուղերը: Ընտանիքները Ստեփանակերտում, Շուշիում, Այգեստանում (Բալուջա) տեղավորելով՝ ծորակի ինքնապաշտպանական ջոկատները վերադարձան ու թշնամուն Հաթերքից ետ շպրտեցին: Մեր ջոկատի տղաները զրահապատ փոխադրիչի մեջ հարսանեկան զգեստ էին գտել (ո՞վ գիտի, թուրքերը ում տնից էին թալանել), հետները բերել էին շտաբ: Սլավիկ Մարտիրոսյանի նորակառույց տունը շտաբ էին դարձրել: Հարսի շորը հանեցին, որոշեցին ջոկատի տղաներից մեկին ամուսնացնել: Փեսացու ընտրեցին հենց տանտիրոջ տղային՝ Աշոտին, որը չորրորդ կուրսի ուսանող էր, գյուղում պատմություն էր դասավանդում, նաև՝ ջոկատի անդամ էր: Մտերմացել Չափար գյուղից մեր գյուղ տեղափոխված, հորեղբոր տանը հյուրընկալված ուսանողուհի Նունեի հետ: Հարսն ու փեսան «գտան», մնացածը հեշտ էր:

Ապսպրեցին Այգեստանում հանգրվանած ծնողներին, որ պատրաստվեն, ներկայանան:

Գյուղացիներն ամեն ինչ թողել, դուրս էին եկել:

Տնային գինին ու օղին՝ ինչքան ուզես, խոզերն ու հավ-հնդկահավերը՝ բակերը լիքը, միրգը՝ այգիները:

Նվագողներն ու թամադան էլ Ստեփանակերտից հրավիրեցին: Թամադան հայտնի Ռաշիդ Ղարաբաղցին էր:

Հուլիսի 19-ն էր: Այգեստանից մի «Կամազ» մեքենայով Աշոտի ծնողների հետ եկան գյուղ: Մեքենան կանգնեց գյուղի մուտքին գտնվող Ասֆալտի գործարանի բակում: Իսկույն երևաց, որ այդտեղ «թուրք էր մտել»: Ամեն ինչ ջարդված-թալանված էր, բակի վարդերը ցավից վառվում էին: Իջանք մեքենայից, մեկական փունջ վարդ քա-

ղեցինք և բարձրացանք գյուղ:

Հարսանիքը Աշոտենց բակում կազմակերպեցինք: Ճոխ սեղաններ գցեցինք, գյուղ վերադարձած բոլոր մարդկանց հրավիրեցինք:

Շուտով եկավ նաև հարսնացուն՝ հարազատների հետ:

Թամադան համով-հոտով կենացներ էր ասում, անեկդոտներ պատմում, նվագողներն ուրախ երաժշտություն էին թնդացնում, իսկ տղաները պարում էին, երգում, ուրախանում:

Հարսանքավորների գլխով սուրում էին դիմացի բարձունքից արձակված գնդակները, արկերը, բայց դա չէր խանգարում հարսանքավորների ուրախությանը:

Հարսանիքը շարունակվեց մինչև կեսգիշեր: Վերջում տղաները լուսակիր գնդակներով համազարկ տվին…

Առավոտյան տղաները մեկնեցին մարտի. Չափար գյուղը պիտի ազատագրեին…

Քիչ հետո բոլորի ուրախությունը մարեց: Հայտնեցին, որ ջոկատի մեքենան խփվել է թշնամու արկից, հրդեհվել է, իսկ ջոկատի հրամանատար Ռաֆիկը՝ վիրավորվել:

Հայի ոգին անկոտրում է. Նույնիսկ կարճատև հրադադարի պահին կարող է առօրյա հոգսերով զբաղվել՝ վարել, ցանել, գործել… նույնիսկ՝ հարսանիք անել…

1994թ.

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԲԱՐԵՎ, ՀՈՐԵՂԲԱՅՐ...

Վաղուց լռել են պատերազմի մահաշունչ զարկերը մեր երկրում, պատմության գիրկն են անցել ցնցող օրերը:

Հուշ ու հուշարձան են դարձել զոհվածները, դարձել են պատմություն, որպեսզի հավերժ հուշեն դարերին՝ մարդի՛կ, ապրեցեք խաղաղ:

Բազմաթիվ են մեր երկրում Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակն հավերժացնող հուշարձանները: Այդպիսի մեկն էլ մի տասնյակ տարի առաջ կառուցվել է իմ հայրենի Առաջաձոր գյուղում՝ 186 զոհված մարտիկների հիշատակին:

Մեր տան դիմացն էր, նոր կառուցվելիք դպրոցական շենքի կողքին: Մարդիկ եկան, խելք խելքի տվին ու գնացին... Անծանոթ մարդկանց նկատմամբ հետաքրքրության սովորությամբ, առաջաձորցիք շրջապատել էին հյուրերին, մանավանդ թաղամասի երեխաներս: Նրանց գնալուց հետո միայն հայտնի դարձավ, որ նշված տեղում Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին հուշարձան է կառուցվելու: Հավաքվածների դեմքերը պայծառացան, հառաչանքներ դուրս թռան շատերի սրտից, գոգնոցի փեշեր բարձրացան դեմքի վրայից արցունքներ սրբելու:

Հուշարձանի կառուցման լուրը յուրահատուկ ձևով ընդունեց տատս: Թվաց, թե տարիներ առաջ կորցրած որդու վերադարձի լուրը լսեց:

Նա հաճախակի էր դուրս գալիս պատշգամբ, նայում հպարտ հայացքը հեռուներին հառած զինվորի անավարտ քանդակին և, աչքերը սրբելով, մեզանից գաղտնի, ինքն իրեն խոսում...

-Քա՛ր դառնա քո մերը...

Տատիս սովորություններ մեջ մեկն էլ ավելացավ. Զարթնելով առավոտը շուտ՝ ելնում էր պատշգամբ, հայացքը հառում հուշարձանին և կիսաձայն ասում.

-Պարի լույս, բալա ջան:

Տատիս բալան՝ իմ հորեղբայր Ռուբենն էր:

Գիշերը չէր քնել, տնից դուրս էր եկել և միայն լուսաբացին էր վերադարձել: Մայրը շատ էր անհանգստացել, բայց մյուս օրը, երբ բանջարանոց էր գնացել, որը տնից ահագին հեռու էր, տեսել էր այն ամբողջովին փխրեցված: Վերջին անգամ ցանկացել էր օգնել ծնողներին:

Ճանապարհվելիս էլ հավաստիացրեց հավաքվածներին, որ շուտով կհաղթեն և կվերադառնան… Շատ «կարճ» է ծառայել հորեղբայրս: Չանցած մի տարի, 1943-ի ապրիլին ստացան նրա «սև թուղթը»:

Չեմ տեսել նրան, բայց ահա տատիս հառաչանքների մեջ ես տեսնում եմ նրա երբեք չնկարված դեմքը, տեսնում եմ և ինձ թվում է, թե նրա դեմքին կա անհուն ատելություն ընդդեմ ջահել կյանքեր լափող, օջախի ծուխ հանգցնող, ավերող խորշակ ֆաշիզմի:

Մինչև հուշարձանի բացման օրը չապրեց տատս: Նոր տարվա գիշերը կաթվածահար եղավ: Նա հազիվ լսելի ձայնով հասկացրեց, որ իրեն դուրս տանենք պատշգամբ: Այնտեղ նա մեր օգնությամբ կանգնեց, հայացքն ուղղեց դեպի անավարտ հուշարձանի կողմը, վերջին անգամ աղավաղված բառերով հրաժեշտ տվեց որդուն, գուցե նաև՝ դիմավորելու հեռագիր…

Ապրում, աշխատում եմ ուրիշ գյուղում: Հաճախակի եմ լինում հայրենի գյուղում և, ամեն անգամ հուշարձանի մոտով անցնելիս, ակամայից մոտենում եմ, նորից ու նորից կարդում զոհված համագյուղացիներիս անունները և կրկնում.

-Բարև՛ հորեղբայր, բարև՛ քեռիներ…

«Բարեկամություն», 19-մայիսի, 1981թ. N60

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՆՉՈՎ

Հայրենիքի կանչով, հայրենի երկրի պաշտպանության համար ոտքի էր կանգնել ամբողջ ժողովուրդը: Հարազատ երկրի պաշտպանությունը գերմանաֆաշիստական զավթիչներից՝ մահի ու կենաց խնդիր էր:

Գյուղը միանգամից ամայացավ: Քառասուն կտրիճներ իրենց մանգաղն ու գերանդին, գութանն ու գրիչը փոխարինեցին զենքով: Դժվար էր բաժանվել Թարթառ գետի շողոտ ու շաղոտ հովիտներից, կուսական անտառներից, քաղցր ընտանիքից…

Պատերազմ էր: Թեկուզ արյան գնով, պետք էր պաշտպանել հայրե-

նիքը: Վերինհոռաթաղցի Արշակ պապը հայրական օրհնանքը մաղթեց ռազմաճակատ մեկնողներին, իր որդիներին՝ Խաչատուրին, Սարոյին, Մուշեղին: Իսկ Ասատուրը՝ որպես կադրային զինվոր, զորակոչվել էր 1938 թվականին, մասնակցել Ֆիննական պատերազմին: Սրտի կարոտով սպասում էր զորացրման, վերադարձ հայրենի գյուղ, պահած իղձերի ու երազանքների իրականացում, խաղաղ ստեղծագործական աշխատանք…

Իղձե՜ր… անկատար իղձե՜ր:

Արշակ պապը մխացող կաղնու նման կանգուն մնաց, չընկճվեց, չերերաց: Պետք էր փոխարինել զորակոչվածներին, չթուլացնել կոլտնտեսության աշխատանքների թափը: Համախմբեց գյուղի անչափահասներին, կանանց և ծերերին: Թիկունքում պայքար ծավալվեց գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացման համար, նշանաբան ընդունեցին՝ «Ամեն ինչ ռազմաճակատի համար»:

Կյանքի փորձով իմաստնացած պապը գիտեր իր աշխատանքային պայքարի գինը, հաղթանակի հավատ էր ներշնչում կանանց, փոքրերի ու ծերերի մեջ. գյուղն աշխատանքով էր շնչում:

Որտեղի՞ց իմանար Արշակ պապը, որ կանայք ևս կարող են զինվորագրվել: Ծանուցագիր ստացվեց զինկոմիսարիատից. հարսը դիմել էր ռազմաճակատ մեկնելու, ամուսնու, նրա եղբայրների հետ զենք վերցնելու չար ոսոխի դեմ:

Երկաթյա կամք ու համբերություն պիտի լինե՞ր դիմանալու համար: Չէ՞ որ հարսը փոքր երեխաների մայր էր, ուներ կրծքի մանուկ: Որդիների կորստից, հարսի զորակոչվելու լուրը լսելուց, կծկվել ու մի բուռ էր դարձել Սոնա տատը: Լավ էր, որ զինկոմիսարիատում մերժեցին հարսի զինվորագրումը, թե չէ ոնց կլիներ դեռ թոթովախոս ու ծծկեր թոռնիկների վիճակը:

Սակայն ցավը մարդուն է տրված: Միայն նա է, որ ցավը տանելու գործում լեռան պես ամուր է, ծովերից խոր: Մարդը տարավ ցավը…

Արշակ պապը ծանր տարավ պատերազմի դառնությունը: 1943թ. հուլիսին ստացավ Մուշեղ որդու հերոսական մահվան բոթը, հաղթա-

նակի ճանապարհին իրենց կյանքը զոհեցին հոռաթաղցի տասնյոթ երիտասարդներ՝ Աշոտ, Սանթրի, Լևոն, Սերգեյ, Տիգրան, Հովհաննես, Վերդի, Ապրես, Սուրեն, Մեսրոպ, Առաքել, Ջալալ, Եղիշե, Բախշի, Գարեգին, Բայլար... Սովետական երկիրը 20 միլիոնից ավելի զոհ տվեց:

Պապը արի էր, դիմացկուն, հոռաթաղցիների հետ աշխատանային մաքառումներով դիմավորեց հաղթանակի օրը՝ մայիսի 9-ը: 37 տարվա խաղաղ շինարարական աշխատանքային նոր տեսք ու հմայք է տվել նաև Վ. Հոռաթաղ գյուղին: Գյուղի ծաղկման, բարգավաճման հայրենանվեր գործում մեծ ծառայություն է կատարել Արշակ պապը:

«Բարեկամություն» , N64 29 , Մայիս 1982թ.

ՔՉԵՐԻՑ՝ ՀԻՆԳԸ

Վաղուց են լռել երկրորդ աշխարհամարտի մահաշունչ զարկերը, հող ու հուշարձան են դարձել այդ պատերազմում զոհվածներն ու անհայտ կորածները, ողջ վերադարձածներից շատերը, ամենաերիտասարդ մասնակիցն անգամ, բնականաբար, գերազանցում է կյանքի միջին տարիքը: Շատ քչերն են մնացել... Վերին Հոռաթաղն էլ ունեցել է տասնյակ զոհեր ու մասնակիցներ: Զոհվածների հիշատակն հավերժող հուշարձան կա՝կանգնեցված գյուղի կենտրոնում:

Մասնակիցներին այժմ կարելի է հաշվել մատների վրա: Նրանք յոթն են, որից 2-ը ապրում են գյուղի սահմաններից դուրս, Ավանես Սայիյանը՝Մոսկվայում, Մարուսյա Գրիգորյանը՝Քարվաճառում, մնացած հինգը ապրում են գյուղում՝ղեկավարության ու դպրոցի կողմից մշտապես հարգված, մեծարված, հրավիրվում և ներկայանում են բոլոր միջոցառումներին:

Նրանք մի լավ ավանդույթ ունեն. ընդհանուր միջոցառումներից բացի ամեն տարի մայիսի 9-ին հավաքվում են միասին, «քեֆ անում», վերհիշում անցյալը, հուշեր պատմում: Հաճախ ես էլ հրավիրվում եմ նրանց կողմից և սիրով ունկնդրում հետաքրքիր պատմություններ...

Ամենատարեցը Թադևոս Թադևոսյանն է, ծնված 1915 թվականին, ժամանակին եղել է հաղթանդամ երիտասարդ, այժմ՝դողդոջուն ծերուկ, հիշողությունն էլ այն չէ, բայց էլի ճիգ է թափում ընկերներից ետ չմնալ, իրենն ասել: Նա իր մարտական ուղին սկսել է Ֆինլանդիայից, ավարտել 1945 թվին.

-Ֆինլանդիայում շարժվում էինք դահուկներով, օրերով համատարած ձյան մեջ լինում, գիշերները ձյունից տնակներ պատրաստում, մեջք մեջքի նստում մեջը՝քամուց ու բքից պատսպարվելու համար, որ չսառչենք,- պատմում էր Թ. Թադևոսյանը:

Շատ դժվարություններ է տեսել, բայց նրա համար ամենասարսափելին սովն էր, օրերով հաց չէին ունենում, ստիպված էին լինում մի կտոր հացը 40 տեղ բաժանել: Մի քանի անգամ վիրավորվել է ձեռքից, ոտքից, բայց նորից շարք է մտել: Զորացրվելուց հետո այդ վիրավոր ձեռքերով ու չծալվող մատներով հարյուրավոր տներ պատրաստել (քարտաշ-որմնադիր է), պահել, մեծացրել իր և զոհված եղբոր երեխաներին.

-Հիմա հեշտ է տուն սարքելը, անկյունաքարերը դարսում են իրար վրա, իսկ ես իմ ամբողջ կյանքում ստիպված եմ եղել քար տաշել, հետո միայն պատ շարել: Ցավում եմ, որ այլևս չեմ կարողանում օգնել Գուրգենին, հոգս եմ դարձել նրա կնոջ համար, որը ստիպված պետք է 2 հաշմանդամի խնամի: (Գուրգենը նրա տղան է, Արցախի պատերազմում զրկվել է աջ ձեռքից, I-ին կարգի հաշմանդամ է):

Նրա մասին շատ բան կարելի է պատմել,բայց ուզում եմ բոլորի մասին խոսել համառոտ:

Հինգից երկրորդը Երեմ Հայրապետյանն է՝ծնված 1921 թվականին: Զորակոչվել է բանակ 1942-ին, ծառայել Գրոզնիում՝192-րդ դիվիզիայում, որտեղ նոյեմբերին իրենց գունդը պարտություն է կրել, և ինքը վիրավոր մի ընկերոջ հետ մնացել է խրամատում, գիշերով թաքուն հասել ռուսներին, որոնք էլ նրանց ուղարկել են հոսպիտալ՝Մախաչկալա:

Վիրահատության ժամանակ հոսպիտալը ռմբակոծվում է, (բժիշկը Առաջածորից էր) այնտեղից նրանց տեղափոխում են Կիրովական, որտեղ էլ 6 ամիս բուժվելուց հետո՝որպես II կարգի հաշմանդամ, զորացրվում է: Շատ դառնություններ է տեսել, կորցրել է երիտասարդ կնոջը, աղջկան, բայց ամենածանրը նրա մինուճար թոռան՝Սասունի ականի պայթյունից զոհվելն էր, որի համար անիծում է պատերազմ հրահրողներին…

Ռուբեն Մարտիրոսյան: Զորակոչվել է 1942-ին, ռազմադաշտ է մեկնել 408-րդ դիվիզիայի 673-րդ գնդի կազմում: Ունեցել է շատ մտերիմ ընկերներ, որոնցից առանձին ջերմությամբ է հիշում ճարտարցի Սամվել Բալայանին, որի հետ հետախուզության գնալիս վիրավորվել են: Իրեն ուղարկել են հոսպիտալ, Սամվելին՝որպես ծանր վիրավորի՝թիկունք, 3 ամիս բուժվելուց հետո տեղափոխել են Տուապսե, հետո՝ Կրասնոդարի երկրամաս: 1943թ. վերջում ծանր վիրավորվել է ոտքից,

տեղափոխել են հոսպիտալ: Երկարատև բուժումից հետո, 1944 թվականին, զույգ հենակներով, բուժքրոջ ուղեկցությամբ վերադարձել է ծննդավայր, որտեղ էլ՝ամբողջովին ապաքինվել է: Երկար տարիներ և մինչև այժմ ակտիվորեն մասնակցել է գյուղի հասարակական կյանքին: Շատ է փնտրել Սամվելին՝ ընկերոջը, և միայն 40 տարի անց, 1985 թվին նրան այցելում է ընկերը: Միասին նկարվել են Ծիծեռնակաբերդում, հենց այդ նկարն էլ խնդրեց հանձնել թերթին:

Աշոտ Վանյանը ծնվել է 1923 թվականին, զորակոչվել՝ 1942-ի նոյեմբերին, վերադարձել՝ 1946-ին: Կռվել է Ստավրոպոլում, Կրասնոդարում, Կերչում, մեկ ու կես տարի եղել է Մոսկվայում: Մի քանի անգամ վիրավորվել է, ապաքինվել, նորից շարք մտել: Դեռևս առույգ է, հիշողությունը՝լավ: Հիշում է բազմաթիվ դեպքեր, գտնում՝որ Արցախի կռվում ավելի հեշտ է, քան իրենց ժամանակ՝այնտեղ տեղանքն անծանոթ էր…1943թ. ապրիլին երեք մարտական ընկերներով գնացել էին հետախուզության, մութ էր, տեղն անծանոթ: Հանկարծ մոտիկից լսել է գերմանացիների խոսակցությունը, առաջարկել հեռանալ և կրակահերթ բացել, իբր շատոնք են: Եվ իսկապես. խրամատում 9 ֆաշիստ էին, որոնք, հանկարծակիի գալով, հանձնվել են: Ինքնաձիգները նրանց շալակն են բարձել, ձեռքերը կապել և բերել շտաբ, որի համար պարգևատրվել են:

Նրա կուրծքը զարդարված է մեդալներով, որոնցից յուրաքանչյուրն իր պատմությունն ունի:

Երկու որդիները՝Սուրենն ու Ժորան, Արցախի պատերազմի մասնակիցներ են, երկուսն էլ՝վիրավոր…

Ռաֆիկ Դավթյանը ծնվել է 1924 թվականին, զորակոչվել՝ 1942-ին: Ծառայել է տարբեր զորամասերում, 1944-ին մի խումբ հայերի հետ զինվորագրվել են Թամանյան 89-րդ դիվիզիային, որի հրամանատարն էր Նվեր Սաֆարյանը:

Պատերազմի ավարտից հետո տեղափոխվել է Երևան՝նույն դիվիզիայում ծառայել մինչև 1950 թիվը:

Դեռևս առողջ է, առույգ: Երկար տարիներ ղեկավարչական աշխատանքներ է վարել տարբեր հիմնարկներում:

Այո, դեռևս կան, ապրում են մեր վետերաններից ոմանք, սթափ դատում պատերազմ չարիքի, Արցախի ապագայի մասին.

-Հայն ուժեղ է, հերոս, դա զգում էին ամենքը, և միշտ էլ դժվար պահերին մեզ էին առաջ տալիս: Այնտեղ, այն ժամանակ, երբ կռվում էինք ընդհանուր, մեծ հայրենիքի համար, կռվում էինք անձնվիրաբար, հիմա՝ առավել ևս, պետք է լինենք միասին, հզոր ու հաղթական: Ուրիշ էր

այս մեկ կռիվը, իսկական հայրենական պատերազմ էր սա, որտեղ էլ կռվեցին մեր արժանավոր որդիներն ու հաղթեցին: Հայը միշտ էլ կռվել ու հաղթել է, բայց վատը «հոկտեմբերի 27-ն» ու «մարտի 22-ն» էր: Դարեր առաջ էլ, հաղթանակից հետո, պաշտոնի համար կռվել ու տանուլ ենք տվել, միշտ էլ տուժվել է հաղթանակած զինվորը: Դա չպետք է կրկնվի, և մեր ազգը գիտակցաբար վերջ պիտի տա դրան: Մի բան էլ մեզ ճիշտ չի թվում: Մենք կռվել ու հաղթել ենք պատերազմում՝ազատագրելով մեր պատմական տարածքների մի մասը, էլ ինչու՞ պիտի հետ վերադարձնենք դրանք, չէ՞ որ քաջերի սահմանը զենքն է որոշում…

Կարծում ենք, արդարացի չեն լինի նման որոշումներ ընդունողները, էլ չենք խոսում թշնամու անիմաստ պահանջներից՝«…Արցախն Ադրբեջանի անբաժանելի մասն է, սահմանների խախտում չպիտի լինի և այլն…»

…էլ ինչի՞ համար են զոհվել մեր քաջարի տղաները…

Եթե մենք չլինենք էլ, թույլ չպետք է տաք նման բան անել…

Զրուցում են մեր վետերանները. և նրանց խորհրդածություններում զգացվում է կյանքի մեծ փորձ և իմաստնություն:

Նորից ու նորից շնորհավորենք Մեծ հայրենականի մասնակիցներին և Արցախյան գոյապայքարի բոլոր վետերաններին՝ նրանց արժանավոր հետնորդներին՝ մայիսի 9-ի առթիվ, ցանկանանք, որ այլևս պատերազմ չլինի, իսկ թե լինի էլ, միշտ մայիսի 9-ով վերջանա:

«Զրաբերդ»2001թ. մայիս

ՄԱՅՐԸ ՍՊԱՍՈՒՄ Է…

Խորհրդանշանը նորից ձեռքը տարավ և թախտի տակից հանեց գունավոր թաշկինակի մեջ փաթաթված ինչ-որ բան…

Երրորդ օրն էր, ինչ նա տնեցիներից թաքուն այդպես էր վարվում: Կապոցը սկզբում մեծ էր, աստիճանաբար նրա պարունակությունը նվազեց: Դրա համար էր այդպես տատանվում: Արդեն մի քանի անգամ նա ներկայացել էր գրասենյակ և իր զարդերից, տան թանկարժեք իրերից հանձնել երկրի պաշտպանության ֆոնդին: Մնացել էր մի ոսկյա, գեղեցիկ մատանի՝ միևուճար որդու նշանի մատանին:

Ինչպիսի՞ երազանքով էր պատրաստել տվել, պահել…

Իսկ Ռուբենը այնտեղ էր՝ ռազմի դաշտում:

...Ամբողջ գիշերը չքնեց, որոշել էր որդու նշանի մատանին էլ հանձնել, միայն թե նա ողջ և առողջ վերադառնար: Նորը կառներ կամ առանց մատանու կպսակեր, միայն թե գար...

Բայց Ռուբենի գալու փոխարեն մահվան չար բոթը գյուղ հասավ: Աշխույժ ու կատակասեր Խորիշան միանգամից համրացավ, հալվեց, մի բուռ դարձավ...

Պատերազմը վերջացավ:

Շատերը վերադարձան:

Չնայած վաղուց էր ստացել որդու «սև թուղթը», բայց Խորիշա մայրիկն սպասում էր նրան (ինչե՞ր չեն լինում կյանքում, մեկ էլ տեսար՝ եկավ): Այնքա՜ն երազներ ուներ, որ չէր ուզում հաշտվել իրականության հետ, մի ներքին հույսով, հավատով սպասում էր դեռ:

Մի օր էլ նա աղբյուրի մոտ հանդիպեց այն ժամանակ պաշտպանության ֆոնդի համար նվերներ հավաքող Մարիամին: Խորիշան նայեց նրան և հիշեց իր այնքան փայփայած, գուրգուրած մատանին:

-Չէ՛, տղաս կգա,- մտածեց նա:

Եվ մայրը իր թախծոտ հայացքը սահեցրեց գյուղի վրայով: Տեսավ խաղաղ, կապույտ երկնքի տակ փռված դաշտերն ու տները, տեսավ մարդկանց արդար ու խաղաղ աշխատանքի բերկրանքը:

-Այն օրերը երանի չգան,- ասաց նա:

-Հա՛,- գլուխը կախ հաստատեց Մարիամը:

Քիչ հետո նրանք միասին բարձրանում էին դեպի գյուղ՝ խորասուզված մտքերի մեջ:

«Սովետական Ղարաբաղ»
1987թ. դեկտեմբերի 31 N300

ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

«ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՏԱՎԻԶՄ»

Հայտնի է, որ բնության մեջ հազվագյուտ պատահում են դեպքեր, երբ ծնվում են հոծ մազածածկույթով պատված, բազմապտուկ, պոչավոր և այլ նման տեսքի մարդիկ: Այս երևույթը կոչվում է ատավիզմ՝հետասերում դեպի նախամարդը:

Այսօր մենք ապրում ենք այնպիսի պայմաններում, որին դժվարանում եմ իսկական անուն տալ և գուցե միայն «ատավիզմ»-ը հարմար կգա, այլապես ինչպես կոչել այն կյանքը, երբ ամիսներ շարունակ ամառվա շոգին ժամերով ստիպված ենք կանգնելու տաք վառարանի կամ եռոտանու առաջ և ծխից սևացած կաթսաներում ճաշ պատրաստել, երբ ստիպված ենք տատերի սովորությամբ ու փորձով օճառ պատրաստել, կամ մոխրաջրով լվացք անել: Այնքան հաճախակի է անջատվում էլեկտրականությունը, որ նավթալամպերը սեղանի անպակաս զարդն են դարձել (իսկ նավթ որտեղի՞ց...):



Խանութներում երազ է դարձել մակարոնեղենը և արցախյան խոհանոցում նորից պիտի առաջնային տեղ գրավի այաների եփած «կունչուլը», իհարկե, քանի դեռ չի սպառվել վերջին ալյուրը:

Շաքարը հայտնի անեկդոտի համաձայն, այնքան են վաճառում, որ իսկապես պետք է կախենք առաստաղից և նայելով թեյ խմենք, այլապես ինչպես վարվել, երբ 10-12 շնչից բաղկացած ընտանիքներին վերջին 3-4 ամիսների ընթացքում վաճառել են 1-ական կիլոգրամ շաքար:

Միայն այդ լիներ…

Հարևան գյուղում հարազատ մայրդ է հիվանդ, քրոջդ հարսանիքն է, կամ քեռուդ որդին է մահացել, ներկայանալը խիստ անհրաժեշտ է, դռանդ ավտոմեքենա ունես կանգնած (երանի է լիներ) և կարող ես 1 ժամում հասնել այնտեղ, բայց չես կարող, որովհետև նախ բենզին չես գտնի և երկրորդ՝ճանապարհին քարեր կան հավաքած: Ստիպված ես ոտքով անցնել տասնյակ կմ, խոր անտառով, բայց վերջերս այդ էլ վտանգավոր դարձավ, որովհետև անտառն անցնելիս կարող ես հանկարծ «անէանալ» և տեղ չհասնել: Օրեցօր իրական ու առօրյա են դառնում տատիս զրույցները «ղաչաղների» մասին, թե ինչպես նրանք տնօրինություն էին անում խոր ձորերում, անտառներում: Տատիս 4 եղբայրները 1918-20 թվականներին երիտասարդ տարիքում սպանվել են դարանակալված թուրքերի կողմից՝ հրացանի գնդակով, 70 տարի հետո սպանվում է մեկ ուրիշի եղբայրը՝ համարյա նույն պայմաններում, ինչ տարբերություն…

Մոտակայքում թանգարան էլ չկա, որ այնտեղ տրեխ տեսնեինք, բայց ահա ստիպված ենք գյուղում երեխաների համար տրեխ գործել տալ, քանի որ կոշիկ չկա, հարկավոր է ճախարակները նորոգել՝թել մանելու, գուլպա գործելու համար, ցրտերն ընկել են, ոտաբոբիկ հնարավոր չէ մնալ: Շրջափակում է:

Գյուղում վերանորոգում են ջրաղացները, սայլերը (մեր գյուղը երջանիկներից է, դեռ սայլ ունենք): Որը նշես...

Կարծում եմ, բավական է թվարկածս, որպեսզի իմանանք, որ սուտ ու կեղծ են եղել մեր բոլոր լոզունգները, ծափերը, որոշումները, որոնք խոսել են ժողովուրդների բարեկամության, կյանքի առաջընթացի մասին: Դրանք խիստ պայմանական են և որոշ մարդկանց կամքով կարող են միանգամից հօդս ցնդել…

Մի խոսքով, իսկապես կեցցե՜ վերակառուցումը, շատ է խոսվում, որ այն դեռ չի հասել Արցախ, վերջապես եկավ և արդեն արցախցին հնարավորություն ունի վերակառուցվելու, որովհետև ամեն ինչ սկսում է նորից, նախնադարից և մաքուր խղճով, նորից ծնված պիտի ապրի 21-րդ դարում իր նավթավառով, տրեխ հագած երեխաներով, սայլի ախորժելի ճռինչով, եռոտանու առջև մրոտած կաթսայի մոտ չոքած մայրերով, մոխրաջրով լվացք անող հարսերով, ոտքով անտառներով, անհարթ ճանապարհներով տասնյակ կմ անցնող ամուսիններով, չորացրած մրգով թեյ խմող երեխաներով… մի խոսքով սրընթաց ապրում ենք կենցաղային ատավիզմ, և այդ գործում մեզ «օգնում են» մեր հարևան «եղբայրներն» ու երկրի ղեկավար ընկերները, մեծ ջանասի-

րությամբ, որպեսզի խեղդեն մեր արդար պահանջը, չիմանալով, որ դրանից շատ ու շատ վատ պայմանների դեպքում էլ արցախցին հետ չի դառնա իր միակ նպատակից՝ միացումից:

«Բարեկամություն», 14.10.1989թ., N123

ՀՈՒՍՈ ԿԱՄՈՒՐՋ

Ծանր օրեր է ապրում արցախահայությունը: Տագնապալից օրեր, անվերջ սպասումներ, վիրավորվածության, հուսախաբության, նաև՝ սով…

Վերջինս խորհրդային երկրում ժողովուրդների բարեկամության դրոշի ներքո հարևան «եղբայրական» հանրապետության կողմից մարզի շրջափակման արդյունքն է: Ասել է, թե 70 տարի եղել ենք ազատ հիմա էլ մեզ «հնազանդ չպահելու համար», մեկուսացրել են, կիրառում են պատժի ուժեղացված ռեժիմ:

Սով է Արցախում: Դա էլ արցախցիներին ահաբեկելու հերթական քայլ է. տեսնես էլ ինչի կդիմեն մեր «եղբայրները» մեզ մեր տներից հանելու համար:

Ցանկանում են սովամահ անել մեզ, ծնկի բերել, չիմանալով, որ մի քանի ամիս չէ, մի քանի տարի էլ շրջափակեն, համաձայն ենք սովամահ լինելու, բայց ծնկի չենք գա, կպայքարենք մինչև…միացում:

Շրջափակում է: Ավարտվում են մարդկանց ուտելիքի վերջին պաշարները: Սննդամթերքի, առաջին անհրաժեշտության առարկաների խիստ պակաս է զգացվում նաև մրգառատ ու բերքառատ մեր գյուղում՝ Վերին Հոռաթաղում (երաշտն էլ իր անելիքն է արել այս տարի):

Սպառվելու վրա է ալյուրը: Նույնիսկ փոքր երեխաները զրկված են թեյ խմելու հնարավորությունից:

-Այս ի՞նչ օրի հասանք, պատերազմական տարիներին գյուղը հացի պակաս չի զգացել, մեր հողը բարեբեր է, մեր ժողովուրդը՝ աշխատասեր, մեր պահեստները երբեք չեն դատարկվել, հիմա ի՞նչ պիտի անենք,- թոնթորում էին գյուղի ծերերը՝չիմանալով, որ հիմա էլ չհայտարարված պատերազմի մեջ ենք: Ուղղակի մեր բոլոր թշնամիները չէ, որ բացահայտ են գործում: Առաջ բերքը տնօրինում էին գյուղացիները, ունեին աղացներ, լիքը պահեստներ, իսկ հիմա հանձնում ենք Աղդամի մթերակայան: Այնտեղ էլ քմահաճորեն են վերաբերվում դրա հետ. կու-

զեն ետ կտան, կուզեն՝ չեն տա:

Շրջափակում է… Չկա նաև բենզին, փակ են բոլոր ճանապարհները գյուղից, մարզից դուրս, իսկ ամբողջ մարզը մեզ պես խիստ կարիքի մեջ է:

Դասարան մտնելուց, դաս հարցնելուց առաջ, նայելով աշակերտների մտախոհ, դալուկ դեմքերին, հարցնում եմ՝ որևէ բան կերել են այդ օրը, գոնե թեյ խմե՞լ են, և քանի անգամ են արցունքոտվել աչքերս, երբ երեխաները պատասխանել են՝ ի՞նչ թեյ…

Ահա այսպիսի ծանր վիճակում էինք, երբ գյուղի վրա հռնդաց և մոտիկ դաշտում վայրէջք կատարեց սննդամթերքներով բեռնված մի ուղղաթիռ: Ամբողջ գյուղը շրջապատեց ուղղաթիռը: Կանայք լաց էին լինում, երեխաներն՝ ուրախությունից թռչկոտում, չէ՞ որ ալյուր ու շաքարավազ էին բերել…

Ուղղաթիռն ուղեկցել էր համագյուղացի, երկրաբանական արշավախմբի աշխատակից Ռաֆիկ Հովհաննեսի Սայյանը: Նա, իմանալով Արցախում տիրող իրավիճակի մասին, իր և իր կոլեկտիվի ուժերով մթերքներ էր հասցրել գյուղ: Բոլորը սրտառուչ շնորհակալություն հայտնեցին Ռաֆիկին և նրա կոլեկտիվին, ամբողջ Հայաստանի ժողովրդին: Գիտենք, որ վիրավոր է, անչափ կարիքի մեջ է նաև մեր մայր Հայաստանը, բայց այդ նեղ վիճակում էլ օգնության ձեռք է մեկնում Արցախին: Ուրիշ էլ ինչի հետ կարելի է համեմատել այդ օգնությունը, եթե ոչ փլատակների տակ մնացած այն մոր վարմունքի հետ, որն, իր մատները ծակելով, արյունը խմեցրել էր երեխային և փրկել նրան մահից, կյանք պարգևել զավակին…

Ուղղաթիռի գյուղ գալը մարդկանց հոգում հուսո շող վառեց, հուսո կամուրջ գցեց Երևանից Վ. Հոռաթաղ…

Ի՞նչ կարելի է եզրակացնել. ինչքան էլ բարբաջեն բունիաթովները, ինչքան էլ մեզ «աղվանացնեն», մենք մեկ հոգի, մեկ մարմին ենք, նույն արյունն է մեր երակներում: Մենք վաղուց միացել ենք հոգով, մնում է միայն թղթերի վրա վավերացվի այդ միացումը…

«Խորհրդային Հայաստան», 1991թ.

ՄԱՅՐԱԿԱՆ ԳՈՐՈՎԱՆՔՈՎ

Շարունակվում է Արցախի պաշարումը «եղբայրական» հանրապետության կողմից, բայց այն այլևս սարսափելի չէ մեզ համար, որովհետև Հայաստանը մայրական հոգատարությամբ սատար է կանգնել, օգնում է դիմանալ մեզ բաժին հասած դառը ճակատագրին, օգնում է պայքարել... Այդ օգնությունը ապրեցնող է, հուսադրող, ոգեշնչող:

Օգնության իր բաժինն է ստացել նաև Վերին Հոռաթաղ գյուղը:

Գյուղում վայրէջք կատարող ուղղաթիռներից մեկն էլ բերել էր Երևանի N 168 դպրոցի կոլեկտիվի ուղարկած գրենական պիտույքներ, սննդամթերք, հագուստներ...

Ցրտաշունչ այս ձմռանը ուղղաթիռով մեզ մոտ էին հասել N 168 դպրոցի ուսուցիչներ Գոհար Գաբրիելյանն ու Ալլա Մարգարյանը:

Այդ խիզախ կանայք բեռը Երևանից տեղափոխել էին Վարդենիս, որտեղից էլ ուղղաթիռով հասցրել էին Վերին Հոռաթաղ:

Բառերն անկարող են նկարագրելու այն ոգևորությունը, որ տիրում էր դպրոցում. արցունքախառն ելույթներ, բանաստեղծություններ, երգեր և, իհարկե՝ բռունցքված ձեռքեր... Իսկ այս ամենի մեջ ամենակարևորը ոչ այնքան մեր գործընկերների նյութական օգնությունն էր, որքան հոգեկան մերձեցումը մայր Հայաստանի հետ:

ԼՂԻՄ, Մարտակերտի շրջան, Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոցի տնօրեն
«Դպրություն», 1990թ., 2 մարտի

ԵՐԲ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ Է

Արցախյան շարժումը թևակոխել է նոր փուլ: Արդարացի հարցի լուծման անհեթեթ ձգձգումը, թշնամացրել է հարևան ժողովուրդներին և օրեցօր խորանում է այդ թշնամանքը, անասելի անդունդ են գոյացել նրանց հարաբերություններում, ավերվել են բոլոր կամուրջները, հետդարձի «կածան» անգամ չի մնացել: Դրա հետ միասին Արցախը միացել է Հայաստանին հոգեպես այնքան ամուր, որ այլևս ոչ մի ուժ ի վիճակի չէ խախտելու այդ միասնությունը և այսուհետև այլ բան չի մնում անելու այս գործում, քան վավերացնելու այդ միացումը:

Այս օրերին ադրբեջանցիները նորից մոլեռանդությամբ գովերգում են Ղարաբաղը, նոր երգեր ու բանաստեղծություններ ձոնում նրան, ոչ մի վայրկյան չեն ուզում հրաժարվել «իրենց չունեցած» Ղարաբաղից, բայց որևէ մեկը նրանցից երբեք հարց չի տալիս իրեն, կամ ընկերոջը, թե ինչպե՞ս և ինչո՞վ են ապրում իրենց «գյոզալ Ղարաբաղի» իսկական տերերը: Նույնիսկ տարիներով մեր մարզի առատ բարիքները խժռած ոչ մի ղեկավար կամ շարքային ադրբեջանցի մազաչափ անգամ ցանկություն չհայտնեց օգնելու որևէ շրջանի, հայկական գյուղի կամ հայ անձնական բարեկամին. մի՞թե տարիների «պատվաստումներից» նրանցից ոչ ոք ինտերնացիոնալիստի իմունիտետ չի ձեռք բերել… Նրանք իրենց վերաբերմունքով ապացուցում են, որ կեղծ են եղել մինչև հիմա, հետևապես, կեղծ բարեկամությամբ ու շողոքորթությամբ մեզ այլևս խաբել չեն կարող, իսկական բարեկամը մարդու դժվարին օրն է ճանաչվում, իսկական բարեկամությունը հավասարություն, փոխզիջողություն, հավատարմություն է պահանջում, մենք երբեք հավասար չենք օգտվել հանրապետության բարիքներից: Երբեք:

Այլ է իսկական բարեկամությունը, միանգամայն անկեղծ, մարդկանց սրտից, հոգուց բխող, ոչ թե լեզվից. դա մենք այժմ տեսնում ենք մեր հայ եղբայրներից: Մի՞թե իսկական, անշահախնդիր բարեկամության դրսևորում չի այն, որ Կիրովականից բոլորովին անծանոթ մարդիկ, թերթերից տեղեկանալով, որ Վ.Հոռաթաղ գյուղը կարիքի մեջ է, որոշել են օգնել. սննդամթերքներով, դպրոցի աշակերտների համար գրենական պիտույքներով, մարզազգեստներով, գրքերով ու մարզական գույքով լեցուն արկղներով մի ուղղաթիռ են ուղարկել գյուղ, ցանկություն հայտնելով վերցնել գյուղի և դպրոցի շեֆությունը:

Ուղղաթիռն ուղեկցել էին Կիրովականի գիտա-արտադրական միավորման ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար ընկ. Ա.Զուրաբյանը և ինժեներ

Հ.Հովսեփյանը:

Հանդիպումը հայաստանցի երիտասարդների հետ հուզիչ էր: Նրանք ելույթ ունեցան աշակերտների առաջ, հայտնեցին, որ իրենց միավորման երիտասարդությունը ցանկություն է հայտնում սերտ կապեր հաստատել դպրոցի հետ և ցույց տալ անհրաժեշտ օգնություն և աջակցություն: Նրանք պատվիրեցին աշակերտներին՝ որպես փոխհատուցում, լավ սովորել, մեծանալ հայեցի, չհամակերպվել անարդարություններին, միշտ քաջ ու համառ լինել, պայքարել մինչև… հաղթանակ:

Աշակերտներն արտասանեցին բանաստեղծություններ, երգեր երգեցին Հայաստանի, Արցախի մասին և մանկական բռունցքված էությամբ մեկ անգամ ևս պահանջեցին… միացում:

Ամբողջ գյուղի, դպրոցի ուսուցիչների և աշակերտների անունից մեր համաձայնությունն ենք հայտնում նրանց կողմից ցուցաբերած ուշադրության, գյուղի և դպրոցի շեֆությունը վերցնելու համար:

Անչափ շնորհակալություն ենք հայտնում Կիրովականի ԼԿԵՄ քաղկոմին, ՕԳԱՄ «Պլաստպոլիմերի» Կիրովականի կոմպլեքսային արհմիությունների կամավոր ֆիզկուլտմիության կոլեկտիվների բոլոր անդամներին, որոնց նյութական և բարոյական օգնությամբ կազմակերպվել է վերոհիշյալ օգնությունը:

«Բարեկամություն»,1990թ., հունվար,

ԵՐԿՐԱՇԱՐԺ

ԱՐԻԱԲԱՐ ԴԻՄԱՆԱՆՔ

Դեկտեմբերի 10-ին, երբ ձեզ հետ ողջ Արցախն էլ անասելի վշտի մեջ էր, մեր արցունքից չցամաքած աչքերին նոր արցունքներ ավելացրեց Սպիտակից ստացված մի նամակ: Գրել էր N 2 միջնակարգ դպրոցի աշակերտ Լ. Շուշանյանը: Հենց այդպես էլ գրել էր՝ Լ. Շուշանյան, գրել էր մեր դպրոցի 8-րդ դասարանի մատյանով N 21 աշակերտին: Նամակը գրվել էր աղետից 1-2 օր առաջ: Քանի որ հաստատ չգիտենք, թե ինչ կարող է պատահած լինել նամակագրի հետ, որոշեցի պատասխանել ինքս, փնտրել նրան թերթի միջոցով, եթե, իհարկե…

Թանկագի՛ն բալիկ: Թույլ տուր այդպես դիմելու քեզ, որովհետև կարող է դու այդ բառի կարիքն ունես այժմ: Դու նամակ էիր գրել արցախցի քո հասակակիցներին, խնդրում էիր անպայման պատասխանել նամակիդ, ցանկանում էիր իմանալ. «Ի՞նչ իրավիճակ է տիրում Ստեփանակերտում և, ընդհանրապես, Ղարաբաղում»:

Գրել էիր նամակ և սրտատրոփ սպասում էիր պատասխանին, իսկ գուցե այն վայրկյանին, երբ գլխիդ պայթեց չար աղետը, մտածում էիր Արցախի դրության մասին: Այժմ, երբ ստացանք նամակդ, ամբողջ Արցախն է մտածում քո մասին…

- Ի՞նչ իրավիճակ է տիրում Արցախում,- հարցնում ես:

Թանկագի՛ն բալիկ, անցյալով չեմ գրում, Արցախում սուգ է հիմա, համատարած սուգ, վշտացած ենք բոլորս՝ մեծից մինչև փոքր, վշտից, բախտի չար քմահաճույքից, մեր դառն ճակատագրից ու դաժան պատմությունից: Մոռացել ենք վերջին ամիսների անհանգստությունը, ահն

ու սարսափը, անքուն գիշերները և մտածում ենք միայն ու միայն Հայաստանում տեղի ունեցած աղետի պատճառած կորուստների և վնասների մասին:

Մայր Հայաստանի ծանր վիշտը նաև արցախցիներիս վիշտն է: Ահավոր լուրը լսելուն պես ցնցվեցինք, սսկվեցինք, լաց եղանք, բայց և մեզ չկորցրեցինք: Տուժածներին օգնել է պետք. ով ինչքան կարող է և ինչով կարող է… Հայաստանը շատ է օգնել մեզ և՛ նյութապես, և՛ հոգեպես, այժմ հերթը մերն է: Աղետից անմիջապես հետո դպրոցում սգո միտինգ հրավիրվեց: Որոշվեց ուսուցիչների աշխատավարձը փոխանցել աղետից տուժածների հաշվին: Աշակերտները, որոնք սրտանց ցավում են իրենց հասակակիցների համար, նամակագրական կապեր ունեն աղետի ենթարկված շրջանների դպրոցականների հետ, անչափ հուզվել էին և որոշեցին իրենց հասանելիք աշխատավարձը՝սովխոզի բերքահավաքին օգնելու դիմաց, նույնպես հատկացնել այդ ֆոնդին:

Արցախում ամենքն ակտիվորեն մասնակցում են տուժածներին օգնելու գործին. սննդամթերք են հավաքում, արյուն են տալիս կամ ցուցակագրվում տալու, սենյակներ են առանձնացրել տուժածներին հյուրընկալելու՝ժամանակավոր կամ ընդմիշտ, ամենքը սրտանց ցանկանում են իրենց հարկի տակ ժամանակավոր կամ ընդմիշտ պահելու 1-2 որբ ու անապաստան մնացած երեխայի:

Սիրելի բալիկ, գրում եմ նամակս և հուզմունքից չի ստացվում այն, ինչ ուզում եմ գրել: Իսկ գուցե դու չկարդա՞ս նամակս… սոսկալի է անգամ մտածելն այդ մասին: Ես կցանկանայի ողջ մնացած լինեիր քո ամբողջ գերդաստանով:Եթե դու կաս և զրկված ես ընտանիքից, ընդունիր, որ նոր հարազատներ ու ընտանիք ունես Արցախում, ունես 3 եղբայր, որոնք սիրով կհյուրընկալեն քեզ ծնողներով, իսկ եթե նրանք չկան՝ծնողներ կդառնանք քեզ համար:

Վիշտն ամենքինս է, մենք պետք է է՛լ ավելի համախմբվենք, որպեսզի կարողանանք դիմանալ կյանքի այս դաժան փորձությանը ևս: Եվ կդիմանանք ու կհարատևենք: Մեր թիկունքում մեր դաժան պատմությունն է, մեր երակներում՝ մեր արիասիրտ պապերի, փորձություններով անցած արյան շարունակությունը: Մեր կորուստները միավորներով, տասնյակներով չեն հաշվել երբեք, մեր կորուստները եղել են հազարներ, միլիոններ:

Իսկ ապրելու և հարատևելու մեր կամքն ու վճռականությանը միշտ եղել են անսահման, անչափելի…

«Կանչ», 1989թ., դեկտեմբեր

ՄԵՆՔ ՔԵԶ ՀԵՏ ԵՆՔ, ՄԱ՛ՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Գրեթե մեկ տարի է, ինչ ալեկոծվել է հայ ժողովուրդը, տարել տասնյակ դժբախտություններ, հուսախաբվել, հուսահատվել, արդարություն պահանջել, սատար կանգնել արցախցիներիս, Ադրբեջանի հայաբնակ շատ վայրերից քչերը չեն եկել, կիսվել է նրանց հետ մի կտոր հացը: Մեր արդար պահանջի կես ճանապարհին աղետ եկավ մեր ժողովրդի գլխին, դժվար է նույնիսկ նկարագրել: Կարծես թե քիչ էին դարերով բաժին ընկած բախտի չար քմահաճույքները, դժբախտությունները, եղեռնը, գաղթը, նորօրյա եղեռնի բուն Սումգայիթն ու մնացածները, հիմա էլ նոր, ավելի սոսկալի, իր նմանը չունեցող աղետի ենթարկվեց իր տանը, իր մի բուռ հողում:

Ողբերգությունը մեծ է, անասելի չափերի, հենց միայն այն առումով, որ զոհվել են հազարավոր երեխաներ, դպրոցականներ, փլատակների տակ են մնացել բազմաթիվ մարդիկ, հոգով ու մարմնով հաշմվել հազարավորներ…

Հայ ժողովրդի այս ծանր պահին նրանց սատար են կանգնել մեր բազմազգ երկրի ժողովուրդները, երկրագնդի գրեթե ողջ մարդկությունը: Մայր Հայաստանի ծանր վիշտը, բնականաբար, արցախցիներիս վիշտն է: Բոթը լսելուն պես՝ ցնցվեցինք, լաց եղանք, բայց և մեզ չկորցրինք:

Տուժածներին օգնել է պետք, ով ինչով և ինչքան կարող է… Հայաստանը շատ է օգնել մեզ և՛ նյութապես, և՛ հոգեպես, այժմ հերթը մերն է:

Ամենուրեք ստեղծվել են հատուկ հանձնաժողովներ, մարդիկ իրենց աշխատավարձերից, խնայողություններից բաժին են հանում տուժածներին, ուղարկում են ծանրոցներ, հագուստներ, տվել և շատերն էլ պատրաստ են տալու իրենց կյանքի մի մասնիկը՝արյուն:

Այդ ամենում իր համեստ ներդրումն ունի նաև Վ. Հոռաթաղի միջնակարգ դպրոցը: Աղետից հետո դպրոցում սգո միտինգ հրավիրվեց, կայացան արհմիության և աշակերտական ժողովներ: Որոշվեց ուսուցիչների դեկտեմբեր ամսվա աշխատավարձից 5 օրվա վաստակը հատկացնել աղետյալներին, ինչպես նաև դպրոցի վերանորոգման կոլեկտիվ աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը: Աշակերտները, որոնք սրտանց կիսում են իրենց հասակակիցների ողբերգությունը, նամակագրական կապեր ունեն աղետի ենթարկված շրջանների դպրոցականների հետ, անչափ հուզվել էին և աղիողորմ արտասվում էին: Նրանք որոշեցին իրենց հասակակիցներին օգնելու նպատակով

նրանց հասցեով ուղարկել բերքահավաքի օրերին կատարածի դիմաց հասանելիք վարձը՝ 500 ռուբլի: Բացի այդ կոլեկտիվի անդամները ակտիվորեն մասնակցում են նաև գյուղում այդ կապակցությամբ կազմակերպվող միջոցառումներին՝ կանխիկ նվիրատվությանը, սննդամթերքի հավաքմանը: Շատերը ցուցակագրվել են արյուն տալու, հնարավորություն ունեցողները ազատել են սենյակներ՝ եկվոր տուժածներին հատկացնելու համար, բոլոր աշխատողները ցանկություն են հայտնում իրենց հարկի տակ ժամանակավոր կամ ընդմիշտ պահելու 1-2 որբ կամ անապաստան մնացած երեխայի:

Վիշտը ամենքինս է, մենք պետք է էլ ավելի համախմբվենք, որ կարողանանք դիմանալ կյանքի այս փորձությանը ևս: Եվ կդիմանանք ու կհարատևենք:

Մեր թիկունքում մեր դաժան պատմությունն է, մեր երակներում՝ մեր արիասիրտ, բազում փորձություններով անցած պապերի արյան շարունակությունը:

Մեր կորուստները միավորներով չեն հաշվել երբեք, մեր կորուստները հաշվել են հազարներով, նաև միլիոններով: Դառն է մեր պատմությունը. արիաբար դիմանանք բոլոր փորձություններին…

«Խորհրդային Հայաստան», 1989թ., հունվար

ՕՐՀՆՎԻ ԾՆՈՒՆԴԴ, ՄԱՆԿԻ՛Կ

1988 թվականը ազգային զարթոնքի, մաքառումների, սպասումների, տառապանքների տարի եղավ հայերիս համար, տարի, որ սկսվել էր ցույցերով, գործադուլներով, հացադուլներով և ավարտվեց բնության հզոր ու դաժան խաղով՝ երկրաշարժով: Վայրկյանների ընթացքում փլատակների է վերածվել Հայաստանի մեկ երրորդ մասը, հիմնահատակ կործանվել են մի քանի տասնյակ բնակավայրեր, զոհվել տասնյակ հազարավոր մարդիկ: Երկրաշարժի պատճառած ծանր հետևանքները վերացնելու համար ոտքի ելավ ամբողջ աշխարհը, և այսօր աղետի գոտում վեր բարձրացող շենքերը, թաղամասերը դրա վառ ապացույցներն են:

Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր ձեռք մեկնեցին Հայաստանի վիրավոր, բզկտված մարմինն ապաքինելու, նաև հազար ամոթ նրանց, ովքեր մարդկային կերպարանքը կորցրած, գայլերի ու բորենիների մոլեռանդությամբ ուզում են հոշոտել հայ ժողովրդին, ավերել,

ոչնչացնել այն ամենը, ինչը հայկական է կոչվում:Նաև ամեն կերպ ձգտում են փոխել Արցախի ազգաբնակչության տոկոսային հարաբերությունը հօգուտ իրենց: Ի հեճուկս նրանց, այսօր արցախցի մայրերը կրկնակի պարտավոր են երեխաներ ունենալ և՛ հանուն Արցախի, և՛ հանուն հայության: Այո՛, ցրտաշունչ ձմռանը շաբաթներով մարզկենտրոնի հրապարակում ցույցի կանգնող կինը չպիտի զլանա անքուն գիշերներ անցկացնել մանկան օրորոցի մոտ, որը գոյատևման համար ցույցերից պակաս պայքարի միջոց չէ:

Չնայած դեռ թարմ է ու բոլորիս զգացնել է տալիս ահավոր երկրաշարժի տարելիցը, բայց ես հոգեկան որոշ բավարարություն եմ զգում, քանզի աղետի հետևանքները վերացնելու համար արված նյութական համեստ ներդրումներից բացի, մեր ընտանիքում լույս աշխարհ եկավ մի փոքրիկ Արցախիկ, որն անվանակից Արցախ աշխարհի պես չի հանդուրժում բարուրի գերութունը, և փոքրիկ թաթիկները գլխից վեր պարզած՝ միացում է պահանջում:

Կմեծանա նա, կպատմենք նրան իր ծննդյան ու անվան հետ կապված հիշողությունները, կդաստիարակենք այնպես, որ արժանի լինի իր անվանը, դառնա իր հայրենի երկրամասի իսկական զավակը՝ իր մյուս երեք եղբայրների հետ:

Ուրախ եմ նաև, որ Արցախիկը միակը չէ, նույն նպատակով Արցախուհի է ունեցել մեր դպրոցի արհիկոմի նախագահ Աբրահամյանը, իսկ գյուղում մեզ հետևողները քիչ չեն, շատերի տանը շուտով հինգերորդ մանկան ախորժալուր ճիչը կհնչի…

Այո՛, այն մայրը մայր չէ, ով կարող է, բայց չի ուզում ազգը բազմացնել, այն օջախը հայի օջախ չէ, այն հայն էլ հայ չէ, ով իր հարկի տակ կարող է, բայց չի ուզում ունենալ Անդրանիկ, Գևորգ, Սերոբ, Հրայր…

Կոչ եմ անում բոլոր հայ մայրերին՝ հանուն Արցախի, հանուն հայության, երեխաներ ունեցեք…

«Խորհրդային Հայաստան», մարտ, 1990թ.

ՀԱՅԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Ինչեր ասես, որ չի տեսել իմ ժողովուրդը, ինչ զրկանքներ ու տառապանքներ է կրել, ինչերի է դիմացել և ինչ ասես, որ չի արել օրհասական պահերին… Գերված հայ կինը գրկի երեխային աննկատ խեղդել է, որպեսզի թշնամին չտաներ ու ենիչեր չդարձներ, քանի-քանի աղջիկներ են եղեռնի ժամանակ իրենց անդունդը նետել՝ անպատվությունից խուսափելու համար, փլատակների տակ մնացած մայրը երակի արյամբ է կերակրել բարուրին… Իսկ ահա թե ինչ է արել Սումգայիթից բռնատեղահանված, Սպիտակում ապաստան գտած իմ հորեղբոր հարսը երկրաշարժի ժամանակ՝ երեխային փրկելու համար…

…Ղարաբաղը հայաթափելու գաղտնի ծրագրով բանակից զորացրված երիտասարդներին ուղարկում էին Սումգայիթ, որը մեծամասամբ կառուցվել էր հայերի կողմից: Ամենուրեք հայեր էին՝ ծանոթ-բարեկամներ: Ապրում էին հաշտ ու համերաշխ և ազգային խտրականություն համարյա չէին զգում, մինչև չարաբաստիկ 1988 թվականի փետրվարի վերջին օրերը, երբ «եղբայր» թուրքերը ցեղասպանություն իրականացրին հայաշատ այդ քաղաքում:

Վայրագությունների զոհ դարձան շատերը, մնացածներն էլ բռնի տեղահանվեցին:

Սերգեյ հորեղբորս ընտանիքն էլ 1988թ. մարտի 16-ին Սումգայիթից Բաքու-Երևան ինքնաթիռով տեղափոխվեց Հայաստան: Թշնամուց պաշտպանվելու համար երկու շաբաթից ավելի պատսպարվել էին մի ակումբում, ապրել ահ ու սարսափի մեջ՝ առանց նորմալ սննդի և քնել հատակին:

Փոքր չէր նրա ընտանիքը՝ կինը, որդին, հղի հարսը, երկու տարեկան թոռնիկը և աղջիկը:

Օդանավակայանում նրանց դիմավորեցին սրտացավությամբ և տեղափոխեցին ու տեղավորեցին Աղվերան կենսօթևանում (պանսիոնատում):

Դեռ ուշքի չէին եկել կատարվածից, երբ նոր դժբախտության մեջ ընկան. Սարսափը, ցուրտը, ոչ նորմալ սնունդը կատարել էին իրենց «սև գործը». մարտի 24-ին մահացավ նրանց թոռնիկը՝ փոքրիկ Սերգեյը:

Մանկան մահվան բոթը տարածվեց շենքի բոլոր անկյուններում: Շատերը Սումգայիթից բռնագաղթվածներ էին: Բոլորը ողբում էին: Փոքրիկի մահն ասես ազատություն էր տվել նրանց արցունքներին, առիթ էր դարձել սրտերից դուրս հանելու կուտակված վիշտը, հարազատ քաղաքում զգացածը վերապրելու ցավը:

Երեխայի երիտասարդ ծնողները քարացել էին: Այդ քանի օրն այնքան բան էր կատարվել նրանց աչքի առաջ, այնքան էին վախեցել, որ դեռ ուշքի չէին եկել, և երեխայի մահն էլ համարում էին Սումգայիթում տեսած ու զգացած վայրագությունների շղթայի մի օղակը: Տատը՝ Ռայան, ով երկար տարիներ աշխատել էր կենտրոնական խանութում և ճանաչված էր սումգայիթցի հայերի կողմից, ողբում էր յուրաքանչյուր այցելողի հետ: Պապը՝ բարձրահասակ, թիկնեղ, գեղեցիկ մի տղամարդ, վշտից մի բուռ էր դարձել: Նա զգում էր, որ ինչքան էլ ողբան, երեխային հետ չեն բերի: Պետք էր հուղարկավորել, բայց որտե՞ղ. նրա ծնողները թաղված էին Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղում, պապենական գերեզմանոցում, որը սրբավայր էր դարձել գերդաստանի համար: Կցանկանար թոռան դին ամփոփել հոր ու մոր, եղբոր որդու՝ Լեոնիդի կողքին: Բայց բարբարոսներից հազիվ փրկած երեխայի դիակը նորի՞ց հանձներ նրանց քմահաճույքին: Դեռ նոր էր շարժումն սկսվել, ոչ ոք չէր կարող գուշակել, թե ինչ էր սպասվում Արցախին, և ինչ ավարտ կունենա սկսված արդարացի, բայց անհավասար պայքարը: Նա գրկեց փոքրիկի դագաղը և սկսեց դառը հեկեկալ… Ի՞նչ անել, որտե՞ղ հուղարկավորել փոքրիկին: Այդ ծանր պահին նրան մոտեցավ կենսօթևանի տնօրեն Վարազդատ Օհանյանը և առաջարկեց երեխայի դիակն ամփոփել իրենց պապենական գերեզմանոցում՝ իր հոր ու մոր կողքին: Այդպես էլ արեցին:

Տարիներ են անցել այդ չարաբաստիկ օրերից, ընտանիքը բազմաթիվ փորձությունների է ենթարկվել, ապաստան է գտել Սպիտակում, հետո՝ Քասախում, մահացել է Սերգեյ պապը (թաղված է Քասախի գերեզմանոցում), իսկ փոքրիկ Սերգեյի աճյունը գտնվում է այն սև օրերին գտնված նոր պապի ու տատի կողքին:

Նրանք Աղվերանում երկար չմնացին: Սումգայիթի փախստականների մի մասին Սպիտակում տներ հատկացրին: Սերգեյի ընտանիքն էլ բնակարան ստացավ շենքերից մեկի 4-րդ հարկում: Բնակիչները մեծ

սիրով ու հոգատարությամբ շրջապատեցին նրանց:

Հարևաններն օգնեցին նրանց՝ կենցաղային իրեր տրամադրելով: Հայր ու որդի աշխատանքի անցան գործարանում, կինը՝ թռչնաբուծական ֆերմայում: Վիշտն աստիճանաբար սկսեց ամոքվել, մանավանդ, որ աշնանը հարսը՝ էլզան, արու զավակ պարգևեց նրանց:

1988թ. դեկտեմբերի 7-ին բոլորը սովորականի պես աշխատանքի գնացին: Տանը մնաց հարսը՝ փոքրիկ Էմինի հետ: Նա քնեցրել էր երեխային և տան գործերով էր զբաղված, երբ հանկարծ թվաց, թե գլխապտույտ ունեցավ, հատակը կարծես փախչում էր ոտքերի տակից: Փլվող շենքերի հզոր դղրդյունից միայն սթափվեց և վազեց երեխայի մոտ ու մարմնով ծածկեց նրան: Շենքը նորից օրորվեց և ճեղքվեց: Քաղաքում փոշու ամպեր բարձրացան, մի քանի րոպեում ամեն ինչ հողին հավասարվեց, գետինը ճեղքվեց՝ «կուլ տալով» շենքերն ու շինությունները:

Սերգեյն ու որդին՝ Սաշան, չսպասեցին ընդմիջմանը, հոր սիրտը կարծես գուշակել էր աղետը՝ որդուն վերցրել և դուրս էր եկել գործարանից: Ժամը 10 անց 40 րոպեին էր, երբ հանկարծ ուժեղ դղրդյուն լսվեց, հետ նայեցին ու տեսան, որ գործարանի շենքը հավասարվել էր գետնին: Քաղաքում իրարանցում սկսվեց. ամենուրեք փլվող շենքեր, դղրդյուն, փոշի, վայնասուն: Վազեցին տուն և երբ շենքը կիսավեր տեսան, սարսափահար եղան, մտածում էին, որ հարսն ու թոռը չէին կարող փրկված լինել... Ուժ հավաքեցին, մոտեցան շենքին ու զարմանքից քարացան. հարսն ու թոռը արնաշաղախ կուչ էին եկել բակի ծառի տակ... ինչպե՞ս էին փրկվել...

Բնակարանը շենքի ծայրին էր և բարեբախտաբար կիսականգուն էր մնացել: Ուժեղ ցնցումից քանդվել էին շենքի մի մասը, նաև՝ աստիճանները: Հարսը, երեխան գրկած, սենյակում աջ ու ձախ էր վազում: Նայեց ներքև, տեսավ, որ հնարավոր չէ իջնել, սարսռաց: Արդեն մի երեխա կորցրել էր և երիտասարդ մայրը սկսեց երեխայի համար փրկության ուղիներ փնտրել: Կանգուն մնացած պատի պատուհանից նետեց ջարդված ապակիները, մտածեց պատուհանով երեխային իջեցնել փողոց, քանի դեռ շենքն ամբողջովին չի փլվել: Մի պայուսակ գտավ, երեխային դրեց պայուսակի մեջ, ձեռքի տակ ընկած սավան, պարանի կտորներ կապկպեց իրար, կապեց պայուսակից և սկսեց իջեցնել ցած: Երբ երեխան գլուխը բարձրացնում էր կամ շարժվում, վերևից բղավում էր, և երեխան, կարծես, զգալով վտանգը, լռում էր: Երեխային հասցրեց գետնին: Փոքրիկը սկսեց լացել: Քաղաքում անասելի վազվզուք էր: Ոչ ոք չէր կարող ուշադրություն դարձնել փոքրիկին, ամենքն իրենց կորածներին էին փնտրում: Մոր ձայնը համարյա չէր հասնում փոքրիկին,

իսկ իջնելու ոչ մի հնար չկար: Մայրը որոշեց իջնել մետաղալարերը դուրս ցցված պատերով և իջավ... Տեղ-տեղ գլորվեց՝ կառչելով մետաղե լարերին, մագլցեց ավելի հարմար տեղ փնտրելով, սահեց՝ պոկվող քարերը գլխին թափելով, վնասեց երակները, արյունը խառնվեց քար ու փոշու հետ, վնասեց երեսը, քերծվեցին ծնկները, կոտրվեց ձեռքը, բայց նա ցավ չէր զգում, զգայարանները բթացել էին, միայն երեխայի ճիչն էր կանչում նրան: Եվ 4-րդ հարկից քանդված պատերով իջավ ու հասավ փոքրիկին, գրկեց՝ արյունոտելով նաև նրան:

Ամուսինն ու սկեսրայրն այդպես գտան նրան, օգնություն ցույց տվեցին, երբ պետք է տեղափոխվեին վրան, խնդրեցին փրկարար ծառայությանը երեխայի իրերն ու հագուստները իջեցնել, բայց չկարողացան: Ոչ ոք չէր հավատում, թե ինչպես էր հարսն այդ ավերակներով իջել ներքև, չէին հասկանում, որ մայրական սիրո աստիճաններով էր իջել՝ իր զավակին պաշտպանելու համար:

Որդուն թողնելով հարսի մոտ՝ Սերգեյը շտապեց կնոջ աշխատավայր: Երբ տեղ հասավ, արդեն ժամը 16-ն էր: Հեռվից թռչնապահի տնակը փլված տեսավ, իսկ երբ մոտեցավ, սարսափից քար կտրեց. ցեմենտբետոնե սալիկը ընկել էր կնոջ վրա այն ժամանակ երբ աշխատանքներն ավարտելուց հետո նստել էր էլէկտրական սալիկի մոտ՝ տաքանալու: Երկրաշարժի ժամանակ չէր կարողացել ցատկել ու փախչել: Շենքը փլվել էր նրա վրա, ոտքը ջարդվել էր, իսկ ինքն ընկել էր վառվող սալիկի վրա, որն աշխատել էր այնքան ժամանակ, մինչև հոսանքն անջատվել և սալիկը սառել էր: Միայն կնոջ գլուխն էր բաց մնացել: Ամուսինը հազիվ կարողացավ փրկել կնոջը՝ ջարդված ու այրված ոտքով:

Երկրաշարժից հետո նրանց տեղափոխեցին Քասախի նախկին կալանավայրը, երկու բնակարան հատկացրին՝ տարրական հարմարություններից զուրկ: Հարս ու սկեսուր, մեկի ձեռքը ջարդված, մյուսի՝ ոտքը, մի քանի ամիս շարունակ մեծ դժվարությամբ պահեցին փոքրիկին:

Երանի կլիներ, դրանով նրանց փորձությունները վերջանային. բայց… Քաղաքային կյանքին, 5 սենյականոց ընդարձակ բնակարանին, տաք և սառը մշտական ջրին, առատ ու էժան մթերքներով լցված բանվորական քաղաքին փոխարինել էին նեղ, մութ ու ցուրտ կացարանները, հեռվից բերվող ջուրն ու վառելափայտը, 1992 թվականի գրեթե դատարկ խանութները…

Դա չխանգարեց, իհարկե, որ Սերգեյը իրեն հատկացրած խցերից մեկում ապաստան տար Արցախից բռնագաղթած եղբոր ընտանիքին, հիվանդ կնոջը, հարսին, երեխաներին: 1993 թվականին հարսը նորից

տղա երեխա ունեցավ, բայց հիվանդանոցի աշխատողների անփութության պատճառով փոքրիկը տուն չհասավ, մահացավ հիվանդանոցում: Մի քանի տարի անց, 62 տարեկանում, Սերգեյը, որ ոչ մի հիվանդությամբ չէր տառապում, ոտքի վրա հալվեց ու մահացավ: Նույն ճակատագրին արժանացավ Սումգայիթից բռնագաղթած նրա Վազգեն եղբայրը՝ 67 տարեկանում, եղբոր փեսան՝ Ռազմիկը…

Իրենց բաժին հասած դժվարություններին, աշխատանք չունենալուն՝ շատերը չդիմացան:

Երկար տարիներ Սումգայիթի փախստականների մի խումբ ապրել է Քասախի կալանավայրի խցերում՝ անշուք ու տարիներով չվերանորոգված:

Բայց ի վերջո, նրանցից շատերը, այդ թվում նաև Սերգեյի ընտանիքը, ապահովվեցին նոր բնակարանով, որը կառուցվել է Քասախում՝ բարերարի հովանավորությամբ:

«Զրաբերդ», 2013թ.

ԵՂԵՌՆ

ԻՆՉՊԵՍ ՀԻՇՈՒՄ ԵՄ

Դեռևս 1987թ. մեր՝ Մարտակերտի շրջանի վերին գոտու գյուղերում ազգային զգացմունքների պոռթկումներ էր նկատվում, որը գլխավորում էր մտավորականությունը: Բավական է նշեմ, որ 1987թ. ապրիլի 24-ին որոշել էինք հանդիսավորությամբ նշել Եղեռնի օրը: Այդ կապակցությամբ նախօրոք պատրաստվել էր հատուկ մակագրությամբ հուշաքար, որը պետք էր 23-ի գիշերը տեղադրվեր Վաղուհասի «Թավ» կոչվող տեղամասում՝ Մարտակերտ-Քարավաճառ ճանապարհի կողքին և 24-ին հանրահավաք գումարվեր այդտեղ: Ելույթ ունեի նաև ես, մեր դպրոցի պատմության ուսուցիչ, վաղուհասցի Արամայիս Բեկնազարյանը:

10 տարվա մեջ բազմաթիվ ընդվզումներ տեսած արցախցիներիս համար դա այն տպավորությունը չի կարող ստեղծել այժմ, բայց պատկերացնենք այն պահը, որ Արցախում թուրքամետ Կևորկովի իշխանությունն էր, շրջանում գոյություն ուներ շրջկոմ, շրջխորհուրդ և ՊԱԿ: Եվ ահա, խնամքով, գաղտնի կազմակերպված մեր միջոցառումը չի կայանում: Ինչ-որ մեկը, երևի վախենալով աթոռից, հայտնում է շրջանի ղեկավարությանը, և գիշերը ՆԳ շրջբաժնի աշխատողները գալիս են հուշաքարը տանում Մարտակերտ:

24-ի առավոտյան վաղուհասցի մեր ուսուցիչները հայտնեցին ինձ այդ մասին: Զայրացանք, տխրեցինք, բայց և այդ տրամադրությամբ էլ դասի մտանք: Ես հետս դասարան տարա հանրահավաքին տանելիք «Եղեռնի մասին» ձայնասկավառակը: Դասս սկսեցի զրույցով՝ ցեղասպանության մասին զրույցով, հետո սկսեցինք ունկնդրել «Ադանայի ողբը»... Հոգիս մի քիչ թեթևացավ, որ գոնե մեր դպրոցում այդ օրը մի բան արվում է:

Հանկարծ դպրոցի միջանցքում ոտնաձայներ լսեցի. դուռը բացեցի և ո՞ւմ տեսնեմ՝ շրջկոմի քարտուղարը, շրջժողկրթբաժնի վարիչը և ՊԱԿ-ի նախագահը: Գուշակեցի գալու նպատակը, հետևները մտա ուսուցչանոց: Չէի սխալվել: Ուղարկվել էին խանգարելու մեր միջոցառումը:

Плата коп.

МИНИСТЕРСТВО СВЯЗИ СССР

ТЕЛЕГРАММА

Арагацотн

№ 39

14 сл. 19 го 4 ч. 40 м.

ПЕРЕДАЧА

20 го 18 ч. 40 м.

Номер рабочего места

Автоответ

Передал

Служебные отметки

Категория и отметки особого вида

Куда, кому В/отряд

Квитанция в

Куда

Претензии принимаются в течение 1 мес. со дня подачи.

Фамилия и адрес отправителя (не оплачивается и по связи не передается)

Н. Тагил, типография Свердуполиграфпрома З. 4095—88. Т. 19900000.

-Այսօր, ժամը երեքին ո՞ւր պիտի գնաք:

-Ոչ մի տեղ, ո՞ւր պիտի գնանք,- միամիտ ձևացա ես:

-Ճիշտ չեք ասում, պետք է հանրահավաքի գնաք:

-Իսկ ի՞նչ վատ բան կա այդտեղ, չէ՞ որ ամբողջ աշխարհի հայությունն է նշում այդ օրը,- անկեղծացա ես:

-Գիտե՞ք ինչ, դա մեզ չի վերաբերվում, դա Արևմտյան Հայաստանում է եղել, ասենք Շիրազի հորը սպանել են, նա բողոքում է, մեզ ինչ են արել, պետք չի այդպիսի բաներ անել… (ինչպիսի՜ դատողություն):

Զրույցն ավարտած համարելով՝ ետ գնացի դասարան, որտեղ դեռ սգո մեղեդիներ էին հնչում…

Դպրոցում սպասեցին մի քանի ժամ, հետո ինձ խստությամբ պարտավորեցրին, որ մինչև ժամը երեքը ոչ մի ուսուցչի դպրոցից դուրս չթողնեմ ու գնացին…

Այդ օրը, ճիշտ է, մեր մտահաղացումը չիրականացավ, բայց «գազանն արդեն արձակվել էր»…

Բայց մի տարի հետո, արդեն ոչ ոք չէր կարող մեզ խանգարել կամ արգելել Գանձասարի վանքում եղեռնի զոհերի հիշատակին մատուց-

վող պատարագին մասնակցելու:

Փոխվել էին մարդիկ, փոխվել էր արցախցիներիս մտածելակերպը, ղեկավարների դիրքորոշումը:

Մինչև հիմա պահում եմ Առաջաձորից ուղարկված մորս հեռագիրը.

- Նաիրա՛, չգաս Գանձասար, ճանապարհը վտանգավոր է:

1988թ., ապրիլի 23, ժամը 16:00

Բայց, գուցե առաջին անգամ կյանքում, մորս չլսեցի և այդ վտանգավոր ճանապարհով էլ միացա Գանձասար գնացողներին և ես էլ մոմ վառեցի… առաջին անգամ:

Մեր սերունդը աթեիստական կրթություն էր ստացել, եկեղեցուն, աստծուն չէր հավատում, բայց հիմա ամեն ինչ փոխվել էր, հայացել էինք վերջապես…

Գանձասար ոչ թե պատարագի, այլ ուղղակի էքսկուրսիա էինք գնում միայն, տեսնում օրեցօր քանդվող, սևացած պատերը՝ նորօրյա բազմաթիվ մակագրություններով, անշուք բեմն ու ջարդված տապանաքարերը, շրջում էինք բակում, կանգնում բարձունքին և հիանում բնության հրաշալիքներով… իսկ այժմ՝ պատարագի ենք մասնակցում, պատկերացնում եք, մի տարի առաջ չէինք էլ կարող մտածել այդ մասին…

Շատերն էին ինձ նման առաջին անգամ պատարագի մասնակցում… գաղափարական, քաղաքական և հոգեկան զարթոնք ենք ապրում…

Հավատացած եմ, որ շուտով մեր Գանձասարը կդառնա գործող եկեղեցի և կվերականգնի իր վաղեմի փառքը, իսկ մենք այդտեղ կմկրտենք մեր երեխաներին ու թոռներին… կհայանանք…

1998թ.

ՀԻՇԵՆՔ, ՈՐ ՉԿՐԿՆՎԻ

Ցեղասպանություն… Երևի ոչ ոք այս բառից այնպես չի սոսկա, որքան հայը, որովհետև հայը տեսել է 1915 թ., տեսել է Դեր-Զոր, տեսավ նաև Սումգայիթ ու Բաքու…

Ընդամենը երեք տարի առաջ այս բառը հիշելու, արտասանելու իրավունք չունեինք, երեք տարի առաջ շրջանի պատասխանատու աշխատողները գործուղվել էին մեր գյուղերը, զգուշացրել, պարտավորեցրել, պահանջել, որ հանկարծ չհավաքվենք, չհիշենք, չնշենք ապրիլի 24-ը, որ դա մեզ չի վերաբերվում, մեզ ինչ, թե թուրքերը սպանել են Արևմտյան Հայաստանի հայերին, կամ ասենք Շիրազի հորը սպանել են, դրա համար էլ նա թունոտ բանաստեղծություններ է գրում նրանց մասին, մեզ ինչ են արել, որ…

Այսպես էր պետք մտածել և այսպես էին մտածում, այսպես էին պահանջում և մեզանից: Բարեբախտաբար այդպես չմտածեցին նույն այդ եղեռնից մազապուրծ մնացածներն ու նրանց սերունդները օվկիանոսի այն կողմում, երբ 1988-ի մեր ցույցերին արձագանքեցին իսկույն, ոտքի ելան՝ զորավիգ լինելու մեր շարժմանը: Հլու, կամակատար լսում էինք, խոստանում իրենց պահանջվածի պես վարվել: Այդուամենայնիվ Թարթառի հովտում միտք հղացավ նշել ապրիլի 24-ը, հավաքատեղի ունենալ, հուշաքար դնել, հավաքվել միտինգի, հանձնարարել էին զեկուցագիր կազմել: 1987 թվականի ապրիլի 23-ն էր, ամեն ինչ պատրաստ էր, գիշերը պետք է հուշաքարը կանգնեցվեր, բայց… ամեն ինչ հանկարծ հայտնի դարձավ շրջկենտրոնում և հուշաքարը «բանտարկվեց» (դեռ լավ է, որ մասնակիցները հուշաքարի բախտին չարժանացան): Բազմաթիվ նախատական խոսքեր ասվեցին կազմակերպիչների հասցեին, որ համարձակվել էին առանց շրջխորհրդի գործկոմի հատուկ որոշման հուշաքար կանգնեցնել, կարծես բազմաթիվ հայկական եկեղեցիների, վանքերի, խաչքարերի քանդելը մեր «եղբայրների» կողմից համաձայնեցված էր գործկոմի որոշմամբ: Բայց դրանից հետո կարճ ժամանակում այնքան բաներ կատարվեցին, որ ոչ մեկի համար զարմանալի չէր, երբ 1988 թ.ապրիլի 24-ին մարզի և շրջանի ղեկավարները, աշխատավորական կոլեկտիվները հավաքվեցին Գանձասարում՝ 1915 թ. օսմանյան Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանությունը դատապարտելու:

Այո, հիշելը, չմոռանալն է ճիշտը, մարդկությունը կարիք ունի երբեմն թարմացնելու իր հիշողությունը, որովհետև կշարունակվեն կրկն-

վել նման ողբերգությունները հետագայում:

Ֆաշիստական Գերմանիան, օգտվելով երիտթուրքերի կուտակած «ահավոր փորձից» նրանց անպատժելիությունից, անասելի վայրագություններ կատարեց մահվան ճամբարներում:

Ավաղ, այդ քաղաքականությունը միայն անցյալին չի պատկանում: Ցեղասպանությունը այսօր էլ շարունակվում է մնալ օսմանյան պետության ժառանգորդների քաղաքականության առանցքը, որքան էլ որ ցանկանան ժխտել այդ:

Տակավին գոյություն ունեն ուժեր, որոնց համար ձեռնտու է ոճիրների մոռացումը, այս ուժերին են ապավինում թուրքական պետության ղեկավարները, որոնք ոչ միայն բացարձակապես ժխտում են Մեծ Եղեռնի և մյուս ջարդերի անժխտելի պատմական փաստը, այլ ամբարտավանորեն ցանկանում են համոզել աշխարհին, որ հայերն են հալածել, ջարդել թուրքերին: 1915 թվականի եղեռնական դեպքերի պատճառով մեր 1,5 միլիոն անմեղ ազգակիցները զոհվեցին, խլեցին մեր ժողովրդի երեք հազարամյա պապենական հողերի ահագին մասը, ցիրուցան արին հայերին:

Մինչև այսօր էլ նրանք աշխատում են երկրի երեսից ջնջել, կերպարանափոխել հայ մշակույթի հազարամյա նյութական մշակույթի հետքերը՝ տաճարները, վանքերը, բերդերը, խաչքարերը, որպեսզի ջնջեն հայերի հետքերը պապենական երկրից՝ քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ:

Մենք պարտավոր ենք ամեն տարի ապրիլին վերհիշելու կատարվածը, որպեսզի մարդկությունը իմանա պատմական ճշմարտությունը, չթույլատրի մոռացումը, որպեսզի երբեք չկրկնվի Դեր-Զորը, որպեսզի դրա կազմակերպիչներն ու խրախուսողները գամվեն անարգանքի սյունին, ստանան իրենց արժանի պատիժը՝ ինչպես ֆաշիստները Նյուրնբերգում: Մենք իրավունք չունենք մոռանալու այն հազարավոր այրերին, որոնց զինաթափեցին, ծանր աշխատանքի քշեցին ու գնդակահարեցին, այն կանանց ու աղջիկներին, որոնք անասելի զրկանքների, ստորությունների բռնությունների ենթարկվեցին, գաղթի ճանապարհի այն մայրերին, որոնցից խլում էին զավակներին, որոնք բռնաբարվում էին բազմության առաջ իրենց զավակների զարմացած հայացքների ներքո, այն անմեղ աղջիկներին, որոնք հոշոտվել էին քրդական ավազակախմբերի կողմից, այն հազարներին, որոնց ստիպեցին իրենց ձեռքով գերեզման փորել, մեջը մտնել, այն հազարներին, որոնց ողջ-ողջ այրեցին մարագներում, այն հազարներին, որոնք մահացան ծարավից, սովից, շոգից, վերջապես որբերին, գերիներին, ծախվածնե-

րին, տառապանքներից մարդկային դեմքը կորցրածներին…

Ֆրանց Վերֆելը գրի է առել թուրք սպայի խոսքը.«Դրանք արդեն մարդ չեն, ուրվականներ են, ուրվականներ՝ մարդու քիչ նմանվող…- մեռնում են դանդաղ, խոտ ուտում, ոռնում սովից: Կանայք ձիու կեղտի մեջ չմարսված գարեհատիկ էին որոնում»:

Հիշելով Հայոց Մեծ եղեռնը, գլուխ խոնարհելով անմեղ նահատակների հուշարձանների և հուշաքարերի առջև, մենք պարտավոր ենք բացահայտելու ճշմարտությունը 1915 թվականի մասին, ոչ միայն մեր սերունդների համար, այլև ամբողջ աշխարհի, որպեսզի երբեք չմոռացվի, երբեք ոչ մի տեղ չկրկնվի այն…

«Զրաբերդ», 1991թ.

ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՊԱՏԻԺ ՉԻ ՄՆԱ

Ապրիլի 24... Եղեռն... ցեղասպանություն. Համազգային սուգ աշխարհի բոլոր ծայրերում, մարդկանց անվերջանալի հոսք դեպի Ծիծեռնակաբերդ, երկինք մխրճվող հուշակոթող, անմար կրակ, միլիոնավոր ծաղիկներ՝ միլիոնների հիշատակին, սահմռկեցուցիչ հիշողություններ...

Արյունոտ ապրիլ, դավադիր ապրիլ: Մի գիշերվա մեջ գլխատվեց մեր ժողովուրդը, բանտարկվեց մտավորականությունը, որպեսզի դիմադրություն կազմակերպողներ չլինեն, վերացրին տղամարդկանց, որպեսզի անարգել, սրտներն ուզածի պես վարվեին անօգնական մնացած կանանց, երեխաների ու ծերերի հետ, չէ որ վայրագության, ցավ պատճառելու յուրաքանչյուր նոր մեթոդ խրախուսվում ու գնահատվում էր որպես հիանալի հանցագործություն և տարբեր շրջաններում օրեցօր հնարվում էին տանջանքների նոր մեթոդներ: Դժվար է, իհարկե, հիշելը, իսկ մոռանալը՝ սրբապղծություն, չէ որ պիտի հիշվի, որ այլևս չկրկնվի, որ կատարածի համար արժանի հատուցում պահանջվի...

Փակում եմ աչքերս և մտովի հասնում անցյալ դարասկիզբ, պատկերացնում եմ պատմական հայրենիքից, սեփական օջախներից վտարված իմ ժողովրդին՝ գաղթի ճանապարհին: Ճանապարհը երկար է, անվերջ ու անորոշ, լի վայրագություններով, սարսափներով ու բռնություններով:

Մութն ընկնում է, հոգնած քարավանը կանգ է առնում հանգստանալու: Զինված հրոսակախմբերը հարձակվում են անզեն ժողովրդի վրա, թալանում մինչև վերջին շորը, լլկում կանանց ու աղջիկներին: Ահա նրանց մի մասին խումբ-խումբ լցնում են մարագները և վառում, այդպես հեշտ է ոչնչացումը՝ միանգամից մի քանի տասնյակ հոգի, կարծես ծխահեղձ եղողների մգլահոտն եմ շնչում և վախեցած բացում եմ աչքերս, սթափվում: Ոչ, դա երազ չէ, դա իմ տանջահար ժողովրդի պատմությունն է, որ ամեն ապրիլի վերհիշում եմ ...

Վերհիշում եմ, թե ինչպես են մեր ամոթխած կանանց ու աղջիկներին մերկացրել, քշել քաղաքներով ու ծաղրուծանակի ենթարկել, ինչպես էին ծարավ քարավանը կանգնեցնում գետափին և չէին թույլատրում ջուր խմել, գնդակահարվում էր դեպի գետը գնացողը: Քաղցած գաղթականներին քշում էին հացի փռերի մոտ, որպեսզի հացի հոտից խելագարվեն, տեսնում եմ, կարծես, ճանապարհի եզրերին մնացած հազարավոր ոսկորներ, կանացի երկար հյուսքեր, Դեր-Զորի անապատում պահպանվող գանգերի բլուրը, մեր ականավոր գրողներին, հասարակական գործիչներին, որոնց խելացի գլուխները ջնջխվել են անտառաճանաչ թուրք ասկյարների կողմից, առավել դաժանությամբ խեղդամահ արված մեր հայ քահանաներին, այդ գազանություններից բանականությունը կորցրած մեր Կոմիտասին... Լսում եմ ձիու պես պայտվող տղամարդկանց բղավոցը, գետը նետված, սրի քաշվող մանուկների մայրերի ողբը, լլկված աղջիկների, հարսների հեծկլտանքը, սովահար, մեռնող երեխաների նվվոցը ...

Ծխացող անապատի վերածվեցին երբեմնի ծաղկուն բնակավայրերը՝ ամբողջ Արևմտյան Հայաստանը: Չեմ պատկերացնում այնտեղ մի քար, մի թուփ, մի կիրճ, մի գետ, մամուռի մի կտոր, որ թաթախված չլինի արյամբ, որ վկա չլինի ոճրագործության...

Օսմանյան Թուրքիան, աշխարհի անտարբերությունից քաջալերված, իրականացրեց ցեղասպանություն, ցանկացավ այդպես լուծել «հայկական հարցը», բայց միևնույն է, ինչքան էլ անողոք էր թշնամին, չկարողացավ իրականացնել իր դիվային ծրագիրը: Ճղակոտոր թթենու պես դալար շիվեր արձակեց իմ ժողովուրդը, փյունիկի պես վեր հառնեց մոխիրներից և ապրեց, ապրեց հայրենիքի կարոտով: Այդ կարոտը փոխանցվեց աշխարհով մեկ սփռված նրանց որդիներին, թոռներին, որոնք այսօր արդար հատուցում են պահանջում, պահանջում են, որ աշխարհը ճանաչի հայերի ցեղասպանությունը, որ Թուրքիան խոստովանի աշխարհին իր կատարած ոճրագործությունը և հատուցի իր կատարածի համար:

Թուրքիան անպատկառորեն ձգտում է ժխտել ցեղասպանությունը: Անպատժելիորեն նույնը կրկնվել է նաև դարավերջին Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում ...

Այսօր աշխարհի մի շարք առաջադեմ երկրներում սկսել են ճանաչել հայերի ցեղասպանությունը և վաղ, թե ուշ՝ Թուրքիան ստիպված կլինի հատուցել իր կատարածի համար...

«Զրաբերդ», ապրիլ, 2003թ.

ԵՂԵՌՆ-90
ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ՝ ԱՐԺԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

90 տարի առաջ Օսմանյան Թուրքիան իրականացրեց ցեղասպանություն Արևմտյան Հայաստանում: 1.5 միլիոն հայ ոչնչացվեց, անապատի վերածվեցին ծաղկուն բնակավայրերը, կենդանի մնացածները սփռվեցին աշխարհով մեկ՝ տանելով իրենց հետ հարազատ երկրի, քաղաքի, գյուղի, տան, բակի թթենու, աչքերի առաջ խոշտանգված ու լլկված հարազատների, բարեկամների մասին սահմռկեցուցիչ հիշողությունները:

Այո՛, ամեն ինչ կարողացան խլել նրանցից, բացի հիշողություններից ու կարոտից: Այդ կարոտն էր, որ փոխանցվեց սերնդեսերունդ և այսօր եղեռնվածների որդիների ու թոռների ջանքերով աշխարհի առաջադեմ երկրները սկսել են ճանաչել, արժանի գնահատական տալ այդ ոճրագործությանը:

Ժամանակին հայը հնարավորություն չի ունեցել որպես պահանջատեր միասնաբար հանդես գալու, ի լուր աշխարհի աղաղակելու այդ մասին, իսկ աշխարհը լռել է:

Հանճարեղ Շիրազը եղեռնը համարել է հայոց դանթեական, քանի որ թուրքերի ոճրագործությունները գերազանցում էին Դանթեի պատկերած դժոխքի տանջանքները:

Նա աշխարհի անտարբերությունը համեմատել է քարե սֆինքսների հետ, որոնց առաջ բազմաթիվ մատաղի գառներ են մորթվել, մայրերի գրկում մանկիկ են մորթել, ազգեր են մորթել չի շարժել շուրթը թեկուզ մի վայրկյան:

Տեսավ աշխարհը, Հայոց Եղեռնը ահեղազարհուր
Տեսավ քարաչյա, մի ձայն չհանեց սֆինքսի պես լուռ…

Վիշտս չկիսեց թեկուզ կես կաթիլ քարե արցունքով, Քարե Աֆրիկան, քարե Եվրոպան, Քար Ամերիկան, Քարե Ֆրանսիան, Քարե Իրանը, Քարե Իսպանիան…

Օգտվելով աշխարհի անտարբերությունից՝ Թուրքիան լպիրշաբար հերքում է հայերի ցեղասպանությունը, խեղաթյուրում պատմական դեպքերն ու փաստերը:

Բայց դա անցյալում էր. այսօր արդեն «սֆինքսները զգում են, շարժվում են, խոսում են», խոսել է «Քար Ֆրանսիան», «քար Իսպանիան», «քար Լեհաստանը», Հռոմը, Կիպրոսը, Բելգիան, Հունաստանը-…արդեն 17 երկիր խոսել է, շատերն էլ պատրաստվում են ընդունելու և դատապարտելու ցեղասպանությունը, այնպես որ, վստահ եմ, որ Թուրքիան ստիպված կլինի ոչ միայն ընդունելու ցեղասպանությունը, այլև վերադարձնելու միլիոնավոր հայերի հայրենիքն ու հատուցելու պատճառած վնասները: Դրան հասնելու համար պիտի պայքարենք ազգովի, պիտի շարունակենք աշխարհին ներկայացնել կատարվածն այնպես, որ հոգիներում մեզ նման ցավ զգան, մտովի ունենան այս ապրումները, որ ունեցել են մեր բռնատեղահանվածները, իմանան, որ կարող է նաև տարվա ամենագեղեցիկ, ծաղկաբույր ու կենսալից եղանակը՝ գարունը, մարդկանց համար ոչ թե պայծառ օր, ջերմություն ու ծաղիկներ բերի, այլև ձյուն, որ գետերը կարող են ոչ թե ձյան հալոցքից, այլ երակներից հոսող արյամբ էլ հորդանալ…

Տասնամյակներ առաջ մենք ամեն ինչ չգիտեինք եղեռնի մասին (որտեղի՞ց իմանայինք), ամերիկացի հայուհին նույնպես հեռուստացույցով խոստովանեց, որ առաջ ավելի քիչ բան գիտեր եղեռնի մասին, քան՝ այսօր:

Շատ ժողովուրդներ, իհարկե, չունեն ցավալի հիշողություններ: Մենք մեղավոր չենք, որ մեր պատմության բոլոր էջերն արյունոտ են, և չպետք է մոռացության տանք այդ արյունալի էջերը՝մեր ժողովրդի նկատմամբ կիրառված ոճրագործությունները, պետք է հիշենք և թույլ չտանք որ այլևս կրկնվի, պետք է միշտ զգոն լինենք: Եթե ժամանակին աշխարհը ճանաչեր և դատապարտեր Թուրքիային, չէին լինի այսօրվա Սումգայիթը, Բաքուն, Մարաղան, Կիրովաբադը…

Կգա ժամանակ, երբ աշխարհը կճանաչի հայերի ցեղասպանությունը և կդատապարտի Թուրքիային, դա ոչ միայն Հայաստանին, այլև աշխարհին է հարկավոր, չէ որ շատերն են կրկնում Հիտլերի բառերը.

-Հայերին որ կոտորել են, ո՞վ է հիշում:

Եթե հիշած լինեին, չէր կրկնվի:

«Լուսարար», 2005թ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ

ԳԻՐՔ ՍԻՐԵՆՔ, ԳԻՐՔ ԿԱՐԴԱՆՔ

Փետրվարի 19-ին Վերին Հոռաթաղի Ք.Քոքսի անվան միջնակարգ դպրոցում իսկական տոն էր՝ գրքի տոն, գիրք նվիրելու օր: Օրը տոնական դարձնելու համար ջանք չէին խնայել հայոց լեզվի և գրականության ուսուցիչները, «Գրքասերների» խմբակավարը, գրադարանային խորհրդի անդամները:

Քանի որ 2008 թվականին որոշվել էր՝ որպես մեծ գրքասերի, գրքի տոնը նշել Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը, միջոցառմանը տարբեր դասարանների աշակերտներ ցուցադրեցին տարբեր բեմադրություններ՝ Թումանյանի ստեղծագործություններով՝ «Անիծած հարսը», «Կիկոսի մահը», «Ոսկու կարասը», «Մուկիկի մահը»:

Հետո հերթով բացահայտեցին Թումանյանի՝ գրքերի հանդեպ ունեցած վերաբերմունքն ու խորհուրդները:

Հանդեսի մասնակիցները արտասանեցին գրքի մասին տասնյակ գեղեցիկ բանաստեղծություններ:

Վերջում գրքեր նվիրեցին 1-ին դասարանցիներին, հանդեսի մասնակիցներին և խորհուրդ տվեցին անձնական գրադարաններ ստեղծել, իրար գրքեր նվիրել:

Ես էլ անչափ կապված եմ գրքերին, աշխատում եմ, ինչքան հնարավոր է գրքի հանդեպ իմ սերը փոխանցել իմ աշակերտներին: Պատահական չէ, որ դպրոցում ունենք «Գրքասերներ»-ի նաև՝ «Կազմարարական» խմբակներ, յուրաքանչյուր «վիրավոր» գիրք իսկույն «բժշկվում է » և հասկացվում, որ գիրքը խնամքի, հոգատարության կարիք ունի, ուրեմն պետք է սիրել ու խնամքով վերաբերվել նրան: Նորություն ասած չեմ լինի, որ վերջին ժամանակներս նվազել է գրքի նկատմամբ հետաքրքրությունը: Գիրքն իր տեղը զիջել է հեռուստացույցին, համացանցին:

Լավագույն հայրենասիրական, գեղարվեստական գրքեր ընթերցե-

լու փոխարեն, մարդիկ այժմ իրենց թանկ ժամանակը վատնում են էժանագին հեռուստասերիալներ դիտելով՝ տարվելով օտարամոլությամբ: Կորցնելով ազգային ինքնությունը, յուրացնելով հայերիս բոլորովին անհարիր վարքն ու բարքը, կեցվածքը՝ նորածիններին կոչում են սերիալների հերոսների օտար անուններով:

Շատ գրքեր այժմ խունանում են գրադարաններում կամ էլ լքված, դարսված են տան մի անկյունում՝ ոչ նախկինի պես աչքի ընկնող տեղ:

Բազմաթիվ շքեղազարդ հանրագիտարաններ էլ՝ որպես ճոխության մասնիկ, տարիներ շարունակ անշարժ, կուսական վիճակում նիրհում են շատ մարդկանց գրապահարաններում:

Գիրքը սրբություն է, այն միշտ պետք է ծառայեցնել իր նպատակին: Ոչ հեռու անցյալում, ընդամենը կես դար առաջ գրքի նկատմամբ անչափ մեծ հետաքրքրություն կար: Լավ գիրքը ձեռքից ձեռք էր անցնում, գրախանութներում հերթ էր գոյանում, հերթագրվում էին հանրագիտարաններ գնելու համար, ծանոթ-բարեկամ էին որոնում՝ գրախանութից նոր լույս տեսած գիրքը ձեռք բերելու համար: Գիրք կարդում էին բոլորը՝ ծեծերը, երիտասարդները, դպրոցականները, կարդում էին, ակտիվ քննարկում, վերլուծում, տեսակետ հայտնում:

70-ական թվականներին՝ ուսանողության տարիներին, համարյա ամեն օր դասերից հետո գրախանութ էինք մտնում, նոր գիրք գտնում, որոշ գրքից՝ մի քանիսը միանգամից և նվիրում ընկերներին, ուսուցիչներին:

1000-ից ավելի գիրք ունեի: Ժամանակին Մարտակերտի շրջանի մշակույթի բաժնի վարիչ Արմեն Հովսեփյանը հաշվառում էր անձնական գրադարան ունեցողներին, նրանցից օգտվողներին: Այդ ցուցակում առաջինն իմ անունն էր: Ժամանակին ծորակի ուսանողներից շատերն օգտվում էին իմ հարուստ գրադարանից (այն ժամանակ ուսանողները գիրք կարդում էին, այժմ՝ չէի ասի...):

Երբ պատերազմի ժամանակ վառվեց տունս և ունեցվածքս, ավելի շատ ափսոսում էի գրքերիս համար...

Մեծերից մեկն ասել է. «Իմ մեջ եղած ամեն լավ բանի համար ես պարտական եմ գրքերին»: Ես էլ շատ բանով պարտական եմ գրքերին, որոնց մանկուց եմ սիրել, կարդացել, հրապուրվել: Գիրքն ինձ համար սրբություն է:Գուցե դա ինձ համար գենային հատկանիշ է, կամ գուցե՝ ազգային: Չէ՞ որ մեր նախնիներն էլ գիրքը սրբություն են համարել: Հանճարեղ «Նարեկը» օժիտ էին տալիս աղջիկներիրն, դնում էին հիվանդների բարձի տակ՝ որպես բալասան: Քանի-քանի անգամ են մեր նախնիները փրկագին վճարել թշնամու կողմից գրավված վանքերից

գրքերը հետ գնելու համար: Գաղթական հայ կինը մեջքին փթանոց գիրք է կապել և, ոտաբոբիկ կիլոմետրեր քայլելով, փրկել հայտնի «Մշո ճառընտիրը»: Սայաթ-Նովան պատգամել է. «Գիր սիրե, ղալամ սիրե, դավթար սիրե:»

Դարերով շատ-շատ սրբություններ ենք կորցրել, հայրենիք ունենք գերված, որտեղ ավերվել ու ոչնչացվել են մեր ժողովրդի ստեղծած քարակերտ մշակութային անզուգական կոթողները, գետնին են հավասարեցնում բազմաթիվ շինություններ, օտարաշունչ են դարձնում մեր վանքերն ու շենքերը, բայց ինչ էլ անեն, չեն կարող ջնջել մեր գրքերը, հավիտյան մերը կմնան մեր Խորենացին, Եղիշեն, Նարեկացին, Քուչակը, Թումանյանն ու Իսահակյանը, Շիրազն ու Սևակը, կմնան ու գալիք սերունդներին կհուշեն, որ «թեկուզ մենք փոքր ածու ենք, բայց շատ բան ունենք հիշատակելու»:

Ով չգիտի, որ Դեմիրճյանի «Վարդանանքը» ռազմաճակատում մի գնդի դեր է կատարել, որովհետև կռվող զինվորները, խրամատներում կարդալով վեպի հերոսական դրվագները, բազմապատկված ուժով էին կռվում՝ ցանկանալով նմանվելՎարդանանց ուխտի զինվորներին:

Ռաֆֆին գրել է. «Մի լավ գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ»: Հիրավի՜, քանի՜-քանի՜ երիտասարդներ կլինեն ոգևորված, անձնուրացության մղված հենց Ռաֆֆու կերտած հերոսների՝ Սամվելի, Վարդանի օրինակով, որոնք հանուն հայրենիքի ընդունակ են ամեն ինչի, նույնիսկ ամենահարազատ մարդու՝ մոր սպանությանը: Հենց այդ գիտակցումով էլ Ռաֆֆին պատմական փաստը շեղել է այնպես, որ Սամվելը սպանի ոչ թե խորթ (ինչպես եղել է պատմության մեջ), այլ հարազատ մորը:

Այս հարցում մենք՝ ուսուցիչներս, մեծ առաքելություն ունենք: Ինչքան էլ նվազի գրքի հանդեպ հետաքրքրությունը, միևնույն է, կա մի խավ, որի հետաքրքրությունը գրքի նկատմամբ երբեք չի նվազել: Դա մտավորականությունն է: Ուսուցիչներն ու աշակերտներն ամեն օր առնչվում են դասագրքերի, մեթոդական ձեռնարկների, ծրագրային ստեղծագործությունների բնագրերի հետ: Մենք պետք է կարողանանք այնպես անել, որ մանկուց երեխան սիրի գիրքը, իմանա, որ գրքերն են, որ մեզ կապում են մեր անցյալին, կամրջում մեր անցյալը, ներկան ու ապագան, հաղորդակից դարձնում մեր ժողովրդի պատմության փառավոր կամ արյունոտ էջերին:

Երեխաներին, նրանց ծնողներին պիտի հասկացնենք, որ երեխայի խոսքը սահուն դարձնելու, բառապաշարը հարստացնելու, մտածել սովորելու համար անհրաժեշտ է շատ գիրք կարդալ, քանի որ գրքերը

մեզ ստիպում են մտածել: Դ.Դիդրոն ասել է. «Ոչ մի բանի մասին չեն մտածում միայն նրանք, ովքեր ոչինչ չեն կարդում»:

Հաճախ պետք է աշակերտներին հիշեցնել Սիլվա Կապուտիկյանի հայտնի տողերը.

Գիրք կարդալով, դու գրքերից
Շատ նորանոր բան կիմանաս,
Շատ շատերից, շատ բաներով
Մտքով հեռու կսլանաս...

Իսկ Ե. Չարենցն ասել է. «Օ՜, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր»: Եկեք սովորենք սավառնել այդ տիեզերքում...

«Լուսարար», 2015թ.
«Վերին Հոռաթաղի Ք.Քոքսի անվան
միջն. դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն

«ԵՍ ՄԻ ԱՅԼ ԵՐԿԻՐ ՏԵՍԱԾ ՉԵՄ» ԿԱՄ ՀՈԳՈՒ ՇՐՋԱՓԱԿՈՒՄ, ՀՈԳՈՒ ՔԱՂՑ

Երկու տարի է խախտվել է Արցախ աշխարհի անդորրը: Ինչեր ասես, որ չտեսանք այս երկու տարում՝ Սումգայիթից մինչև շրջափակում... Բայց ամենից սոսկալին, թերևս, մեր սերունդների հոգեկան քաղցն է, որի վերացման համար շատ երկար ժամանակ ու աշխատանք կպահանջվի, քան մյուսների:

Վառելիք չլինելու պատճառով, հարկադիր պարապությունից ձանձրացած, վարորդները գյուղամիջում կանգնում են առավոտից իրիկուն:

Ամեն օր աշխատանքի գնալիս կամ վերադառնալիս անցնում ենք նրանց մոտով և մի տեսակ նեղվում ենք, որ մենք՝ուսուցիչներս, աշխատում ենք, աշխատավարձ ստանում, իսկ վարորդները, որոնք 5-6 երեխաների հայր են, համարյա ընտանիքի միակ կերակրողը, ամիսներ շարունակ ոչ մի կոպեկ աշխատավարձ չեն ստանում:

-Մենք գործադուլ անենք, դուք աշխատեք, ո՞րն է արդարությունը,- ամեն օր կես լուրջ, կես կատակ ասում են նրանք:

Հարգելի՛ վարորդներ, շրջափակման պատճառով հարկադի՛ր գործադուլավորներ, կանցնի որոշ ժամանակ, կառավարության մի հրա-

մանով կբացվեն ճանապարհները, վառելիք կստանաք և կշարունակեք ձեր աշխատանքը: Իսկ ի՞նչ կանենք մենք՝ուսուցիչներս: Քանի-քանի տարի է պետք, որպեսզի վերացնենք մեր սաների «հոգու շրջափակումը». մի սերնդի կյանքն էլ չի բավականացնի նրանց հոգու խորքից ջնջելու, վերացնելու շրջափակման հետ կապված հիշողությունները:

Հասկացե՛ք, ուրեմն, ուսուցիչների հոգում նույնպես գործադուլ է, և եթե լամպերի գործարանի հումքն է վերջացել, կոշիկի գործարանի սոսինձը, ավտոշարասյան վառելիքը, նրանք շուտով կստանան, բայց մենք ինչքան սպասենք մեր պակաս «նյութերին», որպեսզի շարունակենք մեր գործը նորմալ ընթացքով, որպեսզի կարողանանք պատասխանել մեր աշակերտների հարցերին:

Ամենաանբարոյական արարքը նստարանին նստած աշակերտներին խաբելն է, փորձիր խաբել նրան, այնպիսի հարցեր է տալիս (ով է ասել պատերազմի ժամանակ երեխաները շուտ են հասունանում), որ ամաչես հորինածդ ստերից: Իսկ եթե սուտ ասել չենք կարող, խնդրեմ, եկեք միասին մտնենք դասարան և ներկայիս գործող ծրագրերով ու դասագրքերով դաս տանք աշակերտներին: Սկսենք փոքրերին «խաբելուց»: Դասի թեման է Լեբեդև-Կումաչի «Երգ հայրենիքի մասին» բանաստեղծությունը:

Ուսուցիչը պարտավոր է ներածական զրույց ունենալ մեր հայրենիքի, հանրապետության, խորհրդային մարդկանց իրավունքների մասին, հետո արտասանի ու կարդա և տող առ տող բացատրի բանաստեղծությունը:

…Ես նման մի այլ երկիր տեսած չեմ,

Որտեղ մարդը շնչեր այսպես ազատ.

Ուսուցի՛չ, կարողացիր այսօր արցախցի աշակերտին բացատրել վերոհիշյալ տողերի իմաստը, այն երեխայի, որի համար կյանքն ազատ ու լի չէ, որը գիտի, որ հիմա հնարավոր չէ անցնել ոչ թե հարավից մինչև հյուսիս, այլ նույնիսկ հարևան գյուղը կամ գյուղամերձ անտառը հատապտուղ հավաքելու, որի օրն անցնում է տագնապալից:

Ինչպե՞ս վարվել, ասել, որ բանաստեղծության տողերը արցախցիներիս չեն վերաբերվում, մենք մեր երկրի «խորթ զավակներն ենք»… Միայն այդ լիներ… հայրենիքը գովերգող քանի-քանի նմանատիպ բանաստեղծություններ կան մեր դասագրքերում ու ինչպիսի հոյակապ մտքեր:

Հապա մեր բանակի գովքն անող ինչքան երգեր պիտի սովորեն, որտեղ նույնպես աղաղակող հակասություններ կտեսնեն երեխաները: «Մեր բանակը» երգում կարդում ենք՝ «ընդդեմ բոլոր ոսոխների», «ար-

թուն պահակ խաղաղության» և «շինարար աշխատանքի», «ամենազոր ու հաղթական, բանակը մեր սովետական» երեխան արդարացիորեն կհարցնի, թե մի՞թե ոսոխներ չեն մեր խաղաղությունն ու շինարար աշխատանքները (այն էլ աղետի գոտու) խափանողները, եթե մեր «ամենազոր» բանակը զորություն չունի նման ոսոխների ականջը ոլորելու…

«Երգ սահմանապահի մասին» երգում ինչպես բացատրել, ասենք, որ մեր սահմանապահները դրսի սահմանը պահում են, իսկ ներսում՝ ո՛չ, կամ ներսինը ո՞վ պիտի հսկի:

Ինչպես ասենք, որ մեր մարզում ռազմական դրություն է, բայց մեր բանակը չի կարողանում, թե չի ուզում պատշաճ կարգ ու կանոն հաստատել, իսկ գուցե մեր «բարեկամ- եղբայրները» ոչ օդում են, ոչ ծովում, ոչ էլ գետնի վրա, այլ ամոթից գետնի տակ են մտել և անպարտելի են մնում մեր բանակի կողմից:

Կամ մի ուրիշ տեղ՝ «Սովետական բանակ».

Կռիվներում բոլոր-բոլոր,
Տարել ես դու հաղթանակ…

Մի՞թե հանելուկ չէ սա, մինչև ատամները զինված Հիտլերյան Գերմանիայի դեմ հաղթանակ տարած բանակը չի կարող սաստել Աղդամից մի քանի հարյուր թե հազար ելուզակների և անմեղ մարդկանց ազատել գանահարումից…

Իսկ ի՞նչ ենք «շահել», ի՞նչն է հեշտացել ուսուցանելու. օրինակ «Գայլն ու գառը» կարող ենք կենդանի օրինակներ բերել մեր առօրյա կյանքից.

Այստեղ ի՞նչն է գլխավոր,
Ուժեղի մոտ
Միշտ էլ թույլն է
Մեղավոր…

«Դպրություն», 1990թ.
N11 կամ «Բարեկամություն», 14.11.1989. N135

ԳՈՐԾՈՒՄ Է ԴՊՐՈՑԸ, ԿԱՊՐԻ ԳՅՈՒՂԸ

Երկու ամիս է, ինչ դպրոց է բացվել շրջանի ազատագրված Վերին Հոռաթաղ գյուղում, որտեղ սովորում են 70-ից ավելի աշակերտներ:

Ազատագրված գյուղում դպրոց բացելը ժողովրդին համախմբելու, հավատ ներշնչելու, հարազատ վայրերը վերադարձնելու նպատակ ունի: Ամեն ինչ այստեղ այլ խորհուրդ ունի: Սովորական դասի հրավիրող դպրոցական զանգի ձայնը հնչում է որպես ազգահավաքի կոչ, որն ազդարարում է գյուղի վերականգնումը, ժողովրդի հարատևումը:

Օրեցօր ավելանում են աշակերտները: Նրանք գալիս են ուրախ հուզմունքով, նետվում են ուսուցիչների գիրկը՝ արտասվախառն աչքերով, համբուրվում:

-Մեր տունն այնքան չէի կարոտում, ինչքան դպրոցը,- ասում է չորրորդ դասարանցի Մանյա Վանյանը,- ուզում եմ, որ մեր դասարանի 17 աշակերտներն էլ ներկա լինեն, նորից միասին սովորենք ու խաղանք:

Ծնողական կարոտով ենք ընդունում ամեն մի նոր եկած աշակերտի, հավատում ենք, որ կգան բոլորը, ոչ ոք իր կամքով չի հեռացել հայրենի գյուղից, Արցախից: Մենք նրանց այնպես ենք դաստիարակել, այնպես ենք հայրենի լեռնաշխարհի սիրով տոգորել, այնքան ենք երդվել տվել, որ ինչ էլ լինի, երբեք չպիտի լքեն Արցախը, որ երբ բռնագաղթվեցինք և համարյա ամբողջ գյուղով ապրում էինք Բալլուջայում, մի առավոտ դպրոցի պիոներական սենյակի իմ դուռը ծեծեցին, մտան երկու քույրեր և վախվորած ասացին.

-Հորեղբայրս Երևանից եկել է, որ մեզ տանի, թողնում եք, որ գնանք:

Ես արցունքոտ աչքերով համբուրեցի իմ փոքրիկ աշակերտներին, բարի ճանապարհ մաղթեցի, ասելով, որ գնան, բայց երբ նորից գյուղում դպրոց բացվի, իսկույն գան: Եկան, բայց, իհարկե, դեռևս վտանգավոր է գյուղում, ամեն օր գյուղի մերձակայքում ականներ են պայթում՝ վնասելով մարդկանց և անասուններին, տղա երեխաները մտնում են խրամատները, ձեռք են տալիս ամեն ինչի, ինչ թողնված է այնտեղ, իսկ դա վտանգալից է: Առաջին հերթին մեր հոգսը նրանց հետ պահելն է վտանգից: Գրականության դասերին ընտրում եմ այնպիսի թեմաներ, որոնք համահունչ լինեն մեր օրերին: Առաջին օրերին հանձնարարեցի անգիր անել Հովի. Թումանյանի «Ամենից լավ տունը» բանաստեղծությունը, Գևորգ Էմինի «Երեկ, Ղրիմում մի փոքրիկ աղջիկ» բանաստեղծությունը, սովորեցնում ենք, որ, չնայած պատերազմական

գործողությունները դադարել են, բայց փոքրիկ աղջիկը զոհ է դառնում դարանակալ ականի, հետևապես, մենք էլ պետք է անչափ զգույշ լինենք՝ նույն բախտին չարժանանալու համար:

Դպրոցը գործում է, բայց շատ պակասություններ ունի, քանի որ դպրոցով էլ «թուրք է անցել»: Թալանված է ամբողջ գույքը, պոկված են դռները, ջարդված են ապակիները, ծակծկված է տանիքը, փչացվել է դասագրքերի մի մասը, չկան գրենական պիտույքներ, բացակայում են մի շարք առարկաների ուսուցիչներ:

Համոզված եմ, որ կարճ ժամանակում ձեռք կբերվի այդ բոլորը, միայն թե պատերազմը վերջանա, միայն թե գյուղը մերը լինի…

«Զրաբերդ», 1993թ., հունիս

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ԹԵ…

Դպրոց է բացվել ազատագրված Վ. Հոռաթաղ գյուղում, որտեղ սովորում են մոտավորապես հարյուր աշակերտներ: Նրանք բոլորն էլ նախքան գյուղ վերադառնալը սովորել են մեր հանրապետության և Հայաստանի տարբեր դպրոցներում:

Դա ինքնըստինքյան դժվարացնում է մեր գործը, որովհետև տարբեր տեղեր դպրոցն սկսվել է տարբեր ժամանակում, տարբեր է եղել նաև արձակուրդի տևողությունը, մի դպրոցում ծրագիրն ավարտվելու վրա է, մյուսում՝ դեռ անելիքներ շատ ունեն, մի տեղ անցել են հին դասագրքերով, մյուսում՝ նոր, իրար են խառնել 10-ամյա և 11-ամյա դպրոցների համար լույս տեսած դասագրքերը, մի խոսքով՝ քաոսային վիճակ է, և մեզ մնում է հաշվառել տվյալ դասարանի անցածն ու չանցածը, պլանավորելով այնպես, որ մինիմում չափով ուսումնասիրվեն տվյալ դասարանի ծրագրային նյութերն այնպես, որ հետագայում հնարավոր լինի դասավանդել հաջորդ դասարաններում:

Այսքանը դեռ ոչինչ, կա նաև ավելի զայրացուցիչ բան: Չնայած դպրոցի բոլոր աշակերտներին տեղեկանքներ էի տվել՝ անպայման նշելով, որ տվյալ աշակերտը փոխադրվել է, ասենք 10-ամյա դպրոցի 5-րդ, 11-ամյա դպրոցի վեցերորդ դասարանը, շատ աշակերտներ սովորել են իրենց փոխադրված դասարաններից կամ ցածր, կամ էլ բարձր դասարաններում: Հավաքվել են աշակերտներն իրենց դասարանում, նստել են համադասարանցիներն իրար կողքի, բայց տարբեր դասարանների

փաստաթղթեր ունեն, ինչպե՞ս վարվել… ո՞ւմ մեղադրել այստեղ: Երեխաների՞ն, ծնողների՞ն… միայն հմուտ մանկավարժը կարող է իմանալ ճշմարտությունը՝ իր առջև նստած աշակերտի ընդունակություններին, կարողություններին ծանոթանալով, զգալ գոյություն ունեցող ճեղքվածքը աշակերտի անցածի ու չանցածի միջև: Իսկ ես հեռախոսով էի զգացել: Սեպտեմբերին դպրոցահասակ երեխաներիս ուղարկել էի Երևան՝հորեղբոր տանը մնալու ու սովորելու համար:Նարեկը 7-րդում պիտի սովորեր, Նելսոնը քառամյա դպրոցի 4-րդում: Մի քանի շաբաթ հետո, երբ հեռախոսով հետաքրքրվում էի երեխաների սովորելով, ասացին, որ Նելսոնը դժվարանում է մաթեմատիկայից, ինչ հարցնում են, ասում է՝ չենք անցել: Զարմացա, պիտի, որ լավ սովորեր, ի՞նչն է պատճառը, խելոք ընդունակ երեխա է:

-Իսկ որ չորրորդում է սովորում:

-Դպրոցը միայն մեկ չորրորդ ունի,- ասացին:

-Այդ դեպքում նրան տարեք տարրական դպրոցի երրորդ դասարանը:

Այդպես էլ արին, և երեխան սկսեց նորից լավ սովորել:

Իսկ ինչպես կարող էր լավ սովորել Ալիկը, որ փոխանակ 5-րդում սովորելու, 6-րդում է սովորել և զարմանում է, որ հիմա ֆիզիկա չեն անցնում, այնտեղ անցնում էին: Իրան, որ 7-րդի փոխարեն՝ 8-րդում է նստել… ինչ ասեն Աննան ու Հեղինեն, որ մի դասարան ցածր են նստեցրել՝ երևի դասարան կոմպլեկտավորելու համար:

Ինչ անուն տալ սրան բռնագաղթված երեխաների նկատմամբ անտարբերության և անփութության: Մի՞թե տվյալ դասարանի դասղեկը, տվյալ առարկայի ուսուցիչը չի նկատել տարբերությունը:

Անցած տարիներին մեր դպրոցն էլ շատ փախստական երեխաներ էր ընդունել Շահումյանից, Չայլվից, Մարաղայից, Չափարից՝ շատերն առանց փաստաթղթերի: Ես դասագրքերով էի ստուգում, թե տվյալ աշակերտը որ դասարանում պիտի սովորի, երբ կասկածում էինք: Երբ ասում էր 4-րդում է սովորում, վերցնում էի երկու դասարանների դասագրքերը, դնում նստարանին, հարցնում, թե որն է իրենց անցնելիս գիրքը:

Երեխան ճանաչում և իսկույն վերցնում էր իր դասագիրքը: Կամ հասկանում էինք նրանց ակտիվությունից, ֆիզիկական զարգացվածությունից և այլն, մի խոսքով անտարբեր չէինք մեր ոչ մի երեխայի նկատմամբ: Այդպես պիտի վարվեր ամեն մի մանկավարժ՝ ում երեխան էլ որ առջևը նստած լիներ՝ բռնագաղթվածի, թե՝ հարևան-բարեկամի:

«Զրաբերդ», 1993թ., 30 հունիսի

ԴԱՐՁՅԱԼ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերջերս աշխատանքի բերումով եղա Ստեփանակերտում և անցնելով գեղեցիկ վերանորոգված մի դպրոցի շենքի մոտով՝ ցնցվեցի: Շենքի մուտքի ցուցանակի տակ, մաքուր պատին ինչ-որ մեկն «անհամացրել էր» իրեն կամ իր ընկերներին՝ փորագրելով անուններ:

Մտաբերեցի 1993թ., երբ բռնագաղթից հետո վերադարձել էինք ազատագրված գյուղը. գյուղի մուտքի նորակառույց շենքի ճակատին տեսանք թշնամու կողմից արված խայտառակ նկարներ: Այո, թշնամություն է նաև սեփական քաղաքի, փողոցի, դպրոցի հանդեպ նմանատիպ փորագրությունը: Մտածեցի, որ այդ «փորագրողի» դաստիարակության մեջ ինչ-որ մեկը թերացել է: Պակաս մեղավոր չեն նաև մեր դասագրքերը, որոնցից հանվել են դաստիարակչական շատ թեմաներ: Նման «անմահացողներ» կան ամենուրեք, իսկ դրանք սկսվել են անպայման աշակերտական նստարանի քչփորումից: Իսկ ու՞ր է այդ թեմայով գրված գեղեցիկ բանաստեղծությունը.

«Լևոնն ասաց՝. Ասատուր,
Մի սրիչը դեսը տուր»…

Չէ որ այդ դասն անցնելիս այնպես կարելի է դաստիարակել աշակերտին, որ կյանքում նման արարք թույլ չտա:

Առհասարակ, ամեն մի շրջան, դպրոց ունի իր աշխատանքի առանձնահատկությունները, և միշտ չէ, որ հնարավոր է վերադասի ընդունած որոշումները կիրառել հավասարապես բոլորի նկատմամբ:

Մենք՝ ընթերցողներս, կարող ենք մեր առաջարկություններով օգտակար լինել մեր վերադասին՝ որոշումներ կայացնելիս, հետագայում թյուրիմացություններից խուսափելու համար:

Օրինակ, նախատեսված է օլիմպիադաներում հաղթող ճանաչվող աշակերտներին ու նրանց ուսուցիչներին խրախուսել: Սա, իհարկե, շատ ընդունելի որոշում է: Ունենք այնպիսի աշակերտներ, որոնք չբավարարվելով ուսուցչի գիտելիքներով, իրենց հանգստի հաշվին՝ արձակուրդներին պարապմունքների են գնում դասախոսների մոտ: Ինչքան էլ արգելվեն, քաղաքում շատերն են անհատական պարապմունքների հաճախում՝ ոչ միշտ իրենց ուսուցիչների մոտ: Ճիշտ կլինի, արդյոք, որ օլիմպիադայում հաղթելու դեպքում խրախուսվեն նրանց ուսուցիչները: Ստացվում է պարադոքսային իրավիճակ. ծնողը բազմաթիվ դժվարություններ հաղթահարի, խրախուսվի ուսուցիչը: Կարելի է աշակերտը իր գրավորի տակ նշի, թե ո՞վ է իրեն հաջողության հասցնողը.

ուսուցիչը, թե մեկ ուրիշը (կարող է այդ մեկ ուրիշի անունը չնշել):

Ինչպես չգրել, որ տնօրենների շրջանային խորհրդակցությունում վերջերս քննարկվում էին ստուգողական գրավոր աշխատանքների արդյունքները: Նշվեց, որ բոլոր տարրական և ութամյա դպրոցները տվել են 100-տոկոսյա առաջադիմություն, որը մեծ դժգոհությունների, կասկածանքի տեղիք է տվել մյուս տնօրենների մոտ:

Գաղտնիք չէ, որ շրջանի գյուղական միջնակարգ դպրոցներից մի քանիսում սովորում է 30-40 աշակերտ, 8-ամյաներում կլինեն 10-15, տարրականում՝ մինչև 10 աշակերտ, այսինքն յուրաքանչյուր դասարանում՝ 1-2 աշակերտ: Ու եթե նրանք էլ անբավարար գնահատվեն, ինչ կստացվի: Որոշ դպրոցներում ուսուցիչների թիվը գերազանցում է աշակերտների թվին կամ ամեն մի ուսուցչի բաժին է ընկնում 1-2 աշակերտ, դրանց էլ անբավարար նշանակեն: Իսկ եթե նշանակված լինեին, ստացվելու էր 100-տոկոսյա անառաջադիմություն: Ակամայից հիշեցի Իսահակյանի պապի ու թոռան էշով քաղաք գնալու պատմությունը: Պապն է նստում էշին, ամոթանք են տալիս, թոռն է նստում՝ նույնպես, երկուսով են նստում՝ էլի են ծաղրվում, և ստիպված իրենք են էշը շալակած տանում…

Ես սպասում էի, որ քննադատվող տնօրեններից մեկնումեկը կնշեր այս փաստը, բայց ոչ ոք չարտահայտվեց:

Կամ, ասենք, քանիցս գրվել է մասնավոր բուհեր ավարտածների աշխատանքի ընդունման և հեռացման մասին, որը անախորժությունների տեղիք է տալիս դպրոցներում: Ամենավատթարն այն է, որ աշակերտը, ծնողը կորցնում են հավատը ուսուցչի նկատմամբ: Երկար տարիներ աշխատելով նման ձևով աշխատանքի ընդունվող ուսուցիչների հետ, զգացել եմ, որ ծանր ապրումներ են ունենում սեպտեմբերի 1-ին դպրոց չեկող ուսուցիչները և նրանց նախորդ տարվա իրենց դասվարին, դասղեկին, ուսուցչին սպասող աշակերտները:

Այդ հարցն արդեն որոշ չափով շտկվել է մեր դպրոցներում՝ մեծ զոհողություններով: Նրանցից շատերը նորից ընդունվել են Արցախի պետհամալսարանի համապատասխան բաժիններ: Եվ, չնայած ոմանք 7-8 տարվա մանկավարժական ստաժ ունեն, պետք է տարեվերջին նորից ազատվեն աշխատանքից՝ որպեսզի սեպտեմբերին նորից ժամանակավորապես ընդունվեն կամ չընդունվեն: Մի՞թե նշանակություն չունի ստաժը: Նրանց նկատմամբ կիրառվող որոշումը կատարյալ չէ, մանավանդ, որ մեր շատ դպրոցներում ունենք ոչ մանկավարժական կամ միջնակարգ կրթությամբ ուսուցիչներ, որոնց նկատմամբ նման քաշքշուկ չի լինում, (քանի որ նրանք ոչ պետական բուհում չեն սովորել):

Կարծես մասնավոր բուհում սովորելը այնքան մեծ թերություն է, անուղղելի սխալ, որ պետք է ամբողջ կյանքում ուղեկցի նրանց: Չէ՞ որ դեռ խորհրդային ժամանակներում, եթե հեռակա բաժնի 1-ին կամ 2-րդ կուրսի ուսանողը բացառության կարգով աշխատանքի է մտել, նա երբեք տարեվերջին չի կրճատվել:

Առաջարկում եմ, որ այն ուսուցիչները, ովքեր ավարտել են ոչ պետական բուհ, ունեն առնվազն հինգ տարվա մանկավարժական ստաժ, դպրոցի տնօրենի երաշխավորությամբ անարգել շարունակեն աշխատանքը դպրոցում:

«Լուսարար», 2003թ. N3

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

Հոկտեմբերի 20-ը անմոռաց օր էր Առաջածորում. հանդիսավորությամբ նշվեց գյուղի դպրոցի հիմնադրման մեկդարյա հոբելյանը: Հրավիրվել էին տարբեր տարիների շրջանավարտներ: Շատերի գլուխներն արդեն արծաթազօծ էին և պատկառանք էին ներշնչում: Նայելով դահլիճին, մի պահ թվում էր՝ ոչ թե գյուղական դպրոցում է հանդիսությունը, այլ մայրաքաղքի որևէ բուհում գիտաժողով է, որովհետև դահլիճում նստած էին դոկտոր-պրոֆեսորներ, դոցենտներ, գիտությունների տասնյակ թեկնածուներ, դասագրքերի, խնդրագրքերի, հարցաշարերի հեղինակներ, կրթության և մշակույթի աշխատողներ, կառավարության անդամներ և այլ նշանավոր այրեր:

Միջոցառումը բացվեց ՀՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Լենսեր Աղալովյանի ուղերձի ընթերցմամբ: Եկել էին թանկարժեք նվերներով՝ համակարգիչներով, եկել էին իրենց հարգանքի տուրքը մատուցելու հարազատ կրթօջախին, երախտիքի խոսքեր ասելու իրենց ուսուցիչներին, որոնց տքնաջան աշխատանքի պտուղներն են քաղում այսօր, եկել էին տեսնելու իրենց երազների և պատանեկան տարիների քաղցր հուշերի օրրանը:

Ավագ սերնդի համար ներկայիս նոր տիպային շենքը այնքան էլ հոգեհարազատ չէր, որովհետև սովորել էին հին շենքում. նույնիսկ եղան հոբելյանը հին շենքում կազմակերպելու առաջարկություններ: Ո՞րն է գաղտնիքը, որ ոչ շատ մեծ գյուղ մեկ հարյուրամյակում տվել է այդքան նշանավոր մարդիկ: «Մեղքն», իհարկե, ուսուցիչներինն է, որոնց մա-

սին երախտիքի շատ խոսքեր հնչեցին, որոնց մի մասը դարձել է 20-րդ դարի լավագույն մանկավարժ, որոնք իրենց անբասիր աշխատանքով անմահացել են սաների հիշողություններում:

Դպրոցի համար ամենածաղկուն, հեղինակավոր ժամանակաշրջանը 60-80-կան թվականներն էին, մանավանդ, երբ դպրոցը ղեկավարում էին Արիս Պողոսյանը (տնօրեն) և Սերգեյ Ղուլյանը (փոխտնօրեն): Երկուսն էլ հմուտ կազմակերպիչներ էին և գերազանց մասնագետներ:

Այդ տարիներին դպրոցը հանրապետական ճանաչման է արժանացել, հաղթել է հանրապետական մրցությունում՝ ստանալով հաղթողի հուշադրոշ:

Ես բախտ եմ ունեցել դպրոցն ավարտել այդ տարիներին: Բազմաթիվ հանձնախմբեր էին գալիս ստուգումներ կատարելու շրջանից, մարզից, հանրապետությունից:

Դպրոցում երկրորդական աշխատանքներ չկային, ամեն ինչ կատարվում էր ամենայն ճշտությամբ ու բարձր մակարդակով: Ուսուցիչների մեծամասնությունը գերազանց մասնագետներ էին և յուրահատուկ մրցակցության մեջ՝ ում աշակերտները ավելի շատ հաջողություններ կունենան: Եվ ունենում էին:

Դպրոցն ավարտելով՝ շրջանավարտները ոչ միայն լավ գիտեին մաթեմատիկան ու ֆիզիկան, հայոց լեզուն և գրականությունը, աշխարհագրությունն ու պատմությունը, այլև տրակտոր քշել, հաստոցի վրա աշխատել, զենք գործածել, առաջին բուժօգնություն կատարել, բանջարանոց մշակել, կար ու ձև անել, գեղեցիկ գործել, եփել-թխել և այլն:

Դպրոցը աշակերտներին տալիս էր համակողմանի կրթություն, և լավ սովորողների համար դժվար էր կողմնորոշվել, թե որ ուղղությամբ ուսումը շարունակեն:

Ես, որ բոլոր առարկաներից ունեի գերազանց գնահատականներ, դիմել էի ընդունվելու լեզվագրական ֆակուլտետ: Իմ փաստաթղթերում կար գովասանագիր՝ մաթեմատիկայից մարզային օլիմպիադային հաջող մասնակցելու համար, որը դժվարացրեց փաստաթղթերիս ընդունումը. առաջարկում էին ընդունվել մաթեմատիկայի ֆակուլտետ:

Շատ լեզվի և գրականության ուսուցիչներ կարող են նախանձել դպրոցը նույնպես գերազանց ավարտած, ֆիզիկայի լավագույն ուսուցչուհի Վարյա Ավանեսյանի լեզվական գիտելիքներին ու ասմունքելուն:

Դպրոցի աշակերտները հաղթող էին ճանաչվում բոլոր օլիմպիադաներում, մրցություններում՝ լիներ դա մաթեմատիկայի, ֆիզիկայի, լեզվից՝ շարադրության, երգի-պարի, ասմունքի, շաշկու-շախմատի, ֆիզ-

կուլտուրայի, «Փայլակ», «Արծվիկ» խաղերի հաղթող էին ճանաչվում մինչև հանրապետություն, մրցանակներ բերում: Հենց նրանք էլ այսօր դարձել են դպրոցի, գյուղի փառքն ու պարծանքը:

Բոլոր շրջանավարտների անունից սրտանց խոնարհվում եմ Առաջաձորի դպրոցում աշխատած բոլոր վաստակաշատ ուսուցիչների առաջ:

Առաջաձորի դպրոցի ներկայիս կոլեկտիվին ցանկանում ենք այնպիսի հաջողություններ, որ կարողանան վերականգնել դպրոցի երբեմնի փառքը և ավելին. Արցախ աշխարհիս՝ կայուն խաղաղություն, մեր ժողովրդին՝ հարատևություն պապենական հողում, այնպես, որ ռազմական շտաբի չվերածվի ու չավերվի ոչ մի դպրոցական շենք, և որ առաջաձորցի գալիք սերունդները հպարտությամբ նշեն դպրոցի ոչ միայն հարյուրամյա հոբելյանը, այլև՝ հազարամյա...

«Լուսարար», 2002թ., N 11

ՀԱՐԳԵՆՔ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԱՍՏԱԿԸ

Որպես փնջային մեթոդմիավորման նախագահ, վերջերս եղա Մարտակերտի շրջանի Խնկավանի 8-ամյա դպրոցում՝ նոր նշանակված երիտասարդ տնօրենին օգնություն ցույց տալու նպատակով:

Լինելով այդ փոքրիկ գյուղի դպրոցում՝ մեկ անգամ ևս համոզվեցի, որ դպրոցը գյուղի գոյատևման գլխավոր օղակն է, և որ ծայրամասային դպրոցներում աշխատող ուսուցիչների գործունեությունը դաս տալով չի սահմանափակվում: Եթե մեր զինվորները հսկում են սահմանները թշնամուն ետ պահելու համար, ապա փոքր գյուղերի դպրոցների սակավաթիվ ուսուցիչները իրենց ներկայությամբ, մեծ ճիգերով պահում են դպրոցը, համոզված լինելով, որ առանց դպրոցի շատերը կլքեն գյուղը:

Նպատակս Խնկավանի դպրոցի աշխատանքի վերլուծությունը չէ, այլ դպրոցը պահող, տասնամյակներ շարունակ այդ դպրոցում աշխատած, հանրապետությունում և նրա սահմաններից դուրս մաթեմատիկայի լավագույն մասնագետի ճանաչում ունեցող, այսօր ընդամենը 17 աշակերտի մաթեմատիկա, ռուսաց լեզու, երգ-երաժշտություն դասավանդող, XX դարի Արցախի լավագույն մանկավարժներից մեկի՝ Միշա Միքայելյանի խնդրանքը «Լուսարար» թերթում տպագրելն է: Իսկ դա, բնականաբար, դժվարանում եմ անել, որովհետև երբ նա ինձ հրավիրեց

տեսնել իր «տունը», այն, ինչ ես տեսա այդ օրը, այնքան ազդեց սրտիս ու հոգուս, որ երկար ժամանակ չէի կարողանում կատարել նրա խնդրանքը՝ չկամենալով գրել տեսածս, որպեսզի ուրիշներն էլ չիմանան:

Բանն այն է, որ դարի ուսուցիչը ապրում է... գոմում, այո, գոմում /այդպես էլ խնդրեց վերնագրել, բայց ես չցանկացա այդպես գրել/:

Լսել էի, որ ձգձգվում է նրա՝ թշնամու կողմից ավերված տան վերականգնումը, սակայն չէի պատկերացնում, որ նա տարիներով կարող է ապրել գոմում՝ զուրկ կենցաղային տարրական պայմաններից, քանի որ գոմ կոչվածը ընդամենը 3x4մ² մակերեսով, 30x40սմ² պատուհան կոչվող անցքով և 1մ բարձրություն ունեցող դռնով մի շինություն է, որտեղով մտնելիս ամեն անգամ անպայման գլուխդ կխփես դռան վերևի գերանին:

Տուն ծառայող գոմը Միքայելյանի և նրա 40 տարվա ուսուցչուհի կնոջ և՛ խոհանոցն է, և՛ ճաշասենյակը, և՛ ննջարանն ու աշխատասենյակը: «Տուն» մտնողին անսվաղ պատից դիմավորում է մի քանի տարի առաջ մահացած երիտասարդ որդու ծաղիկներով շրջանակված մեծադիր նկարը: Նկարի տակ ալյուրի ու կարտոֆիլի պարկեր են, քիչ հեռու երկու անշուք մահճակալ, ինքնաշեն փայտե մի փոքր սեղան ու գրապահարանի նմանվող ինչ-որ բան, որտեղից մեծ ուսուցիչը հանեց և ցույց տվեց իր նոր աշխատանքները. «Առավել դժվարություն ներկայացնող խնդիրների լուծումը», «Օլիմպիադայի խնդիրների լուծումը», «Ընդունելության քննությունների համար առաջադրված խնդիրների լուծման վերաբերյալ իմ տեսակետները» և այլն...

Նայելով անշուք սենյակին և լսելով 70-ամյա ուսուցչի ծրագրերի մասին, տեսնելով նրա եռանդն ու աշխատասիրությունը, մի պահ ինձ թվաց՝ ոչ թե 21-րդ դարում եմ գտնվում, կես դար մանկավարժական ստաժ ունեցող ուսուցչի տանը, այլ միջնադարում, կիսամութ խցում ճգնող Նարեկացուն եմ տեսնում ստեղծագործելիս...

Ասեմ, որ Միքայելյանի գոմի կողքին գտնվում է նրա երկհարկանի, երբեմնի գեղեցիկ կահավորված 12 սենյականոց տան կմախքը, որի բակով ամեն օր անցնում ու մտնում է...«գոմը»:

Բռնագաղթի ժամանակ նա չի լքել Արցախը, ապաստանել է Ղշլաղ գյուղում և դասավանդել այդ և հարևան Ռև և Խաչեն գյուղերում: Սպասել է տան վերականգմանը, որը նախատեսված էր Վաղուհասի համայնքում վերականգնվող տների ցուցակով, բայց ինչ-ինչ պատճառներով այն չի վերականգնվել: Հետո ստիպված է եղել որոշ ժամանակ լինել Ռուսաստանում /որդու մահվան կապակցությամբ/, այնտեղից վերադարձել է գյուղ ու տեղավորվել «գոմում» և արդեն քանի տարի

է՝ապրում է այդտեղ ու սպասում, թե երբ պիտի վերակառուցեն տունը:

Միքայելյանը ինձ է տրամադրել դիմումների պատասխանների մի մեծ դարս՝ սկսած 1997-ից մինչև 2001 թվականը: Նա դիմումներ է հղել հանրապետության նախագահին, վարչապետին, կրթության նախարարին /Ն. Ասրյանին/, Մարտակերտի շրջվարչակազմի ղեկավարին: Այդ առթիվ 2001թ. մարտի 6-ին «Ազատ Արցախ» թերթում տպագրվել է «Ճիշտ գնահատենք արժեքները» հոդվածը, բայց, իհարկե, թղթից տուն չի պատրաստվում: Յուրաքանչյուր դիմումին պատասխանել են, որ նրա տան վերականգնումը նախատեսված է 1998թ. 1999թ.… 2001թ. ցուցակներում: Կարիք չկա ասելու, որ այդ տարիները պատմության գիրկն են անցել, իսկ Միքայելյանը շարունակում է ապրել «գոմում» և ինձ խնդրել է գրել «Լուսարարին»՝ միգուցե այն իր «մութ խցում լույս տա»…

Դիմումներից մեկի պատասխանում նշվում է, որ 1996թ. պետական ծրագրով նախատեսված ավերված տների վերականգման աշխատանքները կատարելու ժամանակ Միքայելյանի ընտանիքը գյուղում չի եղել /որդու թաղման կապակցությամբ գնացել էին ՌԴ/, բայց չէ որ Միքայելյանը առհասարակ կարող էր գյուղ չգալ, վաստակած հանգիստը վայելեր մայրաքաղաքում միլիցիայի մայոր որդու մոտ: Սակայն եկել է, որպեսզի Խնկավանի 8-ամյա դպրոցի աշակերտները մաթեմատիկայի ուսուցիչ ունենան, որպեսզի ռուսաց լեզվի ուսուցիչ չունեցող դպրոցում 70-ամյա մաթեմատիկայի ուսուցիչը նաև ռուսերեն դասավանդի, որպեսզի դպրոցը, հետևապես և գյուղը գոյատևի, որպեսզի ծորակի ուսուցիչները դժվար լուծվող խնդիրները լուծելու համար այցելեն իրեն…որպեսզի հոգին ավանդի իր հայրենի գյուղում: Մտավախություն ունի, որ կմահանա(գիտի, բազմություն է հավաքվելու), հանկարծ չգան իրեն գոմում տեսնեն:

Խնդրում ենք մեր նախարարության միջամտությունը.հարգենք մեր ընկերոջ խնդրանքը, սրտացավ վերաբերմունք ցուցաբերենք, և, թեկուզ բացառության կարգով, նրա տան վերականգնումը մտցվի այս տարվա վերանորոգման ծրագրերում:

«Լուսարար» 2002թ. N4

ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

Աշնանը դժգոհությամբ ընդունեցինք դպրոցներում ջեռուցման ժամկետի կրճատման մասին նոր որոշումը, քանի որ այն իրագործելը, մանավանդ լեռնային և նախալեռնային շրջանների գյուղերում, անհնար է: Ինչպես կարելի է երեխային նստեցնել ցածր ջերմաստիճան ունեցող դասարանում և նորմալ պարապմունքներ անցկացնել: Եթե անգամ վերարկուով էլ նստեն, միևնույնն է, մատները սառչում են և ստիպված ես լինում մի քանի անգամ ընդհատել գրավոր աշխատանքը, ձեռքերը շփել տալ, որ կարողանան գրիչը բռնել:

Եվ այսպես, ոչ թե մեկ-երկու օր, այլ՝երկու ամիս:

Չգիտեմ ուրիշ տեղ ինչպես, բայց իմ տնօրինության մոտ երեք տասնամյակների ընթացքում մեր դպրոցի տարրական դասարաններում վառարանները դրել ենք հոկտեմբերի վերջին տասնօրյակում և հանել մայիսի 10-ից հետո միայն, քանի որ գյուղը գտնվում է Մռով սարի դիմացը. սարը ձյունելուն պես՝ մեզ մոտ ամեն ինչ ցրտահարվում է, ջրերն էլ գիշերները սառչում են (իսկ ինչ կասի Հաթերքը, որն անմիջապես սարի տակ է գտնվում):

Դասարաններում անտանելի ցուրտ է լինում, պատուհանները թաղանթապատ են, դռների արանքները՝ ճեղքերով, դասարաններում ընդամենը 5-10 աշակերտ: Ցեմենտապատ, ցուրտ դասարանում երեխաներն ինչպե՞ս նստեն 5-6 ժամ՝ առանց ջեռուցման: Եթե ավելացնենք,որ բոլորը չէ, որ հնարավորություն ունեն տաք հագուստ ու կոշիկ գնելու, առավոտները նորմալ սնվելու…

Այս տարի վառարանները տեղադրել ենք նոյեմբերի 1-ից և ձմեռը երկարելու պատճառով ապրիլի վերջին միայն հանեցինք: Ստիպված եղանք մի կերպ վառել տալ վառարանները, քանի որ ջեռուցողի հաստիքը կրճատվել էր:

Այս տարի վեց ամսվա համար մթերված փայտ ունեինք, դա հնարավոր էր անել, ինչ պիտի անենք հաջորդ տարիներին, երբ հինգ ամսվա համար կլինի մթերված փայտը:

Խղճուկ, նվազագույն աշխատավարձ ստացող ջեռուցողի աշխատավարձն ինչ մեծ գումար է, որ նրանից խնայողություն է կատարվում, կամ էլ, մեր անտառները լիքը փայտ: Շատ նորակառույց դպրոցներում փայտ էլ չեն օգտագործում, ջեռուցումը կատարվում է գազի կամ էլեկտրաէներգիայի միջոցով, ուրեմն ինչու՞ երեխաների առողջության հաշվին խնայողություն կատարել. չէ՞ որ նրանք մեր ապագան են, և

պետք է անենք ամեն ինչ, որ առողջ մեծանան:

Բոլոր տնօրենների անունից խնդրում եմ վերանայել այս որոշումը և իրագործել այնտեղ, որտեղ նոյեմբեր և ապրիլ ամիսներին դասարաններում կլինի նվազագույն նորմալ ջերմաստիճան…

Եվս մի խնայողություն՝ երեխաների հաշվին…

Մի քանի տարի է Ամանորյա նվերներ չեն ստանում մեր գյուղերի նախադպրոցական տարիքի երեխաները, չնայած նոյեմբեր ամսին մեզանից պարտադիր պահանջում են ցուցակները՝ ծննդյան վկայականների համարներով և համայնքի ղեկավարի հաստատմամբ: Դրանք ուղարկում են միայն 1-5-րդ դասարանների աշակերտների համար, մինչդեռ, նույնիսկ 1994թ. պատերազմական օրերին նվերներ ուղարկում էին նաև 1-6 տարեկանների համար:

Դպրոցում կամ գյուղում կազմակերպված Ամանորյա հանդեսի ժամանակ անհարմար դրության մեջ ենք ընկնում: Ձմեռ պապը նվերներ է բաժանում երեխաներին, բոլորը սրտատրոփ սպասում են, բայց հենց նրանք, ովքեր ավելի շատ են հավատում Ձմեռ պապի հեքիաթին, մնում են առանց նվերի:

Ստիպված, նախօրոք ծնողների միջոցով նվերներ ենք բերել տալիս, լցնում «Ձմեռ պապի տոպրակը», որ բաժանի երեխաներին: Իսկ ով չի բերում…

Շատ վայրերում հովանավորներ կան, և այնտեղ երեխաները կարող են ստանալ մի քանի նվերներ, իսկ մի՞թե չի կարելի ուրախացնել նաև այն գյուղերի երեխաներին, որտեղ հովանավորներ չկան, ընդամենը մեկ Ամանորյա տոպրակ-նվերով… Խնայողությունը միշտ չէ, որ օգուտ է բերում, մանավանդ՝ դպրոցների հաստիքներում կատարվող կրճատումները:

Տասը դասարան ունեցող դպրոցի 0.5 հաստիքով ուսմասվարը, որն ունի 22 ժամ՝ մեկ դրույք դաս, քանի՞ դաս կարող է լսել և ուսմասվարին հասնող մյուս պարտականությունները նորմալ կատարել:

Մի հարվածով կրճատվեցին դպրոցների այգեպանները.նշվեց, որ պետք է վարձատրվեն այգուց ստացված բերքի հաշվին:

Նախ՝ գյուղացու համար բերք ստանալը կախված է բնության քմահաճույքներից, որի դեմ առայսօր ոչ ոք ի վիճակի չէ պայքարել: Մեկ էլ տեսար ապրիլին առատ ձյուն տեղաց ծաղկած այգիների վրա, և այգեպանի աշխատանքները չքացան: Ոչինչ չես կարող անել կորցրածը ետ բերելու համար: Կամ էլ, եթե ցուրտը չի արել իր սև գործը, կանի կարկուտը կամ երկարատև երաշտը: Ուրեմն, ինչպե՞ս վարձատրել ու պահել այգեպանին, որ այգին կանոնավոր խնամի: Չխնամելու դեպքում

ծառերը կչորանան անպայման, և ստիպված ես նոր ծառեր տնկել: Ո՞ր այգին է, որ 1-2 տարում բերք է տալիս.չէ՞ որ նոր տնկած ծառերը պիտի խնամվեն, պատվաստվեն, ջրվեն, պահպանվեն անասուններից, որ առնվազն 5-6 տարուց հետո բերք տան: 500-ից ավել ծառ ենք տնկել մեր այգում 2005թ. և հանրապետությունում գրավել 1-ին տեղը՝ մրցույթում հաղթելով: Բայց այգեպանը կրճատվել է, ինչպե՞ս պահենք այդ ծառերը, որ բերք տան: Իսկ արծակուրդների՞ն ինչպես պահպանել անասուններից. չէ՞ որ անհրաժեշտ է լինում անընդհատ վերանորոգել ցանկապատը, որ անասունները չմտնեն, չփչացնեն տնկիները:

Հինգ տարի առաջ գյուղից դպրոց տանող ճանապարհի երկայնքով տնկել էինք 300-ից ավելի լորենիներ, ջրել, խնամել, ու բոլորն էլ աճել էին: Այդ ժամանակ այգեպան ունեինք, և ծառերի հսկողությունը հանձնարարել էինք նրան: Այգեպանը կրճատվելուց հետո անասունները փչացրին այդ 300 տնկիները, և հիմա հետքն անգամ չի մնում:

Գիտեմ, որ նոր կառուցվող դպրոց տեղափոխվելու դեպքում, որը հին դպրոցից ու այգուց բավական հեռու է, նույն բախտին է արժանանալու նաև դպրոցի ներկայիս այգին՝ այգեպան չունենալու պատճառով:

Հավաքարարի հաստիքի չափը 600 քառ.մ է՝ բոլոր դպրոցների համար, անկախ նրանից, թե նա քաղաքի եռահարկ շենքի մաքուր միջանցքներն է խոզանակով մաքրում, թե՝ գյուղական միհարկանի դպրոցի միջանցքներն ու դասասենյակները՝ չասֆալտապատված բակով, երբ անմիջապես ցեխոտ ոտքերով մտնում են ներս, և հավաքարարը, նախքան ավլելը, ստիպված է լինում սուր գործիքով մի քանի դույլ ցեխ քերել հատակից, նոր սրբել: Եվ այդքանը՝ 0.75 հաստիքով, քանի որ դպրոցական երկու շենքերի հավաքման մակերեսը 500 քառ. մ է:

Իսկ ո՞վ է համաձայնվում նման ծանր աշխատանքը կատարել չնչին աշխատավարձով, կասեի՝ ոչ ոք: Իսկ առանց հանգստի օրվա 12-13 ժամ աշխատող պահակները հաճույքո՞վ են աշխատում…

Մի խոսքով՝ խնայողությունը խնայողություն, բայց մտածենք նաև աշխատանքի հարմարավետության մասին, մեր երեխաների ապագայի մասին, շռայլ լինենք նրանց նկատմամբ, ոչինչ չխնայենք, որ անհոգ ու ուրախ մեծանան, որ սիրեն իրենց դպրոցը, գյուղը… Արցախը, որ չփախչեն…

«Լուսարար», 2007թ., հունիսի 15, 14-16

ԻՍԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ

1986-87 ուս. տարում Վ. Հոռաթաղի 8-ամյա դպրոցն աշխատանքի էր նշանակվել Բաքվի Մ. Ֆ. Ախունդովի անվան մանկավարժական ինստիտուտի շրջանավարտ, մարտակերտցի Ռիտա Ռազմիկի Աթայանը՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի:

Նշանակման հենց առաջին օրերից նրան մեծ սիրով ու հոգատարությամբ շրջապատեցին աշխատանքային ընկերները, տանտերերը: Կարճ ժամանակամիջոցում նրա համար ստեղծվեցին նորմալ աշխատանքային պայմաններ. նա ամբողջ հոգով նվիրվեց իր գործին:

Շուտով նա արժանացավ աշակերտական, ուսուցչական, ծնողական կոլեկտիվների համակրանքին ու վստահությանը. նրա մասին գովեստի խոսքեր գրվեցին դպրոցական «Մանկավարժ»-ի էջերում: Դա ավելի եռանդավորեց երիտասարդ ուսուցչուհուն, և նա սկսեց էլ ավելի եռանդով աշխատել, ձգտում էր երեխաներին սիրել տալ երկրորդ մայրենին՝ ռուսաց լեզուն, դպրոցում սահմանել էր ռուսաց լեզվի օր, երեխաները սկսել էին սիրով սովորել ռուսերենը, դպրոցական հանդեսների ժամանակ արտասանություններ էին անում ռուսերեն: Նա ինքն էր իր դասարանի աշակերտներով կազմակերպում երեկույթներ, հանդիսավորությամբ նշում տոն օրերը, սովորեցնում էր երգեր ու պարեր, ինքն էլ պարում էր նրանց հետ:

Ավարտվեց ուսումնական տարին: Աշակերտները չէին ուզում բաժանվել սիրած ուսուցչուհուց: Նրանք հաճախ էին այցելում այն տունը, որտեղ բնակվում էր ընկ. Աթայանը, խնդրում էին նրան հաջորդ տարին էլ գալ ու դասավանդել իրենց:

Ամառային արձակուրդների օրերին հոռաթաղցի աշակերտները սրտատրոփ սպասում էին ընկ. Աթայանին, և տեսնել էր պետք, թե ինչպես էին ուրախացել, երբ սեպտեմբերին նորից տեսան Աթայանին: Դպրոցի ամենափոքրերը ուղղակի փաթաթվել էին նրան…

Աթայանը նորից եռանդով լծվեց աշխատանքի: Նա ակտիվորեն մասնակցում էր նաև դպրոցի հասարակական աշխատանքներին, ԼԿԵՄ կազմակերպության քարտուղարն էր, ընտրվել էր արհկոմի նախագահի տեղակալ: Դպրոցի դիրեկցիան անչափ գոհ էր նրա աշխատանքի ոճից, գործընկերները ուրախանում էին նրա հաջողություններով: Սակայն աշակերտների, գործընկերների ուրախությունը երկար չտևեց:

Սեպտեմբերի վերջին նրա «բարեկամները»«հարմար» աշխատանք գտան Աթայանի համար՝ շրջկենտրոնից, հայրական տնից մոտիկ և մի

երեկոյան, երբ նա սիրած աշակերտների տետրերն էր ուղղում, եկան ու տուն տարան նրան:

Շրջժողկրթբաժնի, դպրոցի դիրեկցիայի միջամտությունը չօգնեց, չկարողացան կոտրել բարեկամների, ծնողների կամքը, և Աթայանը ետ չվերադարձավ: Իր դասարանի բոլոր աշակերտները, դպրոցի մյուս աշակերտները հերթով նամակ գրեցին նրան, խնդրում էին վերադառնալ, նոր ուսուցիչ, դասղեկ չէին ցանկանում, բայց՝ ապարդյուն:

Երբ նրա տեղը ռուսաց լեզվի նոր ուսուցչուհի նշանակվեց, երեխաները ըմբոստացան, չէին ուզում դասի նստել, իրենց Աթայանին էին ուզում: Հարկ եղավ դիրեկցիայի միջամտությունը, գործադրվեց մանկավարժական մեծ փորձ՝ երեխաներին զսպելու, նոր ուսուցչուհուն «ենթարկեցնելու» համար:

Իսկ Աթայանը աշխատել էր ընդամենը 20 օր: Որպես ինքնահեռացվածի ազատված է աշխատանքից և մինչև այսօր առանց աշխատանքի նստած է տանը:

Մենք՝ նրա նախկին գործընկերները, սրտի ցավով լսեցինք հունվարյան կոնֆերանսում նրա հասցեին ասված նախատական խոսքերը՝ որպես աշխատանքից ինքնահեռացածի:

Վերադարձի՛ր աշխատանքի, ընկեր Աթայան, դու ունես համառ կամք դժվարություններ հաղթահարելու համար, լսիր քո սրտի ձայնը, գիտենք, քո կամքով չես հեռացել մեզանից, մենք նորից գրկաբաց կընդունենք քեզ…

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՏՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՍԱԿԵՏ

Հաշվի առնելով, որ դպրոցում արևելահայերենի զուգահեռ անցնում ենք տասնյակ արևմտահայ գրողների ստեղծագործություններ՝ միջին և բարձր դասարաններում, իսկ արևմտահայերենն ունի հնչյունական, բառագիտական և քերականական մի շարք տարբերություններ, ուսումնասիրվող տեքստերը ճիշտ կարդալու և հասկանալու համար անհրաժեշտ է դպրոցում ուսումնասիրել նաև արևմտահայերենը:

Դպրոցական գործող ծրագրում արևմտահայերենի ուսումնասիրու-

մը նախատեսված է X դասարանի երկրորդ կիսամյակում, մինչդեռ ինչքան կշահեին և՛ աշակերտները, և՛ ուսուցիչները, եթե արևմտահայերենի համար ուսումնaսիրող նյութն անցնեին արևելահայերենին զուգահեռ՝ սկսած IV դասարանից:

Շատ ուսուցիչներ, իրենք էլ չիմանալով, շրջանցում են արևմտահայ տեքստերի հետ կապված շատ պահանջներ, որովհետև թե՛ դպրոցում, թե՛ բուհերում չեն ուսումնասիրել արևմտահայերենը և եթե X-ում էլ չեն դասավանդում, մնում են անհաղորդակից նույնիսկ տարրական տարբերություններին: Ուստի, առաջարկում եմ արևմտահայերենն անցնել ոչ թե X, այլ IV-VIII դասարաններում՝ արևելահայերենի զուգահեռ: Օրինակ, IV դասարանում հնչյունաբանությունն անցնելիս ավելացնել, որ մեր գրական լեզվի ձայնեղների փոխարեն արևմտահայերենում գործածվում են շնչեղ խուլերը, իսկ պարզ խուլերը դառնում են ձայնեղներ: (Բերել X դասարանի դասագրքի օրինակները՝ բարեկամ-փարեգամ, դուռ-թուռ, գեղեցիկ-քեղեցիգ, պակաս-փագաս և այլն):

Հնչունափոխությունն անցնելիս նշել, որ շատ բառեր արևմտահայերենում չեն հնչունափոխվում /պատիժի, խումբեր, դուռեր, բուրդի/, շատ բառերում նախավերջին վանկի ձայնավորը թուլանում է և զեղչվում /հասկանալ-հասկնալ, պակասել-պակսիլ/:

Բառագիտությունն անցնելիս աշխատել հարստացնել արևմտահայերենի բառապաշարը, սովորեցնել համանիշները, այլապես VII դասարանում արևմտահայերենով տեքստ կա, որի տակ 58 բառի բացատրություն, մի՞թե երեխան ի վիճակի է 1-2 ժամում այդքան անծանոթ բառերի բացատրությունը սովորել, չէ՞ որ դա պետք է արվի աստիճանաբար:

V դասարանում հոլովներն անցնելիս ծանոթության ձևով նշել, որ արևմտահայերենում սեռական հոլովը հոդ է ստանում /« Հացին երգը», «Ցեղին սիրտը»/, որ գերակշռում է ու հոլովիչը, որ անձի, իրի տարբերություն չկա /տեսա քաղաքը, Պետրոսը / և այլն:

Հոդերն անցնելիս նշել, որ արևմտահայերենն ունի անորոշ հոդ՝ մը /մի բան-բան մը /:

Այդպես նշել նաև դերանունների, բայի խոնարհման տարբերությունները, և աշակերտները կկարողանան կատարել պահանջվող առաջադրանքները:

Ցածր և միջին դասարաններում աշակերտները ծանոթանում են մեր առասպելներին, հին պատմիչների ստեղծագործությունների աշխարհաբար թարգմանություններին:

Այլ կերպ հնարավոր էլ չի:

Բայց IX դասարանում ուսումնասիրում ենք հայ հին և միջնադար-

յան գրականությունը և, բնականաբար, աշակերտները պետք է բնագրերին ծանոթանան, կարողանան կարդալ, հասկանալ, պատմելիս մեջբերումներ կատարել գրաբարով կամ միջին հայերենով:

Մեր ծրագրերում և դասագրքերում նույնիսկ տարրական գիտելիքներ չկան այդ մասին մինչև IX դասարանը: Դրանք զետեղված են X դասարանի դասագրքում:

Առաջարկում եմ X դասարանի ծրագրով նախատեսված «Հին հայերեն» և «Հայերենի բարբառները» անցնել VIII դասարանում՝ նախապատրաստվելով IX դասարանում «Հայ հին և միջին դարերի գրականության» ուսումնասիրմանը:

VIII դասարանում նախատեսված 15 ժամը / ոճաբանության ուսումնասիրման համար/ տեղափոխել IX կամ X դասարան՝ ոճաբանության համապատասխան բաժիններում անցնելու:

Այս դեպքում, կարծում եմ, կշահեն և՛ ուսուցիչներն ու աշակերտները, և՛ դասագրքերը, այլապես քերականության դասագրքով ուսուցանվում է ոճաբանություն VIII դասարանում, X դասարանի ոճաբանության դասագրքով՝քերականություն:

Հայոց լեզվի և գրականության գործող 1997 թ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմված ծրագրերում կան անթույլատրելի անուշադրության սխալներ, որոնք, անշուշտ, անփույթ աշխատանքի արդյունք են և կարող են թյուրիմացության մեջ գցել շատ ուսուցիչների՝ կապված ժամաքանակների, պարտադիր ուսուցման և անգիր անելու համար նախատեսված թեմաների միջև:

Հայոց լեզվի ծրագրերի I էջում նշված են ուսումնական պլանի համաձայն 4-10-րդ դասարաններում հայոց լեզվի ժամաքանակները՝ համապատասխանաբար՝ 4, 3, 3, 3, 3, 2, 2, իսկ առանձին-առանձին դասարանների համար, ասենք 12 և 15 էջերում VII և VIII դասարանների համար գրված 2-ական ժամեր, ընդամենը՝ 68, 102 ժամվա փոխարեն:

Առհասարակ, ծրագրերում ժամաքանակների համար նշված թվերը կամայական են, ընդհանուր ժամաքանակի հետ չհամապատասխանող և առանձին թեմաների համար՝ աննպատակահարմար:

Լավ չէ՞ր լինի, բոլորովին թիվ չգրվեր:

Օրինակ IV դասարանում նախատեսված 136 ժամը բաժանված է ներքոհիշյալ ձևով. կրկնություն - 5 ժամ, ուղղագրություն և ուղղախոսություն - 25 ժամ, հնչյունաբանություն - 35 ժամ, կրկնություն - 3 ժամ, բառագիտություն - 46 ժամ: Ընդհամենը ստացվում է 117 ժամ, ու՞ր մնաց 19 ժամը, կամ մի՞թե ուղղագրությունը հնարավոր է անցնել 25 ժամում:

VII դասարանում բաշխված ժամերի գումարը 52 է /4+7+41/ 102 ժամվա փոխարեն: VIII դասարանում ընդամենը 30 ժամ՝ 102-ի փոխարեն / կրկնություն 2 ժամ, բարդ նախադասություն՝ 10 ժամ, կրկնություն- 3 ժամ, կապակցված խոսք՝ 15 ժամ/:

IX դասարանում 68 ժամերից 10 կրկնություն, 58-ը՝ ոճաբանություն, որի բաժինները բաժանված են 10+8+6+14+10, դառնում է ոչ թե 58, այլ՝ 48: 10 ժամը պակասում է: Առանց նախնական հաշիվներ անելու թեմատիկ պլան կազմող ուսուցիչը դասաժամերը բաժանելուց հետո ստիպված պետք է լինի տետրը պատռելու, որովհետև կազմված պլանով ժամաքանակը ոչ թե 68, այլ՝ 58 է դառնալու:

Եթե ինչ որ դիտավորությամբ է այդպես արած /ջեռուցման պատճառով արձակուրդները երկարաձգելու համար/, ապա ինչու՞ X-ում պահպանվում է նույն 68 ժամը ուրեմն, սխալները անփութության պատճառով են, թե չէ, ինչպես կարելի է VIII-ում բարդ նախադասությանը հատկացնել 10 ժամ, կամ IV- ում՝ ուղղագրությանը՝ 25 ժամ:

Նույնպիսի անփութությամբ են կազմված նաև գրականության ծրագրերը:

Այստեղ էլ պարտադիր ուսուցման համար նախատեսված թեմաների մեջ կատարվել են որոշակի փոփոխություններ, կրճատումներ՝ անփոփոխ թողնելով 1992թ-ի ծրագրերով նախատեսված անգիր սովորելու համար ստեղծագործությունների շարքը և ստացվել է այնպես, որ տվյալ ստեղծագործությունը ծրագրով չի նախատեսված, բայց պահանջվում է անգիր անել:

Ինչ խոսք, եթե կան նման ծրագիր կազմողներ, կլինեն նաև այնպիսի ուսուցիչներ որոնք անպայման կհանձնարարեն տվյալ անգիրները, առանց հասկանալու, որ մեխանիկորեն են արտագրված ծրագրի այդ բաժինները:

IV դասարանում նախատեսված 136 ժամվա փոխարեն բաժանված ժամաքանակների գումարը /ըստ թեմաների/ դառնում է 131: IV բաժնում պետք է անցվի 7 թեմա, հատկացված է 3 ժամ /փոխանակ 8 լիներ/: Անգիր սովորելու համար նախատեսված ներքոհիշյալ թեմաները ծրագրում չկան՝ Ն. Զարյան-«Հայերեն», Ավ. Իսահակյան - «Արագածին», V դասարանում՝ Ն. Զարյան- « Հայոց լեզու», VI դասարանում՝ Միք. Նալբանդյան - «Երգ ազատության» / գրված է՝ « Երգ պատմության», Ղ. Աղայան «Հիշողություն», VII դասարանում՝ Հ. Թումանյան- « Հայոց վիշտը», Ավ. Իսահակյան- « Աբու-Լալա-Մահարի», VIII դասարանում՝ Համո Սահյան- «Պտուղդ քաղող չկա»: V դասարանի ծրագրում Համո Սահյանի տեղ գրված են՝ Վիլյամ Սարոյան- « Պապը», « Ան-

տառում»: IX դասարանում նախատեսված է շաբաթական 4 ժամ, ընդամենը՝ 130, փոխանակ 136 լինի:

X դասարանի ծրագրում Ակսել Բակունցին հատկացված է 3 ժամ /փոխանակ՝ 8/: Անգիր են հանձնարարված Մ. Մեծարենցի «Սիրերգը», Համո Սահյանի «Օրը մթնեց», Սիամանթոյից, որն առհասարակ հանված է X դասարանի ծրագրից: Մեխանիկորեն արտագրված են նաև լրացուցիչ ընթերցանության նյութերը 1992 թ. ծրագրից և ստացվել է այնպես, որ X դասարանում Ն. Զարյանի «Երկու հանճարեղ գլուխ» բանաստեղծությունը կա և՛ պարտադիր ուսումնասիրման բաժնում, և՛ լրացուցիչ: Նույնը՝ Մ. Մեծարենցի «Ձմռան պարզ գիշեր», Գուրգեն Մահարու «Մանկությունը», «Պատանեկությունը», Ակսել Բակունցի «Խոնարհ աղջիկը», IX դասարանում՝ Գրիգոր Զոհրապի «Զաբուղոն», «Փոստալը», Նար-Դոսի «Սպանված աղավնին» և այլն: Կամ ի՞նչ կարիք կա Համո Սահյանի «Անտառումը» անցնել և՛ V, և՛ X դասարանում, Գուրգեն Մահարու «Մանկությունը»՝ և՛ VIII-ում, և՛ X-ում:

Անփութություն է զգացվում նաև դասագրքերը կազմելիս:

Հայոց լեզվի դասագրքերը ես կանվանեի բացառությունների դասագրքեր, որովհետև նախորդ հեղինակներին չկրկնելու համար հեղինակը ավելի շատ տեղ է տալիս բացառություններին, առանձին դեպքերին, քան՝ կոնկրետ տվյալ թեմայի գլխավոր հարցերին: Թվում է՝ աշակերտը գլխավորը գիտի, մնում է առանձին դեպքերն էլ իմանա: Օրինակ, ի՞նչ վատ է եղել թվականների՝ որպես բառերի, տեսակներն ըստ կազմության նախորդ դասագրքերում բացատրվածը / թվականներն ըստ կազմության լինում են պարզ, բարդ, ածանցավոր, բարդ ածանցավոր/:

Աշակերտները հեշտությամբ յուրացրել են, համապատասխան վարժություններն էլ կատարել: Ներկա դասագրքում այսպիսի տարբերակում չկա, կա խառնաշփոթություն և կոպիտ սխալ: V դասարանում «Հայոց լեզվի» դասագրքի 119 էջի է կետում նշված է.« Ածանցավոր բոլոր թվականները գրվում են միացյալ բաղադրիչներով» օրինակ՝ տասնմեկ, տասնհինգ, քսաներկու… հիսունհինգ… - երեխային ինչպես բացատրել տասնմեկ, տասնհինգ, քսաներկու բառերի արմատներն ու ածանցները, չէ՞ որ դրանք բարդ բառեր են, ոչ թե ածանցավոր:

Կամ՝ նույն 82-րդ էջում տրված է գոյականի հոլովման տախտակը: Գրքում համարյա ուրիշ գծապատկեր չկա, լավ կլիներ դա էլ չլիներ, որովհետև սխալ է կազմված: Որոշյալ առումի ուղղությամբ գիծ է քաշված, անորոշ առումի ուղղությամբ գրված են ն /ը/ հոդերը: Պիտի հակառակը լիներ:

Սրանք եզակի դեպքեր չեն, սխալներով լիքն են նաև մյուս դասարանների դասագրքերը:

Ինչպե՞ս կարելի է հանդուրժել, որ «Հայոց լեզվի » դասագրքում դասական թվականը գրվի հռոմեական թվանշանով և -րդ մասնիկով: IX դասարանի գրքի 47 էջում գրված է X-XI-րդ, իսկ 48 էջում՝ X-րդ:

Ինչքա՞ն կարելի է երեխային ասել, թե գրքում սխալ է գրված: Չէ՞ որ գիրքը ուսուցանելու համար է, և երեխան թերահավատորեն է լսում ուսուցչին և ընթերցում դասը, գրքում սխալ գրված դասը:

Առաջարկում եմ՝

Հայոց լեզվի դասագրքերը կազմվեն ոչ թե առանձին հեղինակների կողմից, այլ՝ կոլեկտիվ ձևով, քանի որ յուրաքանչյուր նոր հեղինակ նախորդին չկրկնելու համար արհեստականորեն փոփոխում է լեզվի տարիներով իմաստնացած կանոնները, նրանց շարադասությունը, հետ ու առաջ է տալիս թեմայի գլխավոր և երկրորդական մասերը, անտեսվում են ավելի հարմար վարժությունները:

Խմբագրական խումբը թող օգտագործի նախորդ տարիներին լույս տեսած հեղինակների լավագույն շարադրանքները, դիպուկ օրինակները, վարժությունները, գծապատկերները, որպեսզի հեշտ լինի յուրացնելը աշակերտների կողմից:

Այս դեպքում միայն կարող ենք նորից սեր առաջացնել աշակերտների մեջ դեպի մեր դասագրքերը, որոնցից նրանք մի տեսակ խորթացել են վերջին տարիներին:

«Լուսարար», 2000թ.

ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽԹԱՆԻՉ ԳՈՐԾՈՆ

Ստանկավարժությունը դոգմա չէ, այն ստեղծագործություն է պահանջում անընդհատ:

Երկրորդ տարին է, ինչ մեր դպրոցում կիրառում ենք դասի մի յուրահատուկ ձև՝ դաս-մրցույթ: Այն հիմնականում կազմակերպում ենք կրկնողությունների հաշվին: Մրցույթը կազմակերպում ենք ներդասարանական, ներդպրոցական և հարևան դպրոցի զուգահեռ դասարանների միջև:

Դաս - մրցույթի առաջին նախաձեռնողը դպրոցում համատեղությամբ աշխատող (Վ. Հոռաթաղի և Հար-գոմերի դպրոցներում) աշխարհագրության ուսուցչուհի Ռոմելա Ավետիսյանն էր, որը երկու դպրոցների իր աշակերտների միջև հաճախակի մրցույթներ էր կազմակերպում՝ իրար հավաքելով մեկ կամ մյուս դպրոցում:

Հետո աշակերտների ցանկությամբ այն ծավալվեց, պահանջեցին մրցել հայոց լեզվից, ֆիզիկայից, պատմությունից, մաթեմատիկայից:

Դա յուրօրինակ աշխուժություն առաջ բերեց դպրոցներում, աշակերտներն անգիր էին անում դասագրքի բոլոր սահմանումները, գեղեցիկ օրինակներ գտնում, ընթերցում էին լրացուցիչ գրականություն, կազմում էին հարցեր, օգտագործում «Հետաքրքրաշարժ հայոց լեզու», «Հետաքրքրաշարժ աշխարհագրություն», «Հնարամիտների աշխարհում» և այլ գրքեր, յուրաքանչյուր դասարան ձգտում է ընտրել այնպիսի հարցեր, որ անպայման հաղթանակ տանի մրցությունում:

Զարգանում է աշակերտների ինքնուրույնությունը, մրցությունում ուսուցիչները չեն միջամտում, հերթականությամբ իրար հարցեր են տալիս (5 ական), սխեմաներ են գծում, նախադասություններ վերլուծում, խնդիրներ լուծում: Մրցությունը, ճիշտ է, աշակերտների նախաձեռնությամբ, պահանջով է լինում, բայց կազմակերպվում, հսկվում է դպրոցի ղեկավարության, ուսուցիչների կողմից, ժամկետ որոշվում, համաձայ-

նեցվում հարևան դպրոցի նույն դասարանի, դասավանդող ուսուցչի հետ: Հարևան դպրոցը մրցության գնալիս, նրանց ուղեկցում են դասարանի դասղեկը, առարկայի ուսուցիչը, ավագ պիոներ ջոկատավարը: Մրցությունից հետո ընդհանրացնում ենք արդյունքները, հաղթող դասարանն ու առավել աչքի ընկնող աշակերտները պարգևատրվում են գրենական պիտույքներով, հյուրընկալողը հյուրասիրում է քաղցրավենիքով, հետո երգում են, արտասանում, մտերմանում, ընկերանում:

Իհարկե, լինում են նաև վեճեր, ոչ մի ուսուցիչ չի ուզում իր դասավանդած աշակերտներին պարտված ճանաչել, եթե մի անգամ պարտվում են, աշխատում են հաջորդ հանդիպմանն անպայման հաղթել:

Տարեվերջին կրկնողությունների և քննությունների ժամանակ պարզվել է, որ դաս-մրցույթներն իրենց դրական արդյունքն են տվել, այն առարկաներից, որոնցից մրցություններ էին կազմակերպվել, քննություններին զգացվեց: Օրինակ 11-րդ դասարանի միջև երկու անգամ մրցություն էր կազմակերպվել, որին երկու դպրոցների աշակերտներն էլ պատրաստվել էին մեծ հետաքրքրությամբ (ուսուցչուհիներ Գ. Գրիգորյանը և Ռ. Ավետիսյան) պատահական չէր, որ Նինա Միրզոյանը (Վ. Հոռաթաղի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի), քննություն հանձնելով ֆիզիկայից, իր գեղեցիկ պատասխաններով հիացրեց քննական հանձնաժողովի անդամներին: Այսպիսով, մրցությունը, և խթանիչ դեր է կատարել մեր դպրոցի ուսումնա-դաստիարակչական աշխատանքներում, և միաժամանակ օգնել է շեղելու երեխաների ուշադրությունը տագնապալից դեպքերից, հետաքրքիր է դարձրել նրանց անուրախ առօրյան: (Իմիջիայլոց, մրցությունով հետաքրքրվում էին և շատ ծնողներ երկու գյուղերի, հպարտանում աչքի ընկնող իրենց երեխաներով):

Մրցությունը խթանիչ դեր է կատարել նաև ուսուցիչների աշխատանքում: Ուսուցչի աշխատանքը «դուրս է եկել» դասասենյակի պատերից, հետևապես նա զգաստացել է, ավելի եռանդուն է աշխատում, չէ՞ որ աշակերտի յուրաքանչյուր լավ ու վատ պատասխանը առաջին հերթին իր ուսուցչի գնահատականն է: Գովեստի է արժանի մեր դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Անուշ Ավանեսյանի աշխատանքը, որի դասավանդած դասարանների աշակերտները մրցությունում միշտ հաղթող են եղել: Այո՛, լավ ուսուցչի աշխատանքը երբեք ապարդյուն չի անցնում, որտեղ կա նվիրված, խելացի կազմակերպված աշխատանք, այնտեղ արդյունքը միշտ էլ գոհացուցիչ կլինի:

Ցավոք, բոլոր ուսուցիչների աշակերտները չեն, որ վստահ են իրենց գիտելիքներին. ժամանակն է նման ուսուցիչներին էլ սթափեց-

նելու՝ աշակերտին խոր ու կայուն գիտելիքներ հաղորդելու համար:

Որպես փնջային մեթոդմիավորման նախագահ՝ նոր ուսումնականի շեմին խորհուրդ կտայի հնարավորության սահմանում մասսայականացնել դաս-մրցությունը հարևան դպրոցների միջև և, փնջային մեթոդմիավորման նիստերն էլ անցկացնելիս, ոչ թե օգտագործել միայն ավանդական բաց դասը, այլ նաև՝ մրցությունը՝ բացահայտելու համար, թե նույն առարկայի որ դպրոցի ուսուցիչը ինչպիսի գիտելիքներ է հաղորդել իր աշակերտներին:

Դրանով ավելի կբացահայտենք մեր առավելություններն ու թերությունները և կաշխատենք սովորել չիմացածը, հաղթահարել անտարբերությունը և միևնույն ժամանակ ուսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի կառնենք նրա աշակերտների փաստացի գիտելիքները, փնջային մեթոդմիավորումների կարծիքը:

Կբացառվի ուսուցչի աշխատանքը միանձնյա գնահատումից և ավելորդ խոսակցություններից՝ կոլեկտիվներում: Իսկ փնջային մեթոդմիավորումների կարծիքը կհասցվի ժողկրթության շրջանային բաժին, լավ ուսուցիչը ճանաչում կստանա իր աշխատանքի արդյունքով՝դասավանդած աշակերտների գիտելիքներով:

«Ջրաբերդ», 1990թ., օգոստոս

ՃԻՇՏԸ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ Է

Աշակերտների պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է դպրոցներում վերականգնել նախկինում գոյություն ունեցող բանավոր քննությունները: Սկսած 4-րդ դասարանից մտցնել բանավոր քննություն հայոց լեզվից, գրականությունից, կարդալ-վերլուծել, արտասանել, պատմել, տեքստ ու բառեր բացատրել:

Այդ քննությունները չկրեն ձևական բնույթ, հարցատոմսերը դպրոց հասնեն ոչ թե քննություններից 3 օր առաջ, այլ ամենաուշը՝ մարտի արձակուրդներին:

Աշակերտներն իրենց ձեռքով գրեն, կրկնեն, սովորեն բոլոր հարցատոմսերը, տարվա մեջ թերացած, անգիր չարած, չյուրացրած դասերն էլ յուրացնեն, քննություն հանձնեն ու նոր փոխադրվեն հաջորդ դասարանները:

«Լուսարար» 2001թ.

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՂԱՎՆԻԻ» ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Չորրորդ դասարանի ուսումնական ծրագրով Ն. Զարյանի «Խաղաղության աղավնին» և «Հայրենի տուն» բանաստեղծություններին հատկացված է վեց դասաժամ: Սկզբում հետևյալ հարցերի օգնությամբ աշակերտներին նախապատրաստում եմ դասին.

-Ե՞րբ է սկսվել Հայրենական մեծ պատերազմը:

-Ինչո՞ւ է կոչվում հայրենական:

-Ինչո՞ւ է կոչվում համաշխարհային:

-Ի՞նչ վնասներ է պատճառել պատերազմը մարդկությանը:

-Ինչքա՞ն զոհեր են ունեցել Սովետական միությունը, մեր մարզը, շրջանը, գյուղը:

Աշակերտները պատասխանում են հարցերին, մանավանդ, որ նախորդ դասը ծրագրով Դ.Դեմիրճյանի «Մեծ սիրտն» էր, և նրանք այդ հարցերի մի մասի պատասխաներն արդեն գիտեն: Ապա ինքս ամփոփում եմ հարցերի պատասխանները, խոսում պատերազմի, միջուկային զենքի ստեղծման, առաջինը գործադրելու, պատճառած աղետների մասին և աստիճանաբար անցնում Խաղաղության համաշխարհային կոնգրեսին: Ասում եմ, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհի առաջադեմ մարդկության ներկայացուցիչները հավաքվում են համաժողովի: Նրանց մեջ էր նաև հայ բանաստեղծ Ն. Զարյանը: Համառոտ կենսագրական տեղեկություններ եմ տալիս Ն. Զարյանի մասին, նշում նրա ավանդը մեր գրականության մեջ:

Պրագայի կոնգրեսում յուրաքանչյուր հռետորից հետո պատգամավորներին ողջունելու համար բեմ են բարձրանում Չեխոսլովակիայի տարբեր շրջաններից եկած ժողովրդական պատվիրակությունները, Պրագայի դպրոցականները: Մի փոքրիկ աղջիկ, տիկնիկը գրկին, հազիվ լսելի ձայնով դիմում է դահլիճին.

-Ես խնդրում եմ ձեզնից, որ դուք պահպանեք խաղաղությունը ինձ և իմ տիկնիկի համար:

Այս դեպքն էլ հենց առիթ է դարձել գրելու «Խաղաղության աղավնին» բանաստեղծությունը: Արտասանում եմ բանաստեղծությունը, հետո կարդում և բացատրում նոր բառերը, հանձնարարում կարդալ սովորել:

Հաջորդ դասն սկսում եմ ամփոփելով՝ նախորդ ժամի հարցերին ավելացնելով մի քանիսը.

-Ո՞վ է գրել այս բանասատեղծությունը:

-Ո՞վ է Ն. Զարյանը, նրա ո՞ր ստեղծագործություններն եք կարդացել:

-Ի՞նչն է առիթ հանդիսացել գրելու այս բանաստեղծությունը:

-Ի՞նչ է նշանակում կոնգրես, ե՞րբ է եղել Պրագայի կոնգրեսը…

Ամփոփելուց հետո հարցնում եմ կարդալ՝ մասնակից դարձնելով ողջ դասարանին:

Կարդացող աշակերտներին ընկերների կողմից տրվում են հարցեր /տարեթվեր, բառերի բացատրություն, հատուկ անունների գրություն, հնչյունափոխված բառերի դուրս բերում և այլն/: Հանձնարարում եմ անգիր սովորել բանաստեղծության կեսը:

Հաջորդ դասին նորից ամփոփում եմ և հարցնում արտասանել, հանձնարարում եմ մյուս կեսը ևս անգիր սովորել: Սովորաբար աշակերտների մեծ մասը միանգամից է անգիր սովորում բանաստեղծությունը:

Չորրորդ ժամին ստուգում եմ տրված հանձնարարությունների կատարումը: Աշակերտները բանաստեղծություններ են արտասանում խաղաղության մասին, մի քանի նմուշներ էլ ես եմ արտասանում Իսահակյանից, Զարյանից, Սևակից, Շիրազից, աշակերտների հետ զրուցում եմ խաղաղության մասին, փորձում եմ պարզ ու մատչելի օրինակներով ցույց տալ, թե ինչ նշանակություն ունի խաղաղությունը մարդու համար, նախապատրաստում եմ շարադրության՝ «Մենք խաղաղություն ենք ուզում» վերնագրով: Տալիս եմ մի քանի հարց-առաջադրանքներ, որոնց պատասխաններից ստացվում են փոքրիկ շարադրություններ:

Նրանց ներկայացրած շարադրություններում կարդում եմ գեղեցիկ մտքեր, մանկական անմեղ խոսքով խաղաղության գովք:

Այսպիսի նմուշները, ճիշտ է, գրված են իմ օգնությամբ, բայց անընդհատ կարդացվելով, լրացվելով, կդառնան նաև նրանցը, նրանց համոզմունքները: Դա այն ուղիներից մեկն է, որով ես պետք է հասնեմ տվյալ թեմայի ուսուցման բուն նպատակին՝ երեխաների գիտակցությանը հասցնել, որ աշխարհի ժողովուրդներին խաղաղություն է պետք:

«Հայոց լեզուն և գրականությունը» դպրոցում, 1987թ.

ԻՆՉՊԵՍ ԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ «ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՏՈՆԸ»

Հայկական բարձրավանդակում ապրած հնագույն շատ ցեղերի նման պատմության ասպարեզից կանհետանար նաև հայ ժողովուրդը, եթե դարերի ընթացքում չպահպաներ իր լեզուն, չզարգացներ մշակույթը: Այս գործում մեծ է մայրենիի ուսուցիչների դերը, որովհետև մեզ է վստահված երեխաների առջև բացել հայերենի գանձարանը, սովորեցնել նրանց սիրել, պահպանել ու հարստացնել մեր լեզուն, ինչպես արել են մեծն Մաշտոցն ու նրա աշակերտները, Նարեկացին, Աբովյանը, Ռաֆֆին, Չարենցը, Սևակը…

Հենց այս նպատակով էլ դպրոցներում պետք է կազմակերպել «Մայրենի լեզվի տոն»՝ ընդգրկելով մեր լեզվի պատմությունը, շեշտելով նրա հարստությունն ու ճոխությունը, գեղեցկությունն ու պարզությունը, մեջբերելով անվանի շատ մարդկանց ասույթները: Տոնը կարելի է կազմակերպել տարբեր ձևերով: Սկզբում ես այն զուգակցում էի «Այբուբենի տոնին», պատմում հայոց լեզվի ծագման ու զարգացման ընթացքի մասին, հետո առաջին դասարանցիներն են հանդես գալիս, որոնց շարունակում են բարձր դասարանցիները՝ իրենց սովորած բանաստեղծություններով, երգերով նշանավոր մարդկանց ասույթներով:

Հանդեսը հետաքրքիր անցկացնելու համար ես ընդհանուր տետրում գրի եմ առնում հայոց լեզվի մասին գեղեցիկ բանաստեղծություններ, ասույթներ, հանելուկներ, առածներ, ասացվածքներ, բառերի հետաքրքիր ստուգաբանություններ և այլն:

Նյութերի հավաքման գործում ինձ շատ են օգնում «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» հանդեսը «Գրքերի աշխարհ» թերթը, Հենրիկ Հարությունյանի «Հետաքրքրաշարժ հայոց լեզուն», Պետրոս Բեդիրյանի «Բառերի խորհրդավոր աշխարհից», Սերգեյ Աբրահամյանի «Հայոց լեզու, բառ և խոսք», Լևոն Հախվերդյանի «Զրույցներ լեզվի մասին» և այլ գրքեր ու հանդեսներ:

Լեզվին նվիրված հանդեսը կազմակերպում եմ գրական-երաժշտական կոմպոզիցիայի ձևով, մոտավորապես ներքոհիշյալ պլանով.

1. Լեզվի դերը հայ ժողովրդի կյանքում:
2. Հայ գրերի ստեղծման պատմական ժամանակաշրջանը:
3. Մ. Մաշտոցը հայերեն տառերի ստեղծող: Անվանի մարդկանց ասույթները Մ. Մաշտոցի և նրա ստեղծած այբուբենի մասին:
4. Հոկտեմբերը և հայոց լեզուն:

5. Գրաբարից մինչև աշխարհաբար:

6. Հայերենի 2 տարբերակները՝արևելահայերեն և արևմտահայերեն:

7. Հայերենի բարբառները:

8. Փոքրիկ բեմականացում՝ խոսքի մասերի վերաբերյալ:

9. Հետաքրքիր փաստեր, թվեր, առածներ, ասացվածքներ, օգտակար խորհուրդներ, բառերի, անունների ստուգաբանություններ և այլն:

Հայկական երաժշտության ախորժալուր հնչյունների հետ բացվում է վարագույրը: Բեմի կենտրոնում փակցված է Մ. Մաշտոցի նկարը, կողքին՝ հայոց այբուբենն է: Մաշտոցի նկարը աղեղնաձև շրջապատել են հայ անվանի գրողների նկրները: Բեմի առաջնամասում փակցված է նշանաբան. «Սիրենք ու պահպանենք հայոց լեզուն»: Բեմի վրա աղեղնաձև դրված են փոքրիկ սեղաններ ու աթոռներ: Դադարում է երաժշտությունը: Բեմ է մտնում ճերմակազգեստ մի փոքրիկ աղջիկ՝ արտասանելով «Սիրում եմ քեզ, հայոց լեզու, մայրիկիս պես անուշ ես դու…» բանաստեղծությունը և նույն սահուն քայլերով էլ դուրս գնում: Ապա բեմ է մտնում մի ասմունքող և հանդիսավոր արտասանում Ն. Զարյանի «Հայոց լեզու» բանաստեղծությունը: Հնչում է կարճատև երաժշտություն: Բեմ են դուրս գալիս 10 աշակերտներ՝ փառաբանելով հայոց լեզուն: 8-ը նստում են աղեղնաձև դրված աթոռներին, իսկ 2-ը հանդեսը վարողներն են: Վերջիններս ծանոթացնում են հանդիսատեսներին հայոց լեզվի ծագման, տառերի ստեղծման ծանր ու բախտորոշ ժամանակների, հայ ժողովրդի աննկուն կամքի և հայոց լեզվի դերի մասին այդ գոտեմարտում ու նորից միասին կրկնում՝ «Կկորչեինք, եթե ճամփին չբոցկլտար հայոց լեզուն»: Ասմունքողը բեմ է մտնում, ձեռքը պարզում դեպի մեսրոպյան այբուբենը և արտասանում «Մեր մեսրոպյան այբուբենը»: Հաղորդավարները ներկայացնում են Մաշտոցի գործունեությունը՝ իբրև տառեր ստեղծողի, ուսուցչի ու թարգմանչի, ով կազմել է առաջին հայերեն «Այբբենարանը», հայերեն տառերով գրել առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Արտասանում են Պ. Սևակի «Այո, մենք կայինք նրանից առաջ», Մ. Ռիժկովի «Մ. Մաշտոցին» բանաստեղծությունները, հաղորդավարները դիմում են նստած աշակերտներին, գիտե՞ն, արդյոք, ի՞նչ են ասել նշանավոր մարդիկ Մ. Մաշտոցի և հայոց լեզվի մասին:

-Ինչպես չէ,- պատասխանում են աշակերտները և հերթով նշում գերմանացի գիտնական, հայագետ Մարկվարտիի, հունգարացի բանասեր, դոկտոր Էդմոնդ Շյուցի, Լեոյի, Դ. Վարուժանի, Գ. Սևակի, Էդ. Աղա-

յանի խոսքերը: Ասմունքողը արտասանում է Լյուդվիգ Դուրյանի «Մաշտոց» պոեմից մի հատված:

Հաղորդավարները համառոտակի տեղեկություններ են տալիս մեսրոպյան այբուբենով ստեղծված առաջին աշխատությունների, թարգմանությունների, հին գրական լեզվի՝ գրաբարի՝ որպես հարուստ ու զարգացած լեզվի, միջին հայերենի, աշխարհաբարի առաջացման, գրապայքարի մասին: Բեմ են մտնում տարբեր ժամանակաշրջանների ազգային տարազներով երեխաներ, ասմունքում գրաբարով, միջին հայերենով, աշխարհաբարով: Մի պահ փակվում է վարագույրը: Լսվում է երաժշտություն: Բացվում է վարագույրը: Նույն տեսարանն է, միայն թե ավելացել է «Բայց լենինյան ծովին հասավ մեսրոպատառ հայոց լեզուն» նշանաբանը: Հաղորդավարները սկսում են զրույց, թե հոկտեմբերը ինչ բարերար ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի, ուրեմն և հայոց լեզվի վրա, որ այն վերջնականապես ազատվեց օտար լեզուներին կուլ գնալու սպառնալիքից, հարստացավ նոր բառերով, հանդես եկան անվանի շատ լեզվաբաններ և այլն:

Երեք ասմունքողներ միաժամանակ դուրս են գալիս և հերթով արտասանում «Խոսք իմ որդուն», «Իմ հայ լեզու, իմ մայր լեզու», «Ժամանակի ակունքներից ես գալիս» բանաստեղծությունները:

Հաղորդավար - Իսկ գիտե՞ք ինչ են ասել 1985թ. Երևանում կայացած հայ արվեստին նվիրված միջազգային հերթական գիտաժողովի մասնակիցները հայերենի մասին:

Նստած աշակերտները հերթով նշում են Լոմբարդիայի ԳԱ պրեզիդենտ, հայագետ Ջանկարլո Բոլոնեզիի, իտալացի հայագետ Գաբրիելա Ուլուհաջյանի, ֆրանսիացի հայագետներ Ժիրայր Տետեյանի, Ավետիս Սանջյանի խոսքերը:

Նստած աշակերտները հերթով հաղորդում են հետաքրքիր փաստեր, թվեր հայոց լեզվի և մյուս լեզուների մասին: Նշում են, թե աշխարհի որ մասում որքան հայ կա, աշխարհի ժողովուրդները քանի լեզվով են խոսում, խոսողների թվով հայերենը որ տեղն է զբաղեցնում (38-րդ), երբ է տպագրվել առաջին հայ գիրքը, քանի անուն հայերեն ամսագիր ու թերթ են տպագրվում, պատմում են «Մշո ճառընտիր»-ի հետաքրքիր պատմությունը, խորհուրդներ են տալիս հայոց լեզուն անաղարտ պահել, խոսելիս անհարկի չօգտագործել օտար բառեր: Բերում են հետաքրքիր օրինակներ:

Մի պահ փակվում է վարագույրը: Աթոռները դուրս են տարվում: Բացվում է վարագույրը: Նվագում և երգում են «Ես իմ անուշ Հայաստանին», իսկ աղջիկները պարում են:

Նորից բեմի վրա են հաղորդավարները: Պատմում են, որ աշխարհով մեկ սփռված հայությունը հաղորդակցվում է նույն լեզվի՝գրական հայերենի երկու տարբերակներով՝արևելահայերեն և արևմտահայերեն: Մեր ժողովրդի դառը պատմության հետևանքն է դա: Ապա արտասանում են Պեշիկթաշյանի «Եղբայր ենք մենք», Թեքեյանի «Քեզ, հայ լեզու, կսիրեմ մրգաստանի մը նման»և Վ. Դավթյանի «Ապրեց մեր լեզուն» բանաստեղծությունները:

Հաղորդավարները պատմում են, որ հայոց լեզուն ունի մոտ հիսուն բարբառ, որոնք բաժանվում են մի քանի ճյուղերի: Համառոտակի նշում են դրանք: Բեմ են դուրս գալիս տարբեր տարազներով վեց աշակերտ և հերթով կարդում Թումանյանի «Գիքորից» մեկական պարբերություն գրական հայերենով ու Մշո, Կարնո, Զեյթունի, Մեղրու և Ղարաբաղի բարբառներով: Հնչում են ղարաբաղյան երգեր՝ «Հորովելը», «Խնոցին», Ղարաբաղի բանահյուսության հետաքրքիր պատառիկներ և այլն:

Հաղորդավարները նշում են, որ լեզվի հարստությունն առաջին հերթին որոշվում է բառապաշարի հարստությամբ: Հնարավոր չէ ստույգ ասել, թե քանի բառ կա հայերենում բայց Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարանում» կա ավելի քան 152 հազար բառ: Բառերը բաժանվում են 10 խոսքի մասի: Հետո ներկայացնում են «Խոսքի մասերը» հանելուկներում: Մեկ-մեկ դուրս են գալիս 10 աշակերտ և դիմելով դահլիճին՝ նշում «իրենց» հատկանիշները.

Խոսքի մաս եմ ես կարևոր,
Պարզ եմ, բարդ և ածանցավոր:
Ցույց եմ տալիս չափ, քանակ, ձև
Եվ ժամանակ ու նաև՝ տեղ:
Այսպիսով, ո՞ր խոսքի մասն եմ ես,
Իսկույն կասե՞ք, ապա տեսնեմ:

Դահլիճից միշտ էլ պատասխանողներ լինում են: Նախօրոք 10 հուշանվեր ենք պատրաստում՝ բացիկ, գիրք, ծոցատետր և տալիս ճիշտ պատասխանողներին: Երբ բոլոր խոսքի մասերը շարվում են բեմում (պետք է այնպես անել, որ տարբեր հասակների երեխաներ լինեն խոսքի մասերը ներկայացնողները, համապատասխանեն խոսքում ունեցած նշանակությանը), դիմացից դուրս են գալիս բառարանն ու քերականությունը:

Այնուհետև հաղորդավարը հայտնում է, որ չնայած մեր լեզուն զարգացման երկար ուղի է անցել, չնայած լեզվաբանները անընդհատ հղկում են ու կանոնավորում այն, դեռևս քերականության մեջ վիճելի

հարցեր շատ կան:

Մի ուրիշ զույգ թվարկում է «Մի ասի, այլ՝ ասա» բաժնից համապատասխան բառակապակցություններ, արտահայտություններ: Հաղորդավարը նշում է, որ լեզվի կարևորագույն դերը մարդկության կյանքում գիտակցել են աշխարհի բոլոր ժողովուրդները: Նրանք ստեղծել են բազմաթիվ դիպուկ առածներ՝ սեղմ բնութագրելով լեզուն:

«Մայրենի լեզվի տոնի» կազմակերպումը ստեղծագործական աշխատանք է պահանջում, և չի կարող մի անգամվա կազմակերպածը մյուսի կրկնությունը դառնալ, անընդհատ պետք է փոփոխել, թարմացնել նյութերը, փոխել կոմպոզիցիաները:

«Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» ամսագիրը, 1988թ., N6

ՀԱՆԴԵՍ՝ԴՊՐՈՑՈՒՄ

Դարերի հնության մեջ են թաղված հայոց լեզվի արմատները: Մենք պարտավոր ենք երախտագիտությամբ վերաբերվել մեր լեզվին, սիրո ու հարգանքի տուրք մատուցել նրան:

Այս գործում առաջնահերթ տեղը պատկանում է մեզ՝ հայոց լեզվի ուսուցիչներիս,որովհետև մեզ է վստահված երեխաների առջև մայրենիի գանձարանը բացելու առաքելությունը, մենք է, որ պիտի սովորեցնենք նրանց սիրել, պահպանել, հարստացնել այդ լեզուն: Հենց այս նպատակով էլ առաջարկում եմ դպրոցներում կազմակերպել «Մայրենի լեզվի տոն», ուր պետք է երևան մեր լեզվի անցած ուղու պատմությունը, հարստությունն ու ճոխությունը, դյուրահնչությունն ու կանոնավորությունը, պարզությունն ու մաքրությունը, երևան աշխարհի շատ անվանի մարդկանց պատկերացմամբ, երևան նշանավոր գրողների խոսքում, երևան՝ մեր բարբառներով, գրաբարով, միջին հայերենով և այլն:

Գրեթե բոլոր դպրոցներում ամեն տարի անց է կացվում «Այբուբենի տոն»: Դա մեր լեզվի գովքն անելու, փառաբանելու յուրօրինակ ձև է, բայց, իհարկե, սահմանափակ հնարավորություններ ունի, քանի որ հանդեսի մասնակիցները նոր-նոր գրաճանաչ դարձած առաջին դասարանցիներն են: Եվ ահա մտածում եմ, իսկ ինչո՞ւ չի կարող «Այբուբենի տոնը» դառնալ «Մայրենի լեզվի տան» բաղկացուցիչ մասը: Կոնկրետ ինձ համար, օրինակ, «Այբուբենի տոնի» կազմակերպումը դպրոցում յուրահատուկ մարտահրավեր է լեզվի ուսուցիչներիս այն առումով, որ լոկ տառերը սովորած աշակերտները կամ սովորեցնող ու-

սուցիչը կարող են փառաբանել մեր լեզուն, իսկ մենք՝ բազմաթիվ հնարավորություններ ունեցող բարձր դասարանների մայրենի լեզվի ուսուցիչներս, և մանավանդ՝ այդ լեզվով արդեն բազմաթիվ գիտելիքներ ձեռք բերած, լեզվի մասին տասնյակ գեղեցիկ բանաստեղծություններ սովորած աշակերտները՝ոչ:

«Այբուբենի տոնը» մինչև վերջերս տեղի էր ունենում դեկտեմբերին, այժմ էլ անց է կացվում տարեվերջին: Մայրենի լեզվի ասածս տոնը, թվում է, նպատակահարմար է կազմակերպել մարտի վերջերին՝ գարնանային արձակուրդների նախօրեին: Նախ, որ այդ արձակուրդը ոչ մի տոն օրվա չի համընկնում և երկրորդ, համարյա բոլոր դասարաններում անցած են լինում ծրագրով նախատեսված հայոց լեզվի մասին նյութերը: Մայրենի լեզվի տոնը կարելի է կազմակերպել տարբեր ձևերով: Սկզբում ես այն խառնում էի «Այբուբենի տոնին», տոնի սկզբում հանդես էի գալիս հայոց լեզվի ծագման ու զարգացման ընթացքի մասին զեկուցումով, հետո առաջին դասարանցիներն էին հանդես գալիս, որոնց շարունակում էին բարձր դասարանցիները՝ իրենց սովորած բանաստեղծություններով, լեզվի մասին երգերով, նշանավոր մարդկանց ասույթներով և այլն:

Հանդեսը հետաքրքիր անցկացնելու համար ես ընդհանուր տետրում գրի էի առնում հայոց լեզվի մասին գեղեցիկ բանաստեղծություններ, ասույթներ, հանելուկներ, առածներ, ասացվածքներ, բառերի հետաքրքիր ստուգաբանություններ: Ստացվեց, որ ձեռքի տակ ունեի հարուստ նյութ, և իմ մեջ ցանկություն առաջացավ կազմակերպելու մեր լեզվի գովքն անող առանձին հանդես: Այդ գործում ինձ շատ են օգնում«Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» ամսագիրը, « Գրքերի աշխարհ» թերթը, Հենրիկ Հարությունյանի «Հետաքրքրաշարժ հայոց լեզուն», Պետրոս Բեդիրյանի «Բառերի խորհրդավոր աշխարհը», Սերգեյ Աբրահամյանի «Հայոց լեզու, բառ և խոսք», Լևոն Հախվերդյանի «Զրույցներ լեզվի մասին» և այլ գրքեր ու հանդեսներ:

Նշանավոր բանաստեղծներ Սևակի, Ջարյանի, Կապուտիկյանի, Շիրազի, Չարենցի՝ մայրենիին ձոնված բանաստեղծությունների կողքին տեղ է գտել նաև «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» ամսագրում վերջերս լույս տեսած՝ Ստեփանակերտի N 1 դպրոցի աշակերտ Նաիրի Հակոբյանի «Հայոց լեզու»բանաստեղծությունը:

Հանդեսի համար հարուստ նյութ ունենալը դեռևս բավական չէ, պետք է կարողանալ այն գեղեցիկ մատուցել հանդիսատեսին: Հանդեսը ներկայացնում եմ գրական-երաժշտական կոմպոզիցիայի ձևով, մոտավորապես ներքոհիշյալ պլանով:

1. Լեզվի ունեցած դերը հայերի կյանքում: 2. Հայոց գրերի ստեղծման պատմական ժամանակաշրջանը: 3. Մ. Մաշտոցը՝ հայերեն տառերի ստեղծող: Անվանի մարդկանց ասույթները Մ. Մաշտոցի և նրա ստեղծած այբուբենի մասին: 4. Օտարազգի և հայ անվանի մարդկանց ասույթները՝ հայոց լեզվի մասին: 5. Հոկտեմբերը և հայոց լեզուն: 6. Գրաբարից մինչև աշխարհաբար: 7. Հայերենի 2 տարբերակները՝արևելահայերեն և արևմտահայերեն: 8. Հայերենի բարբառները: 9. Փոքրիկ բեմականացում «Խոսքի մասերի» վերաբերյալ: 10. Հետաքրքիր փաստեր, թվեր, առածներ, ասացվածքներ, օգտակար խորհուրդներ, բառերի, անունների ստուգաբանություններ և այլն:

Հանդեսը վարում են երկու հաղորդավար աշակերտներ: Բեմում նստում են 8 աշակերտներ, որոնք նշում են անվանի մարդկանց ասույթները լեզվի մասին, հետաքրքիր թվեր, փաստեր:

Հաղորդավարները հերթով պատմում են մեր լեզվի անցած ուղու պատմությունը, ասմունքողները համապատասխան արտասանություններ են կատարում, արանքում հնչում են երաժշտություն, երգեր ու պարեր:

Գրաբարը, միջին հայերենը, աշխարհաբարը, տարբեր բարբառներ ներկայացնելիս աշակերտները հանդես են գալիս տարբեր տարազներով:

Հանդեսին հաջորդաբար արտասանում են նշանավոր գրողների ստեղծագործությունները՝ նվիրված մայրենի լեզվին:

Ներկայացնում են «Խոսքի մասերը հանելուկներում», անվանի մարդկանց ասույթները հայոց լեզվի մասին, օգտակար խորհուրդներ ճիշտ և գեղեցիկ խոսելու համար, արանքում օգտագործում են հանելուկներ, շուտասելուկներ, «Մի ասա…, այլ՝ ասա…», առածներ, ասացվածքներ և այլն:

«Մայրենի լեզվի տոն» կազմակերպելը ստեղծագործական աշխատանք է պահանջում, և չի կարող մի անգամվա կազմակերպածը մյուսի կրկնությունը դառնալ, անընդհատ պետք է փոփոխել, թարմացնել նյութերը, հորինվածքները:

Ի՞նչ կարող է տալ հանդեսը: Ես կարող եմ բավարարվել նրանով, որ բազմակի փորձերից հետո հանդեսի մասնակիցները և մյուս աշակերտները (որոնց չեմ արգելում ներկա լինել փորձերին) անգիր կիմանան հանդեսի նյութը, կսովորեն խոսել գեղեցիկ:

Իսկ հանդիսատեսները 1-1.5 ժամ կունկնդրեն մայրենի լեզուն և ավելի կսիրեն այն:

«Սովետական Ղարաբաղ», 12 փետրվար, 1988թ. N35

ԽՐԱԽՈՒՍԵԼԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Առաջին անգամ չէ, որ Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոցի շրջանավարտները պարտադիր զինվորական ծառայության ընթացքում հրամանատարության կողմից արժանանում են խրախուսանքի, իսկ նրանց ծնողները՝ շնորհակալական նամակների:

Դպրոցում այդ մասին իմանում էինք նրանց ծնողներից, խնդրում նամակը, պատճենահանում՝ ՆԶՊ սենյակում պահելու, աշակերտներին նրանց օրինակով դաստիարակելու համար:

Բայց ուրիշ էր վերջերս ԼՂՀ պաշտպանության նախարարության կողմից ստացված շնորհակալական նամակը, որը հասցեագրված էր դպրոցի տնօրինությանը և մանկավարժական կոլեկտիվին:

Նամակում գրված էր «Պաշտպանության բանակի շարքերում ծառայում է ձեր դպրոցի շրջանավարտ Մասիս Արտուշի Մարտիրոսյանը, որն իր սահմանադրական պարտքը հայրենիքի հանդեպ կատարում է բարեխղճորեն և նվիրվածությամբ: Նա լավ է տիրապետում զենքին և իր զինվորական մասնագիտությանը, անթերի է կատարում ծառայողական պարտականությունները, աչքի է ընկնում կարգապահությամբ և հրամանատարների կողմից առաջադրված խնդիրների բարձր կատարողականությամբ: Պաշտպանության բանակի հրամանատարությունն իր խորին երախտագիտությունն է հայտնում Ձեր կոլեկտիվին և ծնողներին՝ հայրենիքի իսկական պաշտպան դաստիարակելու համար և վստահ է, որ բանակում նման երիտասարդների ծառայություններն ավելի անառիկ են դարձնում մեր հայրենիքի սահմանները և ապահովում մեր ժողովրդի անվտանգությունը:

Ցանկանում եմ քաջ առողջություն և ամենայն հաջողություններ՝ Ձեր հայրենանվեր աշխատանքում:

ԼՂՀ պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Մ. Հակոբյան 05.03.2009թ.»:

Նամակը գոհունակությամբ ընթերցվեց կոլեկտիվում, հիշեցին Մասիսի դպրոցական տարիները, մյուս օրինակելի ծառայող շրջանավարտներին՝ Արցախին, Մարատին, Մեսրոպին:

Դպրոց հրավիրվեցին Մասիսի ծնողները, և աշակերտական ընդհա-

նուր հավաքում ընթերցվեց շնորհակալական նամակը:

Ուրախության արցունքները ողողեցին Մասիսի ծնողների, ուսուցիչների դեմքերը:

Չորս ուստր և մեկ դուստր ունեն Արտուշ և Արշալույս Մարտիրոսյանները: Մասիսը երրորդ որդին է: Նրա ավագ եղբայրները նույնպես ծառայել են Արցախյան բանակում. Հարութն ավարտել է ԱրՊՀ-ի ավտոճանապարհային բաժինը, վերադարձել հայրենիի գյուղ, հերթափոխի պետ է աշխատում Դրմբոնի «Բեյզ-Մեթըլս» ընկերությունում: Նորայրը պետպատվերով սովորում է նույն համալսարանի հումանիտար ֆակուլտետի պատմության բաժնի վերջին կուրսում, ավարտելուց անպայման գյուղ կվերադառնա: Չորրորդ որդին՝ Փայլակը, սովորում է 9-րդ դասարանում, դպրոցի լավագույն աշակերտն է, մասնակցել է շրջանային օլիմպիադաների, շարադրությունների, շրջանային, «Լավագույն աշակերտ» մրցույթներին, ակտիվորեն մասնակցում է դպրոցի արտադասարանական աշխատանքներին, ինքնագործ խմբի անդամ է, երգում է, արտասանում, նկարում: Կասկած չկա, որ զորակոչվելուց էլ եղբայրների պես լավագույն զինվոր կդառնա:

Հպարտանալ կարելի է նման ընտանիքներով և ընդօրինակել: Եթե Արցախում յուրաքանչյուր ընտանիք չորս օրինակելի զավակ տա հայրենիքին, նրա սահմանները հավերժ անխախտ ու անառիկ կլինեն:

Նամակը մեծ տպավորություն թողեց մանավանդ բարձր դասարանի տղաների վրա: Նրանց հետաքրքրությունից կրակված ու ոգևորված դեմքերից երևում էր, որ նրանց մեջ ցանկություն առաջացավ՝ զորակոչվելուց այնպես ծառայել, որ իրենց ծնողներն ու ուսուցիչներն էլ շնորհակալական նամակներ ստանան հրամանատարությունից և հպարտանան իրենցով:

Նամակն ավելի մեծ դաստիարակչական ներգործություն ունեցավ աշակերտների վրա, քան մի ամբողջ տարվա լավ ծառայության մասին անցկացրած դասերը:

Ուսուցիչների և ծնողների անունից շնորհակալական խոսքեր հղվեցին ԼՂ ՊԲ-ի հրամանատարությանը՝ նման գեղեցիկ նախաձեռնության համար:

Շնորհակալություն հայտնվեց նաև այն բոլոր ծնողներին, որոնց երեխաները պատվով են կատարում հայրենիքի հանդեպ ունեցած իրենց պարտքը:

Շնորհակալություն հայտնվեց նաև դպրոցի զինղեկ Նելսոն Հարությունյանին. նրա աշակերտները զորակոչվելուց աչքի են ընկնում իրենց պատրաստվածությամբ, քաջությամբ, կարգապահությամբ ու հայրենասիրությամբ:

«Զրաբերդ», 16-31 մայիս, 2009թ.

ԼԱՎ ԱՍՊԵՏԸ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀՈՒՍԱԼԻ ՊԱՇՏՊԱՆ

Հզոր արծիվներ, հայոց բանակի,
Ձեզանից է սկսվում հայրենիքը:

Այս երկտողը ոսկեգույն տառերով գրված է այն նամակի ծրարին, որ օրերս ստացվել է Վերին Հոռաթաղի Ք.Քոքսի անվան միջնակարգ դպրոցում:

Նամակը «Ասպետ» ռազմամարզական ճամբարի պետի կողմից էր ուղարկվել Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոցի տնօրենին:

ԼՂՀ ԿԳՆ «Ասպետ» ռազմամարզական ճամբարի ղեկավարությունն իր խորին շնորհակալությունն է հայտնում Ձեզ և մանկավարժական աշխատախմբին՝ ճամբարում իրեն լավագույնս դրսևորած Ձեր դպրոցի սան Գևորգ Վանյանի համար:

Հուսով ենք, որ Ձեր մանկավարժական աշխատախումբը ուժ ու եռանդ չի խնայի նման աշակերտներ ուսուցանելու և դաստիարակելու գործում՝ հանուն մեր երկրի զարգացմանն ու բարգավաճմանը, իսկ նրա նմանները օրինակ կհանդիսանան ապագա ճամբարականների համար՝ փոխանցելով իրենց հուշերն ու փորձը:

Հարգանքներով՝ ճամբարի պետ, մայոր Վ. Աբրահամյան»:

Առաջին անգամը չէ, որ դպրոցը նման բովանդակությամբ նամակներ է ստանում ՊԲ հրամանատարությունից:

Դպրոցում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությունը միշտ էլ առաջին տեղում է: Դպրոցի սաները, զորակոչվելով Արցախի բանակ, իրենց դրսևորում են որպես խելացի, կարգապահ, քաջ զինվորների, հայրենասերների՝ պատրաստ անառիկ պահելու հայրենիքի սահմանները, դիմակայելու թշնամուն, պահպանելու իրենց հայրերի, պապերի արյան գնով ձեռք բերված ազատությունն ու անկախությունը:

Հայտնի է, որ բոլոր հաջողությունների հիմքը կարգապահությունն ու կազմակերպվածությունն է, ինչն այժմ մեր բանակի հաջողությունների գրավականն է: Լավ դաստիարակված, կարգապահ, նախնական ռազմական պատրաստություն ունեցող, բանակային առօրյային ծանոթ աշակերտը չի խուսափի զինվորական ծառայությունից, սիրով

կմեկնի բանակ:

Ծնողներն այժմ ոչ թե մտածում են իրենց որդիներին «փախցնելու» ծառայությունից, ինչպես տարիներ առաջ էր, այլ ուրախ հանդիսություններ են կազմակերպում այդ առթիվ, հարազատները, բարեկամները աչքալուսանք են տալիս միմյանց՝ հայրենիքի պաշտպանությանը պիտանի զավակ մեծացնելու համար:

Այսօր դրան նպաստում են շեֆ զորամասեր այցելելը, հրամանատարության հետ հաճախակի հանդիպումները, զրույցները, տարբեր միջոցառումները, իսկ այժմ նաև ԼՂՀ պաշտպանության և կրթության ու գիտության նախարարությունների համատեղ ուժերով նախազորակոչային տարիքի պատանիների համար «Ասպետ» ռազմամարզական ճամբարի ստեղծումը, որի նպատակն է ուսումնական տարում պատանիների՝ ապագա զինվորների նախնական զինվորական պատրաստություն առարկայից ձեռք բերած գիտելիքների, ունակությունների ու հմտությունների գործնականում կատարելագործմանը, նրանց մեջ զինվորին հատուկ կամային հատկանիշներ՝ կամք, տոկունություն, ֆիզիկական պատրաստվածություն ձևավորելուն:

«Ասպետ»-ը մարմնապես ու հոգեպես կոփվելու, հետագայում բանակային կյանքի դժվարությունները հաղթահարելու լավագույն դպրոց է:

Հագեցած էր «Ասպետ»-ի առօրյան, հետաքրքիր ու հաճելի:

-Կուզեի երկար լիներ,- ոգեևորված պատմում էր Գևորգը ճամբարային կյանքից. ժամանակին նախաճաշում, ճաշում և ընթրում էինք, խաղում ֆուտբոլ, ինտելեկտուալ ու զինվորական խաղեր, լողանում էինք գետում, զբոսնում բնության գեղատեսիլ գրկում, էքսկուրսիա էին կազմակերպել դեպի Գանձասար, Ամարաս, նոր ընկերներ ենք գտնում, ծանոթանում: Ինձ անչափ դուր է եկել զինվորական առօրյան, սիրով սպասում եմ այն օրվան, երբ կգնամ իսկական ծառայության:

Թող Գևորգը լավ օրինակ հանդիսանա մյուս աշակերտների համար, շնորհակալություն նրան՝ դպրոցի, զինղեկի, ուսուցիչների պատիվը բարձր պահելու համար:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Օրերս մի առանձին աշխուժություն էր տիրում Վերին Հոռաթաղի Ք. Քոքսի անվան միջնակարգ դպրոցում: Ամենքը շնորհավորանքներ, գովեստի խոսքեր էին ասում 11-րդ դասարանի աշակերտ Ռոմեո Միրզոյանի հասցեին: Ռոմեոն դպրոցի լավագույն աշակերտներից է, սովորում է լավ և գերազանց գնահատականներով, տարբեր առարկաներից մասնակցում է շրջանային օլիմպիադաների, ակտիվություն ցուցաբերում դպրոցի հասարակական աշխատանքներին: Պարտաճանաչ է, հմուտ ու նախաձեռնող:

Նոյեմբերի սկզբին նա ԱԿ-74 հրաձիգից հրաձգության շրջանային մրցույթում վաստակել էր բարձր միավորներ և իրավունք ստացել մասնակցելու հանրապետական մրցույթին՝ շրջանի 10 լավագույն մասնակիցների շարքում:

Նոյեմբերի 24-ին կայացած հանրապետական մրցությունում Ռոմեոն անհատական առաջնությունում հանրապետությունում գրավել է առաջին տեղը՝ 50 հնարավորից վաստակելով 45 միավոր և ՊԲ-ի, ԿԳ-ն նախարարության կողմից պարգևատրվել պատվոգրով, դրամական պարգևով և թանկարժեք նվերներով, որոնք վերահանձնվեցին նրան այդ առթիվ կազմակերպված հանդիսավոր տողանում:

Հաղթանակի առթիվ Ռոմեոն նվերներ ստացավ նաև ուսուցչական կոլեկտիվի և համադասարանցիների կողմից, իսկ դպրոցի տնօրենի կողմից Ռոմեոյին և զինղեկ Նելսոն Հարությունյանին հայտնվեց շնորհակալություն:

Օրն իսկապես տոնական էր և դաստիարակչական մեծ խորհուրդ ուներ:

Շարքում կանգնած աշակերտներից յուրաքայչյուրը կնգտի նմանվել Ռոմեոյին. նրա տեղը լիներ, մեծարվեր, գովեստի խոսքեր լսեր, ինչո՞ւ չէ՝ նաև գեղեցիկ նվերներ ու շնորհակալագրեր ստանար:

Ռոմեոյի հաղթանակը հավաստում է, որ յուրաքանչյուր արցախցի պոտենցիալ հերոս է, որ հաղթանակի կարող է հասնել նաև մի փոքր գյուղի դպրոցի աշակերտը, դպրոց, որ չունի մարզադահլիճ, հրաձգարան, անհրաժեշտ մարզական գույք և նույնիսկ՝ նորմալ մարզահրա-

պարակ, որոնք խիստ անհրաժեշտ են բոլոր դպրոցների համար:

Ռոմեոն կրում է Արցախի պատերազմի հերոս, «Մարտական խաչ»-2-րդ աստիճանի շքանշանակիր, համագյուղացի զոհված ազատամարտիկ, հոր մարտական ընկերոջ՝ Ռոմեո Գալստյանի անունը: Իր հաղթանակով նա ապացուցեց, որ արժանի հետնորդն է իր հերոս անվանակցի և որ կյանքում կնմանվի նրան իր քաջությամբ, հայրենասիրությամբ ու եթե հանկարծ վտանգվի մեր հայրենիքի խաղաղությունը, ինքն էլ Ռոմեո Գալստյանի պես անձնվիրաբար կմարտնչի և դիպուկահարի հմտությամբ վրեժ կլուծի հայրենիքի անդորրը խախտել ցանկացող թշնամիներից:

Շնորհավորենք Ռոմեոյին և ցանկանանք նրան նոր հաղթանակներ:

«Ձրաբերդ», 1-15 դեկտեմբեր, 2010թ.

...ՈՐ ՀՊԱՐՏՈՒԹՅԱՄԲ ՀԻՇԵՆ

Հագեցած ու հայրենասիրական ոգով էր տոգորված այդ օրը Վերին Հոռաթաղի Քերոլայն Քոքսի անվան միջնակարգ դպրոցում:

Նախ՝ N զորամասի հրամանատարությունը Եռատոնի կապակցությամբ արիության դաս անցկացրեց բարձր դասարանցիների հետ: Նրանք հաճախակի են այցելում դպրոց, մրցումներ ու ստուգումներ անցկացնում և պատվոգրեր հանձնում առավել աչքի ընկած աշակերտներին. գոհ են մեր աշակերտների նախնական զինվորական պատրաստությունից: Լինում են նաև փոխայցելություններ, որոնք իրենց դրական ազդեցությունն են թողնում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության վրա:

Բոլոր դասարաններում դասղեկի ժամը նվիրվել էր Եռատոնին: Տարրական դասարանների գրեթե բոլոր աշակերտներն Արցախյան պատերազմի մասնակից կամ զոհված ազատամարտիկների թոռներ են: Հենց այդ էլ դարձրին դասվարներն իրենց դասի առանցքը: Համառոտ պատմեցին մայիսյան հաղթանակների մասին, նշեցին, որ այդ հաղթանակներում իրենց ներդրումն ունեն նաև մեր գյուղացիները, կոնկրետ՝ իրենց պապերը: Երեխաները հպարտությամբ ու ոգևորությամբ էին լսում իրենց պապիկների մասին, սիրով արձագանքում էին դասվարների հարցերին:

Դասի երկրորդ մասը նրանք անցկացրին դպրոցի Փառքի անկյու-

նում, ծաղիկներ դրեցին այնտեղ: Դասվարները ցույց տվեցին գյուղի զոհված ազատամարտիկների, դպրոցի զոհված զինղեկ Գրիշա Մուրադյանի, 3 դպրոցահասակ զոհված երեխաների նկարները, պատմեցին նրանց մասին, Արցախի հերոսների մասին:

Եռատոնին նվիրված 10-րդ դասարանի դասղեկ Լիանա Վանյանի ժամը բաց էր հայտարարվել: Նա բաց էր կազմակերպել նաև Կանանց տոնին նվիրված դասղեկի ժամը: Ներկա էին բոլոր դասվարներն ու դասղեկները, դպրոցի տնօրինությունը, ուսուցիչներ:

Դասն սկսվեց Արցախի օրհներգի կատարումով, հետո զրույց անցկացվեց Եռատոնի կապակցությամբ, աշակերտներն ընթերցեցին օրվա առթիվ պատրաստված պատի թերթը և փակցրին դասարանի պատի: Պատի թերթում զետեղված էին հաղթանակներին նվիրված գեղեցիկ բանաստեղծություններ, շնորհավորանքներ, ցանկություններ, ստեղծագործական շարադրություններից հատվածներ…

«Հպարտ եմ, որ օրացույցում ունենք մայիս ամիսը: Այդ ամսում շատ հաղթանակներ ենք ունեցել, որից երեքը ճակատագրական եղան մեզ համար, և մենք ամեն տարի տոնում ենք դրանք մեծ ոգևորությամբ ու խանդավառությամբ»:

«Հպարտ եմ, որ հայ եմ, որ թեկուզ թվով քիչ, կարողացանք հաղթել մեր դարավոր թշնամուն»:

Կցանկանամ այնպես լինի, որ տոնենք մայիսյան քառատոն, բազմատոն, լինենք քաջ, խելացի, հերոսանանք ոչ միայն մարտադաշտում, այլև խաղաղ պայմաններում: Տարբեր բնագավառներում բարձունքներ նվաճենք, շենացնենք, հզորացնենք մեր չքնաղ լեռնաշխարհը…»

Պատի թերթի նյութերն ընթերցելուց հետո աշակերտները թվեցին Արցախյան ազատամարտի հերոսներին, մեր գյուղի շքանշանակիրներին, զոհվածներին, նշեցին նրանց կատարած սխրագործությունները, կարդացին նրանց նվիրված շարադրությունները:

Միրզոյանը շարադրության համար բնաբան էր ընտրել Ե. Չարենցի իմաստուն խոսքը՝«Ով հայ ժողովուրդ, քո փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: «Միաբան էինք ու միասին էինք պայքարում, բռունցքված, մի հոգի ու մարմին դարձած, ռազմաճակատում ու թիկունքում, դրա համար էլ կարողացանք հաղթել: Պատրաստ ենք, եթե թշնամին նոր ոտնձգություններ կատարի, ամեն ինչով օգնել ու աջակցել մեծերին, ինչպես անում էին մեր գյուղի դպրոցականները շարժման, պատերազմի տարիներին.կապավորի դեր էին կատարում, ուտելիքներ էին տանում անտառներում քուն ու հանգիստ կորցրած ազատամարտիկ-

ներին, ուղղաթիռներ էին բեռնաթափում, օգնում էին մարտնչող զինվորների ընտանիքներին»:

Հուզիչ էին շարադրությունները: Աշակերտների սրտառուչ խոսքերից, Նապոլեոն Հայրիյանի շարադրության հուզաթաթախ ընթերցումից արցունքոտվեցին ներկաների աչքերը: Դրանք կորցրածի դառնության և ձեռք բերածի հպարտության արցունքներ էին: Զոհվածի դուստր, 7-րդ դասարանի դասղեկ Համեստ Գրիգորյանը, չկարողանալով զսպել հուզմունքը, փղձկալից դուրս եկավ դասարանից:

Նապոլեոնը կրում է հորեղբոր՝ Արկադիա Հայրիյանի անունը (մականունով՝ Նապոլեոն), որն Արցախյան շարժման առաջամարտիկներից էր, 2 անգամ բանտարկվել է Շուշիի բերդում՝ օմոնականների կողմից, տեղափոխել էին Բաքվի բանտ, որտեղ էլ մահացել է անասելի կտտանքների, դաժան ծեծի ենթարկվելուց: Բանտի ընկերները, որոնց բախտ է վիճակվել ազատվել թուրքական գեհենից, նրա մասին հպարտությամբ են պատմում. «Պատժախցի մշտական այցելուն»՝ այսպես էին անվանում նրան այնտեղ, քանի որ հաճախ էին տանում ծեծելու: Ծեծողներն իրենց «գործից» հոգնում էին, բայց չէին կարողանում կոտրել նրա կամքը, ստորագրել տալ սուտ մեղադրանքների տակ կամ որևէ տեղեկություն իմանալ: Դա նրանց ավելի էր կատաղեցնում ու նորանոր վայրագությունների մղում, մինչև որ… սպանվում է…

-Հպարտությամբ եմ կրում հորեղբորս անունը, ձգտում եմ նրա պես հայրենասեր, խիզախ ու անկոտրում լինել:

Ցանկանում եմ դառնալ զինվորական, պահպանել հայրենիքիս սահմանները, նաև վրեժ լուծել հորեղբորս՝ Արկադիա-Նապոլեոն Հայրիյանի ադրբեջանական բանտերում կրած խոշտանգումների, տատիս դառնաղի արցունքների ու մորմոքումների համար,- այս տողերով ավարտեց Նապոլեոնը:

Հմուտ մանկավարժ Լիանա Վանյանը ներկաների հուզմունքը միանգամից փոխեց ուրախության, քանի որ, ինչքան էլ ծանր է կորստի ցավը, այնուամենայնիվ, Մայիսի 9-ին հաղթանակներ ենք տոնում: Աշակերտներն, իրար շարունակելով, արտասանեցին հաղթական բանաստեղծություններ, երգեր, որը մեծ բավականություն պատճառեց ներկաներին, փոխեց նրանց տրամադրությունը, մանավանդ, որ այդ դասարանի աշակերտ Արշակ Միրզաբեկյանն իր գեղեցիկ կատարումներով հայտնի է ոչ միայն դպրոցում, այլև մասնակցում է շրջանային միջոցառումներին՝ հիացմունք պատճառելով ունկնդիրներին:

Դասն ուսանելի էր, դաստիարակչական: Նման դասեր ուսանած աշակերտը չի կարող հայրենասեր չլինել: Դասղեկի հարցին, թե ի՞նչ սո-

վորեցին, ի՞նչ տվեց իրենց այս դասը, աշակերտներն իրար շարունակելով պատասխանեցին.

-Այս դասից սովորեցինք ապրել այնպես, որ գալիք սերունդները հպարտությամբ հիշեն մեզ, ձգտեն նմանվել, օրինակել, ինչպես մենք ենք հպարտանում մեր հերոսներով, մեր նախնիների քաջագործություններով, բարի գործերով: Հասկացանք, որ պետք է լավ սովորենք, մեր երկրի համար արժանի քաղաքացիներ դառնանք, հարկ եղած դեպքում կյանքներս չխնայենք հայրենիքի համար, ինչպես արեցին մեր հայրերն ու պապերը, որոնց շնորհիվ այսօր ունենք ազատ, անկախ հայրենիք, տոնում ենք Մայիսյան եռատոն, ապրում ենք խաղաղ ու անհոգ կյանքով:

Նման ոգով էր հագեցած նաև օրվա մյուս կեսը դպրոցում: Չնայած դասերը վաղուց ավարտվել էին, բայց դպրոցի ակումբից լսվում էին հաղթանակի երգեր, բանաստեղծություններ, հումորներ…

Դպրոցի ինքնագործ խմբի վերջին փորձերն էին՝ Մայիսի 9-ը հանդիսավորությամբ նշելու համար:

«Ջրաբերտ», հունիս 2011թ., N11

ԵՎ ՈՉ ՄԻԱՅՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ…

Դեկտեմբերին մեթոդմիավորման նախագահների հանրապետական հավաքում ԿՄՍ նախարարը նշեց, որ գյուղական ուսուցիչներն «իրենց գործի արանքում են ուսուցչություն անում»:

Լինելով գյուղական դպրոցի ուսուցիչ և մոտ երեք տասնյակ տարիների տնօրեն՝ես լիովին բաժանում եմ նախարարի կարծիքը այդ տեսակետից, որովհետև, իրոք, գյուղական ուսուցիչը ստիպված է ուսուցչության հետ միասին զբաղվել գյուղական աշխատանքներով՝կով կթել, փայտ ջարդել, հող մշակել, թռչուններ պահել, աղբյուրից ջուր կրել, հաց թխել, տուն, գոմ, թոնիր սարքել… Ուսուցիչը դասերին նախապատրաստվում է միայն երեկոյան ժամերին, հոգնեցուցիչ աշխատանքներից հետո, իր հանգստի հաշվին:

Այլ կերպ հնարավոր էլ չէ, քանի որ նախ՝ուսուցիչն այնքան աշխատավարձ չի ստանում, որ կարողանա իր ընտանիքի հոգսերն ամբողջությամբ հոգալ, մանավանդ հիմա, երբ հացն ու մյուս անհրաժեշտ մթերքները այնքան թանկ են, իսկ հագուստը՝ մեկանգամյա հագնելի է (ուսուցիչը պիտի պատշաճ ձևով հագնվի), գյուղական քարքարոտ ու

ցեխոտ ճանապարհով դպրոց գնալ-գալով, ամեն օր կոշիկները լվանալով՝ ստիպված է ամիսը մեկական զույգ կոշիկ գնել իր և երեխաների համար:

Եթե ուսուցիչն ունի ուսանող կամ ուսանողներ, եթե Ստեփանակերտում տան վարձը «ծխավարձից» փոխարինվել է «գլխավարձի», այն էլ՝ հավաբնի չափ սենյակինը՝8-10 հազարական դրամ՝ յուրաքանչյուր կենվորի համար, քիչ թե շատ կարգին բնակարանների համար՝ մինչև 25-30 հազարական դրամ՝ դրան էլ ավելացրած ուսման վարձը և «մնացած վարձերը», հասկանալի կլինի, որ ամենաբարձր աշխատավարձ ստացող ուսուցիչը չի կարող նույնիսկ մեկ ուսանող պահել այսօրվա պայմաններում՝ առանց օժանդակ եկամուտների:

Ենթադրենք, ներկայիս բարձր աշխատավարձը կարող է բավարարել որոշ ուսուցիչների: Դարձյալ նա պիտի ստիպված լինի զբաղվել տնային տնտեսությամբ, քանի որ գյուղում շուկա չկա, ամեն ինչ չէ որ վաճառվում է, և հնարավոր էլ չէ հաճախակի շուկա գնալ՝ մանավանդ քաղաքից հեռու գտնվող գյուղերից:

Գյուղական ուսուցիչը ոչ միայն ժամանակի մեծ մասն է վատնում աշխատանքների վրա, այլև՝հեղինակությունը, քանի որ պետք է բոլորի հետ դաշտ գնա, ջուր ջրի, խոտ հարի և ամենաստորացուցիչը՝ անասունների հերթը պահի:

Ձավեշտական է, բայց՝ փաստ, որ աշակերտը առավոտն իրենց անասունները քշում-բերում է, ուսուցչին տալիս, որ տանի պահի, իսկ եթե հանկարծ կորցնում է, երեկոյան նույն աշակերտը կամ ծնողը թոնթորալով պիտի գան բողոք, որ անասունը լավ չի պահել, դեռ չի եկել, կորել է…

Խորհրդային ժամանակներում մեր շրջանում այսպիսի դեպք է եղել.կուսշրջկոմի առաջին քարտուղարը շրջկոմի. աշխատողների հետ գալիս է մեր հարևան գյուղը և նրա մերձակայքում հանդիպում մահակը ձեռքին, անասունների կողքին կանգնած դպրոցի տնօրենին՝ շրջանում հարգված ու ճանաչված մանկավարժներից մեկին:

Հասնում է գյուղ, կոլտնտնտեսության նախագահին նախատում, ուղարկում՝փոխարինելու դպրոցի տնօրենին և պահանջում՝ կարգ սահմանել գյուղում, որ ուսուցիչը անասունների հերթ չպահի:

Հետո այդ հարցը լսվել էր շրջկոմի նիստերում և որոշում էր ընդունվել՝ գյուղական ուսուցիչներին ազատել անասունների հերթը պահելուց:

Հիմա այդպիսի օրենք չկա, դժվար թե լինի, որովհետև շատ հարաբերություններ են փոխվել, գյուղում շատ թե քիչ լավ ապրողը եղել է ու-

սուցիչը, հիմա՝ընդհակառակը,դպրոցներում մասնագետներ չլինելու պատճառով ոչ միշտ են աշխատել արժանավորները, միջակ սովորողների ուսուցիչ դառնալն ու ետ գյուղ վերադառնալը(գյուղում բոլորը գիտեն, թե ով ինչպես է սովորում), վառված, քանդված, անշուք տան մեջ ապրելը, ուսուցիչներին մի տեսակ հեղինակազրկել, հավասարեցրել է մյուսներին.ուսուցիչն այլևս այն բարձրության վրա չէ, ինչ-որ տասնամյակներ առաջ էր, ուսուցիչ դառնալն այլևս մեծ երազանք չէ, ով էլ ուզի, կդառնա…

Թղթակցությանս գրելու առիթը մեր ուսուցչուհիներից մեկի կողմից տրված շարադրությունն էր՝ տարվա եղանակների մասին: Աշակերտների մի մասը գրել էր, որ սիրում է ձմեռը, մյուսը՝աշունը, ամառը, բայց ոչ ոք չի գրել, որ գարունն է սիրում: Կարդալով շարադրությունները՝ուսուցչուհին զարմացած հարցրել է, թե ինչո՞ւ գարունը սիրող չկա. չէ որ ամենագեղեցիկ եղանակն է…

Աշակերտները պատասխանել էին.

-Ինչո՞ւ սիրենք, մեր ծնողները բահը դնելու են ձեռքներիս ու մինչև ուշ գիշեր աշխատեցնեն:

Սա, իհարկե, և՛ ծիծաղ է, և՛ ճշմարտություն.ոչ միայն գյուղական ուսուցիչը, այլև գյուղի աշակերտը դասերը սովորում է երեկոյան ժամերին՝ գյուղական հոգնեցուցիչ աշխատանքներից հետո, և դեռ զարմանալի է, որ մի մասը հասցնում է բոլոր դասերը սովորել, տնային աշխատանքները կատարել, մրցությունների գնալ և այլն:

Գյուղում, մանավանդ հիմա, երբ հողերի սեփականաշնորհում է կատարվել, և յուրաքանչյուր ընտանիք ունի մի քանի հեկտար վարելահող, անասուններ, խոզեր…Գյուղական աշխատանքներից անմասն չեն մնում նաև երեխաները:

Աշակերտների բացակայությունների մեծ մասն էլ գյուղում անասունների հերթը պահելու հետ է կապված…

Փորձից գիտեմ, որ գյուղական դպրոցներում աշակերտները հունի մեջ են ընկնում երկրորդ և երրորդ քառորդներում, առաջին և չորրորդ քառորդներում նրանց խանգարում են դաշտային աշխատանքները:

Ուսուցիչների՝դաշտում աշխատելը մի այլ տեսակետից էլ է վնասում աշակերտներին:

Մի անգամ դաշտում աշխատելիս՝ մի ծնող մոտեցել է ինձ և ասել.

-Ես երեխաներիս ասում եմ՝լավ սովորեն, որպեսզի ամբողջ կյանքում ինձ նման հողի հետ կռիվ չտան, հիմա, երբ նրանք տեսնում են ձեզ ինձ նման հողում չարչարվելիս, ինչպե՞ս համոզեմ, որ լավ սովորեն:

Տարբեր աշխատանքներ կատարող ուսուցիչները, բնականաբար,

ուսուցչանոցում խոսում են ոչ միայն աշակերտների կրթությունից ու դաստիարակությունից...

Կիրակի օրն այնքան են չարչարվում, որ երկուշաբթին գյուղական ուսուցչի համար ամենահոգնած օրն է լինում...

Կարծում եմ՝ շատերը համամիտ կլինեն ինձ հետ, որ ինչքան էլ անցանկալի, բայց իրականությունը այս է գյուղական ուսուցիչների կյանքում:

Մնում է ասել, որ շոշափելիորեն բարձրացել է ուսուցիչների աշխատավարձը, պետք է կրճատել այլ աշխատանքների վրա ծախսվող ժամանակը և ավելի շատ ժամանակ հատկացնել մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին, պատրաստել արժանի սերունդ մեր Արցախի համար, որը մեր սուրբ պարտականությունն է և վեհ կոչումը:

«Լուսարար», 2006թ., 10 ապրիլ

ԽԵՂՎԱԾ ՃԱԿԱՏԱԳՐԵՐ

Գոհունակությամբ ընդունեցինք Արցախում գործող ոչ պետական բուհերի գործունեությունը դադարեցնելու մասին լուսավորության նախարարության վերջերս ընդունած որոշումը, որովհետև, իսկապես, որ դրանք շատ հեռու էին իրենց ուսանողներին բուհական գիտելիքներ տալուց, իսկ տալու դեպքում էլ ովքե՞ր պիտի յուրացնեին...

Դրանցից երկուսը գործում էին մեր՝ Մարտակերտի շրջանում:

Լինելով դպրոցի տնօրեն՝ ուղղակի առնչություն եմ ունեցել դրանց հետ, որովհետև այդտեղ սովորում էին նաև մեր աշակերտները և մեր ուսուցիչների մի մասը:

Բռնագաղթից վերադառնալուց մեր շրջանի ազատագրված գյուղերում իսկույն վերաբացվում էին դպրոցները, որպեսզի հավատ ներշնչեն գյուղացիներին՝ հետ վերադառնալու, ի հեճուկս մեր թշնամիների: Բայց դրանք միայն անունով էին դպրոցներ, չկային մասնագետ ուսուցիչներ, համարյա բոլոր գյուղերում դպրոցները վառված էին կամ զինվորական շտաբի վերածվելուց՝ ավերված ու թալանված, չկային նորմալ դպրոցական գույք, դասագրքեր ու սարքավորումներ: Առանց վերջիններիս էլի հնարավոր էր, մի կերպ հարմարեցվում էին մասնավոր տներում, ակումբներում, խանութի շենքերում, բայց դժվարը ուսուցիչ-

ների պակասը լրացնելն էր: Ուսուցիչների մի մասը զոհվել էր, մյուսը՝ դեռ կռվում էր, մի մասը դեռևս չէր վերադարձել:

Ստիպված, բուհերում սովորողներին էին ուղարկում գյուղ, կամ էլ՝ նախորդ տարիների լավ սովորող շրջանավարտներին էինք հրավիրում դասավանդելու: Այդպես էր 1993-95 թվականներին, հետո աստիճանաբար զորացրվեցին ուսուցիչ զինվորները, այլընտրանքային ծառայության եկան մի շարք տղաներ, դպրոցները ապահովվեցին կադրերով:

1995 թվականին մեր շրջանի դպրոցներում աշխատում էին մի քանի տասնյակ միջնակարգ կրթությամբ ուսուցիչներ, դրանք մեր այնզոհվածների, զինվորների երեխաներն էին, որոնք չէին լքել Արցախը, որոնք նաև բարձրագույն կրթություն ունենալու ցանկության և բավարար գիտելիքներ ունեին, փորձել, բայց չէին կարողացել ընդունվել միայն հատուկ, մասնավոր ձևով պարապված դիմորդները, կարող էին ընդունվել. քննություններն ընթանում էին երրորդ դպրոցի մարզադահլիճում, ամենախիստ պայմաններում և, բնականաբար, այդ տարիներին մեր շրջանից ոչ ոք չընդունվեց, որովհետև 1990-95 թվականներին նորմալ կրթություն չէին ստացել մեր շրջանի երեխաները՝ գնդակոծություններ, տեղափոխություն գյուղից գյուղ, բռնագաղթ, վերադարձ, կռիվ, ամեն օր զոհվածի թաղում, վիրավորներ...

Ղեկավարը սխալվելու իրավունք չունի: Ղեկավարի սխալը շատերի համար ճակատագրական է դառնում:

Նման պայմաններում սովորած երեխաներին պետք էր որոշակի արտոնյալ պայմաններում բուհ ընդունեն, ոչ թե՝ ամենախիստ ձևով:

1996թ. մեր շրջանի կենտրոնացված ձևով քննություններ հանձնած չորս մեդալակիրներից ոչ ոք չընդունվեց համալսարան: Երկուսը իմ աշակերտներն էին: Հայոց լեզվից ստացել էին 17 և 19 միավորներ, պատմությունից՝ 6-7: Նախ, պատմության մասնագետ չեն ունեցել, երկրորդ, առաջին անգամ էին պատմությունից գրավոր քննություն հանձնում և 105 դիմորդներից դրական էին գնահատվել մի քանիսը: Գրավորներն ուղղող ուսուցիչները ժլատություն էին ցուցաբերել և 4-5 էջանոց գրավորի տակ «վախեցել էին» գոնե 8 միավոր նշանակել, որովհետև սրանք էլ ունեին իրենց վերաստուգողները, որոնք կարող էին նախատել բարձր գնահատելու համար, մինչդեռ, եթե բանավոր քննության դեպքում 4-5 էջի լավ գրածը խոսվեր, անպայման բարձր գնահատական կստանար տվյալ դիմորդը:

Այդ տարի ես ականատես եղա, թե ինչպես էր Բաքվից բռնագաղթած ռուսական կրթությունը հայերենով փոխարինած աշակերտների մայրը, որի ամուսինն էլ անհայտ կորած զինվոր էր, մարզադահլիճի

վերևից նկարների մի տրցակ շպրտել հանձնաժողովի առաջ, հայհոյելով, որ իր երեխան կտրվել էր հայոց լեզվից, դիմել էր կերպարվեստի բաժին, գերազանց նկարել գիտեր, բայց «պարտավոր էր» նաև հայոց-լեզուն էլ իմանար (մինչև 6-րդ դասարանը ռուսերեն էր սովորել), որպեսզի նկարիչ դառնար:

Բանն այն էր, որ բոլոր դիմորդները, անկախ ընտրած մասնագիտությունից, պետք է միասնական, նույն ծրագրով, նույն թեստերով քննություն հանձնեին հայոց լեզվից: Դա ճիշտ չէր:

Անասնաբույժն ու մարմնամարզիկը պետք է այնքան հայոց լեզու իմանային, որքան բանասիրականում ընդունվողները, իսկ դա հնարավոր չէր, մանավանդ, հարցարաններն էլ նոր էին հրատարակվել, և դեռ շատ ուսուցիչներ էլ չէին կարող կատարել բոլոր առաջադրանքները:

Ես իմ դիտողությունն արի այդ առթիվ, այն ժամանակվա փոխնախարար Կամո Աթայանին, նա պատասխանեց.

- Բոլոր բարձրագույն կրթություն ունեցողները պետք է անթերի իմանան հայոց լեզուն.

Դա ճիշտ տեսակետ էր, բայց ժամանակը չէր, դա անհնարին էր:

- Թող մի քանի հոգի ընդունվեն, բայց՝ խելացիներն ընդունվեն:

Իսկապես, այդ տարի շատ ֆակուլտետներում ընդունվեցին 1-5 դիմորդներ, իսկ մի՞թե խելացի չէր իմ աշակերտուհին, որ 19 միավոր էր ստացել հայոց լեզվից և ցանկանում էր դառնալ հայոց լեզվի ուսուցչուհի:

Ականատես լինելով ընդունելության քննությունների արդյունքին, համոզվեցի, որ մեր շրջանից ոչ ոք չի ընդունվի և դիմում գրեցի լուսավորության նախարար պարոն Հ.Գրիգորյանին, ԼՂՀ վարչապետ Լ.Պետրոսյանին՝ խնդրելով բացառություն արվի մեր շրջանի դիմորդներին, մի երկու միավորի առավելություն տան, քանի որ մեր շրջանը կադրերի մեծ պահանջ ունի, իսկ ուրիշ շրջաններից ոչ ոք չի գալու մեր ավերված ու թալանված գյուղերում աշխատելու:

Օրերն անցնում էին, լուրեր էին տարածվում, որ պատմությունը սխալ են ուղղել, նորից պիտի ուղղեն, խորհուրդ չէին տալիս փաստաթղթերը հանել...

Այդ ժամանակ էր, որ մեր շրջանի դիմորդների «հոգուն վրա հասավ» Վարդենիսի մանկավարժական ինստիտուտը: Լսեցինք, որ օգոստոսի 10-ից ընդունելություն է այնտեղ և, հիասթափված ու հուսահատված, թղթերը հանեցինք ու շտապեցինք Վարդենիս:

Վարդենիսի կոոպերատիվ մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Ն.Գալստյանը ներկայացել էր մեր շրջանի ղեկավարությանը, կր-

թության բաժին, առաջարկել իր օգնությունը՝ շրջանի դպրոցների համար մասնագետներ պատրաստելու գործում և դպրոցներում աշխատող միջնակարգ կրթությամբ ուսուցիչներին հրավիրել էր սովորելու:

Շրջանի ղեկավարությունը ողջունել էր նրա այդ նախաձեռնությունը (մանավանդ, որ զոհվածների երեխաներն ու գերազանց սովորողները անվարձ պիտի սովորեին) և կազմակերպված ձևով դիմորդներին տեղափոխել է Վարդենիս, տեղավորել այնտեղ՝ քննություններ տալու համար:

Ես՝ որպես շրջանի ներկայացուցիչ, լեզվի մասնագետ, ընդգրկվել էի քննական հանձնաժողովի կազմում, որտեղ ընդգրկված էին Երևանի մանկավարժական բուհերի դասախոսներ՝ պրոֆ. Նազարյան, Դ. Գասպարյան և այլոք, քննություններն ընթացան նորմալ պայմաններում, եղան նաև չընդունվողներ: Ընդունվածների համար կազմակերպվեցին նորմալ դասընթացներ՝տարեկան մի քանի անգամ:

Պարոն Գասպարյանը մեծ հարգանք էր վայելում շրջանում: Առաջին երկու տարում ընդունվում էին միայն համապատասխան գիտելիքներ ունեցողները:

Ծնողները մեծ հույսեր էին կապում իրենց ուսուցիչներ դառնող երեխաների հետ, վաճառում էին վերջին անասունը՝ ուսման վարձը տալու համար: Նրանցից շատերն արդեն աշխատում էին դպրոցներում:

Հաջորդ տարի շրջանում բացվեց մի նոր բուհ՝ Երևանի տնտեսահրավագիտության համալսարանի մասնաճյուղն էր, որն ընդունելություն կատարեց հարցազրույցով. ընդունվեցին շատերը:

Հիշում եմ, կուսապատցի մի ծեր ուսուցչուհի կրթության բաժնի հայտարարությունը կարդալով, ասաց.

- Չեմ հասկանում, սա ինչ համալսարան է: Մեր դպրոցը մի մեդալակիր է ունեցել, նա էլ է ընդունվել այստեղ, մի վատիկ էլ ենք ունեցել, նա էլ...

Ընդունում էին բոլորին, ովքեր կարող էին «հարցազրույցով» անցնել և սկսեցին գերժամանակակից մասնագիտություն՝ իրավագիտություն սովորել շատերը, նաև նրանք, ովքեր դպրոցում հազիվ էին միջակ ստանում:

Երբ այս առթիվ իմ մտահոգությունը հայտնեցի համալսարանի ղեկավարին, ասաց.

- Ես դասախոսին 1 ժամի համար 2000 դրամ եմ տալիս, անպայման կսովորեցնի:

Տեսնելով, որ բոլորն են ընդունվում, ուսանողներն սկսեցին մտավախություն ունենալ, հուսահատվել, մանավանդ, որ լուրեր էին տա-

րածվում, որ Ն. Գասպարյանը մահացել է, կամ փախել է, աշխատանքից հանել են և այլն:

Ինչքան հուսախաբության պահեր են ապրել այդ բուհերի ուսանողներն ու նրանց ծնողները, մանավանդ, որ դպրոցում աշխատողներին էլ հաշվում էին միջնակարգ կրթությամբ, ունենալով 5-6 տարվա ստաժ, ամեն տարեվերջի կրճատում էին, սեպտեմբերին նորից մեծ քաշքշուկով ընդունում՝ հեղինակազրկելով աշակերտների և ծնողների առաջ:

Նախարարության որոշման մեջ նշված է, որ այդ գործունեությունը դադարեցրած բուհերի ուսանողները կարող են իրենց ուսումը շարունակել այլ կոոպերատիվ բուհերում, բայց չի խոսվում ավարտածներին նրանց աշխատանքի տեղավորելու մասին: Նրանցից ոմանք աշխատում են 1994 թվականից, հմտացել են իրենց գործում, շրջանում կազմակերպած ոչ մասնագետ ուսուցիչների ատեստացիայով ստացել են գերազանց գնահատականներ, բայց էլի ընդհանուր հիմունքներով տարեվերջին ազատվում են աշխատանքից և հնարավոր է նաև իրենց տեղը զիջեն իրենցից քիչ գիտելիքներ ունեցող պետական բուհ ավարտած մեկին...

Ինչպես վարվեն նրանք: Նորից սովորել, ու գնան պետական բուհում, բա՝ ուսման վարձը: Նրանց մի մասը արդեն հարսեր են և 1-2 երեխաների մայր, տան միակ աշխատողը...

Չի կարելի ընդհանուր հիմունքներով վերաբերվել բոլորին, հարկավոր է ավարտածներին հատուկ հանձնաժողովով ատեստացիա անել, որակավորում տալ, թողնել մշտական աշխատանքի կամ իրավունք տալ երաշխավորությամբ սովորելու պետական բուհում... թե չէ ինչ մեղք ունեն նրանք, որոնց ժամանակին հրավիրել են սովորելու, իսկ հիմա այդ սովորածը պատուհաս է դառել իրենց համար:

Ես ունեմ ուսուցիչներ Նարեկացու և Վարդենիսի կոոպերատիվների շրջանավարտներից: Մի քանիսն արդեն ընդունվել են պետական համալսարան, մյուսները այդ հնարավորությունները չունեն...

Նրանց և նրանց նման խաթարված ճակատագրերով ուսանողների անունից խնդրում եմ համապատասխան որոշում կայացնել, հստակություն մտցնել նրանց անորոշ աշխատանքային գործունեության և վարձատրության մեջ:

«Լուսարար», 10.08.2000թ.

ՈՉ ԹԵ ՇԵՆՔ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ...

Վերին Հոռաթաղի միջնակարգ դպրոցում քննարկվեց և հավանության արժանացավ «ԼՂՀ պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության կանոններում բարեփոխումներ կատարելու մասին» ԼՂՀ ԿԳ նախարարության առաջարկությունը:

Անշուշտ, առաջավոր շատ երկրներում կիրառվում է ընդունելության այն մեթոդը, որ առաջարկվում է մեր նախարարության կողմից: Բուհն ինքն է որոնում, գտնում իր ուսանողներին, ընտրում լավագույններին: Աշակերտներն էլ ավելի եռանդով ու հանգիստ հոգով են սովորում, առանց ավելորդ ապրումների՝ընդունվել-չընդունվելու, միջնորդներ գտնելու, ծնողներին ավելորդ հոգսերի ու պարտքերի տակ գցելու և այլն...

Կամ թե, ամառվա շոգին, դպրոցի պետական քննություններից հետո, շրջանավարտը ստիպված է լինում նորից գիշեր-ցերեկ պարապել և մինչև օգոստոսի վերջը լարված մնալ, մինչև համոզվի, որ ընդունվել է, հետո էլ հոգնած ուղեղով, շատ ժամանակ ինչ-որ բանից վիրավորված, հավատը կորցրած, սեպտեմբերին նորից նստել նստարանին: Առաջարկությունը ողջունելի է, մնում է միայն դպրոցներում աշակերտների գնահատականները, բնութագրերը լինեն ռեալ, չստացվի այնպես, որ արհեստականորեն բարձրացվեն դրանք, և նորից անարժանները խցկվեն բուհ:

Ո՞ր տնօրենը, ուսուցիչը չի զարմացել ու զայրացել, երբ դպրոցի միջակ սովորողը լավ սովորողների հետ դարձել է ուսանող:

Եթե դպրոցներում անաչառություն դրսևորվի, դրանից կշահեն բոլորը, իրար չեն խաբի ուսուցիչներն ու աշակերտները, ծնողներն ու դասախոսները:

Ոմանք այն կարծիքին են, որ կաշառակերությունը կթափանցի դպրոց: Դեմ չեմ, գուցե որոշ դպրոցներում կպատահի, բայց թվում է, ինչքան էլ կաշառվի ուսուցիչը, դժվար թե, միջակ ընդունակությունների տեր աշակերտին բարձր գնահատական նշանակի աշակերտների մոտ. չէ՞ որ իսկույն դժգոհություն կառաջանա, կեղծիքը կբացվի, չէ որ դպրոցներում, մանավանդ, փոքր դպրոցներում, գյուղերում լավ և վատ սովորողներին գիտեն բոլորը՝ և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները, և՛ ծնողները:

Հենց դպրոցում էլ կարող են որոշել, թե ով իրավունք ունի սովորե-

լու բուհում, ով միջնակարգ մասնագիտական հաստատություններում և ով՝ ոչ:

Առաջարկում եմ, որ դասախոսներից ուստարվա ընթացքում գործուղվեն դպրոցները, տեղում լսեն ուսուցիչների կարծիքը, ցուցակագրեն լավ և գերազանց սովորողներին, ծանոթանան նրանց նախասիրություններին, ցուցակները նախօրոք ուղարկվեն կրթության շրջանային բաժիններ, և հասունության ատեստատի հետ շրջանավարտը ստանա նաև հրավեր կամ հրավերներ՝ընտրություն կատարելու համար (իհարկե, դա չպետք է վճարովի համակարգում ինչ-որ քանակ ապահովելու նպատակով կատարվի):

Մի քանի տարի առաջ մասնավոր բուհի ղեկավարը այդ նպատակով այցելեց դպրոց՝շրջանավարտներին ցուցակագրելու իր բուհի համար:

Ես քաղաքավարությամբ նրան բացատրեցի, որ այդ տարվա մեր դպրոցի շրջանավարտներից բուհում սովորելու համար գիտելիքներ ունեցողներ չկան /դժբախտաբար, նրանցից այսօր սովորում են նաև ԱրՊՀ-ում/: Նա չհամաձայնվեց ինձ հետ, և երբ համառեցի, ասաց, որ ինքը շենք պիտի վերանորոգի, և իրեն շատ դիմորդներ են պետք…

Թող այնպես լինի, որ նոր ձևով ընդունվողները շենք վերանորոգելու նպատակով չընտրվեն, այլ ընտրվեն քչերը, բայց՝ միայն արժանիները:

Հավանական է՝ ընդունելության նոր կարգը կփոխի ուսանողների վերաբերմունքը ուսման նկատմամբ:

Վերջերս ցավով լսեցի մեր համալսարանի հեղինակավոր բաժնի վերջին կուրսի մի քանի ուսանողների կես կատակ խոսակցությունները:

Նրանցից մեկը պարծանքով ասում էր, որ ինքը ոչ մի տետր չունի և առհասարակ դասախոսություն չի գրել: Մյուսն էլ նրան գերազանցած լինելու համար ավելացրեց, որ ինքը նույնիսկ գրիչ չունի և քանի տարի է, ոչինչ չի գրել:

Հետո սկսեցին ծաղրել տետր ու գրիչ ունեցող, դասախոսություններ գրող իրենց ընկերոջը:

Դժբախտությունն այն է, որ ավարտելուց հետո էլ տետր ու գրիչից խորշող ուսանողներն են մասնագիտական աշխատանք ունենալու իրենց ծնողների, քեռիների հովանավորությամբ, ինչպես որ ընդունվել ու ավարտում են:

Իսկ թե ինչպես պիտի աշխատեն նրանք իրենց մասնագիտությամբ մեկնաբանելու կարիք չկա…

Կամ, ասենք, ավարտական կուրսերի մի քանի ուսանողներ ակտիվ պրակտիկան անց են կացրել մեր դպրոցում: Մի քանի ամիս հետո նրանք պետք է մատյան վերցնեն և հնարավոր է այնպիսի դպրոցներում աշխատեն, որտեղ օգնող ու ուղղություն տվող չի լինի, և ընդհակառակը, որպես պետական բուհ ավարտածներ, իրենք պետք է օրինակ ծառայեն, օգնեն մյուսներին, փայլեն իրենց գիտելիքներով:

Ինչպես կարող են դա անել, երբ չգիտեն դասավանդման հետ կապված տարրական բաներ՝սկսած սեղմագիր գրելուց, ծրագրից, դասագրքերից օգտվելուց, դասին նախապատրաստվելուց ու անցկացնելուց...

Նրանց աշխատանքում ձևականություն է տիրում՝.գնահատական ստանալը:

Ցանկանանք նոր ձևով ընդունվեն միայն արժանավորները, ուսման նկատմամբ մեծ հետաքրքրություն ունեցողները, ընտրած մասնագիտությունը սիրողները, կյանքում իսկական մասնագետ դառնալ ցանկացողները:

«Լուսարար», 2002թ. N1

ՆՈՐԻՑ ՉՏՐՈՐԵՆՔ ԳՅՈՒՂԸ

Մի քանի ամիս է՝ խախտվել է գյուղացիներից շատերի հոգեկան անդորրը,ամենուրեք հարցնում են, դժգոհում,թե ոնց է լինելու իրենց երեխաների ապագան, որտեղ են շարունակելու ուսումն իրենց դեռահաս երեխաները:

Խոսքը կենտրոնացված ավագ դպրոցների մասին է, որը պետք է գյուղերում գործի եկող ուսումնականից:

Ոչ ոք դեմ չէ ավագ դպրոցի գաղափարին, հոսքային դասարանների գոյությանը, ժամանակակից սարքավորումներով հագեցած դասարաններում որակյալ ուսուցիչների կողմից տրվելիք դասերին: Այդ բոլորը գյուղական դպրոցների երեխաներին հասցնելն է դժվար:

Մեր ենթաշրջանում ավագ դպրոց է նախատեսված Հաթերքի միջնակարգը, որտեղ հասնելու համար վերջին գյուղից՝ Պողոսագոմերից դպրոցականն ամեն օր դասի գնալ-գալուց պետք է անցնի 60-70 կմ ճանապարհ, եթե, ինչպես ասում են, ամեն օր այդ նպատակով տրամադրված մեքենան տանի-բերի: Եթե անգամ հաշվի չառնենք, որ Հաթերք տանող ճանապարհը ձմռանը մի քանի ամիս սառույցով է պատ-

ված լինում (մինչև Գետավան հասնելը), իսկ Գետավանից Հաթերք տանող զառիվեր ճանապարհն ամեն անգամ հաջող իջնել-բարձրանալուց ստիպված ես լինում փառք տալ Աստծուն, էլի ոչ մի ծնող չի համաձայնվի, որ իր երեխան սովորականից 1-2 ժամ շուտ զարթնի ու այդքան ճանապարհ անցնի՝ դասի գնալու համար:

Հարմար չէ նաև հանրակացարանային տարբերակը: Ներկայիս երեխաներին չի կարելի համեմատել 30 տարի առաջվա սովորողների հետ, երբ կիրակի օրերը, «հացով լիքը խուրջինները շալակած», գնում էին հարևան դպրոցներում սովորում,«ինտերնատ»կոչվող գյուղի դատարկ տներում մնում, շաբաթ օրերը տուն գնում... Այն ժամանակ կյանքն ուրիշ էր, ուսման նկատմամբ վերաբերմունքը, մարդկային հարաբերություններն այլ էին...Մեր ուսուցիչներից մեկը պատմում էր, որ ետպատերազմյան տարիներին (1940-50-ական թվականներ), որբ երեխաներ Կոճողոտից գալիս էին ամեն օր Հարությունագոմերի միջնակարգում սովորում և քանի որ կոշիկներ չունեին, տրեխ էին հագնում ու որպեսզի տրեխների փոկերը թացանալուց չկտրտվեին,հ անում էին, դնում թևերի տակ, բոբիկ գալիս դպրոցի մոտ հագնում տրեխները, մտնում դասարան: Եվ դա՝ տարվա բոլոր եղանակներին: Հիմա չես էլ կարող համոզել երեխային, որ նման բան հնարավոր է: Կամ՝ շաբաթը մեկ անգամ աշակերտների համար ցուցադրվող կինոնկարներում կինոցուցադրողը հանում էր գլխարկը, ծածկում կինոխցիկի անցքը, որպեսզի աշակերտները համբուրվող զույգ չտեսնեին: Ներկայիս երեք տարեկան երեխան ավելի շատ բան գիտի մարդու ծագման մասին, քան այն ժամանակվա աշակերտները՝ դպրոցն ավարտելուց:

Չնայած դրան, այն ժամանակ էլ չէին պակասում անհաճո դեպքերը՝ կապված աղջիկների հետ՝ տեղացի և «եկած» տղաների միջև: Հիշում եմ, 60-ական թվականներին՝ իմ դպրոցում սովորելու տարիներին, նման վեճերը վեր էին ածվում թշնամանքի ու հասնում դանակահարության: Խնդիրներ էին առաջանում նաև ուսուցիչների և աշակերտուհիների միջև. ոմանց «ուշ ժամի այցելում էին՝ օգնելու շարադրություն» գրել... Այդ դեռ այն ժամանակ...

Հիմա, երբ «մեր ադաթից ընկել ենք, զրկվել, նորն էլ չգիտենք, թե ինչ է եկել», երբ մեր դեռահասները հեռուստացույցով տեսնում են բաներ, ինչն անհարիր է մեր ազգային բարոյականությանը, երբ մանկապարտեզի տարիքի երեխաները դիմակավորված «որոգայթ» են խաղում, ինչպե՞ս թողնես նրանց ինքնահոսի,որ ճակատագրական սխալ թույլ չտան:

Կյանքը թելադրում է, որ ներկայիս սերունդը որոշ չափով փափկա-

սուն մեծանա: Ոչ մի ծնող չի թույլատրի հիմա իր երեխայի հետ վարվել այնպես, ինչպես իր հետ են վարվել (ամիսներով բամբակահավաք, խաղողաքաղ, ծխախոտահավաք...), միայնակ չի թույլատրի հեռու գնալ, մանավանդ ոտքով, չեն կարող հանգիստ մնալ՝ երեխայի սնվելը ինքնահոսի թողնելով:

Շատերի համար դրանք բացառվում են:

Ծնողների մեծամասնությունը նախընտրում է իրենց երեխաներին տանել Մարտակերտ, Ստեփանակերտ՝ ծանոթ բարեկամների մոտ:Այդ տարիքից քաղաքում մնալուց, քաղաքային կյանքին սովորելուց հետո շատերը երբեք գյուղ չեն վերադառնա, կդառնան նորօրյա «նոյի ագռավներ», աստիճանաբար կքաշեն իրենց հետևից կտանեն նաև քույրեղբայրներին, ծնողներին, արդյունքում կունենանք նախ դատարկ տներ, ինչպես շատ գյուղերում է հիմա, կամ էլ դատարկ գյուղեր:

Բացի այդ, գյուղի երեխաները նաև ծնողների օգնականներ են և՛ տնային գործերում, և՛ անասուններ պահելիս, և՛ այգի մշակելիս: Գյուղից դուրս տանելով նրա օգնականներին՝ գյուղացին կդադարի անասուններ պահել, հող մշակել: Դե, էլ ինչ գյուղացի, եթե դրանք չանի: Գյուղացուն վնասում ենք նաև այդ տեսակետից: Սա էլ հարցի մի կողմն է: Ծնողը մի հնար կգտնի, որտեղ կցանկանա, երեխային կտանի այնտեղ ուսումը շարունակելու:

Գյուղերում կենտրոնացված ավագ դպրոց ունենալն առաջին հերթին կվնասի գյուղերին, գյուղը բնակիչներ կկորցնի, որը ձեռնտու չէ ոչ մեկին, առավել ևս՝ գյուղում մնացողներին: Առանց այն էլ մի «զտում» ունեցանք բռնագաղթի ժամանակ: Գրագետ ձեռներեցներից շատերը հեռացան արտերկրներ, հիմա էլ ընդունակ երեխաներ ունեցողները կհեռանան առաջնահերթ, կմնան նրանք, որոնց հետ իսկապես, դժվար է ապրելն ու աշխատելը: Որքան գյուղը մեծ լինի, բնակիչները՝ գրագետ ու հասկացող, այնքան հաճելի կլինի այնտեղ ապրելն ու աշխատելը, մանավանդ, որ ժամանակակից կենցաղային տեխնիկան որոշ չափով թեթևացրել է գյուղացիների հոգսերը և ավելի կապել գյուղին:

Գյուղը մեր պետության սահմանն է, նյութական բարիքներ ստեղծողը, ազգային ավանդույթների կրողը, մեր բանակի «մատակարարը»:

Քաղաքում ո՞վ է 1-2-ից ավելի երեխա ունենում, իսկ գյուղում ունենում են երբեմն մինչև 7-10-ը, շատերի մոտ սահմանը 4-5-ն է, չնայած տարիների հետ նվազելու միտում ունի:

Իսկ ո՞վ է ասում, որ գյուղում խելոք, գրագետ մարդիկ պետք չեն: Եթե գրագետ մարդկանց կենտրոնացնենք քաղաքներում, կկասեցվի գյուղերի զարգացումը:

Շատ հանճարներ գյուղական խրճիթներում են ծնունդ առել, գյուղական դպրոց ավարտել, Երևանի, Մոսկվայի համալսարաններում ուսումը շարունակել: Մեր շատ ղեկավար այրեր գյուղերից են սերված, ուրեմն՝ անենք այնպես, որ բնակչությունը գյուղերում շատանա, ջնջենք քաղաքի և գյուղի միջև եղած պատնեշը, բարվոք պայմաններ ապահովենք գյուղացիների համար, որ գյուղի դպրոցներում աշակերտները շատանան, որպեսզի ուսուցչի աշխատանքը հաճելի ու արդյունավետ լինի:

30-ամյա իմ տնօրինության ընթացքում և՛ քիչ աշակերտներով եմ աշխատել (60-70), և՛ շատ(մինչև 150), և՛ հիմնական դպրոցի կարգավիճակով, և՛ լրիվ միջնակարգ, նայած, թե ինչ քաղաքականություն են վարել ղեկավար այրերը: Փաստ է, որ գյուղերը միշտ էլ տուժել են սխալ քաղաքականությունից:

Բերեմ մի օրինակ: Գանձասար տանող ճանապարհի աջ կողմում՝ Խաչենագետի կամրջից քիչ վերև, չհասած Առաջաձոր, գեղատեսիլ բլրի լանջին կիսավեր տներ կան: Դա պատերազմի տարիներին թշնամու կողմից ավերված բնակավայր չէ, այլապես արդեն վերականգնված կլիներ:

Դա 60-70-ական թվականներին տնտեսությունների խոշորացման սխալ քաղաքականության հետևանքով դատարկված Հայադ գյուղն է, որի զավակները ցրված են հարևան գյուղերում, Ստեփանակերտում, ՌԴ-ում:

Ամեն անգամ Առաջաձոր գնալիս՝ նայում եմ այդ ավերակներին, հիշում հայադեցի իմ դասընկերներին, որոնք ամեն օր ցողաթաթախ, ցեխոտված գալիս էին դասի, գնում: Չէին ուշանում, լավ էին սովորում: Նրանցից ոչ ոքի մտքով չէր էլ անցնում, որ մի օր կլքի իր գյուղը, տունը: Հպարտանում էին իրենց գյուղի բնությամբ, աղբյուրներով, Նահատակ եկեղեցիով, որտեղ ամեն փետրվարի 23-ին բարձր դասարանցիներն արշավի էին գնում:

Ամեն ինչ սկսվեց նրանից, երբ կոլտնտեսությունների խոշորացումից Առաջաձորի կոլտնտեսության նախագահ նշանակվեց հայադեցի Ասատուր Ստեփանյանը (Հայադ, Ծմակահող և Առաջաձոր գյուղերի համար) և որպես խոշոր բնակավայր, պիտի աշխատեր Առաջաձորի գրասենյակում՝ առավոտից մինչև ուշ երեկո, երբ բոլոր աշխատողները հավաքվում էին հաջորդ օրվա համար հանձնարարություններ ստանալու, պիտի մնար այդտեղ և ուշ ժամի, ոտքով կամ ձիով գնար Հայադ:

Բնականաբար, դա երկար տևել չէր կարող, և որոշեց տուն կառու-

ցել Առաջաձորում ու 5 երեխաներով տեղափոխվեց: Դպրոցը փոքրացավ 5 աշակերտով, գյուղը՝ մեկ ընտանիքով: Դրան հետևեց ֆերմայի վարիչ Մովսես Մովսիսյանը՝ նույն պատճառով և հենց մեր հարևանությամբ շուտով երկհարկանի տուն կառուցեց ու 4 երեխաներով տեղափոխվեց: Իսկ երբ Առաջաձորի միջնակարգ դպրոցի տնօրեն նշանակվեց հայադեցի Արիս Պողոսյանը, նա էլ ուսուցչուհի կնոջ և 5 երեխաների հետ տեխափոխվեց Առաջաձոր ու տուն կառուցեց այդտեղ:

Այսպես հերթով… Գյուղը զրկվեց մտավորականներից, որոնց հետևեցին մնացած գյուղացիները, և շեն գյուղը տասը տարում դատարկվեց:

Իհարկե, Հայադը եզակի չէ: Նման ճակատագրի արժանացած շատ գյուղեր կան և՛ մեր մյուս շրջաններում, և՛ Հայաստանում: Եթե նույնիսկ լրիվությամբ չեն էլ դատարկվել, ապա շատ բնակիչներ են կորցրել, փոքրացել, ծերացել...

Եթե այն ժամանակ վերադաս ղեկավարին այդ ամենը ցավ չի պատճառել, ընդհակառակը, ավելի վերևներին ձեռնտու էր և համապատասխանում էր Արցախը հայաթափելու նրանց գաղտնի քաղաքականությանը, ապա այսօր բոլորիս պետք է հուզի գյուղից գրագետ մարդկանց հոսքը, որոնց կհետևեն մնացած բնակիչները, և եթե այսօր շատ բնակավայրերում վերաբնակեցման ծրագիր ենք իրականացնում, չպետք է անտեսվեն պապենական բնակավայրերում ապրողների շահերը, նրանց էլ պիտի ամրացվի հարազատ բնակավայրերին, ոչ թե հակառակը...

Եթե Հայադը մնար առանձին տնտեսություն, կոլտնտեսության նախագահը ստիպված չէր տեղափոխվի, գյուղացիներից շատերը տարբեր պաշտոններ կզբաղեցնեին, կմնային գյուղում, գյուղի բնակիչները կշատանային, դպրոցը տարրականից կդառնար հիմնական, գուցե և՝ միջնակարգ: Նույն Արիս Պողոսյանը, եթե իրենց գյուղում տնօրեն նշանակվեր, մտքովն անգամ չէր անցնի թողնել պապենական օջախը, և գյուղը գյուղը կմնար, տարեցտարի կմեծանար, կշենանար իր զավակների ջանքերով, նույն Արիս Պողոսյանի խելացի, գործարար տղաները, որոնք բարձր պաշտոններ են վարում ՀՀ-ում, այսօր բարերարություններ կանեին ոչ թե Առաջաձոր, այլ՝ պապենական Հայադ գյուղում...

Գիտեմ ընդդիմախոսներ կլինեն, բայց գուցե ես այս հոդվածը չգրեի, եթե չզգայի, չլսեի ժողովրդի մտահոգությունն ու մտադրությունները:

Վերջերս գյուղերում հիփոթեքային վարկերով տներ վերանորոգելու

միտում կար: Մի քանիսն օգտվել էին, օրինակը վարակիչ էր, շատերն էին ցանկանում ընդօրինակել, բայց հենց որ ավագ դպրոցի կենտրոնացումը մեջտեղ եկավ, հետ կանգնեցին:

-Գյուղում ու՞մ համար եմ վերանորոգում տունս կամ տուն կառուցում, երեխաս որտեղ լինի, այնտեղ էլ տան հոգս կանեմ: Քաղաքում տուն կառնեմ կամ քաղաքից մոտիկ տուն կկառուցեմ, որ երեխաներիցս մոտիկ լինեմ,-ասում են:

Ցավոք, այսպես մտածողները քիչ չեն: Եվ կանեն: Դառնանք կենտրոնացված ավագ դպրոցի ուսուցիչներին: Նրանք պետք է ճանաչում ունեցող, լավագույն մասնագետներ լինեն: Նման ուսուցիչներ ունենք և՛ քաղաքում, և՛ գյուղում:

Քաղաքում ավագ դպրոցում աշխատելու հրավիրված ուսուցիչն աշխատանքի գնալու համար կարող է հասարակական տրանսպորտի համարը փոխել, իսկ գյուղում...

Մի քանի դասաժամի համար (գյուղերում մեկական հոսքային դասարաններ հազիվ կլինեն) ամեն օր այդքան հեռավորություն ո՞վ կգնա-գա: Կամ գուցե՞ նրան էլ հանրակացարանային տարբերակ առաջարկենք, որ տուն ու տեղ թողնի գնա ու շաբաթը մի անգամ տուն գա...

Իսկ եթե միայն մի գյուղի ուսուցիչները պիտի դասավանդեն ավագ դպրոցում, դա էլ կլինի մի կոլեկտիվի ուսուցիչների գիտելիքների գերագնահատում: Բոլոր դպրոցներում էլ կան «ուժեղ» և «թույլ» ուսուցիչներ: Որ դպրոցում որ առարկայից լավ մասնագետներ կան, այդ դպրոցի աշակերտներից շատերը նրա մասնագիտությունն են ընտրում: Այդ ուսուցչին է հատկացված դպրոցի նախասիրական ժամերի զգալի մասը, և ինքնըստինքյան ստացվում է հոսքային ուսուցում: Բարձր դասարանների աշակերտներից շատերը հաճախում են նրա պարապմունքներին և տվյալ առարկայից ստանում խորացված գիտելիքներ և հետագայում դառնում լավ մասնագետներ:

Բացի այդ, գյուղում քիչ աշակերտանոց դասարաններում սովորողները ուշադրության կենտրոնում են մնում, ամեն օր դաս են պատմում, կարծես հավասարվում է անհատական պարապմունքի:Քաղաքի բարձր խտությամբ դասարաններում աշակերտների մի մասը դուրս է մնում ուշադրությունից:

Այս տարի մեր դպրոցի լավ աշակերտներից մեկը տեղափոխվել էր Ստեփանակերտ՝ ավագ դպրոցում սովորելու: Հունվարից ետ եկավ: Կարողացել էր սովորել, կիսամյակային գնահատականները դրական էին (6,7,8,9), բայց հիասթափվել էր. ուշադրության կենտրոնում չէր

եղել, ինչպես մեզ մոտ, հազիվ մի քանի անգամ էին հասցրել դաս հարցնել...

Հիմա բարձրագույնում ընդունվում են ոչ միայն համապատասխան գիտելիքներ ունեցողները, այլ նաև չունեցողները՝ հաևան-բարեկամներից հետ չմնալու համար, և լավ ու վատ ուսուցիչների կատարածն էլ չի երևում բուհ ընդունվածների քանակով: Ծնողն էլ չի ձգտում, չի փնտրում գտնելու լավ ուսուցիչների, որ իր երեխային ուղարկի նրանց մոտ սովորելու, քանի որ հիմա համարյա բոլորն էլ ընդունվում են: Բայց այն ժամանակ, երբ բուհերում կընդունվեն միայն համապատասխան գիտելիքներ ունեցողները, այն ժամանակ ծնողներն իրենք են փնտրելու լավ ուսուցիչներ, հոսքային դասարաններ, որտեղ երեխաները գիտելիքներ ձեռք բերեն և կարողանան ընդունվել, ինչպես տարիներ առաջ:

1969-70 ուս տարում սովորում էի Առաջաձորի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանում: Բամբակահավաքի էին տարել շրջանի Սեյսուլան գյուղը: Մեր դասղեկն էր մաթեմատիկայի լավագույն ուսուցիչ Զավեն Շահբարյանը: Նա հյուրընկալվում էր բրիգադավար Սարվան Հայրապետյանի տանը, որի որդին՝ Լյովա Հայրապետյանը, նույնպես սովորում էր 10-րդ դասարանում: Իրիկունները նա հետաքրքրվել էր տղայի գիտելիքներով, օգնելով նրան՝ չիմացածը լրացնելու: Խելացի հայրը, լսելով նրա բացատրությունները և մյուս ուսուցիչների կարծիքները նրա մասին, որոշում է որդուն Սեյսուլանի դպրոցից (այն ժամանակ շրջանում աչքի ընկած դպրոցներից էր) հանել և մեզ հետ ուղարկել Առաջաձոր՝ հեռավոր բարեկամի տանը մնալու ու մեր դասարանում սովորելու: Դասարան, որից նույն տարում տասն ընդունվեցին Երևանի բուհեր՝ տեխնիկական թեքումով, միայն ես, որ իրենցից պակաս մաթեմատիկա չգիտեի, լեզվագրական: Դրանց շարքում էր նաև Լյովան: Ծնողը ճիշտ որոշում էր կայացրել:

Այդպես էր նաև 60-ական թվականներին Ստեփանակերտի գիշերոթիկը, որտեղ, Ս.Արամյանի մոտ ֆիզիկա սովորելու էին գնում շատ գյուղերի լավ սովորողներ, և բոլորն էլ ընդունվում էին:

Երբ ավագ դպրոցի առավելությունները բացահայտվեն, շոշափելի դառնան, ոչ թե մասսայական, այլ հատուկ ընդունակություններ ունեցող երեխաների ծնողներն իրենք կձգտեն, իրենց միջոցներով երեխաներին կամավոր տանել տվյալ դպրոցում, տվյալ հոսքային դասարանում տվյալ ուսուցչի մոտ սովորելու:

Իսկ առայժմ գյուղերը զարգացնենք, վերաբնակեցնենք, լավ պայմաններ ստեղծենք աշակերտների համար, ենթաշրջաններում արվես-

տի, սպորտի դպրոցների մասնաճյուղեր բացենք, որ գյուղից քաղաք փախչողները քիչ լինեն:

Ավագ դպրոցի կենտրոնացումը գյուղական վայրերում արդարացում չունի: Փորձենք դա միայն մեծ բնակավայրերում: Փոքր գյուղերն ավելի չփոքրացնենք, չդատարկենք մեր սփյուռքահայ բարերարների կողմից, համարյա բոլոր գյուղերում կառուցված դասասենյակները: Դա նրանց համար էլ հաճելի չի լինի:

«Լուսարար», 2010թ.

Ո՞ՒՐ ԵՆՔ ԳՆՈՒՄ

Տարվա այն ժամանակն է, երբ սովորաբար ի մի էին բերվում ընդունելության քննությունների արդյունքները, շնորհավորում ընդունվողներին, հուսադրում մրցույթից դուրս մնացողներին՝ ավելի շատ պարապելու, գալիք տարիներին նորից քննություններ հանձնելու համար:

Մարդու կյանքում առանձնահատուկ իրադարձություն էր բարձրագույնում ընդունվելը, անասելի հպարտություն:

Երբ աշակերտ էի Առաձաջորի միջնակարգ դպրոցում, հանդիպում էր կազմակերպվել ուսանողների հետ: Ինչպիսի ակնածանքով էինք նայում ուսանողներին, երազում նմանվել նրանց:

Յուրաքանչյուր դպրոցից ընդունվում էր հազիվ մի քանիսը (այն ժամանակ փոքր միջնակարգ դպրոցներ չկային, դպրոցն ունենում էր առնվազն 25-30 շրջանավարտ): Նրանց ընդունելությամբ շահագրգռված էին լինում ոչ միայն ծնողները, այլև ուսուցիչները, որովհետև դպրոցը, ուսուցիչը գնահատվում էր բուհ ընդունվողների քանակով, դրա համար էլ ձգտում էին ավելի լավ աշխատել, շատ սովորեցնել (այն ժամանակ մասնավոր պարապմունքներ համարյա չկային):

Տարեվերջի լարված քննություններից հետո շրջանավարտները, նրանց ծնողները ստիպված էին լինում բազմաթիվ դժվարությունների դիմակայել, ամառվա տապին ժամերով կանգնել ու սպասել քննություն տվողներին, ստրես տանել: Մանավանդ դժվար էր գյուղից գնացածների համար, որոնք ծանոթ-բարեկամների տներում բազմաթիվ անհարմարությունների էին հանդիպում: Երազանք էր թվում այն, որ շրջանավարտները կարող էին բուհ ընդունվել դպրոցական քննություն-

ների գնահատականներով, բայց դրան էլ հասանք:

Այժմ մեր շատ շրջանավարտներ միասնական քննություններում ստացած դրական գնահատականներով դառնում են ուսանողներ: Դա լավագույն ձեռքբերում է, որ ունեցանք կրթական բարեփոխումների արդյունքում:

Սրտանց շնորհավորում եմ բոլոր ընդունվողներին, հաջողություններ մաղթում նրանց՝ խորը գիտելիքներ ձեռք բերելու, մեր երկրի ապագան կերտելու գործում:

Սա օրինաչափություն է: Բարձր միավորներ ստացողները պետք է ընդունվեն, պետք է առանձնանան թույլերից, ծույլերից, չսովորողներից:

Բայց փաստն այն է, որ միայն նրանք չեն ընդունվում, այլ ընդունվում են համարյա բոլոր շրջանավարտները՝ անկախ գիտելիքների չափից, կարողություններից, ընդունակություններից, նախասիրություններից. ումի՞ց են պակաս որ: Իրենց հարևանի, բարեկամի, խնամու երեխաներն ընդունվեն, իրենցը՝ ոչ: Լսարանները դատարկ չեն մնալու, առկա բաժնում չհաջողվի, հեռական կա ու կա, պետականում չստացվի, մասնավորում՝ խնդրում են:

Բոլորը սովորում են, շատերը ծնողների մեծ զրկանքների գնով (ուսման վարձ, տան վարձ, ուսանողին համապատասխան հագուստ, առօրյա հոգսեր, քննություններ): Բայց ի՞նչ են դառնալու, ի՞նչ են ավելացնելու իրենց չունեցած գիտելիքներին, ինչպես են առանց հիմքի օդում շենք կառուցելու, ում գլխին է փլվելու այդ առանց հիմքի կառուցած շենքը: Իհարկե, առաջին հերթին հենց իրենց, հետո մեր ժողովրդի, մեր ապագա սերնդի, մեր երկրի:

Դա ավելի շատ զգում ենք մենք՝ ուսուցիչներս՝ ճանաչելով մեր աշակերտներին, որոնք հազիվ ավարտել են դպրոցը, տարրական շատ բաներ չեն կարողացել յուրացնել և... բուհ են ընդունվում:

Ինչպե՞ս են սովորելու, որտե՞ղ են աշխատելու:

Դպրոցում թույլ սովորող աշակերտներին կողմնորոշում ենք համապատասխան մասնագիտություն ընտրել, բայց հայտնվում են ուրիշները, համոզում, վստահեցնում ու բուհ տանում:

Տարիներ առաջ, երբ մասնավոր բուհերը սնկերի պես աճում էին, Երևանի տնտեսահիրավաբանական համալսարանից եկել և մեր շրջկենտրոնում մասնաճյուղ էին բացել ու հերթով մտնում էին դպրոցները և «մեծապատիվ մուրացկանների» պես շրջանավարտներին ստիպում ընդունվել իրենց համալսարանը:

Միջամտեցի մի քանի թույլ աշակերտի համոզելիս՝ ասելով, որ

դրանք ի վիճակի չեն ուսումը համալսարանում շարունակելու, հազիվ ավարտեն դպրոցը: Նա փորձեց համոզել, որ դասախոսներին բարձր աշխատավարձ կտան՝ ժամը՝ 2000 դրամ, այնպես կպարապեն, որ բոլորը գերազանց կսովորեն:

Տեսնելով, որ չկարողացավ համոզել, անկեղծացավ.

-Շենք ենք վերանորոգելու, շատ ուսանողներ են պետք:

Գրպանները լցնելու համար եկան, բռնագաղթից ավերված ու թալանված տները նոր վերադարձած Մարտակերտի շրջանի բնակիչներից 4-5 տարի վարձ հավաքեցին, մի-մի առանց գերբի դիպլոմ տվեցին (որով աշխատանքի չեն ընդունում) ու անհետացան: Մի մասին այդպես էլ պետք չեկավ այդ դիպլոմը, մի մասն էլ ստիպված նորից հինգ տարի վարձ տվեց՝ պետական նմուշի դիպլոմ ստանալու համար:

Ո՞ւմ ենք խաբում: Ո՞ւմ են պետք առանց գիտելիքների դիպլոմները, ինչու՞ ենք զրկում մեր երեխաներին ճիշտ մասնագիտություն ընտրելու հնարավորությունից: Չէ որ այդ դիպլոմները կդատարկեն նրանց գրպանները, բայց շատերին աշխատանք չեն տա, ախր նրանք նույնիսկ չեն հասկանում, որ իրենց գիտական մակարդակը համալսարան ավարտողի մակարդակ չէ:

Հիշում եմ, տարիներ առաջ մի թույլ սովորող աշակերտի զորակոչել էին խորհրդային բանակ: Զինվորական երդումը սովորել չկարողանալու, կարգ ու կանոնը չյուրացնելու համար՝ անպիտանի էր ճանաչվել ու ետ ուղարկվել գյուղ: Պարտադիր միջնակարգ կրթություն իրականացնելու համար այն ժամանակ բացվում էին հեռակա դպրոցներ (գիշերային): Երբ դիմել էինք այդ զորացրվածին՝ հեռակա դպրոցում սովորելու և միջնակարգի ատեստատ ստանալու, հայրը ընդդիմացել էր…

-Այդ խելքի տիրոջը միջնակարգի ատեստատը ինչի՞ն է պետք…

Նման մտածելակերպ ունեցողները հիմա շատ չեն… Հասկանալի է, որ պատերազմի տարիներին ծնված երեխաների հետ հիմա գործ ունենք: Դրանք սովորականից քիչ են: Դպրոցում դասարանները չեն ձևավորվում, բուհերում՝ համապատասխան խմբերը:

Համատարած բուհ ընդունվելու տենդենցը հատուկ է վերջին տարիներին, բայց նույնիսկ 10-15 տարի առաջ ավարտած թույլ աշակերտները, որոնց մտքով այն ժամանակ չէր էլ անցնում ուսումը շարունակել, այժմ ընդունվում են:

Այնպիսի տպավորություն է, որ դիպլոմը անձնագրի պես պարտադիր փաստաթուղթ է դարձել մեր օրերում:

Երիտասարդները, որ փող են տնտեսել, կարող են տուն սարքել, ամուսնանալ, գործ ձեռնարկել, ուրիշներից հետ չմնալու համար

ստիպված են լինելու վարձ տալ, ծախսել ոչ թե սովորելու, այլ չսովորելու համար՝չսովորած քննությունների դիմաց…

Եվ հետո ովքե՞ր են տրակտոր, կոմբայն վարելու, տուն կառուցելու, տանիք թիթեղելու, ծեփելու, ներկելու, անասուն պահելու…ախր բնությունը մարդկանց հավասար հնարավորություններ չի տվել, այնպես է շերտավորել, որ այդ ամենն արվի, ինչո՞ւ ենք խախտում բնության ներդաշնակությունը:

Դիպլոմով չէ, որ մարդ ճանաչում է ձեռք բերում: Մեր հաղթանակը մեծամասամբ առանց դիպլոմի տղաներն են կերտե՝ իրենց քաջագործություններով: Թող մեր երեխաները լավ արհեստավորներ լինեն, քաջ հայրենասերներ, իրենց կարողություններին համապատասխան մասնագիտություն ընտրեն, աշխատեն, կառուցեն, շենացնեն մեր երկիրը, թե չէ չունեցած գիտելիքներով ստացած դիպլոմներով ի՞նչ են անելու, ո՞ւր են հասնելու…

Անգրագետ բուժակն ի՞նչ է անելու զինվորին, անգրագետ ուսուցիչը հաշմանդամ է դարձնում մեր երեխաներին, և ցավալին այն է, որ ամենաթույլ սովորողներն ընդունվում են հեռակա բաժնում, և մինչև իրենց դասարանի լավ սովորողը առկան կավարտի, իրենք ամեն գնով աշխատանքի են խցկվում դպրոցներում, զբաղեցնում լավ ուսանողի տեղը: Առաջնորդվելով «Նա, ով ոչինչ չգիտի, գիտի, թե ամեն բան գիտի» սկզբունքով՝աշխատում են: Ոչինչ, որ հաջորդն ու նախորդը չեն կարողանում տարբերել, քանորդն ու տարբերությունը՝ նույնպես, որ մատյանը տառասխալներով են լրացնում, գնահատականի միջին հաշվել կամ տոկոս որոշել, չեն կարողանում, որ…որ… կսովորեն, մինչև թոշակի անցնելը ժամանակ շատ կունենան սովորելու…

Այս ամենն անդրադառնում է դպրոցներում ուսման նկատմամբ աշակերտների վերաբերմունքի փոփոխմանը:

Համատարած ընդունելությունները, շեմային միավորները իջեցնելը վնասում է դպրոցականներին: Դպրոցներում տիրում է ինքնահանգստացում, աշակերտների մեծամասնությունը հույսը դնում է ձևաթղթում կատարելիք պատահական նշումներին և կանոնավոր չի սովորում, լրջությամբ չի նախապատրաստվում քննություններին: Ինչ մի դժվար բան է 50 կամ 80 հարցից 10-15-ը ճիշտ նշողն ընդունվում է բուհ:

Ձևաթղթերով քննություն տալու առաջին տարում բոլորը լրջությամբ էին մոտենում, անբավարար ստացողներն օրերով լացում էին՝ատեստատ չստանալու համար: Այժմ երկու անբավարար ստացողը չի էլ անհանգստանում, գիտի, որ կրկնակի քննությունների ժամա-

նակ օգնելու են և դրական է ստանալու: Եթե կրկնակի քննությունները չլինեին, անմիջապես կամ պահանջվող ձևով անցկացվեր (ԳԹԿ-ն հսկայական աշխատանք է տանում այդ ուղղությամբ, բայց վերջում ամեն ինչ խախտվում է), աշակերտներն այսքան անտարբեր չէին դառնա ուսման, քննությունների նկատմամբ:

Մեծ գործերը միշտ էլ մեծ զոհեր են պահանջում: Եթե մի տարի շրջանավարտներից ոմանք ատեստատ չստանային, դա օրինակ կդառնար, որ մյուսները լրջությամբ մոտենային քննություններին:

Տարեցտարի նվազում է պատասխանատվությունը, քանի որ բոլորը համոզված են, որ, միևնույն է, ավարտելու են, ընդունվելու են, էլ ինչ կարիք կա չարչարվելու, սովորելու:

Սա գաղտնիք չէ, սա շատերի մտահոգությունն է: Չխաբենք ինքներս մեզ ու մեր ժողովրդին:

Ժամանակն է վերականգնել մեր բուհերի հեղինակությունը, ընդունել միայն համապատասխան գիտելիքներով դիմորդներին՝ոչ թե քանակ, այլ որակ ապահովելու, ոչ թե շենք վերանորոգելու, այլ լավագույն մասնագետներ թողարկելու համար, որպեսզի չվտանգվի մեր երկրի ապագան, թե չէ այսպես ո՞ւր ենք գնում…

«Լուսարար», 2010թ. 27.08.

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆԴ, ԿԻ՛Ն ՏՆՕՐԵՆ

«Ա՛ռյուծն առյուծ է…»

Ուշադրությամբ հետևում էի «Նախապատվությունը տալ կի՞ն, թե՞տղամարդ տնօրենին» հոդվածի արձագանքներին, ցանկանում էի ես էլ իմ խոսքն ասել 30-ամյա տնօրինության իմ փորձից ու համոզմունքներից ելնելով, սակայն կարդալով, որ թեման վերջակետվել է, չարձագանքեցի:

Կանանց տոնի միամսյակին հիշելով հոդվածի արձագանքները՝ մի տեսակ թերագնահատված տեսա կանանց հնարավորությունները և հիշելով ու իմի բերելով իմ սերնդի կանանց ու կին տնօրենների կատարածն ու զգացածը՝ մտածեցի, որ դրանց մի չնչին մասը ներկայացնելով ընթերցողներին, պատկերացում կկազմի, թե ո՞վ է գյուղական դպրոցի կին տնօրենը, ինչպես և ի՞նչ պայմաններում է նա աշխատել ու

աշխատում է (չնայած հիմա հեշտ է աշխատելը նախորդ տասնամյակների հետ համեմատած), որը, կարծում եմ, կփարատի բոլորի կասկածներն այս հարցում, և մեկ անգամ ևս կհաստատվի ժողովրդի իմաստուն խոսքը՝«Առյուծն առյուծ է…»:

Հենց միայն Արցախյան շարժման սկզբում՝ 1988թ. փետրվարի 12-ին, շրջկենտրոնում կայացած առաջին հանրահավաքին տնօրեններից միայն ես եմ ելույթ ունեցել, իսկ երբ կոլեկտիվ նամակներ էինք գրում-Մոսկվա՝ Հայաստանին միանալու խնդրանքով, ես եմ տնօրեններից առաջինը կնիքել, որը ցույց է տրվել շատ ղեկավարների, որպեսզի իրենք էլ ստորագրեն:

1992թ. մարտի 25-ին, երբ Քարվաճառի ազատագրման օպերացիան էր սկսվում, ես ազատագրված գյուղում, ավերված ու թալանված դպրոցում, պարապունքներ սկսեցի՝ դպրոցական գույք բերելով նույն Քարվաճառից: Եվ ոչ միայն ես: Պատերազմի տարիներին ազատագրված գյուղերում բոլոր դպրոցներն էլ բացվել են կին տնօրենների ջանքերով: Վերջինների արածի մասին գրելն այս օրերին կլինի ամենամեծ շնորհավորանքը նրանց տոնին: Բոլոր արձագանք-հոդվածներում էլ ճիշտ բաներ կային: Իսկապես, գյուղական դպրոց տնօրինելը ավելի շատ տղամարդու գործ է, սակայն ոչ թե, հոդվածագրի ասած, «գյուղամիջում անգրագետ գյուղապետի փոխարեն պետության օրենքները պարզաբանելու համար»: Դա այսօր անում է հեռուստատեսությունը (թերթ էլ հիմա համարյա ոչ ոք չի կարդում): Իսկ եթե անգամ նախկինի պես կին տնօրենը պարտադիր շաբաթը մեկ դուրս գա քաղխմբակի, ոչ ոքի չի գտնի ո՛չ գյուղամիջում, ո՛չ էլ ակումբում կամ գրասենյակում:

Այժմ գյուղամիջում հանդիպում ենք միայն խանութների առաջ հավաքված խմբերի, որոնք եռանդով թուղթ են խաղում: Եթե նախկինում տնօրենին տեսնելով՝ դադարեցնում էին խաղալը, այժմ՝ ոչ: Եվ ոչ մի տնօրեն թուղթ խաղացողի մոտ չի կանգնում զրուցելու: Կին լինի թե տղամարդ՝ հիմնական աշխատանքից հետո նա ունի իր առօրյա հոգսերը, իսկ եթե գյուղում նա հեղինակություն է, այնուամենայնիվ, որևէ անհասկանալի հարցի պարզաբանում ստանալու համար ցանկացած մարդ անպայման կդիմի նրան:

Գյուղական դպրոցի տնօրենը ստիպված է բազմաբնույթ աշխատանքներ կատարել: Այն բարեխղճորեն կատարելու համար մեծ ջանքեր են պահանջվում, որը շատ կանանց ուժերից վեր է: Բայց այն կանայք, ովքեր տարիներ շարունակ կարողացել են գյուղում դպրոց ղեկավարել, մանավանդ՝ պատերազմական և հետպատերազմական ժամանակներում, արժանի են դրվատանքի:

Գյուղում դպրոցի տնօրենը կենտրոնական դեմք է, գյուղի ողջ անցուդարձի մասնակիցը, բոլոր միջոցառումների կազմակերպիչը: Ինչքան գյուղը փոքր է, գրագետ մարդիկ՝ քիչ, այնքան տնօրենի գործն ավելանում է: Նախկինում դպրոցի տնօրենը անպայման պիտի լիներ կուսակցական, պրոպագանդիստ, գյուղական խորհրդի դեպուտատ, գործկոմի անդամ, բոլոր ընտրությունների ընտրական հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը, իմ դեպքում՝ նաև շրջանային դատարանի ժողովրդական ատենակալը՝ ենթաշրջանում, մարդահամար անցկացնողը, բոլոր միջոցառումներին՝ զեկուցողը: Փոքր դպրոցների տնօրենները մեծամասամբ չունեին փոխտնօրենի, տնտեսվարի, քարտուղարի, բանվորի հաստիքներ: Տնօրենը պետք է աշխատավարձի ցուցակները կազմեր, աշխատավարձ ստանար ու բաժաներ, գույք ստանար ու տեղափոխեր, աշակերտներով, ուսուցիչներով վառելափայտ մթերեր, վերանորոգում կատարեր, մասնակցեր տարբեր հավաքների, ամիսներով խաղողաքաղի տաներ աշակերտներին, ամռանն ու աշնանը մասնակցեր կոլտնտեսության աշխատանքներին՝ կարտոֆիլ, եգիպտացորեն, կերաճակնդեղ մշակեր, ծխախոտ հավաքեր: Ու այս ամենը՝ պարտադիր տնօրենի մասնակցությամբ, որովհետև այդպես էր պահանջում կուսշրջկոմի քարտուղարը՝ որ ամեն իրիկուն անձամբ զեկուցեին օրվա կատարած աշխատանքների մասին:

Տնօրենը պետք է ամիսը մեկ անգամ պարտադիր մեկներ շրջկենտրոն, որը մեր շրջանի դեպքում գյուղերից 20-80 կմ հեռավորության վրա է: Երբևէ որևէ ղեկավար հարցրել է կին տնօրենին, թե ինչպե՞ս է շրջկենտրոն հասել: Եթե բացակայել է՝ նախատինքի է արժանացել: Բայց մինչև հիմա էլ մի շարք գյուղեր շրջկենտրոնի հետ տրանսպորտային կապ չունեն, շատերն իրենց ամուսիններին աշխատանքից կտրելով՝ սեփական մեքենայով են գնում-գալիս: Իսկ եթե հիշենք, որ 1988-ից հետո նորմալ տրանսպորտային կապ չկար և մեծ դժվարությամբ էինք շրջկենտրոն հասնում՝ բեռնատար մեքենաների թափքում, կցասայլերով, ոտքով… Ցանկացած միջոցառման մասնակցելու համար գնալ-գալով մի ամբողջ օր էինք կորցնում: Իսկ գյուղի դպրոցի տնօրենը նաև տնային տնտեսուհի է, գյուղավարի 4-5 երեխա ունի, մայր է, հարս, կին, պետք է հոգ տանի բոլորի մասին, կով կթի, բանջարանոց մշակի, կենցաղային շատ դժվարությունների դիմակայի: Այն, ինչ չի հասցնում անել ցերեկը, ստիպված կատարում է գիշերը՝ իր հանգստի, առողջության հաշվին:

Իսկ հոգեկան ապրումներն ընտանիքո՞ւմ… Չէ՞ որ անհրաժեշտ է տարբեր ղեկավարների հետ գործ ունենալ, որն անպայման խանդ կա-

ռաջացնի…Հիշում եմ, տարիներ առաջ մի երիտասարդ հարսի տնօրեն էին նշանակել, ամուսինը հետը գալիս էր կրթության բաժին, և կինը որ սենյակ մտնում էր, դռան մոտ կանգնում էր և ականջը հպում դռանը:

Համակարծիք չեմ հոդվածագիրների այն տեսակետին, թե տղամարդ տնօրենը կարող է զբաղվել տնտեսությամբ, և օրինակ է բերում եգիպտացորեն աճեցրած տնօրենին: Նախ՝ դպրոցի ղեկավարի աշխատանքի նպատակը տնտեսություն վարելը չէ, չնայած ցանկացած ձեռներեց տնօրեն էլ պայմանների առկայությամբ կարող է լավ բերք աճեցնել ու վաճառել: Մինչև պատերազմը, երբ դպրոցը ջուր ուներ, դպրոցի այգում լավ բերք ու միրգ էինք աճեցնում: Հիմա որ ջուր չկա, ինչպես աճեցնենք: Մի քանի տարի առաջ, երբ նախարարի հրամանով յուրաքանչյուր աշակերտ հնգական ծառ պիտի տնկեր դպրոցական այգում, ես տնկել տվի 8-ական ծառ (600 հատ): Հանրապետությունում մեր դպրոցը գրավեց առաջին տեղը և պարգևատրվեցինք սեղանի թենիսով: Հին դպրոցի ճանապարհն անցնում էր դաշտի միջով և անտանելի, անանցանելի էր դառնում անձրևոտ եղանակներին: Ես խճապատել տվի այդ ճանապարհը խորհրդային տարիներին, իսկ երբ 90-ականներին վարչապետի նախաձեռնությամբ գյուղական ճանապարհների բարեկարգման մրցույթ եղավ, այդ ճանապարհը սալահատակվեց, և կողքերին 300 լորենիներ տնկել տվեցի: 1980-ական թթ., երբ աշակերտների թիվը 150-ի էր հասել, դպրոցական շենքը չէր բավականացնում, դպրոցի մոտիկ կիսաքանդված շենքը վերանորոգեցի և տասը սենյակ ավելացրի: Պայմաններ լինեն՝ ցանկացած տնօրեն էլ կկարողանա օգտակար բան անել: Մեր հարևան գյուղի՝ Հարգոմերի դպրոցի կին տնօրենը փոքրիկ, ջրովի հողամասից քիչ եկամուտ չի ստանում, Պողոսագոմերի դպրոցական այգ ու բերքից օգտվում են նաև հարևան գյուղերի բնակիչները: Օրինակները բազմաթիվ են…

Ես էլ եմ գերագնահատում տղամարդ ուսուցչի դերը դպրոցում: Անհրաժեշտ է, որ կոլեկտիվը միասեռ չլինի, աշակերտները այրական դաստիարակություն ստանան, մանավանդ դա անհրաժեշտ էր պատերազմից որբ մնացած տղա երեխաներին դաստիարակելու գործում: Բացի այդ, առարկաներ կան, որոնց դասավանդումը հարգի է, որ տղամարդ ուսուցիչը տանի՝ ֆիզիկան, մաթեմատիկան, ֆիզկուլտուրան, ՆԶՊ-ն, տեխնոլոգիան, բայց պարտադիր չէ, որ տնօրենը տղամարդ ուսուցիչ լինի, մանավանդ հիմա, երբ անժխտելի փաստ է, որ դասարանում աղջիկներն ավելի լավ են սովորում, քան տղաները: Լավ սովորող տղաներն էլ ընդունվում են իրավաբանական, տնտեսագիտական, քաղաքագիտության բաժինները: Միջակ սովորող տղաներն են ընտ-

րում մանկավարժական ֆակուլտետ, մեծամասամբ՝ ֆիզկուլտուրայի բաժինը (խոսքս բացառությունների մասին չէ. Վազգեն Սարգսյանն էլ էր ֆիզկուլտուրայի բաժինն ավարտել): Ինչպես կարող է միջակ ընդունակություններ ունեցողը դպրոց ղեկավարել՝ 20-30 բարձրագույն կրթությամբ ուսուցիչների, 100-200 աշակերտների՝ դպրոցի առջև դրված ներկայիս պահանջներին համապատասխան: Իմ կարծիքով, դպրոցի տնօրենը պետք է կոլեկտիվում աչքի ընկնի իր մասնագիտական, մանկավարժական, քաղաքական գիտելիքներով, լինի բազմակողմանի զարգացած, կարողանա ճիշտ գնահատել ուսուցիչներին, ի վիճակի լինել ուղղություն տալ տարբեր առարկաներ դասավանդող մանկավարժներին (պարտավոր է տարեկան լսել 180 ժամ դաս): Պետք է ունենա կազմակերպչական շնորհք, համապատասխան տակտ, հեղինակություն շրջապտում, գյուղում, օրինակելի ընտանիք, երեխաներ, չունենա խոցելի տեղ ո՛չ աշխատանքում, ո՛չ կյանքում, ո՛չ ընտանիքում, որպեսզի ուրիշներն իրենց երեխաների դաստիարակությունը վստահեն նրան: Պետք է լինի անաչառ, պատասխանատու, սիրի աշխատանքը: Դաստիարակության հարցում մանրուքներ չկան. նա պետք է ուշադիր լինի ամեն ինչի նկատմամբ՝ սկսած դպրոցի բակում ծաղիկ ցանելուց, ծառ տնկելուց, դասարանները, միջանցքները, փառքի անկյունը կահավորելուց մինչև ճիշտ գործավարություն՝ գույքագրում, բազմաթիվ հաշվետվություններ, լսած դասերի ճիշտ վերլուծություն, կարողություններին համապտասխան դասաբաշխում կատարելը:

Կարևորը սեռը չէ: 30-ամյա իմ տնօրինության ժամանակ առնչվել եմ բազմաթիվ տնօրենների հետ և՛ տղամարդ, և՛ կին, աշակերտել եմ Առաջածորի միջնակարգ դպրոցի լավագույն ճանաչված ուսուցիչներին, տնօրեն Արիս Պողոսյանին, որոնցից սովորած շատ ու շատ բաներ կիրառել եմ իմ աշխատանքային պրակտիկայում:

Արժանի լինենք մեր կոչմանը, լավ օրինակ հանդիսանանք այն երիտասարդների համար, ովքեր կփոխարինեն մեզ՝ անկախ սեռից:

Շնորհավորում եմ բոլոր արցախուհիներին, առանձնապես ուսուցչուհիներին, կին տնօրեններին՝ կանանց միամսյակի կապակցությամբ:

«Լուսարար», 2010թ., 03.30 N 9-10

ԱՅԼԱԶԱՆՔ

ՀԱՅԵՐՆ ԱՊՐԵԼ ԵՆ, ԱՊՐՈՒՄ ԵՆ, ԿԱՊՐԵՆ...

Ցանր, օրհասական օրեր ենք ապրում: Ինչեր ասես, որ չտեսանք վերջին երկու տարում (մինչ այդ տեսածները՝ոչինչ):

Դեմոկրատիայով խաբված՝ազգային զգացումների բուռն ժայթքում, շուրջօրյա ցույցեր, գործադուլներ, հացադուլներ «վերևների» ոչ օբյեկտիվ, կիսատ-պռատ որոշումներ, եղեռն, երկրաշարժ, գաղթականներ, շրջափակում, ճանապարհային խուլիգանություններ, ուտելիքի, վառելիքի առաջին անհրաժեշտության ապրանքների պակաս, վիրավորանքներ, տեսակ-տեսակ պիտակներ, նաև երաշտ, ավերիչ քամիներ, ջրհեղեղներ, հուսահատություն, հուսախաբություն, անվստահություն երկրի ղեկավարների նկատմամբ և այլն…

Այս ամենը, ինչ խոսք, զայրույթի, արդար բողոքի, նաև ինչ որ տեղ վաղվա օրվա նկատմամբ անորոշություն է առաջացրել շատերի մոտ, և քանի որ օրեցօր ավելի է շիկանում իրադարձությունը, մեկը մյուսից անհաճո լուրերը սղոցում են մարդկանց, առանց այն էլ, քայքայված նյարդերը և հասցնում հուսահատության:

Իհարկե, կան նաև լավատեսորեն մտածողներ, որոնք քաջատեղյակ լինելով պատմության արյունոտ էջերին, նման օրհասական օրերին, գիտակցում են, որ ամեն ինչ ժամանակավոր է, նորից մեր կյանքը կմտնի նորմալ հունի մեջ, և հայը, որին իրավամբ համարում են մոլորակի աղը, նորից կվերագտնի իրեն:

Ես, որ հեշտ հուսահատվողներից չեմ, ուզում եմ իմ ազգակիցներին վարակել լավատեսությամբ, համոզել նրանց չվհատվել, որովհետև դարերով այսպիսինն է եղել մեր բախտը, մեր ճակատագիրը և պատահական չէ, որ թևավոր խոսքեր են դառել «հայի ճակատագիր», «հայոց հարց» բառակապակցությունները:

Եվ որպեսզի մեր ընթերցողներին վարակած լինեմ լավատեսությամբ, ցանկանում եմ բառացի մեջբերել 5-րդ դարի պատմիչ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերջաբանից, հանրահայտ

«Ողբ»-ից մի հատված, որը համահունչ է ներկայիս կյանքին. «…և տարրերը փոխել են իրենց բնույթը, գարունը երաշտված, ամառը սաստիկ անձրևային, աշունը ձմեռ դարձած, ձմեռը սաստիկ ցուրտ, մրրկալից և երկարատև: Քամիները բքաբեր ու խորշակաբեր, ցավեր տարածող, ամպերը կայծակներ թափող, կարկտաբեր, անձրևներն անժամանակ և անօգուտ, եղանակը դաժան, եղյամաբեր, հողի պտուղների անբերրիություն և անասունների անաճելիություն, այլև երկրաշարժեր և սասանումներ: Եվ այս բոլորի վրա ամեն կողմից խռովություն, համաձայն այն խոսքի, թե անբարիշտներին խաղաղություն չկա: Որովհետև մեզ տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս: Կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացված՝ հավատը ծախվում է այս ունայն կյանքի համար: Ավազակներ են գալիս անհատնում և շատ կողմերից տները թալանվում են, ունեցվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ գլխատվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սովեր և հիվանդություններ և բազմատեսակ համաճարակներ: Աստվածապաշտությունը մոռացված է և կա դժոխքի ակնկալություն»:

Շատ անգամ եմ կարդացել Խորենացու «Ողբը», ուսուցանել աշակերտներին, բայց այսօր ինձ այնքան համահունչ թվաց մեր օրերին, որ ցանկացա նաև ներկայացնել մեր ընթերցողներին, որպեսզի նրանք համոզվեն, որ 1500 տարի առաջ էլ (և շատ անգամ) հայերն ապրել են նման դժվար օրեր, բայց միևնույն է, հարատևել են, ի հեճուկս մեր թշնամիների և համոզված եմ՝կհարատևեն…

«Բարեկամություն», 1989թ.

ԹՈՂ ԲՈԼՈՐ ՀԱՅԵՐԻ ՇՈՒՐԹԵՐԻՑ
ՀԱՅԵՐԵՆԸ ԿԱՐԿԱՉԻ

Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզունա ու հավատը:
Լեզուդ փոխի՛ր, հավատդ ուրացի՛ր, էլ ինչո՞վ կարես ասիլ,
թե՞ որ ազգիցն ես, ձեզ եմ ասում, ձեզ, տասը լեզու սովորեք,
ձեր լեզուն, հավատը դայիմ բռնեցեք:
Խաչատուր Աբովյան

Մեծ լուսավորչի այս իմաստուն խոսքերը գրվել են այն ժամանակ, երբ հայոց լեզուն օրհասական պահեր էր ապրում, բայց դրանք արդիական են նաև այսօր, չնայած հայոց լեզուն երկու հայկական՝ Հայաստանի և Արցախի պետությունների պետական լեզուն է, գտնվում է բոլորիս հոգածության և ուշադրության կենտրոնում:

Ճակատագրի բերումով, հայերի մի ստվար մասը սփռվել է աշխարհով մեկ, զրկվել է հայրենիքում ծնվելու և ապրելու իրավունքից, հեռու մնալով՝ խորթացել մեր երկրից, սովորություններից ու լեզվից:

Դարեր շարունակ պետականություն չունեցող մեր ժողովրդին, իսկապես, հայ են պահել մեր լեզուն ու հավատը:

Հայկական բարձրավանդակում ապրած հնագույն շատ ցեղերի նման պատմության ասպարեզից կանհետանար նաև հայ ժողովուրդը, եթե չպահպաներ իր լեզուն:

Կմոլորվեր մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին,

Կկորչեինք, եթե ճամփին չբոցկլտար հայոց լեզուն:

Իր պատմական ճանապարհին հայ ժողովուրդը շատ բան է կորցրել՝ թագ ու գահ, զորք ու գույք, հող ու սար…

Պահածների մեջ ամենաթանկն ու անփոխարինելին լեզուն է: Այն խլել չկարողացան, քանի որ մեր հոգու մեջ էր: Քանի կապրենք մենք, կապրի նաև հայերենը, վստահորեն կարելի է ասել և հակառակը՝ քանի կապրի հայերենը, կապրի նաև հայը:

Լեռնաբուխ սառնորակ աղբյուրների քաղցրահնչուն կարկաչն է մեր լեզվի մեջ, ցորեն հացի ու երփնագույն ծաղիկների բուրմունքը, մանուկների անուշ թոթովանքը, բյուր նահատակների վերջին հառաչանքն ու նրանց մայրերի ու զավակների մորմոքը, արարման աշխարհալուր ղողանջը:

Նրա խնամքը, անաղարտությունն ու պաշտպանությունը դրված են մեզ վրա: Մենք պետք է կամուրջ դառնանք նրա դարեդար անցումին,

մեր շուրթերով պիտի բորբոք պահենք նրա վահագնաբոց կրակը, մեր շնչով ու արյունով պիտի կրենք նրան մեր մեջ և փոխանցենք մեր սերունդներին:

Աշխարհասփյուռ մե՛ր հայրենակիցներ, ուզենք թե չուզենք, մեր լեզվի հարատևության շղթայի մի օղակն ենք և չպետք է թույլ տանք, որ շղթան այդ կտրվի: Հայոց այբուբենի տառերը զինվորների պես պաշտպանել են մեզ մեր թշնամիներից: Մենք նախ պետք է խոնարհվենք Մաշտոցի առաջ, որ երկնել է հայ տառերը, և որպեսզի դուք և ձեր սերունդները հայ մնաք, ուր էլ լինեք, պիտի հայոց լեզուն չմոռանաք:

Հասկանալի է, որ դուք պետք է իմանաք այն երկրի լեզուն, որտեղ ապրում եք, որի քաղաքացիներն եք: Դա անհրաժեշտություն է: Սովորեք այնքան օտար լեզուներ, որքան կարող եք, չէ՞ որ «քանի լեզու գիտեք, այնքան մարդ եք»: Երբեք չդավաճանեք ձեր հոգու լարերին՝ ձեր մայրենիին: Չփոխեք այն ո՛չ տիտղոսներով և ոչ դրամով:

Ձեր համար երևի դժվար է արտահայտվել օտար բառերով: Դուք մտածում եք մայրենի լեզվով և մտքում թարգմանում: Եթե մայրենին չփոխանցեք ձեր որդիներին, նրանք օտար լեզվով կմտածեն ու կարտահայտվեն: Իր ազգն ու ազգայինը, իր մայրենին չսիրողն ու չիմացողը չի կարող ուրիշներին սիրել և հոգով կսննկանա... Ծանոթացրեք ձեր որդիներին հայերենի գանձերին, հոգով ունկնդրեք ձեր նախնիներին և հայ մնացեք:

Չնմանվեք այն բախտախնդիրներին, որոնք օտարամոլությունից ու շահամոլությունից դրդված, նույնիսկ ազգանվան «յան»-երն են ջնջել և «ով»-երով փոխարինել: Անցել են այդ տխուր ժամանակները, ազգային զարթոնք է ապրում մեր ժողովուրդը, աշխարհում ճանաչում ունենք, հպարտությամբ կրեք ձեր ազգանունն ու հայեցի անունը, այն փոխանցեք ձեր որդիներին ու թոռներին, պատգամեք նրանց նույնն անել, և թող ձեր քաղցրահնչուն անունը մնա և արտասանվի հայերեն՝ աշխարհի բոլոր ծայրերում:

Ձեր հայեցի անվամբ, հայաբառ խոսքով ու բազմաթիվ անտեսանելի թելերով կապված կլինեք ձեր հայրենիքին՝ ինչքան էլ հեռու լինեք նրանից:

Ինչքա՜ն հուզմունք ու ոգևորություն էին առաջ բերել Արցախյան շարժման առաջին օրերին օվկիանոսից այն կողմ ապրող հայ երեխաների ցույցերն ու կոչերը մայրենի լեզվով:

-Մենք ուզում ենք Արցախը մերը լինի:

Մենք՝ արցախցիներս, շնորհակալ ենք մեր այն բոլոր հայրենակիցներից, ովքեր, ապրելով հայրենիքից հեռու, չեն կորցրել հայկական

ոգին ու հայ ոսկեղենիկ խոսքը, սատարում են մեզ՝ նյութապես ու բարոյապես:

Հեռավոր մե՛ր հայրենակիցներ, մենք էլ ուզում ենք, որ հայերենը միշտ ձերը մնա:

Ուրախությամբ ենք լսում, որ սփյուռքի հայկական շատ համայնքներում կիրակնօրյա հայկական դպրոցներ են բացվում, հասկանում ենք նաև, որ հնարավոր չէ աշխարհի բոլոր ծայրերում ապրող հայ երեխաների համար դպրոցներ բացել: Դա պետք է անեն նրանց ծնողները՝ գիտակցելով, որ կուլ չգնալու համար հայեցի դաստիարակություն տալն անհրաժեշտություն է:

Հայ մայրերը գաղթի ճանապարհին մագաղաթյա փթանոց մատյաններ են տեղափոխել:

Հայ ժողովուրդը զենքով պաշտպանել է իր մատյանները, թաքցրել, փրկագնել, նորանոր օրինակներ արտագրել:

Մատյանները թաղել են ու դրանց վրա ողբացել, ինչպես զոհված մարտիկների վրա: Օժիտ են տվել մատյանները, հիվանդներ են բուժել նրանցով՝ գլխների տակ դնելով:

Գաղթական հայ մայրերը ավազի վրա այբուբեն են սովորեցրել իրենց երեխաներին:

Այժմ բազմաթիվ հնարավորություններ ունեք ձեր երեխաներին մայրենի լեզուն ուսուցանելու, ազգային ավանդույթներին ծանոթացնելու, նրանց հայեցի դաստիարակելու համար: Ձեզ կօգնեն համակարգիչները, հեռուստատեսությունը:

Մայրենին յուրաքանչյուր մարդու հոգու մեջ է, այն կարող է հորդալ ուրախության և տխրության պահերին:

Ձորավար Գայը՝ Հայկ Բժշկյանցը, կատարելով պետական կարևոր առաջադրանք, ռուսական քաղաքի հրապարակում հավաքված բազմությանը զարմանք պատճառեց՝ հուզմունքից ելույթը հայերեն սկսելով՝ չնայած երկար տարիներ հայերեն չէր խոսել («Ընկերնե՛ր, ընկերնե՛ր...»):

Հրաչյա Քոչարի «Արյան կանչով» պատմվածքի հերոսուհի Ասյան՝ Աստղիկը, որը երեք տարեկանում Արցախից տեղափոխվել էր Պետերբուրգ և հայկական միջավայրից կտրվելով, մոռացել էր հայերենն ու ռուսացել, մահվան շեմին հանկարծակի սկսել էր զառանցել հայերենով: 75 տարի առաջ մարած, կորած հնչյունները կենդանացել ու արձագանքել էին նրա հոգու խորին գաղտնարաններում և այնտեղից դուրս գալով՝ թրթռում էին շրթունքների վրա:

«Ձորանա՛ս, քե մատաղ, զորանա՛ս»... Աշխարհասփյու՛ռ հայրենա-

կիցներ, ինչպիսի պայմաններում էլ ապրեք, ձեզ պակասում է մի բան՝ հայրենիքի կարոտը: Երկիր մոլորակի վրա ամեն մի թռչուն իր բունն ունի, ամեն ազգ՝ իր հայրենիքը: Հայինը քարքարոտ Հայաստանն է՝ արևահամ մրգերով, քաղցրաբառ լեզվով:

Հիշե՛ք, առանց ձեզ օտար երկրներում կյանքն իր սովորական հունով կգնա, ձեր բացակայությունն այնտեղ այնքան էլ չի զգացվի, բայց դուք պետք եք ձեր հայրենիքին, Հայաստանին ու Արցախին, որտեղ դատարկ տները ձեզ են սպասում, իսկ եթե չեք կարող վերադառնալ, որտեղ էլ լինեք՝ հայ մնացեք:

Բայց նա է հայ, ով հովազի,
Արնախում երախումն էլ
Իր մայրենի լեզվով խոսի,
Մոր կաթի հետ ծծած լեզվով...

Դժբախտաբար, միայն օտարության մեջ ապրող մեր հայրենակիցներից շատերը չէ, որ մայրենի լեզվով չեն խոսում: Մեզ մոտ էլ կան այնպիսի անհատներ, որոնք երևի շրջապատում տարբերվելու համար խոսում են ոչ հայերեն, կամ էլ՝այնքան օտարահունչ բառեր են օգտագործում, որ հայերենը ծաղր ու ծանակի է ենթարկվում:

Եկեք ոչ միայն խոսենք հայերեն, այլև անաղարտ պահենք այն՝ լինի դա գրականը թե բարբառը:

Թույլ չտանք մեր լեզուն ավերեն,
Եկ խոսենք, միշտ խոսենք հայերեն...

«Լուսարար», 2013թ. N5-6

ՕՐՀՆՎԻ ԾՆՈՒՆԴԴ, ՄԱՆԿԻ՛Կ

1988 թվականը ազգային զարթոնքի, մաքառումների, սպասումների, տառապանքների տարի եղավ հայերիս համար, տարի, որ սկսվել էր հզոր ցույցերով, գործադուլներով, հացադուլներով և ավարտվեց բնության հզոր ու դաժան խաղով՝ երկրաշարժով: Վայրկյանների ընթացքում փլատակների է վերածվել Հայաստանի մեկ երրորդ մասը, հիմնահատակ կործանվել են մի քանի տասնյակ բնակավայրեր, զոհվել տասնյակ հազարավոր մարդիկ: Երկրաշարժի պատճառած ծանր հետևանքները վերացնելու համար ոտքի ելավ ամբողջ աշխարհը, և այսօր աղետի գոտում վեր բարձրացող շենքերը, թաղամասերը դրա վառ ապացույցներն են:

Շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր ձեռք մեկնեցին Հայաստանի վիրավոր, բզկտված մարմինն ապաքինելու, նաև հազար ամոթ նրանց, ովքեր մարդկային կերպարանքը կորցրած, գայլերի ու բորենիների մոլեռանդությամբ ուզում են հոշոտել հայ ժողովրդին, ավերել, ոչնչացնել այն ամենը, ինչը հայկական է կոչվում:Նաև ամեն կերպ ձգտում են փոխել Արցախի ազգաբնակչության տոկոսային հարաբերությունը՝ հօգուտ իրենց: Ի հեճուկս նրանց, այսօր արցախցի մայրերը կրկնակի պարտավոր են երեխաներ ունենալ և՛ հանուն Արցախի, և՛ հանուն հայության: Այո՛, շաբաթներով ցրտաշունչ ձմռանը շաբաթներով մարզկենտրոնի հրապարակում ցույցի կանգնող կինը չպիտի զլանա անքուն գիշերներ անցկացնել մանկան օրորոցի մոտ, որը գոյատևման համար ցույցերից պակաս պայքարի միջոց չէ:

Չնայած դեռ թարմ է ու բոլորիս զգացնել է տալիս ահավոր երկրաշարժի տարելիցը, բայց ես հոգեկան որոշ բավարարություն եմ զգում, քանզի աղետի հետևանքները վերացնելու համար արված նյութական համեստ ներդրումներից բացի, մեր ընտանիքում լույս աշխարհ եկավ մի փոքրիկ Արցախիկ, որն անվանակից Արցախ աշխարհի պես չի հանդուրժում բարուրի գերութունը և փոքրիկ թաթիկները գլխից վեր պարզած՝ միացում է պահանջում:

Կմեծանա նա, կպատմենք նրան իր ծննդյան ու անվան հետ կապված հիշողությունները, կդաստիարակենք այնպես, որ արժանի լինի իր անվանը, դառնա իր հայրենի երկրամասի իսկական զավակը՝ իր մյուս երեք եղբայրների հետ:

Ուրախ եմ նաև, որ Արցախիկը միակը չէ, նույն նպատակով Արցախուհի է ունեցել և մեր դպրոցի արհկոմի նախագահ Աբրահամյանը,

իսկ գյուղում մեզ հետևողները քիչ չեն, շատերի տանը շուտով հինգերորդ մանկան ախորժալուր ձայնը կլսվի…

Այո, այն մայրը մայր չէ, ով կարող է, բայց չի ուզում ազգը բազմացնել, այն օջախը հայի օջախ չէ, այն հայն էլ հայ չէ, ով իր հարկի տակ կարող է, բայց չի ուզում ունենալ Անդրանիկ, Գևորգ, Սերոբ, Հրայր…

Կոչ եմ անում բոլոր հայ մայրերին՝ հանուն Արցախի, հանուն հայության, երեխաներ ունեցեք…

«Խորհրդային Հայաստան», մարտ 1990թ.

ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ, ՀԱՆՈՒՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

Համագումարի մասնակիցներ

ԼՂՀ ԿՄՍ աշխատողների առաջին համագումարում տագնապ հայտարարվեց մեր որոշ գյուղերի դատարկվող դասարանների մասին: Իրոք, ցավալի է, որ արյամբ ազատագրված մեր գյուղերի մի մասը դատարկվում է, դասարանները՝ միացվում, դպրոցները հայտնվում են փակվելու վտանգի առաջ:

Դրա համար պետք է մտահոգվենք բոլորս՝ պետական բարձրաստիճան ղեկավարներից մինչև հողագործը:

Ահա թե ինչ է մտածում այդ մասին Մարտակերտի շրջանի Վ. Հոռաթաղի միջնակարգ դպրոցի տնօրեն Նաիրա Առստամյանը՝ նա, ով դեռ 1980-ական թվականներին գյուղի ութամյակը միջնակարգի վերածելու նպատակով կոչ արեց դպրոցի ուսուցիչներին ու գյուղի կանանց՝ ընտանիքում երեխաների թիվը ավելացնել և ինքը անձնական օրինակ ծառայեց:

-Որպես իմ հայրենիքի ճակատագրով մտահոգված քաղաքացի՝ ինձ անչափ հուզում է այդ հարցը:

Յուրաքանչյուր թողարկման երեկոյի ես իմ շրջանավարտներին պատգամում եմ՝ չլքել Արցախը, շատ երեխաներ ունենալ: Արդյունքը կա: Միայն վերջին երեք տարում պետության կողմից 6 և ավելի երեխաներ ունեցողների համար կառուցվել է 3 տուն, շատ երիտասարդ ընտանիքներ ունեն 4 և 5 երեխա, բազմազավակությունը հարգի է մեր գյուղում, յուրաքանչյուր երեխայի ծնունդ ուրախություն է բերում բոլորիս:

Այդպիսի քարոզչական-բացատրական աշխատանքներ ես տարել եմ նաև 1989թ. և լավ արդյունքի հասել: Այդ մասին գրվել է և՛ այն ժամանակ մեր շրջանային «Բարեկամություն» թերթի 1989-ի թիվ 144-ում՝ «Հանուն Արցախի, հանուն հայության» վերնագրով. և՛ «Խորհրդային Հայաստան» թերթի 1990թ. Մարտի համարներից մեկում՝ «Օրհնվի ծնունդդ, մանկի՛կ» վերնագրով:

Բանն այն է, որ Սումգայիթի ողբերգությունից, Սպիտակի երկրաշարժից հետո ես թերթերում հանդես եմ եկել կոչով այդ առթիվ, որ ամբողջ աշխարհը ոտքի է ելել՝ օգնելու վերացնելու երկրաշարժի պատճառած՝ միլիարդների հասնող նյութական վնասները, բայց ոչ մի ազգ, ոչ մի երկիր չի կարող վերադարձնել հայ ժողովրդի կորած տասնյակ հազարավոր մարդկանց կյանքը՝ ինչքան էլ սրտացավություն ցուցաբերի:

Այդ մեծ պատասխանատվությունն ընկնում է հայ կանանց վրա: Միայն նրանք կարող են հնարավորին չափով լրացնել ազգի կորուստը, ծննդաբերել այն կանանց փոխարեն, ովքեր չհասցրին վայելել մայրության բերկրանքը, ովքեր անդամահատվեցին և ի վիճակի չեն մայրանալ, լրացնել այն աշակերտների պակասը, որոնց դասարանները դամբարանների վերածվեցին, այն ուսանողների պակասը, որոնք լավագույն մասնագետներ կլինեին, վերջապես կորցրած ապագա հայ գիտնականների, գրողների, բժիշկների, ուսուցիչների, բանվորների ու հողագործների պակասը լրացնել: Միայն հայ մա՛յրը կարող է լրացնել հայի կորուստը, և թող յուրաքանչյուր հայ երիտասարդ կին ընկալի, որ այս կոչը հենց իրե՛ն է վերաբերվում և ազգին նվիրի երեխաներ, որը կլինի ամենամեծ նվիրատվությունը և հայրենասիրությունը:

Նշել էի նաև, որ այն ժամանակ՝ 1989թ., մեր հակառակորդներն ամեն կերպ ձգտում էին փոխել Արցախի ժողովրդագրական վիճակը՝ հօգուտ իրենց, և Արցախի մայրերը, ի հեճուկս նրանց, կրկնակի պարտավոր են երեխաներ ունենալ հանուն Արցախի, հանուն հայության:

Ցրտաշունչ ձմռանը հրապարակում շաբաթներով ցույցի կանգնող կինը չպիտի զլանա անքուն գիշերներ անցկացնել մանկան օրոցքի

մոտ, որը գոյատևման համար ցույցերից պակաս կարևոր պայքարի միջոց չէ:

Այո՛, հայրենասեր չէ այն կինը, ով կարող է, բայց չի ուզում իր ազգը բազմացնել, այն հայը հայ չէ, ով իր հարկի տակ չունի Անդրանիկ, Գևորգ, Հրայր, Սերոբ, Աստղիկ, Անահիտ…

Կոչ եմ անում բոլոր հայ մայրերին՝ հանուն Արցախի, հանուն հայության՝ զավակներ շա՜տ ունեցեք:

Իմ այս կոչն անարձագանք չմնաց: Չնայած երեք որդիներս արդեն դպրոցականներ էին, բայց, անձնական օրինակ ծառայելով մեր գյուղում, երկրաշարժի տարեդարձին մեր ընտանիքում ունեինք արդեն փոքրիկ Արցախիկ, իսկ գյուղում, իմ օրինակին հետևելով, սովորական 8-10 երեխայի փոխարեն ծնվեցին 2 տասնյակից ավելի երեխաներ՝ հաջորդ 1990-1992 թվականներին՝ նույնպես: Երբ հաշվետվություն էի ներկայացնում, այն ժամանակվա մեր շրջանի կրթության բաժնի վարիչ Ռ. Բաղդասարյանը զարմանքով հարցրեց.

- Այսքան երեխաներ որտեղի՞ց ես հավաքել…

Իմ այս կոչից հետո շատ բան է փոխվել Արցախում. պատերազմ է եղել, բռնագաղթ, հետպատերազմական շատ ծանր պայմաններ, բայց հային բավական է 10 տարի, որ նորից կարողանա ոտքի կանգնել, բարվոք կյանքով ապրել, և ժամանակն է, որ նորից այս կոչն արձագանք գտնի Արցախում, որ մեր երիտասարդներն զգան, որ պետք է երեխաներ ունենան նաև իրենց զոհված ընկերների, հարազատների փոխարեն, նրանց անուններով կոչեն իրենց որդիներին. չէ՞ որ արյամբ գծված հայրենիքի սահմանները պահող է պետք, նորակառույց դպրոցներին աշակերտներ են պետք, ազատագրված գյուղերին՝ բնակիչներ:

Այսօր շատերը պատճառաբանում են, թե միջոցներ չունեն շատ երեխաներ խնամել, բայց, դժբախտաբար, բարեկեցիկ, ճոխ կյանքով

ապրողներն են քիչ երեխաներ ունենում:

Շատերը մեկ-երկու երեխա են ունենում և, իբր, շատ սիրելով նրանց, տալիս են ամեն ինչ՝ շքեղ բնակարան, մեքենաներ, ամառանոցներ, կրթություն, պաշտոն՝ առանց հասկանալու, որ իրենց միանուագար որդուն զրկում են շատ մեծ հարստությունից:

Մի՛ զրկեք ձեր երեխաներին քույր-եղբայր ունենալու երջանկությունից, մի՛ զրկեք ձեր սերունդներին հորաքույր-մորաքույր ունենալու բերկրանքից, քեռի-հորեղբայր դառնալու հաճույքից:

Շատ երեխաներ ունենալու բոլոր դժվարությունները կնսեմանան, երբ ձեր օջախում ուրախ կամ տխուր առիթով հավաքված որդիներիդ, թոռներիդ պատճառով սեղանի շուրջ նստելու տեղ չեք ունենա:

Արցախի երիտասա՛րդ մայրեր, ձեր տատիկները, մայրիկները պետք եղած ժամանակ զենքը ձեռքներին պաշտպանել են հայրենիքը, մարտնչել թշնամու դեմ:

Այսօր դրա կարիքը չկա: Շատ որդիներ ծնելով դուք էլ դարձեք հայրենասեր՝ հանուն մեր չքնաղ Արցախի, հանուն՝ հայության:

Իսկ նրանք, ովքեր այլևս չեն կարող երեխաներ ունենալ, թող հետևեն բարերար Լևոն Հայրապետյանին և իրենց կողքին ծնվող յուրաքանչյուր երեխայի նվիրատվություն անեն, ստեղծեն երիտասարդ ընտանիքներին աջակցելու հիմնադրամ, որպեսզի նրանք շատ երեխաներ ունենան:

«Ազատ Արցախ», 29 օգոստոս, երեքշաբթի 2006թ.

ՀԱՎԱՏ ՆԵՐՇՆՉՈՂ ԳՈՐԾ

«Ծառ կտրելը մարդասպանության չափ մահացու մեղք է,
մրգատու ծառ կտրողը մարդ էլ կսպանի»:
Մխիթար Գոշ «Դատաստանագիրք»

Դժբախտաբար բոլորը չէ, որ ծառի նկատմանբ պաշտամունք ունեն, այլապես չէին անհետանա մեր երկրամասի բազմաթիվ այգիները, որոնց շարքում և մեր՝ Վ. Հոռաթաղի՝ շրջանում իր անուշահամ խաղողով ու խնձորով հայտնի «Արշակեն բաղը»:

Եթե խաղողը «Ալկոհոլիզմի դեմ պայքարի» որոշման զոհը հաշվենք, ապա երիտասարդ խնձորի, տանձենիների և մյուս ծառերի «մեղքը ո՞րն էր»:

1988թ. Փետրվարի այն օրերին էր, երբ գյուղի մեծամասնությունը Ստեփանակերտում ցույցի էր կանգնել օրերով: Գյուղ գալուց ականատես եղանք ցնցող պատկերի: Տրակտորով պոկոտում էին գյուղի մուտքի մոտ գտնվող այգու մրգատու ծառերը, շատերը հենց նոր պոկած երիտասարդ խնձորենիները շալակած տանում էին իրենց այգիներում տնկելու:

Տարիներ են անցել, բայց մինչև հիմա էլ չեմ կարողանում մոռանալ, թե ինչպես էր հսկա տրակտորը «մենամարտի մտել» հոնի մի ծառի հետ, քանի անգամ էր հարվածում, բայց պոկել չէր կարողանում: Մոտը կանգնած ղեկավարների անտարբեր հայացքների առաջ վերջապես տապալվեց « կողքահաստ» հոնին, որն իր համեստ սաղարթով ոչնչով չէր կարող խանգարել նրանց, ինչքան էլ ռացիոնալ օգտագործել ցանկանային այգու տարածքը:

Երբ անձամբ դժգոհություն հայտնեցի բերքատու այգին ոչնչացնելու համար, տնտեսության ղեկավարը(հարևան գյուղացի) պատասխանեց.

-Ի՞նչ եք անում ծառերը, տեղը առվույտ կցանենք, կկանաչի, նայողի քեֆը կգա:

Երեք տարի է առվույտի առատ բերք է աճում այդտեղ, չգիտեմ դրանից իրենք ինչպիսի հաճույք են ստանում, բայց մեր գյուղացիներից ոչ մեկի քեֆն էլ չեկավ առվույտի կանաչից (ոչ՝ նրա համար, որ անճաշակ են) այլ ամեն անգամ ափսոսանքով են նայում տարիների չարչարանքով աճեցրած ծառերի ջարդոտված, վիրավոր, կանգուն բներին և երազում խոշտանգված այգու փոխարեն նորն ունենալ:

Սակայն նրանց երազանքը իրականություն է դառնում միայն տնտեսության ապախոշորացումից հետո:

Ընդամենը մեկ տարվա պատմություն ունի մեր տնտեսությունը, գյուղացիների պահանջով ձեռնամուխ են եղել այգու վերականգնմանը:

Օրերս մայր Հայաստանից բերված խնձորենու 250 տնկիներ տնկվեցին այգում, կբերվեն նաև ծիրանենիներ, խաղողի և այլ ծառատեսակներ, ասել է, թե Վ. Հոռաթաղի այգին «հարություն է առնում»:

Այո, ծառ կտրելը մարդասպանություն է..., ես կավելացնեի... ծառ տնկելը նման է մանկածնության, առանց որի բնությունը հարատևել չի կարող»: Բնության մեծ սիրահար Ղևոնդ Ալիշանի ասած. «Երկրիս երեսին ամեն գլխավոր վայելչությունը ծառն է, և բնության տաճարին սյուները ծառերն են, որոնց թևերը իրար խառնված՝ անթիվ և մեջեմեջ կամարներ կկապեն: Թերևս հիմքերն ալ...»:

Հայը միշտ էլ պաշտել է ծառը, իր նորածնին ծառերի անուններ է տվել՝ Սոսի, Չինարի, Դեղձիկ և այլն, հայն իր զավակներին խորհուրդ է տվել. «Թե ուզում ես քեզնից հետո մարդիկ քեզ հիշեն զավակ ունեցիր, տուն կառուցիր, դաշտ մշակիր ու ծառ տնկիր»:

Արցախում այսօր մի նոր այգի է հիմնվում: Նախաձեռնողները կհիշվեն անպայման, չեն մոռացվի նաև այգին ոչնչացնողները: Վ. Հոռաթաղում կատարվում է հույս ու հավատ ներշնչող մի գեղեցիկ գործ ևս, որովհետև այսօր ծառ ենք տնկում, նշանակում է ավելի ենք ամրանում մեր հողին, մեր տանը, մեր գյուղին, մեր Արցախին:

Համոզված ենք, որ մի քանի տարուց հետո Հայաստանի տնկիները փարթամորեն կաճեն արցախյան հողում, իրենց անուշահամ պտուղներով կքաղցրացնեն մեր կյանքը և մոռացնել կտան այս օրերի դառնությունը…

«Զրաբերդ», 1991թ. 5 մայիս

ՈՐ ՉԱՐՑՈՒՆՔՈՏՎԵՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՉՔԵՐԸ

Մեր երկրում մեծ հոգատարություն է տարվում երիտասարդ ընտանիքների ամրապնդման ուղղությամբ: Չնայած դրան՝ դեռևս շատ են ամուսնալուծությունները: Դեռ ոչինչ, երբ ամուսինները չունեն երեխաներ, կամ չեն ունենալու համատեղ ամուսնական կյանքից, իսկ ինչ են մտածում նրանք, որոնք երեխա են արարել, մի սովորական անմեղ մանուկ, կարոտ սիրասուն հոր ու մոր գուրգուրանքի, խնամքի: Արարել են ու թողել բախտի քմահաճույքին…

Ոչ-ոք չի կարող պատկերացնել այն դառնությունը, որ բաժին է ընկնում որբերին:

Կյանքում կան բազմաթիվ պատմություններ, ես կպատմեմ դրանցից մեկի մասին: Վ. Հոռաթաղի 8-ամյա դպրոցի 3-րդ և 6-րդ դասարաններում են սովորում Վալյա և Վարդան Առուշանյանները: Գեղեցիկ, ամոթխած երեխաներ են, ընդունակ, բայց ոչ միշտ են պատրաստ ներկայանում դասի: Մեծանում են պապիկի ու տատիկի խնամքին, ծեր մարդիկ են, հողվորներ, մեծ ընտանիք ունեն, հազիվ են հասցնում ընտանիքի հոգսը քաշել և, բնականաբար, քիչ ժամանակ են ունենում զբաղվելու երեխաների ուսմամբ:

Գիտենք միայն, որ երեխաների մայրը համագյուղացի է, բաժանված է ամուսնուց, ապրում-աշխատում է Երևանում՝ երեխաներին թողած

ծեր ծնողների խնամքին: Հոր մասին ոչինչ չգիտենք:

Բոլորովին վերջերս դպրոցի մոտ կանգնեց մի մեքենա, երկու անծանոթ երիտասարդներ դուրս եկան մեքենայից, մոտեցան ուսուցիչներին, հայտնեցին, որ Վարդանի և Վալյայի հորեղբայրներն են և ցանկանում են տեսնել նրանց:

Դասամիջոց էր: Աշակերտները շրջապատել էին նորեկներին: Սպասեցինք զանգը հնչեց, նոր երեխաներին դուրս հրավիրեցինք հարազատների մոտ: Հորեղբոր տղաները գրկեցին, համբուրեցին անծանոթ երեխաներին, որոնք, անսովոր հայրական գուրգուրանքի, փախան նրանց մոտից, Վալյան նույնիսկ լաց եղավ (Ովքե՞ր եք դուք, որտե՞ղ էիք մինչև հիմա, ասում էին նրա արցունքները): Արցունքոտվեցին և ներկաների աչքերը: Երեխաները ոչ մի անգամ չէին տեսել, գուցե և չէին լսել արյունակից հարազատների անունները և դժվարանում էին նույնիսկ կանգնել մոտները: Վալյան իսկույն ետ փախավ դասարան, հարկ եղավ դասղեկի միջամտությունը՝ մի քանի րոպե Վարդանին նրանց մոտ պահելու համար:

Եկել էին Շահումյանի շրջանից, գործով պիտի Քելբաջար գնային, ճանապարհին միտք էր հղացել հանդիպելու եղբոր երեխաներին: Ոչ թե եղբայրն էր նրանց ուղարկել, այլ երևի հարազատ արյան կանչով են նրանք շեղել ճանապարհը, ցանկացել հանդիպել արյունակից հարազատներին:

Նրանք հետաքրքրվեցին երեխաների ուսմամբ, ապրելակերպով, դատապարտեցին երեխաների հոր արարքը՝ ընտանիքը քայքայելու, երեխաներին որբ թողնելու համար: Նրանք հասցե թողեցին, բայց մինչև հիմա չենք կարողանում նամակ գրել տալ երեխաներին, նրանց մանկական հոգիները սպասածից խորն էին խոցված:

Նրանց ճանապարհելուց հետո մենք երկար խորհրդածում էինք այդ երեխաների մասին, կարծես նոր էինք նրանց ճանաչել:

Հագնվում էին ընկերներից լավ, հայրը ալիմենտ էր վճարում, մայրը, որն ապրում է Երևանում, աշխատում էր և հոգում նրանց մասին, դպրոցը պարտուսից բաժին էր հանում միշտ, պապիկն ու տատիկը հոգում էին նրանց ամենօրյա հոգսերը: Թվում է՝ոչինչի պակաս չունեն նրանք, բայց այդպե՞ս է արդյոք իրականում…

Ոչ, ո՛չ: Ծնողական պարտքը չի սահմանափակվում ալիմենտ վճարելով կամ գեղեցիկ հագցնելով: Նրանց առաջին հերթին պետք է հոգևոր սնունդ, նրանք կարոտ են ձեր խնամքին ու գուրգուրանքին, նրանք էլ են ցանկանում, որ դուք հաճախակի այցելեք դպրոց, հետաքրքրվեք նրանց ուսմամբ, օգնեք սովորելու դասերը, վերջապես…

Նրանք ամեն օր տեսնում են ծնողներով շրջապատված իրենց ընկերներին և թախծում: Այդ թախիծն էլ նրանց զանազանում է ընկերներից: Նրանք ոչ մի անգամ անկարգություն չեն արել, աշխույժ, աղմկոտ խաղերի չեն մասնակցում: Նրանց աչքերում մի տեսակ սառնություն կա, չկա այն ջերմությունը, պայծառությունը, փայլը, որ անհոգությունից է գալիս:

Երեխան պետք է մեծանա ծնողների սիրո ու հոգատարության ներքո: Ոչ մի երեխա մեղավոր չէ որբության համար: Մեղավոր են լինում միայն ծնողները, տվյալ դեպքում մեղավոր են Վարդանի և Վալյայի ծնողները, մեծամասամբ՝ հայրը: Նոր ընտանիք է կազմել, երեխաներ ունի: Մտածու՞մ է արդյոք «սրանց» մասին, երբ գգվում է նրանց, ինչով են մեղավոր «սրանք», որ դատապարտված են հայրական և մայրական քաղցի: Իր խղճի դատին ինչպե՞ս է պատասխանում, երբ սեղան է նստում նոր երեխաների հետ, երբ «հայրիկ» են կանչում իրեն, երբ կոնֆետ է բերում նրանց, տեսնես հիշու՞մ է արդյոք «սրանց»…

Ծնողների չմտածված արարքի պատճառով խաթարվել է երեխաների երջանիկ մանկությունը:

Ուսուցիչները մտահոգվում են, թե ինչպե՞ս կմեծանան ծնողների կողմից անտարբերության մատնված երեխաները, մեր վաղվա քաղաքացիները: Պետք է բռնել նրանց ձեռքը, օգնել, ոգևորել, որպեսզի հասուն տարիքում էլ մարդկանց նկատմամբ ունեցած հավատը չխաթարվի:

Պատերազմի տարիներին բազմաթիվ որբեր ենք ունեցել, որոնք հպարտությամբ են կրել իրենց որբությունը, որովհետև նրանց ծնողները զոհվել են հանուն ապագայի:

Իսկ այժմ ի՞նչ կասեն նրանք, ովքեր գիտակցաբար զրկել են իրենց երեխաներին ամենակարևորից՝ծնողներ ունենալու երջանկությունից:

Ներող եղեք կյանքում, ամեն չնչին բանից ընտանիք մի քայքայեք, ամուսնալուծությունից առաջ տեսեք Ձեր երեխաների արտասուքները, ամբողջ կյանքում, այնպես ապրեք, որ երբեք չարցունքոտվեն նրանց աչքերը…

«Բարեկամություն», 1987թ., հունվար

ՈՐԴԻՆ ՉԻ ՆԵՐՈՒՄ

Պապի ու տատի խնամքին են մեծացել Արտուր և Աշոտ եղբայրները: Երկվորյակներ չեն, բայց մի դասարանում են սովորել, 8-րդն ավարտել, գնացել են Երևանում ապրող հոր մոտ, արհեստ սովորել, ետ եկել գյուղ: Արտուրը վերջացրել էր զինվորական ծառայությունը, Աշոտը նոր էր զորակոչվում բանակ: Հավաքվել էին բարեկամները, ընկերները, ուսուցիչները՝ Աշոտին բանակ ճանապարհելու առթիվ ավանդույթի համաձայն «քեֆ անելու»: Խելոք կարգապահ երեխաներ էին, Արտուրը հումանիտար առարկաներից էր փայլում, Աշոտը՝ տեխնիկական: Իրար օգնելով սովորել էին, միշտ պատրաստ ներկայացել դպրոց:

Ծնվել էին Երևանում: Հայրը՝ Ռաշիդ Սայյանը, (գրական անունը՝ Արցախ Սայուանց), մանկուց հաշմանդամ էր, բուժքրոջ սխալի պատճառով. սրսկումից հետո ոտքը թուլացել էր: Գյուղում դպրոց չկար, որպեսզի դպրոց հաճախեր, պետք է հարևան Հար-գոմերում սովորեր, իսկ անդամալույծ ոտքով հնարավոր չէր գնալ-գալ: Հայրը՝ վարպետ Վալոդ քեռին, փայտից մի փոքր տեղ էր պատրաստել դպրոցի առաջ և այնտեղ մնացել ու սովորել է: Սովորել է լավ, գեղեցիկ բանաստեղծություններ էր գրում: Երկու փոքրիկ գիրք է հրատարակել: Գնաց Երևան, սովորեց, եկավ գյուղ, ամուսնացավ համագյուղացի Նուբար Գրիգորյանի հետ, տեղափոխվեց Երևան: Թվում էր, ամեն ինչ լավ էր, երկու արու զավակ ունեցան, կինը աշխատում էր շենքի առաջ գտնվող մի կրպակում:

Երեք ամսական էր Աշոտը, երբ մայրը սկսեց ուշ տուն գալ և մի օր էլ աշխատանքից հետո մայրը տուն չեկավ, եկավ հաջորդ օրը, դուռը ծեծեց, ճանկռտեց, բայց ամուսինը չբացեց: Այդպես էլ մանկահասակ երեխաները մնացին անդամալույծ հո խնամքին, որը նրանց ուղարկեց գյուղ՝ տատիկ-պապիկի մոտ:

Ծեր մարդիկ էին Վալոդ պապն ու Անուշկա տատը, բայց ամեն ինչ արեցին, որ երեխաներն ապահով մեծանան և այդ օրն էլ պատրաստվում էին մեծ խնջույքով ուրախ բանակ ուղարկել թոռանը:

Մայրն այդպես էլ երեխաների հետ կապ չհաստատեց, նույնիսկ մի օր գյուղ եկած ժամանակ հանդիպել էր որդիներին, բայց նրանք փախել էին, չեն խոսել հետը, նույնիսկ հայհոյել էին և փախել:

Նրանց մայրը, որ ապրում էր Երևանում, նորից ամուսնացել էր, ուրիշ երեխաներ ուներ, այդ ժամանակ գյուղում էր, այցելել էր ծնողնե-

րին:

Ես, որ նույնպես հրավիրված էի այդ խնջույքին, առաջարկեցի Աշոտին՝ մորն էլ հրավիրել, հաշտվել...

Աշոտը ջղայնացավ ու ասաց.

-Ոչ մի դեպքում, երբեք չեմ ների մորս, որ ինձ թողել է երեք ամսական ու գնացել, իմ մայրը Անուշկա տատս է, ես ուրիշ մայր չունեմ ու երբեք չեմ ների նրան:

Գուցե Արտուրը ների, նրան երկու տարի պահել է, բայց ես երբեք չեմ ների...

«Բարեկամություն», 1989թ., հունվար

ՍԻՐՈՎ ԵՎ ԱԿՆԱԾԱՆՔՈՎ

Հարգելի՛ խմբագրություն: Ձեր թերթից տեղեկացա, որ հայոց լեզվի սիրված դասախոս Գուրգեն Բաղդասարյանը բոլորել է կյանքի 8 տասնամյակը, և տիկին Սիլվա Մինասյանն էլ շատ խոսուն և նրա տարիքին ու էությանը հարիր վերնագիր է ընտրել իր հոդվածի համար՝ «Արցախյան տնջրենման, սոսենման դասախոսը»:

Ես Գ. Բաղդասարյանի բազմաթիվ ուսանողներից եմ, չգիտեի, որ նա սխտորաշենցի է, հազարամյա տնջրենու հովին խաղացած, նրա նման վեհաշուք ու նրանից երկարակեցություն ժառանգած:

Գ. Բաղդասարյանը մեր սիրված ու հարգված դասախոսներից է: Մենք հիշում ենք նրան՝ որպես հայոց լեզվի գերազանց գիտակի, իր գործին անչափ նվիրված, անբասիր վարքի տեր, անաչառ, խստապահանջ, համեստ ու հասարակ, անշահախնդիր, ոչ քինախնդիր դասախոսի: Դասախոսելը, մանավանդ նախադասություն վերլուծելը նրա, տարերքն էր: Պատի երկայնքով տեղադրված մեծ գրատախտակին գրել էր տալիս բազմաբարդ նախադասություններ և պահանջում վերլուծել: Ուրախանում էր ամեն մի ճիշտ պատասխանի համար: Նախա-

դասության վերլուծությունն էլ մեզ մտերմացրեց, ամեն օր ինձ գրատախտակի մոտ էր կանչում, կարողանում էի ճիշտ վերլուծել՝ միշտ արժանանալով նրա խրախուսանքին: «Իսկական հայոց լեզվի ուսուցչուհի կդառնաս...»,-սիրում էր կրկնել նա:

Սիրով էինք գնում նրա քննություններին, որովհետև գիտեինք, որ մինչև վերջ լսելու է մեր պատասխանները, համապատասխան գնահատական է նշանակելու, և՝ սովորում էինք:

Գաղտնիք չէ, որ ոչ բոլոր դասախոսներն էին այդպես գնահատում, որ ներկայիս ուսման ցածր որակի գլխավոր պատճառն էլ հենց դա է:

Կային դասախոսներ, որ կարող էին ընդհատել տոմսը գերազանց իմացողի պատասխանը և բավարար նշանակել, իսկ մի չիմացողի՝ գեղեցիկ աչքերի համար՝ գերազանց: Այդպիսին չէր մեր հարգարժան Բաղդասարյանը, դրա համար էլ ուսանողները սիրում էին նրան:

Ներկայացնում եմ հիշողություններ մեր ուսանողական կյանքից՝ կապված նրա հետ, որոնք ավելի կբացահայտեն նրա մարդկային էությունը:

Ինստիտուտի մասնաճյուղը նոր էր բացվել (ես երկրորդ շրջանավարտն էի), Բաքվում էլ դեռ կար հայկական բաժին և այնտեղից դասախոսները հերթով, 2-3 ամսով գալիս էին Ստեփանակերտ, դասախոսում, գնում:

Չորրորդ կուրսում մեր կուրսղեկն էր:

Կուրսը ինստիտուտի պարծանքն էր: Համարյա բոլորն էլ լավ ու գերազանց էինք սովորում, կարգապահ էինք, ակտիվ ամեն ինչում:

Որպես մասնաճյուղի ուսանողներ՝ մեզ տանում էին Բաքու՝ մասնակցելու ինստիտուտում կազմակերպված միջոցառումներին: Ավտոբուսով գնալիս, ադրբեջանական բնակավայրերով անցնելիս, հենց Բաքվում, դիտավորյալ հայերեն երգեր էինք երգում խմբովին՝ «Ստեփանակերտ», «Իմ Ղարաբաղ», «Ղարաբաղցին» և այլն:

Հաճախ էինք էքսկուրսիաներ կազմակերպում: Հասցրել էինք լինել Գանձասարում, Մարտունիում, Ճարտարում, հերթը Քաջարանինն էր:

Գարնանային մի շաբաթ օր ճանապարհվեցինք Քաջարան, երկուշաբթի կեսօրին պիտի դասի հասնեինք: Կուրսը ոչ միայն լավ սովորողներ ուներ, այլև երգողներ, նվագողներ, նկարողներ: Առաջին կանգառը Գորիսում էր: Այստեղ հանդիպեցինք տեղի մանկավարժական ինստիտուտի ուսանողների հետ, միասին քեֆ արեցինք անտառի բացատում, երեկոյան հասանք Քաջարան, հյուրընկալվեցինք համակուրսեցու հարազատների բնակարաններում, առավոտյան բարձրացանք հանքերի բլուրները, գործարանը տեսանք և ուրախ նվագելով վերադառնում

էինք, երբ հանկարծ ավտոբուսը օդ բարձրացավ, կարծես կիսվեց միջից: Կոտրվել էր: Եթե մի քանի րոպե շուտ կոտրվեր, գլորվելու էր անդունդը, բայց, բարեբախտաբար, հասել էինք խճուղուն, և ոչ մի վնաս չեղավ ուղևորներիս, բացի, իհարկե, վախից: Օրը կիրակի էր, ավտովերանորոգման կետերը չէին աշխատում, մի կերպ սարքեցին, ճանապարհ ընկանք, բայց Ղափան մտած, նորից կոտրվեց, նորից վարպետներ փնտրեցինք, չկարողացան կարգի գցել մեքենան: Մութն ընկավ: Անհանգստությունը պատեց բոլորիս: Հաջորդ օրը դասի էինք և եթե չհասնեինք, պատկերացնում էինք, թե ինչ է սպասվում մեզ և կուրսղեկին:

Նա յուրահատուկ քայլվածքով պտտվում էր մեր շուրջը, անհանգիստ շարժումներ անում: Մենք 20 աղջիկ էինք և 6 տղա: Ղափանի երիտասարդները հավաքվել էին ավտոբուսի շուրջը: Տղաներից մեկն ասաց, որ չհուսահատվեն, նոր վարպետ են բերել, գուցե ստացվի, գիշերը կգնանք, դասին հասնենք:

Ամեն ինչի մեջ քերականություն տեսնող Բաղդասարյանն ասաց.

-Գուցե-ն եղանակավորող բառ է, կարող է լինել, կարող է չլինել, հարկավոր է այլ բան մտածել և մտածեց...

Տղաներին թողնելով վարորդի մոտ՝ ապահովության համար, աղջիկների հետ նստեց հանքափորների գիշերային հերթափոխը տանող Ղափան-Զանգելան գնացքը, և ժամը 4-ին Զանգելանում էինք: Նստել էինք կայարանի նստարանների վրա և գլուխ գլխի դրած՝ ննջում էինք, իսկ Բաղդասարյանը չնստեց ու աչք չփակեց, պտտվում էր մեր շուրջը: Երբ լուսացավ, նա բոլորիս համար ուտելիք գնեց, տոմս առավ, և Զանգելան-Աղդամ ավտոբուսով հասանք Աղդամ, այնտեղից էլ Աղդամ-Ստեփանակերտ երթուղով՝ Ստեփանակերտ: Դասն սկսվելուն րոպեներ էին մնացել, կայարանից վազելով հասանք լսարան՝ ճանապարհային հագուստով: Ոչ ոք ոչինչ չկասկածեց, սովորականի նման դասն սկսվեց:

Միայն մնացած բաժինների ուսանողները զարմացան, որ «գրականները դասի են եկել «շալվարներով»: 30 տարի առաջ դա սենսացիա էր Ստեփանակերտում, հիմա երևի հակառակը՝ կզարմացնի բոլորին, եթե հանկարծ մի կուրս միայն շրջազգեստով ներկայանա դասի:

Այն ժամանակ ես չէի հասկանում մեր կուրսղեկի անհանգստության պատճառը, բայց, երբ աշխատանքի անցա, նոր զգացի, թե ինչ է նշանակում երեխայի նկատմամբ պատասխանատվություն ունենալ: Երբեք առանց ինձ ոչ մի աշակերտի էքսկուրսիա, օլիմպիադա կամ այլ միջոցառման չեմ ուղարկել և մշտական աչալրջություն եմ ցուցաբե-

րում ինձ վստահված աշակերտների հանդեպ՝ ամեն ինչում:

Այդպես է սովորեցրել մեզ իր գործելակերպով մեր հարգարժան դասախոսը՝ Գ. Բաղդասարյանը:

Նա մտածում էր նաև իր ուսանողների ապագայի մասին, պատկերացնում, թե ով ինչ կարողություններ ունի և ինչ կարող է դառնալ:

Վերոհիշյալ էքսկուրսիայի ժամանակ, երբ Գորիսում ճաշից հետո հանգստանում էինք, նվագում-պարում, ես մի քանի ընկերուհիներով կանգնած՝ դիտում էի (պատճառ ունեի չպարելու). մեր դիմաց կանգնած էր Բաղդասարյանը: Հանկարծ նա նայեց մեր խմբին և ձեռքի շարժումով ասաց.

-Մի դու արի այստեղ:

Ես վարանոտ մոտեցա նրան: Նա մոտը կանգնեցրեց ինձ, կանչեց մեզ հետ գտնվող լուսանկարչին, որ նկարի՝ ասելով.

-Գիտեմ, մեծ մարդ ես դառնալու, ուզում եմ հետդ նկարվեմ, որ հետո հպարտանամ, ասեմ՝ իմ ուսանողն է եղել:

Ես, իհարկե, դասախոսի պատկերացրած «մեծ մարդը» չդարձա, այսինքն՝ գիտության մեջ չխորացա, բայց նրա ասած հայոց լեզվի գերազանց ուսուցչուհի դարձա: Գուցե մեղքն այն ժամանակվա կրթական համակարգի՞նն էր: Գերազանց գնահատականներով ավարտած ուսանողին գործուղում էին հեռավոր գյուղ աշխատելու, և միայն երկու տարի աշխատանքային ստաժ ունենալու դեպքում կարող էր ուսումը շարունակել ասպիրանտուրայում:

Երկու տարի գյուղում աշխատելով՝ ընտանիք կազմեցի, երեխա ունեցա, ընտանեկան պայմաններս թույլ չտվին ուսումս շարունակել: Դրա փոխարեն կապվեցի գյուղին, Մուրացանի «խորհրդավոր միանձնուհու» դեր կատարեցի գյուղում, 32 տարի շարունակ ղեկավարում եմ գյուղի դպրոցի մանկավարժական կոլեկտիվը, ճանաչված հայոց լեզվի ուսուցչուհի եմ, շրջանի 20-րդ դարի լավագույն մանկավարժներից, տասնյակ ուսուցիչներ եմ պատրաստել իմ մասնագիտությամբ, 4 զինվոր տվել Արցախիս բանակին... Կարծում եմ՝ հուսախաբ չեմ արել իմ դասախոսին և ինձ տված լեզվական հարուստ գիտելիքները սիրով փոխանցում եմ աշակերտներիս, երիտասարդ ուսուցիչներիս, ինստիտուտի հեռակա բաժնում սովորողներին...

Ավարտելուց հետո բազմիցս հանդիպել եմ դասախոսիս, միշտ էլ սիրով զրուցել է, հետաքրքրվել ամեն ինչով:

Վերջերս, երբ հանդիպել էի, բարևեցի, ինձ թվաց, թե չճանաչեց (ծերությունը ուրախություն չէ), գուցե չկարողանա էլ հիշել այս նկարի պատմությունը, միևնույն է, ինձ համար նա կա և մնում է ամենահար-

գարժան դասախոսը:

Իմ և նրա բազմաթիվ ուսանողների անունից շնորհավորում եմ Գ. Բաղդասարյանի ծննդյան 80-ամյակը և ցանկանում, որ նրա տարիքը հասնի եռանիշ թվի…

«Լուսարար», 1 սեպտեմբերի, 2006թ.

Ի՞ՆՉ ԱՐԺԵ ՕՂԻՆ ՍԹԱՓՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻ ՆՈՐՄԱ Է

Բերքառատ ու մրգառատ գյուղ է Վ. Հոռաթաղը: Այգիները լիքը թուք, խաղող, սալոր, տանձ ու խնձոր, անտառներում հոն, մոշ, խմիչքը ծովի պես էր, ուզեիր ամբողջ տարին կարող էիր օղի թորել և՛ խմել, և՛ վաճառել… Տասնամյակներ շարունակ այսպես էր Հոռաթաղում: Խմում էին ծերերն ու երիտասարդները, նույնիսկ կանայք ու ինչքան էլ զարհուրելի է գրելը՝ երեխաները: Օրվա որ ժամին որի հետ խոսեիր, ինքնաթոր օղու կամ գինու հոտ կփչեր:

Գյուղի ծերերից մեկը՝ Արշակ պապը, սովորություն ուներ մատը օղու բաժակի մեջ թաթախել և տղա թոռների բերանը դնել, որպեսզի սովորեն խմել: Օղին ի՞նչ արժե Վերին Հոռաթաղում…

… Ռաշիդ Առաքելյանը (Արազը) ենթաշրջանի հայտնի երիտասարդներից էր… ուտող, խմող, երգող, պարող, ընկերասեր, լավ մեխանիզատոր էր, լավ վաստակում էր…

Ուներ 6 մանկահասակ երեխաներ, փոքրը դեռ թոթովախոս, բոլորն էլ հոր խնամքի, գուրգուրանքի կարոտ:

Սիրում էր խմել, և որտեղ էլ խմեր, պետք է տուն գար, շատ անգամ մոտոցիկլով, որ ինքն էր վարում: Մի անգամ էլ, այդպես հարբած վիճակում տուն վերադառնալիս, հենց գյուղի մոտ վթարի է ենթարկվում և ողբերգաբար կտրվում է նրա կյանքի թելը…

Եթե չլիներ օղին, Միշա Թադևոսյանի կյանքը չէր ընդհատվի ծաղիկ հասակում: Ընդամենը 25 տարեկան էր, նոր էր ընտանիք կազմել, հայր դառել: Ապրում էր Ստեփանակերտ քաղաքում, հաճախակի էր գյուղ գալիս՝ ծնողներին տեսության:

Աշուն էր, բերքահավաքի եռուն օրերը գյուղում: Եկել էր գյուղ՝ օգնելու ծնողներին: Նախաճաշը հոռաթաղցու սովորությամբ ուղեկցվել էր կենաց օրհնանքներով, իսկ հետո երգել, նվագել, ուրախացել էին տանը: Ուրախ տրամադրությամբ դաշտ են դուրս եկել ընկույզ, տանձ

հավաքելու (վերջինս օղու համար): Քիչ անց բոթը տարածվեց գյուղում, «Միշան ընկել է ծառից, մահամերձ վիճակում տեղափոխել էին շրջանային հիվանդանոց, որտեղ էլ նույն օրը…»

Նման դեպքերը եզակի չեն…

Վովա Հարությունյանն էլ սրտի թրթիռով երազել էր ընտանիք կազմել, կին, երեխաներ ունենալ և ունեցել էր: Չորս արու զավակ ու մի դուստր ուներ, արհեստավոր մարդ էր, շատ էր վաստակում, երջանկությունը ինքն իր ոտքով էր մտնում նրա տունը, կարող էր գեղեցիկ կյանքով ապրել, բայց ալկոհոլը դարձավ նրա ընտանիքի քայքայման պատճառը և ստիպված ինքը միայնակ մեծացրեց իր հինգ երեխաներին:

Եվ դժբախտությունը նրա մեջ էր, որ երիտասարդները, երեխաները տեսնում ու սովորում են այս ամենը: Խմած վիճակում ծեծկռտուքները սովորական են այստեղ, չնայած տարին մի քանիսը տուգանվում, կամ նույնիսկ դատվում են:

Մեր երկրում լայն մասշտաբով պայքար է տարվում ալկոհոլիզմի դեմ, մեզ մոտ էլ այդ ուղղությամբ որոշակի աշխատանքներ տարվում են, ինքնաթոր օղի սարքող չկա այլևս, քչացել է «խմողների» թիվը, բայց այսօր էլ մի շարք վարորդներ շարունակում են խմած վիճակում մեքենա վարել, վթարի ենթարկել սեփական կամ պետական մեքենան և մնալ անպատիժ: Այսօր էլ դեռ Հոռաթաղում կարող եք հանդիպել խմած, թևանցուկ տուն բերվողների…

Մտածում են արդյո՞ք նրանք, թե ինչ արժե օղու բաժակը, չգիտեն, արդյո՞ք, որ այն տանում է դեպի հանցագործություն, ջահել կյանքեր է խլում, ընտանիքներ քայքայում, կործանարար ազդեցություն ունենում երեխաների դաստիարակության վրա և մի՞թե չգիտեն, որ միահամուռ պայքար է տարվում դրա դեմ և եթե նույնիսկ այսօր ինչ-որ մեկը հովանավորում է իրենց կամ որևէ մեկը իր տեղում չի, միևնույն է, վաղ թե ուշ իրենց հերթն էլ կգա… Ուստի ես նորից սրտաբաց հավանություն եմ տալիս կուսակցության այդ հույժ կարևոր որոշմանը:

Վերին Հոռաթաղը իր ոչն է ասում ալկոհոլին, դատապարտում օղու սիրահարներին:

Մեր արտահաստիքային թղթակից

«Բարեկամություն», N 96, 12 օգոստոսի, 1986թ.

ՀԱՑԸ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Է

Էմման հացի նկատմամբ մի ուրիշ պաշտամունք ունի: Հացի ամենափոքր փշրանքներն անգամ ափսոսանքով է սեղանից վերցնում:

-Որտեղի՞ց է սկիզբ առել հացի հանդեպ ունեցած նրա պաշտամունքը:

Ավարտել է Առաջածորի միջնակարգ դպրոցը: Գեղեցիկ աղջիկ էր, սլացիկ հասակով, գանգուր մազերով, նուրբ դիմագծերով… կյանքի, ապագայի նկատմամբ գեղեցիկ երազանքներով լեցուն մի աղջիկ: Լավ էր սովորում, երազում էր դառնալ ուսուցչուհի և հաջող քննություններ տվեց ու ընդունվեց Շուշիի մանկավարժական երկամյա ինստիտուտը: Սեպտեմբերին սկսվեցին դասերը, բայց այդպես էլ նա դասի չգնաց…

Երկու ամսվա ընթացքում գյուղը դատարկվեց, աշխատունակ բոլոր տղամարդիկ մեկնեցին ռազմաճակատ: Գնացին նաև Էմմայի եղբայրները՝ Շիրինը, Ռուբենը, Վահանը: Ընտանիքի հոգսը ծանրացավ մոր և իր վրա: Հայրը մահացած էր: Կոլտնտեսության հաշվապահ եղբայր Վահանը գնաց ռազմաճակատ, նրան պատվիրեցին նստել եղբոր աթոռին: Եվ քանի որ նման աշխատանքի համար անփորձ էր, նախագահը, նրան գործուղեց շրջկենտրոնում կազմակերպված հաշվապահական 3-ամսյա դասընթացների: Սովորեց ու եկավ: Եվ հաշվապահ էր, և հաշվառք ֆերմայում և խոտ հնձող ու բարձող և... Չկար, գոյություն չուներ գիշերվա ու ցերեկվա զգացողությունը:

Պատերազմը վերջացել էր...

Կոլտնտեսությունը ուղեգիր էր ստացել Բաքվի հաշվապահական դասընթացներում սովորող ուղարկելու համար: Վարչության ժողովը որոշեց Էմմային ուղարկել:

Գնաց, ընդունվեց: Ապրում էր քրոջ տանը: Հետպատերազմյան ծանր տարիներն էին: Հացը քարտերով էր: Էմմայի բաժին հացը քույրը ստանում էր, տուն տանում և ինչքան էլ ցանկանում էր պահել մինչև

դասից գալը, չէր հաջողվում, երեխաները գտնում էին...

Այսպես մի ամբողջ տարի...

Ավարտեց, հարս գնաց հարևան գյուղը: Աստիճանաբար անհետացան պատերազմի արհավիրքները: Տխուր երազ էր թվում անցյալը: Ապրում է լավ կյանքով, բայց ամեն անգամ թոնրից բուրումնավետ հացերը հանելիս՝ հիշում է այն ահեղ օրերը, երբ մի կտոր հացը երազ էր շատերի համար...

Հիշում էր և խորհուրդ տալիս՝ խնայել հացը, կյանքի աղբյուրը:

Այսօր մեր երկրում պայքար է տարվում հացը խնայողաբար օգտագործելու համար, բայց էլի շատերը շարունակում են անխնա օգտագործել հացամթերքները, նրանով կերակրել անասուններին, փչացնել, թափել աղբարկղները: Ուզում եմ այն ահեղ օրերի մի օրինակով նորից հիշեցնել հացի գինը, որպեսզի ներկայիս սերունդը սրտանց հարգի հաց արարողին և խնայողաբար օգտագործի այն:

«Բարեկամություն», N 32, 14 մարտի, 1987թ.

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այսօր, երբ տեսահեռախոսներ են մուտք գործում մեր առօրյան, Վ.Հոռաթաղում դեռ հեռախոսների նախապապն է, նախապապի սովորույթներով, ի՞նչ կարիք կա ամեն մի հիմնարկություն կամ ընտանիք առանձին հեռախոսագծից օգտվի, երբ «հնարավոր է» նաև կոլեկտիվ ձևով օգտվել մի հեռախոսից:

Հար-գոմերի գյուղական սովետն ընդգրկող գյուղերում /Հար-գոմեր և Վ. Հոռաթաղ/ տարիներ շարունակ իշխում է մի սխալ տեսակետ, որ հարգոմերցիները միշտ պետք է առավելություններ ունենան հոռաթաղցիների նկատմամբ: Հար-գոմերում կան կուլտուր-կենցաղային մի շարք օբյեկտներ, օրեցօր դրանց թիվը ավելանում է, իսկ Հոռաթաղը համարյա ոչինչ չունի:

Համարյա հավասար ազգաբնակչություն ունեցող գյուղերից մեկում գյուղացիների մեծամասնությունը տներում ունեն հեռախոսներ, մյուսում՝ նույնիսկ հիմնարկությունները չունեն: Որպես սեղանից նետած ավելորդ փշրանք մի գծի վրա տեղադրված են 4 հեռախոսներ՝ դպրոցում, բրիգադավարի գրասենյակում, գյուղական սովետի նախկին և նոր քարտուղարների տներում /վայ մեզ, եթե այս մի քարտուղարին էլ փոխեն, մի գծի վրա կհայտնվի նաև 5-րդ, 6-րդ... հեռախոսը/:

Եզրակացությունը թողնում եմ ընթերցողին՝ հնարավո՞ր է արդյոք միանգամից վերցվող 4 լսափողներով որևէ մեկը լսի խոսակցին: Ոչ, իհարկե: Եվ ինչն է ցավալին: Եթե նույնիսկ համոզվում էլ են, որ հեռախոսազանգը, իրենց չի վերաբերվում, էլի ցած չեն դնում խոսափողը, մինչև չիմանան, թե ո՞վ է խոսողը և ի՞նչ է ասում:

Եվ այսպես, եղած միակ հեռախոսն էլ համարյա ամբողջ տարին կարգին չի գործում և վայ նրան, ով կարևոր բան ունի հեռախոսով հայտնելու կամ լսելու: 10 տարուց ավել է, ինչ ղեկավար ընկերները հոռաթաղցիներին հավաստիացնում են, որ հաջորդ տարին հեռախոս են ունենալու, սակայն «հաջորդ տարին էլ» հոռաթաղցիներից խռովել է և չի գալիս…

Մոտ 3 ամիս առաջ Հար-գոմերի կապի բաժանմունքը, հեռախոսի 10 համար էր ստացել, և հոռաթաղցիները սպասում էին, որ դրանցից իրենց էլ կտրամադրեն, կամ էլ եղածները՝ կառանձնացվեն: Նույնիսկ եղան շտապողներ, որոնք գրեցին վերադասին և որպես պատերազմի, աշխատանքի վետերաններ, հեռախոս պահանջեցին անհերթ: Վերադասից նամակը ուղարկեցին գյուղական ղեկավարներին, նրանք էլ եկան վետերաններին «միամտացրին», որ հեռախոսները սովխոզի նորակառույց գրասենյակի համար են ուղարկված, դրա համար էլ նրանց պահանջը բավարարել չեն կարող:

Իսկ գյուղական սովետի հաշվետու նստաշրջանում, երբ խոսք եղավ այդ մասին, գործկոմի նախագահն ասաց, որ հեռախոսների 10 համարներն էլ սովխոզի դիրեկտորն է բերել տվել հատուկ մեխանիզատորների համար:

Իսկ հետաքրքիր է, Հոռաթաղում մեխանիզատորներ չկան, թե՝ արժանի չեն հեռախոս ունենալու:

Պատճառաբանում են, որ լար չկա և հնարավոր էլ չի ձեռք բերել և որ մի հենասյունով մեկից ավելի լար չի կարելի տանել: Դրան համաձայն ենք, հասկանում ենք, չնայած գիտենք նաև, որ կարելի է սյուների գլխին հորիզոնական փայտեր ամրացրած և նրանցով 4-5 լար անցկացրած, գոնե եղած հեռախոսները առանձնացրած:

Բայց կարելի՞ է արդյոք այդ թույլատրելի մի գծի վրա 4 հեռախոս տեղադրել: Երկուսն էլ խախտում են, նայած ում ո՞րն է շահավետ…

Է՜հ, երանի միայն հեռախոսը լիներ /առանց հեռախոսի էլ կարելի է յոլա գնալ/ բա մյուսները…

«Բարեկամություն», *1987թ.*

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՄ, ԱՐՁԱԳԱՆՔԵՑԵՔ

Արզում, շրջաններում գործում են բարեգործական ընկերություններ, որոնք մեծ դեր են խաղում փախստականներին, շրջափակման պայմաններում գտնվող բնակչությանը, բազմազավակ ու կարիքավոր ընտանիքներին օգնելու համար:

Ընկերության դրամական ֆոնդը համալրվում է նվիրատվություններով, շաբաթօրյակներով: Ցանկանում եմ մի առաջարկություն անել այդ ֆոնդի համալրման համար, որին կարծում եմ, հավանություն կտան շատերը, և որը մեծ ու կայուն միջոց կդառնա ընկերությունների նյութական ֆոնդի համար:

Ցանկացած աշխատավարձի ցուցակներում յուրաքանչյուր աշխատողի դիմաց գրանցված են լինում կոպեկներ, որոնք նա համարյա երբեք չի ստանում, որովհետև կամ «մեծահոգաբար» թողնում է գանձապահին, կամ էլ գանձապահը ինքը «հարմար» չի գտնում կոպեկները տալու տիրոջը: Այսպիսով, գանձապահի մոտ յուրաքանչյուր ամիս աշխատավարձերը տալուց հետո մնում է մի կլոր գումար (չափը կախված կլինի աշխատողների քանակից), որը նա տնօրինում է մենակ, կամ էլ… Շատ դեպքերում գանձապահները ոչ թե պատահական մարդիկ են հիմնարկության տնօրենների համար, այլ՝ «տանու մարդիկ»:

Առաջարկում եմ, բոլոր աշխատացուցակների կոպեկները գումարել, ստացված գումարները չստանալ առձեռն, այլ փոխանցել ընկերության հատուկ հաշիվը, ինչպես արհմիության անդամավճարները: Դրանից աշխատողները չեն տուժի, բայց կշահեն ընկերությունները, առանձին կարիքավոր մարդիկ (չեն տուժի նաև գանձապահները, շատերը սովորության համաձայն նրանց «կնվիրեն» ռուբլիներ):

Խոսքս, իհարկե, կոպեկների մասին է, բայց հիշենք ժողովրդական հայտնի առածը. «Կաթ կաթից ծով կառաջանա» և եթե հաշվելու լինենք մոտավորապես յուրաքանչյուր աշխատողի դիմաց կես ռուբլի, ապա շրջանի, մարզի մասշտաբով այդ գումարը կհասնի հազարների…

Արձագանքեցե՛ք, ընթերցողնե՛ր…

«Բարեկամություն», 1988թ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

«Զրաբերդ»-ում տպագրվել էր իմ մի առաջարկությունը աշխատավարձի կոպեկների վերաբերյալ: Նախ դա իմ կարծիքն էր, որն առաջացել էր հենց իմ կողմից ուսուցիչների աշխատավարձը բաժանելուց, ինչպես նաև խաղողաքաղից և արտադրական բրիգադում աշխատելուց ստացվող հասույթի վճարման հետ կապված բողոքներից:

Թերթի N 42-ում տպագրվել էր 5 կարծիք իմ առաջարկության վերաբերյալ, իհարկե, ամեն ոք մտածում է յուրովի՝ ես մտադիր չեմ իմ կարծիքը ոչ-ոքի վզին փաթաթել, բայց համամիտ չեմ արված արտահայտություններին, որոնք գրված են ինձ ամբողջությամբ չհասկանալու պատճառով:

Հարգոմերից Ս. Ներսիսյանը զարմանում է, թե ինչպես է, որ չեմ գնահատում կոպեկների դերը, չէ որ կոպեկներից է գոյանում ռուբլին: Զարմանալու հերթը իմն է ընկ. Ներսիսյան, չէ որ հոդվածում ոչ թե կոպեկներիի դերը չեմ գնահատում, այլ գերագնահատել եմ, որովհետև աշխատողի գրպանում ռուբլի դառնող իմ ու քո կոպեկները, դժբախտաբար ռուբլիներ են դառնում նաև ուրիշի գրպանում…

Իմ առաջարկության նպատակը բարեգործական ընկերության ֆոնդի համալրելը չէ միայն (ամեն մարդ ազատ է նվիրատվություն անելու մեջ, ոչ ոքի իրավունքները չեն սահմանափակվում), այլ մեր առօրյայում գործածվող մի արատավոր սովորույթի դեմ պայքարը: Դուք ուսուցիչ եք աշխատել միայն և ամեն ամիս կանոնավոր աշխատավարձ եք ստացել, անպայման կոպեկներն էլ հետը, բայց միթե չգիտեք, որ շատ հիմնարկներում աշխատավարձերը ստանում են ոչ կանոնավոր, երբեմն մի քանի ամիսը միանգամից, կամ ընտանիքի անդամների աշխատավարձը միասին տրվում է մեկին և 4-5 տեղ գրված գումարները համրիչի վրա գումարվում են առանց կոպեկների, միայն ամբողջ թվերով:

Առաջարկությունս միակողմանի է մեկնաբանել նաև թղթակից Գ. Նարիմանյանը, օրինակ բերելով իր երկարամյա կյանքում հանդիպած միակ ռուս ճշտապահ գանձապահուհուն, առաջարկում է նրան նմանվել: Ես շատ համամիտ եմ այդ կարծիքին, եթե, իհարկե հնարավոր լիներ իսկապես նմանվել Մարիային, բայց չէ որ ես հարցը մի այլ ուղղությամբ էլ եմ շոշափել… կոպեկները կամ չեն վերադարձվում, կամ էլ ստացողները «մեծահոգաբար» թողնում են սեղանին, (ես էլ եմ թողնում), սրան ինչ կասեք, գուցե օրինակ բերենք նաև «եզակի աշխատա-

վարձ ստացողի», որը հաշվում, վերցնում է և կոպեկները:

Երբ դեռ տնտեսվար չունեինք դպրոցում, ես ինքս էի ստանում և բաժանում աշխատավարձերը: Ձեր նշած Մարիայի պես ես էլ խնամքով վերադարձնում էի կոպեկները, բայց պատահում էր այնպես, որ ստացողը թղթադրամների վրայից կոպեկները սահեցնում էր սեղանին և շտապ հեռանում, չիմանալով, որ դրանով վիրավորում է ինձ (վերջապես ո՞ւմ են կոպեկները նվիրում), բայց բոլո՞րն են վիրավորվում դրանից. Իհարկե, ո՛չ: Երբ հետ էի կանչում, որ վերցնեն կոպեկները, ասում էին «կոպեկները պետք չեն»: «Քո կոպեկները պետք չեն նաև ինձ»,- ասում էի ես: Այդ ժամանակ էլ ինձ մոտ միտք էր հղանում աշխատավարձի կոպեկների ավելորդության մասին, մտածում էի, որ կարելի է կորցնել, մինչև 50 կոպեկը հաշվի չառնել, 50-ից բարձրը դարձնել ռուբլի (այն ժամանակ բարեգործական ընկերությունները այնքան հարգի չէին), հետո մտածեցի, որ կարելի է գումարել իրար և փոխանցել առանձին հաշիվ, այնպես որ, հոդվածը տպագրելուց առաջ մտածված է լուրջ...

«Բարեկամություն»**, **N59, 19 մայիս, 1988թ.,

«ԽԵՂՃ ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Օրերս իմ մեջ (չեմ գրում մեր ժողովրդի մեջ, որպեսզի հերքած չլինեմ ինձ) նույնպես զայրույթ առաջացրեց ԽՍՀՄ արտգործմինիստրության արված հայտարարությունը, որտեղ քննադատվում է ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի կողմից Լեռնային Ղարաբաղի հարցի առնչությամբ արված հայտարարությունը, որտեղ նշվում է, որ «այն առաջացրել է խորհրդային մարդկանց սուր հակազդեցությունը», այն դեպքում, երբ դեռ շատ քիչ թվով խորհրդային մարդիկ գիտեին այդ որոշման մասին և ընդհակառակը, ժողովրդի մի ստվար մասի մոտ, որոնց թվում և ամբողջ հայ ժողովրդի մոտ ոչ թե խոր զայրույթ է առաջացրել այդ որոշումը, այլ գոհունակություն ու երախտագիտություն:

Ինչ է ստացվում: Մի՞թե սխալ են մեր գիտելիքները «Անհատի և հասարակության» պատմական դերի մասին: Ստացվում է, որ իսկապես, ոչ թե ժողովուրդն է պատմություն կերտողը, այլ անհատները, որոնց

բախտ է վիճակվել դառնալու այդ ժողովրդի ղեկավարները: Իսկ եթե մեկը ղեկավար է նշանակվում, դա դեռ չի նշանակում, թե նա հասարակության ամենախելոք մարդն է (չնայած ցանկալի է, որ այդպես լինի), բայց բացառված չեն նաև «քաջ նազարները», զիգզագ աստիճաններով ամբիոն բարձրացողները: Ղարաբաղի ամբողջ հայ ժողովուրդը ոտքի էր ելել իր իրավունքները պաշտպանելու:

Ինչպես որակվեց ժողովրդական այդ մեծ շարժումը՝ «մի խումբ էքստրեմիստների գործ»:

Մեր շարժման սկզբում ոչ մի վիրավորական, մեղադրական խոսք չէր հնչում հարևան ժողովրդի հասցեին և նրանք էլ թշնամաբար չէին տրամադրված մեր հանդեպ: Երբ զրուցում էինք նրանց հետ, բացատրում մեր շարժման դրդապատճառները, նրանք չէին ժխտում մարզի նկատմամբ կիրառվող խտրականությունը, ոմանք սխալմամբ «մատնում էին» իրենց: «Մեզ համար ոչինչ, բայց գիտեք, թե մեզ ինչ են անում»:

Եվ ինչ, անհնարին դարձավ մեր հարցի լուծումը, որովհետև մի խումբ մարդկանց տեսակետը որակվեց ամբողջ ադրբեջանական ժողովրդի կարծիք: Ստացվում է ինչ, ժողովուրդը դարձել էր մի խումբ մարդկանց ձեռքին խաղալիք, ինչ ուզում, անում են՝ որակելով դա ժողովրդի պահանջ:

Դա այդպես էր, իսկ այսօր, երբ ամբողջ երկրով մեկ խոսվում է դեմոկրատիայի մասին, կատարվում է մի սոսկալի բան, երբ ժողովրդի անունով քողարկված կիրառում են ամենաստոր քաղաքականությունը, իրենց կամքը թելադրում ժողովրդին՝ ժողովրդի անունից:

Հիշում եմ, 1988-ի փետրվարին հրապարակ էր դուրս եկել Արցախի և Հայաստանի ողջ հայ բնակչությունը, ավելացրած դրան՝ բազմաթիվ սփյուռքահայերի ցույցերը: Ցուցարարների մեջ կային բանվորներ, գյուղացիներ, մտավորականներ, աշխատանքի և պատերազմի վետերաններ, ուսանողներ, աշակերտներ, ղարաբաղյան տարազով այաներ և նույնիսկ գրկի երեխաներ, որոնք ծնողների գրկից փոքրիկ դրոշները ձեռքներին մեծերի օրինակով կանչում էին «Հայաստան, Միացում»: Զարմանալի է, բայց փետրվարյան ցրտաշունչ օրերին ոտքով կամ բեռնատար ավտոմեքենաների թափքում գնացել, հավաքվել են Ստեփանակերտի հրապարակում, իրենց արդար պահանջն էին ներկայացնում, որը ձեռնտու չէր վերևներում նստած ղեկավարներին և իրենց տեսակետը վերագրում էին ժողովրդին, որ իբր դեմ են մեր պահանջներին: Փաստորեն ժողովուրդը մեր օրերում դարձել է մի պատյան, որով մարդիկ քողարկում են արատավոր արարքները, հանցավոր գործողու-

թյունները, դրանք որակում որպես ժողովրդի պահանջ:

Օրերս մեր գյուղում Հայաստանից օգնություն ուղարկած մթերքների ինքնակոչ տնօրինողները հրաժարվեցին բաժին տալ գյուղական ուսուցչուհուն, պատճառաբանելով տեղացի չլինելը: Չնայած, նա ապրում է գյուղում, դեպքից դեպք է գնում հայրենի գյուղ, այստեղ է եկել Վարդաշենի շրջանի Ճալեթ հայկական գյուղում երկու տարի գործուղումով աշխատելուց հետո, փախել է տեղի հայ բնակիչների հետ, այնտեղ թողնելով բոլոր փաստաթղթերը, փաստորեն նաև փախստական է:

Իմ միջամտությունից հետո ասացին, որ իբր ժողովուրդը չի թողում, բողոքում է: Ուրիշ ինչ կարող եմ ասել: «Խեղճ ժողովուրդ» դեռ ինչքան պիտի խաղալիք դառնաք մեծ ու փոքր բյուրոկրատների ձեռքին:

«Բարեկամություն», 1989թ., դեկտեմբերի 21, N146

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ

«Զրաբերդ»-ը իմ սիրած թերթն է: Նրա հետ իմ ծանոթությունը դպրոցական տարիներից է, երբ մրցույթում շահած իմ ազատ թեմայով շարադրություններն էին տպագրվում:

Առաջին թղթակցությունս Մեծ հայրենականում զոհված հորեղբորս մասին զոհվածների պատվին Առաջաձորում կառուցած հուշարձանի բացման առիթով գրված «Բա՛րև, հորեղբա՛յր» հոդվածն էր, որը շատ հավանեցին խմբագրությունում և առաջարկեցին շարունակել թղթակցել:

Այդ օրվանից առայսօր շարունակում եմ մնալ թերթի բարեկամն ու աջակիցը:

Սիրով համագործակցել եմ թերթի խմբագիրների հետ, բազմաբնույթ նյութեր լուսաբանել թերթի էջերում: Մի խոսքով, եղել եմ և՛ ակտիվ թղթակից, և՛ ակտիվ ընթերցող:

Անգնահատելի էր թերթի դերը Արցախյան շարժման տարիներին: Խմբագիր Սլավա Մոսունցը խմբագրությունը վեր էր ածել յուրահատուկ շտաբի, թերթը դարձրել մարտական: Հարյուրավոր զանգեր էր ընդունում, տարաբնույթ հարցեր լուծում, ոգեշունչ հոդվածներ տպագրում:

Հիշում եմ, 1988 թվականին իմ հեղինակած «Որդին չի ներում» հոդվածը, որը մեծ ոգևորություն էր առաջացրել ընթերցողների շրջանում, ամբողջ տիրաժով Երևան է ուղարկվել ու բաժանվել ցուցարարներին:

Մեծ է թերթի դերը նաև այսօր: Թերթում պարբերաբար լուսաբան-

վում են շրջանի կարևոր իրադարձությունները: Մեզ հուզող շատ հարցերի պատասխանները գտնում ենք թերթի էջերում, սիրով ընթերցում հրապարակախոսական, գիտական, գեղարվեստական հոդվածները:

Գովեստի է արժանի, երբ թերթի էջերում գրական թոթովանքներով հանդես են գալիս նաև դպրոցականները: Անհրաժեշտ է նրանց խրախուսել, ուղղություն տալ, ոգևորել: Ցանկալի կլինի «Պատանի թղթակից» էջ բացել, որպեսզի թերթը հաստիքային և արտահաստիքային թղթակիցների արժանի հերթափոխ ունենա:

Ուրախալի է, որ այսօր մեր թերթը լույս է ընծայվում բարձրորակ թղթով, արտահայտիչ, խոսուն վերնագրերով, հետաքրքիր նյութերով ու գեղեցիկ ձևավորումներով:

Շնորհավորում եմ խմբագրական կոլեկտիվին մասնագիտական տոնի առթիվ, ցանկանում ստեղծագործական ակտիվություն, աչալրջություն, հաջողություններ՝ բարձր մակարդակով թերթի համարներ լույս ընծայելու գործում:

«Զրաբերդ», N10 մայիս, 2010թ.

ԻՆՉՈՒ Է ՊԱԿԱՍՈՒՄ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Զրաբերդը» մնում է իմ ամենասիրած թերթը: Այստեղ բարձրացրած հարցերը միանգամայն ճիշտ ու տեղին են: ինձ զայրացնում է այն, որ խմբագրության բարձրացրած հարցերից շատերի արձագանքը չընթերցեցի կամ չտեսա այդ ուղղությամբ կատարվող որոշակի նպատակասլաց աշխատանք:

Շատ է գրվել անասնագողության, ֆերմաները առանց հսկողության թողնելու, հարբած հերթապահելու մասին, բայց այդքան գրելուց հետո էլ անտեղի զոհեր ու նյութական վնաս ենք կրում:

Գրվել է երիտասարդության մեջ արատավոր սովորության՝թուղթ խաղալու մասին, ի՞նչ է փոխվել դրանից, այլևս չե՞ն խաղում, ո՞վ է տուգանվել, ո՞ր ղեկավարը այդ ուղղությամբ իր կատարածի մասին հանդես եկավ, օրինակ հանդիսացավ մնացածներին: Ոչ ոք:

Թերթը հաճախ է ցավով նշում շրջկենտրոնի դատարկ վաճառասեղանների, շուկայի աղքատության ու բարձր գների մասին: Դրանցից ի՞նչ է փոխվում: Ո՞ր մի տնտեսության ղեկավարը հանդես եկավ իր պատրաստակամությամբ առատ բանջարեղեն աճեցնելու և համեմատաբար մատչելի գներով վաճառելու համար:

Ես շուկայից համարյա ոչինչ չեմ գնում, ոչ էլ վաճառում, բայց մեծ ցավով եմ նայում շուկայի դատարկությանը, գներին: Ինչո՞վ է մեղավոր այսօրվա երեխան, ինչպե՞ս պիտի աճի թերսնումով: 4-5 երեխա ունեցող ծնողը ինչպե՞ս 5 ռուբլով կարտոֆիլ գնի, ինչքան գնի, ինչո՞վ գնի, իսկ ինչո՞ւ գնի, երբ կարտոֆիլը, լոբին, կանաչեղենը մեր շրջանում առատորեն աճում են և կարելի է էժան վաճառել, ոչ թե՝հակառակը: Լավ հիշում եմ ընկ. Մոսունցի մի նախադասությունը.՝«Լոբին հանվել է շրջանից դուրս»: Կհարցնեի, իսկ ո՞վ է միջամտել, որ այդ մթերքը շրջանից դուրս չհանվի, ո՞վ պիտի մտածեր շրջկենտրոնի բնակչությանը ձմռանը մթերքներով ապահովելու համար: Միթե դժվար է եղել բանջարեղենի մթերագրասենյակի աշխատողների համար մտնել գյուղերը և մատչելի գներով գյուղացիներից գնել ավելցուկ մթերքը և վաճառքի հանել (ինչ նրանք չեն արել, ուրիշներն են արել): Նորից կպատճառաբանվի վառելիքի պակասությունը: Բայց չէ որ հնարավոր էր դիզելային վառելիքով աշխատող մի մեքենա վերցնել, դեռ խաղող էլ բարձել, բարձրանալ վերին գյուղերը, վաճառել խաղողը, գյուղում հայտարարել, ով ինչ վաճառելու մթերքներ ունի՝բերի: Որ գյուղացին չի բերի: Կբերեն: Նախ, որ նրանք էլ տրանսպորտ չունեն ուրիշ տեղ վաճառքի տանելու, երկրորդը, եթե անհրաժեշտ է եղել, գյուղացին ձրի է իր մթերքներից բաժին հանել, ո՞ւր մնաց…

Գաղտնիք չէ նաև, որ շատ պաշտոնյաներ նույնպես կարողանում են մատչելի գներով տնտեսություններից ձեռք բերել նշված մթերքները: Փաստորեն ովքե՞ր մնացին առանց մթերքների. ծերերը, հաշմանդամները, «անկարողները»: Նրանց համար ո՞վ պիտի մտածի, ինչի՞ համար են աշխատավարձ ստանում մարդիկ:

Անցածն անցած է, իսկ ի՞նչ է արվում եկող ձմռանը նախապատրաստվելու, շուկայի վաճառասեղանները դատարկությունից «ազատելու» համար:

Տնտեսություններում աշխատանքները պլանավորել այնպես, որ շրջանի բնակչությունը մթերքների պակասություն չզգա: Եթե ներքևի զոնայում հնարավոր չէ տվյալ բանջարեղենը աճեցնել, առատ բերք ստանալ, թող տնտեսությունները (վերին և ներքին զոնայի) միջտնտեսային կապեր ստեղծեն, համապատասխանաբար որտեղ ինչը աճում է, աճեցնեն և փոխանակեն: Ասենք վերին գյուղերում լոբի, կարտոֆիլ աճեցնեն, ներքևում՝ սեխ, ձմերուկ, խաղող, ո՞վ ինչի պահանջ կունենա, տնտեսությունները փոխանակեն և մատչելի գներով վաճառեն իրենց աշխատողներին:

Մեծ աշխատանք ունեն կատարելու մեր գյուղատնտեսները՝մթերք-

ների առատությունն ապահովելու գործում: Նրանք չպետք է բավարարվեն շրջանում մոլեգնող մրգերի, բանջարեղենի վնասատուների դեմ պայքարի գործում թերթում մի թղթակցություն գրելով: Պետք է միասնական պայքար տանեն վնասատուների դեմ, ապահովեն համապատասխան նյութերով, ժամանակին կատարեն սրսկումները, որպեսզի արդյունքի հասնեն: Չէ որ «շնորհիվ կոլորիդյան բզեզի», կարտոֆիլի բերքատվությունը ընկել է մի քանի անգամ, մի ուրիշ վնասատու արդեն «խեղդում է» լոբուն, երրորդը՝վարունգին… և եթե այսպես շարունակվի, շուկայում դրանց գներն ավելի կբարձրանան:

Թերանալու ժամանակը չէ, պետք է միասնաբար պայքար տանել բանջարեղենի առատության, էժանության համար, որպեսզի որոշ չափով թեթևացվեն շրջանի բնակչության հոգսերը՝ համատարած թանկության պայմաններում:

Կարծում եմ մասնագետներն ավելի խելացի առաջարկություններով հանդես կգան, կարծագանքեն թերթի բարձրացրած հարցերին:

Իսկ թերթը թող այսուհետ էլ անաչառ կերպով շրջանի բնակչությանը հուզող հարցերին խելացի պատասխաններ որոնի…

Գյուղացին սպասում է գործնական օգնության:

1990թ., «Զրաբերդ»

ՇՆՈՐՀԱԼԻ ԳՈՐԾ

Սիրով ընթերցեցի Սիրուշ Բաղդասարյանի «Անավարտ գարուններ» գիրքը: Այնտեղ պատմվող ամեն ինչին քաջատեղյակ եմ, ճանաչում եմ համարյա բոլոր հերոսներին, ականատեսն եմ շատ դեպքերի, ինքս էլ մեր պայքարից որոշ հետաքրքիր դեպքեր «Տագնապալից ու փոթորկածին օրեր» վերնագրով ներկայացրել եմ ընթերցողներին, թերթերի էջերում անմահացրել եմ մեր գյուղի կամ ինձ ծանոթ զոհված տղաներին, բայց այն, ինչ արել է Սիրուշ Բաղդասարյանը՝ անմահացնելով շրջանային հիվանդանոցի աշխատակիցներին ու գլխավոր բժիշկ պարոն Օհանյանին, իսկապես արժանի է մեծ դրվատանքի:

Գիրքը գրված է հերոսների, մասնակիցների, ականատեսների պատմածների հիման վրա, կան նույնիսկ դեպքերին ոչ ճիշտ հերթականություն, դեպքերի, անունների անհարկի կրկնություններ, բայց նրան հաջողվել է ամբողջացնել հիվանդանոցի կոլեկտիվի անդամների կերպարները, նրանց զօրուգիշեր կատարած անձնվեր, հայրենանվեր աշխատանքը՝ ամենադժվար պայմաններում:

Շատերի կարծիքով «կռվել» նշանակում է միայն ինքնաձիգով կամ հրանոթով կրակել: Բայց դա այդպես չէ: Արցախում կռվել են բոլորը: Հայրենիքի պաշտպանությունը հավասարեցրել էր բոլորին: Կողք կողքի կռվում էին հողվորն ու բժիշկը, ուսուցիչն ու աշակերտը, պապն ու թոռը: Կռվում էին ինքնաձիգով, ծանր հրետանիով, վիրահատական դանակով ու սրսկիչով, գրիչով, տեսախցիկով, ապրելով գնդակոծվող բնակավայրերում՝ զինվորներին թիկունք դառնալով:

Մի՞թե կռվել չի ապրելով գնդակոծվող քաղաքում՝ առանց ջրի, հացի, լույսի, ինչով հերոս չի բռնագաղթված երիտասարդ այն մայրը, որը 1992թ. հուլիսին Ստեփանակերտի հրապարակում հենց ավտոմեքենայից փախստականներին շպրտվող հացից մի կտոր «ճանկը գցելով» թաթախում էր մի բաժակ ջրի մեջ, փափկացնում և դրանով կերակրում 3-4 ամսական երեխային... Որ որդիներ են կորցրել, սիրած տղաներ, եղբայրներ ու ծնողներ, հարազատ բնակավայրերից ստիպված են եղել բռնագաղթել: Բազում զրկանքների գնով է ձեռք բերվել այսօրվա մեր անկախությունը:

Բոլորը զինվոր էին. յուրաքանչյուրը պայքարում էր յուրովի:

Իսկ որ պատերազմի օրերին, իսկապե՛ս հերոսական աշխատանք են կատարել մեր բժիշկները, քույրերը, դա ակնառու է: Քանի՜-քանի՜ մարդու կյանք է վերադարձրել կոնկրետ գրքի գլխավոր հերոսը՝ Սերգեյ Օհանյանն իր կոլեկտիվով: Ինչպես գրքի հեղինակն է նշում, միայն նրա հաշվում չորս հազար վիրահատություն կա: Այդ նշանակում է, որ նրա սիրտը 4000 անգամ անսովոր զարկեր է ունեցել՝ վիրահատական դանակը ձեռքն առնելիս, մահվան դեմ պայքարելիս: Իսկ ով կարող է հաշվել, թե քանի-քանի գիշերներ է արթուն մնացել վիրահատարանում, թե՛ պատերազմական և թե՛ խաղաղ օրերին:

Միայն մի գիշեր, վիրահատված հիվանդիս խնամելիս, ականատես եղա, թե ինչպես նա 24 ժամ անընդմեջ ստիպված եղավ աշխատել, 3 վիրահատություն կատարել, հսկել նրանց... իսկ քանի այդպիսի գիշերներ կլինի լուսացրած բժիշկը՝ իր առողջության, հանգստի հաշվին:

Սա դեռ սովորական պայմաններում, իսկ երբ ստիպված է եղել կատարել այդ ամենը տարրական հարմարություններից զուրկ պայմաններում՝ գնդակոծվող վրանների տակ, էլեկտրական մարտկոցների թույլ լույսով, նույնիսկ միանգամից 2-3 վիրավորի վիրահատելով, պետք եղած ժամանակ վիրավորների համար դոնոր դառնալով, վիրավորների համար ծանր պայմաններում անգամ իր կեցվածքով աշխատողներին հույս ներշնչելով:

Շատերն, այո, չեն հասկանում կամ անտեղյակ են բժիշկների կատարած աշխատանքից, չեն կարողանում գնահատել նրանց ըստ ար-

ժանվույն, ընդհակառակը, նախանձից դրդված նույնիսկ չարախոսում են, առանց հասկանալու, որ իր տղաներով ապրելով Արցախում, շենացնելով իր տունը, լինելով աշխատելու, արարելու, անսպառ էներգիայով լեցուն, հմուտ գործարար ու բարերար, ապրելով իր ժողովրդի հոգսերով, նա Արցախը չլքելու, գեղեցիկ ու արժանավայել ապրելու օրինակ է բոլորիս համար:

Գրքում ճշմարիտ են պատկերված նաև մյուս գործող անձանց կերպարները:

Ճանաչելով մեր բժիշկներին, քույրերին, պատկերացնում եմ պահի լրջությունն ու նրանց գործելաոճը, անելանելի դրությունից ելք գտնելու նրանց հնարամտությունը, նույնիսկ կարգադրելու, պահանջելու նրանց ձևը:

Միշտ կենսուրախ ու գործնական բժշկուհի Միլետան բոլորիս է խորհուրդ է տալիս օգտվել բնությունից, օգտագործել մեր շրջապատի դեղաբույսերը և զարմանալի չէ, որ հենց նա էր առաջարկել, հոսպիտալում սննդամթերքի պաշարը սպառվելուց, աշխատողներին փիփերթ քաղելու ուղարկել և դրանով կերակրել վիրավորներին ու աշխատողներին:

Ճանաչում եմ նաև գրքի մյուս հերոսներին՝ բժիշկ Մանվել Բախշյանին, Սարգիս Ավթանդիլյանին, Օլեգ Մակյանին, Արմեն Պատաշյանին, բուժակ Վոլոդյա Աբրահամյանին, բուժքույրեր Էֆոյին, Միրային, Լյուբային, Նարինեին՝ Առաջածորից, Մանուշակին՝ Խնկավանից:

Վերջերս շրջանային հիվանդանոցի բժիշկները ներկայացել էին գյուղ՝ բժշկական օգնություն ցուցաբերելու: Եկել էին դպրոց: Հեռախոսով տեղեկացրին բժշկուհի Միլետային, որ հիվանդանոցում նոր ծննդաբերած կնոջ վիճակը ծանրացել է: Տեսնել էր պետք, թե նա ինչպես անհանգստացավ, քանի անգամ հետ զանգեց, նշանակումներ արեց հեռախոսով, խորհուրդներ տվեց:

Պատկերացնում եմ, թե նա ինչպես էր անհանգստանում վիրավոր ու հիվանդ զինվորների համար և ինչպիսի հոգատարությամբ էր վերաբերվել նրանց:

Միանում եմ գրքի հեղինակին և բարձր եմ գնահատում նրանց ու նրանց ընկերների վաստակը՝ Արցախի ազատագրության ու անկախության ձեռքբերման դժվարին, բայց պատվաբեր գործում:

Շնորհակալություն գրքի հեղինակին՝ մեր հայրենիքի հերոսական ժամանակներին նվիրված գրքի հրատարակման համար:

Դուք ևս Արցախյան պայքարի քաջամարտիկ եք:

«Զրաբերդ», 2008թ., հունվար.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վերին Հոռաթաղում է ապրում Սահակյանների ընտանիքը, որը ունի հետաքրքիր պատմություն:

Ընտանիքի պապը՝ Դավիթը, 12 տարեկանում հորթապահ էր Գանձասարում:

Վանքի բեկերը քեֆ էին անում Գանձասարի մոտերքում: Նրանք կրակում և մի հորթ են սպանում: Դավիթը լացում է, կանչում են մոտները, որ հորթի արժեքը տան, սկսում են ծաղրել ու ծիծաղել: Դավիթը գետնից վերցնում է մի հրացան, կրակում ու սպանում բեկերից մեկին ու փախչում: Թաքնվում է, չեն կարողանում գտնել: Աշուն էր: Ոչխարների հոտը իջեցնում էին տափաստաններ:

Քաղցած, վախեցած երեխան մոտենում է մի թուրքի, լացում, հաց խնդրում: Թուրքը նրան տանում է հետը Քռի ափը, որդեգրում: Դավիթը մեծանում է այդտեղ, ամուսնացնում են թրքուհու հետ, ծնվում է մի տղա երեխա՝ Ջալալը: 2 տարեկան էր Ջալալը, երբ Դավիթը նկատում է, որ կինը դավաճանում է իրեն: Գաղտնի մտնում է մահճակալի տակ, կնոջ սիրեկանին բռնեցնում է, կռվում են իրար հետ: Սիրեկանը սրով խփում է նրա ոտքին, նա սուրը խլում և խրում է կուրծքը:

Կինը 2 եղբայր է ունենում, ուզում են սպանել Դավիթին, բայց փախչում է, թաքնվում, որոշում է հետ գալ հայերի մոտ:

Գիշերը գնում է երեխան գողանում, բերում, թողնում Մանիքլու գյուղում, ինքը գնում Վանք՝ իրենց տուն: Տեսնում է ծնողները մահացած, ասում են, որ քույր ունի Հար-գոմերում ամուսնացած: Գալիս է Հար-գոմեր՝ Իսակի տուն, խոսում է թուրքերեն:Քույրը՝ Գյուլխասը, թուրքերեն չի հասկանում: Կանչում են Սահակյան Արգոյին, բացատրում է Գյուլխասին, թե կորած եղբայր չի՞ ունեցել: Գյուլխասը հիշում է կորած եղբորը, լացում, իմանում նրա պատմությունը և որոշում իր տանը տեղ տալ մնալու:

Դավիթը գնում է Մանիքլուից երեխային վերցնում, բերում Հար-գոմեր: Որոշ ժամանակ անց քույրը նրան ամուսնացնում է վաղուհասցի այրի Շուղիի հետ:

Կոլտնտեսությունները նոր էին ստեղծվում և Վերին Հոռաթաղի բնակիչ Արշակ պապը կամավոր կոլտնտեսությանն է հանձնում իր Գևորգ պապից ժառանգած ջրաղացը: Դավիթին՝ որպես չունևոր, նշանակում են ջրաղացպան, կնոջ հետ տեղափոխվում է Թարթառի ափին գտնվող ջրաղացը, ունենում են 2 երեխա՝ Սերոժը և Աստղիկը, այնտե-

ղից էլ տեղափոխվում են Վերին Հոռաթաղ և բնակվում այնտեղ: Երեխաները մեծանում են, ամուսնանում, երեխաներ ունենում:

Վերին Հոռաթաղում ապրում էին մի քանի թուրք ընտանիքներ: Դրանցից մեկը, Դավիթի Սերոժ տղայի հարևանությամբ էր, նրանք ունեին Մորա անունով մի գեղեցիկ աղջիկ և Սերոժի մեծ տղան՝ Ռաժդենը, փախցնում է նրան,բայց թուրքերը չեն հանդուրժում, որ հայը իրենց աղջիկը փախցրել է: Եղբայրները սպանում են Մորային, իսկ բոլոր թուրք ընտանիքները տեղափոխվում են գյուղից:

(Երևի Հոռաթաղը միակ գյուղն էր, որտեղ շարժման տարիներին թուրք ընտանիքներ չկային, չնայած ներքին կարգով բոլոր գյուղերում թուրքեր էին բնակեցնում և օժանդակում, որ շատ երեխաներ ունենան: Ես այդ Առաջածորից գիտեմ, այնտեղի թուրքերն էին մորս խոստովանել, որ իրենց «տակավը ասում են, որ շատ երեխաներ ունենան» և ունենում էին: Մի թաղամասում 4-5 ընտանիք էր ապրում, ունեցան 10-12-ական երեխաներ՝ մինչև 20 տարին արդեն մի քանի տասնյակ ընտանիքներ կային, դպրոցում՝ թուրքերենի բաժին էր բացվել): Ջալալը, որ մեծացել էր հայկական միջավայրում, ամուսնացավ Վ.Հոռաթաղում ապրող մի թուրքի աղջկա՝ Մնայայի հետ և ունեցան 5 երեխաներ՝ Նարգիզը, Զոհրան, Գյուլչորան, Ջամալն ու Քյամալը: Բոլորն ամուսնացած են հայերի հետ: Տղաները մասնակցել են Արցախյան պատերազմին, փեսաներից 2-ը զոհվել են: Փոքր տղան՝ Քյամալը, փոխել է անունը և Անդրեյ է դրել, կռվել է Քարվաճառում, մայրական պապի գյուղում: Ասում են, որ քեռու նկարը բերել էր, տվել մորը, ասելով, որ եղբորը սպանել է: Գլխից վիրավորվել է Քարվաճառում՝ 1993թ. ապրիլին, I կարգի հաշմանդամ է, ամուսնացած է, 4 երեխաներ ունի:

Հոռաթաղցիները ոչ մի խտրականություն չեն դնում նրանց ընտանիքի նկատմամբ, ապրել են համատեղ, մահացել ու թաղվել ընդհանուր գերեզմանոցում՝ հայկական սովորություններով, բայց գենային ինչ որ բան կա նրանց երեխաների մեջ: Երեխաները խուսափում են դպրոցից, մանավանդ տղաները, կոնկրետ Անդրեյի Դավիթ և Վիգեն Սահակյանները, նույնիսկ անհրաժեշտ է լինում ոստիկանների, մանկական տեսուչի միջամտությունը՝ նրանց դպրոց բերելու համար և չնայած չեմ բարձրաձայնում, մտքում կրկնում եմ թուրք բանաստեղծի խոսքերը.

- Ա՛յ մարդ, տղան իմն է
Չի սովորում, ձեռք քաշիր:
Գլուխս մի ցավեցրու
Չի սովորում, ձեռք քաշիր...

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ

Ուսուցիչների հունվարյան կոնֆերանսը այս տարի ինձ համար կրկնակի ուրախություն բերեց: Հանրապետության լուսավորության մինիստրության պատվոգրով պարգևատրվեց իմ ուսուցիչ Զավեն Շահբարյանը:

Միշտ էլ օրինական հպարտությամբ եմ լսում ամբիոնից իմ հարազատ դպրոցի՝ Առաջածորի միջնակարգի անունը:

Ապրում, աշխատում եմ շրջանի մի այլ գյուղում, ղեկավարում եմ մանկավարժական կոլեկտիվ, բայց դեռևս ինձ զգում եմ որպես Առաձաջորի միջնակարգ դպրոցի աշակերտը, ուսուցիչներին՝ իմ ուսուցիչները, աշխատում եմ նրանցից սովորածը, նրանց օրինակով անմնացորդ նվիրել աշակերտներիս, որպեսզի ժամանակի ընթացքում ես էլ իմ սաների հոգում մնամ իսկապես որպես ուսուցիչ: Ես սիրում ու հարգում եմ իմ բոլոր ուսուցիչներին՝ Գյոզալ Մնցականյանին, Սերգեյ, Ռուբեն, Լուսիկ Ղուլյաններին, Արամ, Հերսիկ, Միքայել Շեկյաններին, Ֆենյա Բախշյանին, Արուսյակ Թելյանին, Սեդա Միրումյանին, Կառլեն Շահբարյանին: Ծնողական սիրով հավասար զգացմունք եմ տածում իմ առաջին ուսուցչուհի Գոհար Գրիգորյանի հանդեպ, բայց այդ սերը պաշտամունքի է հասնում, երբ խոսքը վերաբերվում է Զավեն Շահբարյանին, նրան, ով 4-10-րդ դասարաններում մեզ դասավանդել է մաթեմատիկա և միաժամանակ եղել է մեր դասղեկը:

Նրա անբասիր աշխատանքի արդյունքն է, որ 1970 թվականի մեր դասարանի 28 շրջանավարտներից 9-ը նույն տարում ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններում, որոնցից 8-ը մաթեմատիկայի ֆակուլտետում, 12-ը ստացել են միջնակարգ մասնագիտական կրթություն, 7-ը արտադրության առաջավորներ են:

Ընկ. Շահբարյանի աշակերտները մեկ անգամ չէ, որ ուրախություն են պատճառել նրան՝ մրցանակներ շահելով շրջանային, մարզային օլիմպիադաներում, նրանցից շատերը այսօր մաթեմատիկայի ուսուցիչներ են, մի քանիսը մաթեմատիկա են դասախոսում երկրի տարբեր բուհերում:

Շրջանի ուսուցիչները բազմաթիվ անգամ լսած կլինեն Զավեն Շահբարյանի անունը՝ որպես լավագույն ուսուցչի, պրոպագանդիստի: Հիրավի արժանի է նա գովասանքների և երբ այժմ պարգևատրվել է հանրապետության լուսավորության մինիստրության պատվոգրով, ես՝ երբեմնի նրա ամենալավ դասարանի աշակերտների անունից (դասարանի ավագի իրավունքով) շնորհավորում եմ ընկ. Շահբարյանին, ցանկանում նրան նորանոր հաջողություններ՝ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում:

«Բարեկամություն», 1986թ., 4 փետրվար

ՄԵՐ ԳՅՈՒՂԸ ՄԵՐ ՏՈՒՆՆ Է

Ավարտվել է բնակավայրերի բարեկարգման միամսյակը: Մեր գյուղերում ու քաղաքներում կատարվել են որոշակի աշխատանքներ: Մի տեղ սալահատակվել է դպրոցի ճանապարհը, տնկել են ծառեր, կառուցվել են հուշարձաններ, մաքրել են փողոցներ, կարգի են բերվել ցանկապատները և այլն:

Շուտով ընդհանրացվելու են արդյունքները: Կլինեն շահողներ և պարտվողներ:

Ինչ խոսք, բնակավայրերի բարեկարգման ծրագիրը հոյակապ ծրագիր է, այն իրականացնելու համար հարկավոր է սրտացավ վերաբերմունք բոլոր համայքների, բոլոր բնակիչների կողմից ու վերահսկողություն դրանց կատարման նկատմամբ:

Նպատակահարմար կլիներ, եթե վերադաս ղեկավարները որևէ բնակավայր այցելելիս, տվյալ համայնքապետի աշխատանքը ամենից առաջ գնահատվեր բնակավայրի հնարավոր բարեկեցիկ տեսքով, մաքրությամբ, ճանապարհների, ցանկապատերի, դարպասների ընդհանուր տեսքից: չէ՞ որ մենք երրորդ հազարամյակի բնակիչներ ենք և մեր կենցաղը, ապրելակերպը, շրջապատը պետք է տարբերվի մեր պապերի կենցաղից:

Իհարկե, բռնագաղթից վերադառնալուց մեր գյուղացիներից շատերը ստիպված ապրել են ավերված տներում և հարմարվել են թափթփվածությանն ու անսարքություններին: Պատահական չէ, որ բոլոր գյուղերում էլ վերակառուցված տները տարբերվում են իրենց կոկիկությամբ ու բարետեսությամբ:

Ճիշտ է, ներկա պայմաններում դժվար է տուն վերակառուցելը, վե-

ռականգնելը, բայց մի՞թե անհնարին է նաև ճանապարհի երկայնքով ձգվող սեփական հողամասի ցանկապատը կարգի բերելը, բակի, այգու կեղտը, ճանապարհի եզրին չթափելը: Թե՞ դրա համար էլ են դրամական միջոցներ անհրաժեշտ:

Վերջերս եղա Գետավանում. երբեմնի այդ գեղեցիկ բնակավայրի ներկայիս տեսքը առիթ հանդիսացավ գրելու այս հոդվածը: Գետավանը այն բնակավայրն է, որի կենտրոնով անցնող ճանապարհն այժմ մեր շրջանը կապում է ՀՀ-ի հետ, ամեն օր շրջանի տարբեր գյուղերից մարդիկ են անցնում այդտեղով և հակառակը՝ իրենց ծառայող որդիներին այցելելու նպատակով բազմաթիվ հայաստանցիներ են անցնում, էլ չեմ խոսում Դադիվանքը տեսնել եկող բարձրաստիճան և օտարերկրյա հյուրերին: Ի՞նչ կմտածեն նրանք՝ անցնելով Գետավանով, տեսնելով ճանապարհի կողմերի ցանկապատերը, որոնք իրենցից ներկայացնում են վառված տանիքների թիթեղներ, ասֆալտին հասնող մոշի թփեր, որոշ տեղերում՝ կտրտված ծառերի ճյուղեր, կիսաքանդված հենասյուներ և այլն: Ընդհանուր այդ տգեղության մեջ, որպես կեղտոտ շորի սպիտակ կարկատան, հիվանդանոցի դիմացը կառուցված առևտրի նոր կրպակն է՝ գեղեցիկ տեսքով ու ծաղկանոցով:

Ի՞նչ կմտածեն մեր մասին: Չէ՞ որ մենք ծառ ու ծաղիկներ սիրող ժողովուրդ ենք, դարավոր լավ արհեստավորներ ենք, հարևան շրջանների բոլոր տները հայերի ձեռքով են կառուցվել, մի՞թե այդ ձեռքերն անկարող են ճանապարհի կողքով գեղեցիկ ցանկապատել, կողքը ծաղիկներ ցանել, ճանապարհի երկու կողմով հոսող առուների կողքին սլացիկ բարդիներ տնկել, մի խոսքով՝ տան տիրոջ հոգածությամբ, միասնական ձևով, միատեսակ գեղեցկացնել բնակավայրը, որը հաճույք կպատճառի այդտեղ ապրողներին և այդ տեղով անցնողներին...

Իհարկե, Գետավանը եզակի չէ, այդպես են նաև մեր մյուս գյուղերը:

Եկեք գեղեցկացնենք ու շենացնենք մեր գյուղերը, լավ օրինակ հանդիսանանք գալիք սերունդների համար, որպեսզի նրանք շարունակեն բարեկարգել, ավելի գեղեցկացնել մեր բնակավայրերը, սիրեն ու ամրանան այստեղ և ոչ թե հիասթափվեն ու հեռանան:

Մեր գյուղը մեր տունն է, սրտանց հոգանք նրա հոգսերը հաճախակի կազմակերպենք շաբաթօրյակներ, օգնենք անկարողներին, թաղամաս առ թաղամաս մաքրենք, բարեկարգենք ու մեր ուշադրության կենտրոնում պահենք:

«Զրաբերդ», 2004թ.

ԱՅԼՄՈԼՈՐԱԿԱՅԻՆՆԵՐԸ ՎԵՐԻՆ ՀՈՌԱԹԱՂՈՒՄ

Վերջերս հաճախակի են խոսում «թռչող ափսեների», «այլմոլորակայինների» մասին: Շատերը չեն հավատում, լրջությամբ չեն ընդունում այդ, բայց իրականում դրանք կան, գոյություն ունեն, իսկապես «այլմոլորակայիններ են», ռոբոտներ են, թե ուրիշ բան, բայց կան և հանդիպում են մարդկանց:

Վերջին 2 ամսում նման երեք «հանդիպում» կայացել է մեր ծորակում: Հուլիսի վերջերին, երեկոյան, հարևան գյուղից տուն վերադառնալիս հանկարծ առջևը առկայծող լույսերից արգելակվել է մեր համագյուղացիներից մեկի մեքենան: Վարորդը դուրս է եկել մեքենայից, տեսել մի «մարդու», որը զրուցել է հետը և անհետացել:

Դրանից քիչ հետո երևացել է Կոճողոտում, զրուցել մի կնոջ հետ, իսկ ահա վերջերս, սեպտեմբերի 9-ին, կիրակի օրը, ժամը 15-16-ի արանքում, Վ. հոռաթաղցի Ա. Հարությունյանը, իր երկու փոքրիկ երեխաների հետ՝ 3 և 4 տարեկան, բարձրանում է գյուղից վերև՝ բանջարանոցը ջրելու: Գյուղից քիչ վերև հանկարծ լսում են դնգդնգոց, կարծես երկաթե տակառ կամ դույլ են գլորում: Արթուրը նույնիսկ ասում է, որ իրենց հարևանի տղան կլինի երկաթե անիվ գլորելիս: Այդ դնգդնգոցը մոտենում է, և նրանք հանկարծ իրենց առաջ՝ 7-8 մետր հեռավորության վրա տեսնում են մի հսկա մարդանման բան՝ կապտականաչավուն երանգով, լույս արձակող աչքերով:

Ա. Հարությունյանը ցանկանում է հետ դառնալ, չի կարողանում, ոտքերը չեն ենթարկվում, կարծես ինչ-որ ուժերի ազդեցությամբ նստում է գետնին, կանաչների վրա: Երեխաները ամուր փաթաթվում են մորը: Եկողը հարցնում է ռուսերեն.

-Ո՞ւմ հողակտորի վրա եմ իջել՝ ռուսի՞, հայի՞, թե՞ թուրքի:

-Հայի,- պատասխանում է Ազատուհին:

-Թերթեր կարդո՞ւմ եք, հեռուստացույց, ռադիո լսո՞ւմ եք:

-Էլեկտրական հոսանք չկա, հեռուստացույց չենք նայում, բայց թերթ կարդում ենք:

-Ի՞նչ են գրում մեր՝ «այլմոլորակայիններիս» մասին:

-Չգիտեմ, ոչինչ:

-Ասլանյան եղբայրներին ճանաչո՞ւմ ես:

-Ոչ չեմ ճանաչում (Իմիջիայլոց, ես ճանաչում եմ Ասլանյան եղբայրներին, երևանցի են, 44 տարեկան, երկվորյակներ, մասնագիտությամբ ինժեներներ, ակտիվորեն մասնակցում են Հայաստանի քաղաքական

կյանքին, նամակագրական կապեր ունեն Արցախի հետ, նաև՝ ինձ հետ):

-Ձեզ շա՞տ են նեղում թուրքերը…

-Ես պետք է շարունակեմ իմ չվերթը, պետք է լինեմ նաև ադրբեջանական հողում, հանդիպեմ նրանց հետ:

-Նրանց մոտ էլ հակառա՞կը պիտի խոսեք,- հարցրեց Ա-ն:

-Չհամարձակվես, «սեյչաս յա տեբե զաբերու»,-զայրացավ «այլմոլորակայինը»:

Նրա բարկությունից սաստիկ վախեցավ Ազատուհին, ցանկացավ վեր կենալ, փախչել, բայց չկարողացավ, կարծես ինչ որ մեկը ամուր գամել էր նրան գետնին:

Հետո «հյուրը» էլի շատ հարցեր տվեց, զրուցեց, խոսեց քրիստոնեությունից, իններորդ ուղեծրից, բայց վախից Ա-ն չի կարողանում ամբողջովին հիշել բառերը:

Մեկ էլ հանկարծ «անծանոթ հյուրը» սկսեց ձևափոխվել և վեր բարձրանալ: Հետևից նայելիս նմանվում էր վառարանի ունելիի…

Նրա հեռանալուց հետո Ազատուհին կարողանում է կանգնել և վերադառնալ տուն:

-Եթե ուրիշը պատմեր, ես չէի հավատա,- ասում է Ազատուհին,- բայց ես ինչպե՞ս հավատացնեմ, որ ճիշտ է, տեսիլք չէ, աչքերիս չի երևացել, ինչպես ասում են շատերը:

Երբ այս մասին հարցնում եմ երեխաներին, ասում են, որ մեծ քեռի է եկել («մեծ թուրք»), վախեցել են, ասել է. «էխո, էխո»:

«Հյուրը» զրուցելիս հաճախակի կրկնում էր «էխո» կամ «լուչ»:

Քանի որ երեխաներն էլ են ասում, հավատանք, որ սա տեսիլք չէ, այլ՝ իրականություն:

Սպասենք «այլմոլորակայինների» հետ նոր հանդիպման:

«Կանչ», 9 ապրիլի, 1998թ.

ԱՐՑԱԽԸ, ԱՅԼՄՈԼՈՐԱԿԱՅԻՆՆԵՐԸ ԵՎ ԱՍԼԱՆՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Հոդվածի հեղինակին ներկայացնում են Ասլանյան եղբայրները

Նաիրա Ատստամյանը Վերին Հոռաթաղի դպրոցում ուսուցչուհի է աշխատում: Անցած տարի «Կանչում» տպագրվել էր նրա որդու բանաստեղծությունը: Այն մեզ շատ դուր եկավ և տղային գրքեր ուղարկեցինք: Ահա այդ կերպ ծանոթացանք: Եվ նամակագրություն ստեղծվեց մեր և այդ ընտանիքի միջև: Մեզ հաճախ է գրում Նաիրան:

Մարտին և Արամայիս Ասլանյաններ

ՆԱԻՐԱ ԱՌՍՏԱՄՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Բարև, սիրելի եղբայրներ. այս նամակում պետք է հաճելի անակնկալ մատուցեմ ձեզ: Օրերս մեր գյուղում հայտնվել է մի «այլմոլորակային», իսկ իմ կարծիքով՝ռոբոտ, զրուցել մեր դպրոցի գրադարանավարուհու հետ և հիշատակել նաև ձեր մասին: Ես մտածում էի, որ եթե ձեր անունը տվել է, ուրեմն դա հենց ձեր ինժեներական հնարամտության արդյունքն է՝ ռոբոտ և ոչ թե այլմոլորակային, որովհետև ինչպես վկայում են նրանց զրուցակիցները, այդ արարածները սկսում են խոսել ռուսերեն, հետո փոխում են հայերենի, անպայման հարցնում են մեր և թուրքերի հարաբերություններից: Եվ միշտ պնդում, որ իբր վտանգ է սպասվում մեր մոլորակին, բայց իրենք կօգնեն քրիստոնյաներին և այլն: Շատ ուրախ եմ, որ եղբայրներիս ճանաչում են նաև մեր մոլորակից դուրս, եթե, իհարկե, դա ձեր խելքի, ձեռքի գործը չէ: Եթե գաղտնիք չէ, կարող եք հայտնել: Ուղղակի ես կասկածում եմ, որ դրանք Երևանից են գործուղված, ոչ թե այլմոլորակային են:

Այսքանն իմիջիայլոց: Շատ ափսոս, որ չեք կարող գալ և տարվա այս եղանակին վայելել մեր այգիների, բանջարանոցների բերք ու բարիքից: Շատ եմ ափսոսում, որովհետև լսել եմ, որ Երևանում վիճակը շատ ծանր է, համատարած թանկության պայմաններում դժվար է: Մեզ մոտ՝ գյուղում, ամեն ինչ կարողանում ենք ստեղծել ինքներս: Լավիցվատից ապրում ենք: Իսկ իրադարձությունը սովորականի պես է: Կամայականություններ ամեն օր լինում են: Ձինվորական իշխանությունները մարդկանց անտեղի բանտարկում են, թուրքերի կողմից պայթեց-

վում են ճանապարհները, եղել են դեպքեր, երբ պատանդներ են վերցվել, բենզին չկա, ժողովուրդը շրջապատել է շրջկոմի շենքը, որ այլազգի կոմիտեները չգրավեն իշխանությունը: Սահմանային գյուղերում բերքահավաք է ու այգիներից ամեն օր մարդ են գողանում: Զինվորականները հսկում են ջրանցքները, որ մեր Թարթառի ջուրը անարգել գնա և ոռոգի հարևան թուրքական շրջանների դաշտերը: Իսկ մենք երկու տարի է առանց գազի ենք: Առհասարակ զինվորները նրանց կողմն են հիմա: Մեզ հետ խոսում են թշնամաբար: Գրում եմ նավթի լամպի լույսի տակ: Նավթ էլ լինի: Կեղտոտ կերոսին է, հազիվ է լուսավորում: Ճարներս ինչ, երևի շուտով դա էլ չլինի: Վառելիքի պատճառով տրանսպորտը չի գործում: Որ այսպես երկար շարունակվի, պետք է նորից վերադառնանք եզներով վար ու ցանքին: Դրան էլ ենք նախապատրաստվում: Հայաստանի վիճակն էլ մի կողմից է մեզ հուսահատեցնում: Ինչ են շարունակ վիճաբանում, մեր թշնամիներին ուրախացնում: Մի՞թե չի կարելի գիտակցաբար հավաքվել մի դրոշի ներքո, մանավանդ, որ հիմա այդ երազած դրոշն ունենք: Բարևներով՝

«Կանչ», 1990թ.

ՄԻ ԳՅՈՒՂ Է՝ ՄԻ ՍՈՒՐԵՆ

Սուրեն Վանյանը մեխանիզատոր է աշխատում Վերին Հոռաթաղի գյուղական համայնքում: Քիչ է ասել՝ աշխատում է: Ինչպես գյուղապետ Գրիշա Մարտիրոսյանն ասում.

-Մի գյուղ է՝ մի Սուրեն:

Իսկապես, Սուրենը գիշեր-ցերեկ ղեկի մոտ է: Նա հերկում է տնտեսության և բոլոր բնակիչների հողակտորները: Ցանում է, հնձում, բերքը ժամանակին դաշտից պահեստ է հասցնում, անասնակերերը՝ խոտը, ծղոտը ֆերմա տեղափոխում, օգնության ձեռք մեկնում գյուղի մարդկանց: Չի հոգնում, չի դժգոհում, միայն շտապեցնում է. «Սպասողներ շատ կան, արագ-արագ դատարկեք կցասայլը, ինձ սպասում են…»

Նա ունի իր համոզմունքը. առաջինը զոհվածների ընտանիքների հողամասն է վարում՝ ձրի. «միայն վառելիք տան, բավական է»,- ասում է, նրանց անասնակերն ու վառելափայտն է տեղափոխում, թող դա էլ լինի իմ օգնությունը: Բռնագաղթի ժամանակ նա Արցախից չի հեռացել: Չորս երեխաների հետ ապաստանել էր Ասկերանի շրջանի Բալուջա գյուղում: Նա ջոկատի տղաների հետ իր տրակտորով եղել է պայքարի առաջին գծում:

Սուրենը երկու անգամ վիրավորվել է: Առաջին անգամ՝ Վանքում, երբ ջոկատի տղաներին դիրքերն էր տեղափոխել, եկել էր գյուղ՝ շտաբից մթերք ստանալու, ինքնաթիռը մահաբեր ռումբեր նետեց շտաբի վրա. այնտեղ էլ վիրավորվեց: Բուժվելուց նորից շարք մտավ. իր տրակտորով մարդկանց տեղափոխում էր գյուղ, գյուղից քաղաք, ընդառաջում բոլորին, թեթևացնում համագյուղացիների հոգսերը: Այդ օրերին Սուրենի տրակտորը և՛ մարդատար էր, և՛ բեռնատար, և՛ շտապ օգնություն, և՛ ամեն-ամեն ինչ:

1993թ-ին, երբ Քարվաճառում ուժեղ մարտեր էին ընթանում, նա Ավոյի տղաների համար ծածկոցներ էր տարել՝ վերադարձին տրակտորը պայթել էր ականի վրա ու նորից վիրավորվել: Բարեբախտաբար, վերքերը ծանր չէին և ապաքինվելուց նորից գործի անցավ Սուրենը:

Արդեն ազատագրվել էր գյուղը, բնակիչները հետ էին վերադարձել, դաշտերում վար ու ցանք պետք է կատարվեր, ամեն մեկը իր ցավի, իր հոգսի հետ էր: Ավերված ու թալանված օջախները պետք է նոր կյանք ու շունչ ստանային: Դժվար օրեր էին: Ստեփանակերտից պետք է գյուղ հասցվեր ժողովրդի բաժին ալյուրն ու մյուս սննդամթերքները: Զոհերին պետք է գյուղ հասցնեին, վիրավորներին՝ հոսպիտալները, տղամարդկանց՝ խրամատները: Գյուղի ավերված օբյեկտները վերականգնելու համար շինանյութ պետք է հասցվեր: Այս բոլոր աշխատանքները մեկը մյուսից կարևոր էին:

Այսօր Վերին Հոռաթաղն օրեցօր թափ է առնում, մարդիկ կառուցում են, ստեղծում իրենց հացը, բերքն ու բարիքը: Սուրեն Վանյանն ինչպես միշտ, տրակտորով շարունակում է իր հայրենանվեր աշխատանքները:

Աշուն է հիմա և Սուրենը հանդերից ու դաշտերից հավաքում է տնտեսության բերքն ու բարիքը, նորից հերկում ու ցանում է, ստեղծում գալիք բերքի հիմքերը:

«Զրաբերդ», 1994թ.

ՅՈԹ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ, ՅՈԹ ՈՒՍԱՆՈՂ...

Այս տարի մեր դպրոցն ավարտել են յոթ աշակերտներ: Դրանք մեր միջնակարգի առաջին շրջանավարտներն են: Յոթ շրջանավարտներն էլ քննություն են հանձնել և ընդունվել բարձրագույն ու միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ:

Շուտով կհնչեն դասի հրավիրող սեպտեմբերյան զանգի հաճելի ղողանջները, և վերին հոռաթաղցի 7 պատանիներ ու աղջիկներ նորից կնստեն նստարաններին՝ միայն ոչ միասին, ոչ հայրենի գյուղի դպրոցում, այլև Երևանում, Կամոյում, Ստեփանակերտում: Յոթից երեքը ընտրել են ուսուցչի մասնագիտությունը՝ ցանկանալով նմանվել իրենց ուսուցիչներին: Նինան ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետը, Աշխենն ու Սուսանան՝ Կամոյի մանկավարժական ուսումնարանը, Անահիտն ու Ստելան կդառնան մանկաբարձուհիներ, Բաղդասարը՝ անասնաբույժ, Սուսաննան՝ գրդարանավարուհի: Նա էլ երազում էր դառնալ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, շատ էր սիրում գրքեր կարդալ, ծնողները կոլտնտեսության անասունները «սար էին տարել», հնարավոր չէր եղել ժամանակին գալ և փաստաթղթերը հանձնել: Երբ եկան, ինստիտուտում արդեն քննություններն սկսված էին:

-Ստիպված փաստաթղթերը հանձնեցի գրադարանային բաժին, գոնե կյանքում իմ սիրած գրքերի հետ կլինեմ:

-Ոչինչ,- ասում եմ,- եթե մանկավարժության հանդեպ ունեցած սերդ չմարի, ավարտելուց կաշխատես դպրոցի գրադարանում և հեռակա կավարտես հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը:

Նինան իր համարձակ, խելացի պատասխաններով աչքի էր զարնվել ընդունող հանձնաժողովի կողմից:

-Ինչու՞ ես այդ մասնագիտությունը ընտրել,- հարցրել են:

-Մեր գյուղում աշխարհագրության մասնագետ չկա, որպեսզի ավարտեմ և վերադառնամ ու մեր դպրոցում աշխատեմ:

-Իսկ համոզվա՞ծ ես, որ ձեր գյուղն ես վերադառնալու, գուցե մնացիր Երևանում:

-Ոչ մի դեպքում, ես իմ Արցախը չեմ լքի, ով կցանկանա, Երևանից կարող է հետս գալ Արցախ, բայց ես Երևանում չեմ մնա:

Դասախոսներից մեկն ասել է,

- Գրիր, որ անպայման գնալու ես ձեր գյուղը:

-Կատակած կլինի,- ասում եմ,- աղջկան նման բան չեն պարտադրի,

ով գիտե, գուցե արտասահմանում ես բնակվելու, չես լսել՝ ժողովրդական առածն ասում է.

Աղջիկը հայրենիք չունի…

Բայց, որ պարտք ունես հարազատ Արցախի համար, դա դուք լավ գիտեք, պետք է հատուցեք ձեր պարտքը, վերադառնաք գիտելիքներով զինված և շենացնեք ձեր երկրամասը: Այդպես ենք սովորեցրել ձեզ:

-Ինչու՞ մեդալ չես ստացել,- հարցրել էին մի այլ քննության, նայելով ատեստատի գնահատականներին (միայն ռուսաց լեզվից ունի «4»):

Որ Նինան արժանի էր մեդալի, կասկած չկար, բայց քանի որ մեր առաջին շրջանավարտներն ենք ունեցել, չենք ներկայացրել, կարծելով, թե նրանից ավելի շատ գիտելիքներ ունեցողներն են արժանի, բայց երբ ծանոթացել եմ շրջանի մեդալակիրների գրավոր աշխատանքներին հայոց լեզվից, համոզվել եմ, որ մեր աշակերտների, կոնկրետ Նինայի գրած գրավորը գերազանցում է նրանցից շատերի գրածներին: Հայոց լեզվի քննությունից (թելադրություն) Նինան ստացել է 4,5:

-Իսկ ինչու«հինգ»չես ստացել, նախատական հարցնում եմ ես, չէ որ դպրոցում թելադրությունից «5» էիր ստանում:

-Ճարը ես եմ «հանել»,- ասում է, տեքստն էլ անծանոթ չի եղել: Դուք թելադրած եք եղել, միայն շատ զգուշանալուց «այգուց այգի» գրել եմ գծիկով, դա է եղել իմ միակ սխալը,- մեղավոր ժպտում է նա: Հայոց լեզվի քննությունից «4» են ստացել նաև Փարին, Սուսաննան, Աշխենը (մյուսներն ընդունվել են հարցազրույցով):

Իհարկե, պատահական չէ դա: Տարեսկզբին, երբ 11-րդ դասարանում հայոց լեզվի ժամ էր հատկացվել ֆակուլտատիվից, ես մի թելադրություն տվի, որպեսզի իմանամ անելիքս: Արդյունքը գոհացուցիչ չէր: Եվ որոշեցի անցնել «ուղղագրության և ուղղախոսության» խորացրած ձևի, օգտագործելով 4-րդ դասարանի դասագիրք «Տերմինբանական և ուղղագրական տեղեկատուն», «500 բառ»-ը, «Առձեռն ուղղագրական բառարան» և այլն, հաճախակի էի գրել տալիս թելադրություն. աստիճանաբար գնահատականները բարձրանում էին: Աշակերտները սիրով էին սովորում հայոց լեզուն, խնամքով գրի առնում նոր սովորած բոլոր բառերը, կատարում առաջադրանքներ, մրցում շարքերի միջև:

Նման պահեր չենք ունեցել մեր աշխատանքային պրակտիկայում, չնայած լավ աշակերտներ ունեցել ենք, բայց նրանց ընդունելության մասին հաշվետվություններ տվել են հարևան միջնակարգ դպրոցի ընկերները: Յուրաքանչյուր գյուղ պիտի ունենա իր միջնակարգը, թեկուզ

քիչ աշակերտներով, դա օգտավետ է երկկողմանի. և աշխատանքիդ արդյունքն է երևում, և՛ պատասխանատվությունն է շատանում, և ավարտողը, միայն իր գյուղն ու դպրոցն է ճանաչում, որը հետագայում նրան կձգի իր գիրկը…

Ուրեմն իզուր չի անցել մեր 10 տարվա աշխատանքը, կանցնեն մի քանի տարիներ և գյուղ կվերադառնան 7 մասնագետներ, որոնց կարիքը գյուղն իսկապես զգում է հիմա: Դրան էլ ավելացրած այդ նույն դասարանի այն 4 տղաները, որոնք ութերորդն ավարտելուց հետո սովորելու են գնացել պրոֆտեխուսումնարան, սովորում են հաշվապահի և մեխանիզատորի մասնգիտություն, ամբողջ ամսվա ընթացքում օգնել են տնտեսության բերքահավաքին, նրանք էլ անպայման գյուղ կվերադառնան և կաշխատեն այստեղ:

Կանաչ ճանապարհ ձեզ, մեր սիրելի սանիկներ, կյանքը ստիպել է, որ փոխվեն մեր ու ձեր հարաբերությունները, տագնապի գիշերները միասին ենք լուսացրել, սգո օրերին միասին սգացել:

…Հայի զենքը միշտ էլ գիտելիքներն են եղել, զինվեցեք ինչքան կարող եք, այդպիսի զենքով երբեք չեք պարտվի…

Թող այսուհետ միշտ պայծառ օրեր ունենաք…

«Զրաբերդ», 1990թ.

ՀԱՐԳԵԼԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամեն տարի ապրիլին, երբ մոտենում է տիեզերագնացության օրը, հիշում եմ մանկական տարիներից մի դեպք և թերթերում ու ամսագրերում իզուր փնտրում մի մարդու անուն, ում հետ կապված են իմ հիշողությունները:

60-ական թվականներին էր: Իրար հետևից տիեզերք թռան Գագարինը, Տիտովը, Տերեշկովան: Ռադիոն անընդհատ այդ մասին էր խոսում (հեռուստացույց դեռ չկար գյուղերում),թերթերն ու ամսագրերը հեղեղված էին նրանց նկարներով: Կարդում էինք, ուրախանում, հպարտանում խորհրդային տղամարդու, կնոջ սխրանքներով: Տերեշկովայի թռնելուց հետո մեր տանը սուգ էր: Տատս, փոխանակ մեզ հետ ուրախանալու, անընդհատ լացում էր, գոգնոցի փեշով սրբում աչքերը և զարմանալի բաներ պատմում իր քրոջ որդու՝ Աշոտ Բալայանի մասին, որն ապրում էր Մոսկվայում, «թագավորի պես մարդ էր», մեծ գիտնա-

կան: Պատմում էր նրա մանկությունից: Ապրում էին Բաքվում, երբ ամառը գյուղ էր գալիս, լարեր էր կապկպում մի սարքի, դնում թթի ծառի վրա, կանչում էր իրեն 2 բան գցում ականջները և երաժշտություն էր լսում ու զարմանում…

Հայրս որոշ ժամանակ բացակայեց գյուղից և երբ եկավ, թաղի կանայք հավաքվեցին, զրուցեցին, լացեցին: Մենք՝ երեխաներս, սսկվել-կանգնել էինք տան մի անկյունում և լսում էինք մեծերին:

Հասկացա, որ հորս մորաքրոջ որդին՝ Աշոտ Բալայանը, մեծ գիտնական էր, գյուտարար, որ մասնակցել էր տիեզերանավերի թռիչքի կառավարմանը, ճառագայթահարվել էր և մահացել: Նրա թաղմանն էր Մոսկվա գնացել հայրս, բայց այն ժամանակվա կառավարությունը դիակը հարազատներին չի տվել (ուներ ռուս կին, Ալիկ անունով տղա, մայր, քույրեր՝ վերջիններս ապրում էին Բաքվում): Թաղել էին Կրեմլում, մահվան մասին չեն հայտարարել, գաղտնի էր պահվել՝ արտասահմանում չիմանալու համար: Այդ ժամանակ ՍՄԿԿ Կենտկոմի քարտուղարը գրկել էր նրա մոր՝ Սոֆյա մորաքրոջ ուսերը և ասել. –Не плач мамаша,пусть Советский союз плачет. . Ուղեղումս այնպես է տպվել այդ նախադասությունը, որ առ այսօր չեմ մոռանում:

Ասում են նաև, որ նրա անունով ինստիտուտ կա Մոսկվայում, գաղտնի:

Հայրս հետը բերել էր մի շարք լուսանկարներ Մոսկվայից, որոնք սրբությամբ պահում են իմ հայրական տանը՝ Առաջաձորում և մեկ-մեկ առիթ եմ ունենում «հանդիպելու նրանց»:

Դժբախտաբար առաջ մեր ազգային արժեքները այնքան մեծ տեղ չունեին մեր կյանքում, և առիթ չեմ ունեցել անդրադառնալու նրա կյանքին այն ժամանակ, երբ կարող էի ավելի ստույգ և արժեքավոր տեղեկություններ հայտնել:

Վաղուց չկան տատս, Սոֆյա մայրիկը, ծնողներս, մեր այն հարազատները, ովքեր անձամբ ճանաչել են նրան, առնչվել են: Ավելի ստույգ տեղեկություններ չեմ կարող հայտնել: Անցյալ տարի, երբ ցուցադրվում էր Անդրանիկ Իոսիֆյանի մասին ֆիլմը և այնտեղ մի դրվագում ասվում էր, որ նա մահացավ և նրա հոգին սավառնում էր իր ուսումնասիրած աստղերի արանքում, նորից հիշեցի իմ Աշոտ Բալայան հորեղբորը և ցանկացա դիմել «Կրթությունը և գիտությունը Արցախում» հանդեսին, որպեսզի հետաքրքրվի և ստույգ տեղեկություններ տպագրի նրա մասին: Ծնակահողը՝ Անդրանիկ Իոսիֆյանի ծննդավայրը, և Առաջաձորը՝ Աշոտ Բալայանի հայրենի գյուղը, հարևան գյուղեր են և տարիներ շարունակ մեկ գյուղական խորհրդի կազմում են եղել:

Եվ եթե պարզվի, որ Աշոտ Բալայանն էլ իրոք եղել է գյուտարար, (վերջապես ամեն մարդու աճյունը՝ մոխիր է շշի մեջ, Կրեմլի պատին չեն դնում, անունը Կրեմլի պատին չեն գրում, հաստատ գրված է, մեծ եղբայրս անձամբ է տեսել), ավելի պարծանք կբերի մեր գյուղերին ու Արցախին և «Երկու մարշալ մի գյուղից» արտահայտությանը կավելանա «Երկու գյուտարար մի գյուղից» արտահայտությունը:

Ես առանձնապես ոչ մի ակնկալիք չունեմ նրան հայտնաբերելուց, պարզապես՝ որպես հայ եմ ուզում հայտնաբերել նրան:

«Ազատ Արցախ», 2007թ., օգոստոս

ԺՊԻՏՆԵՐ

Ունեցել եմ անեկդոտների հավաքածու՝ հորինած կամ լսած, մշակած ու գրի առած՝ մոտավորապես 500 և ավելի, գեղեցիկ գրառած մի ընդհանուր տետրում: Անեկդոտներիցս հաճախակի ուղարկում էի «Ոզնուն»: ԼՂՀՄ-ի 50-ամյակին 50 անեկդոտ էի ուղարկել, տպագրվել էր և մի անեկդոտի պատճառով մեծ աղմուկ հանել:

Հովհաննես Շիրազը բարկացել էր և նախատել «Ոզնու» խմբագիր Արամայիս Սահակյանին, որն էլ ինձ է դիմել նամակով. «Սիրելի՛ Նաիրա, տպագրել եմ Ձեր անեկդոտները, թեկուզ մեկի համար կրակն եմ ընկել…»:

Անեկդոտը հետևյալն էր.

Մի կին գնում է բժշկի: Բժիշկն ասում է.

-Հանվի՛ր, պառկի՛ր, էսա գալիս եմ:

Բժիշկը քիչ հետո գալիս է, տեսնում կինը պառկել է պատի կողմը, հարցրել է.

-Ինչի ես հեռու պառկել:

-Բա դու որտե՞ղ պիտի պառկես:

Հովհաննես Շիրազն ըմբոստացել էր, որ հայ կինն անբարոյական չէ, ինչի՞ է նման բան տպագրել:

Ես պատասխանել էի, որ դա ոչ թե հայ կնոջ անբարոյականությունն, այլ՝ միամտությունն է խորհրդանշում:

Բանահավաք Ժաննա Խուրշուդյանը ներկայացել էր ինձ և պահանջել անեկդոտներիս տետրը, բայց, դժբախտաբար, չեմ տվել, չէի ուզում հրաժարվել գեղեցիկ ձևավորված տետրիցս, խոստացա անեկդոտներն արտագրել, ուղարկել իրեն, բայց չկարողացա խոստումս կատարել: Սկսվեց շարժումը, հետո՝ պատերազմ, և այդ տետրն էլ արժեքավոր շատ գրվածքների հետ այրվեց պատերազմական գործողությունների ժամանակ վառված տանս մեջ:

Ներկայացնում եմ տարբեր թերթերում տպագրված, հիշողությամբ գրի առած կամ նոր հորինվածներից մի փունջ…

◆

Մի ուսուցչուհու դաս սովորաբար աղմկոտ է լինում: Մի օր տնօրենը անցնում է միջանցքով, տեսնում է, որ նրա դասարանից ձայն չի

լսվում:

Զարմացած բացում է դուռը և տեսնում ուսուցչուհուն՝ մենակ նստած աթոռին:

Տնօրենին տեսնելով՝ շտապ կանգնում է տեղը և զեկուցում.

-Բոլորը բացակա են (աշակերտները փախել էին դասից, չէր հայտնել):

◆

Հայոց լեզվից քննություն էր: Մի աշակերտ տոմս էր վերցրել, նստել տեղը:

Քիչ անց նա ձեռք բարձրացրեց և լացակումած ասաց.

-Ընկե՛ր, ինձ մաթեմատիկա է ընկել:

Ուսուցչուհին մոտեցավ, կարդաց հարցատոմսը, որտեղ գրված էր՝ «Թվականի տեսակները»

◆

3-րդ դասարանի մաթեմատիկայի նոր գրքերում կա այսպիսի հարցադրում.

- Բնութագրիր 99 թիվը:

Մի աշակերտ գրել էր.

- 99 թիվը ինձ համար շատ սիրելի թիվ է, որովհետև ինձ քույրիկ է ծնվել: Ես շատ եմ սիրում այդ թիվը:

◆

70-ական թվականներին կոնսպեկտ գրելը պարտադիր էր և առանց հաստատելու դասարան մտնել չէր թույլատրվում:

Դպրոցներից մեկում ուսմասվարը, առանց կարդալու կոնսպեկտները, հենց այնպես տակը գրում է՝ «Հաստատում եմ» և ստորագրում:

Ուսուցիչներից մեկը, երևի նման ձևականությանը վերջ տալու համար կամ ուսմասվարին չսիրելու պատճառով, կոնսպեկտի տակ գրում է.

-Ընկեր էսինչյանը (ուսմասվարի ազգանունը) էշ է:

Ուսմասվարն էլ ամեն օրվա պես տակը գրում է՝ հաստատում եմ

...Այդ առիթով դպրոցում ծագած վեճը հասել էր մարզկենտրոն:

(Լսարանում մեզ պատմել էր այն ժամանակ ուսուցիչների որակավորման ինստիտուտի դիրեկտոր, մեր սիրելի մանկավարժության դասախոս, վաղամեռիկ Արմո Ներսիսյանը):

◆

Շրջկենտրոնից ուսուցիչ են ուղարկում մի գյուղ դպրոցում տնօրեն աշխատելու:

Դպրոցն ուներ ուսումնա-փորձնական հողամաս, որտեղ առատ բերք էին աճեցնում:

Եգիպտացորենի բերքը հավաքելուց, տնօրենը թաքուն կաբինետի չհրկիզվող պահարանը լցնում է եգիպտացորենով, այնքան, որ պահարանը հազիվ է փակվում, ճեղք է մնում: Մկները այդ ճեղքով լցվում են պահարան, ուտում այնքան, որ պահարանն արդեն լրիվությամբ փակվում է:

Որոշ ժամանակ անց ուժեղ հոտ է տարածվում կաբինետում, բացում է պահարանը և ինչ տեսնի… սատկած մկներով լի:

◆

-Էրիկ, դու մեծ եղբորս հետ էլ ես սովորել, փոքրի հետ էլ:

-Ես ձեզ նման նախանձ չեմ, ոտքս կախ եմ գցել, որ ընկերներս բոլորը գան, հասնեն ինձ…

◆

Տնօրենը շրջկենտրոն էր գնացել, նրա ժամին դասարան էր մտել ուրիշ ուսուցիչ:

Արամայիսը ուշացած ծեծում է դասարանի դուռը:

-Արամայի՛ս, ինչի՞ ես ուշացել:

-Իսկ սա քո՞ դասն է, որ եկել ես:

Զրուցում են տաբեր մարդկանցից, նշելով ոչ թե նրանց անուններով, այլ՝ մականուններով:

Նկատելով այդ, մեկը հարցնում է.

-Մեր գյուղում այնպիսի մարդ կա, որ մականուն չունենա:

-Այո:

-Իսկ ո՞վ է:

-Դոդոշը: (Անունը Ռաֆիկ էր):

◆

Գյուղապետը դիմում է հավաքված երիտասարդներից մեկին:

-Արամայի՛ս, Բաբայան էդիկին կանչի, թող գա գյուղապետարան:

Արամայիսը գնում է, գալիս, ասում է.

-Բաբայան էդիկը տանը չի, Աբրահամյան էդիկին եմ կանչել:

◆

Արամայիս գնա Բենիկենց տնից օղի բեր:

-Բենիկի անունը ոնց է,- հարցնում է Արամայիսը:

◆

Փետրվարի 20-ին ցուցարարները պահանջում էին սեսիա հրավիրել և բարձր գոռում էին.

- Սեսիա՜, սեսիա՜...

Մի կին, կարծում է թե պենսիա են կանչում, ինքն էլ է սկսում կանչել.

Դիտողություն են անում, որ պենսիա չի սենսիայա:

-Ախր ես էլ զարմանում եմ, թե ահել-ջահել ինչու՞ են պենսիա ուզում:

◆

Մի հարս հարևանի տղայի հարսանիքին դանդաղ երաժշտության տակ արագ-արագ պարում էր:

Դիտողություն արին ասաց.

- Շտապում եմ, պիտի հասցնեմ, կեսուրս ասել է շուտ կգաս:

◆

Հարևանը հարևանի հավերը մորթում-ուտում էր:

95-ամյա Արշակ պապը նախատում է հարևանի հորը.

- Մյարդի, մեծ մարդ ես, ինչու՞ հարսիդ տղաիդ չես ասում, որ ուրիշի հավերը չեն մորթի:

- Որ ուտում են, մի չանչուլ (ոտք) էլ ինձ են տալիս, ասեմ, որ էդ էլ չտան...

◆

Մինչև բանակ գնալը Վոլոդյան գյուղում հավ ու սագ չէր թողնում, գողանում, ուտում էր:

Բանակից նամակ գրեց, որ չի կարողանում դիմանալ, ինչ գնով էլ լինի, իրեն ազատեն:

Անդամալույծ հայրը խնդրում է գյուղխորհրդի նախագահին, մի բան անի, նա էլ ասում է.

- Նամակ գրի, ասա ցավ է ընկել և գյուղի հավերը, սագերը բոլորը ոչնչացել են, հանգիստ ծառայելու է:

◆

Մեկին ուղարկել էին հարևանի տնից բան բերելու:

Երկար սպասել են, չի եկել:

Եղբայրը ասել է.
- Որ ուղարկել եք, ասել եք, որ ետ գա:

◆

Մի կին իջնում է ավտոբուսից, տոմս չէր գնել, չէր էլ ուզում վարորդին փող տալ.
- Արշավի՛ր, դե շատ ապրես:
- Շատ կապրեմ, քիչ կապրեմ, քեզ չի վերաբերվում, փողդ տուր, գնա:

◆

Արամայիսենց երեխաներին դժվարությամբ էին դպրոցում ընդունում, ոչ մի դասվար չէր ուզում իր դասարանում նման երեխա ունենալ:
Մի տարի ասել էին դեռ փոքր է, կմեծանա, հաջորդ տարին կընդունենք:
Հաջորդ տարին էլ մյուս դասվարը չէր ուզում ընդունել:
Արամայիսը գնաց տնօրենի մոտ.
- Ես չեմ հասկանում, էս երեխան կըլխըյերա մըծանում, թա՝ կըլխուվեր:

◆

Շրջանից գալիս էին, կոլտնտեսություններում հաշվետու ժողովներ անցկացնում: Գևորգը միշտ կանգնում ու քննադատում էր ղեկավարին:
Ժողովի նախօրյակին նախագահը կանչել էր, 25 ռուբլի էր տվել, պատվիրել, որ ժողովում չխոսի:
Ժողովի թեժ պահին Գևորգը մոտենում է նախագահին, հանում է 25 ռուբլին, ասելով.
- Քեզ լինի 25 ռուբլիդ, որ մեռնեմ էլ, պիտի խոսեմ:

◆

Ռուբենի կինը խաշ էր սարքել: Ռուբենը աշխատանքի վայրում ում տեսել էր, հրավիրել էր խաշ ուտելու:
Կինը ամանները լցրել էր, կաթսան արդեն դատարկվում էր, էլի էին գալիս: Կինը ստիպված ջուր ավելացրեց, էլի չհերիքեց:
Ռուբենը մտավ խոհանոց, բարկացած կինը շերեփով հարվածեց նրան: Ընկերները հարցրին.
- Ռուբե՛ն, դու ինչի՞ չես ուտում:
- Ես խոհանոցում մի շերեփ կերել եմ:

◆

1988-ի փետրվարին Ստեփանակերտի հրապարակում շուրջօրյա ցույցերի էինք կանգնել: Գյուղից ուտելիքներ էին ուղարկել: Հենց հրապարակի մոտ կաթ էին եռացնում, ծու էին խաշում:

Մի տատիկ թոռների ձեռքից բռնած, մոտենում է հավաքվածներին, թե՝

- Շենա պիրած սվեժի պաներա, խոխերքը պիրալըմ օտեն...

◆

Ցուցարարները «Արցախ» էին վանկարկում: Մեր գյուղացի Շուրիկը, որ առաջին անգամ էր Արցախ անունը լսում, ոգևորված կանչում էր.

- Ալ-չա, ալ-չա...

◆

Տատն ու թոռը գնում են, տատը սայթաքում, ընկնում է գետնին: Թոռն անտարբեր մնում է կանգնած:

- Ինչու՞ չես օգնում, օգնիր կանգնեմ:

-Բա դուք չեք սովորեցրել, որ գետնից բան չեն վերցնում:

◆

Դագաղ էին պատվիրում, մեկը թե՝

- Մեռելի համար է, մի քիչ էժան տվեք:

◆

1-ին դասարանցի Ավետիքը մի մեծ կտոր հաց հանել, դասին ուտում էր:

Ուսուցչուհին մոտեցավ, ասաց.

- Դասին հաց չեն ուտում, Ավետի՛ք:

- Ընկե՛ր, պա փիս սովածըմ, հինչ անեմ:

◆

Փոքրիկ թոռը խնդրում է 90-ամյա տատիկին:

- Տատի՛կ, վաղն անպայման կգաս հանդեսիս:

- Չեմ կարող, բալա ջան, քայլել չեմ կարողանում:

-Տատի՛կ, ցախավելը կնստես, կգաս:

◆

- Էդի՛կ, ինչու՞ չես գրում:

- Ընկե՛ր, գրելու գործիքներս չեմ բերել:

◆

Նոր ուսուցչուհին դասարանին ծանոթանալու նպատակով հարցեր էր տվել, Ռաֆիկը ոչինչ չէր կարողացել ասել.

- Այս երեխան բոլորովին բոբիկ է,- ասել էր նա:

Ռաֆիկը լացելով դպրոցից տուն է գնացել:

- Ընկերն ինձ շուն է ասել, էլ դպրոց չեմ գնալու:

◆

Աշակերտական կինո էին ցուցադրում շաբաթը մի անգամ: Ինչ ա-նում էին, Արամայիսին չէին կարողանում ակումբ մտցնել.

- Հինչ օնեմ կինոյում, մին հավայի գյուլլա էլ կյա ինձ նիկա...

◆

Աշակերտական կինո էր Վաղուհասում:

Ուսուցիչ Ադամովը՝ Հայրենական պատերազմի մասնակից, իբր ռուսերեն իմացող, «թարգմանում է» աշակերտներին:

Կռվի տեսարան էին ցուցադրում, բացատրում էր:

- Մերոնք անցան քոլի քամակը, կատվի պես մարաղ կացան, որ հարձակվեն:

◆

Ուսուցիչը հարցնում է.

-Երեխանե՛ր, ձեր այգիներում ի՞նչ է լինում:

- Տանձ, խնձոր, սալոր.

- Ընկե՛ր, որ ցանկապատը ճմրթված է լինում հարևանի էշն էլ է լինում:

◆

Աշակերտը խնձորը դարչնագույն է ներկել, ուսուցիչը նախատել էր.

- Ընկե՛ր, խնձորը փտած է:

◆

Աշակերտը էշ է նկարել, փորը՝ շատ մեծ:

Ուսուցչուհին դիտողություն է արել.

- Ընկե՛ր, էշը հղի է:

◆

- Ի՞նչ է նշանակում մ.թ.ա.
- Մաքուր թթի արաղ:

◆

Ուսուցիչը թելադրում է՝ էլեկտրաէներգիա՝ էշի է-ն է (ուզում է ասել 7-րդ է-ով կգրեք):

◆

1-ին դասարանի դասվարը հարցնում է.
- Ընտանի կենդանիներ ունե՞ք, սիրում եք:
- Ընկե՛ր, մենք շուն ունենք, քեզ նման մեծ, առողջ, շատ եմ սիրում:

◆

Մի հղի կին բարձրանում է քաղաքային տրանսպորտի առաջին դռնից: Ամուսինն էլ հետն է ուզում բարձրանալ, չեն թողում:
-Բա ինչի՞ կնոջս թողեցիք:
-Նա պատճառավոր էր, թողեցինք, քեզ ինչի թողենք:
-Դե՛, ես ել պատճառն եմ, էլի՛:

◆

Պատերազմից հետո ապրում էինք կիսավեր տներում: Պատերի վնասված ճեղքերից հաճախ խոհանոց էին մտնում մկներ, մողեսներ, գորտ, օձ…
Ռուսաստանից եկած մի հարս հյուրընկալվել էր մի տան և իրենից գոհ, հիացմունքով պատմում էր, որ ունի լավ խոհանոց, հեռուստացույցը դրած, միացնում է, և՛ «Կենդանական աշխարհ» է նայում և՛ ճաշ եփում:
Կատակասեր հարսն ասաց.
-Հողս ձեր գլխին, դուք խոհանոցում հեռուստացույցով եք կենդանական աշխարհ տեսնում, մենք՝ իրական:

◆

Կոլտնտեսության նախագահի հաշվետվություն է, տարբեր ելույթներ են հնչում.
-Ապրեն մեր վարորդները, իրենց գործի արանքում հասցնում են կոլխոզին էլ ձեռք հասցնել:

◆

Վաղուհասցի Օսեփը հաճախակի էր գնում հարևան այրի կնոջ տուն: Կինը խանդում էր, վիճում էր, Օսեփը հերքում էր, որ ինքը այնտեղ չի գնում:

Մի օր էլ նկատում է, որ ամուսինը էլի մտավ նրանց տուն, վերցնում է 1 հատ երեք ռուբլիանոց, գնում է հարևանի դուռը ծեծում, հարցնում

-Երեք ռուբլին կարո՞ղ ես մանրել:

Հանկարծակիի եկած հարևանուհին ասում է.

-Չէ, չէ, մանր չունեմ:

Կինը բարձրաձայն ասում է.

- Օսեփ, դու էլ մանր չունե՞ս:

◆

Առաջածորի ֆերմաները սարում էին: Տրանսպորտ չէր գնում: Ձմռանը ֆերման գյուղ տեղափոխել էր պետք: Նախագահը ժողով էր արել.

-Ֆերման տեղափոխելու համար հարկավոր է էշ, ընկերնե՛ր:

Կարդում ենք էշերի ցուցակը.

1.--, 2.--, 3.--:

◆

Ձորակի ուսանողները երկուշաբթի օրը մի փոքր ավտոբուսով Ստեփանակերտ են գնում: Նույնիսկ կանգնելու տեղ չկար:

Անձրևոտ օր էր:

Մի կին մտնում է ավտոբուս՝ մի սագ էլ արկղի մեջ:

-Արշավիր, ցավդ տանեմ, էս սագը մի լավ տեղ տեղավորիր:

Արշավիրը հանգիստ սագը վերցնում է, կողքի ապակին իջեցնում և շպրտում դուրս՝ ջրափոսի մեջ:

-Սագը ջուրն է սիրում, լավ տեղը ջուրն է, թող ջրի մեջ մնա…

◆

Մելիքը հայաստանցի հարս է բերում: Հարսը սպաս է եփում, կեսրարին ասում է.

-Հայրի՛կ, արի ապուր լցնեմ կեր:

Կեսրարը բարկանում է, հայհոյում:

-Ապուրը տար դիր հորդ առաջ, թող ուտի:

◆

Հայաստանցի խնամիները հյուր են գալիս, ուզում է գրական խոսի, կնոջն ասում է.

-Տեղերը գցիր, որ հյուրերը վախճանվեն:

◆

Ընկերներից մեկի պապիկը մահացել է, կոլեկտիվով գնացել են թաղմանը: Սվարիկը թե՝

-Մահացողի դեմքը ծանոթ է, ոնց որ մի անգամ էլ ենք թաղել: Ընկերները հազիվ էին զսպում փռթկոցը:

◆

Մի տատիկ մահացել է, գյուղի կանայք հերթով գալիս են լացում, իրենց հանգուցյալներին բան ապսպարում.

Կատակասեր թոռն ասում է.

- Տատս հիշողություն չունի, մատը թել կապեք, որ չմոռանա:

◆

Երկու «խելոք» ամառվա շոգին արագ-արագ բանջարանոցի քարերը հավաքում են: Հարևանի հարցրին, թե էդ շոգին ի՞նչ են անում, պատասխանում են.

-Ջուր ջրելու հերթը շուտով մերը կլինի, քարերը ջոկում ենք, որ ջրենք, չմեծանան:

◆

Գյուղի ֆերմայում թուրքեր էին աշխատում Քարվաճառից: Մեկի հորեղբայրը մահացել էր, գյուղից մի խումբ ընկերներ գնացել էին թաղմանը: Կանայք՝ նրանց սովորությամբ շարքով նստել էին: Կատակասեր Նուրենը սկսել էր «բայաթի ասել», կանայք էլ, ձեն ձենի տված լացում էին:

-Մեռելը ձեզանից լինի, բահը, քլունգը մեզանից…

Կանայք դեմքները ծածկած, հազիվ իրենց զսպելով, ասում էին.

-Ամե՜ն, ամե՜ն…

Տեսնելով հայերի «ողբը» թուրքի հարազատներից մեկը մոտենում է նրանց և «հանգստացնում»:

◆

1992թ. Դեկտեմբերին էր, բռնագաղթի տարիներին: Որդուս հետ

գնացել էի Երևան՝ ծնողներիս տեսության: Տրանսպորտ չկար: Երևանից գնում էին Քասախ: Զրուցում էինք: Կողքներովս քայլող մի պապիկ դիտողություն արեց մեզ.

-Էդ դուք դպրոց չեք գնացել, ինչու՞ եք այդպես խոսում:

Քմծիծաղ տվի, մտածելով, որ ոչ միայն գրական հայերեն խոսել գիտենք, այլև կարող եմ ուղղել ցանկացած լեզվական սայթաքում, բայց առօրյա խոսակցականում ոչինչ չեմ փոխի մեր բարբառի հետ:

Լուսարար, 2001թ., մայիս

ՍԱՅԹԱՔՈՒՄՆԵՐ
(դասալսումներից)

42 տարի եղել եմ դպրոցի ղեկավար և կատարել եմ դասալսումներ միջին հաշվով ուսումնական տարում 150-200 ժամ: Աշխատել եմ այնպիսի դպրոցում, երբ ուսուցիչները մեծամասամբ փոփոխվել են և ստիպված եմ եղել աշխատել 100-ից ավել ուսուցիչների հետ: Ունեցել ենք կրթված, խելացի շատ ուսուցիչներ, բայց դժբախտաբար, նաև՝ հակառակը:

Հանդիպել եմ անգրագետ ուսուցիչների, որոնք, խնդիրները կարդալիս վերջակետն ու բաժանումը չեն տարբերել, անասելի տառասխալներ են թույլ տալիս մատյանի էջերում, սեղմագրերում, գրավորի տետրերում: Բայց, որ նույնիսկ հայերեն խոսել չգիտեն և ուսուցչի որակավորումով մտնում են դպրոց, դա անչափ ցավալի է:

Դասալսումներից կատարված գրառումներից չնչին պատառիկներ ներկայացնում եմ ընթերցողների դատին:

Թող կարդան ու ծիծաղեն նրանց վրա, ովքեր ուսուցիչներին ծիծաղի առարկա են դարձրել:

- Բառերի տեսակներն ըստ կազմության քանի՞ տեսակ են լինում:

***

-Ո՞վ կարող է կրկնողությունը պատմել:

***

-Քանի՞ հազար զոհ տեղի ունեցավ:

***

- Կենդանիներից անցնում են ժառանգությունը: Օրինակ, կաղինից ստանում ենք կաղին:

***

-Ո՞ր տարվա եղանակն է:

***

- Զարգացած են պարենային մթերքները:

***

- 17 տարեկան աղջնակ էր:

***

- «Անուշ» պոեմով Հայաստանում օպերա կա:

***

- Գովերգում է հայրենիքի ցավերը, վիշտը:

***

- Սայաթ-Նովան եղել է ուրիշի նոքար, ծառա... խալխի նոքար...

***

- Բանաստեղծի տետրը կոչվում է դավթար, մենք պարտքացուցակ ենք ասում:

***

- Հայկական ծեր կանայք...

***

- Բաբելոնի գրավումով ոգևորվեց, որ վերցնեն ամբողջ ԽՍՀՄ-ի տարածքը...

***

- Ի՞նչ թիվ բազմապատկենք 8-ի, որ ստանանք...

***

- 10-ին հանած հինգ...
- Երկուս

***

- Թիվը 0-ով գումարելիս, 0-ն թվով գումարելիս:

***

- 3-ը բազմապատկում ենք 2-ի, ստանում ենք 6:

***

- Դա ամփոփել ենք հաջորդ ժամին:

- Հաջորդ ժամին էլ չէիր կատարել: Հաջորդ դասին մենք իմացանք, որ...

- Մյուս անգամ ասել ես, որ էլ անպատրաստ չես գալու:

- Արձակ- նշանակում է կարճ:

- Պոեմը արձակ ստեղծագործություն է:

- Չանգալը պատառաքաղը չի, այլ եռոտանու կեռիկը:

- մինչև առայսօր

- բնակչություն են հաստատում

- Թումանյանը ապաստարան է տվել իր հարկի տակ:

- մագաղաթ-գոմեշի մորթի

- Սուսանը որոշում է չամուսնանալ Սեյրանի հետ:

- Եղեռնից ծնվեց «Դանթեական առասպելը»

- Անցնում ենք նոր բանաստեղծի՝ Անտոն Չեխովին:

- Բնագետը, տարված մագաղաթներով, կոխկրտում է մանուշակները:

- Կարդալով «Վերք Հայաստանի» վեպը, մեծ տպավորություն է թողում իր գլխում:

- Թմկաբերդի առումը հարբեցնում է բոլոր զորքերին, կանչում է պալատականներին, դահիճներին:

-Վաճառական Մարկոս աղա Ալիմյանը գինի է վաճառում գինետանը:

-Երբ Ծովինարը ամուսնանում է Գագիկ թագավորի հետ.

-Արշակը հիվանդ էր և չէր կարող շարունակել, հոր փողերը ծախսել

բարոյական նպատակներով

-Հոր կալվածքները ղեկավարում էր Սմբատը…

-Գիքորը այդքան էլ մաշված չէր…

-Գիքորը այդպես էլ ուստա չդառավ:

-Եղիշե Չարենցը ցեղասպանությունից հետո թողնում է Կարսը…

-Ժողովրդի վիճակի մասին էին գրում, դրա համար էլ գնդակահարվեցին:

-Աղվեսը գալիս է, կաթը ուտում…

-Արարատ լեռան էլ ի՞նչ անուններ ունի: Անվանում ենք Արարատ կամ Արագած:
-Բոլորիդ գրիչ ունե՞ք…

-Ի՞նչ գույն ունի խնձորները…

-Բոլորովին նման են իրար: Ինչի՞ն կարելի է արհամարհել:
-Ոչ մի շշուկ չսկանամ…

-Սիրահարվում է նրա վրա. Աջ կողմում ո՞վ կան:

-Նա, ավաղ, ուներ լավ տուն…

-Այգում աճում է ծաղիկներ. Տունը կգրեք մնացածը:

-Ինձ ունեմ… Ձեզ կով ունե՞ք: Տունն էլ եք ձնագնդի խաղում:

-Մեր թազզա տառը լինելու է… Ծանոթանանք ա-ի հետ:

-Ուժակալություն, փոխանակ՝ ժուժկալություն:

-Կծանոթանանք արվեստի մասին:

-Պատերազմում կռիվ է լինում:

-Աշխատում էր որպես հեղափոխական:

-Վանկը տողադարձն է:

-Մազապուրծ - մազ և ապրել արմատներից…

-Որովհետև նրան մուրճ չուներ: Տվյալ մարդուն տվյալ հիվանդությունը զերծ պահելու համար…

-Մխիթար Սպարապետի կինը՝ Սոնան, մինչև վերջ պայքարեց…

-Գրողների միության պանթեոնում.

-Իրենց իմացածը դիմացինին հաղորդելու համար օգտագործում էին նամակը…

-Եռանկյան մակերեսը հավասար է հիմքի և բարձրության կիսագնդերին:

-Ուսանողները գնում են Երևան, որ դասախոսեն՝ մասնագետներ դառնալու համար…

-Ասորական պետությունը Թարթառ գետի ափին է եղել, մեր գյուղի մոտ է եղել, քրիստոնեությունն ու քրմերը կռվում էին…

-Շրջափակման մեջ էին Լաչինը, Շուշին: Ազատագրվեցին Քարվաճառը, Խոջալլուն…

-1915թ. Եղեռնը չհաջողվեց…

-Սև ծովի նավահանգիստների համար պայքար սկսվեց: Անգլիան, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Թուրքիան, Ֆրանսիան, Ռուսաստանը եռյակ կազմեցին…

-Համայնքը գյուղապետարանն է: Ակումբը մոտիկ է համայնքից, դպրոցը՝ ոչ:

-Հայաստանում մշակութային բնագավառում այնքան էլ շատ չէին զարգացած…

-Ստալինի օրոք փակել տվին հայկական դպրոցները, բացել տվին դպրոցները…

-Համագործածական են այն բառերը, որ օգտագործում են և՛ գյուղացիները, և՛ քաղաքացիները: Օրինակ, հացը բոլորը ուտում են:

-Երկիրը պտտվում է արևի և լուսնի շուրջը…

-Մեղուն ընտանի կենդանի է.

-Չնայած Սարսանգին ծով ենք ասում, բայց լիճ է:

-Հեթանոս աստվածը Վահագն է:

-Հիվանդանում է այն հիվանդությամբ, որով մյուս բանաստեղծները…

-Հայերենի խոսքի մասերն են՝ գոյական, ածական, թվական, բայ, ձայնարկություն, կոչական:

-Նելսոն Ստեփանյանը ո՞րերորդ դիվիզիան էր ղեկավարում:
301: Ոչ: 409:

-Մի բույս ասեք:
- Գազար:

-Ամոթ քեզ, բա գազարը բույս է:

-Ընկեր տետրս չեմ բերել:
-Դու ինչու՞ ես եկել:

Փնջային մեթոդմիավորման նիստ էր մի դպրոցում, բաց դաս էր կազմակերպված հայոց լեզվից՝ բառերի տեսակներն «ըստ կազմության» թեմայով:
Մի աշակերտուհի պատմեց, գրեց օրինակներ, բարդ բառ չգրեց,

բայց երկու ածանց ունեցող բառերը անվանեց բարդ ածանցավոր:

Տեսնելով, որ ուսուցիչը քաջալերում է «ճիշտը գրած» աշակերտին, հարցրի ընդգծել բարդ բառը:

Ուսուցչուհին հաստատակամ ասաց.

-Բա՛րդ ածանցավոր, բարդ ածանցավոր:

Մի քանի տասնյակ տարի դասավանդել էր, բարդ ածանցավոր բառերը ուսուցանել էր, որպես երկու ածանց ունեցող բառեր:

ԻՄ ՄԱՍԻՆ

ՄԻ ԼՈՒՅՍ Է ՎԱՌՎՈՒՄ ԳԻՇԵՐՎԱ ԽԱՎԱՐՈՒՄ

Մարտակերտի շրջանում և նրանից դուրս շատերը գիտեն Նաիրա Առստամյանին, մայրենիի ճանաչված ուսուցչուհի է, դպրոցի երկարամյա տնօրեն, ու նաև հիանալի մայր՝ իր չորս երեխաների և «ուրիշների» երեխաների համար: Ու նաև՝ արցախյան շարժման ու գոյամարտի ակտիվ մասնակից...

Ծանոթացել եմ նրա հետ հեռակա, երբ ակտիվ թղթակցում էր տեղական և հայաստանյան մամուլում: Սիրով էի սպասում հերթական հոդվածին, լիներ «Պիոներ կանչ»-ում, «Դպրություն»-ում, շրջանի թերթում, «Ոզնի» երգիծական հանդեսում կամ «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» մասնագիտական ամսագրում:

Հերթական անգամ նրան հանդիպեցի պատերազմից ավերված տան բակում: Մեղմ քամուց դանդաղ օրորվում էր օջախի նահապետի ձեռքով տնկած թթենին, որի տակ՝ մահճակալին պառկած էր կաթվածահար սկեսրայրը՝ իմ վաղեմի ծանոթ Ասատուրը:

Նաիրան նոր էր եկել դպրոցից, կերակրում էր սկեսրայրին: Իմ ով լինելը հիվանդը մեկ հիշում էր, մեկ՝ աղավաղում, բայց հարսին վերաբերվում էր մեծ գորովանքով: Ամբողջ գյուղն էր խոսում, թե նա ինչպիսի հոգատարությամբ է խնամում հիվանդին...

Որոշել էի հարցնել, թե ինչու՞ այլևս ակտիվորեն չի թղթակցում, բայց չհարցրի, հասկացա... ժամանակ չունի: Որտեղի՞ց ժամանակ... Ամուսինն ու տղաները ծառայում էին բանակում, գյուղական ընտանիքի ամբողջ հոգսը ծանրացել էր նրա վրա, հետո էլ, հիվանդի խնամքը: Ծննդով առաջածորցի է, 1970-ին ավարտել է դպրոցը ոսկե մեդալով, 1974-ին՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը՝ գերազանց գնահատականներով: Գործուղվել է Վերին Հոռաթաղի դպրոց՝

որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ապա նաև աշխատել է որպես ուսմասվար:

Ամուր կապվեց դպրոցին, աշակերտներին, զգաց, որ դպրոցն իր նման կադրերի խիստ կարիք ունի (իր հետ գործուղվածները տարին չլրացած՝ թողեցին, գնացին քաղաք):

Մինչև հիմա էլ իր առաջին աշակերտները սիրով պատմում են, թե ինչպես էին ամբողջ դասարանով նստարանները գրկել ու լացել, երբ լսել էին, որ Առստամյանը պիտի գնար իրենց դպրոցից:

Եվ չգնաց: Ընտանիք կազմեց, մնաց:

Աշխատանքային հինգերորդ տարում նա արդեն ճանաչված մանկավարժ էր շրջանում և 1979-ին՝ 26 տարեկանում նշանակվեց դպրոցի տնօրեն:

Հեշտ չէր աշխատելը: Գյուղական դպրոցում անելիքները շատ էին, և նա աշխատեց գիշեր-ցերեկ՝ օգտագործելով հարուստ գիտելիքները և իր ավարտած դպրոցի լավագույն ուսուցիչների փորձը:

Չորս երեխա ունեցավ, նոր տուն կառուցեց՝ գեղեցիկ, հարմարավետ: Թվում էր՝ դժվար օրերն անցել էին և պետք է հանգիստ աշխատեր, ապրեր, բայց... Սկսվեց արցախյան շարժումը և ամեն ինչ փոխվեց. Նաիրան արցախյան շարժման ակտիվ մասնակիցը դարձավ: 1988-ի փետրվարի 12-ին նա առաջիններից էր բեմ բարձրացել և ելույթ ունեցել Մարտակերտում, օրերով կանգնել էր Ստեփանակերտի հրապարակում, աջակցել էր գյուղում ինքնապաշտպանական ջոկատ ստեղծելուն. նորակառույց տունը դարձրել էին շտաբ, կապի սարքավորումներ տեղադրել: Դպրոցում հնարավորություն էր ստեղծել ու պահել օգնության եկած ջոկատներին, իր տանը ապաստան տվել տասնյակ փախստականների: Ուսուցիչ ամուսինը՝ Օլեգը, առաջիններից է անդամագրվել գյուղում կազմակերպված ջոկատին, մեծ տղան՝ Լեոնիդը՝ 13 տարեկանից: Նա գյուղի ջոկատին աջակցող մանկական խմբի ղեկավարն էր և իր փոքր խմբով մեծ օգնություն էր ցույց տալիս ֆիդայիներին՝ կատարելով կապավորի դեր, սնունդ տանելով անտառում թաքնված զինվորներին…

Այժմ Արցախի համալսարանի ուսանող է, Մարտակերտի պաշտպանական շրջանի N զորամասում գումարտակի շտաբի պետ: Երկրորդ որդին՝ Նարեկը, նույնպես ծառայում է բանակում: Նելսոնը և Արցախը դպրոցականներ են:

1992-ի հուլիսին գյուղը բռնագաղթեց: Ամենադժվար օրերը հաշվում է այն, երբ աշակերտների համար տեղեկանքներ էր գրում, արտասուքները խեղդում էին: Ակամայից գործազուրկ դարձավ: Ստեփանա-

կերտում տարբեր աշխատանքներ էին առաջարկել՝ ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում, մանկավարժական ինստիտուտում, կուլտուր-մշակութային տեխնիկումում, բայց, երբ 1993-ի փետրվարին ձորակի գյուղերը ազատագրվեցին, գերադասեց իր ավերված գյուղը, տունը գնալ և մարտին, երբ դեռ թշնամին Քելբաջարում էր և Սարսանգում, դպրոց բացեց ավերված-թալանված շենքում, հարևան գյուղերի ուսուցիչներով: Ազատագրված գյուղերում միակն էր դպրոցը և այնտեղ սովորելու եկան հարևան Հարգոմերի, Կոճողոտի, Գետավանի աշակերտները: Դա խթան հանդիսացավ բռնագաղթվածների շուտափույթ գյուղ վերադառնալուն: Ամեն օր ավելանում էր աշակերտների թիվը. տեսնել էր պետք, թե ինչպես էին առավոտները նորեկ աշակերտները գրկաբաց նետվում տնօրենի գիրկը, ուրախությունից լացում, համբուրում նրան՝ ինչպես հարազատ մորը:

Հաղթահարելով պատերազմական տարիների դժվարությունները՝ դպրոցը մասնակիորեն վերանորոգվել է, ձեռք է բերել անհրաժեշտ գույք, գրքեր, ստեղծվել է լաբորատորիա, գրադարան, թանգարան: Մտնելով ուսուցչանոց՝ զգում ես, որ գործ ունես բանիմաց ղեկավարի հետ:

Դպրոցն ունի 116 աշակերտ, 15 ուսուցիչ: Ցավոք, դրանցից միայն ինն ունեն մանկավարժական կրթություն, մնացածները մասնագետներ չեն, դպրոցի նախորդ տարիներին շրջանավարտներն են. ինչ խոսք, բազմակի անգամ դժվար է դրանց հետ աշխատելը: Բայց չի հուսահատվում:

Տիկին Առուստամյանն իր հարուստ մասնագիտական փորձը սիրով փոխանցում է նաև հարևան գյուղերի դպրոցների ուսուցիչներին, երիտասարդ տնօրեններին, ուսանողներին:

- Ինչպե՞ս ես հասցնում:

- Դժվար է, իհարկե, ընտանեկան սովորական աշխատանքները կատարում եմ գիշերը, իմ հանգստի հաշվին…

Գյուղում բոլորը գիտեն, որ բոլորից ուշ նրանց տան լույսն է հանգչում: Եվ հանգչո՞ւմ է, արդյո՞ք:

Գուրգեն Նարիմանյան
«Հայաստան», 1997թ., N30, 15 մարտ

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ
ՎԱՍՏԱԿ

«Պիոներ կանչ»-ում, շրջանային «Բարեկամություն» թերթում, «Ոզնի» երգիծական հանդեսում, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» ամսագրում, այլ թերթերում ու ամսագրերում հաճախակի տպագրվող նրա թղթակցությունների բազմաթիվ երկրպագուներից էի: Ուզում եմ ասել՝ Նաիրա Առուստամյանին գիտեի հեռակա՝ թերթերի ու ամսագրերի միջոցով: Մի անգամ էլ Վերին Հոռաթաղ գնացի՝ նրան տեսնելու և անձամբ ծանոթանալու նպատակով: Հետագայում, երբ լինում էի նշածս գյուղում, հանդիպումը նրա հետ պարտադիր էր, քանզի զրուցելուց նրա հետ բավականություն էի ստանում:

Հերթական հանդիպումս հրդեհված, ավերված տան բակում էր: Դպրոցից նոր էր վերադարձել: Ուզում էի հարցնել՝ ինչո՞ւ այլևս չի թղթակցում: Մեկ էլ մտածեցի՝ որտեղի՞ց այդքան ժամանակ. ամուսինն ու երկու որդիները հայրենիքի պաշտպանությոն դիրքերում են, ընտանիքի հոգսերն ամբողջությամբ իր ուսերին են ծանրացած…

Ծնվել է Առաջածորում (Մարտակերտի շրջան): 1970-ին ոսկե մեդալով ավարտել է տեղի միջնակարգը՝ 74-ին Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը: Աշխատանքային գործունեությունը՝ որպես հայոց լեզվի ու գրականությոն ուսուցչուհի, սկսել է Վերին Հոռաթաղի ութամյա դպրոցում: Ուսումը շարունակելու ցանկություն ուներ: Բայց երկու տարի աշխատելուց հետո հրաժարվեց այդ մտքից. զգաց, որ առանց դպրոցի ու երեխաների չի կարող:

Հինգ տարի անց՝ 1979-ին, նշանակվեց դպրոցի տնօրեն: Դյուրին գործ չէր. դպրոցն առաջավորներից չէր, անելիքները շատ էին: Աշխատեց լարված, գիշեր ու ցերեկ, և դպրոցը շրջանում ճանաչում գտավ, դարձավ միջնակարգ, շենքային հնարավորությունները բարելավվեցին, նյութատեխնիկական հարուստ բազա ստեղծվեց, շրջանավարտներն սկսեցին բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվել, ինքն էլ ամուսնու հետ, նոր տուն կառուցեց՝ հարմարավետ: Թվում էր՝ դժվարը ետևում էր մնացել, բայց…

Սկսվեց արցախյան շարժումը: Առաջին իսկ օրերից նա ակտիվ

մասնակիցը դարձավ: Սեփական տունը, ուր կապի միջոցներ էին տեղադրել, յուրահատուկ շտաբ էր դարձել: Այդ այն ժամանակ, երբ օմոնականներն անընդհատ խուզարկում էին տները: Դպրոցում հնարավորություններ էր ստեղծել և պահում-օգնում էր Դաշուշենից, Աբովյանից օգնության եկած ջոկատներին: Սեփական տանն ապաստան էր տվել տասնյակ փախստականների: Ամուսինը՝ ուսուցիչ Օլեգը, առաջիններից է անդամագրվել գյուղի պաշտպանական ջոկատին: Ավագ որդին՝13 տարեկան Լեոնիդը, ջոկատին աջակցող պատանեկան խմբի ղեկավարն էր: Ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարը, որը ներկա էր «վերջին զանգի» արարողությանը,16 տարեկան Լեոնիդին հանդիսությամբ ընդունում է ավագների խմբի կազմը՝ նրա ձեռքը տալով ինքնաձիգը: Այժմ նա ԱրՊՀ-ի 5-րդ կուրսի ուսանող է, Ն գումարտակի շտաբի պետ:

Երկրորդ տղան՝ Նարեկը, նույնպես հայրենիքի պաշտպանության դիրքերում է: Նելսոնն ու Արցախը դպրոցականներ են: Արցախը… Սումգայիթի ջարդերից հետո Նաիրան համագյուղացի երիտասարդ մայրերին կոչ էր անում մեկական երեխա ունենալ, և առաջին օրինակը ինքն է ցույց տվել՝ նորածնին կոչելով Արցախ: Հիմա այս փոքրիկ գյուղի առաջին և երկրորդ դասարաններում 17-ական երեխաներ են սովորում: Դա մեծ հպարտություն է դպրոցի տնօրենի համար:

1992-ի հուլիսին Վերին Հոռաթաղն էլ դատարկվեց: Նաիրա Առուստամյանն ապաստանեց Ստեփանակերտում: Այստեղ շատ աշխատանքներ առաջարկեցին: Բայց նա… սպասում էր: 1993-ի փետրվարին գյուղն ազատագրվեց: Մարտին, երբ թուրքերը դեռևս Սարսանգում ու Քարվաճառում էին, գյուղ վերադարձավ և 12 աշակերտներով վերաբացեց դպրոցը՝ ավերված ու թալանված շենքում: Ազատագրված մոտակա գյուղերում այն միակն էր: Այստեղ սովորելու էին գալիս նաև Հարգոմերից, Կոճողոտից, Գետավանից: Օրեցօր ավելանում էր գյուղ վերադարձողների, նաև՝ աշակերտների թիվը…

Աստիճանաբար բուժվում են պատերազմի հասցրած վերքերը: Դպրոցական շենքը մասնակիորեն վերանորոգվել է, ձեռք են բերվել անհրաժեշտ գույք, գրենական պիտույքներ, գրքեր, ստեղծվել են լաբորատորիա, գրադարան, Փառքի թանգարան, հարստացվում է կրթօջախի նյութատեխնիկական բազան, ուսուցչանոցում `ազատամարտում զոհված ուսուցիչ Գրիշա Մուրադյանի հիշատակին նվիրված անկյուն է ստեղծվել: Եվ այս ամենում անգնահատելի է տնօրենի ներդրումը:

Փոքրիկ գյուղի դպրոցն այսօր 116 աշակերտ ունի: Ցավոք, առայժմ չեն հերիքում մասնագետ ուսուցիչները: Նրանց մի մասը նույն դպրոցի

շրջանավարտներն են: Ճիշտ է, նրանց հետ համապատասխան աշխատանք է տարվում, բայց արդյունքն, այնուամենայնիվ, այն չէ…

Շնորհաշատ մանկավարժն ու հմուտ ղեկավարն իր հարուստ գիտելիքներն ու փորձը սիրով հաղորդում է ոչ միայն իր ղեկավարած դպրոցի ուսուցիչներին, այլև՝ հարևան գյուղերի գործընկերներին, նրանց տրամադրության տակ էր հազար կտոր գրքերով սեփական գրադարանը, որ անմարդկայնորեն հրդեհվել է թշնամու կողմից: Վերջին տարիներին շրջանավարտներից երկու տասնյակից ավելին ընտրել են սիրված ուսուցչուհու մասնագիտությունը: Նրա համար ավելի մեծ գնահատական չկա, քան իր նկատմամբ ցուցաբերվող սերն ու հարգանքը:

Ես հրաժեշտ եմ տալիս հարգված մանկավարժին ու միաժամանակ մտածում. « Որքան էլ ավերեն թշնամիները, որքան էլ շատ լինեն դժվարություններն ու հոգսերը, գերդաստանի տոհմածառը դալար կմնա՝ Նաիրայով, Օլեգով, Լեոնիդով, Նարեկով, Նելսոնով, Արցախով…»:

Գուրգեն Նարիմանյան
«ԼՂ Հանրապետություն», 1997թ., 23 հունվար

ՈՒՍՈՒՑԻՉԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀՈԳՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆ Է

Այս կարգախոսն է կրում հոկտեմբերի 5-ին Ստեփանակերտում ԼՂՀ ԿԳ նախարարության կազմակեպած միջոցառումը՝ նվիրված ուսուցչի մասնագիտական տոն օրվան: Աշնանային այդ գեղեցիկ օրը հավաքվել էին ուսուցիչներ մայրաքաղաքի և հանրապետության բոլոր շրջաններից, որոնք եկել էին ևս մեկ անգամ հաշվետու լինելու իրենց կատարածի համար:

Ուսուցչի պատվաբեր ու պատասխանատու աշխատանքը գնահատելու, նրանց շնորհավորելու էին եկել հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, ԼՂՀ ԿԳ նախարար Վլադիկ Խաչատրյանը ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, պաշտոնատար անձիք:

Մեծ ու անգնահատելի է ուսուցչի վաստակն աճող սերնդի կրթության ու դաստիարակության գործում, սերունդ, որը տարիներ հետո պետք է կրի մեր հանրապետության պաշտպանության ամրապնդման, տնտեսական, հոգևոր ու մշակութային կյանքի զարգացման պատասխանատվությունը, կերտի երկրի ապագան, դառնա ավագ սերնդի արժանավոր փոխարինողը: Իր ուսերին տանելով կյանքի ոչ դյուրին պարտականություններն ու հոգսը՝ ուսուցչությունը ստանձնել է ամենադժվար առաքելություններից մեկը՝ երեխայի ուսուցման և դաստիարակության գործը: Իր գործին սիրահարված ուսուցիչը հոգու կրակն անմնացորդ տալիս է երեխաներին, ջանում նրանց մոտ դաստիարակել մարդկային լավագույն գծեր: Ուսուցիչը ծնողի նման հարազատ ու սրտացավ մարդ է: Եվ ամենալավ ուսուցիչը նա է, ով շփվելով երեխաների հետ, մոռանում է, որ ինքն ուսուցիչ է և կարողանում է իր աշակերտների մեջ տեսնել ընկերոջ, համախոհի: Մի խոսքով, լավ ուսուցիչը մարդկային հոգու ճարտարապետն է: Սա է նրա բնութագիրը:

ԼՂՀ նախագահի հրամանագրով մի խումբ ուսուցիչներ արժանացան կառավարական պարգևների: Ուրախալի է, որ պարգևատրվածնե-

րի թվում «Վաստակավոր ուսուցչի» կոչման արժանացան մարտակերտի Վլ. Բալայանի անվան միջնակարգ դպրոցի թոշակառու ուսուցչուհի Հրանուշ Հարությունյանը և Վ. Հոռաթաղի միջնակարգ դպրոցի տնօրեն Նաիրա Առստամյանը:

Կարևորում եմ ընթերցողներին ներկայացնել նրանց անբասիր աշխատանքն ու համառոտ կենսագրությունը

Նաիրա Արշավիրի Առստամյան: Ծնվել է 1953 թվականին, Առաջաձոր գյուղում:

1970թ. ոսկե մեդալով ավարտել է միջնակարգ դպրոցը, 1974-ին՝ գերազանց գնահատականներով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժինը: Գործուղվել է աշխատելու Վ. Հոռաթաղի միջնակարգ դպրոց՝ որպես հայոց լեզվի ու գրականության ուսուցչուհի, միաժամանակ՝ փոխտնօրեն: 1979 թվականից առ այսօր դպրոցի տնօրենն է: Խորությամբ տիրապետում է իր մասնագիտությանը, օժտված է մանկավարժական տակտով, նյութը մատուցելու վարպետությամբ, առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու հմտությամբ: Նա դասը վարում է հետաքրքիր, ստեղծագործական որոնումներով, նյութի խոր իմացությամբ, աշակերտների հետ տարվող աշխատանքների բազմազանությամբ՝ զարգացնելով նրանց ճանաչողական ակտիվությունն ու ինքնուրույն ստեղծագործական միտքը: Նաիրա Առստամյանի մշտական ուշադրության կենտրոնում են երիտասարդ ուսուցիչները: Օգտագործելով հարուստ գիտելիքներն ու մանկավարժական փորձը, երկար տարիներ գլխավորել է ենթաշրջանի դպրոցների փնջային միավորումը, կազմակերպել բազմաթիվ բաց դասեր: Նա մանկավարժական, ղեկավարչական աշխատանքը համատեղել է հայրենասիրական, ազգանպաստ հասարակական ակտիվ գործունեության հետ: Նրան գիտեն որպես հայոց լեզվի և գրականության գերազանց մասնագետի, Արցախյան շարժման ակտիվ մասնակցի: 2000թ. ճանաչվել է իր առարկայի գծով շրջանի «Տարվա լավագույն ուսուցիչ», 20-րդ դարի լավագույն մանկավարժներից մեկը:

Արմինե Մուրադյան
2009թ., հոկտեմբեր N 19

ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ «ԼՈՒՍԱՐԱՐ» ԹԵՐԹԻ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Լուսարար» թերթի մրցանակաբաշխության ժյուրին քննարկել է 2002թ. մրցանակաբաշխության արդյունքները: Թերթի լավագույն հեղինակներն են ճանաչվել և ըստ այդմ մրցանակների են ներկայացվել հետևյալ անձիք.

Առաջին մրցանակ - Լևոն Հարությունյան (Մարտունու շրջան, գ. Աշան)

Երկրորդ մրցանակ-Զոհրաբ Ըռքոյան (Քաշաթաղի շրջան, ք. Բերձոր)

Երրորդ մրցանակ- Նաիրա Առստամյան (Մարտակերտի շրջան, գ. Վերին Հոռաթաղ), Միքայել Բալյան (Հադրութի շրջան, գ. Մեծ Թաղեր):

Մրցանակաբաշխության ժյուրին միաժամանակ հրապարակավ շնորհակալություն է հայտնում «Լուսարար» թերթին ակտիվորեն թղթակցած հեղինակներ Խորեն Բաղդասարյանին (Տումու միջն. դպրոց), Գուրգեն Բալայանին (Աշանի միջն, դպրոց), Միքայել Խաչատրյանին (Ուխտաձորի միջն. դպրոց), Սուրայա Ղազարյանին (Ասկերանի միջն. դպրոց), Դավիթ Լալայանին (Դրմբոնի միջն. դպրոց), Սեյրան Բաղդասարյանին (Վանքի միջն. դպրոց), Նագրաֆինա Ասրյանին (Գետավանի միջն. դպրոց), Գագիկ Երնջակյանին (ք. Շուշի), Վարյա Ավանեսյանին (Ստեփ. Թիվ 6 դպրոց), Ելենա Բաբայանին (թոշակառու ուսուցիչ), Բորիս Բաղրյանին (թոշակառու ուսուցիչ):

Շնորհավորում ենք բոլոր մրցանակակիրներին:

«Լուսարարը»նույն մրցութային կարգով մրցանակաբաշխություն է հայտարարում նաև 2003 թվականի համար:

Լուսարար, 2003թ., N1

ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Մենք՝ անմեղ երեխաներս, երգում էինք: Իսկ պատերազմից հետո այդ գյուղերից մարդկանց խմբեր եկան մեզ մոտ աշխատելու, խնդրում էին, որ ամբողջ գյուղը ընդունենք շրջանի կազմում, քանի որ Աղդամի ղեկավարները թալանում էին նրանց, իսկ մերոնք նրանց հետ վարվում էին բարեկամաբար: Իսկ հիմա այդ գյուղերի մարդիկ մարդասպաններ են դարձել: Մեզ արգելում են անցնել իրենց գյուղերով:

Կարդալով երկրի պառլամենտի պատմության մեջ նմանը չունեցող որոշումները՝ Լեռնային Ղարաբաղի մասին, ես մտաբերում եմ ավելի քան հարյուր տարի առաջ Եվրոպական խոշոր տերությունների հայոց հարցով թխված որոշումները, որոնցով հանձնարարվում էր թուրքական սուլթանին՝ բարեփոխումներ կատարել Արևմտյան Հայաստանում:

Հին իմաստուններն են ասել, որ պատմության մեջ դեպքերը կրկնվում են, սակայն երկրորդ անգամ որպես ֆարս: Այս անգամ Արցախի-Փոքրիկ Հայաստանի բարենորոգումները նույնպես հանձնարարվեց մուսուլմաններին, նրանց, որոնք աշխատում են իմ լեռնաստանն ունենալ առանց հայերի: Արցախի բարենորոգումները կարող են ու պետք է կատարեն միայն հայերը: Ուրիշները միայն ավերել գիտեն: Մենք այդ վաղուց ենք տեսել:

Արցախն ու երկրաշարժից վիրավոր Հայաստանը որպես ֆյունիկ կհառնեն մոխիրներից: Ես հավատում եմ դրան, քանի որ միայն Մարտակերտի առաջավոր տնտեսությունը (Մարտակերտ, Թալիշ, Սեյսուլան, Հաթերք), ոչ միայն դիմանում են, այլև ցույց են տալիս իրենց կենսունակությունը: Ուրախ եմ այդ տնտեսությունների երիտասարդ ղեկավարների խիզախության համար: Կցանկանայի, որ նրանց հետ շրջանի բոլոր մարդիկ բարձր պահեն ազգի պատիվն ու արժանապատվությունը, մինչև վերջ պայքարեն ազատության համար:

Մենք այլևս չենք կարող հավատալ ուրիշներին: Իրավունք չունենք: Մենք պիտի հավաքվենք, դառնանք անկոտրում բռունցք՝ ընդդեմ անիրավության ու բռնության:

Հիշում եմ, տարիներ առաջ շրջանի կոլեկտիվների հանդիպումը հարևանների հետ: Այն արվում էր բարեկամության համար: Այդ հանդիպումներին Հեղուշ Լալայանի, Վանյա Մանուչարյանի ելույթներից հետո, ամեն անգամ մեր հարևանները ստիպված էին խոստովանել, որ հայերից սովորելու շատ բաներ ունեն: Իսկ երբ համատեղ համերգներում ելույթ էին ունենում Ռոմելա Մուսայելյանն ու Բելլա Գրիգորյանը,

երկու ժողովուրդների ներկայացուցիչները երանության մեջ էին:

Հիմա Սրխավենդի ու Մանիքլվի թուրքերը քարկոծում են իրենց հայ հարևաններին: Բանը հասնում է նաև արյունահեղության: Ոչ չեմ զարմանում, քանի որ հանրապետության կենտրոնից իսլամի ծառաները (քաղաքականությամբ ու գրականությամբ զբաղվող մարդիկ) առանց ամոթի կուրս են վերցրել դատարկել Արցախը հայերից: Կրկնվում են երկու հարյուր տարի առաջ սկսվածը: Դարի առաջին տասնամյակներում բարձր դուռն ասում է՝ գնացեք, թող մուսուլմանները տնօրինեն հայերի ճակատագիրը: Դե, արի, վարպե՛տ, ու մի խելագարվի: Սակայն իրավունք չունենք խելագարվելու: Մենք տառապանք շատ ենք տեսել ու տառապանքից ավելի ենք ամրացել: Պետք է կանգնել, բռունցք դառնալ, պատժել հանցագործին, պայքարել, կառուցել մեր ավերված տունը: Հիշեցեք, որ տառապանքով է գալիս հաղթանակը:

Այդ դաժան պայքարում շջանի մտավորականները հացագործներին ու դարբիններին հավասար անելիքներ ունեն: Առաջին հերթին ուսուցիչները (ազգը հարատևում է ուսուցչի օգնությամբ) պետք է աճող սերնդին դաստիարակեն ազգային արժանապատվության ոգով:

Սիրով կարդում եմ Վ, Հոռաթաղի ուսուցչուհի Նաիրա Առուստամյանի ելույթները ու հավատում, որ շատ են նրա նմանները: Երիտասարդներին պիտի առաջնորդեն Արիս Պողոսյանը, Վիլյամ Դանիելյանը և էլի շատ-շատերը: Նրանք Եղիշեի նման միայն պայքարի տարեգիրները չպետք է լինեն, այլ ազգի հոգևոր առաջնորդները: Դեռ ավելին: Նրանք պարտավոր են հնարավոր ամեն ինչ անելու՝ հարևաններին սթափեցնելու համար:

Մենք հարևաններ ենք ու պիտի ապրենք իրար կողքի, իսկ եթե անհնարին է կանխել անխուսափելին, պետք է լինել ժողովրդի հետ, նրա առաջին շարքում, կրակների միջով տանել դեպի ազատություն:

Ցավով եմ գրում այս տողերը: Ինձ ստիպում են հարևանները: Ես գրչի ու խոսքի մարդ եմ: Կցանկանայի երկրի վրա հնչեր գեղեցիկ խոսքը, թևածեր երգը, բայց երբ ցանկանում են տրորել մեր ազգային արժանապատվությունը, ավերել մեր տունը, ստիպված եմ գոչելու.

- Այդ ու՞մ վրա էք ձեռք բարձրացնում, Հայոց ազգի՞, որը դարերից է գալիս: Նա, որ հարևան է եղել Բաբելոնին ու Ասորեստանին, ապրել, մաքառել ու հասել մեր ահեղ դարին, կարող է և պետք է պաշտպանի իր պատիվը, ապրելու իրավունքը:

Սեդրակ Նանագյուլյան
(ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ)
«Բարեկամություն» 30-ին դեկտեմբեր 1989թ.

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հարգելի խմբագրություն: Հոկտեմբերի 8-ին ստացածս նամակն անակնկալ էր ինձ համար: Նամակը Ստեփանակերտից էր՝ Կոլյա Բաղդասարյանից: Առանձնապես ծանոթ չենք, գիտենք իրար որպես ուսուցիչ, տնօրեն և տեսուչ:

Մտահոգվում է, որ կարող էի չճանաչել, չհիշել, բայց դժվարն իր հիշելն է, ես անմիջապես հիշեցի, որովհետև չէի էլ մոռացել հայոց լեզվի և գրականության մեր լավագույն մասնագետ, դպրոցական տեսուչ Նիկոլայ Բաղդասարյանին, հիշում եմ նաև նրա անզուգական կնոջը՝ նույնպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի տիկին Ավագյանին, որի մոտ թիվ 7 միջնակարգ դպրոցում 1973թ. անց եմ կացրել իմ մանկավարժական փորձուսուցումը: Գիտեմ նաև որդուն՝ Գեղամին, սիրով ընթերցում եմ նրա բոլոր հոդվածները:

Ինչպե՞ս կարող եմ մոռանալ նրա արտասանությունները Պարույր Սևակից, և քանի որ նամակն էլ սևակաբույր է, ուղարկում եմ խմբագրություն, թող ների ինձ՝ առանց նրա թույլտվության, որովհետև հետադարձ հասցե ամբողջովին չի գրել, չեմ կարող շնորհակալությունս անձամբ հայտնել կամ թույլտվություն խնդրել:

Ահա նամակը.

«Ողջո՛ւյն, պայծառափա՛յլ Նաիրա. Ես Ձեզ որոնեցի և գտա զարմանահրաշ հանճարի՝ Պարույր Սևակի տողերի մեջ՝ մայրենին շուրթերիդ երաժշտելիս: Ուստի Դուք հպարտությամբ կարող եք հնչեցնել հենց այդ քառատողը, քանզի Ձեզ նմաններն են աղարտումից փրկում «մեր մեծ երթի գավազանակիր լեզուն» և, ինչու չէ, հայ գրականությունը:

Այս պահին դուք իրավունք ունեք ասել.

«Ես էլ բառերի լվացարար եմ,
Մաքրում եմ նրանց փոշին դարավոր,
Ազատում նրանց կեղտ ու բորբոսից,
Բառակե՛ր ժանգից ու բառաքոսից»:

Այս պահին ես էլ իրավունք ունեմ մեկ ուրիշ բանաստեղծի երկտողը հասցեագրել Ձեզ.

«Դուք տառապանքում կոփվել եք այնպես,
Ինչպես պողպատը՝ քուրայում բորբոք...»:

Թող հավերժի գերդաստանդ՝ Ձեզ ու Ձեր ամուսնու (ներող եղեք, որ չեմ հիշում անունը նրա) համատեղ կյանքի հարատևությամբ:

Ի դեպ՝ Մելանյա Միլոնյանը և «Լուսարար»-ը անմահացրել են Ձեզ: Դա շատ լավ է, նույնիսկ՝ լավից լավ...

Ընդունվել է մամլո երկրորդը

Ողջույն, պայծառատեսիլ Վարիս

Ես ձեզ գրում եմ և գրում կարդալուց հետո հիանալի զարմանքս հանձնելու համար մեզ՝ մայրենին շարունակելու երաժշտությունն: Պարզ. Դուք հայրենասիրությամբ լցված եք հենց այս ֆառաղը, քանզի ձեզ հասկանալի է դրա ազդարարումը, մեր ոգի երգի զարգացումը և, ինչպես, ասենք, Գրանդիոզությունը:

Հիմա պատկերն ինքներդ ստեղծեք.

„Ես էլ բաներդ վայելեր եմ,
Մայրենի ներանգ ֆոշին քարանգ,
Սկսարան դրանց կ եղբ ու քորքոջ,
Քաղաքի ձանգիչ ու բանաֆուրջ",

Հիմա պատկերն ինքներդ ստեղծեք մեկ որոշ ֆառաղ գունավոր երկրորդը հասցնելով ձեզ.

„Դուք ֆառաղանգիստ կոչվել եք ազգանունս,
Ինչպես պոշպարը՝ ֆառաղով բորբոքվ..."

Դուք հավերժի զարգացումն՝ ձեր և ձեր ստեղծագործությունը: Հարգելի է, որ շատ հիշատակներ ունեք հայ մարդու կյանքի հարցերի մասին:

Ի դեպ. Մեր ազգային մշակույթը և „բանաստեղծությունը" անմահացրել է ձեզ: Դա շատ լավ է, հոգիս լցվեց հպարտությամբ...

Իսկ մոտս. սառույց եմ՝ բարձրությունների...

Վարիս, գոյն գեղարվեստությամբ եք հիշատակվում բերված ինչ: Ձեզ շնորհում եմ:

Կոչում-երկրորդ բանաստեղծություն, գարգանալու գունավորվածությունը, զարգացումը և ընդլայնումը, կենսունակությունը:

Բարով՝ Սարգիս Հովհաննիսի Սահակյան
(Ֆիզիկոս)

8.10.2007թ.

Իսկ վերջում առատ եմ բարեմաղթանքներով:

Նաիրա՛, գուցե դժվարությամբ եք հիշում-մտաբերում ինձ:

Այդ դեպքում խնդրեմ:

Կոլյա-Նիկոլայ Բաղդասարյան, դպրոցական տեսուչ, մեթոդիստ, լեզվի և գրականության մասնագետ,կենսաթոշակառու:

Քաղաք՝ Ստեփան Շահումյանի անունով (քիչ մը ժպիտ)»: 08.10.2007թ.

Նամակն անձամբ բերել էր կայարան և ուղարկել մեր գյուղ, նույն օրն էլ ստացել էի, հասկացա, Մելանյա Միլոնյանի՝ «Լուսարար» թերթում գրած հոդվածն է ընթերցել և արձագանքել:

Շնորհակալություն նաև Ձեզ, Տիկին Մելանյա և «Լուսարար» թերթին, որ միշտ եղել և մնում եք բազմազավակության ջատագով, քանզի այսօր հայերիս համար դա ամենաառաջնահերթ խնդիրն է՝ և՛ մեր սահմանները պաշտպանելու, ազատագրված գյուղերն ու քաղաքները շենացնելու և՛ մեր ազգային գեղեցիկ ավանդույթները պահպանելու համար:

Իսկապես, քույր կամ եղբայր չունեցող երեխան, մեծանում է ինքնասեր, չգիտի՝ ինչ է որևէ բան կիսելն ուրիշի հետ, նրա երեխաներն էլ մորաքույր կամ հորաքույր, քեռի կամ հորեղբայր չեն ունենա... Ո՞վ պիտի սրտանց պարի և ուրախանա նրանց հարսանիքներին կամ դժբախտության, անհաջողության դեպքում՝ սատար կանգնի...

Քանի առիթ կա, մի անգամ էլ եմ ուզում կրկնել.

- Շատ երեխաներ ունեցե՛ք, մի՛ զրկեք Ձեր երեխաներին քույրեր, եղբայրներ ունենալու անսահման երջանկությունից...

«Լուսարար», 2007թ., 22 հոկտեմբեր

ՎԵՐԻՆ ՀՈՌԱԹԱՂԻ ՄԱՐՏՆՉՈՂ ԿԱՆԱՅՔ

Արցախյան շարժմանն ամեն մի գյուղ, ընտանիք յուրովի է մասնակցել: Այնուամենայնիվ, ինձ միշտ զարմանք են պատճառել վերինհոռաթաղցի կանայք, որոնք իրենց քաջությամբ հավասարվել են տղամարդկանց:

Մի՞թե հպարտանալու առիթ չէ այն փաստը, երբ 1991-ի օգոստոսի 13-ին Հոռաթաղից մի խումբ կանայք պատանդ վերցրին խորհրդային զինվորների, նրանցից խլված ինքնաձիգներով գյուղի ջոկատի տղաները հսկում էին հայկական գյուղերի սահմանները:

Առանց վախենալու նրանք կանգնեցրել են զինվորական մի ՈՒԱԶ՝ 4 զինվորով, պահանջել փոխանակել հայ պատանդված երիտասարդի հետ, մերժում ստանալով՝ շրջապատել են մեքենան, ուժով խլել ինքնաձիգները, այնուհետև նույն եղանակով պատանդել ավտոմատներով զինված ևս ինը զինվորականի:

Օգնել են գյուղի տղաներին՝ պատանդվածներին անտառում պահելու ժամանակ, ուտելիք են տարել, կապավորի դեր կատարել, իսկ երբ նրանց փնտրելու համար զինվորական մի մեծ խումբ զրահամեքենաներով ցանկացել է գյուղ մտնել, կանայք կտրել են նրանց ճանապարհը, արգելել օմոնականների և խորհրդային զինվորների մուտքը գյուղ: Վախեցնելու համար որքան էլ կրակել են, շներ արձակել, միևնույնն է, կանայք չէին ցրվել այնքան ժամանակ, մինչև որ զինվորականներն ստիպված ետ են գնացել:

Բռնագաղթի ժամանակ ընտանիքները Բալլուջա գյուղում տեղավորելուց հետո կանայք ետ են դառել և օգնել ինքնապաշտպանական ջոկատի տղաներին՝ հաց թխել, լվացք արել, կերակուր պատրաստել, անհրաժեշտության դեպքում՝ կապավորի դեր կատարել:

Գյուղն ազատագրելուց հետո, քանի որ ամուսինները շարունակում էին կռիվը, կանայք իրենք են վերականգնել թալանված տները, գուլպաներ գործել և ուղարկել ազատամարտիկներին, ուտելիք հասցրել նրանց: Դրանցից մեկը գյուղի դպրոցի տնօրեն Նաիրա Առստամյանն է: Ճանաչված անուն է շրջանում, հանրապետությունում, 26 տարվա մանկավարժ:

Սկսած 1987 թվականից՝ աշակերտների հետ նա Արցախի անկախացման և Հայաստանին վերամիավորելու ստորագրություններ էր հավաքում, տարածում թռուցիկներ, ժողովրդին բացատրում Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունը, հանդես գալիս բազմաթիվ հոդվածներով:

1988-ի փետրվարի 12-ին, երբ Մարտակերտում գումարվեց շրջանային ակտիվի առաջին ժողովը, շրջանի բնակչության կարծիքը իմանալու համար միակ ղեկավար ելույթ ունեցողը Նաիրան էր: Շաբաթներով ցույցերի է կանգնել Ստեփանակերտում, դասադուլ հայտարարել, ելույթներ ունեցել:

Նաիրան նամակագրական կապեր էր հաստատել Հայաստանի տասնյակ դպրոցների կոլեկտիվների հետ, շրջափակման պայմաններում դպրոցը և գյուղը զգալի օգնություն ստացան հաստատված կապերի շնորհիվ:

Նաիրան շատ ծանր տարավ սումգայիթյան ողբերգությունը, ցավով կարդաց Սումգայիթցի Իրինայի տանջալի մահվան մասին: Նա դիմեց գյուղի երիտասարդ կանանց՝ մեկական երեխա ունենալ սումգայիթյան զոհերի դիմաց: Անձնական օրինակ ծառայեց, 1989-ին ծնվեց Արցախիկը:

Լինելով ոչ սահմանային գյուղ՝ Վերին Հոռաթաղը դարձել էր մի կենտրոն, որտեղ վայրէջք էին կատարում Երևանից Մարտակերտ ուտելիք, վառելիք, զենք տեղափոխող ուղղաթիռները: Գյուղը դարձել էր հյուրանոց: Պատահել է, որ դպրոցի տնօրենն իր տանը միանգամից հյուրընկալել է 30-40 փախստականի՝ Չափարից, Չայլուից, Մարաղայից, Շահումյանից, Ստեփանակերտից:

Անձնագրային ռեժիմի դաժան օրերին տանը կապի սարքավորումներ էր տեղադրել (ամուսինը կապավոր էր). տունը շտաբի էր վերածել: Նա է գյուղի կանանց առաջնորդել պատանդներ վերցնելիս, Ստեփանակերտ ցուցարարներին ուտելիք ուղարկելիս և նման այլ գործերում:

Նրա առաջնեկը՝ Լեոնիդը, 13 տարեկանից մասնակից է եղել ինքնապաշտպանական ջոկատի կռիվներին, իսկ 15 տարեկանում արդեն իսկական ազատամարտիկ էր: Մայրն ինքն էլ շատ ժամանակ որդու կողքին էր: Ազատագրելուց հետո առաջիններից մեկը Նաիրան էր գյուղ եկել (չնայած նրանց շտաբի վերածված նորակառույց տունը վառվել էր), ապրել տարրական հարմարություններից զուրկ, ավերված, թալանված գյուղում, և երբ դեռ Քարվաճառում մարտեր էին ընթանում, գյուղում դպրոց է բացել: Այսօր էլ նա շարքում է. զոհվածների հիշատակին նվիրված թանգարան է բացել դպրոցում:

Սվետա Լալայան.- Դպրոցի ուսուցչուհի, փոխտնօրեն: Շարժման ակտիվ մասնակիցներից է: Բռնագաղթի ժամանակ ազերի թուրքերի յաթաղանի բաժին են դառել նրա ծնողները: Ինքը զենքը ձեռքն է առել, ջոկատ մտել՝ վրեժ լուծելու: Գումարտակի կապավորի դեր է կատարել, նաև՝ գթության քրոջ: Պատանդներ վերցնելիս հավաքել է թաղա-

մասի կանանց և ակտիվորեն մասնակցել գործողության իրականացմանը:

Նատաշա Հայրիյան.-Դպրոցի հավաքարարուհին է: Դեռ 91-ի հուլիսին ռուս զինվորները բռնել են ամուսնուն և բանտարկել, որն այդպես էլ չի վերադարձել: Բաքվի բանտերում տանջամահ է արվել: Ամուսնուց հետո խնամել, կրթության է տվել 4 երեխաներին: Խորհրդային զինվորներ պատանդելիս առգրավել է 2 ինքնաձիգ…

Որ մեկին թվես: Լյուբա, Խուրմա, Սուսաննա, Ալինա, Ասյա, Գոհար, Մարիետա, Սիրան, Նինա, Լարիսա, Անահիտ, Վարյա, Զոյա. բոլորն էլ վերինհոռաթաղցի, բոլորն էլ մարտնչող և չվիատվող կանայք…

Գուրգեն Նարիմանյան
«Զինվոր», 1998թ.

ՄԻ՛ ԶՐԿԵՔ ՁԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ…

Տարբեր կարծիքներ կան հասարակության մեջ կնոջ տեղի և դերի մասին: Ոմանց կարծիքով, կնոջ կոչումը մայրությունն է, իսկ տեղը խոհանոցը, կինը օջախի պահապանն է ու խաղաղության երաշխավորը, իսկ ոմանք նախընտրում են ակտիվ հասարակական կյանքով ապրող, իր աշխատանքին նվիրված կնոջը: Այսօր կնոջ դերը չի սահմանափակվում միայն ներընտանեկան պարտականություններով: Նա վաղուց հասարակության լիիրավ անդամ է և տղամարդուն հավասար աշխատում է տանը և դրսում: Դժվար թե գտնվի մի ասպարեզ, որ անմատչելի լինի կնոջ համար: Երկրագործությունից մինչև թռիչք դեպի տիեզերական ուղեծիր՝ կինը հաղթահարել է բնածին աշխատասիրության և համառ կամքի շնորհիվ: Հպարտությամբ կարող ենք նշել, որ դժվարին ու բարդ ժամանակաշրջանում հայուհին կարո-

ղանում է համատեղել մոր և ամուսնու, մանկավարժի, բանաստեղծուհու, դերասանի, գիտնականի, բժշկի և բազում այլ մասնագիտություններ: Ընտանիքում, հավատարիմ մնալով ազգային նկարագրին և ղեկը թողնելով ամուսնուն, դրսում նախաձեռնությունը վստահաբար իր ձեռքն է վերցնում և հաջողությամբ ղեկավարչական գործունեությամբ զբաղվում:

Մեր պատմության հերոսուհին մեկն է շատերից, ում, կարծես թե, վերուստ է շնորհված ղեկավարելու ձիրքը:

Նաիրա Առստամյան: 54-ամյա այս կինը 32 տարվա կազմակերպչական աշխատանքի փորձ ունի: Գյուղական դպրոցում տնօրեն է, բայց իր խորհուրդներով և անձնական օրինակով օգնում և վարակում է փոքրին ու մեծին: Գաղտնիք չէ, որ շատ կարդացած մարդը շատ բան գիտի և ահա իր իմացածն ու փորձը սիրով կիսում է համագյուղացիների հետ: Դա կարող է լինել բանջարեղենի մշակության նորագույն փորձ, հագուստի և սանրվածքի ճիշտ ընտրություն, նորածնի խնամք և հազար ու մի կենցաղային հարց:

Նաիրա Առստամյանը ծննդով առաջածորցի է, բայց վաղուց արմատ է ձգել Վերին Հոռաթաղ գյուղում: Առաջածորի միջնակարգի (որը մինչև այսօր էլ իսկական դպրոցի դասական օրինակ է համարում) մեդալակիր շրջանավարտը, ընտրում է մոր՝ նույն դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհու մասնագիտությունը: Գերազանց ավարտելով Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը, աշխատանք է ստանում Վերին Հոռաթաղի դպրոցում: «Դպրոցում սկսել եմ անել այն, ինչ Առաջածորի դպրոցում եմ տեսել»,- հպարտությամբ նշում է Նաիրան: Շատ շուտ կապվում է դպրոցին և երեխաներին, իսկ ամուսնությունը ավելի է ամրապնդում այդ կապը: Նա արդեն հոռաթաղցու հարս էր և շատ ջահել, երբ վստահում են դպրոցի ուսմասվարի պաշտոնը: Իսկ 1979-ից առայսօր դպրոցի տնօրենն է: Նորակառույց տունն ընդմիշտ կապում է նրան գյուղի դպրոցին: Հետո սկսում է ուղիներ որոնել ութամյակը միջնակարգ դարձնելու: Համոզում է գյուղի կանանց, որ եթե շատ երեխաներ ունենան, դպրոցը միջնակարգ կդառնա, և իրենց երեխաները ստիպված չեն լինելու հարևան գյուղերում սովորելու, այլ կողքի գյուղերից կգան իրենց դպրոց: Եվ անձնական օրինակով վարակում է նրանց. «83-ին երրորդ երեխաս ունեցա միջնակարգի համար»: Իսկ մինչ նորածինները դպրոցահասակ կդառնային, նախաձեռնում է դպրոցական շենքի վերանորոգումը: 88-ին դպրոցն արդեն միջնակարգի կարգավիճակ ուներ, իսկ երիտասարդ տնօրենի եռանդն ու ավյու-

նը օրեցօր աճում, նոր թափ էին առնում: Նա բազմաթիվ բանիմաց հոդվածների հեղինակ էր և շատ պարբերականների («Ավանգարդ», «Խորհրդային Հայաստան», «Խորհրդային Ղարաբաղ», «Ձրաբերդ», «Պիոներ կանչ», «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում» և այլն) ակտիվ թղթակից, պատգամավոր էր, ժողովրդական ատենակալ, տարվա լավագույն հայոց լեզվի ուսուցիչ, փնջային մեթոդմիավորման նախագահ... Կարճ ասած՝ միայն զարմանալ կարելի է, թե ինչպես է հասցնում տեղավորվել օրվա 24 ժամվա մեջ:

1987-ի ապրիլին մի հանդուգն վճիռ են կայացնում. որոշում են ձորակի գյուղերով հավաքվել և նշել Մեծ եղեռնի տարելիցը: Վաղուհասում գաղտնի պատրաստված խաչքարը այդպես էլ չկարողացավ իր շուրջը համախմբել հայոց ցավին և հիշողությանը տեր կանգնած ըմբոստ հոգիներին: Որովհետև մատնիչներն ու դավաճանները միշտ էլ անպակաս են եղել մեզանից, խաչքարը հայտնվում է ՊԱԿ-ի բակում:

88-ին արդեն պայքարի մեջ էր և հավատալով գորբաչովյան ստապատիր կարգախոսներին, կարծում էր, թե մայր հայրենիքի հետ վերամիավորման գաղափարն արդեն իրականացման փուլում է: Սումգայիթը ամեն ինչ գլխիվայր շրջեց: Հասկացավ, որ պատերազմն անխուսափելի է, բայց չերկնչեց: Նաիրան, ամուսինը, նույնիսկ ավագ որդին լրացնում էին գյուղի պաշտպանների շարքը: Դպրոցի շենքում պաշտպանական ջոկատներն էին տեղակայված, իսկ տունն էլ ավելի շատ իջևանատուն էր հիշեցնում: «Մի անգամ 47 մարդ է եղել մեր տանը»,- վերհիշում է Նաիրան: Այդ օրերին նրա կազմակերպչական ջիղը դրսևորվեց փայլուն ձևով: Երբ լուրը հասնում է, թե Հաթերքի ջոկատի հրամանատարը գերի է վերցվել, գյուղի կանանց գլուխ անցած, կտրում է օմօնականներին տեղափոխող տանկի ճամփան, զինաթափելով՝ բոլորին գերեվարում են:

Հայտնի է, որ օրհասական պահերին ազգի ինքնապաշտպանական բնազդն ավելի ցայտուն է դրսևորվում: Սպիտակի երկրաշարժից հետո համագյուղացիներին հավաքեց և ցուցակ կազմեց, թե որ ընտանիք քանի որբ մնացած երեխա կարող է ընդունել: «Ինչքան էլ աշխարհը ոտքի կանգնի և մեզ օգնության ձեռք մեկնի, մեր ցավը մենք պիտի բուժենք, ազգի կորուստը մենք պիտի լրացնենք»: Գյուղի երիտասարդ կանանց հորդորում-համոզում էր, որ մի երեխա էլ «ազգի համար բերեն»: Եվ դարձյալ անձնական օրինակով խրախուսում է բոլորին: Ծնվում է չորրորդ զավակը՝ Արցախը: Նաիրան մի անսքող հպարտությամբ է խոսում վերջինիս մասին, որն իր անվանը հարիր ըմբոստ ու խիզախ պատանի է արդեն: Այդ տարի գյուղում ծնվեց 26 երեխա, դա

աննախադեպ երևույթ էր: Կեցցեն այդ կանայք, ովքեր հաջորդ տարիներին էլ, անտեսելով աննպաստ պայմաններն ու դժվարությունները, կարողացան պահպանել աճի տեմպերը. և … ծերացող գյուղը երիտասարդացավ: 89, 90, 91 թվականներին գյուղը ցնծությամբ էր ընդունում յուրաքանչյուր նորածնի լույս աշխարհ գալը: Անգամ 92-ին, երբ բռնագաղթել և ապաստանել էին Այգեստան (Բալուջա) գյուղի դպրոցում, երեք երեխայի ծնունդն ամուր է պահում գյուղ վերադառնալու հավատը:

1993 թվականի փետրվարին գյուղն ազատագրվեց, իսկ մարտի 25-ին վերաբացվեց դպրոցը: Այն փարոսի նման կանչում էր իրենց և հարևան գյուղերի դպրոցականներին, գյուղից հեռացածներին, ովքեր ապաստանել էին հեռուներում: Տասներեք աշակերտով և երկու ուսուցչով վերաբացված դպրոցն ուսումնական տարին ավարտեց 113 աշակերտով:

Գյուղի 13 զոհերի հիշատակը վառ պահող առաջին թանգարանն էլ, իր իսկ նախաձեռնությամբ, բացվեց դպրոցում:

Այսօր էլ Նաիրա Առստամյանը հետամուտ է շատ կարևոր մի գործի՝ գյուղի երիտասարդացմանը: Ավագ որդին, որ Վերին Հոռաթաղի գյուղապետն է, իր նախընտրական ծրագրում հատուկ կետ է մտցրել՝ ողջունել յուրաքանչյուր ծնունդ գյուղում: Այդպես էլ անում են. դպրոցի տնօրենը, ուսմասվարը, գյուղապետը նվերներով գնում են շնորհավորելու գյուղի նոր բնակչի և դպրոցի նոր աշակերտի ծնունդը, որը, Նաիրայի խոսքերով, 20 տարի հետո մի նոր տան սյուն է դառնալու: Իսկ երիտասարդ մայրերին, նաև իր ուսուցիչներին խրախուսելու համար միշտ է ելքը գտնում է՝ ծննդաբերության շրջանում խոստանալով արձակուրդային բարձր վճարումներ կամ շատ ժամաքանակ տալ, «Նույնիսկ ֆինանսական խախտում էլ եմ արել, բռնագաղթից հետո 10-15 կնոջ ժամանակավոր աշխատանքի եմ ընդունել, որ երեխա բերեն: Նախապատերազմյան 148 աշակերտ ունեցող դպրոցն այսօր հազիվ է գոյատևում 68 աշակերտով»: Երբ բողոքում են դժվարություններից, ասում է. «Երեխա բերելը պատերազմից դժվա՞ր է: Ախր դուք պատերազմ եք տարել, հաղթել եք, հիմա երեխա բերելուց վախենո՞ւմ եք: Մեկի շորը մյուսին կհագցնես, մի բաժակ ջուր ավել կլցնես կաթսադ, մի ամաս ճաշ ավել կունենաս, երեխաներն իրար կպահեն, կօգնեն, ու ազգդ մեկով կավելանա»:

Ուրախանում է, որ իրեն լսում են, խոսքից դուրս չեն գալիս: Ցավում է, որ գյուղից հեռացել են շատ խելոք ու աշխատասեր մարդիկ, ովքեր արդեն տնավորվել են հեռուներում և հազիվ թե տուն դառնան: Իսկ ին-

քը նորից թևերը քշտած՝ լծվել է աշխատանքի. նոր դպրոցական շենք են խոստացել, իսկ մինչև այդ հարկ է լրացնել գույքի և լաբորատոր սարքավորումների պակասը: Երեք տղաներն ամուսնացել են: Նրանցից երկուսը քույրեր են հարս բերել, և հարազատական կապերն ավելի են սերտացրել: 3-4 ընտանիք ապրում են մի հարկի տակ, ինչպես մի գերդաստան, իսկական նահապետական հայ ընտանիք: Սա՛ էլ արժանի է ընդօրինակման:

Հայտնի ճշմարտությունը, թե բազմազավակ ընտանիքում դաստիարակված երեխաներն ավելի երջանիկ են լինում, Նաիրայի շուրթերից այլ կերպ է հնչում. «Մի՛ զրկեք ձեր երեխաներին հորաքույր և մորաքույր, հորեղբայր և մորեղբայր ունենալու երջանկությունից»: Սա պիտի լինի մեր ազգային մտածելակերպի հիմքը:

Մելանյա Միլոնյան
«Լուսարար», 2007թ., 20(157) հոկտեմբեր 3

ՄԱՅՐԵՆԻԻ ՆՎԻՐՅԱԼՆ ՈՒ ՄՏՔԻ ՁԱՀԱԿԻՐԸ

Կան անհատներ, որոնց կյանքի բեղմնավոր ուղին կանխորոշում է ընտրած մասնագիտությամբ և վստահված գործին բոլորանվեր ծառայելու ազնիվ ձգտումով: Դյուրին չէ մանկավարժի ճանապարհը, քանզի այն պահանջում է ուժերի գերլարում, հոգեկան մեծ ներուժ, գաղափարական համոզվածություն, մտավորականի անաղարտ մտածելակերպ, գիտելիքների մեծ պաշար, մարդկանց հետ աշխատելու ունակություն և կարողություն:

Այդ եզակի անհատներից է հանրապետության ճանաչված և հարգված մտավորական, կրթության և դաստիարակության գիտակ, կազմակերպիչ, հայոց լեզվի բարձրակարգ մասնագետ, մայրենիի նվիրյալ, արցախյան համաձուլվածքով և բարձր բարոյականությամբ օժտված հայրենասեր, լույսի և ջերմության սերմնացան, հանրապետության վաստակավոր ուսուցչուհի Վերին Հոռա-

թաղի Քերոլայն Քոքսի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Նաիրա Արշավիրի Առստամյանը, որի ծննդյան օրը, պաշտոնավարման 40 տարին համընկել են մայրենիի օրվա հետ:

Նաիրա Առստամյանը ծննդով Արցախ աշխարհի Առաջաձոր գյուղից է, սերված է շրջանում ճանաչված, ժամանակին մեծ հեղինակություն վայելող բարձրակարգ անասնաբույժ Արշավիր Առստամյանի օջախից, իսկ մայրը՝ Լուսիկ Ղուլյանը, հայոց լեզվի բարձրակարգ մասնագետ էր: Ի դեպ, առաջաձորցի Ղուլյաններից շատերը եղել են հայոց լեզվի ճանաչված մասնագետներ: Առստամյանների օջախն իր ազնիվ վաստակով դաստիարակել է հինգ երեխաներ, որոնք կազմել են օրինապաշտ ընտանիքներ և մեծ հարգանք են վայելում շրջանում:

1970 թ. Նաիրան ոսկե մեդալով ավարտել է Առաջաձորի միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը և 1974 թ. գերազանցությամբ ավարտել: Նույն թվականի սեպտեմբերին նշանակվել է Վերին Հոռաթաղի ութամյա դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի և փոխտնօրեն: Կարճ ժամանակում նա աչքի ընկավ մայրենիի գերազանց իմացությամբ, կազմակերպչական ձիրքով, հասարակական ակտիվ աշխատանքով, պարտաճանաչությամբ և 1979թ. նշանակվեց դպրոցի տնօրեն և առ այսօր անփոփոխ աշխատում է այդ պաշտոնում: 1988թ. դպրոցը նրա ջանքերով վերակազմվեց միջնակարգի՝ 150 աշակերտի ընդգրկմամբ: Հաճախ եմ հանդիպում շրջկենտրոնում, սիրով զրուցում հետը ու ամեն անգամ բաժանվելուց վերհիշում նրա անցած ուղին, գործունեությունը: Այս անգամ մեջս ցանկություն առաջացավ թերթին հանձնել մտորումներս:

Շուրջ չորս տասնյակ տարիներ նա մանկավարժական կոլեկտիվ է ղեկավարել, բազմաթիվ ուսուցիչներ և աշակերտներ կրթել ու դաստիարակել, մայրենի լեզվի գաղտնարանները բացել նրանց առաջ, սիրել, տվել նրանց մայրենին և հայրենիքը: Պատահական չէ, որ տասնյակ աշակերտներ ընտրել են սիրած ուսուցչուհու մասնագիտությունը և հայոց լեզու են դասավանդում մի շարք դպրոցներում:

Նաիրային ճանաչում եմ դպրոցական տարիներից, երբ հաղթում էր առարկայական օլիմպիադաներում, շարադրությունները տպվում էին շրջանային թերթում: Հիշում եմ նրա տնօրեն նշանակելը, հպարտությամբ եմ տեսնում նրան այդ պաշտոնում, համոզվում, որ ճիշտ ընտրություն ենք կատարել:

Մինչև Նաիրա Առստամյանին տնօրեն նշանակելը՝ շրջանում կին տնօրեններ քիչ կային, դպրոցներում թերացումների պատճառով կո-

մունիստական խստությամբ հաճախ էին տնօրեններին ազատում աշխատանքից: Բայց Նաիրան իր բանիմացության, ազնվության,անաչառության շնորհիվ չնահանջեց խարդավանքների, փորձությունների առջև և մնաց: Նաիրայի գործունեությունը մեզ հուշեց, որ կանանց ավելի շատ կարելի է վստահել և սկսեցինք ավելի շատ կին տնօրեններ նշանակել:

Նաիրայի ջանքերով Վերին Հոռաթաղի դպրոցը շրջանում դարձավ առաջիններից: 1989թ. դպրոցում սովորում էին շուրջ 150 աշակերտներ, ուսուցչական կոլեկտիվը համալրվեց բարձրագույն կրթությամբ մանկավարժներով: Աշակերտները սկսեցին հաղթել տարբեր մրցություններում, մասնակցել օլիմպիադաների, բուհեր ընդունվել: 80-ական թվականներից Նաիրան շրջանում ճանաչված մտավորական էր, ակտիվորեն մասնակցում էր կոնֆերանսներին, հանդես գալիս ելույթներով: Սիրով էինք լսում նրա խոսքը, այն պարզ էր, անկեղծ, հաճելի, առանց քծնանքի, ավելորդ, անհարկի գովասանքի: Նա ակտիվ թղթակցում էր շրջանային և հանրապետական թերթերին, ներկայացնում առաջարկություններ, որոնք արժանանում էին ուշադրության:

Նաիրան ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել Արցախյան շարժմանը: Հիշում եմ 1988թ. փետրվարի 12-ին Մարտակերտում կայացած առաջին բազմամարդ միտինգին նրա կրակոտ ելույթը միակն էր ղեկավարներից, որ համարձակվեց ելույթ ունենալ: Տագնապը մեծ էր, բայց Նաիրան անսասան էր: Նրա նախաձեռնությամբ կոլեկտիվը Ստեփանակերտում մանակցում էր շուրջօրյա ցույցերի: Բռնագաղթի տարիներին ոչ մի րոպե չի բացակայել Արցախից: Նաիրայի ամուսինը՝ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Օլեգ Հարությունյանը, որդու հետ ռազմաճակատում էր, իսկ ինքը անչափահաս երեխաների հետ պատսպարվել էր Ստեփանակերտի շենքերի նկուղներից մեկում՝ չընդունելով համալսարանում կամ քոլեջում դասավանդելու մասին ոչ մի առաջարկ. նրա միակ բաղձանքը գյուղի ազատագրումն էր և հայրենի օջախ վերադառնալը: Երբ սկսվեց Հաթերքի ենթաշրջանի գյուղերի ազատագրման գործողությունները, Նաիրան առաջինը վերադարձավ հայրենի գյուղ՝ Վերին Հոռաթաղ: Ամեն ինչ ավերված, թալանված, հրդեհված էր: նա դպրոցի մի քանի կին ուսուցչուհիների հետ կազմակերպեց և Քարվաճառի ազատագրված գյուղերից ներկրեց դպրոցական գույք, շինանյութեր, դուռ, պատուհան, մի կերպ մինիմալ պայմաններ ստեղծեց և սկսեցին ուսումնական պարապմունքները: Ծանր օրեր էին, բայց կարողացավ հաղթահարել բոլոր դժվարությունները: Այժմ Վերին Հոռաթաղը ունի նորակառույց դպրոցական շենք, ապահովված է գույ-

քով, ուսումնական սենյակներով: Դպրոցը շրջանում ու հանրապետությունում առաջին կրթօջախներից է: Այդ գործում մեծ է Նաիրայի ավանդը: Շնորհաշատ մանկավարժը, մայրենիի նվիրյալն ու հմուտ ղեկավարն իր հարուստ գիտելիքներն ու մանկավարժական փորձը սիրով հաղորդում է իր կոլեկտիվին, հարևան գյուղերի դպրոցների գործընկերներին:

Նաիրան այժմ էլ ակտիվ մասնակցում է համայնքի և շրջանի հասարակական ու քաղաքական կյանքին: Նա աշխատասիրության մարմնացում է, իր ժողովրդին ազնվորեն և նվիրված ծառայողի վառ օրինակ: Դպրոցը Նաիրայի հարազատ տունն է, մանկավարժությունը՝ տարերքը, նրա միտքը անընդհատ պրպտումների ու որոնումների մեջ է, ձգտում է ստեղծել, վերափոխել, արարել, նորություն մտցնել: Նա նորի, առաջավորի, արժեքավորի ջատագովն է: Ուսուցչությունից զատ այլ աշխատանք չի պատկերացնում, բազմիցս առաջարկում էին պատասխանատու աշխատանքներշրջժողկրթբաժնում, բայցմիշտ էլ շնորհակալությամբ մերժում էր, քանզի իր էությամբ նվիրված է դպրոցին, երեխաներին: Հաճելի ժպիտով միշտ ասում է. «Ամենալավ երաժշտությունն ինձ համար դպրոցական աղմուկն է»:

Նաիրան լույս է, զգայուն սրտի տեր, մարդամոտ, հոգատար, նրբազգաց, երբեք վարչարարական խարդավանքների տեղիք չի տալիս, որով էլ բարի անուն ու հեղինակություն է վաստակել: Նա ունի կոլեկտիվի, մարդկանց հետ շփվելու բնատուր շնորհք, ինչի շնորհիվ կարողացել է ստեղծել այնպիսի կոլեկտիվ, ուր տիրում է աշխատանքային առողջ մթնոլորտ, փոխադարձ հարգանք: Ես չեմ թաքցնում իմ տագնապը. երբ օմոնը վխտում էր, Նաիրային խորհուրդ տվեցի զգույշ լինել: Հիշեցի, որ 1948թ. Ստեփանակերտում ուսուցչական ինստիտուտի մի միջոցառման ժամանակ նման բովանդակությամբ ելույթ ունեցավ մեր կուրսից մի աղջիկ՝ Ռոզա Բալայանը: Առավոտյան դասի եկան հատուկ ծառայության երկու սպաներ, լսարանից քաշքշելով տարան. մինչև հիմա իմ ականջներում են նրա լացը, ճիչերը: Բայց Նաիրան մնաց անսասան: Նա դասադուլ կազմակերպեց և կոլեկտիվովգնացին Ստեփանակերտում կազմակերպված շուրջօրյա ցույցերի:

Ռաֆիկ Բաղդասարյան
20-րդ դարի լավագույն մանկավարժ

***

Սիրելի՛ տիկին Առստամյան, ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ գարնանային գեղեցիկ տոների՝ կանանց միամսյակի կապակցությամբ:

Ձեզ բնութագրելու համար կարելի է պարզապես ասել՝ դուք իսկական հայուհի եք, ով իր մեջ կրում է հայ կնոջ ամենաառաքինի գծերը:

Ձեր յուրաքայչյուր խոսքն ու գործը մի խորիմաստ դաս է: Միշտ սիրով ենք սպասում Ձեր թղթակցություններին ու բարի խորհուրդներին:

Լավագույն բարեմաղթանքներով՝ «Ձրաբերդ»-ի խմբագրություն

«Ձրաբերդ», 2012թ., մարտ 16-31

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՏԱՐԵՐՔՆ Է

Վերին Հոռաթաղի Ք. Կոքսի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն, մայրենիի նվիրյալ Նաիրա Առստամյանին՝ Մայրենիի տոնի առթիվ և մանկավարժական գործունեության 40 տարվա կապակցությամբ

Կան անհատներ, որոնց կյանքի բեղմնավոր ուղին բնութագրվում է ընտրած մասնագիտությամբ ու վստահված գործին բոլորանվեր ծառայելու ազնիվ ձգտումով: Դյուրին չէ նրանց ընտրած ճանապարհը, քանզի այն պահանջում է ուժերի գերլարում, հոգեկան մեծ ներուժ, գաղափարական համոզվածություն, մտավորականի անաղարտ մտածելակերպ, գիտելիքների մեծ պաշար, մարդկանց հետ աշխատելու ունակություն և կարողություն:

Այդ եզակի անհատներից է հանրապետության ճանաչված և հարգված, պատվարժան մտավորական, ժողկրթության երախտավոր, կրթության և դաստիարակության գիտակ և կազմակերպիչ, հայոց լեզվի բարձրակարգ մասնագետ, մայրենիի նվիրյալ, արցախյան համաձուլվածքով և բարձր բարոյականությամբ օժտված հայրենասեր,հանրապետության վաստակավոր ուսուցչուհի Նաիրա Առստամյանը, որի ծննդյան օրը, պաշտոնավարման 40 տարին համընկել են փետրվարի 21-ին՝ մայրենիի օրվա հետ:

Նաիրա Առստամյանը ծնունդով Արցախ աշխարհի Առաջաձոր գյուղից է, սերված է շրջանում ճանաչված, ժամանակին մեծ հեղինակություն վայելող բարձրակարգ անասնաբույծ Արշավիր Առստամյանի օջախից: Մայրը Առաջաձորի Ղուլյանների օջախից սերված, հայոց լեզվի և գրականության բարձրակարգ մասնագետ Լուսիկ Ղուլյանն է: Ի դեպ, գյուղի ամենամեծ ազգը Ղուլյաններնեն, որոնցից տասնյակները եղել են մայրենիի ճանաչված մասնագետներ: Առստամյանների օջախում իրենց համեստ կենցաղով, ազնիվ վաստակով ծնվել և դաստիարակվել են հինգ երեխաներ, որոնք կազմել են օրինապաշտ ընտանիքներ և մեծ հեղինակություն են վայելում շրջանում:

Նաիրան 1970 թ. ոսկե մեդալով ավարտել է Առաջաձորի միջնակարգ դպրոցը, նույն թվականին ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը,1974 թ. գերազանցությամբ ավարտել և գործուղվել է մեր շրջանում աշխատելու, նույն թվի սեպտեմբերին նշանակվել Վերին Հոռաթաղի ութամյա դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի և փոխտնօրեն:

Կարճ ժամանակում նա աչքի ընկավ մայրենիի գերազանց իմացությամբ, կազմակերպչական ձիրքով, հասարակական ակտիվ աշխատանքով, պարտաճանաչությամբ և նշանակվեց տնօրեն ու առ այսօր անփոփոխ աշխատում է այդ պաշտոնում: 1988թ. նրա ջանքերով դպրոցը վերակազմվեց միջնակարգի՝ շուրջ 150 աշակերտի ընդգրկմամբ:

Հաճախ եմ հանդիպում շրջկենտրոնում, սիրով զրուցում հետը ու ամեն անգամ բաժանվելուց վերհիշում նրա անցած ուղին, գործունեությունը: Այս անգամ մեջս ցանկություն առաջացավ թերթին հանձնել մտորումներս:

Շուրջ չորս տասնյակ տարիներ նա մանկավարժական կոլեկտիվ է ղեկավարել, բազմաթիվ ուսուցիչներ և աշակերտներ կրթել ու դաստիարակել, մայրենի լեզվի գաղտնարանները բացել նրանց առաջ, սիրել տվել նրանց մայրենին և հայրենիքը: Բոլորովին էլ պատահական չէ, որ մի քանի տասնյակ աշակերտներ ընտրել են սիրած ուսուցչուհու մասնագիտությունը և հայոց լեզու են դասավանդում մի շարք դպրոցներում:

Նաիրային ճանաչում եմ դպրոցական տարիներից (1964-1996թթ. աշխատել եմ շրջժողկրթբաժնում, որից 7 տարի՝ որպես վարիչ), երբ հաղթում էր առարկայական օլիմպիադաներում, շարադրությունները տպվում էին շրջանային թերթում: Հիշում եմ, երբ 35 տարի առաջ Նաիրային տնօրեն նշանակեցին, և այսօրվա նրա դպրոցը: Հպարտությամբ

եմ տեսնում նրան այդ պաշտոնում, համոզվում, որ իրոք, բաժինը ճիշտ ընտրություն է կատարել:

Մինչև Նաիրա Առստամյանին տնօրեն նշանակելը՝ շրջանում կին տնօրեններ քիչ կային: Դպրոցներ կային, որտեղ տարին մեկ տնօրեն էին փոխում, եթե մի սխալ էր թույլ տրվում կամ թերացում: Այն ժամանակվա կոմունիստական խստությամբ կուսակցական տույժ էին տալիս ու ազատում աշխատանքից: Բայց ահա Նաիրան մնաց: Խարդավանքների ենթարկվեց, բայց շնորհիվ իր բանիմացության, ազնվության ու անաչառության՝ մնաց: Նաիրայի գործունեությունը մեզ հուշեց, որ կանանց ավելի շատ կարելի է վստահել, և իրար հետևից սկսեցինք դպրոցների տնօրենները կանանց նշանակել, որոնք հիմնականում արդարացնում էին իրենց: Շնորհիվ Նաիրայի Վ. Հոռաթաղի դպրոցը շրջանում դարձավ առաջիններից: Աշակերտները սկսեցին հաղթել տարբեր մրցություններում, մասնակցել օլիմպիադաների, բուհեր ընդունվել:

Անցած դարի 80-ական թվականներին նա արդեն ճանաչված մտավորական էր շրջանում, ելույթներ էր ունենում կոնֆերանսներում, կուսակցական, կոմերիտական պրոպագանդիստների հավաքներում: Սիրով էին լսում նրա խոսքը. այն պարզ էր, անկեղծ, հաճելի, առանց անհարկի գովասանքի: Նա ակտիվորեն թղթակցում էր շրջանային և հանրապետական թերթերին, առաջարկություններ անում, որոնք արժանանում էին ուշադրության:

Նաիրան ամենաակտիվ մասնակցությունն է ունեցել Արցախյան շարժմանը: Հիշում եմ 1988թ. փետրվարի 12-ին Մարտակերտում կայացած առաջին բազմամարդ հանրահավաքում նրա կրակոտ ելույթը. միակն էր մտավորականներից, որ համարձակություն ունեցավ նման ելույթ ունենալ: Բռնագաղթի ժամանակ Արցախից ոչ մի րոպե չի բացակայել: Ամուսինը՝ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Օլեգ Հարությունյանը, տղայի հետ ռազմաճակատում էր, իսկ ինքն անչափահասների հետ ծվարել էր Ստեփանակերտի մի նկուղում: Չի ընդունել ոչ մի առաջարկ՝ համալսարանում, քոլեջում դասավանդելու: Միակ բաղձանքը գյուղի ազատագրումն էր և հայրենի օջախ վերադառնալը:

1993թ. ապրիլին սկսվեցին Գետավանի ենթաշրջանի գյուղերի ազատագրման գործողությունները: Նաիրան առաջինը վերադարձավ հայրենի գյուղ՝ Վերին Հոռաթաղ, ամեն ինչ ավերված էր, թալանված, հրդեհված: Նա դպրոցի մի քանի ուսուցչուհիների հետ կազմակերպեց և Քարվաճառի ազատագրված գյուղերից ներկրեց դպրոցական գույք, շինանյութեր, դուռ, պատուհան, մի կերպ նվազագույն պայմաններ

ստեղծեց: Եվ սկսվեցին ուսումնական պարապմունքները մարտից՝ 12 աշակերտներով (այժմ սովորում է 112 աշակերտ): Մեծ դժվարությամբ լուծեց կադրերի հարցը: Ինչպիսի՞ ծանր օրեր էին, ինչպիսի՞ դժվարություններ: Սակայն նրանք Նաիրայի համար չէին:

Այժմ ունեն նորակառույց դպրոցական շենք՝ նոր կահավորանքով,ուսումնական կաբինետներով միաձույլ մանկավարժական կոլեկտիվով: Դպրոցը շրջանում և հանրապետությունում առաջավոր կրթօջախներից է: Իսկ դա ի վերուստ աստված չի ընծայել, այդտեղ տիկին Նաիրայի ձեռագիրն է: Շնորհաշատ մանկավարժը, մայրենիի նվիրյալն ու հմուտ ղեկավարն իր հարուստ գիտելիքները, փորձը սիրով հաղորդում է կոլեկտիվին, հարևան դպրոցների գործընկերներին: Նաիրան ակտիվ կենսադիրքի մտավորական է, ակտիվորեն մասնակցում է համայնքի և շրջանի հասարակական-քաղաքական կյանքին: Նրա կյանքը աշխատասիրության շքեղ մարմնացում է, իր ժողովրդին ազնվորեն և նվիրված ծառայելու կերպար: Դպրոցը Նաիրայի հարազատ տունն է, մանկավարժությունը՝ նրա տարերքը,միտքը: Նա անընդհատ պրպտումների ու որոնումների մեջ է, ձգտում է ստեղծել, վերափոխել, արարել, նորություն մտցնել, նորի, առաջավորի, արժեքավորի ջատագովն է: Նա ուսուցչունից զատ՝ այլ աշխատանք չի պատկերացնում: Բազմիցս են առաջարկել պատասխանատու աշխատանք շրջժողկրթբաժնում: Միշտ էլ շնորհակալություն հայտնելով՝ մերժում է, քանզի իր կյանքի էությունը գտնում է դպրոցում, երեխաների հետ, հաճելի ժպիտով ավելացնում.

- Մեր գյուղը, դպրոցը իմ կարիքը շատ ունի...

Նա, իրոք, շրջանում պատվարժան և հեղինակավոր տնօրեն է, հայոց լեզվի և գրականության ամենաբարձրորակ մասնագետներից մեկը, լույս է, դպրոցական գործի կազմակերպման լավագույն գիտակ, կոլեկտիվի, մարդկանց հետ աշխատելու բնատուր շնորհքով: Տարիների ընթացքում ձևավորել է աշխատախումբ, ուր թևածում են փոխադարձ հարգանքը, նվիրվածությունը, ազատ, առողջ աշխատանքային մթնոլորտը, ուր հարգի է անհատը: Նաիրա տնօրենը կամեցող է, մարդամոտ, ունի զգայուն սիրտ, մարդկանց նկատմամբ հոգատար է, նրբազգաց, վարչարարական խարդավանքների տեղիք չի տալիս, որով էլ բարի անուն ու հեղինակություն է վաստակել:

Շնորհաշատ տնօրենի և մայրենիի նվիրյալի դիմանկարը թերի կլիներ, եթե չամբողջացնենք նրա կերպարը՝ որպես կնոջ, տատիկի, գերդաստանի մեծ մոր, այդ աստվածընծա հայուհու անզուգական հատկանիշները: Ամուսինը՝ մաթեմատիկայի մասնագետ Օլեգ Հարություն-

յանն է՝ սերված գյուղի պատվարժան օջախից, գյուղի նահապետ Արշակ քեռու տոհմածառից: Գեղեցիկ ու օրինապաշտ այդ ընտանիքում թևածում է բարության ոգին:

Նաիրան Հարությունյանների գերդաստանին պարգևել է չորս տղա, վերջինը՝ Արցախն է, որն, իրոք, Արցախ է: Օլեգը և Նաիրան, օրինակելի ծնողներ են, որոնք իրենց մեջ եղած լավագույն հատկանիշները փոխանցել են իրենց երեխաներին:

Մեծը՝ Լեոնիդը, 15 տարեկանից մասնակցել է Արցախյան գոյամարտին, ծառայել մեր նորաստեղծ բանակում, ստացել բարձրագույն ճարտարագիտական կրթություն, ընտրվել համայնքի ղեկավար: Այժմ Դրմբոնի ոսկու հանքում ամենահարգված պատասխանատու աշխատողներից է: Մյուս տղան՝ Նարեկը, իրավաբան է, աշխատում է շրջանի դատախազի պաշտոնում՝ վայելելով աշխատավորների վստահությունն ու հարգանքը: Մյուս տղան՝ Նելսոնը, աշխատում է դպրոցում՝ որպես զինղեկ: Արցախը՝ ամենակրտսերը, ավարտել է իրավաբանական ֆակուլտետը և սովորում է մագիստրատուրայում:

Իրոք, գեղեցիկ, արժանապատիվ կյանքով է ապրում Հարությունյանների գերդաստանը՝ տղաներ, հարսներ, թոռներ, իսկ դրանք շատ են ու դալար են պահում Հարությունյաններ տոհմածառը:

Նաիրան, իրոք, արժանի է հարգանքի և մեծարման:

Ռաֆիկ Բաղդասարյան
20-րդ դարի լավագույն մանկավարժ
«Լուսարար», 2012թ., թիվ 7-8



Հրաչյա Մաթևոսյանի Նաիրային նվիրված «Պինդ կացեք» գրքի մակագրությունից

ՇՐՋԱՆԻ ՎԵՐԻՆ ՀՈՌԱԹԱՂԻ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ ՆԱԻՐԱ ԱՌՍՏԱՄՅԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵԼ Է ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԱՐԱԿԱՐԳ

Շրջանի Վերին Հոռաթաղ գյուղի Ք.Քոքսի անվան միջն. դպրոցի տնօրեն, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, վաստակավոր մանկավարժ Նաիրա Արշավիրի Առստամյանը ծնվել է 1953թ. փետրվարի 8-ին, ԼՂՀ Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղում, մտավորականի ընտանիքում:

1960-ից 1970 թվականներին սովորել է Առաջածորի միջնակարգ դպրոցում և ավարտել գերազանց գնահատականներով՝ պարգևատրվելով «Ոսկե մեդալ»-ով: 1970-1974թթ. սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետում և ավարտել գերազանց գնահատականներով:

1974թ. սեպտեմբերին գործուղվել է աշխատելու Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղի դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, նաև՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալ: 1979թ. դեկտեմբերից առ այսօր նույն դպրոցի տնօրենն է:

Նաիրա Առստամյանը մանկավարժական գործունեությունը համատեղել է հասարակական գործունեության հետ:

Տարիներ շարունակ եղել է կուսակցական պրոպագանդիստ, ենթաշրջանի ժողովրդական ատենակալ, գյուղական խորհրդի պատգամավոր, գործկոմի անդամ, ընտրական հանձնաժողովի նախագահ, ակտիվորեն թղթակցել է Արցախի և ՀՀ-ի թերթերին ու ամսագրերին, զեկուցումներով, ելույթներով հանդես է եկել տարբեր նիստերում, ԺԱՄ-ի 1-ին համագումարում, առաջարկություններ արել ծրագրերի, դասագրքերի փոփոխման, ավագ դպրոցների ստեղծման, երեխաների դաստիարակության, դպրոցավարության մի շարք հարցերի առնչությամբ:

Ղեկավարել է ենթաշրջանի փնջային մեթոդամիավորումը, մանկավարժական փորձը սիրով փոխանցել է երիտասարդ ուսուցիչներին՝ ոչ միայն իր դպրոցի: Շատ աշակերտներ ընտրել են նրա մասնագիտությունը և աշխատում են Վերին Հոռաթաղի և հարևան դպրոցներում:

2000թ. մասնակցել է «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին և հայոց լեզվի և գրականության առարկաներից ճանաչվել Մարտակեր-

տի շրջանի լավագույն ուսուցիչ:

2000թ. ճանաչվել է 20-րդ դարի շրջանի լավագույն ուսուցիչ:

2005թ. պարգևատրվել է վարչապետի պատվոգրով՝ աշխատանքում ցուցաբերած հաջողությունների, հայոց գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակի առթիվ:

2009թ. նրան շնորհվել է վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում՝ մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործում ձեռք բերած ակնառու հաջողությունների և Ուսուցչի օրվա կապակցությամբ:

2013թ. պարգևատրվել է վարչապետի մեդալով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը մատուցած ծառայությունների ու ներդրած ավանդի համար: Նույն թվականին ԿԳՍ նախարարության կողմից պարգևատրվել է պատվոգրով՝ կրթական համակարգում երկարամյա նվիրական աշխատանքի և ծննդյան 60-ամյակի կապակցությամբ:

Արցախյան շարժման ակտիվ մասնակից է, Ազատամարտիկների միության անդամ:

2013թ. ԼՂՀ ազատամարտիկների միության կողմից պարգևատրվել է պատվոգրով՝ ԼՂՀ պաշտպանության գործում ունեցած ավանդի և ակտիվ հասարակական գործունեության համար:

Ամուսնացած է: Ունի 4 որդի, 9 թոռ:

Այս տարի՝ 2016թ. նրան շնորհվել է ուսուցիչների որակավորման առաջին աստիճանի տարակարգ:

Փորձառու ուսուցչուհի և տնօրեն Նաիրա Առստամյանը մեզ հետ զրույցի ժամանակ իր խոսքում նշել է. «Շնորհավորում եմ բոլոր ուսուցիչներին՝ գալիք ուսուցչի օրվա առթիվ, ցանկանում եմ, որ գնահատվեն բոլոր արժանավորները, դա կբազմապատկի նրանց եռանդը, կբարձրացնի հեղինակությունը և գուցե դա դպրոցի լավ սովորողներին ձգի դեպի մանկավարժությունը:

Այսօր դպրոց եմ մտնում երբեմնի թույլ սովորած, անպարտաճանաչ, նույնիսկ երկտարեցի աշակերտները, մանկավարժությունից ու իրենց դասավանդելիք առարկաներից անտեղյակ, որոնք հեռու են ուսուցիչ դառնալուց և այդ վեհ անունը կրելու իրավունքից: Նրանք «անդամալույծ» են անում մեր երեխաներին: Տեսնելով այդ ամենը՝ դպրոցի լավ սովորող աշակերտներն ամաչում են ուսուցիչ դառնալուց:

Ուստի հորդորս է, որ մանկավարժական բուհ-երում ընդունվեն միայն արժանավորները, վերակնգնվի ուսուցչի երբեմնի հեղինակությունը»:

«Զրաբերդ» պաշտոնաթերթ, 2016թ., հոկտեմբեր

Նաիրա Առստամյանը Մկրտիչ Մկրտչյանի հետ(դպրոցի հովանավոր): (հիմնադրամի բացիկին՝ Վերին Հոռաթաղում տառերով պատրաստված տոնածառն է):

2008թ., նոր դպրոցի բացմանը դիմավորում են բարձրաստիճան հյուրերին

Քոքսը՝ հարազատներով ու թոռներով Վ.Հոռաթաղի Քոքսի անվան միջնակարգ դպրոցում

Հինգերորդ պաշտպանական շրջանի 2-րդ գումարտակի զինծառայողներ: 2-րդ շարքի աջից երկրորդը՝ 17-ամյա որդին՝ Լեոնիդը

1996թ., Մատաղիսում

1992թ., Օմարում, ձախից երկրորդը՝ Լեոնիդը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից.....3

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ, ՊԱՏԵՐԱԶՄ

Տագնապալից ու փոթորկածին օրեր.....4
Գործելուց առաջ խորհել է պետք.....22
Ծրագրված էր խնամքով.....23
Լիազորների ժողով Գետավանում.....26
Բերկրալի պահ.....27
«Ժամանակը» խռովե՞լ է Հայաստանից, թե՞.....28
Սթափվե՛ք, ընկերներ.....29
Իմ կարծիքը.....32
Կշարունակենք պայքարը, մինչև.....33
Իրավունք չունենք մոռանալու.....34
Առաջիններից մեկը.....35
Կանայք շրջափակման ու պատերազմի տարիներին.....36
Շարժումը և մենք.....40
Գրիչը փոխարինեցին զենքով.....46
Շատերից մեկը.....50
Տղաները վերադարձան գյուղ.....52
Վերադարձ.....55
Թանգարան դպրոցում.....58
Սպեղանի չսպիացող վերքերին.....59
Հավերժ միասին.....63
Սպասում ենք, էրիկ….....64
Հուշ-ցերեկույթ՝ նվիրված զոհված ազատամարտիկի կեսդարյան

հոբելյանին.....67
Ջարմիկի վերադարձը.....71
Նա դեռ 20-ը չէր բոլորել.....73
Տարիների հեռվից կամ տասնհինգ տարի առաջ.....75
«Վերադարձ» հայրենի գյուղ.....77
Երեք անմեղ զոհեր.....80
Շնորհավոր ծնունդդ, Գրիշա՛.....83
Շինարարն էլի կկառուցեր.....86
Այստեղով թուրք է անցել.....88
Նշվեց գյուղի ազատագրման օրը.....90
Շարժում-20. Քսան տարի առաջ.....92
Մայրը (ևս մեկ զոհ).....97
Ք. Քոքսը Վերին Հոռաթաղում. «Քոքսի կածան».....104
Արիության դաս.....107
Հատվածներ 2000թ. ապրիլի 5-ին Ստեփանակերտում
ԺԱՄ-ի համագումարի ելույթից.....109
Նա կդառնար 65 տարեկան.....115
Հարսանիք.....118

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Բարև, հորեղբայր.....120
Հայրենիքի կանչով.....121
Քչերից՝ հինգը.....123
Մայրը սպասում է.....126

ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

«Կենցաղային ատավիզմ».....128
Հուսո կամուրջ.....130
Մայրական գորովանքով.....132
Երբ օգնությունը անշահախնդիր է.....133

ԵՐԿՐԱՇԱՐԺ

Արիաբար դիմանանք.....135
Մենք քեզ հետ ենք, Մա՛յր Հայաստան.....137
Օրհնվի ծնունդդ, մանկի՛կ.....138
Հայի ճակատագիրը.....140

ԵՂԵՌՆ

Ինչպես հիշում եմ.....145
Հիշենք որ չկրկնվի.....148
Ոճրագործությունը անպատիժ չի մնա.....150
Եղեռն-90. Ոճրագործությանը՝ արժանի գնահատական.....152

ԴՊՐՈՑԱԿԱՆ

Գիրք սիրենք, գիրք կարդանք.....154
«Ես մի այլ երկիր տեսած չեմ» կամ հոգու շրջափակում,
հոգու քաղց.....157
Գործում է դպրոցը, կապրի գյուղը.....160
Անտարբերությու՞ն, թե.....163
Դարձյալ հին ու նոր խնդիրների մասին.....165
Խոսք երախտիքի.....167
Հարգենք ուսուցչի վաստակը.....169
Խնայողություն՝ երեխաների հաշվին.....172
Իսկ աշակերտները սպասում են.....175
Առաջարկություններ հայոց լեզվի ծրագրերում փոփոխություններ
մտցնելու մասին տեսակետ.....176
Մրցությունը ուսուցման խթանիչ գործոն.....182
Ճիշտը բանավոր քննությունն է.....184
«Խաղաղության աղավնիի» ուսուցումը.....185
Ինչպես եմ կազմակերպում «Մայրենի լեզվի տոնը».....187
Հանդես՝ դպրոցում.....191
Խրախուսելի նախաձեռնություն.....194

Լավ ասպետը՝ հայրենիքի հուսալի պաշտպան.....196
Շնորհավորում ենք.....198
…Որ հպարտությամբ հիշեն.....199
Եվ ոչ միայն ուսուցիչները….....202
Խեղված ճակատագրեր.....205
Ոչ թե շենք վերանորոգելու համար….....210
Նորից չտրորենք գյուղը.....212
Ու՞ր ենք գնում.....219
Շնորհավոր տոնդ, կին տնօրեն.....223

ԱՅԼԱԶԱՆՔ

Հայերն ապրել են, ապրում են կապրեն.....228
Թող բոլոր հայերի շուրթերից հայերենը կարկաչի.....230
Օրհնվի ծնունդդ, մանկիկ.....234
Հանուն արցախի, հանուն հայության.....235
Հավատ ներշնչող գործ.....238
Որ չարցունքոտվեն երեխաների աչքերը.....240
Որդին չի ներում.....243
Սիրով և ակնածանքով.....244
Ի՞նչ արժե օղին. Սթափությունը կյանքի նորմա է.....248
Հացը սրբություն է.....250
Խտրականություն.....251
Առաջարկում եմ, արձագանքեցեք.....253
Նամակ խմբագրությանը.....254
«Խեղճ ժողովուրդ».....255
Շնորհավորում եմ.....257
Ինչու է պակասում գործնականությունը.....258
Շնորհալի գործ.....260
Հետաքրքիր պատմություն.....263
Շնորհավորում եմ.....265
Մեր գյուղը մեր տունն է.....266

Այլմոլորակայինները Վերին Հոռաթաղում.....268
Արցախը, այլմոլորակայինները և Ասլանյան եղբայրները.....270
Նաիրա Առստամյանի նամակը.....270
Մի գյուղ է՝ մի Սուրեն.....271
Յոթ շրջանավարտ, յոթ ուսանող.....273
Հարգելի խմբագրություն.....275

ԺՊԻՏՆԵՐ.....278
Սայթաքումներ.....288
Իմ մասին. Մի լույս է վառվում գիշերվա խավարում.....295
Ամենաբարձր գնահատականը. Վաստակ.....298
Ուսուցիչը մարդկային հոգու ճարտարապետն է.....301
Ամփոփվել են «Լուսարար» թերթի մրցանակաբաշխության արդյունքները.....303
Ապրելու իրավունքը.....304
Շնորհակալություն.....306
Վերին Հոռաթաղի մարտնչող կանայք.....309
Մի՛ զրկեք ձեր երեխաներին.....311
Մայրենիի նվիրյալն ու մտքի ջահակիրը.....315
Մանկավարժությունը նրա տարերքն է.....319
Շրջանի Վերին Հոռաթաղի դպրոցի տնօրեն Նաիրա Առստամյանին շնորհվել է ուսուցիչների որակավորման առաջին աստիճանի տարակարգ.....325

ՆԱԻՐԱ ԱՐՇԱՎԻՐԻ ԱՌՍՏԱՄՅԱՆ

ՏԱԳՆԱՊԱԼԻՑ ՈՒ ՓՈԹՈՐԿԱՇԻՆ ՕՐԵՐ

(լրագրություն էլ գրականություն է)

Ստեփանակերտ - 2018

Խմբագիր՝ Նաիրա Առստամյան
Սրբագրիչ՝ Մերի Հարությունյան
Էջադրումը՝ Մարինա Ավանեսյանի
Կազմի ձեւավորումը՝ Արմինե Հովսեփյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16:
Ծավալը՝ 21 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան